

ISSN 1829-4340

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԵՐ

IX



01

26-86

հՀ.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

(Գիտական հոդվածների պարբերական ժողովածու)

№ 9

5194

Նվիրվում է Հայոց ցեղասպանության 100-ամյակին

Armenian Genocide



ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2015

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

(Периодический сборник научных статей)

№ 9

Посвящается 100-летию Геноцида Армян

PROBLEMS OF ORIENTAL STUDIES

(scholarly periodical journal)

№ 9

Dedicated to the 100th anniversary of the
Armenian Genocide

Ереван
Издательство ЕГУ
2015

YEREVAN
YSU PRESS
2015

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

**Ժողովածուն դպագրվել է <<Ազգային ժողովի
պատգամավոր Մելիք Սարիբեկի Մանուկյանի
հովանավորությամբ**

ԽՄՔԱԳՐԱԿԱՆ ԽՈՐԻՈՒՐԴ՝

Մելիքյան Գուրգեն -	բ. գ.թ., պրոֆեսոր (նախագահ)
Ասատրյան Գառնիկ -	բ.գ.դ., պրոֆեսոր
Խաչիկյան Մարգարիտա -	բ.գ.դ., պրոֆեսոր
Խառատյան Ալեքսանդր -	պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ
Կարաբեկյան Սամվել -	բ.գ.թ., դոցենտ
Հովհաննիսյան Լավրենտի -	բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ
Մելքոնյան Ռուբեն -	բ.գ.թ., դոցենտ (համարի պարասիստանարդու)
Ոսկանյան Վարդան -	բ.գ.թ., դոցենտ
Սարգսյան Լևոն -	պ.գ.դ., պրոֆեսոր
Սաֆարյան Ալեքսանդր -	պ.գ.թ., պրոֆեսոր
Սաֆրաստյան Ռուբեն -	պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Տոնիկյան Սոնա -	բ.գ.թ., դոցենտ

ԱՐԱԲԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԵՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Արման Հակոբյան

ԽԱՐԲԵՐԴԻ ԱՍՈՐԻՆԵՐԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱԽԱՇԵՄԻՆ

**Թանալի բառեր՝ ասորիներ, Օսմանյան կայսրություն,
վեց հայկական վիլայեթներ, Խարբերդ, Ասորի ուղղափառ
եկեղեցի, «Եփրագ» քոլեջ, Աշուր Յուսուֆ, «Քարելոն»
պարբերական, ասորական գիր**

Օսմանյան կայսրությունում, տարբեր աղբյուրների զնահատմամբ, մինչև Առաջին համաշխարհային պատերազմը, հաշվում էին մոտ 250 հզ ասորիներ: Նրանց գրեթե կեսը, ըստ Կոստանդնուպոլիսի հայոց պատրիարքարանի տվյալների, բնակվում էր հայկական վիլայեթներում՝ 60 հազար՝ Դիարբեքիրի, 25 հազար՝ Սեբաստիայի, 18 հազար՝ Վանի, 15 հազար՝ Բիթլիսի, 5 հազար՝ Խարբերդի¹: Ասորիների մյուս կեսը բնակվում էր Աղանայի (Աղանա, Սարաշ), Հալեպի (Ուրֆա, Հալեպ, Կամիջլի), Սիրիայի (Դամասկոս, Համա) և Մոսուլի վիլայեթներում:

Պատմականորեն՝ ինչպես և հայերը, ասորիները բաժանված են երկու խոշոր խմբերի՝ արևելյան և արևմտյան: Առաջին խումբը կազմում են Արևելքի և Քաղքեական կաթոլիկ եկեղեցիների, երկրորդը՝ Անտիոքի ասորի ուղղափառ և Ասորի կաթոլիկ եկեղեցիների հետևորդները:

Արևելքի եկեղեցու հետևորդները («նեստորականները») բնակվում էին վարչականորեն Վանի վիլայեթի մասը կազ-

¹ Léart, M. (Krikor Zohrap), *La question arménienne à la lumière des documents*, ed. Paris, 1913 (http://armenews.com/IMG/_La_question_Armenienne_a_la_lumiere_des_documents_1913.pdf); McCarthy, J., *Muslims and Minorities: The Population of Ottoman Anatolia and the End of the Empire*, New York University Press, 1983, էջ 102-03.

մոդ Հարրյարի (արամեերեն *աքքարէ*՝ «ուանչպարներ» բառից) բարձրավանդակում (այսօրվա Թուրքիայի հարավ-արևելք) և հարակից ցածրավայրերում²: Նրանք բաժանված էին մի քանի ցեղերի և համեմատաբար անկախ էին Օսմանյան իշխանություններից³: Հարրյարիի քոչանիս (Կուղշանիս) գյուղը մինչև 1915 թ. ցեղասպանությունը եղել է Արևելքի եկեղեցու կաթողիկոսի նստավայրը: «Նեստորականների» երկրորդ խոշոր զանգվածը բնակվում էր Իրանում՝ Ուրմիա լճի արևմտյան ափամերձ շրջաններում և բուն Ուրմիա քաղաքում⁴:

² Վաղ միջնադարում (V դարից սկսած) Հայաստանի հարավային շրջաններում բնակվող ասորիների վրա տարածվում էր Արևելքի եկեղեցու Սմբատի մետրոպոլիտների իրավասությունը, և նրանք կոչվում էին «Սմբատի ու Հայաստանի մետրոպոլիտներ»: V-ից մինչև առնվազն XIII դ. վերջը Սմբատի մետրոպոլիտությունն ունեցել է բուն Հայաստանում՝ Վահան Տիր շրջանում գտնվող թեմ, որի կենտրոնը Բգնուսիք գավառի Խլաթ քաղաքն էր, և որի մեջ մոտավորապես XI դ. սկզբից մտնում էր նաև Վան քաղաքը: Խլաթի ծնունդ է եղել Արևելքի եկեղեցու Բասրայի մետրոպոլիտ Սովորունը (XII-XIII դդ.), ով հայտնի է Աստվածաշնչի մեկնությանը նվիրված «Սեղլի գրքով» (Gorgias Encyclopedic Dictionary of the Syriac Heritage, Gorgias Press, 2011, էջ 378):

³ Հարրյարիի ասորիների պատմության, կենցաղի և սովորությունների մասին տես Լալայան Ե., Կասպուրականի ասորիները, «Ազգագրական հանդես», 24 (I), 1913, էջ 181-232 (<http://ethno.asj-oa.am/644/>):

⁴ 1828 թ. ուս-իրավական պատերազմից հետո մի քանի հարյուր ուրմացի ասորի ընտանիքներ հաստատվեցին Արևելյան Հայաստանում՝ հիմնելով Կոյլասար (հետագայում՝ Դիմիտրով): Դվին-Սատրի (Վերին Դվին), Արգիկ, Շահրիար, Գյոլ-Սատրի, Ուրմիա «նեստորական» և Սիյանուր քաղեական գյուղերը, որոնցից առաջին չորսն այսօր էլ գյուրյուն ունի: Երկու ասորական գյուղ՝ Սամավար և Բեղրա-Խաթուն, եղել են Կարսի շրջանում. դրանք հիմնադրել էին 1877-78 թթ. ուս-թուրքական պատերազմի հետևանքով Օսմանյան կայսրությունից զարթած «նեստորականները»: Կարսի շրջանը Թուրքիային բնակչությունը հետո տեղի քրիստոնյա բնակչությունը կամ ոչնչացվեց, կամ ստիպված եղավ զարթել Ռուսաստան: Արևելյան Հայաստանի համատերառում արժե է հիշատակել, որ X-XI դդ. Արևելքի եկեղեցին ունեցել է Աղվանիք տարածքը ներառող թեմ, որի կենտրոնը Պարտավի էր: Քանի որ Աղվանիքը ասորիներ չեն եղել, ապա ակնհայտ է, որ թեմը ստեղծվել էր կովկասյան տարածաշրջանում Արևելքի եկեղեցու քարոզական գործունեությունը խթանելու նպատակով:

Օտարերկրյա, առաջին հերթին՝ ամերիկացի և ուսւ միսիոներների շանքերով, նախապատերազմյան տարիներին իրանական ասորիների մեծ մասը բողոքականություն և բյուզանդական ծեսի ուղղափառություն էր ընդունել, իսկ Արևելի Եկեղեցուն հավատարմություն պահպանածները փոքրամասնության էին վերածվել⁵:

Քաղեականները (կաթոլիկություն ընդունած և ինքնուրույն եկեղեցի կազմած Արևելի եկեղեցու նախկին հետևորդներն են) հիմնականում բնակվում էին Սոսուլի վիլայեթի հյուսիսում, Բիթլիսի և Դիարբեքիրի վիլայեթների որոշ վայրերում, ինչպես նաև Ուրմիայի շրջանի մի քանի գյուղերում: Քաղեականներն այսօր Իրաքի խոշորագույն քրիստոնեական համայնքն են⁶:

Արևելյան ասորիներն իրենց ճնշող մեծամասնությամբ շարունակում էին խոսել զանազան արդի արամեական բարբառներով, որոնք բաժանվում էին մի քանի խմբերի:

Անտիոքի ասորի եկեղեցու հետևորդների («հակոբիկներ») հոծ բնակության ամենախոշոր շրջանը Տուր-Արդինն էր (արամեերեն՝ «[Աստծո] երկրպագուների սար», այսօրվա թուրքիայի հարավում՝ Մարդինից արևելք): Այն պատմական Ասորիքի մի մասն է, ասորական վանականության հնագույն օջախը: Տուր-Արդինի տարածքում էր գտնվում ասորական միջնադարյան մշակույթի խոշոր կենտրոն՝ Մծբին քաղաքը, որն օսմանյան տիրապետության տակ վերածվեց խղճուկ և խարիսուն Նուսայրին ավանի:

Ինչպես և Ուրմիայի շրջանի ասորիները, Օսմանյան կայսրության քրիստոնյաները հասանելի էին արևմտյան կաթոլիկ և բողոքական միսիոներների համար, ովքեր նրանց միջավայրում զգալի հաջողությունների էին հասել: Այսպես, Մար-

վենի հայերի ու ասորիների զգալի հատվածը կաթոլիկության էր ընդունել, իսկ հայ և ասորի բողոքականների մեծ քանով աշխի էին ընկնում Խարքերդն ու Ուրֆան⁷:

Ի տարբերություն «նեստորականների», արևմտյան ասորիներն ավելի լավ էին ինտեգրված օսմանյան հասարակության մեջ և ավելի լոյալ էին Օսմանյան կայսրությանը: Նրանց մտավորականության շրջանում՝ հատկապես երիտրուքական հեղաշրջումից հետո, որոշ տարածում ուներ այն զաղափարը, թե «քարեփոխված» և «ժողովրդավարական» Օսմանյան կայսրությունում կարելի է հասնել մահմեդականների հետ խաղաղ գոյակցության, իրավահավասարության և ազգային կյանքի զարգացման: Դրա հետ մեկտեղ, բազմաթիվ ասորիներ համակրում էին հայկական ազգային-ազատագրական շարժմանը, սակայն սեփական ազգային-ազատագրական զաղափարախոսություն և շարժում օսմանյան ասորիները չունեին:

Օսմանյան կայսրությունում «հակոբիկները», լինելով առաքելական հայերի հետ նույնադավան, կազմում էին հայկական միջլեթ-ի, այսինքն՝ պաշտոնապես ձանաշված և ներքին ինքնավարություն վայելող կրոնական փոքրամասնության մի մասը: Պաշտոնական փաստաթղթերում նրանց երթեմն նույնիսկ կոչում էին յաղութի երմենիլեր, այսինքն՝ «հակոբիկ հայեր», թեև ավելի տարածված էր սյուրյանի կաղիմ՝ «ին ասորիներ», այսինքն՝ ոչ կաթոլիկներ կամ բողոքականներ անվանումը: Մինչև 1783 թ. «հակոբիկներն» ունեին օսմանյան իշխանությունների հետ անմիջականորեն շփվելու հնարավորություն, սակայն այդ թվականից հետո իշխանությունները, որոնք ցանկանում էին հնարավորինս կենտրոնացնել քրիստոնյա համայնքների կառավարումը, գրկեցին նրանց այդ իրավունքից: «Հակոբիկները» պետք է այդուհետ դիմեին Կոստանդնուպոլիսի հայոց պատրիարքի ծառայութ-

⁵ Հակոբյան Ա., Արամեազիտության և ասորագիտության ներածություն, Երևան, 2015, էջ 532:

⁶ Gorgias Encyclopedic Dictionary of the Syriac Heritage, էջ 92:

⁷ Հակոբյան, նշվ. աշխ., էջ 538:

յուններին, ով ներկայացնում էր մայրաքաղաքում բոլոր միաբնակ քրիստոնյաներին (նույն իրավիճակը տիրում էր և Երուսաղեմում, որտեղ մինչև 1865 թ. ասորի, դպտի և եթովպացի հոգևորականությունը ենթակա էր հայոց պատրիարքին): Քաղղեական և Ասորի կաթոլիկ եկեղեցիների հետևորդները պատկանում էին 1831 թ. ստեղծված հայ կաթոլիկների միլլերին (Հայ կաթոլիկ եկեղեցու համայնքի մեջ ասորիների ընդգրկում դեռև XVIII դ.արձանագրվել է Մարդինում⁸):

Զևականորեն հայկական առաքելական միլլերին էին դասվում նաև Վանի վիլայեթի «նեստորականները», չնայած որ, զուտ դավանական առումով, Հայ առաքելական եկեղեցին «անհամատեղելի» է Արևելքի եկեղեցու հետ: 1864 թ. անհաջող փորձ արվեց ստեղծել առանձին «նեստորական» միլլեր: Իրենց աշխարհագրական մեկուսացվածության և կենտրոնական իշխանությունից ինքնավարության ավելի բարձր աստիճանի պատճառով, «նեստորականները», փաստորեն, դուրս էին մնում միլլերների համակարգից:

Ինչ վերաբերում է բողոքականներին, ապա քրիստոնական ճնշման ներքո Օսմանյան կայսրությունը 1850 թ. հայտարարեց բողոքականների միլլեր ստեղծելու մասին⁹, սակայն փաստացի ճանաչում այդ միլլերն այդպես էլ չստացավ: Կայսրության բողոքականների մեծամասնությունը հայեր էին, և բողոքականություն ընդունող ասորիներն ինքնարերաբար միավորվում էին հայերի հետ ընդհանուր՝ իր էությամբ հայկական համայնքի մեջ (Ուրֆայում, սակայն, բողոքական ասորիներն ունեին իրենց սեփական եկեղեցին¹⁰):

⁸ De Courtois, S., *The Forgotten Genocide: Eastern Christians, the Last Arameans*, Gorgias Press, 2004, էջ 171:

⁹ Shaw S., Shaw E., *History of the Ottoman Empire and Modern Turkey: Volume 2*, Cambridge University Press, 2002, էջ 127:

¹⁰ Kieser, H.-L., *Ottoman Urfa and its Missionary Witnesses*, in Armenian Tigranakert/Diarbekir and Edessa/Urfa, ed. Richard G. Hovannisian, Mazda Publishers, Costa Mesa, California, 2006, էջ 413:

Հայկական վիլայեթների խոշոր քաղաքներում և քազմաքիվ զյուղական վայրերում հայերն ու ասորիներն ապրում էին կողք-կողքի և ունեին բարիդրացիության և համագործակցության բազմադարյան ավանդույթներ: Հայ առաքելական եկեղեցին չէր փորձում միջամտել քոյր Անտիոքի ասորի ուղղափառ եկեղեցու ներքին գործերին, թեև եղել են անախործ բացառություններ (առավելապես եկեղեցապատկան ունեցվածքի տնօրինման իրավունքի շուրջ), որոնք, ժամանակ առ ժամանակ, լարվածություն են առաջացրել հայ-աստրական հարաբերություններում և նույնիսկ ստիպել ասորիներից ումանց հայերին ընկալել որպես ասորական ազգային ինքնությանը սպառնացող վտանգ: Անվանի մտավորական և լրագրող, Դիարբեքիրի ծննունդ Նաում Ֆախկը (1868-1930 թթ.) իր հոդվածներից մեկում գրել է, թե հայերը, դիտելով իրենց ու ասորիներին որպես մեկ միասնություն, «ավելի են մեր միլլերը, մեր տեսակն ու մեր լեզուն, գրավել են մեր եկեղեցիները, վանքերն ու կրոնական հաստատությունները, դարձրել են մեզ իրենց ենթականները»¹¹: Նրան են պատկանում խոսքերը, թե ասորիները «մեկ կաթիլ են հայկական ծովի մեջ» և «հայերի ստվերում են»: 1895-96 թթ. հայկական ջարդերից հետո Ասորի ուղղափառ եկեղեցու պատրիարք Իգնատիոս Արդելմասիիր շտապեց իր հավատարմությունը հայտնել Օսմանյան իշխանություններին և նրանց հասցեագրված նամակներից մեկում գրել, թե «հայերը անցյալում փորձել են հայացնել մեր լեզուն և մեր կրոնը, որոնք մինչ օրս գոյատել են շնորհիվ մահմեդական օրենքի<...> Բիթլիսի և Ուրֆայի մեր հոգևոր առաջնորդների նամակները, որոնք ստորագրված են նաև այլ հարզված անձանց կողմից, ապացուցում են, որ հայերը թալանել և սպանել են մեր համայնքներից շատե-

¹¹ Trigona-Harrany, B., *The Ottoman Süryani from 1908 to 1914*, Gorgias Press, 2009, էջ 199:

րին»¹²: Այս կապակցությամբ, Դիարբեքիրում Մեծ Բրիտանիայի հյուպատոսը տեղեկացրել է Կոստանդնուպոլսում իր դեսպանությանը, որ այս և նման այլ նամակները գրվել են Դիարբեքիրի վալիի պարտադրանքով¹³:

1870-ականներից սկսած «հակոբիկները» դիմում էին օւմանյան իշխանություններին, խնդրելով իրենց ճանաչել որպես առանձին միլլեր: Կառավարությունը 1882 թ. ի վերջո զնաց ընդառաջ, և ասորի պատրիարքը, առնվազն թղթի վրա, ստացավ կառավարության հետ պաշտոնական շփման մեջ մտնելու հայոց պատրիարքի հետ հավասար իրավունք: Քաղղեականները որպես ինքնուրույն միլլեր հայկական կաթոլիկ միլլերից առանձնացն 1889 թ., իսկ Սուրբ կաթոլիկ եկեղեցու համար այդ գործընթացն ավարտվեց 1890-ականների վերջում:

Լեզվական առումով Օսմանյան կայսրության արևմտյան ասորիները բավականին խայտարդետ հավաքածու էին: Արդի արամեական բարբառները պահպանվել էին միայն Տուր-Արքինում և Դիարբեքիրի մերձակայքում, ինչն այդ շրջանի «հակոբիկներին» միավորում էր արևելյան ասորիների հետ: Սիրիայի ասորիները գերազանցապես արարախոս էին, նրանց մոտ տարածում ունեին նաև արաբական ու արարացված անունները, և արաբները նրանց հաճախ քրիստոնյա արարներ էին ընկալում: Արաբերենը (անատոլիական բարբառի տեսքով) տարածված էր նաև Սարդինում և Սղերդում, որտեղ այդ լեզվով խոսում էին ոչ միայն ասորիները, այլև հայերը: Արևելյան վիլայեթների գյուղաբնակ ասորիները հիմնականում թրքախոս և քրդախոս էին:

Առանձին և բավականին ստվար զանգված էին հայախոս ասորիները: Ասորատառ հայերեն ձեռագրերը վկայում են, որ

¹² Joseph, J., *Muslim-Christian Relations and Inter-Christian Rivalries in the Middle East*, Albany, State University of New York Press, 1983, էջ 92-93:

¹³ Նույն տեղում:

հայախոս ասորիների խոշոր համայնքներ առնվազն XVII դ. կեսերից գոյություն են ունեցել Սալաթիայի և Խարբերդի միջև ընկած տարածքում: այստեղ է գտնվել Անտիոքի ասորի ուղղափառ եկեղեցու Մոր Արիայ վանքը, որն, ըստ ամենայնի, ասորատառ հայերենի գլխավոր կենտրոններից մեկն էր¹⁴ (գրի համակարգը, երբ ասորական տառերն օգտագործվում են այլ լեզվի համար, կոչվում է զարշունի):

XIX դ. ամբողջապես հայախոս էին Խարբերդի և Ուրֆայի ասորիները: Բացի դրանից անկախ ազգությունից, հայախոս էին Դիարբեքիրի բոլոր քրիստոնյաները¹⁵: Մեծ թվով հայախոս ասորիներ կային Բիթլիսում, Սալաթիայում, Սարաշում և Աղանայում: Հստ էության, բոլոր հայաշատ վայրերում ասորիները խոսում էին հայերեն և քրդերեն¹⁶:

Ասորիների ներկայությունը Խարբերդում արձանագրված է XI դարի սկզբից, երբ քաղաքը «Հեսնադ-Զիյադ» («Զիյադի-բերդ») անվամբ հիշատակվում է Անտիոքի ասորի ուղղափառ եկեղեցու թեմերի ցանկում¹⁷: «Հեսնադ-Զահիդ» արտասանական տարբերակով քաղաքը հիշատակվում է ասորի խնչորագույն հանրագիտակ Գրիգորբար Հերքայոսը (1226-1286 թթ.): Հետազայում ավելի է տարածվում արաբական «Հիսն Զիյադ» տարբերակը: Այն իր «Երկրների բառարանում» հիշատակվում է արաբ անվանի աշխարհագրագետ Յակովալ-Համավին (1179-1229 թթ.) «Հիսն Զիյադ, հայկական հողերում,

¹⁴ Takahashi, H., Weitenberg, J., *The Shorter Syriac-Armenian Glossary in Ms. Yale Syriac 9, Part 1*, Journal of the Canadian Society for Syriac Studies, Volume 10, 2010, էջ 68-83:

¹⁵ Kévorkian, R., *Demographic Changes in the Armenian Population of Diarbekir, 1895-1914*, in *Armenian Tigranakert/Diarbekir and Edessa/Urfâ*, ed. Richard G. Hovannisian, Mazda Publishers, Costa Mesa, California, 2006, էջ 265:

¹⁶ De Courtois, էջ 17, 64:

¹⁷ Fiey, J.-M., *Pour un Oriens Christianus Novus: répertoire des diocèses syriaques orientaux et occidentaux*, Orient-Institut, 1993, էջ 216:

اجنوب հայտնի է որպես Խարթաբիրք» («حسن زيد بارض أرمينية»): (ويعرف اليوم بخربت): Մեկ այլ նշանավոր արար աշխարհազրագետ, Շամսուդդին աղ-Դիմաշկին (1256-1327), պարզաբանում է, որ «Խարթաբիրք» է կոչվել քաղաքը, իսկ «Հիսն Զիյադ»՝ նրա հինավորց միջնաբերդը¹⁸:

Տարածաշրջանում ասորիների թվաքանակը, բյուզանդացիների քաջալերմամբ, աճել է XII-XIII դդ., և նրա կենտրոնը՝ Մալաթիան, դարձել «ասորական վերածննդի»՝ ասորական գրականության վերջին վերելքի կենտրոնը: Մալաթիայի մերձակայքի Մոր Բարսառում վանքում հաստատվել էր նաև ասորի ուղղափառ եկեղեցու պատրիարքի նստավայրը: Խարբերդի ասորական թեմը կրկին հիշատակվում է XIII-XIV դդ.: Այսպես, XIII դ. կեսերին Խարբերդի մետրոպոլիտ է եղել Դիոսկորոս Թեոդորոսը: Նա ծնվել է Խարբերդում՝ Սիրայի բար Բասիլ քահանայի ընտանիքում: Եղել է Խարբերդի մերձակայքի ասորական Բառութ վանքի միարանը (վանքն առաջին անգամ հիշատակվել է 1057 թ., մուտքվածների կողմից գրավվել 1311 թ., գոյության ընթացքում ունեցել է չորս աբբահայր եպիսկոպոս¹⁹): Մասնագիտացել է դասական ասորերենի, գեղագրության և մանրանկարչության մեջ, ապա՝ մինչև եպիսկոպոս դառնալը, գրադիւն ձեռագրերի հայթայթումով և արտագրությամբ: Հայտնի են իր գրչի տակից դուրս եկած վեց ձեռագրեր, որոնցից մեկը պահպելիս է եղել Խարբերդի ասորական եկեղեցում: Դիօսկորոս Թեոդորոսին իր «Եկեղեցական պատմության» մեջ հիշատակվում է Գրիգոր բար Հերքա-

¹⁸ Kramers, J. H., *Kharput, Encyclopaedia of Islam*, First Edition (1913-1936), ed. M. Th. Houtsma, T. W. Arnold, R. Basset, R. Hartmann, Brill Online, http://referenceworks.brillonline.com/entries/encyclopaedia-of-islam-1/k-harpu-t-SIM_4127:

¹⁹ Barsoum, Ignatius Afram I, *The Scattered Pearls*, Second revised edition, Gorgias Press, 2003, էջ 562:

յուր՝ կոչելով նրան «Եկեղեցու անվանի վարդապետ»²⁰: XIV դարից հայտնի է Խարբերդի թեմի առաջնորդ Հովսեփը, ով բողել է քաղաքին բաժին ընկած փորձությունների արձանագրությունը²¹: Ըստ ամենայնին, XVI դ. սկզբին ասորական վանք է եղել և բուն Խարբերդում, որտեղ, որոշ ժամանակով, մեկուսացել է Տուր Արդինի պատրիարք²² Մատուշ Զազացին²³:

Ըստ ամերիկացի բողոքական միսիոներ Horatio Southgate-ի՝ ով 1840-ականների կեսերին եղել էր Խարբերդում, քաղաքում բնակվել է 150 ասորի ընտանիք: Հեղինակն անմիջապես ավելացնում է, որ այդ տվյալները հավաստի չեն, քանի որ, իր խոսքերով, Օսմանյան կայսրության քրիստոնյաները սովորություն ունեին միտումնավոր նվազեցնել իրենց թվաքանակը²⁴: Ըստ մեկ այլ՝ թուրքական աղբյուրի, Խարբերդում կար մոտ 60 ասորական ծովյալ²⁵ (թուրքերն, իրենց կողմից, նույնպես սովորություն ունեին միտումնավոր նվազեցնել քրիստոնյաների իրական թվաքանակը):

1911-12 թթ. օսմանյան մարդահամարի տվյալներով, Խարբերդի վիլայետում բնակվել է 2,823 ասորի, մինչ Կոստանդնուպոլիսի Հայոց պատրիարքարանը, ինչպես նշեցինք, նույն ժամանակահատվածի համար տալիս է 5,000 թիվը: Երկու աղբյուրների տվյալներից էլ ստանում ենք ասորիների ու հայերի գրեթե նույն հարաբերակցությունը՝ համապատասխանարար 1/31 և 1/33: Բուն Խարբերդում, որտեղ քրիստոնյանե-

²⁰ Նույն տեղում, էջ 462-63:

²¹ Նույն տեղում, էջ 155:


²² 1364-1816 թթ. Տուր Արդինում եղել է Անտիոքի պատրիարքությանը պազարի պատրիարքություն:

²³ Barsoum, նշվ. աշխ., էջ 510:

²⁴ Southgate, H., *Narrative of Visit to the Syrian [Jacobite] Church of Mesopotamia*, New York, 1856, էջ 87:

²⁵ Sunguroğlu, İ., *Harput Yollarında*, İstanbul, Yeni Matbaa, 1958. մեջբառական է Trigona-Harrany, էջ 50:

բը մինչև Մեծ Եղեռնը կազմում էին 20 հազար հաշվող բնակչության մոտ կեսը, այդ հարաբերակցությունը պետք է որ ավելի փոքր լիներ: Ամեն պարագայում, մինչև 1915 թ. ասորիների թիվը Խարբերդում դժվար թե գերազանցեր մեկ հազարը: Հարկ է նաև հաշվի առնել, որ 1890-ականներից սկսած, խարբերդից ասորիները շարունակաբար արտազարդել են ԱՄՆ, որտեղ Մասաչուսեթս նահանգի Վուոթեր և Բոստոն քաղաքներում աշխարհամարտի նախօրեին արդեն կար բավականին ստվար և լավ կազմակերպված ասորական համայնք (ի դեպ, ԱՄՆ-ում խարբերդից ասորիները 1919-21 թթ. հայերեն հրատարակում էին «Բարելոն», իսկ 1933-38 թթ. անգլերեն՝ “Assyrian Progress” պարբերականները, որոնք հարուստ նյութ են տրամադրում Խարբերդում և ԱՄՆ-ում նրանց կյանքի մասին): Ըստ ԱՄՆ 1910 թ. մարդահամարի՝ Վուոթերում բնակվել է «ասիական թուրքիայից» ներգաղթած 2,832 մարդ, որոնք իրենց ճնշող մեծամասնությամբ Խարբերդի վիճակի հայեր և ասորիներ պետք է լինեին²⁶:



Խարբերդի «Ասորվոց թաղը»

Խարբերդում ասորիներն ունեին իրենց սեփական թաղը (հայերեն՝ «ասորվոց թաղ», թուրքերեն՝ սյուրյանի կաղիմ մահալլեսի), որում միևնույն տանիքի տակ ապրում էր մինչև 20 հոգի: Ասորական թաղը կազմել է քաղաքի «Վարի թաղի» մի մասը (ավելի բարձր գտնվող մյուս խոշոր թաղը կոչվել է «Վերի թաղ»): Ասորիները քաղաքում մեկուսացած չեին և հայերի ու մուսուլմանների հետ ամենօրյա ակտիվ շփման մեջ էին: Նրանք հիմնականում զբաղված էին առևտորով (օրինակ՝ մետաքսի) և արհեստներով: Մեծ հոչակ ունեին, հատկապես, ասորի ջուլհակներն ու նրանց արտադրած «ասորոց չիթը», որը հատուկ եղանակով արտադրվող տոկուն հյուսվածք էր, որպես կանոն՝ կարմիր գույնի, զարդարված ծաղկիների և թոշունների պատկերներով²⁷: Կային նաև մի քանի ասորի հոգատերեր:

²⁶ ԱՄՆ մարդահամարների արխիվային տվյալներն ըստ www.census.gov կայքի: Հատկանշական է, որ օսմանյան ասորիները Հյուսիսային Ամերիկայում բնակություն էին հաստատում հայրենակցական սկզբունքով: Այսպես, խարբերդիները հաստատվեցին Մասաչուսեթսում (Վուոթեր և Բոստոն քաղաքներում, որտեղից նրանց մի մասն այնուհետև տեղափոխվեց Կալիֆորնիա), տուրաբդինցիները՝ Ռոդ Այլենդում, դիարբերիցիները՝ Նյու Զերսիում, մարդինցիները՝ Սոներեալում, հոմսեցիները՝ Դերբոյում և Ֆլորիդայում:

²⁷ Ճիզմէճեան Ա., Խարբերդ եւ իր զաւակները, Ֆրեզն, 1955, էջ 87-88: Ճեղինակն այսպիսի մանրամասներ է հաղորդում ասորի ջուլհակների մասին. «Պետք է ըստ որ Խարբերդի ասորիները այս արհեստը կը վարեն»

Քաղաքի քրիստոնյա բնակչության մեծամասնության՝ հայերի հետ ասորիները կազմում էին մոլուգաններին հակակշռող միասնական հասարակական-տնտեսական, կրոնական և մշակութային հանրություն: Ըստ Horatio Southgate-ի՝ հայերն ու ասորիներն Խարբերդում ապրում էին «ամենասերտ մտերմության պայմաններում, այցելում էին միմյանց եկեղեցիները²⁸, սակայն չէին ամուսնանում իրար հետ»²⁹: Վերջին պնդումը, սակայն, հերքվում է փաստացի արձանագրված բազմաթիվ հայ-ասորական ամուսնություններով՝ ինչպես Խարբերդում, այնպես էլ Օսմանյան կայսրության այլ

իսկական ընկերակցութեան մը օրինակով: Այսինքն, արհեստը ունի իր գաղտնիքները, գորս պէտք է պահպանել իրարու միջեւ պէտք է ստեղծել փոխադարձ վստահութեան ու փոխադարձ շահի պայմաններ, մեկը միտիսին պէտք է օրակցիլ, պէտք է մանաւանդ պաշտպանել յաճախորդին ապրանքը, որ իրենց մօտ ներկուելու դրկուած է: Այս բոլորը նաև ստեղծած է վստահութիւն յաճախորդին ու ասորի արհեստատրին միջեւ: Օրինակի համար, զարևան եղանակին, ասորիներ կայցելին գիտերը ու այնտեղերէն կը հաւաքէն զանազան կտաներու հիւսուածքներ, որոնք պէտք է ներկել ու աշնան վերադարձնել իրենց տէրերուն: Այս բոլորը կը կատարուի առանց փաստաթութիւն ու ստորագրութեան, ամէն ինչ իմսուած է ասորիներու այս արհեստին նկատմամբ վստահութեան վրայ: Գողեր անպակաս են ասորոցիք կոչուած վայրէն, նկատի ունենալով որ կտաներն ու զանազան հիւսուածքները բացօթեայ փոռուածկ՝ ըլլան այնտեղ: Բայց հսկողութիւնը ասորիներուն համար հաւաքական պարտականութիւն մըն է: Երբ պատահի որ գոր մը յայտնուի, պահանձները ձայն կուտան եւ կարձ ժամանակի մը մէջ մեծաթիւ ասորիներ կը յայտնուին այս վայրը՝ փայտերով ու բիբերով գինուած: Ասորիները իրենց ամրող համայնքով տէրն ու պահապանը կը կանգնին այս արհեստին: Ասորի ոստայեանէ եւ վաճառական ընտանիքներէն կը յիշուին՝ Եաղուա Տաշօն եւ իր որդին՝ Սուրիան, Ակոր եւ Պողոս Փերջ Եղբայրները, Մինաս, Պողոս եւ Սարտիրոս Զաքալպանները (Եղբայրներ), Սալճանները, Կարապետ, Գերոգ եւ Աւետիս Տօնապետները, Աղայիկները, Աղայէկ, Կեվարկիս եւ Գասպար Չթձի Եղբայրները»:

²⁸ Տվյալներ կան, որ Խարբերդի հայերի մէջ տարածում ուներ ասորի սրբերի պաշտամունքը:

²⁹ Southgate, նշվ. աշխ., էջ 87:

գործերում և ԱՍՆ-ում: Այսպէս, ըստ De Courtois-ի, «Դիարբետիքների և Սարդինի հայ համայնքները շատ մեծ էին, և հաճախ նույները կազմում էին բանկատերերից, առևտրականներից, բժիշկներից և մտավորականներից կազմված հասարակական վերնախավը, որի հետ ասորական կարևոր ընտանիքները խառնվում էին»³⁰: Սոտիկությունը հայերի հետ թույլ էր տալիս Դիարբետիքի և Սարդինի մի քանի նշանավոր ասորի ընտանիքներին «քարձրանալ հասարակական սանդղակը»³¹: Ասորական ծագմամբ ամերիկացի պատմաբան Eden Naby-ն նույնպես նշում է, որ Հայ առարելական և Ասորի ուղղափառ եկեղեցիների նույնադավանության պատճառով, փառը ամուսնությունները ոչ միայն հնարավոր էին, այլև համախակի տեղի էին ունենում»³²: Նա ապա ավելացնում է, որ «բողոքականություն ընդունած ասորիներն ամուսնանում էին այլ բողոքականների հետ՝ անկախ նրանց ազգությունից: Խարբերդում, ուր բողոքականների ճնշող մեծամասնությունը հայեր էին, բողոքական ասորու համար ամենահավանական գոյզը հայն էր»³³ (ինչպես նշեցինք վերևում, Օսմանյան կայսրությունում բողոքականություն ընդունող ասորիները, որպես կանոն, միավորվում էին հայերի հետ ընդհանուր՝ իր եւրիշամբ հայկական համայնքի մէջ: այդ պատճառով բողոքական ասորիների շրջանում հայացման միտումներն ավելի ուժեղ էին, քան ավանդական հարանվանություններին հավատարմություն պահպանողների մէջ):

XIX դ. վերջում Օսմանյան կայսրությունում գրանցված էին 49 տարրական, 5 երկրողական և 1 միջնակարգ ասորա-

³⁰ De Courtois, նշվ. աշխ., էջ 44:

³¹ Նույն տեղում, էջ 47:

³² Naby, E., *Almost Family: Assyrians and Armenians in Massachusetts*, in *The Armenians of New England*, ed. by Marc Mamigonian, Armenian Heritage Press, 2004, էջ 46:

³³ Նույն տեղում:

կան դպրոցներ³⁴: Հայտնի է, որ Խարբերդի ասորիներն ունեին մեկ դպրոց, որը Վահե Հայկը «պարզ նախակրթարան» է քննութագրել³⁵, իսկ խարբերդից ասորի Ալեք Սողոն իր հայերեն հոդվածներից մեկում կոչել «խոնարի»³⁶: 1909 թ. ասորի տիկնանց Մարթ Շիմունի («Մրուիի Շիմունի») ընկերությունը՝ հանձին Հանրմ Բարսումի ու Մարիամ Տոնապետի, Խարբերդում հիմնել էր առանձին իջական դպրոց: 1912 թ. այդ դպրոցը, որի տնօրենուհին Մրուիի Դաշնու էր, ուներ 6 ուսուցիչ (հինգը կանայք) և 60 աշակերտուհի³⁷: Դրա հետ մեկտեղ, Խարբերդի հայկական դպրոցները, այդ թվում օտարերկրյա միսիոների հիմնած, բաց էին ասորիների համար³⁸ և նրանցում նաև ասորի ուսուցիչներ են եղել: Այսպես, երկու ասորուիիներ՝ Սառա և Շամիրամ, հիշատակվում են կապուցինների հիմնած «Սեն Քլեր» օրիորդաց երկրորդական վարժարանի ուսուցիչների կազմում (ի դեպ, վարժարանի շենքը նախկինում պատկանել էր ասորի Նաման ընտանիքին)³⁹: Ասորի ծնողներն, ամենայն հավանականությամբ, նախընտրում էին իրենց զավակներին ուղարկել հենց այդ դպրոցները, և սա է, թերևս, պատճառը, որ ասորական «խոնարի նախակրթարանը» 1912 թ. փակվեց:

Ասորական դպրոցներում դասավանդման հիմնական լեզուն հայերենն էր: Դրանց ասորական բնույթն արտահայտվում էր նրանում, որ աշակերտներն ուսումնասիրում էին ասորական գիրն ու կրոնը, կարևորագույն աղոքքներն ու սաղմոսները և ասորի եկեղեցու կողմից առավել հաճախ գործածվող մի քանի օրիներգեր: Դասական ասորերենը, որպես այդ-

³⁴ Trigona-Harrany, նշվ. աշխ., էջ 74, տողատակ 186:

³⁵ Հայկ Վ., Խարբերդ եւ անոր ուկեղէն դաշտը, Նյու Յորք, 1959, էջ 511:

³⁶ Սուսո Ալեք. Աշուր Ս. Եռուսաֆ, «Ասորվոց անզուգական ռահվիրան» ժողովածու, հրատ. Ասորվոց Հնայակ Ընկերության, Բուստոն, 1919:

³⁷ Trigona-Harrany, նշվ. աշխ., էջ 175:

³⁸ Joseph, նշվ. աշխ., էջ 78:

³⁹ Հայկ Վ., նշվ. աշխ., էջ 160:

պիսին, չեր ուսումնասիրվում, և մեխանիկորեն սերտված տեքստերից, կրոնական բնույթի մի քանի արտահայտություններից բացի, շատ քիչ ասորիներն էին ի վիճակի ցուցաբերել այդ լեզվի որևէ իմացություն⁴⁰: Ասորական գիրը հիմնականում գործածվում էր թուրքերենը՝ գարշունի եղանակով գրի առնելու համար: Խարբերդում գարշունիով լույս են տեսել երեք պարբերականներ (տե՛ս ստորև), այն կարելի էր տեսնել տապանաքարերի վրա և մի քանի այլ արձանագրություններում: Ասորական գրի գործածություն հայերենի համար Խարբերդում չի արձանագրվել (որպես գաղտնաագրություն, փորձեր, թերևս, արվել են), և Խարբերդի ասորիները ոչ միայն հայախոս, այլև «հայագիր» էին: Սա միանգամայն տրամարանական էր, քանի որ առօրյայում անիմաստ պետք է դիտվեր հրաժարվել հայկական գրից հօգուտ՝ հայերենի պարագայում դժվար ընթեռնելի գարշունիի (նշենք, որ թուրքերենի պարագայում ավանդական արաբական գրի փոխարինումը կառուցվածքով և սկզբունքով ցեղակից ասորականով որևէ դժվարություն չի ներկայացնում. օսմանյան ասորիները լայնորեն գործածում էին ասորատառ թուրքերենը, նույնիսկ Ասորի ուղղափառ եկեղեցին՝ իր ներքին գրագրության համար):

Հայտնի չէ, թե երբ են Խարբերդի ասորիները կորցրել ասորերենը, կամ, ինչպես նրանք էին ասում (դատելով «Բարելոնից»՝ «ասորենը», եթե ընդունենք, որ Խարբերդում ընդհանրաբես երբիցեւ եղել են ասորախոս ասորիներ: «Բարելոնի» հոդվածներից մեկում կարդում ենք. «Սուտավորապես երկու դար առաջ էր, որ մեր ցեղը Խարբերդի և շրջակայի մեջ կորսնցուց յուր լեզուն, և մինչև այսօր միայն օլաֆ բերը [այ-

⁴⁰ Աղավաղված ասորերենով այդպիսի մի քանի արտահայտություններ, «հակառակ գարշունիով», այսինքն հայատառ ասորերենով, կարելի է գտնել «Բարելոնում», օրինակ՝ Հայրիսմավլուտերտումօրանուրիշօրշիթօրթօարիիխթօ» «Օրինյալ է մեր Տիրոց ծնունդը և օրինյալ նոր տարի»:

բուրենք] կա մեզի ժառանգք⁴¹: Այսինքն, ըստ հեղինակի, Խարբերդի ասորիներն իրենց լեզուն կորցրել են XVII դ. առաջին քառորդից հետո (հարկ է նշելոր Խարբերդի և Մալաթիայի շրջաններից սերող ասորատառ հայերենի ամենավաղ նմուշները պատկանում են հենց XVII դ.): Եթե նկատի ունենանք, որ Խարբերդից դեպի հարավ՝ Տուր Արդինում, տուրոյ կոչվող արդի արամեական բարբառը գոյատևում է մինչև այսօր, իսկ Դիարբեքիրի մերձակայքի առնվազն երկու գյուղերում տուրոյոյին մոտ մեկ այլ արամեական բարբառ՝ մլահուն, գոյատել է մինչև XX դ. վերջը⁴², ապա կարելի է ենթադրել, որ Խարբերդի շրջանում արդի արամեական ինչ-որ բարբառ, իրոք, կարող էր գոյատեսած լինել մինչև XVII դ., թեև գիտականորեն ապացուցել այս վարկածն այլևս հնարավոր չէ: Ամեն պարագայում, այդ բարբառը պետք է լիներ «ներմուծված», քանի որ Խարբերդը ի տարբերություն Տուր-Արդինի և Դիարբեքիրի, Ասորիի մասը չի կազմել և տեղական արամեական բարբառներ այստեղ չեն եղել⁴³: Naby-ն Խարբերդի ասորիների կողմից ասորերեն կորցնելու պատճառներից մեկը տեսնում է Ասորի ուղղափառ եկեղեցու դիրքորոշման մեջ, որը «հիմնական շեշտը դնում էր դասական ասորերենի վրա և հրաժարվում էր թարգմանել ծխակատարություններն ու հարակից նյութերը խոսակցական լեզվի»⁴⁴:

⁴¹ Գոյուն Ն., Ասորեն թերթը, որ պիտի գա, «Բարելոն». թիվ 4, սեպտեմբեր 16, 1920:

⁴² Jastrow O., *Der neuaramäische Dialekt von Mlahso*, Harrassowitz Verlag, Wiesbaden, 1994, էջ 6:

⁴³ Մինչև հարցի մանրազին ուսումնասիրումը, մենք ենթադրել ենք, որ Խարբերդի ասորիները կարող էին ունենալ իրենց բնորոշ խոսվածք կամ «ժարգոն», որի վրա արամեերենը ինչ-ինչ ազդեցություն քողած կլիներ: Հիմա էլ չենք բացառում, որ ասորիները, բացի կրոնական ոլորտին վերաբերող, օգտագործել են հայերին անհականալի հասուլենտ բառեր, սակայն հասու նյութի ուսումնասիրումը կասկած չի թողնում, որ իրենց առօրյայի լեզվով նրանք հայերից որևէ կերպ զանազանելի չեն եղել:

⁴⁴ Naby, նշվ. աշխ., էջ 46:

Naby-ն նշում է, որ Խարբերդի ասորիների համար ձշմարիս էր ընդհանուր միջինարևելյան լեզվական պարագիզմը, ըստ որի՝ տղամարդիկ տիրապետել են հասարակական վայրերի լեզուներին, սույն պարագայում՝ հայերենին և թուրքերենին (Դիարբեքիրում, որպես այլ օրինակ, բոլոր քրիստոնյաները, ինչպես նշվեց, եղել են հայախոս, իսկ հասարակական վայրերում, օրինակ՝ շուկաներում, խոսել են նաև քրդերեն⁴⁵), մինչ կանայք՝ ներփակված լինելով ընտանիքների և բաղերի շրջանակներում, տիրապետել են միայն ազգային լեզվին, սույն պարագայում՝ հայերենին⁴⁶: Այլ կերպ ասած, Խարբերդի ասորի կանայք գրեթե բացառապես հայախոս էին, մինչ տղամարդիկ հայերենից բացի տիրապետել են նաև քարբերենին (ասորական միջավայրում թրքալեզու մամուլի գոյությունը սրանում որևէ կասկած չի թողնում): Այս նույն հոգությունը 1870-ականների Տուր-Արդինում արձանագրել է գերմանացի սեմագետ Edward Sachau-ն, նշելով, որ Տուր-Արդինում «տղամարդիկ տուրոյոյից բացի հիմնականում տիրապետում են նաև քրդերենին և արաբերենին, մինչ կանայք և երեխաները խոսում են միայն տուրորոյով»⁴⁷:

Դրա հետ մեկտեղ, «Բարելոնի» մի քանի հոդվածներից կարելի է եղանականել, որ խարբերդցի ասորիների «ազգացի» երգերը հիմնականում թուրքերեն էին, ինչը հաճախ ճշմարիտ է նաև տեղի հայերի պարագայում: Մեզ է հասել միայն մեկ հիշատակում հայալեզու ասորական երգի մասին, որը կոչվել է «Ասորի եմ ես, ասորու որդի»⁴⁸:

⁴⁵ De Courtois, նշվ. աշխ., էջ 17, 64:

⁴⁶ Naby, նշվ. աշխ., էջ 47: De Courtois-ն նշում է, որ Սարդինի մերձակայքում իրեն պատահած ուն ուղղափառ ասորի նրբահիմի մայրը, որը մենք եր Դիարբեքիրում, մինչև այդ օրը խոսում եր միայն հայերեն (De Courtois, նշվ. աշխ., էջ 17, սողանուկ 2):

⁴⁷ Sachau E., *Reise in Syrien und Mesopotamien*, Leipzig, 1883, էջ 420:

⁴⁸ Donabed S., *Remnants of Heroes: The Assyrian Experience*, Assyrian Academic Society, 2003, էջ 77: Խարբերդցի ասորիների շառավիղ այս

Հայախոս լինելուց բացի, Խարբերդի ասորիները շատ հաճախ կրել են հայկական անուններ կամ աստվածաշնչային անունների հայկական տարբերակներ: Տարբեր աղբյուրներում մեր կողմից գրանցված ասորիների հայկական անուններն են Ազնիվ, Աղավնի, Անդրանիկ, Առաքել, Ավետիս, Արթին, Գևորգ, Զարուհի, Թորոս, Լուսիկ, Կարապետ, Կիրակոս, Հարաթյուն, Հովհակիմ, Հովհաննես, Մանուկ, Մարկոս, Մարտիրոս, Մելքոն, Մինաս, Նշան, Պետիկ, Պերճ, Պողոս, Սաքենիկ, Սահակ, Սրբուհի, Տոնապետ, Օհան: Ասորիները, փաստորեն, կարող էին կրել ցանկացած հայկական անուն (բացառությամբ, թերևս, Հայկի): Այս անունները հաճախ գործածվել են նաև որպես ազգանուններ: Այսպես, Խարբերդի նշանավոր ասորական ընտանիքներից մի քանիսը կրել են Տոնապետ, Պերճ, Մանուկ, Առաքել և նման այլ ազգանուններ: «Յան» վերջավորությամբ ազգանուններ Խարբերդի ասորիների մոտ, ովքեր, լինելով հայախոս, այնուամենայնիվ, կառչում էին իրենց ազգային ինքնությունից, հանդիպել են շատ հազվադեպ. այսպես, Օսմանյան կայսրության ասորի նշանավոր մտավորականներից էր Խարբերդի «Մբատյան» Ճեմարանի շրջանավարտ, բողոքական պատվելի Առաքել Պետիկյանը (1860-1902), ով, «Գիսակ» զրչանունվ, հայերեն զբաղվել է գրական գործունեությամբ (հատկապես հայտնի է նրա «Գիսակարան. Խոսք և խորհուրդ թի խորոց սրտի Գիսակ» ժողովածուն⁴⁹): Որոշ ասորիներ իրենց ազգանուններին

հեղինակի ուսումնասիրություններն առավելապես հիմնված են ԱՄՆ-ում հաստատված ասորիների բանավոր վկայությունների և ընտանեկան արխիվների վրա:

⁴⁹ Տագետեան Ա. և Իւրնեշլեան Ա., Հիրանանահայ գիրքը 1894-2012. մատենագիտական ցանկ, Բեյրութ, Հայկացյան Համալսարան, 2013, էջ 44: Հայտնի է Խարբերդի ասորու առևլազն մեկ ազգանուն ուսական -ով վերջավորությամբ. խոսքը «Բարելոնի» երկրորդ խմբագիր Նաում Բեշարովի մասին է, ով մինչև ԱՄՆ-ում հաստատվելը, ապրել է Կովկասում և, ըստ ամենայնի, ուսական հպատակություն է ստացել (Ցարական Ռուսաս-

տուն) վերջավորություն էին ավելացնում (օրինակ՝ Քեշիշյան, Բաբոսյան), որպեսզի ավելի հեշտ ստանան ԱՄՆ ներգաղցները իրավունք⁵⁰: Հոգևորականներն ու սարկավագներն, ըստ երևույթին, պաշտոնական գրություններում գործածել են ասորական բար («որդի») բառով կազմված ավանդական անուններ. այսպես, հայտնի է խարբերդի Յաղուր բար Թումանյանավագի անունը:

Հայկական անունների տարածված լինելն ակնհայտորեն պարագուել է որոշ ազգայնականորեն տրամադրված տարրերի և, հավանաբար՝ եկեղեցու դժողովությունը: Այսպես, «Բարելոնի» խմբագրականներից մեկում կարդում ենք. «Հայոց ուշագրավ տեղ չի բնուեր մեր անունները, ցուցուեք ինչ մը Եռուեննե, Ֆավլոս, Մարկոս, Աշոտ, Աֆրեմ անունները և կրեն, բայց շատ ու բազմաթիվ են մեր մեջ Հովհաննես, Պողոս, Կարապետ, Մարկոս, Կիրակոս»⁵¹:

Բացի հայկական անուններից, խարբերդի ասորիները պահու անուններ և ազգանուններ գործածել են նաև ավանդության ասորական անունները, ինչպես՝ Բարսամ, Բեշարա, Վահարզիս, Դաշո, Դենին, Սողո, Թումա, Հաննա, Մալք, Մարտրա, Յուհաննա, Նաման, Նաում, Շեմուն, Զիրջիս և այլ. ինչպես նաև արարա-թուրքական ծագում կամ տեսք ու-

ասորիներին գրեթե բացառապես գրանցում էին ուսականացված անուններով, որոնք պահպանվում են մինչ օրս): Թեև «Բարելոնի» ժողովածուահայերենն է, Բեշարովի հորդաններից պարզորդ երևում է, որ լեզուն՝ Կովկասում ապրած տարիներին, կրել է արևելահայերենի անունությունը: Բեշարովը, հավանաբար, Կովկասում ապրած միակ խարբերդ ասորին չէր, քանի որ արևելահայերենի ազդեցությունը (օրինակ՝ Հայոց հնչ պետք ե», «Բարելոն», խմբագրական, Ա տարի, թիվ 27, էպոս 22, 1920:

⁵⁰ Domabed S., Shamiran M., Harput, Turkey to Massachusetts: Notes on the Immigration of Jacobite Christians, in *Chronos: Revue d'Histoire de l'Université de Toulouse*, No.23, 2011, էջ21:

⁵¹ «Մեզի ի՞նչ պետք ե», «Բարելոն», խմբագրական, Ա տարի, թիվ 27, էպոս 22, 1920:

նեցող անուններ՝ Գոյուն, Դավուդ, Էլիի, Թումաջան, Իրրահիմ, Խորանդեր, Լուրժի, Խորի, Յաղուր, Յուլբեկ, Յուսուֆ, Նուրի, Չարալբաշ, Ռասին, Սաֆար, Քեշիշ և այլն: Որոշ տարածում ունեին նաև Եվրոպական անունները կամ աստվածաշնչան անունների Եվրոպական լեզուներում առկա ձևերը:

Մի քանի սերունդներ շարունակ լինելով հայախոս և «Բաբելոնի» էջերում ցուցաբերելով հայերենի փայլուն իմացություն, Խարբերդի ասորիները, այդուհանդերձ, չէին դիտում հայերենը որպես մայրենի լեզու: Նրանց համար այն միշտ մնում էր «օտար», «ուրիշների» լեզու⁵², որի հետ խորքային զգացմունքային կապվածության արտահայտություններ գրեթե չեն պահպանվել⁵³: Սեփական լեզուն կորցրած լինելու հանգամանքը բարդույթի տեսքով կախված էր ասորի մտավորականների վրա: «Բաբելոնի» հոդվածներից մեկում կարդում ենք. «Ունինք լեզու մը որ գործածող չկա, ուրիշների լեզուն առած ենք, մեկ՝ մեկ ազգի մը լեզվով կ'խոսի, ուրիշ մը՝ ուրիշին: Ումանք բուրքերեն կ'խոսին, ումանք պարսկերեն, ումանք հայերեն, ումանք ալ արաբերեն <...> Իրար չենք ճանչնար, իրար չենք հասկնար, հազար ու մեկ ճյուղերու, հազար ու մեկ մասերու բաժնված ենք: Սելջիքին ինքզինքը տարբեր կը ճանչնա, քիլդանին տարբեր, Պարսկաստանի ասորին ինքնզինքը նեստորի կը կոչէ ու կը զատվի բոլորովին Միջազգետրի Ասորիէն»⁵⁴: Անորոշ ապագայում «մայրական լեզուն» վերակենդանացած տեսնելու հույսը պարբերաբար հնչում է «Բաբելոնում», թեև Խարբերդի ասորիների պարագայում այն

⁵² Trigona-Harrany, նշվ. աշխ., էջ 193:

⁵³ Այս առումով ուշագրավ է “Assyrian Progress” պարբերականի մի հայորդագրություն, որը ներկայացնում է 1930-ականներին Կալիֆորնիայում երիտասարդների կողմից կազմակերպված և մասամբ հայերեն վարված մի միջոցառում: այդ կապակցությամբ հոդվածագիրը նշում է, որ ներկա մեծահասակները «վայելեցին հայերենը» (“enjoyed the Armenian language”):

⁵⁴ Ռասին, «Դեպ ո՞ր կը քաղենք», «Բաբելոն», Ա տարի, թիվ 5, սեպտեմբեր 18, 1919:

իրականանալու լուրջ նախադրյաներ չուներ: Այսպես, հոդվածներից մեկում կարդում ենք. «Ասորի ազգը անեզու չէ և ունեցած է լեզու մը ճոխ գրականությամբ: Մինչ ուրիշ ազգեր չունեին լեզու, ասորին իր լեզուն ուներ և ուրիշին կուտուցաներ: <...> Նա այնչափ ճոխ է, որչափ արաբերենը, հունարենը և ոնեւ Եվրոպական լեզուներ: <...> Ազգաց մեր վրա իշխելովը տափած ենք գործածել իշխող ազգաց լեզուները: <...> Ինչպես ոնեւ լեզուներ ավելի պարզված, ավելի բարեփոխված և ըրած են հարմարագույն ներկա պարագայից կրնա ըլլալ ասորի լեզուն ևս առավել պարզ և ժամանակին հարմար: Ասոր համար խումբ մը լեզվագետներ կրնան բարեփոխել զայն այսպես որ լինի ընդհանուր լեզու Նեստորականին, Զեկորայթներու⁵⁵, Քաղեցացիներու⁵⁶: «Բաբելոնի» էջերից ինչպես հրատարակիչների, այնպես էլ նամակագիրների կողմից երրեմն հնչել է պարբերականը ապագայում ասորալեզու դարձնելու զաղափարը, թեև, կրկնենք, որ Խարբերդի ասորիների և «Բաբելոնի» պարագայում սա անիրականանալի էր: Այսպես, հոդվածներից մեկում կարդում ենք. «Մրտի անհուն ուրախությամբ է, որ կարդալու բարեբախտությունը կունենամ ձեր ազգօգուտ կիսամյան, վստահելով որ մոտալուտ ձեր շարաշար աշխատանաց արդյունքը պիտի ըլլա մայրական լեզվով «Բաբելոնի» հրատարակչությունը»⁵⁷:

Խարբերդի ասորիների ազգային ինքնության գլխավոր գրավականը և հայերից նրանց զանազանող կարևոր գործոնը նրանց ազգային ավանդական եկեղեցիներն էին՝ Անտիոքի ասորի ուղղափառ և Ասորի կաթոլիկ: Խարբերդն Ասորի ուղղափառ եկեղեցու եպիսկոպոսի աթոռանիստ էր: Ասորական

⁵⁵ Խոսքը ուղղափառ ասորիների՝ «հակոբիկների» մասին է (անգլերէն՝ Jacobites):

⁵⁶ Եռուսալի Ա.Գ., «Նամակ Փարիզէն», «Բաբելոն», Ա տարի, թիվ 8, նոյեմբեր 30, 1919:

⁵⁷ Տունապետ Ս., «Նամակ «Բաբելոնին», «Բաբելոն», Ա տարի, թիվ 6, նոյեմբեր 2, 1919:

Մարք (Սուլլ) Մարիամ եկեղեցին (ավելի ճանաչված է թուրքերեն՝ *Մերյեմ* անա քիլիսեսի անունով) պարզունակ, որևէ ճարտարապետական արժանիքներով աշքի չընկնող շինություն էր, սակայն ասորիներն այն շատ հին են համարել և հիմնադրումը վերագրել 179 թ.⁵⁸: Սա, հավանաբար, նախկին հայկական Սր. Աստվածածին եկեղեցին է. տեղեկություններ կան, որ հայերն այն հանձնել են ասորիներին, փոխարենը նրանցից ստանալով մոտակա Մորենիկ գյուղի եկեղեցին⁵⁹: Ըստ երևույթին, քաղաքում եղել է ևս երկու ասորի ուղղափառ եկեղեցի: Ասորի կաթոլիկ եկեղեցի, ամենայն հավանականությամբ, չի եղել համենայն դեպս, չի հիշատակվում:

Ի տարբերություն աշխարհականների, ասորի հոգևորականներն ունեին դասական ասորերենի որոշ իմացություն, և Ասորի ուղղափառ և Ասորի կաթոլիկ եկեղեցիները փորձում էին ինչքան հնարավոր է պահպանել այդ լեզուն եկեղեցական կյանքում: Վերը նշվեց, որ հայախոս ասորիների ծանոթությունը դասական ասորերենին հիմնականում սահմանափակվում էր աղոթքներով և օրիներգերով: «Բարելոնի» բազմաթիվ հողվածներից տեղեկանում ենք, որ նույնիսկ Ամերիկայում հավաքները սովորաբար սկսվում էին ասորալեզու Տէրունական աղոթքով (արևմտահայ տառադարձությամբ՝ Ապունտ պաշմայն, այսինքն՝ «Հայր մեր, որ երկնքում ես»), իսկ ընտանեկան և այլ խնջույքների ժամանակ սարկավագները (շմասները) երգում էին նաև ասորական օրիներգերը: Այսպես, հողվածներից մեկում կարդում ենք. «Ճաշասեղաննեն վերջն էր, որ երեք շմասներու մասնակցությամբ «Թշպոհք» փառարանական ժամերգով մը սկսվեցավ արարողությունը»⁶⁰:

⁵⁸ Fiey, նշվ. աշխ., էջ 216-217:

⁵⁹ Moranci Ch., *The Medieval Architecture of Kharpert*, in *Armenian Tsopk/Kharpert*, ed. Richard G. Hovannisian, Mazda Publishers, Costa Mesa, California, 2002, էջ 187:

⁶⁰ «Տարեկարձի մը առթիվ», «Բարելոն», Ա տարի, թիվ 13, հունվար 8, 1920:

Այդուհանդերձ, հայտնի է նաև, որ Բիթլիսում, օրինակ, ասորիները ոչ միայն խոսում էին հայերեն, այլև գործածում էին այն իրենց եկեղեցական արարողություններում⁶¹: Հայերենը ժամերգության մեջ գործածվել է նաև Մարտինի Քառասուն նահատակների ասորական եկեղեցում⁶², և սա այն պարագայում, երբ քաղաքի ասորիներն ու հայերը՝ հատկապես կարողիկ, արարախոս էին: Ըստ XX դ. սկզբին ԱՄՆ-ում լույս տեսած ասորական թրքալեզու Խնճիրահ («Զարթոնք») պարբերականի, Օսմանյան կայսրության ասորիների շրջանում գործածվել է ասորատառ հայերենով Ավետարան, որն, ըստ երևույթին, հայկական գարշունիի՝ գործածության մեջ եղած վերջին նմուշն էր:

Խարբերդի ասորիների ծիսական պրակտիկայում, ամենայն հավանականությամբ, որոշ տեղ ուներ թուրքերենը: Դա են վկայում Վերոհիշյալ խարբերդի սարկավագ Յաղուր քար Թումայի XX դ. սկզբում կազմած երկու աղոթագրքերը, որոնցում դասական ասորերենով գրված օրիներգերի կողքին նոյն տեքստը կրկնօրինակված է ասորատառ թուրքերենով⁶³:

Վերևում արդեն նշվեց, որ ասորական ավանդական եկեղեցիներն իրենց ծիսակարգում կառչում էին դասական ասորերենից: Ասորի ուղղափառ եկեղեցին այսօր էլ ընդդիմանում է Տուր-Արդինի տուրոյն արդի արամեական բարբառը գրական լեզվի վերածելու փորձերին, դիտելով այն դասական ասորերենի աղավաղված ձև: Դրա հետ մեկտեղ ոչ Խարբերդում, ոչ այլուր, ասորի հոգևորականությունը որևէ էական բայց չէր ձեռնարկում դասական ասորերենը հասարակ ժողովում

⁶¹ Krikorian M., *Armenians in the Service of the Ottoman Empire*, London, Routledge & Kegan Paul, 1977, էջ 117:

⁶² Trigona-Harrany, նշվ. աշխ., էջ 199, տողատակ 549:

⁶³ *The Assyrian Experience: Sources for the Study of the 19th and 20th Centuries*, ed. by Eden Naby & Michael E. Hopper, Harvard College Library, Cambridge, 1999, էջ 12-13:

դովրդին ավելի հասու դարձնելու համար և դեռ ավելին՝ ինքն իր ներքին գրագրությունը, ինչպես նշվեց, վարում էր ասորատառ թուրքերենով: Ասորի հոգևորականների կրթվածության ցածր մակարդակն ու ուղղակի տղիտությունը սուր քննադատության առարկա էին ասորական մամուլում, այդ թվում «Բաբելոնում». Վերջինն, ընդհանրապես, աչքի է ընկնում սուր հակակղերական տրամադրվածությամբ:

Ինչպես և հայերի, խարբերդի ասորիների միջավայրում XIX դ. երկրորդ կեսում շատ լայն տարածում էր ստացել բողոքականությունը, որը հիմնականում քարոզում էին ամերիկացի միսիոներները: Բողոքականություն ընդունող ասորիները գտնվում էին հայերի ավելի ուժեղ ազդեցության տակ, քան «հակոբիկներն» ու կաթոլիկները: Ակնհայտ է, որ Խարբերդում կային «հայացած» ասորիներ: Ասորի երկու բողոքական պատվելիների գործունեությունը ԱՄՆ հայերի միջավայրում ասորի «ազգաւոյացների» շուրջ սուր բանավեճի առիթ դարձավ «Բաբելոնի» մի քանի համարներում: Այսպես, հոդվածներից մեկում կարդում ենք. «Շատ շատեր կկարծեին, թե ասորի անունը անարգական անուն մըն է: Հայրենիքում եթե մեկին ասորի անվանեիր, կբարկանար - Ասորին դուն ես, ես հայ քրիստոնյա եմ, կըսեր»⁶⁴: Մեկ այլ տեղ. «Ունիմ հավատը, թե ասորիները մի անգամ ընդ միշտ սրափիվելու և զիտակցելու են այն թունավոր միկրոբներուն, որոնց հանդեպ ազգային թերթով մը հականեխել պետք է: Եթե ոչ, լավ է որ հիմակվել հետևինք այն ազգին [հայերին], որուն լեզուն, գրականությունը, սովորությունը կգործածենք արդեն, քան որ քառորդ դար վերջ: <...> Ի՞նչ ըններ, մենք ալ [մեր] գրե՛ք րը թաղենք և ասորության վերջ մը դնենք, թե ոչ ծաղկեցունենք»⁶⁵:

⁶⁴ Բեշարով Ն., «Բաց նամակ վերապատվելի Գավմէ Ասլահատի», «Բաբելոն», Ա տարի, թիվ 21, ապրիլ 1920:

⁶⁵ Գյուն Ն., «Ասորերեն թերթը, որ պիտի գա», «Բաբելոն», Բ տարի, թիվ 4, սեպտեմբեր 16, 1920:

Գրանցված են դեպքեր, երբ ասորիները զանգվածաբար անցել են նաև Հայ առաքելական եկեղեցու գիրկը. դա, մասնավորապես, տեղի է ունեցել Խարբերդից ոչ հեռու գտնվող Աղվան զյուղում, որտեղ դարձի էին դիմել ոչ միայն աշխարհականները, այլև 1896-1913 թթ. Խարբերդի եպիսկոպոս Դիոնիսիոս Արդելնուր Ասլանի հետ ունեցած տարածայնությունների պատճառով, զյուղի Զեյթուն անունով ասորի ուղղափառ քահանան⁶⁶:

Ասորիների հարանվանափոխությունն ու «հայացումը» չկը կարող չառաջացնել ասորի հոգևորականության դժողովությունը: Donabed-ը չիմաստակելով որևէ աղբյուր, նշում է, որ Դիոնիսիոս Արդելնուր Ասլան եպիսկոպոսը, քաղաքում հաստավելուն պես, դրամական տուգանքով էր սպառնացել այն ասորիներին, ովքեր կրոնվեն հայերեն խոսելիս⁶⁷: Այս վկայության հավաստիությունն այսօր շատ դժվար է հաստատել (ամեն պարագայում, թիշ հավանական է, որ բարձրաստիճան հոգևորականը, իրոք, արգելքների և տուգանքների միջոցով հույս ուներ փոխել ասորիների մի քանի հարյուրամյակների խոսակցական լեզուն): հավանաբար, աղավադած ձևով, այն պահպանում է հիշողությունը հարանվանափոխ եղած ասորիների նկատմամբ եպիսկոպոսի ձեռնարկած ինչ-ինչ պատժամիջոցների մասին: Դիոնիսիոս եպիսկոպոսի մասին, ով ծնվել է Ուրֆայում 1851 թ., այսինքն՝ ինքն էլ է եղել հայախոս միջավայրի ծնունդ, իրոք հայտնի է, որ նա փորձել է սահմանափակել հայերի ազդեցությունն ասորիների վրա, ընդդիմացել է խառը ամուսնություններին և հաճախ լրաց խնդիրներ է ունեցել սեփական հոտի հետ: Քաղաքի առաքական մտավորակությունը նրան մեղադրել է նաև չափից դժուռ օսմանամետ կեցվածքի, ինչպես նաև եկեղեցական միջացման վատնելու մեջ: Խարբերդից հետո Դիոնիսիոս Արդել-

⁶⁶ Trigona-Harrany, նշվ. աշխ., էջ 202:

⁶⁷ Donabed, նշվ. աշխ., էջ 41:

Նուր Ասլանը եղել է Հոմսի (Սիրիա) և ապա՝ Դիարբեքիրի եախսկոպոսը: Ունեցել է ասորական ձեռագրերի հարուստ հավաքածու: Մահացել է 1933 թ.⁶⁸:



Խարբերդի Վերի թաղն ու «Եփրատ» քոլեջի համալիրը

Արևմտահայերի XIX դ. երկրորդ կեսի մշակութային և կրթական վերելիքի պտուղներից օգտվեցին նաև ասորիները: Ինչպես նշվեց, խարբերդի ասորիներից շատերը ստացել են լավ կրթություն ոչ միայն ասորական, այլև հայկական, այդ բայում բողոքական միսիոներների հիմնած դպրոցներում: Նրանցից ումանք շարունակել են կրթությունը Խարբերդի հանրահայտ «Եփրատ» քոլեջում, որը 1878 թ. հիմնել են ամերիկացի միսիոներները: Լինելով, ըստ էության, միսիոներական հաստատություն, քոլեջը բաց էր բոլոր հարանվանություններին պատկանող քրիստոնյաների համար:

⁶⁸ Դիոնիսիոս Արդելուր Ասլանից հետո Խարբերդի եախսկոպոսական աթոռի ճակատագիրն անորոշ է: Ըստ որոշ վկայությունների, հաջորդ եախսկոպոս եղել է Կուրիլլոս Մահմուրը, ով նահատակվել է Մեծ Եղեռնի օրերին, ըստ մյուսի աթոռը թափուր է մնացել:

Արևմտյան Հայաստանում բարձրագույն կրթության առաջատար հաստատությունն էր: Քոլեջը գտնվում էր Վերի թաղում և տասից ավելի շինություններից բաղկացած համալիր էր: Այստեղ երկու սեռերի ներկայացուցիչներն ել կարող են ուսում ստանալ. 1912 թ. 47 շրջանավարտներից երկուսն ասորի են եղել՝ մեկ տղա և մեկ աղջիկ⁶⁹ («Assyrian Progress»-ում հիշատակվում է քոլեջն ավարտած ասորուիններից մեկի անունը՝ Սրբուիի Արսլան): Ինչպես նշվեց, ասորիները սովորել են նաև Խարբերդի այլ ուսումնական հաստատություններում՝ Կեղրոնական վարժարանում, «Միքատյան» ձեմարանում, Ս. Կարապետ եկեղեցու նախակրթական վարժարանում, Վարի քաղի «աղջկանց վարժարանում», Կապուցինների վարժարանում: Ասորիներին հասու էր նաև Այնթապում (ներկայում Գագիանթեայ) գտնվող և նույնպես միսիոններների կողմանց հիմնադրված «Կենտրոնական Թուրքիայի քոլեջը», որն ուներ բժշկական ֆակուլտետ: «Բաբելոնի» հեղինակների, բղթակիցների և նամակագիրների մեծ թիվը և հայոց լեզվին երանց կատարյալ տիրապետումը (ներառյալ՝ հայերենով բանաստեղծություններ գրելը), վկայում է հայերենով լավ կրթություն ստացած ասորիների մեծ թիվը: Որոշ ասորիներ համագործակցում են հայկական մամուլի հետ, ինչպես, օրինակ, կաթոլիկ ասորի բժիշկ Պիեր Դաշն, ով Խարբերդի «Եփրատ» քերթում հրապարակում էր առողջապահությանը վերաբերող հողվածներ⁷⁰ (դրանցից մեկն վերարտադրված է նաև «Բաբելոնի» համարներից մեկում), ինչպես նաև ֆրանքերն էր դասավանդում «Եփրատ» քոլեջում⁷¹:

Խարբերդի հայախոս ասորիների միջավայրից է սերում Օսմանյան կայսրությունում ասորի ամենանշանավոր մտավորական Աշուր (ի ծնն.՝ Աբրահամ⁷²) Յուսուֆը: Նա ծնվել է

⁶⁸ Trigona-Harrany, նշվ. աշխ., էջ 112, տողատակ 488:

⁶⁹ Նույն տեղում, էջ 107:

⁷⁰ Հայկ, նշվ. աշխ., էջ 335:

⁷¹ Մալճան Ե., «Անտիպ նոթեր», «Բաբելոն», Բ տարի, թիվ 17, մարտ 17, 1921:

1858 թ. Խարբերդում՝ դերձակ Սահակ Յուսուֆի ընտանիքում: Դպրոցական կրթություն ստանալով հարազատ քաղաքում, այն շարունակել է Այնքանի «Կենտրոնական Թուրքիայի քոլեջում», որը, սակայն, չի ավարտել: Երկար տարիներ դասավանդել է տարբեր դպրոցներում և միևնույն ժամանակ զբաղվել ինքնակրթությամբ: Աշուր Յուսուֆի կրթվածությունը լավագույնս վկայում է այն, որ նա ի վերջո դարձավ «Եփրատ» քոլեջի գրաքարի և գեղագրության ուսուցիչը:

Աշուր Յուսուֆը բողոքական էր⁷³ և ամուսնացած էր հայ ավետարանական պատվելիի դուստր Արշալույս Օղկասյանի հետ, ունեցել յոթ զավակ⁷⁴: Բողոքական լինելը, ինչպես նաև այն, որ Աշուր Յուսուֆի ծանոթությունն ասորերենին սահմանափակվում էր միայն այրութենով, չխանգարեց նրան դառնալ արևմտաստրական միջավայրում ազգայնականության գաղափարների առաջին նշանավոր ջատագովը: Երիտրուրքական հեղաշրջումից հետո նա հիմնեց Օսմանյան կայսրությունում արևմտաստրական առաջին պարբերականը՝ Մյուրշիդ-ի-ասիրիյուն-ից, Խարբերդում, 1910 թ., Դիլնիսիոս Աբդելուր Ասլան եպիսկոպոսը ասորատառ քուրքերենով և արաբերենով հրատարակել է 9 էջանոց Քառորդական սուլյայա («Ասորական աստղ») պարբերականը՝ ըստ ամենայնի փորձելով հակազդել Աշուր Յուսուֆի Մյուրշիդ-ին, որի էջերում հաճախ սուր քննադատության է արժանացել: Նոյն թվականին Խարբերդում քուրքերենով լույս է տեսել 4 էջանոց Հայար («Կյանք») հանդեսը, որի երկու էջերը ասորատառ, մյուս երկուսը՝ նոյն տեքստը՝ արաբատառ քուրքերենով էին: Հանդեսը հրատարակել է ուստի Պառլուսը, ով, ենթադրաբար, նույնական հոգևորական է եղել: Թեև Խարբերդում գոյություն ունեին տպարաններ (այդ թվում՝ «Եփրատ» քոլեջում), ասորական տպագրական տառատէսակի բացակայության պատճառով, այս երեք պարբերականները ստեղծվել են ձեռագիր, ապա կրկնօրինակվել բազմատիպով:

Մեծ Եղեռնի օրերին Խարբերդի ասորիները լիուլի կիսեցին հայերի ճակատագիրը: 1915 թ. հունիսի 26-ին Խարբերդի նահանգապետ Սարիթ Բեյը հրաման արձակեց, ըստ որի հա-



Աշուր Յուսուֆի
դիմանկարը
“Assyrian Progress”
պարբերականից

⁷³ Նոյն տեղում:

⁷⁴ Աշուր Յուսուֆի ընտանիքի մասին տեղեկություններ են պարունակում իր դուստր՝ Ալիս Նազարյանի «Արյունոտ ժպիտը» գիրքը (Բեյրութ, 1963), ինչպես նաև ավագ որդու Ռասիդ Յուսուֆի հայերեն գրված անտիպ հիշողությունները:

յերն ու ասորիները պետք է Միջազգեառ արսորվեին⁷⁶: Սակայն նույն օրն ասորիներին թույլ տվեցին ժամանակավորապես մնալ քաղաքում, և թուրք ոստիկանները հայտնվեցին նրանց հայերից զանազանելու խնդրի առջև, ինչը, «Եփրատ» քոլեջի վերջին նախազահ Հենրի Ռիզուի խոսքերով, «այդրան հեշտ չէ, ինչպես կարող էր թվալ»⁷⁷: Ռիզու նաև պատմում է, որ թուրք ոստիկանները պարտադրել էին ասորի տղաներին հայերի լրված ունեցվածքը ամբարել քաղաքի հայկական եկեղեցիներում⁷⁸: Հայերի և ասորիների ձերբակալման երկրորդ ալիքը վրա հասավ նույն տարվա նոյեմբերին՝ հիմնականում Խարբերդի մերձակայքի Մեմորեթ-ուլ-Ազիզ (Նախկինում՝ Մեզիրե, Ներկայում՝ Էլազըր) քաղաքում, որտեղ գտնվում էին օսմանյան տեղական իշխանությունները, ինչպես նաև ԱՄՆ հյուպատոսությունը⁷⁹: 1920-ականների սկզբին Խարբերդում դեռ մնում էին որոշ թվով ասորիներ, ովքեր՝ ԱՄՆ-ում բնակվող իրենց հայրենակիցների օգնությամբ, փորձում էին ինչ-որ կերպ վերականգնել իրենց ազգային կյանքը, սակայն նրանք կ, ի վերջո, ստիպված եղան լրել Խարբերդը:

Ասորիներից շատերին հաջողվեց հասնել ԱՄՆ և համարել Մասաչուսեթսի ասորական համայնքը: 1924 թ. Վուսթերում բացվեց արևմտյան կիսազնորմ ասորական առաջին եկեղեցին, որը Խարբերդի եկեղեցու անունով կոչվեց Սր. Սարիամ: Մասաչուսեթսի համայնքի ոչ պաշտոնական առաջնորդը Յուսուֆ Աշուրի հորեղբորորդի, Կենտրոնական Թուր-

⁷⁶ Davis L., *The Slaughterhouse Province:an American Diplomat's Report on the Armenian Genocide, 1915-1917*, New Rochelle, New York, Aristide D. Caratzas, 1989, էջ 143-144:

⁷⁷ Riggs, H., *Days of Tragedy in Armenia: Personal Experiences in Harpoort (1915-1917)*, Gomidas Institute, 1997, էջ 119:

⁷⁸ Նույն տեղում, էջ 135:

⁷⁹ Walker Ch., *Kharbert in 1915-1916*, in *Armenian Tsopk/Kharpert*, ed. Richard G.Hovannisian, Mazda Publishers, Costa Mesa, California, 2002, էջ 334:

քիայի քոլեջի շրջանավարտ, բժիշկ Աբրահամ Յուսուֆն էր (1866-1924), ով՝ ի տարբերություն իր զուարյուն ասորի ազգականի, մոր կողմից հայ էր⁸⁰: 1920-ականներին խարբերդից ասորիների համայնք գոյացավ նաև Կալիֆորնիայում, որտեղ, ինչպես և Մասաչուսեթսում, սերտ կապեր էր պահպանում հայերի հետ: Ինչպես քանից նշվեց վերևում, այս համայնքը 1933-38 թթ. անզիներն իրատարակում էր “Assyrian Progress” պարբերականը:

Խարբերդից ասորիների՝ ԱՄՆ-ում ծնված երկրորդ սերնդի անզախոս ներկայացուցիչները դեռ պահպանում էին հայերենի որոշ խմացություն և նույնիսկ ի վիճակի էին, ինչպես երևում է իրենց պարբերականի նյութերում, հայերեն սիրողական ներկայացումներ բեմադրել և ելույթներ ունենալ: Հայերենն, ի վերջո, միակ լեզուն էր, որով նրանք կարող էին հագործակցել անզիներնը չյուրացրած իրենց ավագների հետ: Սակայն երրորդ սերնդին հայերենն այլևս չփոխանցվեց, և ԱՄՆ-ում մերձավորաբելյան այլախոս ասորիների թվի վշտական աճի հետ միասին սա հանգեցրեց նրան, որ ՀՀ դերկրորդ կեսին խարբերդից ասորիների համայնքները կորցնելով իրենց եզակի ինքնուրյան կարևորագույն մաս հանդիսացող հայախոսությունը, աստիճանաբար տարրալուծվեցին: Թեև ասորական սփյուռքում, հատկապես Մերձավոր Արևելյան ասորական համայնքներում, այսօր կ թիշ չեն հայերեն իմացողները, նրանց հայերենը ոչ թե ժառանգված, այլ ձեռքբերովի է՝ հայերի հետ սերտ շփումների կամ հայկական դպրոցներում ուսում ստանալու արդյունք⁸¹:

⁸⁰ Աբրահամ Յուսուֆը եղել է 1919 թ. Փարիզի խաղաղ կոնֆերանսում ԱՄՆ ասորիներին ներկայացնող պատվիրակության անդամը:

⁸¹ Ի տարբերություն, Ուրֆայի հայախոս ասորիների, այսպես կոչված՝ «ուրֆալըների» ժառանգներից շատերն այսօր կ Սիրիայում և նույնիսկ Հյուսիսային Ամերիկայում, պահպանում են հայերենը որպես «ընտանեկան լեզու»: Մենք անձամբ հետարակություն ենք ունեցել հայերենով պատ հաղորդակցվել Տորոնտոյում բնակվող «ուրֆալը» ասորիների հետ:

Մեծ Եղեռնը վերապրած որոշ ասորիներ հաստատվեցին Հայաստանում, մասնավորապես Երևանի մերձակայքի Նոր Խարբերդ ավանում. նրանց թվում էր Աշուր Յուսուփի որդի Ռասինը, ով ստալինյան բռնությունների տարիներին արսորի ենթարկվեց (1940-ականներին Սիրիայից Հայաստան հայրենադարձվեց նաև Աշուր Յուսուփի այրին՝ Արշալույ Օղկասյանը): Հավանական է, հայախոսության և խառն պմունությունների պատճառով այդ ասորիներն ամբողջությամբ ձուլվել են հայերին:



Խարբերդի ասորական
եկեղեցին այսօր

թյունն ասորական Մարիամ Աստվածածին եկեղեցին է, որն այցելուների համար բաց է եղել մինչև 1998 թ., ապա կողպվել է⁸², «վերանորոգության» ենթարկվել և մասամբ մատչելի դարձել 2000-ականների սկզբներին:

⁸² Hewsen R., *Golden Plain: the Historical Geography of Tsopk/Karbert*, in Armenian Tsopk/Kharpert, ed. Richard G. Hovannisian, Mazda Publishers, Costa Mesa, California, 2002, էջ 50:

АССИРИЙЦЫ ХАРБЕРДА В ПРЕДДВЕРИИ ГЕНОЦИДА 1915 Г.

Арман Акопян

(резюме)

В статье даётся обзор ассирийских общин Османской империи в преддверии Геноцида 1915 г., рассматривается их положение в османской системе миллетов, языковая ситуация, а также вопросы взаимоотношений с армянами. На конкретном примере ассирийской общины Харберда приводятся исторические свидетельства о присутствии ассирийцев в Харберде, даётся характеристика их социально-экономической и религиозной жизни, детально рассматривается вопрос об их языке, системе имён, образовании и периодических изданиях. Приводятся сведения о ведущем представителе интеллигентии харбердских ассирийцев Ашуре Юсуфе (в частности, вносится окончательная ясность в вопрос о его имени при рождении и конфессиональной принадлежности) и об издаваемом им журнале *Мюршид-и-асирийун* («Путеводитель ассирийцев»). Приводятся сведения о положении ассирийцев в период Геноцида армян 1915 г. и о состоянии их общин в США (Массачусетс, Калифорния). В статье, помимо научных исследований по теме, активно задействован материал из издаваемых харбердскими ассирийцами в США журналов «Вавилон» (1919-1921 гг.) и "AssyrianProgress" (1933-1938 гг.).

THE SYRIACS OF KHARBERD (KHARPUT) ON THE EVE OF THE 1915 GENOCIDE

*Arman Akopian
(summary)*

The paper addresses the plight of Syriac communities in the Ottoman Empire in the 19th century and on the eve of the 1915 Genocide. In particular, it addresses the status of these communities within the Ottoman *millet* system, discusses the spoken languages of the Syriacs and their relations with the Armenians. As for the specific case of the Syriacs of Kharberd (Kharput), the paper presents historical evidences of their presence in the town, provides snapshots of their social, economic and religious life, educational system and local press. The paper contains some information on the leading Syriac intellectual of Kharberd, Ashur Yusuf, and the *Myurshid-i-Asiriyun* ("Guide of the Assyrians") periodical published by him in Kharberd, eliminating, *inter alia*, the uncertainties concerning Ashur Yusuf's birth name and denomination. The paper shows that the Syriacs were meant to share the fate of the Armenians in Kharberd during the 1915 Genocide, as well as presents their expat communities in the United States (Massachusetts, California). Apart from scientific publications on the subject matter, the author used extensive material from "Babylon" and "Assyrian Progress", two periodicals published by the Syriacs of Kharberd in the United States in 1919-1921 and 1933-1938 respectively.

Արշակ Գևորգյան

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈՒՈՒՄԸ ԱՀԱՐՈՆ ՌԵՌԻՎԵՆԻՒԻ «ՄԻՆՉԵՎ ԵՐՈՒՍԱԼԵՄ» ԵՌԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Բանալի բառեր՝ Ահարոն Ռեռովենի, Մինչև Երուսաղեմ,
Եռագրություն, Դիլիժանսում, Հայոց ցեղասպանություն,
հրեական գրականություն, Երեց Խորայել, Առաջին հա-
մաշխարհային պատերազմ, Օսմանյան կայսրություն

Ինչպես հայտնի է, 20-րդ դարի խոշորագույն ողբերգու-
թյուններից մեկի՝ Հայոց ցեղասպանության մասին տեղեկու-
թյուններն արդեն այդ օրերին լայնորեն հասանելի էին ողջ
աշխարհում¹: Զարմանալի չէ, որ սարսափելի այդ ոճիրը որո-
շակի արձագանք է գտել նաև հրեա ժողովրդի հասարակա-
կան մտքի շրջանակում^{2,3}: Ուստի տրամաբանական կլիներ

¹ Ժամանակի համաշխարհային մամուլում Մեծ Եղեռնը ավելի շատ է լուսաբանվել, քան անզամ մեկ սերունդ անց հրեական Հոլոքոստը Strom A., "Teaching about the Armenian Genocide", in Hovannisian R. G. (ed.), *The Armenian Genocide: Cultural and Ethical Legacies*, Transaction Publishers, 2007, p. 240:

² Զնայած Հայոց ցեղասպանության նկատմամբ իր ակնհայտ քամա-
հրական վերաբերմունքին այդ մասին հորս ուղղված նամակում անուղ-
ղակիորեն հիշատակում է անզամ Խորայելի հիմնադիր և առաջին
վարչապետ Դավիթ Բեն-Գուրիոնը. «Զեմալ փաշան սկզբից և ուժ ծրագրել էր
ոչնչացնել Խորայելի հրեական բնակչավայրերը, ինչպես նրանք վարվեցին
հայերի հետ Հայաստանում»: Տե՛ս Thompson E. F., *Justice Interrupted*,
Harvard University Press, 2013, p. 126:

³ 2015թ. հունվարի 28-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում կույր ունե-
նալիս Խորայելի նախազան Ռեռովեն Ռիվլինը, խոսելով Հայոց ցեղասպա-
նության մասին, մեջբերեց Առաջին աշխարհամարտի ժամանակ դեպքերի
ժամանակակիցներից մեկի՝ Պաղեստինում հրեական լրտեսական «Նիլի»
ցանցի սշանակոր անդամներից Ավշարում Ֆայնբերգի խոսքերը. «Ես

Ենթադրել, որ Մեծ Եղեռնը համապատասխան արտացոլում կունենար նաև Էրեց Իսրայելի գրականության մեջ: Սակայն հրեական գրական ժառանգության ուսումնասիրությունից պարզվում է, որ միայն երկու հեղինակ է այս կամ այն կերպ անդրադարձել հայերի ցեղասպանությանը⁴: Խորը Ահարոն Ռեուվենիի «Մինչև Երուսաղեմ» եռագրության⁵ և Շմուել Բասի «Արա» վիպակի⁶ մասին է:

Այդ երկու ստեղծագործությունների միջև որակական զգալի տարբերություն կա: Եթե Ռեուվենիի եռագրությունը մեծ կտավի «վավերագրական վեպ»⁷ է, որում հայկական թեմատիկան գունավորված էրանգներից միայն մեկն է, ապա Բասի վիպակում Հայկական հարցը կենտրոնական դերում է

ատամներս սեղմած մտածում եմ, թե ով է լինելու հաջորդը: Երուսաղեմի ճանապարհին, եթե քայլում էի օրինված և առոր հողի վրա, ինք ինձ հարցի՝ արյոց մենք ապրում ենք ժամանակակից աշխարհում՝ 1915 թվականին, թե՝ «Տիտոսի և Նարուգոյնուսուրի ժամանակներում».

<http://mfa.gov.il/MFA/AboutIsrael/History/Holocaust/Pages/President-Rivlin-addresses-UN-General-Assembly-International-Holocaust-Remembrance-Day-2015.aspx> (հսկանելի է 01.05.2015թ.):

⁴ Auron Y., “Zionist and Israeli Attitudes Toward the Armenian Genocide”, in Bartov O., Mack P. (eds.), *In God’s Name: Genocide and Religion in the Twentieth Century*, Berghahn Books, 2001, p. 277:

⁵ Reuveni A., *Ad-Yerushalayim: Roman Mi-Yeme Milhemet-Ha-Olam Ha-Rishonah*, Keter, Yerushalayim, 1987. Եռագրության որոշ հատվածներ (հիմնականում՝ երրոր հասորից) քարզմանարար տեղ էն գտնել Abramson G., *Hebrew writing of the First World War*, Vallentine Mitchell, 2008, p. 261-290 և Auron Y., *The Banality of Indifference: Zionism and the Armenian Genocide*, Transaction Publishers, 2000, p. 271-283 (Վերջինը հատկապես ուշագրավ է, քանի որ դրանում առանձնացված են հայկական թեմատիկային նվիրված հատվածները. հայերն թարգմանությունը տե՛ս Առորն Յ., «Անընդունելի անտարերություն. Սիրոկմը և Հայոց ցեղասպանությունը», Երևան, 2013, էջ 381-398):

⁶ Bass S., Ara, Tarbut, Yerushalayim-Tel-Aviv, 1929.

⁷ Abramson G., “Hebrew Literature of World War I in Palestine”, in Goren H., Dolev E., Sheffy Y. (eds.), *Palestine and World War I: Grand Strategy, Military Tactics and Culture in War*, I.B.Tauris, 2014, p. 295.

և ներկայացված է արական անձնանուն կրող երիտասարդ հայուսի Արայի կերպարով⁸: Գրված լինելով Երկրորդ ալիաց գրականության ամենակարևոր դեմքերից մեկի¹⁰ ձեռքով՝ «Շինչև Երուսաղեմ» առավել մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև դրանում արտացոլված զաղափարների հասարակական ավելի լայն տարածման տեսակետից: Այս համատեքստում որոշակի ուշադրության է արժանի նաև կայսերական այս վեպի հեղինակի կյանքի ուղին ու նրա հայացքները, որոնք որոշ առումով պայմանավորել են նրա վերաբերմանը հայկական խնդրի նկատմամբ:

Ահարոն Ռեուվենին (Շիմշելից)¹¹ ծնվել է 1906 թ. Ռուսական կայսրության Պոլտավա քաղաքում: Նրա ավագ եղբայրը¹² Իցհակ Շիմշելիչը (Բեն-Ցվի, 1884-1963 թթ.), ավելի ուշ գոտնալու եր սիոնիստական շարժման դեկավարներից մեկը ավելի քան 10 տարի գրադեցնելով Իսրայելի նախագահի պաշտոնը: Ահարոնը եղբոր ազգեցությամբ պատահի հասակում հարել է «Պուալեյ Ցիոն» մարքսիստական-սիոնիստական շարժմանը¹²: 1906 թ. պոգրումների ժամանակ մասնակցել

⁸ Առորն Յ., նշվ. աշխ., էջ 383:

⁹ Երկրորդ ալիան (եբր.՝ תינשׁה הַיּוֹנָה) 1904-1914 թթ. գրանցված երեսների հայրենադարձման խոշոր ալիք է, որի ընթացքում հիմնականում Ռուսական կայսրությունից մոտավորապես 40 հազար հրեա է տեղափոխվել այս ժամանակ Օսմանյան կայսրության տիբապետության տակ գտնվող Պալեստինի տարածք: Այս մասին մաերամասն տե՛ս Birnbaum E., *In the Shadow of the Struggle*, Gefen Publishing House, 1990, p. 50-67:

¹⁰ Baskin J. R. (ed.), *The Cambridge Dictionary of Judaism and Jewish Culture*, CUP, 2011, p. 388.

¹¹ Բար-Йոսեֆ Խ., Կոպելման Յ., *Антология ивритской литературы: Еврейская литература XIX-XX веков в русских переводах*, Москва, 1999, с. 574.

¹² 1899 թ. Ռուսական կայսրությունում ծագած «Պուալեյ Ցիոն» («Սիոնի աշխատավորներ») հասարակական-քաղաքական շարժումը համարում էր քաղաքական սիոնիզմի ու սոցիալիզմի զաղափարները: 1906 թ.-ին Ռեուվենիի եղբայր՝ Իցհակ Բեն-Ցվին ընկերոջ Բեր Բորխտովի հետ հիմնում է Հրեական սոցիալ-դեմոկրատական աշխատավորական «Պուալեյ

Է հրեական ինքնապաշտպանությանը, ինչի համար ձերքակալվել ու աքսորվել է Սիբիր: Փախուստից և երկար դեգերումներից հետո (որոնց ընթացքում նա եղել է նաև Կոստանդնուպոլսում) Ռեռուվենին 1910 թ. ոուս ուղղափառ ուխտավորի փաստաթղթերով ժամանել է Յաֆա:

Պարեստին հասնելուց հետո նա հաստատվել է Երուսաղեմում զրադական հասարակական, լրագրողական և զրական գործունեությամբ¹³: Իր ստեղծագործական ուղու սկզբում Ռեռուվենին գրել է իդիշով (մի կարճ շրջան՝ նաև ոուսերենով) և միայն 1923 թ. է վերջնականապես անցում կատարել երրայերենի¹⁴: Նրա վաղ շրջանի պատմվածքներն ու հոդվածները երրայերեն է թարգմանել հրեա հայտնի գրող Յունֆ Հախմ Բրեները, ով բարձր էր զնահատում նրա ստեղծագործական կարողությունները¹⁵: Ռեռուվենի զրական ժառանգության մեծագույն մասը, այդ թվում հիմնական վեպերը գրվել են հենց երրայերեն: Ավելի ուշ շրջանում հեղինակը որոշակի ներդրում է ունեցել ժամանակակից զրական երրայերենի կայացման գործում՝ համաշխարհային զրականության զգալի թվով հայտնի նմուշներ թարգմանելով անզլերենից ու ֆրանսերենից¹⁶:

Ցիոն» կուսակցությունը: *Տե՛ս Medoff R., Waxman Ch. I., The A to Z of Zionism*, Scarecrow Press, 2009, p. 39:

¹³ Ռեռուվենի կյանքի մասին մանրամասն տե՛ս Skolnik F. (ed.), *Encyclopaedia Judaica*, 2nd ed., vol. 17, Macmillan Reference USA, 2007, p. 250-251 և Орен И., Занд М. (ред.), *Краткая еврейская энциклопедия*, том 7, Иерусалим, 1994, с. 169-171:

¹⁴ Miron D., *From Continuity to Contiguity: Toward a New Jewish Literary Thinking*, Stanford University Press, 2010, p. 40.

¹⁵ Shapira A., *Yosef Haim Brenner: A Life*, Stanford University Press, 2014, p. 238-239.

¹⁶ Օրինակ, հենց նա է երրայերեն թարգմանել Բալզակի հայտնի «Մարդկային կատակերգություն» շարքի «Հայր Գորին» վեպը: *Տե՛ս Michel J., Braester M., Dotan I., Les enjeux de la traduction littéraire*, Publisud, 2004, p. 313:

Շետարրքրական է, որ հենց Ռեռուվենին է համարվում 1948 թ. մայիսի 14-ին հոչակված հրեական պետության պաշտոնական «Խորայելի պետություն» անվանման «կնքահայրը»: «Անզնայիմ» շաբաթաթերթի 1947 թ. դեկտեմբերի 5-ի համարում նրա տպագրած ««Պետությունը». ի նշ անուն պետք է ունենա» հոդվածում առաջին անգամ հիշատակվում է հրեական պետության ներկային անվանումը¹⁷:

Ռեռուվենի «մագնում օպուսը»՝ «Մինչև Երուսաղեմ» եռագրությունը գրվել է 1916 և 1920 թվականների միջակայրում: Հնդինակն առաջին հատորն («Խառնաշփռության սկզբում», տպագրվել է 1920 թ.) ավարտել է 1918 թ. օգոստոսին, երկրորդը («Վերջին նավերը», տպագրվել է 1923 թ.)՝ 1919 թ. ամառներ, իսկ երրորդը («Ամայացում», տպագրվել է 1925 թ.)՝ 1920 թ. ամռանը: Իր իսկ խոսքերով՝ վեպը գրվել է «դառնությունների պահին»՝ Առաջին աշխարհամարտի ընթացքում¹⁸: Հրապարակվելուց հետո վեպերն արժանացան զուսպ ընդունելության, և Ռեռուվենին համբավ բերեց եռագրության առաջին միասնական հրապարակումը, որը տեղի ունեցավ միայն 1954 թ.: 1960-ական և 80-ական թվականներին եռագրության վերահրատարակումներն ընդունվեցին մեծ ոգևորությամբ և հիացական զրախոսություններով¹⁹: Պատահական չէ, որ հենց այդ շրջանում են նրան շնորհվել հրեական զրականական պատմությունները:

¹⁷ «Այսպիսով, ասենք Խորայելի պետություն: Եվ մենք պետք է կոչվենք Խորայելցիներ: Իսկ ինչպէ՞ս պետք է կոչվեն մեր երկրի այն բնակիչները, ովքեր հրեա չեն: Նաև արար, հայ, հոյել խորայելցինե՞ր: Այս, իհարկել, ի նշ տարօրինակ բան կա դրանում»: *Տե՛ս Reuveni A., My calling*, rpt. in Haaretz, 01.05.2006, <http://www.haaretz.com/my-calling-1.186564> (հասանելի է 05.04.2015թ.):

¹⁸ Schwartz Y., *Lihyot kedei Lihyot: Aharon Reuveni – Monografyah*, Yad Yitzhak Ben-Zvi, 1993, a. 159-161.

¹⁹ Արև Յ., *Սիրոկամը և Հայոց ցեղասպանությունը*, Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, №10-11, ՀՀ ԳԱԱ ՑԹԻ, Երևան 2005, էջ 83:

նության երկու հեղինակավոր՝ Ուսիշլինի (1967 թ.) և Բյալիշի (1969 թ.) անվան մրցանակները²⁰:

Հարկ է նշել, սակայն, որ պատմական խառնակ այդ ժամանակների Ռեուվենիի պատկերումը դեռ ամենասկզբից գրավել էր գրական աշխարհի առանձին ներկայացուցիչների ուշադրությունն ինչպես Պաղեստինում, այնպես էլ ողջ աշխարհում: Հայտնի է, օրինակ, որ հայտնի ուսուցող Մարսիս Գորկին 1927 թ. անօգուտ կերպով փորձել է հասնել ԽՍՀՄ-ում Ռեուվենիի «Ամայացում» վեպի հրատարակմանը²¹: Ընդհանուր առմամբ, սակայն, իր քաղաքական հայացքների պատճառով Ռեուվենին գրական շրջանակներում առանձնապես մեծ հանրաճանաչություն չէր վայելում:

Եռագրության նախարանում Ռեուվենին գրում է. «Քոլոր դեմքերն ու դեպքերը մտացածին են, սակայն պատմությունը կառուցված է այն ժամանակների կյանքից վերցրած աղյուսներով»²²: Հենց այս առանձնահատկությունն է, որ հատուկ կարևորություն է հաղորդում ստեղծագործության մեջ հայկական թեմայի հիշատակումներին: Այդ ոչ մեծածավալ հատվածները հնարավորություն են տալիս պատկերացում կազմել, թե Հայոց ցեղասպանությունն ինչ հետք է թողել ժամանակի հրեաների հիշողության մեջ:

Հայերի զանգվածային սպանությունների առաջին արձագանքը լսվում է եռագրության առաջին հատորում «Խարնաշփորի սկզբում», որի իրադարձությունները ծավալվում են

²⁰ Shaked G., *HebreWriters: A General Directory*, Tel Aviv, Institute for the Translation of Hebrew Literature, 1993, p. 99.

²¹ Агурский М., Шкловская С., *Из литературного наследия. Горький и еврейский вопрос*, Иерусалим, 1986, с. 363.

²² Առորն Յ., Աշվ. աշխ., էջ 384:

Հոդվածում բերված մեջերումները վերցված են «Միջև Երուսաղեմի» վերոհիշյալ երրայերեն հրատարակությունից (1987 թ.): Դրանց հայերեն թարգմանությունը ըստ Յաիր Առորնի հիշալ գրքի հայերեն հրատարակության:

Առաջին աշխարհամարտի մեկնարկին: Դրա հերոսներից 35-ամյա Սիարոն Յիֆերովիչը, ով որպես հաշվապահ է աշխատում «Հայերեխ»²³ թերթում, «երկշու երազող է և փորձած հոռետես՝ մեկ անձի մեջ»: Գործընկերների հետ բանավիճելիս նա կարծիք է հայտնում. «Հանգիստ, առողջ կյանքը Թուրքիայում անհնար է: Ճիշտ էին բունդականները, երբ գոտում էին, թէ Երեց Խորայելը ոչ այլ ինչ է, քան Թուրքիայի ասիական ծայրամաս: Դուք ինչ է, չե՞ք հասկանում, որ թուրքերն ի վիճակի են ձեռքի մեկ շարժումով ոչնչացնել մեզ, մաքրել երկրի երեսից, ինչպես սեղանի վրայից մրցուններին, և մեր համեստ համայնքից հետք անզամ չի մնա: Դուք հիշո՞ւմ եք տասնութ տարվա վաղեմուրյան հայկական ջարդերը: Երե՞ք հարյուր հազար կործանված հոգիներ»^{24...»}²⁵:

Ուշադրության է արժանի այն, որ թերթի խմբագրության աշխատավիճների գրույցում հայկական ջարդերի հարցն արծարծվում է լոկ հրեաների երկրի ապազայի համատեքստում: Նրանք հանգում են բնութագրական մի եզրակացության, որը հեշում է վեպի հերոսներից գրող Գեղալի Բրանչովիկի շուրբերից. «...հիշո՞ւմ եք՝ ինչպես էր՝ նա [Յիֆերովիչը] պաշտպա-

²³ Ռեուվենիի ձեռքով եռագրության էջերում այլ անուններով հանդիս են զայխ ժամանակի հայտնի շատ գործիչներ, այդ թվում՝ իշուվի հայտնի տաշնորդներ (Բեն-Ցիվի՝ Խայիմ Ռամ, Բեն-Գուրիոն՝ Գիվոն, Զարուրավել Բեն-Մատիլյահու ևն): Ուսումնասիրողների կարծիքով՝ «Հայերեխ» թերթը համապատասխանում է Երուսաղեմում աշխարհամարտի տարիներին հրատարակող սոցիալիստական «Հա'ահդուր» շարաթաթերթին: Տե՛ս Abramson G., Truth and Fiction in Hebrew Writing of the First World War, in *Report of the Oxford Centre for Hebrew and Jewish Studies* (2008-2009), p. 46 (<http://www.ochjs.ac.uk/wp-content/uploads/2011/08/Ann-Report-rev.-2008-09.pdf>, հասանելի է 01.05.2015):

²⁴ Խորը 1894-96 թթ. համինյան ջարդերի մասին է: Տե՛ս Charny I. W. (ed.), *Encyclopedia of Genocide*, vol. 1, ABC-CLIO, 2000, p. 287 և Shelton D. L. (ed.), *Encyclopedia of Genocide and Crimes Against Humanity*, vol. 1, Macmillan Reference USA, 2004, p. 77:

²⁵ Reuveni A., Աշվ. աշխ., էջ 106:

նում Թուրքիային՝ «առանց Թուրքիայի մենք ապագայի ոչ մի հույս չունենք...»: Բոլ հիմա... Հա՛-հա՛-հա՛...»²⁶:

Մեծ Եղենի թեման կրկին շոշափվում է եռազրության երկրորդ մասում: «Վերջին նավերը» հատորի հերոսներից Անգելմուս Մայերը, ով աշխատում է Վիեննայի բանկում նոյն բրանչության պատմում է վերջին նորությունների մասին:

«Նա անսպասելիորեն իմացավ, որ Բեյրութում Զեմալ փաշայի հրամանով կախել են մի քանի երեկոյի արարների²⁷, որ թուրքերը վերսկսել են հայերի կոտորածը, որ Զեմալ փաշան հրեա-միջնորդներից մեջին հապանցիկ նետել է մի դիտողություն, որը վերջինս անընդհատ կրկնում էր, և որի իմաստն այն էր, թե նոյն քանը կարող է կատարվել նաև Երեց Իսրայելի հրեաների հետ»²⁸:

Այստեղ նկատվում է միևնույն միտումը. հրեական միտքը հայերի զանգվածային ոչնչացման փաստը վերահմաստավորում էր սեփական ֆիզիկական գոյությունն ու Պաղեստինում հրեական համայնքային անվտանգությունն ապահովելու դիտանյունից:

Հայկական ողբերգությանն ամենաընդարձակ անդրադարձը, սակայն, տեղ է գտել Ռեռուլենի ստեղծագործության եզրափակիչ «Ամայացում» հատորում: Դրա զիսավոր գործող անձը երկար դեգերումներից հետո թուրքական բանակի սակրաբորական շոկատներից մեկում հայտնված Մեծ Պոնեկն է:

²⁶ Նոյն տեղում:

²⁷ 1915 թ. օգոստոսին Սիրիա զնալուց հետո Զեմալ փաշան ի թիվս այլին ձեռնամուխ է լինում նաև արարների ազգայնական շարժումը ճնշելուն: Նոյն տարվա օգոստոսին Բեյրութում նրա հրամանով հրապարակալ կախաղան են բարձրացվում 11 նշանավոր արարներ (10 մուսուլման և 1 քրիստոնյա): Եվս 21 հոգի մահապատճի են ենթարկվում «Մարտիքուսների օրը» 1916 թ.-ի մայիսի 6-ին: Այս ամենի համար Զեմալը արարների շրջանում ստանում է «ալ-Սաֆահ» («արևախում») մականութը: Տե՛ս Ulrichsen K. C., *The First World War in the Middle East*, Oxford University Press, 2014, p. 114.

²⁸ Reuveni A., նշվ. աշխ., էջ 130:

Եռազրության ողբերգական հանգուցալուծումը խտացված է ինքնասպանության շեմին կանգնած զիսավոր հերոսի վերջին զիշերվա պատկերում: Պոնեկը լրում է գերմանական ուժերի ճամբարը՝ խորանալով «Մեռյալ ծովից այն կողմ գունվող» անապատում: Հոգեկան ու ֆիզիկական տանջանքներից խելազարության շեմին կանգնած հրեայի աչքերի առջև հանում են անցյալի դրվագներ: Ռեռուլենին նկարագրում է հերոսի «մի մասը դարձած, մարմնի մեջ ներծծված» գժիային պատկերներ:

«[Պոնեկը] Տեսավ մարդկանց, որոնք դեգերում էին ստվերների պես, անընդունակ ընտելանալու, հասկանալու, թե ինչպես հայտնվեցին այստեղ, մարդկանց, որոնց հոգիները վերածվել էին վախի, զայրույթի, համառության և հուսալքության կծիկների, մարդկանց, որոնց տանջում էին միայն հանուն տանջելու հաճույքի: Տեսավ, թե ինչպես մարդը սայթաբեց, ընկավ ու ընկած մնաց մեռածի պես: Ճրամանատարը հրամայեց թաղել նրան, և թաղեցին... բայց նա դեռ չէր մահացել, նա շնչում էր, նրան թաղեցին ողջ-ողջ... նա տեսավ մարդկային ամբոխներ, որոնք գնում էին այստեղ, ուր իրենց ուղարկում էին, անում էին այն, ինչ իրենց հրամայում էին, ծամում այն, ինչ իրենց տալիս էին, քնում այնտեղ, որտեղ իրենց կանգնեցնում էին: Չարացած, հուսալքած մարդկանց ամբոխներ, բայց և խոնարի ու անձայն, ինչպես անասունների հոտը»²⁹:

²⁹ Ցեղասպանության անմեղ զոհերի և «անասունների» հայ ընթերցողի համար ցալու և անընդունելի այս համեմատությունը, որ բավական հաճախ է հանդիպում Եղենինի ականատես արևմտաթրցիների հիշողություններում, պետք է թերևս բացատրել նրանց համար հարցի անհամեսատ նվազ զգացմունքայնությամբ: Նման համեմատության կարելի է հանդիպել օրինակ, Մամուրեթ-ուլ-Ազիզում (Խարբերդ) ԱՍԴ-ի հյուպասուն Լեսի Դիսիլ գելուցցում (Sarafian A. (ed.), *United States Official Records on the Armenian Genocide 1915-1917*, Taderon Pr, 2004, p. 644, doc. NA/RG59/867. 4016/392):

Նրանց սրտերը հեղեղված էին զայրույթով, հուսահատությամբ, բայց ամենից շատ՝ սարսափով: Երբ նրանցից ընտրում էին մեկին, երկուսին կամ տասին, հանում երևացող տեղ, ու նրանց եղբայրները գնդակահարելու հրաման էին տալիս, նրանց գնդակահարում էին: Իսկ մնացածներն ավելի էին սեղմկում միմյանց, լուս էին և ավելի խոնարի դառնում...»³⁰:

Պոնեկի հիշողությունների անկառավարելի ալիքը վեր է հանում նաև մի դիպված, որը դառնում է վեպի կենտրոնական մոտիվներից մեկը՝ ձևավորելով յուրատեսակ «հրեթուրք-հայկական եռանկյունի (հետին պլանում ունենալով գերմանացու կերպար»³¹.

«Մի անգամ նա հայտնվեց հոսպիտալում: Այնտեղ տիֆով հիվանդ պառկած էր մի հայ բժիշկ: Նա մահանում էր: Ասես ապակե, գունատ դեմքը փայլում էր թույլ լուսի տակ: Գլուխը ծանրորեն ենու էր ընկած բարձին: Աչքերը փու էին ընկել: Որովայնը փրփած էր տակառի պես:

Նա ուժ չուներ շարժվելու: Շարժվում էին միայն աչքերը. նրանք ամեն ինչ տեսնում էին, ամեն ինչ հասկանում էին՝ իրենց մեջ հավաքած կյանքի վերջին փշրանքները: Այդ աչքերը կանում էին իրեն: Նա մոտեցավ: Աչքերը ծիծաղում էին, պահանջելով, որ ավելի ու ավելի մոտենար: Այո՛, որանք ծիծաղում էին, նա չէր սիալվում: Հիմա էլ տեսնում է այդ պատկերն իր առջև. ծիծաղը՝ մեռնողի աչքերում և հազիվ լսելի շշունջը՝ արտաշնչանքի հետ. «Լսի՛ր, խնդրում եմ... իրեա՛: Լսի՛ր, թեզ ես կասեմ, ես հիմա մեռնելու եմ... ես դա զիտեմ... ես թունավորել եմ քառասուն զինվորների... թուրքերի... տիֆով հիվանդ... քառասուն... ինքս եմ հաշվել: Մի թուրք առևանգեց կնոջս... և երեխաներիս... նրանք սպանեցին հորս... սպանեցին եղբորս: Քառասունին թունավորեցի... հաշվել եմ... ինչ լավ է»:

³⁰ Reuveni A., նշվ. աշխ., էջ 403:

³¹ Առողութ., նշվ. աշխ., էջ 290:

Գուցե նա էի ինչ-որ բան ասաց: Զայնը մարեց: Միայն աչքը էին փայլում ակնախոռոչներից և ծիծաղում էին, ծիծաղում էին: Նրանք ծիծաղում են... կանչում են իրեն... հիմա... այս հիմա...»³²:

Տարաբախտ հայ բժշկի ահավոր զաղտնիքն ամբողջովին կանում է Պոնեկին, բզեզում նրա հոգին ու, ի վերջո, նրան գլուխ բանականությունից: Կյանքի ու մահվան սահմանագործ կանգնած այս իրեան Ռեուվենիի եռագրության միակ հերոսն է, որ ամբողջ խորությամբ զիտակցում է հայերի ողբերգության մասշտաբներն ու ինչ-որ իմաստով ապրումակցում երանց: Գաղտնիքը միավորում է ծիծաղող աչքերով մահացող հայ բժշկին ու իրականությանը հարմարվելուն անկարող նույնելին: Իրականությանն ու ամբոխին հակադրվելու նրանց ձգտումը բերում է նույն հանգուցակետին՝ մահվանը: Ռեուվենիի հերոսն ինքնասպան է լինում.

«Ընազայերը համբերատար սպասում էին: Նրանք տեսան, թե ինչպես մարդը նորից բարձրացավ: Կանգնեց՝ հենվելով հրացանին: Ի՞նչ է լինելու հետո: Ահա նա հրացանի երկարէ փողը մտցրեց բերանը: Նա ի՞նչ է, ուզում է մետաղն ուտե՞լ: Այ թեզ բան: Ահա հանեց հրացանը բերանից, նստեց գետնին, արձակեց բուղերը: Նորից կանգնեց՝ մի ոտքը բորիկ: Նորից փողը մտցրեց բերանը: Ոտքով հպվեց խզակործին: Որոտ ու կայծակ: Մարդն ընկավ»³³:

Հարկ է նշել նաև, որ բայց եռապատումից Ռեուվենին հայկական թեմային անդրադարձել է նաև 1928 թ. հրապարակված իր «Դիլիճանսում» պատմվածքում³⁴: Ամենայն հավանա-

³² Reuveni A., նշվ. աշխ., էջ 404:

³³ Նույն տեղում, էջ 405:

³⁴ Պատմվածքը տեղ է գտնվել Ռեուվենիի պատմվածքների համահավաք եռապատուի առաջին գրքում (Reuveni A., *Sippurim*, կ. 1, Akhiezer, Yerushalayim-Tel-Aviv, 1928): Երկար ժամանակ մոռացված այս ստեղծագործության իր վերոհիշյալ «Անընդունելի անտարբերություն» գրքում

կանությամբ այն պետք է ներառվեր «Մինչև Երուսաղեմ» եռազրության տեքստում: Դրա զլսավոր հերոսը գրաշար Մեսախեմ Շապիրոն է, ով Առաջին աշխարհամարտի տարիներին զիշերային դիլիժանսի միջոցով փորձում է Երուսաղեմից հասնել Յաֆֆա: Հրեական լեռների ստորոտում՝ Բար ալ Վադում³⁵ Շապիրոյին ու նրա հետ ճանապարհորդող հոգևոր ճամարանի երեր ուսանողներին են միանում թուրքական բանակի երկու զինծառայողներ՝ ազգությամբ թուրք մի «Չափիշ»³⁶ և արաբ մի զյուլացի: Գիշերային ուղևորությունն ուղեկցվում է դիլիժանսի տիրոջ և «Չափիշի» զրոյցով: Վերջինս պատմում է:

«Իսկ բանը եղավ անցյալ տարի, հենց որ հայերի հետ հաշվիները փակեցինք: Ղերասունում³⁷ նրանք այլևս չկան... Ընդհանրապես ոչ մի հատիկ հայ, ոնց որ մեծ ցախավելով սրբեն... և ահա, ես զնում եմ փողոցով, մտնում նրանց լրված տները՝ հանկարծ մի ինչ-որ արծեքավոր բան գտնեմ... Իսկ էնտեղ ամենուր քրօնիքալաս է թափթփված... Գնացի-զնացի՝ աչքերս դես ու դեն չուած... իզուր. հարևան մահմեղականնե-

անդրադակ է խրայեցի պատմաքան, ցեղասպանագետ Յաիր Առորոնը: Տե՛ս Առորոն 3., նշվ. աշխ., էջ 393-398:

³⁵ Բար ալ Վադը (արաբ. باب الود) կամ Շա'ար հա-Գայը (եբր. אַיָּה רֹשׁ) (երկու լեզվում էլ «Հովտի դարպասներ») կարեոր հանգուցակետ է Երուսաղեմից Թել Ավկիվ ընկած ճանապարհին՝ առաջինից 23 կիլոմետր հեռավորության վրա:

³⁶ «Չափիշ» (արաբ. شاش) և «չափուշ» (թուրք. չանչ) զինվորական կոչումները համապատասխանում են արևմտյան մողելի բանակների սերժանտի կոչմանը:

³⁷ Խոսքը Փոքր Ասիայի հյուսիսում, Ան ծովի ափին գտնվող Գիրեսուն (հուն.) Կεրասունտա, հայ. Կերասուն) քաղաքի մասին է: Այն 20-րդ դարի սկզբին ուներ 18500 (2000 ընտանիք) բնակչություն, որից 200 ընտանիք՝ հայ, 800-ը՝ հույն, 1000-ը՝ թուրք: Հայերն այսուելու գրաղվամ էին պատղառությամբ, արհեստներով, առևտորով, ունեին երկու եկեղեցի՝ Ս. Լուսավորիչ և Ս. Սարգսի (վերջինս կառուցված է ժայռի մեջ): Գործել են արական և օրիորդաց վարժարաններ: Տե՛ս Խուլգավերյան Կ. (զլս. խմբ.), Հայկական Համառոտ Հանրագիտարան, հ. 2, Երևան, 1995, էջ 666:

բք. շայթանը տանի նրանց ու իրենց հայրերին է հետո, ինձնից առաջ էին անցել...»³⁸:

Դժոխային պատմությունն ավարտվում է թուրք զինվորականի կողմից՝ քաղաքում մնացած «ծեր ու անուժ» մի հայ ծերուկի սպանության տեսարանով. «հանկարծակի հրում, և նա, եղրից պոկվելով, զլսիվայր, «քարի պես» ընկնում է ջուրը»: Սարսափելի բացահայտումը խորապես ցնում է Շափիրոյին (Ուելուկենին նկարագրում է. «զրաշարի մեջըով ասես առլազ հոսեց») ու ստիպում զուգահեռներ անցկացնել «քուրք զարշանքի» և «հրեա տականքի» միջև: Այդ ընթացքում զրոյցին միջամտում է երկրորդ զինվորականը.

«- Շափիշ Ալի, իսկ ո՞նց վերջացակ հայերի գործը:

- Բոլորին վերացրինք, - հակիրճ պատասխանեց նա: Եվ որպեսզի բոլորը հասկանային իրեն, կրկնեց թուրքերեն, - էրմանիլերի հապ քետիլեր³⁹:

Նա հիանալի գիտակցում էր, թե ուղեկիցների վրա ինչ տպավորություն գործեց իր պատմությունը և դրանից տարօրինակ հաձույք էր զգում:

- Այդ ինչպե՞ս

- Հենց այդպես... սպանեցինք... բոլորին մարուր հալարեցինք, հանեցինք քաղաքային հրապարակ: Ինչպես ոչխարի հոտը՝ հազարներով, տասնյակ հազարներով... Քաղաքի ծայրամասում բաժանեցինք. տղամարդկանց մի կողմ, կանանց՝ մյուս: Տղամարդկանց զնողակահարեցինք, իսկ կանանց ու աղջիկներին... եղ արդեն մենք գիտեինք՝ ինչ անել նրանց հետ... իսկ հետո նրանց ծախեցինք քրդերին կամ էլ մահմեդական զյուղերին... Իսկ դու, զեղացի՝ ինելքը կարճ, ինչ հասկանաս այն օրերի համը: Հա՛, փառավոր ժամանակ էր»⁴⁰:

³⁸ Առորոն 3., նշվ. աշխ., էջ 394:

³⁹ Թուրք. Ermenileri hep kestiler («Հայերին բոլորին կոտորեցին»):

⁴⁰ Առորոն 3., նշվ. աշխ., էջ 396-397:

Հրեական գրականության մեջ այս թեմային անդրադարձերի սակավությունը ցույց է տալիս, որ շատերը, հասկանալով հայերին պատուհասած աղետի մասշտարները, հաճախ նախընտրել են լրել ու շրջանցել նուրբ ու վտանգավոր այդ թեման: Միայն հատուկենու խիզախներ են հակադրվել «իսթերիչմենթին»՝ բարձրածայնելով հայերի ցավի մասին: Նրանց թվում էր նաև իր ժամանակի «հայտնի անհարմարվողականը»⁴¹: Ահարոն Ռեւենի մասին:

Միանշանակ է, սակայն, որ անգամ Իսրայելի վարած համընդիանուր լուրջան և դիտավորյալ արհամարհման քաղաքականության պարագայում հրեաները հիանալի գիտակցել ու գիտակցում են Հայոց ցեղասպանության էռությունը: Պատահական չե, որ Մեծ Եղեռնի մասին խոսելիս իսրայելցիները երբեմն կիրառում են «Հայկական Շոա»⁴² ձևակերպումը՝ օգտագործելով հրեաների ողջակիզման՝ Հոլոքոստի երրայբեն համարժեքը:

ОТОБРАЖЕНИЕ ГЕНОЦИДА АРМЯН В ТРИЛОГИИ АХАРОНА РЕУВЕНИ «ДО ИЕРУСАЛИМА»

Arshak Gevorgyan
(резюме)

Общечеловеческая трагедия Геноцида армян нашла неравноценно скромное отображение в современной еврейской литературе. Сравнительно значимые упоминания о геноциде

⁴¹ Նույն տեղում:

⁴² Fisk R., *Do you know the difference between a Holocaust and a holocaust?* The Armenians do, The Independent, 30.11.2014,

<http://www.independent.co.uk/voices/comment/do-you-know-the-difference-between-a-holocaust-and-a-holocaust-the-armenians-do-9894346.html> (հասանելի է 01.05.2015):

можно найти в трилогии Ахарона Реувени «До Иерусалима». Эти упоминания занимают значимое, но отнюдь не центральное место в структуре произведения, однако даже из них становится ясно, что евреи в Палестине были хорошо осведомлены о судьбе армян с самого начала резни. В отрывках, важных для данной статьи, факт массовых убийств армян представлен с точки зрения сиониста-еврея, часто в контексте психологической взаимосвязи двух народов.

THE REFLECTION OF THE ARMENIAN GENOCIDE IN AHARON REUVENI'S TRILOGY "EVEN TO JERUSALEM" Arshak Gevorgyan (summary)

A universal tragedy like Armenian genocide got inadequately poor representation in contemporary Jewish literature. Relatively notable reflections of the Armenian theme were made by Aharon Reuveni in his trilogy "Even to Jerusalem". Even if those reflections take an important, but not central place in the structure of work, it's obvious from them that Jews of Palestine were well-informed about the fate of Armenians from the very beginning of mass murders. In the excerpts that are important for given paper, the fact of Armenian massacres is presented from the viewpoint of Zionist Jew, sometimes in the context of psychological interconnection between two nations.

**Գոռ Գորգյան
պ.գ.թ., դոցենտ
Եղիկա Ասաֆրյան**

**«ԱԶԱՏ ՄՊԱՆԵՐԻ» ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ
ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ ԵՎ ԵԳԻԴՏՈՍԻ ԱՐՏԱՔԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ
ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ (XX Դ. 50-ԱԿԱՆ ԹՁ.)**

Հանրապետական Եզիջտոսի պատմության կարևորագույն և շրջադարձային ժամանակաշրջաններից է 20-րդ դարի 50-ականները, երբ տապալված միապետության և քայլայված պետականության բեկորների վրա սկսեց կազմավորվել որակապես այլ իշխանություն՝ հասարակական և աշխարհադարձական նոր ընկալմամբ:

1952 թ. հուլիսի 23-ին «Ազատ սպաներ» գաղտնի զինվորական կազմակերպության¹ կողմից Եզիջտոսում իրակա-

¹ «Ազատ սպաներ» գաղտնի զինվորական կազմակերպության (حرکة أحرار الضباط) Աղ-Դուրատ ալ-ահրար) առաջին քիջները ձեւավորվեցին 1938 թ. Սանկարադ քաղաքում: 1938-1945 թթ. ընդունված է համարել կազմակերպության գործունեության բյուրեղացման առաջին փուլը, իսկ սկսած 1945 թ. կազմակերպությունում արդեն առկա էր հստակ դեկավար միջուկը: 1948-1949 թթ. պաղեստինյան պատերազմից հետո «Ազատ սպաներ» գաղտնի զինվորական կազմակերպությունը վերակազմավորում է իր կառուցվածքը: Կազմակերպության փաստացի կազմավորումը կայացել է 1948-1949 թթ. պաղեստինյան պատերազմի վերջնափուլում, իսկ 1950 թ. արդեն ձևավորվեց կազմակերպության գործադիր կոմիտեն սկզբից 5, 9, իսկ հետո 13 հոգուց բաղկացած կազմով: Ըստ տեղեկությունների կազմակերպության հիմնադիր և դեկավար Գամալ Արդել Նասերը միայն գիտեր կազմակերպության բոլոր անդամներին: 1952 թ. կազմակերպության գործադիր կոմիտեում ներգրավվեցին նաև գեներալ Սուհամմադ Նազիրին: 1952 թ. հուլիսյան հեղափոխական հեղաշրջման նախօրեին կազմակերպության անդամների թիվը հասնում էր 100-ի, և նրանց հսկողության տակ գտնվում էր Եզիջտոսական բանակի մեծ մասը: Հարկ է

նացվեց հեղափոխական հեղաշրջում, որի արդյունքում երկրում տապալվեցին միապետական կարգերը: Եզիջտոսը տեսական ժամանակ գտնվում էր մեծ տերությունների աշխարհադարձական շահերի բախման կիզակետում, իսկ 1882 թ. ի վերջո անցավ Մեծ Բրիտանիայի վերահսկողության պրոտեկտորատի/տակ²:

1922 թ. Մեծ Բրիտանիայի նախաձեռնությամբ Եզիջտոսը հոչակվեց անկախ թագավորություն, սակայն իրականում երկիրը շարունակեց մնալ անզիջական գաղութային իշխանությունների վերահսկողության ներքո³: 1952 թ. հուլիսյան հեղաշրջման արդյունքում Եզիջտոսում իշխանության եկած «Ազատ սպաներ» գաղտնի զինվորական կազմակերպության հիմնադիրն ու դեկավարը Գամալ Արդել Նասերն էր⁴, որն

նշել, որ կազմակերպության գործադիր կոմիտեի անդամների մեծ մասը Եզիջտոսի ուղմական և ծովային նախարարության զինավոր շտաբի Ակադեմիայի դասախուսներ էին՝ մայորի և փոխվեդապետի կոչումներով: Տե՛ս J. Gelvin, The Modern Middle East: A History, NY., Oxford, 2008, p 152., Հովեյան աշխատանքները՝ պատմության մեջ առաջատար է այս պատմությունը:

² Սանկարաման տե՛ս և Կիլբերգ X., Восстание Араби Паши в Египте: антибританское национально-освободительное движение в Египте в 1879-1882 гг., М/Л., 1937.

³ Սանկարաման տե՛ս և Հովեյաննեխյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. 3, Երևան, 2006, էջ 200:

⁴ Գամալ Արդել Նասերը «Ազատ սպաներ» գաղտնի զինվորական կազմակերպության հիմնադիրն էր և դեկավարը: Եզիջտոսական զինվորական ակադեմիան ավարտելուց հետո Նասերը 1938 թ. նշանակվում է ստանում Մանկաբարում տեղակայված Եզիջտոսական կայագորում, այսուհետև ծառայությունը շարունակում է Կահիրեում: Կազմակերպության գործադիր կոմիտեի անդամներն էին Գամալ Արդել Նասերը, Խալիդ Սուհամմադ Նինը, Զաքարիա Սուհամմադ Նինը, Սուհամմադ Նազիրը, Անվար Սադաթը, Մուսեիմ Ամինը, Քամալադ Նին Հուսեյնին, Արդել Լասիֆալ Բաղդադին, Հասան Իբրահիմը և Արդել Հարիմ Ամերը, Գամալ Սալիմը, Սալահ Սալիմը, Հուսեյն Շաֆին և Ալի Սարրին: Նրանցից հինգն ունեին մայորի, յորք փոխվեդապետի, այդ թվում՝ Նասերը, և, միայն մեկը՝ Նազիրը, գեներալ-մայորի զինվորական կոչում: Տե՛ս և Կովտոնովիչ Օ., Ռевոլուցիա

իրավամբ դարձավ ոչ միայն Եգիպտոսի, այլև ողջ արարական աշխարհի առավել խարիզմատիկ և ազդեցիկ առաջնորդներից մեկը: «Ազատ սպաներ»-ի կողմից իրականացված հեղափոխական հեղաշրջման առանձնահատկություններից մեկն այն էր, որ այն կրում էր զուտ ռազմական բնույթ: Հետաքրքիր է այն հանգամանքը, որ հեղաշրջման կազմակերպիչները ծրագրած իշխանափոխության գործում չեն ներգրավել ոչ մի քաղաքական այլ ուժ՝ կուսակցության և կամ կազմակերպության տեսքով, բացառությամբ «ՀԱԴԵԹՈՒ»-ի և «Մուսուլման-եղբայրներ»-ի մի քանի անդամների⁵: Ավելին, ըստ էության սա զուտ սպայական հեղաշրջում էր, քանի որ իշխանափոխության նպատակները չեն բացատրվում ոչ սերժանտական ոչ էլ շարքային գինվորական կազմին:

Առաջին հայացքից եգիպտական բանակի մի խումբ սպաների կողմից իրականացված հեղաշրջումը⁶ կարծես թե շար-

“Свободных офицеров” в Египте, М., 1984, с. 74/166/. Հովհաննիսյան Ն., Արարական երկրների պատմություն, հ. 3-րդ, Երևան, 2006, էջ 254:

⁵ Այս կազմակերպությունը «Ազգային ազատազրության դեմոկրատական շարժումը» իմանվել է 1947 թ. Հերքի Քուրիելի կողմից մի քանի կոմունիստական խմբերի միաձուլման արդյունքում: Առհասարակ 1942-1952 թթ. Եգիպտոսում գործում էին 7-10 կոմունիստական կազմակերպություններ, որոնց կենտրոնները գտնվում էին Կահիրեում և Ալիքսանդրիայում: Օրինակ «Ազգային ազատազրության եգիպտական շարժումը», «Կայծը», «Արևածագ» և այլն: Նրանց մեջ ամենահզորը հետև «ՀԱԴԵԹՈՒ»-ն էր: Սանրամասն տե՛ս և Հովեյանա պատմական պատմության առաջնահատվածը (1917-1966), М., 1966, с. 394.

⁶ Այս կազմակերպությունը իմանվել է 1928 թ. Աստվածաբանության ուսուցիչ Հասանալ Բաննայի կողմից Իսմաիլիայում (Եգիպտոս): Սանրամասն տե՛ս Lia B., The Society of the Muslim Brothers in Egypt, the Rise of an Islamic Mass Movement 1928-1942, U.K.: Ithaka 1998, p. 45.

7 Կուտունովի Օ., Ռеволюция «Свободных офицеров» в Египте, М. 1984, с. 95.

⁸ Հեղաշրջման արդյունքում Եգիպտոսում իշխանության եկան միջին սոցիալական խավերի, հայրենասիրական մտավորականության և ազգային բուժության ներկայացուցիչները:

բային վերնախավային իշխանափոխություն էր, սակայն իրականում այն ամբողջությամբ նոր քաղաքական-տնտեսական և զաղափարական համակարգի ձևավորման հիմք հանդիսացավ: Հեղաշրջումը շուտով վերածվեց հակակայսերապաշտական և հակավատատիրական հեղափոխության:

Հեղաշրջումից անմիջապես հետո նոր իշխանությունները քաղաքական ուստիկանության վերացման և հին պետական համակարգը «մաքրազատելու» վերաբերյալ մի շարք կարևորագույն օրենքներ ընդունեցին⁹:

1952 թ. սեպտեմբերի 9-ին ընդունվեց հողի մասին նոր օրենքը¹⁰, որի համաձայն բռնազրավում էին թագավորական հողերը, իսկ կալվածատերերից առզրավում էին 300 ֆեդդան չափարաժինը գերազանցող բոլոր հողերը¹¹: Միևնույն ժամանակ նվազեցվեց նաև հողի վարձակալության համար սահմանված վճարը, կանոնակարգվեց զյուղատնտեսության ոլորտի աշխատողների աշխատավարձը և այլն: Եգիպտոսի Հեղափոխական հրամանատարության խորհրդի անդամ (ՀՀԽ), գինվորական և քաղաքական գործիչ Խալեդ Սոհի ադ Դինը այս կապակցությամբ գրեց, որ Հողի բարեփոխումների մասին օրենքը, երևի թե առավել մեծ ազդեցությունն ունեցավ ժողովրդի կյանքի և հեղափոխության ճակատագրի վրա: Այն ազատեց զյուղացիությանը և կանգնեցրեց հեղափոխության

⁹ Վերացվեցին «քեյ» և «փաշա» տիտղոսները:

¹⁰ Кошелев В., Египет: уроки истории, борьба против колониального господства и контрреволюции (1879-1981), Минск 1984, с. 130.

¹¹ Հողի մասին բարեփոխումները խարիսկ էին Եգիպտոսի ազդեցիկ խավի դիրքերը, միևնույն ժամանակ իր կողմը գրավելով զյուղացիության սովորածավալ բանակի համակարգը: Այդախուժ, եգիպտական հեղափոխությունը հողի մասին բարեփոխումների արդյունքում ձեռք բերեց լայն սոցիալական հենք: 1952-1960 թթ. ընթացքում եգիպտական կալվածատերից լուսական շուրջ 445 հազար ֆեդդան հողեր, որոնք բաշխվեցին 180 հազար զյուղացիական ընտանիքներին: Ըստհանուր առմամբ հող սուցան մոտ 1 մլն. զյուղացիներ: Տե՛ս Միրսկի Գ., Армия и политика в странах Азии и Африки, М., 1970, с. 37.

կողքին¹²: Ավելի ուշ ընդունվեց նաև վարչակազմի անդամներին մեկից ավելի պաշտոն զբաղեցնելու արգելքի մասին օրենքը¹³:

1952 թ. դեկտեմբերի 10-ին ստեղծված Հեղափոխության Դեկավարման Խորհրդի կողմից վերացվեց 1923 թ. միապետական սահմանադրությունը, իսկ 1953 թ. դեկտեմբերի 16-ին Եզիդական կառավարությունը անցումային եռամյա շրջան, որի լրանալուն պես երկրում կրկին պետք է վերականգնվեին խորհրդարանական ինստիտուտները:

Զգտելով պահպանել նոր իշխանությունը ներքաղաքական վայրիվերումներից և միևնույն ժամանակ օգտագործելով անցումային շրջանում գտնվող պետությունների հետ կապված «միջազգային փորձը՝ Նասերը 1953 թ. հունվարի 17-ին երկրում վերացրեց բոլոր քաղաքական կուսակցությունները և բռնազրավեց նրանց ողջ ունեցվածքը։ Եզիփտական քաղաքական դաշտից վերացված կուսակցությունների փոխարեն ստեղծվեց «Ազատազրության կազմակերպությունը» միակ պաշտոնական կազմակերպությունը, որը պետք է հիմք դառնար նոր վարչակարգի համար նշված «անցումային շրջանը» թևակոխելու համար։

Մինչույն ժամանակ հունիսի 18-ին իրավական տեսանկյունից և ոչնչացվեց միապետությունը¹⁴, իսկ 1953 թ. հունիսի 18-ին Եգիպտոսը հռչակվեց հանրապետություն։ Եգիպտոսի Հանրապետության առաջին նախագահ նշանակվեց գեներալ

¹² «Проблемы мира и социализма», М., 1966, № 8, с. 39.

¹³ Орбнавақ, мін рианкпим պաշտոն գրаштегун պաշտոնյаң իրավունք չուներ մեկ այլ բանկпим և պաշտոն գրադենել: Мирский Г., Խշվ.աշխ. էջ 38, Аш Шафии III., Развитие национально-освободительного движения в Египте, М., 1961, с. 186.

Սուհամմադ Նազիբը: Նրա ձեռքում կենտրոնացվեցին պետության բոլոր բարձրագույն պետական, կառավարական և գիտնորական պաշտոնները¹⁵, սակայն իրական իշխանությունը երկրում կենտրոնացած էր Նասերի ձեռքում: Իշխանության նման բաշխման պարագայում ակնհայտ էր, որ իվերոն նրանց երկուսի միջև առճակատում կառաջանար:

Իրականում Նասերի և Նազիբի միջև շուտով քաղաքական և սոցիալական զարգացումների վերաբերյալ ի հայտ եկան հակասություններ՝ երկուստեք սրելով հարաբերությունները¹⁶: Բանն այն է, որ Նազիբը դեմ էր արմատական սոցիալական վերափոխումների. նա կարծում էր, որ միանգամայն բավարար էր միապետության տապալումը: Նազիբը ցանկանում էր Եզիպտոսը վերածել սահմանադրական հանրապետության, որտեղ դարձյալ կգործեին իրենց արդեն իսկ վարեւեկած ավանդական կուսակցությունները¹⁷:

Ի տարբերություն Նազիրի, Նասերը գտնում էր, որ երկրում քաղաքական հեղափոխությունը դեռ չի ավարտվել, իսկ սոցիալական հեղափոխությունը, ըստ Էության, ինչպես հարկն է, դեռ չի սկսվել¹⁸: Իր «Հեղափոխության փիլիսոփայությունը» հայտնի աշխատությունում Նասերը զրում էր, որ «բոլոր ազգերը անցնում են երկու հեղափոխությունների միջով՝ քաղաքական և սոցիալական: Քաղաքական հեղափոխության միջոցով ազգը հաստատում է իր ինքնակառակարման իրավունքը՝ ընդդեմ բռնակալության և նրա տարածքը բռնազավթած ազրեսիվ բանակի: Իսկ սոցիալական հեղափոխության ընթացքում հասարակության դասակարգերը կովում են միմյանց դեմ, մինչև որ չի ապահովվում արդա-

¹⁵ Նազիրը միևնույն ժամանակ զինված ուժերի զիսավոր հրամանատարն էր. Հեղափոխության դեկալյարման խորհրդի նախագահը և վարչապետը: Տե՛ս Հովհաննիսյան Ն, Խշկ. աշխ., էջ 260:

¹⁶ Vatikiotis P.J., The Egyptian Army in Politics, Bloomington 1961, pp. 139-140.

¹⁷ Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ., էջ 262.

¹⁸ Vatikiotis P.J., Nasser and his generation, London 1978, p. 129.

բություն բոլոր քաղաքացիների համար, և չի հաստատվում կայունություն երկրում»: Հենց այս սկզբունքներն ել Նասերը փորձում էր դարձնել Եգիպտոսի ներքին և արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները¹⁹:

Քաղաքական պայքարը գեներալ Նազիբի և փոխգնդապետ Նասերի միջև ավարտվեց վերջինիս հաղթանակով: 1954 թ. ապրիլի 16-ին ՀՀԽ-ն Նասերին նշանակում է վարչապետ և Հեռափոխական դեկանավորման խորհրդի նախագահ:

1954 թ. հոկտեմբերի 26-ին, Ալեքսանդրիայում, Նասերի ելույթի ժամանակ «Սուսուլման-եղբայրներ»-ը անհաջող մահափորձ են իրականացնում նրա նկատմամբ։ Ակսված հետաքննությունը պարզեց, որ «Սուսուլման-եղբայրներ»-ի հետ բավականին սերտ հարաբերությունների մեջ է նաև գեներալ Նազիրը²⁰։ Սա, ըստ եռության, լավագույն առիթն էր Նազիրից վերջնականապես ազատվելու համար։ Նոյեմբերի 14-ին Նազիրը ազատվեց բոլոր զբաղեցրած պաշտոններից և նրա նկատմամբ որպես խափանման միջոց տնային կալանք ընդունվեց²¹։

Պետական կառավարման փորձի կուտակումը, Եզիպտոսի առջև ծառացած ներքին զարգացման և արտաքին քաղաքականության ուսումնասիրությունը Նասերին հնարավորություն տվեցին ձևակերպել Եզիպտական հեղափոխության հիմնական խնդիրները, որը նա որպես կառավարության ծրագիր ներկայացրեց հանրությանը 1955 թ. մարտի 28-ին: Ըստ Նասերի՝ Եզիպտական հեղափոխության հիմնական խնդիրները հանգում էին հետևյալ կետերի. ա/ կայսերապաշտության վերացում, բ/ ավատատիրության վերացում, գ/ կա-

պիտալիստական մենաշնորհատիրության և նրանց տիրապետության վերացում, դ/ սոցիալական արդարության հաստատում, ե/ ազգային ուժեղ բանակի ստեղծում, զ/ իսկապես ժողովրդավարական համակարգի հաստատում²²:

1956 թ. հունիսի 23-ին Եզիպտոսում անցկացված ընդհանուր հանրաքվեի արդյունքում ուժի մեջ մտավ պետության նոր Սահմանադրությունը: Այն կարևորագույն դերակատարություն ունեցավ Եզիպտոսի քաղաքական պատմությունում՝ նպաստելով ազգային անկախության ամրապնդման և ազգային տնտեսության զարգացմանը²³:

1956 թ. հուլիսի 23-ին Նասերը համընդհանուր քվեարկությամբ ընտրվեց Եգիպտոսի նախագահ: Կենտրոնացնելով իր ձեռքում պետության ղեկավարման բոլոր լծակները, Նասերը միևնույն ժամանակ քաղաքական և տնտեսական քայլերը կատարում էր զգուշորեն՝ տեղի կալվածատերերի դժոնհությունը և բրիտանացիների հավանական ներխուժումը խանկանալու նպատակով²⁴:

Աշխարհաքաղաքական բարդ պայմաններում եզիապտական նորաթուխ իշխանություններին հարկավոր էր որդեգրել քաղաքական այնպիսի ուղեգիծ, որը ոչ միայն կանոնակարգեր ներքաղաքական կյանքը երկրում, այլև միջազգային հարաբերությունների ենթատերսում գերծ կպահեր Եզիապոն-սը զնուումներից և Վայրիվերումներից:

¹⁹ Հովհաննիսյան Ն., Խշկ. աշխ., էջ 261:

²⁰ Беляев И., Примаков Е., Египет: время президента Насера, М., 1981, с. 47.

²¹ Որպես պաշտոնանկության հիմնավորում Նախը Նազիրին մեղադրեց բնապետական նկրտումների իրականացման փորձում։ Նազիրը մինչև 1973 թ. ապրեց տնային կալանքի տակ և մահացավ 1984 թ.։

²² Сапронова М., Египет: 90 лет конституционных трансформаций (1923-2013 гг.), М., 2014, с. 20.; *Տեսակ՝ Հովհաննեսիս Ն.*, Եղվարդի, էջ 265:

²³ Մանրամասն տե՛ս Սաքոնովա Մ., նշվ. աշխ., էջ 20:

²⁴ Malek A., Egyptie Societe Militaire, Paris, 1962, p. 72, Мирский Г., նշան, եղ 38:

կաշրջանի աշխարհաքաղաքական գարզացումները, այլև ամփոփեց Վերջինիս աշխարհընկալման տեսլականը:

Գամալ Աբդել Նասերի կողմից առաջ քաշված արտաքին քաղաքական նոր հայեցակարգն ունեցավ հենքային նշանակություն Եգիպտոսի հետազա զարգացման համար: Եգիպտոսի արտաքին քաղաքական նոր հայեցակարգը կառուցվեց հետևյալ սկզբունքային մոտեցումների վրա.

ա/ դրական չեզորություն և ուշալիզմ

1955-1961 թթ. Եգիպտոսի արտաքին քաղաքականության համար չափազանց վճռորոշ ժամանակաշրջան էր: Այն առաջին հերթին պայմանավորված էր միջազգային հարաբերություններում և տարածաշրջանում «սառը պատերազմ» ազդեցության անմիջական դրսնորումներով, մասնավորապես ռազմամաքաղաքական բլոկների ստեղծման և երկու գերտերությունների միջև ուժերի նոր հարաբերակցության ձևավորման հարցում ու աշխատական դիրքորոշմամբ: Հատ Նասերի՝ հարկավոր էր լինել «մեծ խաղի» մեջ, բայց խաղալ փոքր խաղադրույքներով՝ քայլ առ քայլ գնալով առաջ: Մասնավորապես կապեր ստեղծել այնպիսի պետությունների հետ, որոնք «սառը պատերազմ» շրջանակներում ևս համարվում էին այսպես կոչված «երրորդ աշխարհ»²⁵:

Ստանձնելով պետության նախազահի պաշտոնը Նասերը հայտարարեց, որ Եգիպտոսը «չի միանա ոչ Արևմտյան և ոչ էլ Արևելյան բլոկներին»²⁶: Սակայն տվյալ ժամանակաշրջանի

²⁵ Օրինակ, նորանկախ Եգիպտական պետության համար չափազանց կարևոր էր մատչելի և որակյալ սպառազինության ձեռքբերումը, որն էլ հնարավոր եղավ ստանալ 1955 թ. սեպտեմբերի 21-ին Պրահայում Եգիպտոսի և Չեխովորվակիայի միջև ստորագրված համապատասխան համաձայնագրի շնորհիվ: Մարդամասն տե՛ս Bickerton I.J., Klausner C.L., A History of the Arab Israeli Conflict, Pearson 2010, p. 115.

²⁶ Крылов С., 50 лет движению неприсоединения: итоги и перспективы, с. 17, տե՛ս http://www.mgimo.ru/files/225722/02_Krylov.pdf

արտաքին քաղաքական գարզացումները պաշտոնական Կահիրեին ի վերջո բերեցին Արևմուտքի հետ անմիջական առճակատման: Միևնույն ժամանակ տվյալ հանգամանքը և տարածաշրջանում սկսված քաղաքական մրցապայքարը էլ ավելի ամրապնդեցին և խթանեցին Նասերի նկրտումները՝ Եգիպտոսը վերածել Մերձավոր Արևելքի «առաջնորդի»: Նասերի կողմից որդեգրված «դրական չեզորության» քաղաքականության շրջանակներում կարևորագույն քայլերից էր 1955-1956 թթ. Ինդոնեզիայում «Չմիացած երկրների շարժման» կազմակերպության հիմնման վերաբերյալ Զնդկաստանի վարչապետ՝ Զավահարլար Ներուի և Հարավալավիայի նախազահի Խոսիֆ Բրոգ Տիտոյի հետ համատեղ որոշման ընդունումը²⁷:

Այս կապակցությամբ ուշագրավ է ԱՍՍ-ի նախկին պետքարտուղար Ջոն Ֆուստեր Դավիթի կարծիքը, համաձայն որի Նասերի «չեզորությունը» ԱՍՍ-ի կողմից որակվեց իրքն «կոմունիզմի հետ մերձեցում»: Սակայն, իրականում Նասերը նախընտրեց «չեզորությունն և խուսանակումը» ԽՍՀՄ-ի և ԱՍՍ-ի միջև, թեպետ Եգիպտոսի նախազահն իր կողմից արձարձվող «արաբական սոցիալիզմի շրջանակներում ավելի համակրում էր» պաշտոնական Մուսկային:

Նասերի «դրական չեզորության և ուշալիզմ»-ի քաղաքականությունն էլ ավելի ամրապնդվեց Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Խորայելի կողմից 1956 թ. Եգիպտոսի դեմ նախաձեռնված «եռյակ ազրեսիայի» արյունքում: «Եռյակ ազրեսիան» և առաջացած Սուեզի գնաճամը Եգիպտոսի համար բարձան բարոյական այն հաղթանակները, որոնք բարձրացրին պետության հեղինակությունը՝ վերածելով Կահիրեին ա-

²⁷ Kahin, George McTurnan. The Asian-African Conference: Bandung, Indonesia, April 1955. Ithaca: Cornell University Press, 1956, p. 24.

րաբական աշխարհում «եղանակ ստեղծող պետության»²⁸: Նասերի արտաքին քաղաքական հայեցակարգի «դրական չեզորության և ռեալիզմ»-ի բաղադրիչն էր, որն Սուեզի ճգնաժամում ապահովեց ԱՄՆ-ի, և միևնույն ժամանակ ԽՍՀՄ-ի հանդես գալը Եգիպտոսի օգտին²⁹:

Բ/Սոցիալական կառուցողականություն (Կոնստրուկտիվիզմ)

Այս բաղադրիչով Նասերը փորձեց համարել Եգիպտոսի մշակույթը, ավանդույթները և պատմական անցյալը արտաքին քաղաքականության շրջանակներում: Նասերի կարծիքով միապետական իշխանության տարիներին միջազգային հարաբերություններում Եգիպտոսի տեղն ու դերը խեղված էր և այն հաճախ չէր ընկալվում միանշանակ իբրև «իրական արաբական պետություն»:

Տվյալ բաղադրիչով արտաքին քաղաքականությունում Նասերը փորձեց կառուցել իդենթիկ Եգիպտական պետություն, որի հիմքում պետք է դրված լինի արաբական ազգայնականությունը՝ հիմնված արաբերնի և իսլամի վրա: Հստ Նասերի՝ հենց սա պետք է դառնար Եգիպտոսի միասնության հիմքը և ամրապնդեր սոցիալական կառուցողականության (կոնստրուկտիվիզմի) բաղադրիչը արտաքին քաղաքականության մեջ: Հստ եռթյան, սոցիալական կառուցողականությունն էլ հանդիսացավ նասերականության հիմքը: Արդարացի լինելու համար հարկ է նշել, որ դրույթի ձևավորման համար նպաստեցին թե՛ Խորայելի և պաղեստինյան հարցի

գոյությունը, և թե՛ Արևմուտքի «արաբատյաց տրամադրություններ տարածելու քաղաքականությունը»:

Արդյունքում Արևմուտքի այն մտահոգությունը, որ սոցիալական կոնստրուկտիվիզմի հիմքից սերած նասերականությունը կդառնա տիրապետող ուժ և զաղափար արաբական աշխարհում, շուտով դարձավ իրականություն:

Գ/Սայրահեղականությունը

Նասերը ցանկանում էր խզել Եգիպտոսի բոլոր կապերը տնտեսական անցյալի հետ ստեղծելով այնպիսի համակարգ, որը կներդաշնակեցներ սոցիալական դասակարգերը, անդրազգային կորպորացիաները և այսպէս կոչված «տնտեսական էլիտան»:

Նասերի աշխարհայացրում ծայրահեղականությունը ենթադրում էր նաև, որ «պետությունը միջազգային կապիտալիզմի և կայսերապաշտության գործակալ» լինել չի կարող և հետևաբար Եգիպտոսը ունի զարգացման իր ուրույն ուղեգիծը: Վերը նշվածի շրջանակներում ազգայնացման քաղաքականությունը ստեղծեց նաև հասարակական նոր ոլորտ, որն իր տեղը գտավ արտաքին քաղաքականության մեջ: Օտարերկրյա կազմակերպությունները կարող էին ներդրումներ կատարել Եգիպտոսում, միայն իշխանությունների թույլտվության դեպքում, քանի որ տնտեսության բոլոր առանցքային ոլորտները գտնվում էին պետության բացարձակ վերահսկողության ներքո:

Դ/Ազատականություն

Չնայած Նասերի վարած պետական վերահսկողության քաղաքականությանը տնտեսության ոլորտում՝ Եգիպտական իշխանությունները միևնույն ժամանակ հայտարարում էին, որ իրենք պատրաստ են Եգիպտական շուկայում ապա-

²⁸ Киссинджер Г., Дипломатия, տե՛ս <http://www.e-reading.club/chapter.php/1016921/21/Kissindzher - Diplomatiya.html>

²⁹ Տարածված կարծիքի համաձայն, Եգիպտոսի դեմ սկսված «եռյակ ազրեխիան» հնարավոր եղակ կանխել հիմնականում ԱՄՆ-ի կոշտ դիրքորոշման արդյունքում, մինչդեռ խորհրդային մասնագիտական գրականության մեջ նշվում էր ԽՍՀՄ-ի բացարիկ դերակատարության մասին նշված ձևածամում:

հովել ազատականություն՝ օտարերկրյա ներդրումները ապահովելու նպատակով:

Ամփոփելով՝ կարող ենք ասել որ միջազգային հարաբերություններում Նասերի Եգիպտոսը բնորոշվում էր որպես անարխիայի մեջ գտնվող երկիր, որը չի կարողանում կողմանորոշվել «դաշնակցի ընտրության» հարցում: Իհարկե, այս ամենը պայմանավորված էր օտարերկրյա քաղաքական, տնտեսական և ռազմական կախումը նվազեցնելու Նասերի ձգումամբ:

РЕВОЛЮЦИОННЫЙ ПЕРЕВОРОТ “СВОБОДНЫХ ОФИЦЕРОВ” И ФОРМИРОВАНИЕ НОВОЙ ВНЕШНЕПОЛИТИЧЕСКОЙ КОНЦЕПЦИИ ЕГИПТА (50-ЫЕ ГОДЫ XXВ.)

Гор Геворгян

Едита Асатрян

(резюме)

Одним наиважнейших этапов в истории республиканского Египта являются 50-ые годы 20в. Именно в этот период началось строительство новой системы власти и национальной независимой экономики государства. Пришедшая к власти в стране организация “Свободные офицеры” во главе с Гамалем Абдель Насером осуществили обширную программу реформ, затронувшую практически все сферы страны.

Взамен уничтоженной монархии Насер предложил качественно “Новый Египет”, который должен был не только преодолеть внутриполитическую тяжелую ситуацию и экономическую нестабильность но и стать одним из самых влиятельных государств арабского мира.

Предложенная Насером новая внешнеполитическая концепция Египта, стала движущей силой страны, которая определила ее специфическое место и роль в регионе и в международных отношениях. Насер стал лидером арабского мира, а его идеологическая основа-насеризм стала в некотором смысле одним из залогов единства “арабской уммы”.

“FREE OFFICERS” REVOLUTION OVERTURN AND FORMATION OF THE NEW FOREIGN POLICY CONCEPT OF EGYPT (XX CENTURY’S 50-TH) *Gor Gevorgyan* *Edita Asatryan* **(summary)**

One of the most important stages of republican Egypt history is the XX century's 50-th. Exactly in that period building of the new power system and the country's national independent economy began. The “Free Officers” organization, led by Gamal Abdel Naser, which came to power, realized broad reform program, which influenced almost all the spheres of the country. Instead of the destroyed monarchy, Naser suggested a qualitatively new Egypt, which should not only overcome tough internal political situation and economic instability, but become one of the most influential countries of the Arabic world.

The new foreign policy concept, suggested by Naser became moving force of the country and defined its specific place and role in the region and foreign affairs. Naser became the leader of the Arabic world and his ideologic basement – Nasserism – in certain aspect became collateral of the unity of the “Arabic ummah”.

**Սարգիս Գրիգորյան
պ.գ.թ.**

**ԶԻՀԱՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՆ ՈՒ ԻՍԼԱՄԱԿԱՆ
ԱՐՄԱՏԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐԸ 18-20-ՐԴ ԴԴ.**

**Բանափի բառեր՝ ջիհադ, Ղուրան, Սուննա, իսլամական
արմատական կազմակերպություններ, հարծակողական և
պաշտպանողական ջիհադ, ալ-Կահիդա**

«Ջիհադ» ((Al-҂ihād-الجهاد)-արաբերենից թարգմանաբար նշանակում է ջանալ, ջանք թափել, դժվարություններ հաղթահարել և այլն) հասկացության արմատները գնում են մինչև վաղ իսլամական ժամանակաշրջան, երբ սահմանվեցին ջիհադի հարձակողական և պաշտպանողական բնորոշումները Միջնադարում, հասկապես 12-14-րդ դդ. ձևակերպվեց ջիհադի ամբողջական հայեցակարգը, որը հետագայում լայն կիրառում գտավ մուսուլմանական աշխարհում: Օսմանյան կայսրության ձևավորման սկզբնական շրջանում իսլամական կրոնական ավանդույթներն, այդ թվում նաև ջիհադի գաղափարախոսություննը, նույնպես կիրառվում էին օսմանյանների կողմից հարևան ոչ մուսուլման բնակչության դեմ պատերազմների ժամանակ: Օսմանյանների համար ոչ մուսուլմաններին պատկանող հողերի գրավումը կամ նրանց բնակչության կողրապուտը իսլամի օրենքների համաձայն դիտվում էր որպես աստվածահաճ գործ («դազառուար»), իսկ ջիհադն անհավատների դեմ մի միջոց էր նաև զենքի ուժով քրիստոնյանների շրջանում իսլամը տարածելու համար¹: Օս-

¹ Տառադարձությունը կատարվել է Բրիլի արաբերեն տառադարձության համակարգի միջոցով (Տե՛ս http://www.brill.com/downloads/Simple_Arabic_transliteration.pdf):

² Բայրության Վ., Օսմանյան կայսրության պատմություն, Երևան, 2011, էջ 42-43:

մանյան իշխանությունները, հենվելով մուսուլման ուղևուների, ֆակիհների ու սուֆիական միաբանությունների վերնախավի վրա, ոչ միայն ամրապնդում էին իրենց իշխանությունը, այլև «հավատի համար պայքարի»՝ ջիհադի կարգախոսի ներքո հիմնավորում էին իրենց զավթողական արշավանքները³: Կայսրության սահմանային տարածքները զբաղեցնող բնակչությունը տողորված էր անընդհատ տարածվելու, սրբազն պատերազմ վարելու միջոցով սեփական տարածքներն ընդլայնելու գաղափարներով, մինչև չնվաճվեր ողջ աշխարհը⁴: Սակայն հետագայում երբեմնի հզոր Օսմանյան կայսրությունն արդեն 15-16-րդ դդ. սկսեց աստիճանաբար կրոցնել իր գերակայող դիրքերը՝ փորձելով գոնե պահպանել իր ազգեցության տակ գտնվող տարածքները:

15-րդ դարի երկրորդ քառորդից սկսած Սեֆյան շեյխները «հանուն հավատի» նշանաբանի ներքո դզլբաշական ցեղային զորամիավորումների գլուխ անցած սկսեցին հաճախակի ուազմարշավներ կազմակերպել դեպի հարևան ոչ մուսուլմանական երկրներ⁵: Արդեն 16-րդ դարի առաջին քառորդից Պարսկաստանում գերիշխող դիրքեր ձեռք բերած շիայականությունը խարսխվեց իրանա-իսլամական հասարակության զիսավոր շղթայի կենտրոնում (որն անցնում էր արևելքից արևմուտք՝ Աֆղանստանից Անատոլիայ), ինարավորություն տալով սուննիական իսլամին գերիշխող դիրքեր ստանձնել իրանական աշխարհի երկու ծայրամասերում, ինչպես նաև նրանից հարավ և արևմուտք ընկած արաբական երկրներում⁶, իսկ Սեֆյան Իրանի աստիճանական հզորացումը

³ Նոյն տեղում, էջ 51-52:

⁴ Inalcik H., The Ottoman Empire-The Classical Age, 1300-1600, Weidenfeld and Nicolson, London, 1973, p. 6.

⁵ Բայրության Վ., Իրանի պատմություն (Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Երևան, 2005, էջ 296:

⁶ Տոյնբի Ա. Ջ., Исследование истории: Возникновение, рост и распад цивилизаций, Москва, 2009, стр. 61-64.

պետք է հանգեցներ իր հարևան հզոր սունիթական մուսուլմանական երկրի՝ Օսմանյան կայսրության հետ բախման և պատերազմների, որոնք նույնպես ընդունում էին կրոնական բովանդակություն:

Խաչակրաց արշավանքներից հետո Արևմուտքն աստիճանաբար սկսեց թելադրող և հետազայում նաև գերիշխող դիրքեր զբաղեցնել համաշխարհային զարգացումներում։ Խոլամական աշխարհի և Արևմուտքի միջև անհավասար բախումն ակնառու դարձավ 1798թ., երբ Նապոլեոն Բոնապարտի ֆրանսիական նավատորմը ափ իջավ Եգիպտոսում։ Ալեքսանդրիա քաղաքում (հատկանշական է, որ Եգիպտոսում իշխող մամլուքները փորձեցին հսկայական ֆրանսիական նավատորմի առջև փակել մետայա շղթայով, որից ոչ մի բան չմնաց ֆրանսիացիների հրանորներից արձակված կրակից հետո): Եվրոպացիների ռազմական, քաղաքական, արդյունաբերական և ֆինանսական հզորությունը մեծ հարված էր մուսուլմանների համար։ Ռազմական քաղկացուցչից զատ մուսուլմանները Եվրոպացիներին զիջում էին նաև բոլոր մյուս բնագավառներում⁷։

Հարկ է նշել, որ դեռևս 18-րդ դարի վերջից սկսած արևմտյան ազդեցությունը որոշ չափով մերձավորաբնեյան արևմտականների գործողությունների արդյունք էր, որոնք առաջնորդվում էին արևմտյան աշխարհի տեխնիկական, մշակութային և քաղաքական ձեռքբերումների ընդօրինակմամբ։ Այդ հանգամանքն այդ ժամանակ բացասական տրամադրություններ առաջացրեց մուսուլմանական հասարակության մեջ։ Եվրոպական արժեքների տարածումը, Եվրոպայի ռազմական հզորության վերելքը և Օսմանյան կայսրության թու-

⁷ Ал-Ջաբարտի, Աբդ ար-Ռախման, Եգիպտ և դարաշրջակային պետականություններ 1798-1801), Մոսկվա, 1962, ստ. 58-67.

⁸ Lewis B., The Middle East: a brief history of the last 2000 years- New York : SCRIBNER, 1996, p. 306.

լացումը նպաստեցին մուսուլմանական շրջանակներում բարենորդչական զաղափարների տարածմանը։ Մուսուլմանական բարեփոխության հիմնադիրները (Զամալ Ալ-Դին Ալ-Աֆյանի, Մուհամմադ Աբրո, Աբր Ալ-Ռահիման Ալ-Քաուաքիրի և այլն) ձևավորեցին դավանաբանական հիմքերի ամրապնդման սկզբունքները, որոնցից էր նաև նոր ժամանակներում մուսուլմանական համայնքի՝ ումմայի վերելքը Ղուրանի և Սուննայի հիման վրա՝ հանդիսանալով մարդու և Աստծո միջև հարաբերությունների կարգավորիչներ։ Բարեփոխիչների կողմից փորձ արվեց արմատավորել հոգնորից դեպի բանականի, ճակատազրապահությունից և պասիվությունից դեպի մարդու կողմից իր ստեղծագործական հնարավորությունների ընկալումը, որն ուներ աստվածային կանխորոշումների շրջանակներում ընտրության ազատություն։

Այդ ժամանակ կրթված երիտասարդությունը մուսուլմանական աշխարհում գտնվում էր մի կողմից՝ ժամանակակից և մասնավորապես արևմտյան պատկերացումների, իսկ մյուս կողմից՝ ավանդական իսլամական սկզբունքների ազդեցության տակ։ Մուսուլմանական բարեփոխիչները գիտակցում էին, որ բարեփոխման համար անհրաժեշտ է խալաւ դավանողների շրջանում լրասավորության տարածում։ Կրոնի վերակենդանացումը վերջիններս տեսնում էին առաջին հերթին դեպի իսլամական արմատներ և վաղ իսլամական արժեքներ վերադարձի քարոզչության մեջ։ Խնդրին սրություն հաղորդեց նաև իսլամական վերածննդին նախորդած շրջանում մուսուլմանական երկրների սահմանափակ արևմտականացման ճանապարհով գնալը, ինչն ընթացավ մուսուլմանական հասարակության վերին խավերում, իսկ ստորին խավերը գերծ մնացին դրանից։ Արևմտականացումը հարվածեց մուսուլմանական աշխարհի հասարակական հարաբերություն

յուններին՝ վերածվելով ներքին լարվածության աղբյուրի⁹: Այս համատեքստում, իսլամի պաշտպանության, առավել ևս ջիհադի հայեցակարգի նկատմամբ մուտքմանների վերաբերմունքը թույլ իմբրերի վրա էր դրված, և այդ ժամանակից սկսած իսլամական գործոնը կարևոր տեղ սկսեց զբաղեցնել մուտքմանական հասարակական զարգացումներում, որտեղ առաջին պլան մդվեցին ոչ միայն կրոնը և Սուրբ գրքի մեկնաբանությունները, այլև համամուտվմանական պետության՝ խալիֆայության ստեղծման ու շարիաթի դրույթների ամրագրման գաղափարները:

19-րդ դարի 70-ական թթ. մուտքմանական աշխարհում ծագած պանխամական շարժումն ակտիվ շրջանառության մեջ դրեց ջիհադի հայեցակարգը՝ նպատակ հետապնդելով այդ զաղափարների ներքո միավորել մուտքմաններին: Մերձավոր և Միջին Ասիայում ջիհադի հայեցակարգի շուրջ համախմբվեցին մուտքմանական հասարակական լայն զանգվածները, որոնց միջև առկա հակասությունների հաղթահարման իմբր կարող էին ծառայել նաև իսլամական կարգախոսները: Այս համատեքստում յուրաքանչյուր կազմակերպություն կամ ուժ, ով օգտագործում էր ջիհադն իրենց զաղափարները քարոզելու համար, իրավունք վերապահեց իր սեփական դիրքերից մեկնաբանել ջիհադի դասական հայեցակարգը:

Ջիհադի կարգախոսներն օգտագործվեցին նաև Առաջին համաշխարհային պատերազմի տարիններին: Դա պայմանավորված էր նաև Օսմանյան կայսրությունում երիտրուրքերի կառավարության կողմից տարվող ազրեսիվ քարոզությամբ, հատկապես կայսրության՝ պատերազմի մեջ մտնելուց կարծամանակ անց՝ 1914թ. նոյեմբերի վերջին արված ջիհադի հայտարարությամբ, որն ուղղված էր ինչպես արտաքին քշնամու, այնպես էլ ներքին անցանկալի ազգերի դեմ: Սա

ձակատագրական դարձավ հայերի և թուրքահպատակ այլ քրիստոնյաների համար, որոնք ենթարկվեցին ցեղասպանության նաև ջիհադի կարգախոսների ներքո: Կոտորածների նկարագրություններում հաճախ հանդիպում ենք այնպիսի դեպքերի, երբ հայերի վրա հարձակվող մուտքմանները կրոնական բնույթի կոչեր էին անում¹⁰:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիններին Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև զադոնի բանակցությունների ընթացքում Սայքս-Պիկոյի համաձայնագրով¹¹ արարական աշխարհի հետագա ճակատագրի որոշումը, միմյանց միջև արարական տիրույթների վերաբաժնումն ու Օսմանյան կայսրության վիլուգումը արարական աշխարհում սկիզբ դրեցին հակագաղութային պայքարին, ազգային-ազատագրական շարժումներին, որոնց հետևանքով արդեն 20-րդ դարի 40-ական թթ. ի հայտ եկան անկախ արարական պետությունները: Այս բոլոր գործընթացների արդյունքում, ինչպես նաև Մուստաֆա Քեմալի կողմից 1924թ. խալիֆայության ինստիտուտի վերացմամբ մուտքմանական աշխարհում սկսեցին ակտիվանալ իսլամական արմատական զաղափարները, ի հայտ գալ իսլամական արմատական զաղափարախոսությամբ առաջնորդվող կառույցները: Այս առումով ջիհադի հայեցակարգը մշակման ենթարկվեց իսլամական վերածննդի և մուտքմանական արմատականության մի շարք զաղափարախոսների կողմից¹²: Հասարակական-քաղաքա-

¹⁰ Գրիգորյան Հ., «Մշակութային մողելները» որպես ամրոխի վարքի կազմակերպման ազդակներ Հայոց ցեղասպանության համատեքստում, Մերձավոր Արևելք: Պատմություն, քաղաքականություն, մշակույթ: Հոդվածների ժողովածու, VII, Երևան, 2011, էջ 98-103:

¹¹ Հովհաննեսյան Ն., Արարական երկրների պատմություն: Հատոր IV. Անկախության և ինքնիշխանության դարաշրջան: 1918-2005թ./, Երևան, 2007, էջ 282:

¹² Արմանսկий вопрос. Էնցիկլոպեդия / Ред. кол.: К.С. Худавердян (отв. ред.) и др.- Ереван, 1991, стр. 163.

կան և տնտեսական ոլորտներում մուսուլմանական աշխարհիկ վարչակարգերի անհաջողությունները նպաստեցին իսլամական արմատական զաղափարների տարածման և այդ զաղափարներով տողորված կառույցների ստեղծմանը, որոնք պատրաստ էին բացահայտ և ոչ բացահայտ պայքար մղել ինչպես տեղի մուսուլման վարչակարգերի դեմ, այնպես էլ, արձագանքելով իսլամական կոչին, պայքարն իրականացնել այլ վայրերում:

Եզիպտոսում Հասան Ալ-Բաննայի կողմից 1928թ.-ին ստեղծվեց «Մուսուլման եղբայրներ» (Al-Ihwān al-Muslimūn) կազմակերպությունը, որի ծրագրային դրույթներում ամրագրվեց, որ իրական իսլամը շատ արժեքներից բացի նաև զիհադ է: Այն տրվել է մուսուլմաններին որպես պարտականություն, և մուսուլմանները չպետք է հրաժարվեն զիհադից: Կազմակերպությունը զգալի ազդեցություն ուներ եզիպտոսական հասարակության տարբեր խավերի, հատկապես հետամնաց շրջանների վրա: Այն բավական լավ կազմակերպված կառույց էր, որի մոլեուանդ անդամները պատրաստ էին ամեն քայլի, այդ թվում նաև՝ ահաբեկչական¹³ գործողությունների¹⁴:

¹³ ՄԱԿ-ի ԳԱ-ի կողմից մշակված «Ահաբեկչություն» տերմինի բնորոշումը հետևյալ կերպ՝ «Ահաբեկչությունը բնորոշվում է որպես յուրաքանչյուր անհատի կամ խմբի անօրինական և դիտավորյալ գործողություն, որը հանգեցնում է ցանկացած անհատի մահվան կամ ծանր մարմանական վնասվածքների, պետական և մասնավոր սեփականության ծանր վնասների, այդ թվում հասարակական և պետական վայրերի, հասարակական տրանսպորտի, ենթակառուցվածքների օբյեկտներին, շրջակա միջավայրին և այլն: Հանգեցնում է վերոշարադրյալ օբյեկտներին պատճառած վնասների, որոնք կարող են մեծ տնտեսական վնասի պատճառ դառնալ, եթե նման արարքի նպատակը, իր բնույթից և գործողության համատերատից ելնելով, կայանում է բնակչությանը վախճեցնելու կամ պետությանն ու միջազգային կազմակերպությանը ստիպելու կատարել կամ ձեռնպահ մնալ ցանկացած գործողություն իրականացնելուց» (Տե՛ս United Nations General Assembly, Report of the AdHoc Committee established

Կազմակերպության շարքերում առավել արմատական թիվ ակտիվացավ 1950-ական թթ., երբ կառույցը դուրս մնաց Եգիպտոսի քաղաքական գործընթացներում ակտիվ դերակատարությունից: Արմատականների քննադատության հիմնական թիրախը իշխանություններն էին, Եգիպտական հասարակությունում արմատացած կոռուպցիան և իշխող վարչականից կողմից իրականացվող բռնությունները: Արմատականների գործողություններն ուղղված էին հիմնականում պետական կառույցների դեմ՝ նպատակ ունենալով մուսուլմանական երկրներում ռազմական հեղաշրջման միջոցով հասնել իշխանափոխության:

Եզիպտոսում «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության ձևավորմամբ խնդիր դրվեց ինտելեկտուալ և մտավոր շրջանակներում ծավալված իսլամական արմատական զաղափարների քննարկումը տեղափոխել հասարակական առավել լայն զանգվածների քննարկման շրջանակ¹⁵: Իր հիմնադրման սկզբնական շրջանում (1928-1936թ.) գործողությունների հիմքում դնելով կրոնական-հասարակական ուղղվածություն՝ «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության

by General Assembly resolution 51/210 of 17 December 1996, Sixth session (28 January-1 February 2002) Annex II, art. 2.1.: «Յանկացած քրեական արարք, որը նպատակ ունի, կամ միտված է հասարակության, մարդկանց որևէ խմբի կամ կոնկրետ անձանց շրջանում սարսափ տարածել, չի կարող արդարացվել, անկախ քաղաքական, վիլխատվայական, զաղափարախնական, ուսասայական, ենիկ, կրոնական կամ որևէ այլ նկատառումներից, որոնք կարող են օգոստոբներ արարքն արդարացնելուհամար» (Տե՛ս 1994 United Nations Declaration on Measures to Eliminate International Terrorism annex to UN General Assembly resolution 49/60, "Measures to Eliminate International Terrorism", of December 9, 1994, UN Doc. A/Res/60/49):

¹⁴ Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. 3, Երևան, 2006, էջ 244:

¹⁵ Տե՛ս The Encyclopedia of Islam, New Edition, Under the patronage of the international union of academies, Volume VIII, Leiden, E. J. Brill, 1995, p. 907.

հետագա ակտիվությունը կրեց քաղաքական բնույթ¹⁶, որին հաջորդեցին 1952թ.-ից Եզիպտոսում իշխանության եկած «Ազատ սպաների» կողմից կազմակերպության նկատմամբ ճնշումները ու կեղերումները: Արդյունքում՝ 1950-60-ական թթ.-ից կազմակերպության մի շարք առանցքային դերակատարներ մահապատժի ենթարկվեցին, իսկ բազմաթիվ անդամներ հայտնվեցին բանտում: Ենթարկվելով ճնշումների և ձերքակալությունների՝ «Մուսուլման եղբայրներ» կազմակերպությունը ստիպված էր տեղափոխվել և իր կենտրոններն ու կառույցները հիմնել ոչ միայն այլ մուսուլմանական երկրներում, այլև աշխարհի այլ հատվածներում: Այն աստիճանաբար վերածվեց ցանցային կառույցի՝ տարածելով խլամական արմատական զաղափարները¹⁷: Այս զաղափարներով տոգրված զանգվածը արձագանքեց 20-րդ դարի վերջում իրականացվող խլամական կոչերին՝ անմասն չմնալով մուսուլմանական աշխարհում ծավալված գործընթացներից, իսկ Եզիպտոսում կազմակերպության ձախողման պատճառների գիտակցումն ու դրանցից դասեր քաղելը հետազայում կանխորշեցին խլամական արմատական տարրեր հոսանքներում նույնիսկ այսօր նկատելի հիմնական միտումները¹⁸:

Արմատականների համար որպես զաղափարական հիմք հանդիսացան Եզիպտացի Սայիդ Կուտրի աշխատությունները: Հատկապես նա մշակեց անհավատության մեջ մեղադրանքի և աշխարհից հեռանալու (Al-Takfir wa al-Hiğrah- التكفير و الهجرة) հայեցակարգի սկզբունքները, որոնց էությունը կայանում էր նրանում, որ աշխարհի կողմից, որպես իշխանության աղբյուր, շարիաթի մերժումը պատճառ էր հանդիսանում շա-

¹⁶ Տե՛ս՝ The Encyclopedia of Islam, New Edition, Under the patronage of the international union of academies, Volume III, Leiden, E. J. Brill, 1986, p. 1068.

¹⁷ Pargeter A., The New Frontiers of Jihad: Radical Islam in Europe. London: I. B. Tauris, 2008, p. 22.

¹⁸ Կեպը Ժ., Ջիխադ: Էքսպանսիա և զակատ իսլամիզմա, Մոսկվա, 2004, սր. 35.

հիմայի (մինչիսլամական բազմաստվածության ժամանակաշրջանի) համար¹⁹: Ըստ Կուտրի՝ ժամանակակից աշխարհը գտնվում էր ջահիլիայի շրջանում, իսկ վերջինը, մարդկանց տալով ազատություն, դարձնում էր նրանց մյուսների ստրուկ²⁰: Կուտրը մարդկությունը բաժանում էր ոչ թե մուսուլմանների և ոչ մուսուլմանների, այլ մուսուլմանների, որոնք խստագույն հետևում էին շարիաթի նորմերին, և անհավատների, որոնց միջև չեր կարող փոխվիշում և հաշտեցում լինել: Ըստ Կուտրի՝ «Դարալ-Իսլամի» մեջ էին մտնում այն պետությունները, որոնց օրենքը շարիաթն էր, իսկ մյուսները՝ «Դարալ-Հարբ» էին: Կուտրը մերժում էր ազգայնականությունն ընդհանրապես, իսկ աշխարհիկ զաղափարախոսությունը դիտարկում էր որպես կրապաշտություն, որը Դուրանի դրսությունների համաձայն, ամենամեծ մեղքն էր համարվում: Ըստ Կուտրի՝ մուսուլմանի համար ազգայնականությունն իսլամին և մուսուլմանական համայնքին պատկանելու մեջ էր կայանում, իսկ բոլոր սոցիալական խնդիրները լուծելի էին միայն Դուրանի հիման վրա²¹: Սոցիալիզմը, կոմունիզմը և կապիտալիզմը նա համարում էր ջահիլիայի բարձրագույն մակարդակներ, քանի որ այդ աշխարհայացքները հիմնվում էին հոգևորի նկատմամբ նյութականի գերակայության վրա, իսկ իսլամը հիմնվում էր բոլոր հոգևոր, բարոյական, հասարակական և տնտեսական տարրերի միասնության վրա²²: Ըստ Կուտրի՝ երբ ձանապարհին կային խոչընդոտներ և հայտնվում էին նյութական ներգործության գործոններ, ապա

¹⁹ Bouzid A., Man, Society, and Knowledge in the Islamist Discourse of Sayyid Qutb, Blacksburg, 1998, p. 99.

²⁰ Sivan E., Radical Islam/Medieval Theology and Modern Politics, New Haven, 1985, p. 128.

²¹ Qutb S., Al-Taṣawīr Al-Fāna fi al-Qurān, Dar Al-Mūaraf, Al-Qāhirah, 1994, էջ 8.

²² Отечественные записки – Публикация: Модернисты и фундаменталисты. N 5 2003, стр. 304-306.

անհրաժեշտություն էր առաջանում դրանք ոչնչացնել առաջին հերթին ուժով²³: Կուտրի զիհաղի գաղափարախոսությունը անցումային բնույթ ուներ, որը սկսվում էր գաղափարական պայքարից և ավարտվում ռազմական բախմամբ՝ ազատելով մարդուն ստրկությունից²⁴: Ըստ Կուտրի՝ եթե բոնի ուժի միջոցով տարվող պայքարը չէր հասունացել, ապա պետք է իրականացվեր զիհաղի հետևյալ տեսակը. նախ պետք է մուսուլման առաջամարտիկները համախմբվեին մեկ միասնական առաջնորդի հովանու ներքո, ապա սկսեին գաղափարական պայքար շահիլիայի վարչախումբը տապալելու համար: Կուտրը նշում էր նաև անհավատների կողմից զիհահարկի (զիգիա) վճարման սկզբունքի մասին՝ շեշտելով, որ զիգիայի վճարման դեպքում անհավատը չէր ընդդիմանում իւլամին ու նրա կողմից առաջ քաշված սկզբունքներին²⁵:

Արմատական գաղափարների տարածման գործում իր ակտիվությամբ Հնդկաստանում աշքի ընկալ Սայիդ Արուլ Ալա Մաուլուդին, ով 1948թ. իմանադրեց «Ալ-Զամաա ալ-Իսլամիա» (Al-Ğamā' at al-Islāmīyat, الجماعة الإسلامية) կազմակերպությունը: Մաուլուդին, ըննադատելով արևմտյան ազդեցությունը նոր սերնդի վրա, նշում էր, որ վերջինիս համար անհնարին էր դարձել անկախ միտքը և ինքնուրույն դիտարկումները, քանի որ դրանք ճնշվել էին արևմտյան գերակայության կողմից: Ըստ Մաուլուդիի՝ այս ճգնաժամից դուրս գալու համար պետք էր իսլամականացնել հասարակությունը, բայց, ի տարբերություն Սայիդ Կուտրի, որն առաջարկում էր իսլամականացումը սկսել ներքից, Մաուլուդին կոչ էր անում այն իրականացնել հասարակության վերին շերտե-

²³ Qutb S., Mualimfîl-Tarîq, էջ 18. (<http://www.twhed.com/books/sayed-khttp/m3alm.pdf>).

²⁴ Նույն տեղում, էջ 40. (<http://www.twhed.com/books/sayed-khttp/m3alm.pdf>).

²⁵ Qutb S., In the Shade of the Qur'an, vol. 8: Surah 9 (Leicestershire, UK. 2003) pp. 120-123.

րից²⁶: Ըստ նրա՝ զիհաղը պետք է լիներ կյանքի բարձրագույն գոհարերությունը, որը պետք է փոխանցվեր բոլոր մուսուլմաններին: Եթե մուսուլմանական երկիրը հարձակման էր ենթարկվել ոչ մուսուլմանական երկրի կողմից, ապա, ըստ Մաուլուդիի, բոլորը պետք է զիհադ հայտարարեին հարձակվողի նկատմամբ²⁷:

Ալ-Մաուլուդին զիհադ էր համարում նաև իրապարկումների և լայն քարոզության միջոցով հասարակական կարծիքի ձևավորման վրա ազդելը²⁸: Նրա համար զիհաղը ոչ միայն մուսուլմանի ներքին կատարելագործմանը նպաստող չափորոշիչ էր, որի արդյունքում իսլամական սկզբունքներով առաջնորդվող մարդը կարող էր ստանալ Աստծո համակրանքը, այլև երկրի վրա վերջինիս թագավորության հաստատումն ապահովող իշխանության ձևավորման համար մղվող պայքար, որի իրականացման ճանապարհին սեփական նպատակներին հասնելու համար մուսուլմանները պետք է պատրաստ լինեին հաղթահարել ցանկացած խոշնդու²⁹:

Հասան Ալ-Բաննայի, Կուտրի և Մաուլուդիի գաղափարները տարածվեցին մուսուլմանական աշխարհում և շատ հայտնի (արմատական և չափավոր) իսլամական խմբավորումների առաջնորդներ, տողորվելով նրանց կողմից առաջ քաշված իսլամի, իսլամական հեղափոխության և զիհադի գաղափարներով, կոչ էին անում զնալ դեպի իսլամական ավանդույթները՝ դիմակայելու Արևմուտքի մարտահրավերներին: Արևմուտքը բնորոշվեց որպես Արևելքում քաղաքական, տնտեսական և կրոնամշակութային շահեր ունեցող թշնամի,

²⁶ Парфри А., ExtremeIslam: Аллах не любит Америку. FeralHouse 2001, стр. 65.

²⁷ Sh. u Bonney R., սշլ. աշխ., էջ 208-209.

²⁸ Al-Mawdûdî A., Waŷibal- Šabâbal-Islamîl-İuwîm, Makâtal-Maqâramat, 1381, էջ 26-27.

²⁹ Al-Maudûdî A., The Process of Islamic Revolution: Islamic Publications Ltd, Lahore, 1980, (8-е е'd), p. 23.

հետևաբար պէտք էր զիհադ իրականացնել այն մուսուլմանական վարչախմբերի դեմ, որոնք պաշտպանում էին Արևմուտքին³⁰:

Արևմտյան հեղինակներից Դավիթ Քիրլը մուսուլմանական հոսանքները բաժանում է երեք հիմնական ուղղությունների՝

1. Առաջին ուղղության հիմքում ընկած է դավանաբանական սկզբնադրյուրը, որի մի ծայրում ներկայացված է մողեռնիստներով, իսկ մյուսում՝ արմատականներով, որոնք ձգուում են դեպի իսլամի հիմնական սկզբունքները:

2. Երկրորդ ուղղության կողմնակիցները, ըստ Քիրլի, առաջնորդվում են իսլամի՝ որպէս հավատացյալի անձնական խնդրի որույթներով:

3. Երրորդ ուղղությունը ներկայացված է ռազմաքաղաքական խմբավորումներով, որոնք զինված պայքարը համարում են նպատակներին հասնելու օրինական ճանապարհ³¹:

Իսլամական արմատականություն (Փունդամենտալիզմ³²). Այս հասկացության գիտական հիմնավորման և նրա զանա-

³⁰ Esposito J.L., Unholy War. Terror in the Name of Islam, Oxford: Oxford University Press, 2002, pp. 51-60.

³¹ Kibble D.G., Understanding Islamic Fundamentalism. Military Review (US Army Publication), Sept.-Oct. 1995, p. 41.

³² Ֆունդամենտալիզմ հասկացությունը ձևավորվել է ԱՄՆ-ում քրիստոնեական բողոքական ուղղության մեջ: 1895 թ. Նիսաքարյուս տեղի ունեցած Աստվածաշնչան կոնֆերանսում հոգևորականների մի խումբ առաջ քաշեց 5 հիմնական «Փունդամենտալ» սկզբունքները: Այդ սկզբունքները 1910 թ. հաստատեց Դրեսիֆտերական զինավոր ասամբլեան և ընդունեցին մի շարք այլ պահապանողական կրոնական կազմակերպություններ: 1909-1915 թթ. Կալիֆորնիայում Ռ. Թորրին և Լ. Դիկսոնը տպագրեցին 12 հատորից բաղկացած հոդվածների ժողովածուն «The Fundamentals» անվամբ, որտեղ մեկնարանվում էին այդ թեզերը: 1919թ. այդ սկզբունքները առավել ընկալելի և ըմբռնելի դարձնելու համար 12 հատորը հավաքեցին 4 հատորի մեջ և շարունակեցին դրա տարածումը, հիմնականում անվճար, ամրող ԱՄՆ-ով և աշխարհով մեկ: Բողոքականության մտածողության տրամաբանությունը, որը հիմնվել էր բողոքականության հիմնադիրներ Ս.

զան դրսեորումների դասակարգման վերջնական տարրերակում դեռևս չկա: Հետազոտությունների ընդհանրական եղանակացությունն այն է, որ իսլամում արմատականությունը հասկացվում է որպէս քաղաքական իշխանություն ձեռք բերելու համար իսլամական զանազան խմբավորումների կողմից պայքարի այնպիսի մեթոդների կիրառում, որոնք միջազգային իրավունքի տեսակետից դիտվում են օրենքի սահմաններից դուրս³³: Սակայն, դրան զուգահեռ պէտք է փաստել, որ կան իսլամական արմատականությանն ու վերջինիս հետ կապված երևույթների, այդ թվում զիհադի հայեցակարգին վերաբերող դրույթների գնահատման և մեկնաբանման յուրահատկություններ:

Սալաֆիականություն³⁴. Այս տերմինով կարելի է բնորոշել մուսուլմանական հոսանքների և աստվածաբանների ընդհա-

Լյութերի, Ժ. Կալվինի, Ջ. Նոկսի և մյուսների կողմից կառուցվել է դեպի առաջնաստեղծ վիճակ քրիստոնեական հավատքի հիմքերի վերաբերձի, քրիստոնեությանը խորթ մշակութային և քաղաքական սկզբունքներից հրաժարվելու, մողեռնիստական ներգրծություններից ազատվելու, Սուրբ Գրի բառացի ընկալման շուրջ՝ ընթանալով դեպի անապական ուղղափառություն, որպէս հավատքի սկզբնադրյուր կամ դավանանքի հիմք: 1919թ. Ֆիլադելֆիայում հիմնվեց համաշխարհային քրիստոնեական ֆունդամենտալիստական աստղիացիան, որի անդամները մեղադրեցին «մողեռնիստներին» և «լիբերալներին» քրիստոնեական արժեքների և Ավետարանի նսեմացման մեջ: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ամերիկյան ֆունդամենտալիստները իրենք իրենց կոչեցին ավետարանչականներ, իսկ ֆունդամենտալիզմը տերմինը մնաց շրջանառության մեջ և իր ներ իմաստով մեկնաբանվում է որպէս աստվածաբանական շարժում, որը նպատակադրյալ է պահպանելու այն ամենը, ինչն իրենից ներկայացնում է քրիստոնեության հիմքը (Փունդամենտ): Մու և Փիլատով Ս. Բ. «Փունդամենտալիզմ» Վերաբերեցնելու աշխարհական հիմքը (Փունդամենտալիզմ, Մոսկվա, 2003, стр. 109-126):

³³ Исламский экстремизм и фундаментализм как угроза национальной безопасности России, Научный отчет Российского института стратегических исследований / Под. Общ. ред. Е. М. Кожокина, Москва, 1995, стр. 14.

³⁴ Սալաֆիականություն (Ալ-Սալաֆալ-Սալիհոն -الصالحون) իսլամական բարեփոխության նոր հոսանք էր, որը ձևավորվեց Եգիպտոսում 19-րդ

նուր այն ուղղությունը, որն իսլամի գոյության տարբեր ժամանակահատվածներում հանդես է եկել նոր ձևավորված մուսուլմանական ումմայում ապրող մուսուլմանների կենցաղով և դավանական կենսակերպով առաջնորդվելու կոչերով: Այս ուղղությունը հանդես է գալիս իսլամական ուսմունքում և մուսուլմանի ամենօրյա կյանքում որևէ նորարարության (բիդա) դեմ՝ սկսած Ղուրանի խորիրդանշական-այլարանական մեկնաբանությունից մինչև Արևմուտքի հետ հարաբերությունների արդյունքում իսլամում հայտնված զանազան նորարարությունները: Այսպիսով՝ իսլամում սալաֆիական զանազան հոսանքները դավանական խնդիրների լուծման մեջ առաջնորդվում են «Ահլ ալ-Սալաֆի» (‘Ahl al-Salaf- الْأَهْلُ السَّلَافِ) փորձով³⁵: Սալաֆիականությունն ընկած էր նաև 18-րդ դարում Արաբական թերակղզում ծագած վահարական շարժման գաղափարական հիմքում:

Վահարականություն³⁶. 18-րդ դարի կեսին Արաբական թերակղզում Մուհամադիրն Աբդ Ալ-Վահարի կողմից հիմնված վահարական շարժումը նույնպես կարելի է դիտարկել ավանդական իսլամին այլընտրանք՝ իսլամի մաքրագերծման տրամադրությունների համատեքստում: Զեավորվելով որպես կրոնի մաքրագերծմանն ուղղված հոսանք՝ վահարականությունը հետազոյում վերածվեց մուսուլմանական աշխարհի գաղափարական-քաղաքական ազդեցիկ գործոնի, որի

դարի վերջում, և որի նպատակն էր իսլամի վերադարձ դեպի Մուհամադ մարգարեի, առաջին չորս խալիֆների և ուղղափառ նախնիների ժամանակաշրջանի իսլամական ավանդույթները (Տե՛ս The Encyclopedia of Islam, New Edition, Under the patronage of the international union of academies, Volume VIII, Leiden, E. J. Brill, 1995, p. 900):

³⁵ Makdisi, G. The Conflict of Traditionalism and Modernism in the Muslim Middle East, Texas, 1966, p. 56.

³⁶ Վահարականություն՝ 18-րդ դարի կեսին Արաբական թերակղզում հիմնարկած կրոնական շարժում (Տե՛ս The Encyclopedia of Islam, New Edition, Under the patronage of the international union of academies, Volume XI, Leiden, E. J. Brill, 2002, p. 39):

հիմքում հաճախ դրվում էին առավել ծայրահեղ տրամադրությունները: Աստիճանաբար մուսուլմանական հասարակական գիտակցության մեջ ներդրվում էր նաև այն ըմբռնումը, որ շատ արմատական մուսուլմանական հոսանքներ վահարականության հետ ոչ մի առնչություն չունեն³⁷:

Սուհամմադ իբն Աբդ Ալ-Վահարը մուսուլմաններից պահանջում էր հետևել Ղուրանի և Սուննայի սկզբունքներին, որովհետև նրանց տեքստը պարզ էր և համապարփակ: Հատ Իբն Աբդ Ալ-Վահարի՝ ծշմարտությունն Ալլահն էր, իսկ աստվածաբանների խոսքերը համայնքի մասին, որոշ բաներ արգելող կամ որոշ բաներ թույլատրող իրավարան-ֆակիհների կարծիքները, փաստարկներ չեին մուսուլմանների համար, քանի որ նրանք ունեին Ղուրան և Սուննա: Յուրաքանչյուրն ուներ «իջթիհադ» (Ijtihād-اجتہاد)՝ իրավունք, եթե նապատրաստված էր դրա համար, և օգտվելով դրանից պետք է իմաստություն քաղեր, որը առկա էր Ղուրանում և Սուննայում՝ ընդգծելով, որ հավատքն այն էր, ինչ նկարագրվել էր Աստծո գրքում նրա մարգարեի լեզվով, առանց խեղաթյուրման ու ապականման³⁸: Քանի որ պարտավորեցնողը միայն Աստծո խոսքն էր, ապա պարտադիր չեին մուսուլման հեղինակությունների դատողությունները Սուրբ տեքստերը ճիշտ ըմբռնելու և դրանց վերաբերյալ դատողություններ անելու համար: Վահարական ուսմունքի տարածման հիմնական միջոցներից համարելով զինված պայքարը՝ վահարականները մատնանշում էին ջիհադի տարբեր տեսակներ, որոնցում

³⁷ Мюриэль Э., Ваххабизм и фундаментализм: термины-«страшилки». Центральная Азия и Кавказ, Стокгольм, 2000. N1(7.), стр. 133.

³⁸ «Իջթիհադ» մուսուլման աստվածաբանի իրավական-աստվածաբանական խնդիրների պարզաբանման ու լուծման ուղղված գործունեությունն է՝ սկզբունքների, մեթոդների, փաստարկների համակարգի կիրառմամբ (Տե՛ս Իслам: Энциклопедический словарь., Москва, 1991, стр. 91):

³⁹ Al-Whāb M., Qida (Տե՛ս http://www.aborashed.com/2009/02/blog-post_25.html). 1991, стр. 163.

առաջնային տեղ էր զբաղեցնում ջիհադն ուղղված անհավատների դեմ:

Մեր կարծիքով արմատականություն հասկացության բավականին հաջողված բնորոշումներից է ոռու հետագուստը Ա. Վ. Մալաշևնիկոյի կողմից առաջ քաշված այն տեսակետը, համաձայն որի՝ «Արմատականությունը քաղաքակրթական կոնստանտի արտահայտման ձև է, որի բնույթը կայանում է սեփական քաղաքակրթության ֆունդամենտալ հիմքերի վերակենդանացման մեջ, որա մաքրագերծումը խորք նորարարություններից»⁴⁰:

Վերոշարադրյալի համատեքստում տարրերություն է դրվում մի կողմից՝ արմատականների, որոնք կոչ են անում վերադառնալ դեպի իսլամական ավանդույթները, իսկ մյուս կողմից՝ սալաֆիականների միջն, որոնց՝ Ղուրանի տառացի մեկնաբանությունը հանգեցնում է բոնի գործողությունների: Այս համատեքստում վերջիններս կարող են բաժանվել՝ չափավորների և ծայրահեղականների⁴¹:

20-րդ դարի վերջին քառորդում իսլամական արմատական գաղափարների տարածման վրա երկու գործոն ևս մեծ ազդեցություն ունեցան.

1. 1979թ.-ին Իրանում Ռուհոլլահ Մուսավի Խոմեյնիի գլխավորությամբ տեղի ունեցած իսլամական հեղափոխությունը:

2. 1970-ական թթ. կեսերից արարական երկրների կողմից արաբա-իսրայելական պատերազմի ժամանակ նավթային էմբարգոյի կիրառումը պատճառ դարձավ նավթի գների բարձրացման, ինչի հետևանքով ավելացան նավթային երկրների շահույթները: Դրամական մեծ հոսքերը հնարավորություն տվեցին նավթային հսկայական պաշարներ ունեցող Սաուդյան Արաբիային մեծ գումարներ ներդնել ինչպես տա-

⁴⁰ Малашенко В., Мусульманский мир СНГ, Москва, 1996, стр. 10-11.

⁴¹ Taheri A., Holy Terror: The Inside Story of Islamic Terrorism. SphereBooksLtd, London, 1989, pp. 12-13.

րածաշրջանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս խլամի վահաբական գաղափարների տարածման համար:

Իրանի իսլամական հեղափոխության առաջնորդ Խոմեյնիին հաջողվեց հեղափոխություն իրականացնելու համար Մուհամեդ Ռեզա Չահ Փեհլեվիի վարած արևմտամետ քաղաքականության դեմ միավորել հասարակության լայն շերտերին: Ըստ Խոմեյնիի՝ մուտքմանները պետք է միավորվեն, որպեսզի կարողանան պայքարել իսլամի թշնամիների դեմ: Նա համոզված էր, որ իսլամական օրենքներն ամբողջական և համապարփակ են բոլոր ժամանակների համար⁴²:

Խոմեյնին առաջ քաշեց «Ուխայաթ ալ-Փակիհ» (Փակիհների կառավարում՝ Wilāyat al-Faqih-الْفَقِيْهُ)⁴³ սկզբունքը, որը բարձրագույն իշխանությամբ էր օժտում երկրի գերազույն հոգևոր առաջնորդին՝ տվյալ դեպքում՝ իրեն: Խոմեյնին արձնորում էր ջիհադի գաղափարախոսությունը, և նրա կողմից բազմից մատնանշվել է այդ գաղափարախոսության կարևորությունը այնպիսի իրադարձությունների ժամանակ, ինչպիսիք են իրան-իրաքյան պատերազմը և այլն: Իրանում՝ իմամ Խոմեյնիի ժամանակաշրջանում (1979-1989 թթ.), «ջիհադ» տերմինը բավական լայն կիրառություն ուներ և օգտագործվում էր զանազան իմաստներով՝ երկրում տեղի ունեցող իրադարձություններին տալով միստիկական նշանակություն⁴⁴ (հարկ է փաստել, որ ջիհադի կիրառման վերաբերյալ շիայական իսլամում առկա յուրահատկությունն այդ գաղա-

⁴² Имам Хомейни, Последнее послание: политico-религиозное завещание, Тегеран, 1997, стр. 54.

⁴³ Ըստ շիայական ուսմունքի՝ տասներեքերրդ իմամի անհետացումից հետո մուտքմանական համաների դեկապարումն իրականացնում են հիշյալ ուսմունքի ամենազիտակից և ամենաարժանավոր ներկայացուցիչները՝ Փակիհները (տե՛ս՝ Իմам Хомейни, Последнее послание: политico-религиозное завещание, Тегеран, 1997, стр. 179):

⁴⁴ Армянский вопрос, Энциклопедия / Ред. кол.: К.С. Худавердян (отв. ред.) и др.- Ереван, 1991, стр. 163.

փարախոսությանն ու դրան վերաբերող շիա աստվածաբանների ֆեթվաներին տալիս է խորհրդատվական բնույթ⁴⁵), իսկ ավելի ուշ շրջանում այարովահ Ալի Խամենեին զիհաղը Դուրանի հետ միասին դասում էր իալամի արժեհամակարգային հիմքերի շարքում, որոնք օգնում էին մուսուլմաններին դիմակայել ռազմական, տնտեսական և մշակութային բռնությանը⁴⁶: Իրանի Իսլամական Հանրապետության կողմից առաջ քաշվեց այն գաղափարը, որ մուսուլմանական աշխարհը պետք է գևա իր սեփական ճանապարհով՝ առաջնորդվելով իսլամական նորմերով⁴⁷:

Խոմեյնիի կողմից արձակված՝ բրիտանացի գրող Սալման Ռուշդին մահվան դատապարտող ֆեթվան մի յուրօրինակ փորձ էր վերացնել Իրանի իսլամական հեղափոխության մեկուսացումը մուսուլմանական աշխարհի ներսում և նրանից դուրս⁴⁸: Իսլամական հեղափոխության հայթանակը դարձավ 20-րդ դարի վերջին քառորդի մուսուլմանական հասարակական ցնցումների ամենավառ ցուցիչներից մեկը:

Չնայած սունիների և շիաների միջև առկա հակասություններին՝ շիայական Իրանում տեղի ունեցած զարգացումները մեծ ոգլորություն առաջացրին ամբողջ մուսուլմանական աշխարհում, այդ թվում՝ սունիների շրջանում: Խոմեյնիի կողմից իսլամական հեղափոխության արտահանման քաղաքականության փորձ արվեց, ինչն անհանգստացրեց

⁴⁵ Հատ շիայական ուսմունքի՝ պատերազմ կարող է հայտարարել միայն իմամը, որը թարևած է, հետեւքար շիհադ իրականացնելը հետաձգվում է, մինչև իմամի ի հայտ գալը, (տե՛ս The Encyclopedia of Islam, New Edition, Under the patronage of the international union of academies, Volume II, Leiden, E. J. Brill, 1991, p. 539.):

⁴⁶ Аятолла Хаменеи, Борьба с культурной агрессией: Свет исламской революции-речи и выступления Руководителя Исламской Республики Иран// Москва, 2000, стр. 197.

⁴⁷ Имам Хомейни, Последнее послание: политico-религиозное завещание, Тегеран, 1997, стр. 52-57.

⁴⁸ Stéphane Kepel, Ж., նշվ. աշխ., էջեր 134-135.

ԱՄՆ-ին և մի շարք մուսուլմանական երկրներին, հատկապես՝ Սաուդյան Արաբիային, որը քայլեր ձեռնարկեց իր ազդեցությունը մուսուլմանական երկրներում ուժեղացնելու ուղղությամբ: Այս իրողությունը ստիպեց Սաուդյան Արաբիային, որի համար իսլամական Իրանը դարձել էր տարածաշրջանային զիսավոր հակառակորդ, ավելի մեծ գումարներ ներդնել սեփական գաղափարների տարածման ուղղությամբ⁴⁹:

Իսլամական գործոնի ակտիվացումն իրականացվեց երկրներ համակարգի պայմաններում: Այս համատեքստում, XX դարի վերջին քառորդում իսլամական գաղափարական տարածությունում միասնականության բացակայությունը, այսուեղան առկա տարաբնույթ հակասությունները հանգեցրին նրան, որ համաշխարհային երկու բևեռները՝ և՛ ԽՍՀՄ-ը, և՛ ԱՄՆ-ը, փորձում էին օգտագործել իսլամական աշխարհի երկրներն ու մուսուլմանական կազմակերպություններն իրենց սեփական շահերին ծառայեցնելու համար:

Արաբական մի շարք երկրներում (օր. Եգիպտոս, Իրաք և այլն), ներքին անհանգստությունների և Իրանի ազդեցության ավելացման մտավախություն կար, որտեղ սկսեցին ճնշվել ներքին կրոնական հոսանքները, ինչը նպաստեց քաղաքականապես ակտիվ «իսլամական ընդհատակի» առաջացմանը: Վերոհիշյալ երկրների վարչակարգերի կողմից իրականացվող բռնությունների պայմաններում ընդդիմադիր իսլամական արմատականները հաճախ ստիպված էին հեռանալ այլ երկրներ (Սաուդյան Արաբիա, Հորդանան, Եվրոպական երկրներ և այլն): Հետաքրքրական էր, որ Սահամ Հուսեյնի իրարյան աշխարհիկ վարչակարգը սիրիական շատ ընդդիմադիր իսլամականների (հատկապես սիրիական «Մուսուլման եղայրներին», որոնք 1982 թ. Համմայում բռնի ճնշվեցին Հա-

⁴⁹ Rekness, E., The Terrorist Connection - Iran, the Islamic Jihad and HAMAS.- Justice.- May 1995.- Vol.5.- <http://www.fas.org/irp/world/para/docs/950500.htm>

ֆեզ Ալ-Ասադի վարչակարգի կողմից⁵⁰ հնարավորություն տվեց հաստատվել Իրաքում՝ նպատակ ունենալով դրանով թուլացնել բասարական հակառակորդներին Սիրիայում: Ինչ վերաբերում է պաղեստինյան հիմնախնդրին, ապա իսլամական արմատականները այն դիտարկում էին որպես մուսուլմանական աշխարհի «ստորացում»: Արդյունքում շատ աֆրիկյան և ասիական երկրներում կրոնական կարգախոսների ներքո առաջացան ծայրահեղ արմատական կազմակերպություններ և ռազմական խմբավորումներ («Զիհար», ալժիրյան «Իսլամական փրկության ճակատ», պակիստանյան «Զամաա ալ-Ֆուկրա» և «Հարաբար ալ-Անսար», պաղեստինյան «ՀԱՄԱՍ», «Իսլամական զիհար», լիբանանյան «Հիզբալլահ» և այլն), որոնք հիմնականում գաղտնի էին գործում՝ հաճախ իրենց գործողություններով ընդդիմանալով պետությանն ու «պաշտոնական իսլամին»⁵¹: Այս կազմակերպությունների գործունեությունը պայմանավորված էր մի քանի հանգամանքով: Նախ այս կազմակերպությունների և իրենց «հյուրընկալած» պետության հարաբերությունների բնույթով, այսինքն՝ իշխանությունների նկատմամբ նրանց ընդդիմադիր լինելու աստիճանով, որը կարող էր փոփոխվել իշխանության մարմիններում նրանց անմիջական ներկայությունից (օրինակ գործունեություն խորհրդարանում) մինչև իշխանությունների

⁵⁰ Սիրիայում 20-րդ դարի 50-ական թթ. սիրիական խորհրդարանի աշխատանքներին ներգրավված էին նաև «Սուսուլման ելբայրներ» կազմակերպության ներկայացուցիչները, սակայն 70-ական թթ. կեսերից՝ հատկապես 1976-1982 թթ.-ին, «Սուսուլման ելբայրներ» կազմակերպությունը ռազմական ճանապարհով փորձում էր հեռացնել Հաֆեզ Ալ-Ասադին իշխանությունից, մինչդեռ, զախշախվեց վերջինիս կողմից (տե՛ս Ահմեդ Բ., Պути эволюции арабского общественного сознания в контекстеновых региональных реалий и политических преобразований на Арабском Востоке, Институт Ближнего Востока, www.iimes.ru/?p=8481 (Սուսուլմանվարի 25, 2013 թ.)):

⁵¹ Полонский В., Григорьев А. Джихад всему миру // Общая газета.- 1995, N17).

հանդեպ բացահայտ պայքար: Նրանց գործողություններն ուղղված էին առաջին հերթին մուտքամական երկրների աշխարհիկ վարչակարգերի դեմ, որոնք, ըստ իսլամականների, ենթարկվում էին Արևմուտքին և շեղվել էին իսլամական ճշմարիտ ուղղուց: Վերոհիշյալ խմբավորումների մեջ առկա առավել արմատական թևն իր մեջ ներառում էր մուսուլմանական վարչակարգերի դեմ ակտիվ պայքարող բազմաքանակ խմբավորումներ, որոնք պատրաստ էին պայքարել հանուն իսլամական ումմայի հաստատման, ընդ որում, թույլատրելի էր ուժի կիրառումը, որպեսզի հայթահարվելին այս ճանապարհին առկա բոլոր խոշնդրությունները: Հետագայում այս տրամաբանությունը, որը արդարացնում էր այլադապանի կամ ուղղակի ընդդիմադիրի սպանությունը, դրվեց այսպես կոչված «մուսուլման ֆունդամենտալիստների» ծայրահեղական գործողությունների հիմքում⁵², որոնք ոչ միայն ցանկանում էին հասնել իսլամական ումմայի հաստատմանը, այլև ձգտում էին համաշխարհային մասշտարով իսլամականացմանն ու շարիաթի նորմերի հաստատմանը:

«Զիհարի» հայեցակարգն ակտիվորեն օգտագործվեց գրեթե ողջ ոչ պետական իսլամական կազմակերպությունների կողմից գործնական խնդիրներ լուծելու համար: Եզիդական «Իսլամական զիհար» կազմակերպության առաջնորդներից Սուհամմադ Արդ Ալ-Աւլամը կոչ էր անում տապալել մուսուլմանական երկրներում իշխող վարչակարգերը, քանի որ այդ երկրներում իշխում են հանցագործներ, չնայած որ նրանք մուսուլմանական անուններ են կրում⁵³:

Միջազգային իսլամական արմատական կառույցների շրջանում բավական ազդեցիկ դիրքեր ունի Պակիստանում դիարբանդական ուղղության ներկայացուցիչ Մաուլանա

⁵² Милославский Г., Ал-Ваххабийя. Ислам, Энциклопедический словарь, Москва, 1991, стр. 51.

⁵³ Տէ՛ս Amâra M., նշվ. աշխ., էջ 138-139.

Խիստի (1885-1944 թթ.) կողմից 1927 թ. ստեղծված «Զամաաթ ալ-Թարլիդ» կազմակերպությունը: Շնայած այն հանգամանքին, որ այն ունի հսկայական թվով անդամներ և կողմնակիցներ, ներկայացված է գրեթե ամբողջ աշխարհում և չափանց ազդեցիկ է, նրա գործունեությունը գրեթե աննկատ է մնացել: Պատճառն այն է, որ այս կազմակերպությունը շատ խիստ կերպով բարձրում է իր իսկական բնույթը: Այս նպատակին են ծառայում նրա բավականին ամորֆ կառուցվածքը, ԶԼՍ-ների հետ շփումից խուսափելը, ինչպես նաև կազմակերպության կողմից կատարվող հրապարակումների բացակայությունը: Կազմակերպության կողմից երբեք բացահայտ կերպով որևէ հետաքրքրություն կամ շահագրգուվածություն չի դրսուրպվել քաղաքական գործունեության նկատմամբ, ինչը նպաստել է նրան, որ պետությունների օրինապահ մարմինները իմաստ չեն տեսել ավելի մոտ ծանոթանալու այս կազմակերպության գործունեությանը:

«Զամաաթ ալ-Թարլիդ»-ը ինչպես նաև նրանից հետո և նրա ազդեցության տակ ստեղծված մի քանի այլ արմատական կազմակերպություններ, ջանք ու եռանդ չեն խնայում խլամի՝ իրենց տեսակետից, միակ մաքրությունը պահպանած ձևը, այն է՝ սուննիական խլամի ծայրահեղական մեկնարանությունը տարածելու համար: Գրեթե ամենուրեք տարածված լինելով՝ նրանք քարոզում են սուննիականության շրջանակներում ծնված ծայրահեղական զաղափարներ, որոնք վերջին շրջանում իրենց գործնական մասում համարյա նմանվել են վահաբականության «ջիհադի» զաղափարախոսությանը: Ծայրահեղականության ձանապարհին կանգնած երիտասարդ մուսուլմանների զգալի մասն իր առաջին քայլերն արել է՝ մտնելով «Զամաաթ ալ-Թարլիդ»-ի մեջ⁵⁴:

⁵⁴ Հովհաննիսյան Դ., Ժամանակակից ծայրահեղ խլամիստական կառույցների ակունքները («Զամաաթալ-Թարլիդ»-ը), «Հանրապետական», Երևան, 2003, թիվ 7, էջ 36-44:

«Ջիհադի» իրականացման իր ուրույն համակարգն է ներկայացրել Եզիդուսական «Թաքֆիր ուս ալ-Հիջրա» կազմակերպության զաղափարախոս Ահմադ Մուստաֆա Շուքրին: Նա մուսուլմաններին «ջիհադ» սկսելու կոչ էր անում սեփական թերությունների դեմ, որը հետագայում պետք է ուղղորդվեր խլամի տիրապետության հաստատմանը: Այդ ժամանակ արդեն արևմտյան ազդեցության դեմ պայքարը իրականացվում էր ճանաչված կրոնական առաջնորդների կողմից, որոնք մերժեցին Արևմուտքը որպես մուսուլմանական քաղաքակրթության համեմատ հետամնաց քաղաքակրթություն՝ ստանալով մուսուլմանների ավելացող աջակցությունը⁵⁵: Արդյունքում՝ արևմտյան արժեքների դեմ խլամական վերածննդի սկզբնական շրջանից արմատավորված անհանդուժողական դիրքորոշումը հետագայում արտացոլվեց առավել արմատական ձևերով:

Հակաարևմտյան տրամադրություններն առկա էին տարբեր ուժերի մոտ, և դրանք լայնորեն օգտագործվում էին ոչ միայն խլամական կառույցների, այլև՝ տարբեր քաղաքական խմբերի, այդ թվում՝ ազգային և աշխարհիկ ուժերի կողմից՝ սեփական դիրքերի ամրապնդման նպատակով:

Եզիդուսում Անվար Սահարի իշխանության զալով՝ խլամի սալաֆիական ուղղություններում որոշակի ակտիվություն նկատվեց: 1971 թ. Եզիդուսուի նախագահը հայտարարեց «արեկզմի և կոմունիզմի դեմ պայքարի նպատակների միասնականության» մասին, որը պետք էր իրականացնել արտուր գտնվող արմատական «Սուսուլման եղբայրներ» կազմակերպության հետ միասին: Վերջիններս սկսեցին վերադառնալ Եզիդուսու և սկսեցին թե՝ վերածնավորել իրենց

⁵⁵ Van Bruinessen, M. The Naqshbandi Order in Seventeenth-Century Kurdistan, // Gaborieau, M., Popovic, A., et Zarcone, Th. (eds.), Naqshbandis: cheminements et situation actuelle d'un ordre mystique musulman.- Istanbul-Paris: Editions Isis, 1990, pp. 337-360.

խմբավորման կազմակերպչական կառույցները,թե՛ ներգրավվել նոր արմատական կառույցների մեջ: 1973 թ. Եղիպտոսում սկսեցին ի հայտ զալ բազմաթիվ «խլամական խմբեր» մարքսիստական գաղափարների դեմ պայքարելու համար, որոնց մեծ մասի գաղափարախոսությունը սալաֆիական էր⁵⁶: Այդ խլամական խմբերը, որոնք սկզբում գրադաւում էին սալաֆիական բնույթի քարոզությամբ և հասարակական լայն շերտերի օգնության տրամադրմամբ, դրեցին ծայրահեղ-արմատական խլամական խմբավորումների հիմքը, ինչպիսիք էին «Գամաա ալ-Խլամիա»-ն, «Զիհար»-ը, «Մեղադրանք անհավատության մեջ», «Մուհամմադ մարզարեի երիտասարդությունը» և շատ այլ կառույցներ, որոնք ձևավորվեցին 1970-ական թթ.-ի սկզբից:

Մեր համոզմամբ՝ XVIII-XX դդ. ընթացքում խլամական արմատական գաղափարախոսության մոտեցումները «զիհադի» հայեցակարգի վերաբերյալ ունեցել են տարբեր դրսերումներ, սակայն կարելի է առանձնացնել «զիհադի» հայեցակարգի նկատմամբ արմատականների 3 ընդհանրական բնորոշումները.

1. Բոլոր ժամանակակից խլամական արմատական հոսանքներն ընդունում են «զիհադի» ռազմական բնույթը, այսինքն՝ բռնի ուժով Աստծո ճանապարհին տարվող պայքարը:
2. Պայքարն ընթանում է անհավատների և հավատութացների դեմ, ինչպես ոչ մուսուլմանների, այնպես էլ խլամական արմատական գաղափարները չկիսող մուսուլմանների դեմ:
3. Պայքարի նպատակը մուսուլմանական ումմայի հաստատումն է:

Այս 3 բաղկացուցիչների համատեքստում խլամական ծայրահեղ արմատական կառույց բնորոշվող «ալ-Կահիդա»

(Խարիսխ՝ Al-Qâ' idah-ةَعْدَادُ) խմբավորման զաղափարախոսների կոմից 20-րդ դարի վերջում առաջ քաշվեցին զիհադի հայեցակարգային նոր մոտեցումներ, որոնք շատ խլամական արմատական խմբավորումների համար դարձան նոր ուղենիշների և մարտավարության հիմքն արդի զիհադական պայքարում:

Մուսուլմանական աշխարհում առաջացավ արմատականների քաղաքականապես ակտիվ շերտ, որը, սեփական երկրներում իրավիճակը փոխելու անհնարինության պայմաններում, սկսեց փնտրել հնարավորություններ այլ երկրներում բռնի ուժի միջոցով իրական խլամական պետություն առեղծելու համար: 1970-ական թթ. մի շարք երկրներում՝ ինչպես օրինակ Եգիպտոսում, Սուլանում, Սիրիայում, Ալ-Ճիրում, տեղի ունեցան կրոնաքաղաքական շարժումների ակտիվացում, որի պատճառներից էր նաև ԱՄՆ-ի կողմից աշխացություն ստացող Խորայելի ազրեսիվ քաղաքականությունը Մերձավոր և Սիջին Արևելքում⁵⁷: Սրան ավելացավ նաև Վաշինգտոնում 1979 թ. մարտին Եգիպտոսի և Խորայելի միջև կնքված խաղաղության պայմանագիրը, որը «դավաճանական» որակվեց մուսուլմանական աշխարհում: Եթե մինչ այդ արաբական բոլոր երկրների պայքարի հիմնական նշանակետը Խորայելն էր, ապա այժմ դրա կողքին հայտնվեց նաև Եգիպտոսը⁵⁸:

Գևալով ճյուղավորվող և ցանցային բնույթ ստացող խլամական ծայրահեղ արմատական ներուժը չէր կարող անմասն մնալ մուսուլմանական աշխարհի մեկ այլ հատվածում՝ Աֆղանստանում, 1970-ական թթ. վերջում տեղի ունեցած զարգացումներին: Աֆղանստանի հեռու գտնվելը արա-

⁵⁶ Жданов Н., Игнатенко А. А. Ислам на пороге XXI века, Москва, 1989, стр. 48.

⁵⁷ Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. 3, Երևան, 2006, էջ 303-304:

⁵⁸ Հալյա Մ., Al-Islāmal-SiyāsīfīMişr, Al-Ahrām, Al-Qāhira, 1992, էջ 152.

բական ավտորիտար երկրներից, որտեղ իսլամականներն անընդհատ ձնշումների էին ենթարկվում, ինչպես նաև միշտ աշխարհաքաղաքան գործընթացներ (հատկապես զերտերությունների շահերի բախումը Աֆղանստանում), հնարավորություն ստեղծեցին մուսուլման արմատականների համար ակտիվ ներգրավվելու ափանական պատերազմում՝ ջիհադի հայեցակարգին տալով նոր բռվանդակություն։

КОНЦЕПЦИЯ ДЖИХАДА И ИСЛАМСКИЕ РАДИКАЛЬНЫЕ ТЕЧЕНИЯ В 18-20 ВВ.

*Саргис Григорян
(резюме)*

В 18-20 вв. концепция джихада, корни которой идут к периоду становления ислама, нашла широкое применение не только со стороны отдельных мусульманских стран, но и разных исламских организаций и структур. В течение 18-20 вв. исламские радикальные идеологические подходы по отношению к концепции "джихада" имели разные отображения, в характеристиках которых были замечены следующие общие подходы – применение силы, борьба против неверных и отступников (в том числе мусульман) и установление мусульманской уммы. В конце 20 в. идеологами "Аль-Каиды" были выдвинуты новые концептуальные подходы джихада, ставшие основой новых принципов и тактики для многих исламских радикальных группировок.

THE CONCEPT OF JIHAD AND ISLAMIC RADICAL MOVEMENTS IN THE 18-20TH CENTURIES

*Sargis Grigoryan
(summary)*

In 18-20 centuries the concept of jihad, the roots of which go back to the period when Islam was formed, became widely used not only in Muslim countries, but by many other Islamic structures and organizations as well. During 18-20thcc. Islamic fundamental ideological approaches over the concept of jihad got various manifestations, where the following generalizing approaches such as jihad's military origin, its struggle against atheists (including Muslims) and the aim of creating muslimummah were being noticed. In the end of the 20th c. jihad's new attitudinal approaches, that later became the basis of new tactics and historical landmarks for many radicalislamic groups, were put forward by al-Qaeda ideologists.

ՍԵՐԳԵՅ ՌԱԿԱՆՅԱՆ

1979 թ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՆՈՒՄ ԵՎ ՍՊՈՒԴԱ-ԻՐԱՆԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԿԻՖԸ՝ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

**Բանալի բառեր՝ Սաուդյան Արարիա, Իրան, սունի-
շիա, իսլամական հեղափոխություն, սաուդա-իրանական
հարաբերություններ, իմամ Խոմեյնի, Սաուդ ալ-Ֆեյսալ,
իսլամական աշխարհ**

1979թ. Իրանում տեղի ունեցած իսլամական հեղափոխությունը: Իրանի շահ Սոհամմեդ Ռեզա Փեհլիվն գահընկեց արվեց և փախավ երկրից: Իրանը հոչակվեց Իսլամական Հանրապետություն: Սա կարևոր նշանակություն ունեցող համաշխարհային իրադարձություն էր: Այն փոխեց Պարսից ծոցի տարածաշրջանում առկա ուժերի դասավորությունը կրոնական, քաղաքական և տնտեսական տեսանկյուններից: Իրանը հավակնություններ ձեռք բերեց դառնալու իսլամական աշխարհի առաջնորդը: Այս դերը վաղուց ստանձնել էր Սաուդյան Արարիան: Դա հանգեցրեց երբեմնի բարիորացիական հարաբերությունների լարմանը, որն իր դրսնորման տարբեր ձևերով առկա է նաև մեր օրերում: Ի դեմս Իրանի և Սաուդյան Արարիայի, սունիի և շիա աստիճանաբար ահազնացող պայքարով են մեծապես պայմանավորված Մերձավոր Արևելքում տեղի ունեցող հետագա իրադարձություններն ու զարգացումները:

1978-1979 թթ. Իրանում տեղի ունեցած հեղափոխությունը ոչ միանշանակ արձագանքի արժանացավ Սաուդյան Արարիայի կողմից: Սաուդյան Արարիայի արտաքին գործերի նախարար Սաուդ ալ-Ֆեյսալը հայտարարեց, որ իր երկիրը Իրանում տեղի ունեցած հեղափոխական իրադարձություն-

ները համարում է նորմալ երևույթ, քանի որ այն արտացոլում է իրանցիների ցանկությունը: Արտգործնախարարը նաև ավելացրեց, որ Սաուդյան Արարիան չի պատրաստվում խառնվել ուրիշ երկրների ներքին քաղաքականությանը և կը նդունի ցանկացած օրինական իշխանություն նորաստեղծ Իրանի Իսլամական Հանրապետությունում⁵⁹:

Իրանում տեղի ունեցած հեղափոխությունից հետո Սաուդյան Արարիան փորձում էր իր հայտարարություններով ցույց տալ, որ որևէ թշնամանք չունի նորաստեղծ իրանյան վերնախավի նկատմամբ: Հեղափոխությունից հետո Իրանի ներքին և արտաքին քաղաքականության մեջ հայտնվեցին ուղղություններ, որոնք համընկնում էին սաուդյան թագավորության դիրքորոշումների հետ: Նախ պետք է նշել, որ իրանյան հեղափոխությունը տեղի էր ունեցել իսլամական լոգունգների ներքո, որոնց տարածմանը կողմ է նաև Սաուդյան Արարիան: Այնուհետև սաուդյան վերնախավին ձեռնտու էր իրանյան քաղաքական նոր վերնախավի հակախարայելական դիրքորոշումը մերձավորաբեկան հակամարտության և պահեստինյան հիմնախնդրի վերաբերյալ:

Սաուդյան Արարիայի այն ժամանակվա արքայազն Ֆահդը հայտարարեց, որ իր երկիրը ողջունում է իմամ Խոմեյնիին և հարգում նրա զաղափարները⁶⁰: Սաուդյան վերնախավը ևս մեկ քայլ կատարեց սաուդա-իրանական հարաբերությունները հնարավորինս բարիորացիական մակարդակի վրա պահելու համար. այն Իրանին 100 մլն ԱՄՆ դոլար տրամադրեց հարավային շրջանների բարեկարգման համար:

Իրանը դրական էր արձագանքում Սաուդյան Արարիայի կողմից արված նման հայտարարություններին: Սաուդյան Արարիայում Իրանի դեսպան Ռադրուին Ալ Զագիրային տված հարցազրույցում նշեց, որ սաուդա-իրանական հարաբերութ-

⁵⁹ Մարկարյան Բ., "Զոնա Պերսիդսկոց Զалиվա", Մոսկվա 1986, ստ. 88.

⁶⁰ Նույն տեղում, էջ 89:

յունները շատ ամուր են, և դա պայմանավորված է նրանով, որ երկու երկրները ձգուում են, որպեսզի խլամի դիրքերն ավելի ամրապնդվեն:

Սաուդա-իրանական հարաբերությունները լարվեցին 1979 թ. վերջում: Դա արվեց իրանյան քաղաքական իշխանությունների կողմից: Մի շարք պաշտոնյաներ, ինչպես նաև հոգևոր առաջնորդ իմամ Խոսենին, սկսեցին հանդես զալ քննադատական ելույթներով՝ ուղղված Սաուդյան Արաբիայի դեմ:

Դետք է նշել, որ ի սկզբանե իրանական հեղափոխությունը կրում էր հակաարևմտյան բնույթ, ինչն իր ազդեցությունն ունեցավ Սաուդյան Արաբիայի հետ հարաբերություններում, քանի որ վերջինս ուներ բարեկամական կապեր ԱՄՆ-ի և նրա դաշնակից երկրների հետ: 1979 թ.-ի ապրիլին Սաուդյան Արաբիան ճանաչեց Իրանի Խալամական Հանրապետությունը և հաստատեց նրա հետ դիվանագիտական հարաբերություններ, որոնք խօսվեցին 1988 թ.⁶¹:

Մինչև հեղափոխությունը սաուդա-իրանական հարաբերությունները կրում էին լարված բնույթ: Դա պայմանավորված էր տարածաշրջանում առաջատար դիրքեր ունենալու շուրջ մղվող պայքարով, ինչպես նաև նավթային գործոնով: Հեղափոխությունից հետո երկու երկրների միջև հարաբերությունները էլ ավելի բարդացան կրոնական գործոնի հետևանքով:

Խալամական աշխարհում առաջատար դիրք ստանձնելու հարցում Խոսենիի գլխավոր ախոյանը Սաուդյան Արաբիան էր: Խոսենին և նրա կողմանակիցները կարծում էին, որ վահաբիզմը խլամական չէ և որ սաուդները չեն կարող պահպանել խլամի սրբավայրերը, քանի որ նրանք ԱՄՆ-ի աշխարհաքաղաքական հետաքրքրություններին ծառայող ստրուկներ են⁶²:

⁶¹ "Saudi Arabia and Iran: The Struggle for Power and Influence in the Gulf", International Affairs Review, Volume XX, Number 3, Spring 2012, p. 5.

⁶² Marshall C., "Iran's Persian Gulf Policy, from Khomeini to Khatami", London 2003, p. 42.

Իրամական հեղափոխության հայթանակից անմիջապես հետո Իրանը փորձում էր արտահանել հեղափոխությունը տարածաշրջանի այլ երկրներ: Իրանի հոգևոր առաջնորդ այարովա Խոսենին կոչ էր անում ստեղծել խլամական կառավարություններ, որոնք չեն ենթարկվի գերտերություններին: Նա կարծում էր, որ արաբական աշխարհը պետք է ընդունի Իրանի քաղաքական գերակայությունը և գնա այն ճանապարհով, որով Իրանը: Այս նպատակներին հասնելու համար Իրանի հոգևոր վերնախավը հրաժարվում էր ուրիշ երկրների ներքին գործերին միջամտությունից և սրբազն պատերազմ ջիհադ հայտարարելուց: Հիմնվելով այսպիսի գաղափարախոսության վրա՝ այրովա Խոսենին հեղափոխության արտահանումը համարում էր պարտադիր և դրա հետ կապված մի շարք հայտարարություններով հանդես գալիս:

Ճիշտ է հոգևոր առաջնորդը բազմից հայտարարում էր, որ հեղափոխության արտահանումը չպետք է տեղի ունենա ուժի միջոցով, այնուամենայնիվ, Իրանում կային ուժեր, որոնք գերադասում էին ուժ օգտագործելով հասնել դրա արտահանմանը և տարածմանը Պարսից ծոցի տարածաշրջանում: Դժվար է ասել թե այդ ուժերը որքանով էին կապված կառավարության հետ:

Պարսից ծոցի արաբական երկրների համագործակցության խորհրդի գլխավոր քարտուղար Աբդալլահ Բիշարան հայտարարեց, որ Իրանը ամեն կերպ փորձում է արտահանել իր հեղափոխական զաղափարները և թուլացնել ծոցի արաբական երկրներին, ինչպես նաև հանդիսանում է ծոցի շիաների քաղաքական հովանավորը:

Հեղափոխությունից անմիջապես հետո իրանյան վերնախավը Սաուդյան Արաբիայում իշխող վերնախավին զահընկեց անելու կոչերով հանդես եկավ: Այսպիսի քարոզությունը Սաուդյան Արաբիայում առաջ տանելու և ավելի զարգացնելու համար Իրանը հենվում էր սաուդյան թագավորությու-

նում բնակվող 400 հազար շիաների վրա: Սառույան Արաբիայի շիաները զրկված էին մի շարք քաղաքացիական իրավունքներից: Նրանք զրկված էին կարևոր քաղաքական և զինվորական պաշտոններ գրադեգնելու իրավունքից, ինչպես նաև ի տարբերություն սուննիների՝ ունեին սոցիալ-տնտեսական բնույթի խնդիրներ:

Իրանում տեղի ունեցած հեղափոխության ազդեցության հետևանքով շիաները և խարիջները 1979 թ. նոյեմբերին ապստամբեցին և գրավեցին Մերքայի մզկիթը, որտեղ գտնվում է խլամական սրբավայրերից մեկը՝ Քաարան: Այն որոշ ժամանակ գտնվում էր շիաների վերահսկողության տակ: Դա արվում էր որպես բողոքի միջոցառում՝ ուղղված սաուդա-ամերիկյան համագործակցության դեմ: Սա դիտվեց որպես Ղուրանի անարգում և խլամական կանոնների խախտում: Այս ապստամբությունը ճնշելու համար սաուդյիները օգտագործեցին անվտանգության ուժերը և բանակի ստորաբաժանումները:

Սառույան Արաբիայի դեկավարությունը մտավախություն ուներ, որ շիաների ըմբոստությունը կարող է տարածվել երկրի արևելյան շրջաններում, որտեղ և բնակեցված է շիաների մեծ մասը և զբաղվում է նավթի արդյունահանմամբ և վերամշակմամբ⁶³: Այս ըմբոստությունը կարևոր նշանակություն ունեցավ և դրանից հետո կառավարության կողմից մի շարք միջոցառումներ իրականացվեցին սառույան շիաների սոցիալ-տնտեսական և քաղաքացիական իրավիճակը բարելավելու ուղղությամբ:

⁶³ Валькова Л., "Саудовская Аравия: нефть, ислам, политика." Москва, 1987 г., стр. 72.

Սառույամբությունը ճնշելուց հետո Խոմենիի մերձակոր կողմանակից Ալի Մոնտազերին հայտարարեց, որ Իրանը երբեք չի ների Սառույան Արաբիային Մերքայում շիական ըմբոստությունը նման արյունոտ մեթոդներով ճնշելու համար⁶⁴:

1979 թ. նոյեմբերի 4-ին Թեհրանում մի խումբ ուսանողներ գրավեցին Իրանում ԱՄՆ դեսպանատունը և գերի վերցրին ամերիկացի դիվանագետներին⁶⁵: Իրանը դիմեց բոլոր մուսուլմաններին կոչ անելով սատարել իր կատարած հեղափոխական քայլին: Սակայն շատ քիչ մուսուլմանական երկրներ դրական արձագանքեցին Իրանի այս կոչին:

Էր-Ռիադը քննադատեց Իրանին, ինչը է ավելի լարեց սաուդա-իրանական հարաբերությունները: Բոլոր այն երկրները, որոնք դրական արձագանքեցին Իրանի կատարած այս քայլին, սուր քննադատության ենթարկեցին Սառույան Արաբիայի դիրքորոշումը:

1979 թ. դեկտեմբերին շիայական Աշ-Չուրա տոնակատարության ժամանակ Սառույան Արաբիայի Դահրան քաղաքում և 1980 թ. Էլ-Կատիֆ քաղաքում, որտեղ բնակվում էն Իրանից եկած շատ շիաներ, տեղի ունեցան շիայական զանգվածային ելույթներ, որոնց ընթացքում շիաներն իրենց աջակցությունը հայտնեցին իրանյան հեղափոխությանը և ողջունեցին դրա առաջնորդ իմամ Խոմենիի գաղափարները և հայտարարությունները, որոնցով վերջինս կոչ էր անում ամենուր տարածել իրանյան հեղափոխության գաղափարները և սկզբունքները: Այս զանգվածային ելույթները ճնշելու համար Սառույան Արաբիան կրկն կիրառեց կանոնավոր բանակի ստորաբաժանումները:

⁶⁴ Ушаков В., "Иран и мусульманский мир", Москва, 1999, стр. 90.

⁶⁵ Машин В., Яковлев А., "Персидский Залив в планах и политике Запада", Москва, 1985, стр. 70.

Հակասառտական քարոզական գործունեության մեջ Իրանը լայնորեն օգտագործում էր ամենամյա հաջը Սաուդյան Արաբիա: Իրանը ուխտագնացության մեկնող խմբերի ղեկավարների էր նշանակում Խալամական հեղափոխության պահապանների կորպուսի և Հիզբալլահ կուսակցության անդամներին: Նրանք սադրում էին ուխտագնացներին անկարգությունների դիմել սառույան իշխանությունների նկատմամբ, քարոզում էին իրանյան հեղափոխության գաղափարները և իմաս Խոմենիի ուսմունքը, ինչպես նաև կոչ անում մեղադրել սառույան վերնախավին իսլամի դեմ կատարած հանցագործությունների համար:

Այս գործունեության իրականացման համար օգտագործվում էին մեծ քանակությամբ քարոզական նյութեր, որոնք սովորաբար արաբերենով էին լինում, ինչպես նաև իմաս Խոմենիի նկարները և նրա հայտարարությունները: Տարեցտարի Իրանն ավելացնում էր ուխտագնացների թիվը: 1982 թ. ամենամյա ուխտագնացության ժամանակ իրանցի ուխտագնացների ղեկավար էր նշանակվել Մուհամմադ Մուսավի Խոմենիխը, ով 1979 թ. ամերիկացի դիվանագետներին գերի վերցրած ուսանողների հոգևոր ղեկավարն էր:

Սառույան իշխանությունները նույնպես դիմում էին հակաբայերի: 1982 թ. Էր-Ռիադը որոշեց իրանցիներին թողնել մտնել Մեքքա միայն այն դեպքում, եթե նրանք հրաժարվեն քարոզական գործունեություն ծավալել: Իրանցի ուխտագնացները խստորեն ստուգվում էին և նրանցից առգրավվում էին մեծ քանակությամբ իրեր: Անզամ որոշ դեպքերում ձերքակալվում էին Իրանից ժամանած խմբի ղեկավարները:

Հատկանշական է, որ քաղաքական և կրոնական բնույթի հակամարտությունը Պարսից ծոցում իր դրսնորումները սկսեց ունենալ նաև տնտեսական ոլորտում: Սառույան իրանական հարաբերությունների լարման ֆոնին, Իրանը 1979 թ. վերջին զգալիորեն նվազեցրեց նավթի արտահանումը և կոչ

արեց մյուս նավթ արդյունահանող երկրներին նույն կերպ վարվել: Սակայն Սառույան Արաբիան ոչ միայն չկրճատեց, այլ ավելացրեց նավթի արդյունահանումը: Սառույան Արաբիայի նավթի նախարար Յամանին ցուցադրաբար լրեց արաբական երկրների նավթի նախարարների հանդիպումը իր բողոքն արտահայտելով Սիրիայի և Լիբիայի ներկայացուցիչների կողմից Իրանին ԱԱՆ-ի դեմ պայքարելու հարցում աջակցություն հայտնելու որոշման նկատմամբ: Այս իրադարձությունները ել ավելի լարեցին սառույան իրանական երկրում հարաբերությունները:

Սառույան իրանական լարվածությունն իր դրսնորումներն ունեցավ նաև OPEC-ում: Իրան-իրաբյան պատերազմի հետևանքով Իրանը հայտնվել էր ծանր ֆինանսա-տնտեսական իրավիճակում: Բնականարար, Իրանում փորձում էին նավթից ստացված ֆինանսական միջոցները ուղղել Իրաքի դեմ պատերազմում հաղթանակ տանելու համար, ինչպես նաև երկրում տնտեսական վիճակը բարեկավելուն: Այդ իսկ պատճառով 1980-ականների սկզբին Իրանը հրաժարվեց սահմանափակել նավթի արդյունահանումը և արտահանումը: Նավթի արդյունահանման կրճատմանը կողմ էին հանդես գալիս Պարսից ծոցի արաբական երկրները՝ Սառույան Արաբիայի զիսավորությամբ: Այսպիսով, Սառույան Արաբիան փորձում էր սահմանափակելով նավթի արտահանումը պահպանել դրա գները միջազգային շուկայում, ինչը ձեռնտու չէր Իրանին:

Այսպիսով, կարող ենք ասել, որ 1979 թ. սկսված սառույան իրանական հարաբերությունների լարվածությունը սկիզբ դրեց Իրանի և Սառույան Արաբիայի միջև մրցակցությանը խլամական գերիշխանության համար Մերձավոր Արևելքում, ինչի գործնական արտացոլմանը այսօր ականատես ենք:

**РЕВОЛЮЦИЯ В ИРАНЕ 1979 ГОДА И НАЧАЛО
САУДОВСКО-ИРАНСКОГО СОПЕРНИЧЕСТВО ЗА
ГЕГЕМОНИЮ В ИСЛАМСКОМ МИРЕ**

*Сергей Восканян
(резюме)*

Саудовская Аравия и Исламская Республика Иран влиятельные и сильные региональные игроки на Ближнем Востоке. Разногласия между этими странами проявляются как на религиозно-культурной почве, так и в контексте регионального соперничества. Такого рода соперничество мы наблюдаем в Йемене сейчас. Революция 1979 года в Иране важнейшее мировое событие. После этого между Саудовской Аравией и Ираном началась борьба за гегемонию в исламском мире.

**THE REVOLUTION OF 1979 IN IRAN AND THE BEGINNING
OF SAUDI-IRANIAN RIVALRY FOR ISLAMIC HEGEMONY**

*Sergey Voskanyan
(summary)*

Saudi Arabia and The Islamic Republic of Iran are powerful regional players in the Middle East. The disagreements between these countries find their embodiment both in religious-cultural and regional rivalry contexts. This kind of rivalry can be seen in Yemen nowadays. The revolution of 1979 in Iran was an important global event. After this a battle for Islamic hegemony between Iran and Saudi Arabia began.

Մուշեղ Ղահրիյան

**ՔՐԴԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԾԱԳՈՒՄԸ. 19-ՐԴ ԴԱՐԻ
ԱՊՍԱՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ
ՍԵՎՐ-ԼՈՂԱՆ**

**Բանալի բառեր. քրդեր, Սկրի պայմանագիր, Քրդական
հարց, Փարիզի կոնֆերանս, Շերիֆ փաշա, Լոզանի պայ-
մանագիր, Վիլսոնի 14 կետեր**

Վերջին տարիներին Մերձավոր Արևելքում զարգացող իրավարձությունների հետևանքով (ԱՄՆ ներխուժում Իրաք, Իրաքում և Սիրիայում պատերազմներ) աճում է Իրաքում քրդական ինքնավարության և առհասարակ քրդական գործոնի դերը տարածաշրջանում: Տարածաշրջանային գործընթացները և քրդական պետականության կայացման ուղղությամբ գործուն քայլերը սպառնում են փոփոխել մոտ 1 դար առաջ հաստատված սահմանները: Ներկայիս իրողությունները հանգամանալից ընկալելու համար կարենք է դիտարկել այն ժամանակահատվածը, երբ ծագել է քրդական հարցը:

Առաջին համաշխարհային պատերազմն ավարտվեց Եր-
յակ դաշինք՝ Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Օս-
մանյան կայսրության պարտությամբ: Պատերազմի արդյունքում Օսմանյան Թուրքիան զրկվեց իր տարածքների մեծ մա-
սից: Կայսրության արաբական տարածքներն անցան պատե-
րազմում հաղթած Երկրների՝ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի
ազդեցության տակ, որտեղ բնակվող ամենամեծաթիվ ժողո-
վուրդներն են արաբները և քրդերը: Ֆրանսիայի մանդատի
ներքո ստեղծվեցին Սիրիա և Լիբանան պետությունները, իսկ
Մեծ Բրիտանիան մանդատով ստացած տարածքների վրա
ստեղծեց Իրաք և Անդրիորդանան պետությունները: Բարձ-

բացվեց նաև հոծ քրդական բնակչությամբ օսմանյան վիլայեթներում Քրդատան պետության ստեղծման հարցը:

Մինչ այս քրդական անկախ պետություն երբէ գոյություն չէր ունեցել: Կային կիսանկախ քրդական իշխանություններ, որոնք մեկ քրդական պետության մեջ միավորվելու փորձեր չեն արել: 15-րդ դարի կեսերին քրդական Էմիրությունների մեծ մասը Կարակոյունլունների իշխանության տակ էր: 1467 թվականին Ակկոյունլունների առաջնորդ Ուզուն Հասանը պարտության մատնեց Կարակոյունլուններին, իսկ քրդական Էմիրություններն անցան վերջինիս տիրապետության տակ: Ըստ Շարաֆ խան Բիթլիսի «Շարաֆնամեի»՝ Ուզուն Հասանը կոտորել է իշխող քուրդ ընտանիքների մեծ մասին, հատկապես նրանց, ովքեր ծառայում էին կարակոյունլուններին: Այդ շրջանում դեպի արեելք էր ընդարձակվում Օսմանյան պետությունը: Օսմանների և Ակկոյունլունների միջև վճռական ճակատամարտը տեղի ունեցավ 1473 թվականին Օքլուքբելիում, որն ավարտվեց Ակկոյունլունների պարտությամբ: Ուզուն Հասանի հետապնդումներից ողջ մնացած քուրդ ցեղապետերը վերականգնեցին իրենց անկախությունը:

16-րդ դարի սկզբին տարածաշրջանում հայտնվեց նոր տերություն՝ Սեֆյան Պարսկաստանը: Օսմանյան և Սեֆյան պետությունների միջև բախման թատերաբեմ դարձան քրդաբնակ ու հայկական տարածքները: 16-րդ դարի սկզբին ռազմական հաջորդությունների ու դիվանագիտության միջոցով Օսմանյան պետությունը կարողացավ իրեն դաշնակից դարձնել քրդական ցեղապետերի՝ միրերի մեծ մասին¹:

Ըստհանուր առմամբ, քրդական կիսանկախ Էմիրություններն Օսմանյան կայսրությունում գոյություն են ունեցել մինչև 19-րդ դարի կեսերը, երբ կենտրոնացման քաղաքականության շրջանակում այդ պետական միավորները վերացվեցին, և ուղիղ կառավարում մտցվեց: Օսմանյան կայսրություն-

նում և Պարսկաստանում գոյություն ունեցած տասնյակ Էմիրություններից խոշորներն էին Բարանը, Բոհրանը, Հասան-բեյքը, Հարարին, Բիթլիսը, Արդալանը, Սորանը:

19-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրությունը պետական խորը ճգնաժամի մեջ էր: Կայսրության տիրապետության տակ գտնվող մի շարք երկրներ հաջողությամբ պատերազմ-ներ էին մղում Բարձր Դուռն դեմ: 1820-ականներին հաջողությամբ ավարտվեց հույնների անկախության պատերազմը: Կայսրությունը ծանր պարտություն կրեց 1828-29 թվականների ուսու-թուրքական պատերազմում: Եզիզոսի կառավարի Սուլհամմադ Ալիի որդու՝ Իբրահիմ փաշայի զինավորությամբ եզիզոտական զորքերը 1833 թ. հասան մինչև Կոստանդնուպոլիսի մատուցներ: Այս գործընթացների արդյունքում քուրդ մի շարք առաջնորդների մոտ լիակատար անկախության հասնելու գաղափար ծագեց:

1830-1840-ականներին թուրքական զորքերը մի քանի արշավանքներ ձեռնարկեցին կայսրության քրդաբնակ շրջաններ ըմբոստությունը ճնշելու համար: Քրդերին ճնշելու գործողությունն ընթացավ 2 փուլով՝ 1834-1839 թվականներ և 1842-1847 թվականներ, որոնք ուղեկցվում էին կոտորածներով և ամրողական բնակավայրերի հրկիզմամբ:

1839 թվականին եզիզոտական զորքերի հրամանատար Իբրահիմ փաշան Նեզիրի ճակատամարտում ջախջախեց օսմանյան հրամանատար Հաֆեզ փաշայի զորքը, որից հետո իշխանությունը մի քանի տարի չէր կարողանում զրադվել քրդերով: Քրդական պայքարի երկրորդ փուլում անկախության պատերազմը դեկավարում էր Բաղր Խան քեկը: Նա կարողացել էր հնագանդեցնել Սոսուլից հյուսիս բնակվող գրեթե բոլոր քրդական ցեղերին: Նա մտադիր էր դառնալ քրդաբնակ բոլոր տարածքների դեկավարը՝ ընդունելով պարսից շահի սյուզերենությունը: Բաղր Խանի ապստամբությունը ճնշվեց, իսկ նա արտրվեց Կրետե կղզի:

¹ Van Bruinessen M., Agha, Shaikh and State, London 1992, p. 138.

1880 թվականին ապստամբություն բարձրացրեց Նեհրիի շեյխ Ուրեյդուլլահը: Քրդագետներից շատերը հենց նրա, այլ ոչ թե Բաղր Խանի անվան հետ են կապում քրդական ազգայնականության ծագումը (Դևիդ Մկրտչիկ, Ռոբերտ Օլսոն, Միխայիլ Գյունտեր): Շեյխ Ուրեյդուլլահը ցանկանում էր միավորել Թուրքիայի ու Պարսկաստանի իշխանության տակ գտնվող քրդական տարածքները: 1880 թվականին նա արշավանք կազմակերպեց դեպի պարսկական տարածքներ, որից հետո ապստամբություն բարձրացրեց նաև օսմանյան իշխանության դեմ: Ուրեյդուլլահի ապստամբությունը ևս ճնշվեց, իսկ նա 1883 թվականին նախ՝ արսորվեց Ստամբուլ, ապա Հիշազ:

Շեյխ Ուրեյդուլլահն առաջին քրդերից էր, ով իր գործողություններն իրականացնում էր հանուն քուրդ ազգի կարգախոսվ: Թափրիզում Մեծ Բրիտանիայի զիսավոր հյուպատոս Ուիլյամ Էրոտիին շեյխի գրած նամակում ասվում էր. «Քրդատանի դեկավարները լինի թուրքական, թէ պարսկական հատվածներում, և Քրդատանի բնակիչները միասնական են ու համաձայն, որ Օսմանյան ու Ղաջարական կառավարությունների հետ այլևս այսպես չի կարող շարունակվել և անհրաժեշտ է ինչ-որ քան ձեռնարկել: Մենք ցանկանում ենք մեր գործերն ինքներս տնօրինել»²:

Ռոբերտ Օլսոնը, քրդական ազգայնականության զարգացումը բաժանելով 4 փուլի, առաջին փուլն է համարում Ուրեյդուլլահի գործունեությունը: Այդ բոլոր փուլերի ընդհանուր առանձնահատկությունն այն է, որ դեկավարել են շեյխերը և կրոնական առաջնորդները, այլ ոչ թե աշխարհիկ անձինք, ինչպիսիք են օրինակ Էմիրները³: Վերոհիշյալ 4 փուլերն են՝

1. Նեհրիի շեյխ Ուրեյդուլլահի շարժումը և նրա Քրդական լիգան, որը նշանավորեց շեյխերի առաջ գալը որպես քրդերի զիսավոր առաջնորդներ,
2. Զամրդիկ զնդերի թեթև այրումիու դերը դրանց ստեղծման պահից՝ 1891 թվականից մինչև Առաջին համաշխարհային պատերազմ,
3. Առաջին համաշխարհային պատերազմը և Սերի պայմանագիրը,
4. Հետպատերազմյան զարգացումները և Շեյխ Սահիդի ապստամբությունը:

Ի տարբերություն Բաղր Խան բեկի՝ ով 1820-1840-ական թթ. իշխում էր ներկայիս Թուրքիայի հարավարեւելյան ու Իրաքի հյուսիսարեւելյան քրդաբնակ շրջաններում, Ուրեյդուլլահն առաջին անգամ ազգային նպատակներ առաջ քաշեց:

Ուրեյդուլլահի ապստամբության ու քրդական պետություն ստեղծելու նպատակի զարգացումը մեծապես կապված է Բեռլինի կոնգրեսի հետ: 1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմից հետո Բեռլինում եվրոպական տերությունների մասնակցությամբ կայացավ վեհաժողով, որտեղ հաշտության պայմանագիր ներկայացվեց: Բեռլինի կոնգրեսում առաջին անգամ միջազգային մակարդակով արձարձվեց Հայկական հարցը: 1878 թվականի հուլիսի 13-ին Բեռլինի կոնգրեսի արդյունքներով ընդունվեց մի փաստաթուղթ, որի 61-րդ կետում նշված է. «Բարձր Դուռը հանձն է առնում հայաբնակ վայրերում անհապաղ իրազործել տեղական պահանջներից բխող բարեփոխումներ և ապահովել հայերի անվտանգությունը քրդերից ու չերքեններից: Այդ նպատակով ձեռնարկված միջոցառումների մասին այն պարտավոր է պարբերաբար հաղորդել պետություններին, որոնք պետք է հսկեն դրանց գործադրությունը»⁴:

² McDowall D., A Modern History of the Kurds, London, 1996, p. 53.

³ Olson R., The Emergence of Kurdish Nationalism and the Sheikh Said Rebellion, Austin, 1989, p. 1.

⁴ The Treaty of Berlin, 20th July 1878, <http://archive.thetablet.co.uk/article/20th-july-1878/11/the-treaty-of-berlin>

Քրդերի շրջանում այս կետն անհանգստություն առաջացրեց, որ հայկական նահազներում կարող է հայկական պետություն ստեղծվել: Նման տեղեկությունները նախևառաջ տարածում էր Օսմանյան կառավարությունը, որը փորձում էր հայերի ու քրդերի միջև թշնամություն բորբոքելով չկատարել փաստաթղթով ստանձնած պահանջները:

Հետազոտողների մի մասն էլ (Զաքան Յավուզ, Վաղիե Ջվային) քրդական ազգայնականության ծագումը կապում է քրուրբական ազգայնականության զարգացման հետ: Քուրդ բազմաթիվ գործիչներ անդամակցել են «Միություն և առաջադիմություն» կոմիտեին, որը 1908 թվականի հեղաշրջման արդյունքում իշխանության էր եկել Օսմանյան կայսրությունում: Ժամանակի ընթացքում Օսմանյան կայսրության տարածքից դուրս ձևավորված քրդական համայնքների ներկայացուցիչները սկսեցին մեծ տերությունների առաջ բարձրացնել քրդական հարցը⁵:

Քրդերն անդամակցում էին սուլթան Արդուլ Համիդի դեմ ձևավորված առաջին ընդդիմադիր շարժմանը: 1889 թվականին Ռազմարժշկական դպրոցի 4 ուսանողներ մեկ ալբանացի, մեկ չերքեզ և երկու քուրդ, ստեղծեցին 12 անդամից բաղկացած զաղոսնի խմբակի առաջին բժիջը՝ «Միություն և առաջադիմություն» կոմիտեն: Շարժման մեջ ներգրաված քրդերն էին Արդալլահ Ջնդերը և Խսակ Սուկուտին⁶:

19-րդ դարի վերջին արդեն բազմաթիվ քուրդ երիտասարդներ էին կրթություն ստանում Կոստանդնուպոլսի դպրոցներում, իսկ նրանցից ոմանք, օրինակ՝ Բաղրիսանները և Բաբանները, սովորում էին շվեյցարական և ֆրանսիական համալսարաններում: Եզիդոսում քրդերենով սկսեց հրատարակվել «Քրդստան» թերթը, ֆրանսերենով նույնանուն

⁵ Yavuz H., Five stages of the construction of Kurdish nationalism in Turkey, Nationalism and Ethnic Politics, London, 2001, p. 3.

⁶ McDowall D., A Modern History of the Kurds, London, 1996, p. 88.

պարբերական էր թողարկվում Ժնևում: Աստիճանաբար, սակայն, սկսում էր զարգանալ անկախ Քրդստան պետության գաղափարը⁷:

Իրարում քրդական ազգայնականության վերելքը կապված է արաբական պետության ստեղծման հետ, որտեղ քրդերը սահմանափակ ինքնուրույնություն ստացան: Շեյխ Մահմուդ Բարգինջիի և մոլլա Մուստաֆա Բարզանիի ապստամբությունները նպաստեցին Իրաքում քրդական ազգայնականության ու անկախության ձգումների աճին⁸:

Բարգինջիի դեպքում հետաքրքիր է, որ նա 1919 թվականին ոչ թե ազգային ազատազրական պայքարի, այլ ջիհադի կոչ արեց: Բարգինջին ավելի հակած էր ցեղային միությունների միջոցով սեփական իշխանությունը ստեղծելու գաղափարին⁹: Չնայած նրա դեկավարած կարծատն ապստամբությունը դարձավ քրդական ազգայնականության խորհրդանիշը, այդուհանդերձ նա «ժամանակ չէր վատնում ազգայնական զգացմունքներ բորբոքելու վրա»: Գյունտերի կարծիքով, Իրաքում քրդական շարժումը ազգայնական շարժման իրական բնույթ կստանա միայն 1960-ականներին¹⁰:

Սոազին համաշխարհային պատերազմի պարտին՝ 1918 թվականի հունվարի 8-ին, ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնը հրապարակեց Եվրոպայում խաղաղության հաստատման և պատերազմից հետո նոր սահմանների հաստատման մասին իր հանրահայտ 14 կետերը: Վիլսոնի 12-րդ կետը վերաբերում էր Օսմանյան կայսրության բաժանմանն ու այնտեղ բնակող ժողովուրդներին ինքնավարություն տալուն: 12-րդ կետում, մասնավորապես, նշվում է. «Ներկայիս Օսմանյան

⁷ Safrastian A., Kurds and Kurdistan, London, 1948, p. 70.

⁸ Michael M. Gunter, The Contemporary Roots of Kurdish Nationalism in Iraq, p. 37.

⁹ McDowall D. p 157

¹⁰ Gunter M., The Contemporary Roots of Kurdish Nationalism in Iraq, Kufa Review, No 2, Issue 1, 2013, p. 37.

կայսրության թուրքական մասի համար պետք է հավաստել անվտանգ ինքնիշխանություն, սակայն մյուս ազգերի համար, որոնք ներկայում գտնվում են թուրքական իշխանության տակ, պետք է ապահովել կյանքի աներկրա անվտանգություն և ինքնավար զարգացման կատարելապես անխափան հնարավորություն: Դարդանելը պետք է մշտապես բաց լինի նավերի ազատ անցումի և բոլոր ազգերի առևտորի համար միջազգային երաշխիքներով»¹¹:

Վիլսոնի 14 կետերը խանդավառությամբ ընդունվեցին թե հայերի, թե քրդերի շրջանում: Վիլսոնյան կետերից ոգևորված Շերիֆ փաշայի զիխավորությամբ քրդական պատվիրակությունը 1919 թվականին մեկնեց Փարիզ մասնակցելու խաղաղության կոնֆերանսին: Փարիզում Շերիֆ փաշան, ով նախկինում Օսմանյան կայսրության դեսպանն էր Շվեդիայում, հուշագիր հանձնեց դաշնակից երկրների դեկավարներին, որում ներկայացված էր անկախ քրդական պետություն ստեղծելու պահանջը:

Շերիֆ փաշան Փարիզ մեկնեց ամենեին ել չունենալով քրդական լայն շրջանակների աջակցությունը: Այդ առթիվ Մեծ Բրիտանիայի արտգործնախարար լորդ Քերգընը մտորում էր. «Դժվար է գտնել քրդերի ուզածք... Պոլսում, Բաղդադում և այլուր հարցապնդումներից հետո ես անդրադառ, որ անկարելի է գտնել ներկայացուցչական մի քուրդ: Ոչ մի քուրդ չի ներկայացնում իր ցեղից ավելին: Շերիֆ փաշան զալիս է իբրև քրդերի ներկայացուցիչ, բայց քրդերը իբրև այդպիսին չեն ընդունում նրան»¹²:

Փարիզի վեհաժողովում քրդական հարցն առաջին անգամ արձարձվեց 1919 թվականի հունվարի 29-ին: Այդ օրը ներկա-

յացվեց բրիտանական պատվիրակության անդամ գեներալ Յան-Քրիստիան Սմարժի մշակած բանաձեռ, որտեղ ասվում էր, որ իրենց ողջ պատմության ընթացքում թուրքերը չափազանց վատ են կառավարել իրենց իշխանության ներքո գտնվող ժողովուրդներին: Ուստի «դաշնակից ու չմիացած պետությունները համաձայնվեցին, որ Հայաստանը, Սիրիան, Միջազգետքը, Քրդստանը, Պաղեստինը և Արաբիան պետք է կատարելապես անջատվեն թուրքական կայսրությունից»: Մեծ Բրիտանիայի վարչապես Լոյդ Ջորջը կարծում էր, որ «Քրդստանը» պետք է տեղավորվի Միջազգետքի ու Հայաստանի միջև՝ Վանա լճի և Սոսուլի արանքում¹³: Հունվարի 30-ին ԱՄՆ նախագահ Վիլսոնի առաջարկով որոշում ընդունվեց Թուրքիայից անջատել Հայաստանը, «Քրդստանը», Սիրիան, Միջազգետքը, Պաղեստինը և Արաբիան: Առաջարկվում էր այդ երկրներն Ազգերի լիգայի տնօրինությամբ դնել Եռյակ համաձայնության պետությունների հովանակորության ներքո:

Հնայած Շերիֆ փաշան ընդգրկվել էր թուրքական պատվիրակության կազմում Վերսալի կոնքրեսին մասնակցելու համար, սակայն նա վայր դրեց թուրքական պատգամավորի լիազորությունները և «Քրդստանի վերածնության ընկերություն» կազմակերպության առաջարկով իրեն հայտարարեց քրդական պատվիրակության նախագահ: Նրա կարգավիճակը, սակայն, չճանաչվեց, քանի որ Փարիզում քրդական պատվիրակություն որպես այդպիսին գոյություն չուներ և չեր ներկայացնում քրդական ազդեցիկ ցեղերին: Սակայն քանի որ քրդական հարցը Փարիզում այլ ներկայացնող մարմին չկար, Շերիֆ փաշային թույլ տրվեց ներկայացնել հարցը: Շերիֆ փաշան առաջարկում էր «Քրդստանի» մեջ ներառել այն տարածքները, որտեղ քրդերը մեծամասնություն են: Ապագա «Քրդստանի» տարածքում, ըստ նրա, պետք է ընդգրկվեին Դիարբեքիրի, Խարբերդի, Բիթլիսի, Սոսուլի վիլայեթները,

¹¹ President Woodrow Wilson's Fourteen Points, http://avalon.law.yale.edu/20th_century/wilson14.asp

¹² Բայրության Վ., Քրդերը, Հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լուսին ներք, Երևան, 2008, էջ 266:

Ուրֆայի սանջակը: Սա քուրդ գործի նվազագույն պահանջն էր, իսկ առավելագույն պահանջով ապագա քրդական պետության տարածքում պետք է ընդգրկվեին ավելի մեծ տարածքներ՝ հյուսիսում մինչև կովկասյան սահմանները, արևմուտքում՝ մինչև Էրզրում, արևելքում՝ մինչև Ռևանդուզ, իսկ հարավում՝ մինչև Քիրըուր: Այս առաջարկները շրնդունվեցին վեհաժողովի մասնակիցների կողմից¹⁴:

Չնայած հայկական տարածքների նկատմամբ հավակնություններին՝ Շերիֆ փաշան շփումների մեջ է մտնում հայ պատվիրակների հետ փորձելով ընդհանուր ճակատ կազմել հաջողության հասնելու համար: Երկու պատվիրակությունները 1919 թվականի նոյեմբերի 20-ին համատեղ հուշագիր են ներկայացնում Փարիզի վեհաժողովին, որում նշվում էր անկախ Հայաստան ու անկախ Քրդստան ստեղծելու մասին:

1920 թվականի օգոստոսի 10-ին հայոթանակած երկրները Օսմանյան կայսրության հետ ստորագրեցին Սևրի պայմանագիրը: Սևրի պայմանագրի քրդական հարցին վերաբերող հոդվածներն էին 62-րդը, 63-րդը և 64-րդը: 62-րդ հոդվածում նշվում է, որ Կոստանդնուպոլսում նստող 3 հոգանոց հանձնաժողովը, որի անդամներին նշանակում են Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Խուանվան Առաջապես կառավարությունները, դաշնագրի ուժի մեջ մտնելուց հետո 6 ամսվա ընթացքում Եփրատից արևելք, Հայաստանից հարավ ու Սիրիայի, Թուրքիայի սահմանից և Միջազգետքի հյուսիս ընկած քրդական գերակշիր բնակչությամբ տարածքների համար ինքնավարության նախազիծ պետք է ներկայացնի: 63-րդ հոդվածում նշվում է, որ Թուրքիայի կառավարությունը համաձայնվում է ընդունել և իրագործել 62-րդ հոդվածում նշված հանձնաժողովի որոշումները, իսկ 64-րդ հոդվածում էլ ասվում է, որ եթե դաշնագրի ուժի մեջ մտնելուց 1 տարի անց 62-րդ հոդվածում նշված տարածքներում բնակվող քրդերը դիմեն Ազգերի լի-

գայի հանձնաժողովին՝ որոշելով, որ ցանկանում են անկախանալ Թուրքիայից, և եթե հանձնաժողովը որոշի, որ քրդերը կարող են անկախ լինել, Թուրքիան պետք է համաձայնվի և իրաժարվի այդ տարածքների նկատմամբ իրավունքներից: Բացի այդ, 64-րդ հոդվածի համաձայն, քրդական անկախ պետություն ստեղծվելու դեպքում դաշնակից ուժերն առարկություն չեն ունենա, եթե Սոսուլի վիլայեթում ընդգրկված քրդարնակ տարածքները վճռեն միանալ քրդական պետությանը¹⁵:

Սևրի պայմանագրով Հայաստանը քարտեզի վրա ստացավ Վանի, Բիթլիսի և Էրզրումի նահանգների մեծ մասը: Հայկական մյուս վիլայեթների՝ Խարբերդի, Դիարբեքիրի և Սեբաստիայի տարածքները մնացին թուրքերին, իսկ Եփրատից արևելք տարածքները նախատեսված էին ընդրզել քրդական պետության տարածքում: Սակայն խնդիրն այն է, որ հայերին հատկացված տարածքներում գտնվում էին քեմալական ուժերը, իսկ կոտորածների հետևանքով հայ բնակչություն չէր մնացել: Սևրի պայմանագրի քրդական հոդվածները ևս իրականություն չդարձան բազմարիվ անորոշությունների պատճառով: Չնայած Սևրի պայմանագիրը բխում էր հայ և քուրդ ժողովուրդների շահերից, սակայն նրանց միջև համագործակցության փորձեր գրեթե չարվեցին:

Սոհասարակ, քուրդ գործիչները Հայկական հարցը վտանգավոր էին համարում քրդական շահերի տեսանկյունից: Օսմանյան կառավարությունը և քեմալականները շահագործում էին քրդարնակ տարածքների նկատմամբ «հայերի հավակնությունների» գործոնը և քրդերին տրամադրում հայերի դեմ: Դրա օրինակն է սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի կառավարման ժամանակ քրդերի կողմից հայերի հոդված գավթումը, որը շարունակվեց նաև երիտրութերի օրոք: Իսկ Հայոց ցեղա-

¹⁴ Նոյն տեղում, էջ 280:
<http://treaties.fco.gov.uk/docs/pdf/1920/TS0011.pdf>

սպանության ժամանակ քրդական զինված խմբերն ակտիվություն մասնակցում էին հայերի կոտորածներին ու կողոպութին: Քրդերին արևելյան ճակատում ոռուսների դեմ պատերազմի մեջ ներգրավվելու համար օսմանյան իշխանությունները նրանց խոսք էին տվել ինքնավարություն տրամադրել, օրինականացնել նրանց կողմից բռնազրաված հայկական հողերը¹⁶: Քրդերին ինքնավարության և թուրք-քրդական միության խոստումներ էր տալիս նաև Սուստաֆա Քեմալը¹⁷: Քրդերին իր կողմը քաշելու քեմալականների գլխավոր փաստարկներից մեկն էլ «հայկական սպառնալիքն» էր: Այդուհանդերձ, քրդական ինքնավարություն, առավել ևս պետություն հանդուրժելը Քեմալի ծրագրերում չէր մտնում: 1920-1923 թվականների Քեմալի կառավարությունը մի շարք հաջող քայլեր կատարեց (Սոսկվայի, Կարսի, Լոզանի պայմանագրեր) հայկական ու քրդական հարցերը չեզոքացնելու ճանապարհին:

1923 թվականին հուլիսի 24-ին Լոզանի պայմանագրով Թուրքիայի տիրապետության տակ գտնվող տարածքներում քրդական ու հայկական պետականություն ստեղծելու հարցը փակվեց: Լոզանի պայմանագրում քրդերի մասին առհասարակ ոչ մի հիշատակում չկար: Ինչ վերաբերում էր հայերին, ապա Լոզանում բարձրացվեց հայկական օջախ ստեղծելու հարցը, սակայն թուրքական պատվիրակության պահանջով դա էլ դուրս մնաց քննարկումներից: Պայմանագրի 42-րդ հոդվածում ընդամենք հիշատակում կար ոչ մուտքման փորձամասնությունների իրավունքների մասին¹⁸:

Վերադառնալով Հարավային Քրդաստանի իրավիճակին՝ նշենք, որ Առաջին համաշխարհային պատերազմի ժամա-

նակ՝ 1916 թվականին, Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան պայմանագրվել էին արաբական հողերը բաժանելու վերաբերյալ, որը հայտնի է Սայրս-Պիկոյի համաձայնագիր անվանումով: Ըստ այդ համաձայնագրի Բաղրամի ու Բասրայի վիլայեթները հայտնվում են անզլիական, իսկ Սոսուլինը ֆրանսիական ազդեցության գոտում¹⁹:

1926 թվականին բանակցությունների արյունքում թուրքիան ստիպված էր հրաժարվել Սոսուլի վիլայեթից, որը Մեծ Բրիտանիան կցեց նորաստեղծ Իրաքին: Առաջին համաշխարհային պատերազմին հաջորդած այս բոլոր գործընթացների արյունքում քրդաբնակ մի զգալի տարածք ներառվեց Իրաքի կազմում, որտեղ տասնամյակներ տևած պայքարի արյունքում ի վերջո դեռ ֆակտության մեջ գտնվում է քրդական պետություն կատեղծվել:

Այսպիսով, Առաջին համաշխարհային պատերազմից հետո քրդերը, ովքեր մինչ այդ բնակվում էին օսմանյան ու պարսկական տերությունների տարածքներում, հայտնվեցին 4 մասի բաժանված վիճակում՝ Թուրքիայի, Իրաքի, Սիրիայի և Իրանի տարածքներում: Համաշխարհային պատերազմն «ամփոփող» համաժողովներում, որոնք կայացան Փարիզում, Սան Ռեմոյում, Սերում, քրդական հարցն առաջին անգամ միջազգայնորեն արձարձվեց և իրավապայմանագրային դաշտում հայտնվեց: Քրդերը, սակայն, անկախ պետություն կամ ինքնավարություն չկարողացան ստեղծել քաղաքականապես հասուն շինելու, քրդական տարբեր ցեղերի միջև լեզվամշակութային, տնտեսական ու քաղաքական տարբերությունների ու հակասությունների, նրանց միջև մրցակցության, ինչպես նաև բրիտանական քաղաքականության պատճենով:

¹⁶ АВПРИ, ф. Канцелярия МИД 1914 д. 110. Л.л 15-16 մեջբերում Բայրության Վ. նշվ. աշխ., էջ 233:

¹⁷ McDowall D., նշվ. աշխ., էջ 187.

¹⁸ Treaty of Lausanne http://ww1.lib.bsu.edu/index.php/Treaty_of_Lausanne

¹⁹ Encyclopedia Britannica, Sykes-Picot Agreement, <http://www.britannica.com/EBCchecked/topic/577523/Sykes-Picot-Agreement>

ПРОИСХОЖДЕНИЕ КУРДСКОГО ВОПРОСА. С ВОССТАНИЯ 19-ОГО ВЕКА ДО КОНФЕРЕНЦИИ СЕВРА И ЛОЗАННА

Mushegh Ghahriyan
(резюме)

В данной статье рассматривается происхождение курдского вопроса и его развитие до начала 1920-х годов, когда были подписаны Севрский и Лозанский договоры, а также курдский национализм. Именно на этом этапе курдский вопрос впервые вошел в международную правовую плоскость, а курды были разделены между четырьмя государствами. В статье имеются примечания об армяно-курдских отношениях на данном этапе.

THE EMERGENCE OF THE KURDISH ISSUE. FROM 19TH CENTURY REVOLTS TO THE TREATIES OF SEVRES AND LAUSANNE

Mushegh Ghahriyan
(summary)

This article is about the emergence and developments of the Kurdish issue and the rise of the Kurdish nationalism until the early 1920s when the treaties of Sevres and Lausanne were signed, and the Kurdish issue appeared in the international arena for the first time. Also the Kurds were divided between 4 states. The article also dwells on the Kurdish-Armenian relations in that period.

ՀԱՅԻՐԻ. Փ. Կառավար ՄՆՀ. 1914 թ. 110. Ա. 15-16 մայոսին
Բաքվարդ Կ. կայ. թիվ 1429:

ՀԱՅԻՐԻ. Փ. Կառավար ՄՆՀ. 1914 թ. 110. Ա. 15-16 մայոսին
Բաքվարդ Կ. կայ. թիվ 1429:

ԹՅՈՒՐՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՕՍՄԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԿՈՎԱՅՐԻ ԱՌԵՎԱԿԱՆ ՏԱՐԵԿԻՐ ԱՀՄԵԴ ԶԵՎԴԵԹ ՓԱՇԱՆ ՕՍՄԱՆՅԱՆ
ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԿՐՈՆԱԿԱՆ ՈՒԽՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Բանալի բառեր՝ Օսմանյան կայսրություն, մեղրեսե, թերքե, թանգիմաթ, դարեգրություն, կրոնական ուսուցում

Թանգիմաթի դարաշրջանի խոշորագույն պետական գործիչներից Ահմեդ Ջևեթ փաշայի (1822-1895) անցած կրթական ուղին հնարավորություն է տալիս պատկերացում կազմել 19-րդ դ. 30-40-ական թթ. կրթական գործընթացի մասին մայրաքաղաք Կ. Պոլսի կրոնական հաստատություններում:

Ջևեթ փաշան ստանալով տարրական կրթությունը ծննդավայր Լոֆչայում (Lovech)¹, որը Օսմանյան կայսրության Վիլիհինի էջալերի² սանջաքներից (գավառ) մեկն էր, 1839 թ. մեկնում է մայրաքաղաք՝ ուսումը շարունակելու: Այս ժամանակաշրջանում Կ. Պոլիսը պահպանում էր կայսրության կարևորագույն գիտական և կրթական կենտրոնի համբավը, ուր սովորելու էին զալիս կայսրության տարբեր ծայրերից:

¹ Լովեչը (Lovech) գտնվում է ներկայիս Բուլղարիայի հյուսիսում՝ Օսմանյան գլուխ վրա:

² 1864 թ. «Վիլայեթների մասին» օրենքով Օսմանյան կայսրության եվրոպական տիրույթներում գտնվող Վիլիհինի, Նիշի և Սիլիստրեի էջալերները (Էջալեր ամենամեծ վարչական միավորն էր նախքան 1864 թ. օրենքի ընդունումը) միավորվում են նոր վարչական միավորի մեջ և ստեղծվում է Դանության (օսմաններենով Թունայի) վիլայեթը (Vilâyet-i Tuna): Նոր վիլայեթի վայի (նահանգապետ) է նշանակվում Ահմեդ Միհեհար փաշան: Տե՛ս Ահմեդ Չևդեթ Պաշա, Ma'rûzât, hazir. Y. Halaçoğlu, İst., 1980, s. 110-112. Սաֆրատյան Բ., Դոկтрина османализма в политической жизни Османской империи (50-70 гг. XIX в.), Ереван, 1985, стр. 63-79.

Ուսանողական տարիների մասին գրառումներն ամփոփված են Ջևեթ փաշայի «Հուշագրեր» (Te'zakir)³ աշխատության մեջ, որը նա գրի է առել պաշտոնական տարեգիր՝ փաքաա նյուվիս⁴ (vaka'a-nüvis), եղած տարիներին (1855-1866): Այս աշխատությունը, ինչպես նաև նրա «Զեկուցագրեր» (Ma'rurat) աշխատությունը, հանդիսանում են 19-րդ դ. օսմանյան պատմության կարևորագույն սկզբնաղյուրները:

Այսպես, մինչև 19-րդ դ. առաջին կեսը օսմանյան կրթական համակարգը կարելի է բաժանել երեք մասի՝ հատուկ բարեգործական կազմակերպությունների (vakif) հոգածության տակ գտնվող հաստատություններ՝ տարրական դպրոց (sibyan) և բարձրագույն իսլամական դպրոց (medrese), պետության հոգածության տակ գտնվող բաղաքացիական ու վարչական ծառայողներ պատրաստող պալատական դպրոց (enderun) և ուազմական դպրոցներ, և երրորդ՝ այն հաստատությունները, որտեղ ցանկության դեպքում կարելի էր կրթվել ու ստանալ այն գիտելիքները, որոնք հասու չեն վերոնշյալ կրթական հաստատություններում: Որպես այդպիսին ծառայում էին թերքեները (tekke – միստիկ կրոնական կրթության համար նախատեսված հաստատություն), դերվիշների կացարանները, ահիների (ահî - իսլամական կրոնական-արհեստավորական եղբայրության անդամ) կազմակերպությունները և այլն:

Ահմեդ Ջևեթ փաշան բավական երիտասարդ հասակում մեկնում է Կ. Պոլիս՝ ուսումը շարունակելու: Հետևելով պա-

³ Այս աշխատությունը լատինատառ օսմաններնի է տառադարձել արոք. Զ. Բայսումի կողմից և հրատարակվել մի քանի անգամ: Մեր ձեռքի տակ եղած օրինակը տպագրվել է 1991 թ.:

⁴ نویس و قمه - վարա (արար.) դեպք, իրադարձություն և նյուվիս (պարո.) գրող, գրիչ բառերի համարությամբ կազմված տերմին: Տե՛ս Յ. Կütükoglu, Vak'anüvis نویس و قمه, İslâm Ansiklopedisi, 2012, c. 42, s. 457-461.

պի՝ Հաջը Ալի Էֆենդիի խորհրդին⁵, ընտրում է իսլամական բարձրագույն կրթության ուղին և հաստատվում է Զարշամբափազարը քաղամասում գտնվող Փափազօղլու մեղրեսեռում: Վերջինը, ինչպես և մեղրեսեներն առհասարակ, կրթական կառույց լինելու հետ մեկտեղ նաև հանրակացարան էր ուսանողների (softa) համար⁶: Ապագա բարենորոգիչ փաշան սկսում է հաճախել Ֆաթիհ մզկիթի (camii) դասերին, որի շրջակայրում էր գտնվում ժամանակի լավագույն կրթական համալիրներից մեկը՝ հայտնի Սահն-ի սեմանը⁷, որը հիմնադրվել էր սուլթան Մեհմետ ֆաթիհի (Նվաճող) կողմից Կ. Պոլսի գրավումից հետո: Այդ իրադարձությունից հետո հատկապես կրթության մեղրեսեական համակարգը լայն տարածում է ստանում Օսմանյան կայսրությունում:

Ուսման տարիները մեղրեսեռում հստակ սահմանված չեն: Կախված յուրաքանչյուր ուսանողի ընդունակություններից՝ ուսումը կարող էր տևել տասը տարի կամ ավելի: Դա պայմանավորված էր այն մեթոդի հետ, որը հիմնված էր անգիրի վրա և անփոփոխ կիրառվում էր մի քանի դար շարունակ: Ինչպես նշում է ոռու հայտնի թյուրքագետ Վ. Դ. Սմիրնովը, ով 1875 թ. եղել էր Կ. Պոլսում, յուրաքանչյուր սովոր պետք է հերթով սերտեր առարկաները և չեր կարող ուսում-

⁵ Ահմեդ Ջեղեր փաշայի պապը ցանկանում էր, որ թոռը հետևեր նրա պապի՝ Խամայիլ Էֆենդիի օրինակին, ով եղել էր Լոֆչայի մյութիթին: Ինչպես նշում է Ջեղեր փաշայի դրաստը՝ Ֆարմա Ալիյեն, ոմանք խորհուրդ էն տվել երիտասարդ Ահմեդին կրթությունը շարունակել Ռազմական դպրոցում (Mekteb-i Harbiyye): *Sü'ü Fatma Aliye, Ahmed Cevdet Paşa*, s. 23. Ռազմական դպրոցի մասին՝ O. N. Ergin, *Türkiye Maarif Tarihi*, c. I-II, s. 331, 1st., Eset Matbaası, 1977.

⁶ Желтаков А., Петросян Ю., История просвещения в Турции, Моск., 1965, стр. 8.

⁷ Unan F., Sahn-ı Semân, İslâm Ansiklopedisi, c. 35, 2008, s. 532-534.

նասիրել որևէ այլ դասագիրք, քանի դեռ տվյալ դասագիրքն անգիր չեր սովորել:

Ուսուցումն իրականացվում էր երեր փուլով: Առաջին փուլում Ղուրանի սերտումն էր և պարզ հաշիվ սովորելը, երկրորդ փուլում դասավանդվում էր արաբերենի քերականությունը, հուետորություն, տրամարանություն, և ամենակարևորը՝ աստվածաբանություն, իսկ երրորդ փուլում՝ աստվածաբանություն, իսլամական իրավունք (fikih), հաղիսներ, տրամարանություն, մաթեմատիկա և փիլիսոփայություն⁸:

Ուսումն ավարտվում էր քննությամբ (icazet), ապա հանձնվում էր վկայական (icazetname), որում նշվում էր ուսուցչի անունը և տրվում էր համառոտ նկարագրությունը ուսումնամիրված առարկայի⁹:

Մեղրեսեի շրջանավարտները համալրում էին իսլամի աստվածաբանների և օրենսգետների (ulema) շարքերը, ովքեր ավանդաբար իրենց ձեռքում էին պահում հոգևոր-կրոնական, դատական, կրթական-մշակութային ոլորտները:

19-րդ դ. առաջին կեսին, *մեղրեսեական* ուսուցումը լինելով կրոնական ուսուցման հիմնական համակարգը, այնուամենայնիվ, չեր կարողանում ապահովել այն կրթական մակարդակը, որի պահանջը կար նոր ժամանակներում: Նույնիսկ իսլամական աստվածաբանության ոլորտում լավ մասնագետ լինելու համար հարկ էր լրացուցիչ մասնակցել ժամանակի խոշոր գիտնականների դասախոսություններին և թերթեներում անցկացվող դասաժամերին:

⁸ Смирнов В., Турская цивилизация, ее школы, софта, библиотеки, книжное дело, Вестник Европы, СПб., 1876, кн. 8, стр. 553.

⁹ Желтаков А., Петросян Ю., նշվ. աշխ., էջ 8.

¹⁰ Doğan R., Osmalı Eğitim Kurumları ve Eğitimde İlk Yenileşme Hareketlerinin Batılılaşma Açısından Tahliili, Ankara Üniversitesi İlahiyat Fakültesi Dergisi, Ank., 1997, с. 37, с. 1, с. 421.

Չարշամբափազարը թաղամասում բացի մեղքեսներից գտնվում էին նաև ժամանակի հայտնի ալիմների (*âlim* – խլամական աստվածաբանության և օրենքի գիտակ, գիտնական) կացարանները (*konak*): Նրանց մի մասը ժամանակ էր հատկացնում նաև դասավանդմանը: Ինչպես նշում է Ահմեդ Զևիթի փաշան, իր ուսանողական տարիներին մայրաքաղաքում կար ուղեմայի¹¹ (ulema, ալիմի հոգնակին, խլամական աստվածաբանության և օրենքի գիտնականների համայնք) ներկայացուցիչների մի ոչ պաշտոնական դասակարգում, ըստ որի՝ բոլոր ալիմները բաժանվում էին չորս խմբի¹²:

Այսպես, առաջին խմբի ալիմներից ամենահայտնին էին Արշեհիրցի (Akşehirli) Էռուեր էֆենդին, Իմամզադե Էսադ էֆենդին, Անթարյացի (Antakyali) Սահի էֆենդին և Դենիզլիցի (Denizlili) Յահյա էֆենդին: Այս դասին պատկանող ալիմները զբաղեցրել են իրենց ժամանակի ուղեմայի համար ամենաբարձր պաշտոնները, արժանացել բարձր տիտղոսների, ստացել շքանշաններ: Օրինակ, Արշեհիրցի Էռուեր էֆենդին շեյհ-ուլ խլամի¹³ (şeyhü'l-İslâm) տեղապահն էր (ders vekili)¹⁴ և սուլթանական ուսուցչը (hâce-i şehriyârî): Նա դասավանդել է Սուլթան Մահմուդ II-ի երկու որդիներին՝ սուլթան Արդուլմեջիդին և սուլթան Արդուլզադիդին¹⁵: Ավելին, նա արժանացել է Ռումելիի քազաքերի (kazasker/kadiasker)¹⁶ տիտղո-

¹¹ İpsıralı M., The Ottoman Ulema, The great Turkish-Ottoman Civilisation, ed. K. Çiçek, vol. 3, Ank., 2000, p. 339-342.

¹² Ahmed Cevdet Paşa, Tezâkir, 40-Tetimme, s. 8. Fatma Aliye, Ahmed Cevdet Paşa, s. 27.

¹³ Օսմանյան կայսրությունում խլամական աստվածաբանների համայնքի (ilmiye) գլուխ կանգնած ալիմի տիտղոսն է:

¹⁴ Հանուկ պաշտոնյա, ում հանձնարարվում էր շեյհ-ուլ խլամի անունից դասավանդել: 19-րդ դ. այդ գործառույթն իրականացնելու համար ստեղծվում է հանուկ հաստատություն (ders vekâleti)

¹⁵ Şimşirgil A., Ekinci E. B., Ahmed Cevdet Paşa ve Mecelle, İst., 2008, s.10.

¹⁶ Օսմանյան կայսրությունում այսպես էր կոչվում ուսկմական հարցերով զբաղվող գիտակոր դասավորը: Ըստ որում՝ 1481 թ. սկսած կայսրու-

սին: Լոֆչացի (Lofçahı) Ահմեդի¹⁷ (Զևիթի փաշայի) ուսման տարիներին նա արդեն չէր դասավանդում:

Առաջին դասի գիտնականներից Իմամզադե Էսադ էֆենդին (մահացել է 1850/1 թ.)¹⁸ դասավանդում էր իսլամի հիմունքների (Şerh-i Akâid) մեկնություն, ում դասերին մասնակցել է Ահմեդ էֆենդին¹⁹: Հետազայում էսադ էֆենդին դառնում է պետական ծառայողներ պատրաստելու համար նախատեսված դպրոցի (Mekteb-i Maarif-i Adliye)²⁰ տնօրեն և Բարձրագույն խորհրդի (Meclis-i Vâlâ) անդամ որպես Ռումելիի քազաքեր:

Անթարյացի Սահի էֆենդին (մ. 1854/5 թ.) առաջին դասի մյուս հոջան (ուսուցիչ) էր, ով դասավանդել է Ահմեդ էֆենդին: Հոնետորության դասերը տեղի էին ունենում Սյուլեյմանիկ օամիում, իսկ որպես դասագիրը ծառայում էր «Սուլթավել»²¹ (Mutavel) աշխատությունը: Այն օգտագործում էին Ստամբուլի հոջաններն իրենց դասախոսությունների, ինչպես նաև քննությունների ժամանակ: Սահի էֆենդին շատ բարձր

թյան եվրոպական տիրությունների համար նշանակվում էր առանձին զիյավոր դատավոր (Rumeli kazaskeri), իսկ ասիստան ու աֆրիկյան տիրությունների համար՝ առանձին (Anadolu kazaskeri): Ըստ որում՝ Ռումելիի քազաքերն ուներ ավելի բարձր դիրք, քան Անատոլիայինը: Մահմուդ II (1808-1839) քարենորդությունների հետևանքով այդ պաշտոնները որպես տիտղոսներ էին տրվում: Մանրամասն տե՛ս İpsıralı M., Kazasker, İslâm Ansiklopedisi (İA), 2002, c. 25, s. 140-143.

¹⁷ Ահմեդ Զևիթի փաշայի մասին խոսելիս նախրան Զևիթի գրական կեղծանունը ստանալը, օգտագործում ենք Լոֆչացի Ահմեդ, ապա ուսանողական տարիների համար նաև Ահմեդ էֆենդի տարբերակները:

¹⁸ Ahmed Cevdet Paşa, Tezâkir, 40-Tetimme, s. 8.

¹⁹ Ebül'ulâ Mardin, Medeni Hukuk Cephesinde Ahmed Cevdet Paşa (1822-1899), İstanbul Üniversitesi Hukuk Fakültesi Mecmuası, 1947, c. 13, s. 1, s. 121.

²⁰ Հիմնարկը է 1838 թ.:

²¹ Ալ Թաֆթազանի (1322-1390) հոնետորության վերաբերյալ հայտնի աշխատությունն է, որն օգտագործվել է որպես դասագիրը օսմանյան կրոնական բարձրագույն հաստատություններում: Ahmed Cevdet Paşa, Tezâkir, 40-Tetimme, s. 8.

հեղինակություն ունեցող գիտնական էր, ով եղել է Անասու-
լիայի քաջարերը²²:

Դենիզլիցի Յահյա էֆենդին հաջորդն էր առաջին դասի
ալիմների շարքում, ում մասին նշում է Ջևեթ փաշան իր
«Հուշագրեր» (Te'zakir) աշխատության մեջ: Նա զբաղեցրել է
շեյհ-ուլ իսլամի տեղապահի (ders vekili) և սուլթանական
ուսուցչի (hâce-i şehriyâri) պաշտոնները, իսկ հետագայում
դարձել Ուսուցիչների պատրաստման դպրոցի (Dar-ül
Muallimin) հիմնական դասախոսը և կարծ կյանք ունեցած
Օսմանյան ակադեմիայի (Eşcümen-i Danış) անդամ: Թեպետ
Ահմետ էֆենդիի Ստամբուլ եկած ժամանակ նա արդեն թողել
էր ակտիվ դասավանդումը և միայն գիտությամբ էր զրադ-
վում²³, այնուամենայնիվ իր կյանքի վերջին տարիներին նա
հաճախ էր հյուրընկալում Ահմետ էֆենդին և նրա հետ կիսում
իր գիտելիքները և փորձառությունը²⁴:

Ուկեմների երկրորդ դասում Ահմետ Ջևեթ փաշան
առանձնացնում է Վիդինցի (Vidinli) Սուսրաֆա հոջային, Գի-
րիթցի (Giritli) Սյուլեյման հոջային, Շեհրի Հաֆրզ էֆենդիին և
բժիշկ Համիդ էֆենդիին²⁵:

«Հուշագրեր» (Te'zakir) աշխատության մեջ որպես երրորդ
դասի գիտնականներ նշվում են Հաֆրզ Սեյյիդ և Բիրզիլի
Շաքիր էֆենդիները:

Հաֆրզ Սեյյիդ էֆենդին բնակվում էր Չարշամբափազարը
թաղամասի Իսմայիլ էֆենդի մելլրեսեռում և դասավանդում էր
առավոտյան և երեկոյան: Նա դասախոսում էր նույնիսկ ար-
ձակուրդներին, այսինքն՝ այնքան ժամանակ, քանի դեռ իրեն
ունկնդրող ուսանող կար: Ահմետ Ջևեթը ներկայացնում է
նրան որպես մտավոր հզոր ներուժ ունեցող գիտնական, ով

²² Çiğdem R., Ahmed Cevdet Pasha (1823-1895): A Scholar and A Statesman, Islam Hukuk Araştırmaları Dergisi, sayı 6, 2005, s. 79.

²³ Ahmed Cevdet Paşa, Tezâkir, 40-Tetimme, s. 8-9.

²⁴ Şimşirgil A., Ekinci E. B., նշվ. աշխ., էջ 11.

²⁵ Çiğdem R., նշվ. աշխ., էջ 79.

արտակարգ տիրապետում էր իր դասավանդած առարկա-
յին՝ արարերենին²⁶:

Բիրզիլի Շաքիր էֆենդիին Ահմետ Ջևեթը բնորշում էր
որպես փիլիսոփայության և «տրամարանության բացարձակ
գիտակ», ումից էլ 1844 թ. նա ստանում է իր ավարտական
վկայականը²⁷: Մոտավորապես 5-6 տարվա ընթացքում նա
կարողանում է այնպիսի կթություն ստանալ, որի համար շա-
տերը սովորում էին մոտ 10 տարի: Բացի բնատուր ընդունա-
կություններից և աշխատասիրությունից կարևոր հանգա-
մանք էր նաև այն, որ նա սերում էր բարեկեցիկ ընտանիքից և
ուսումնառության տարիներին ամբողջ ծախսերը հոգում էր
հենց նրա ընտանիքը²⁸: Թեպետ այդ հանգամանքը նրան որոշ
չափով կաշկանդում էր, սակայն դա հնարավորություն էր
տալիս ամբողջ ժամանակը օգտագործել կրթվելու համար:

Ինչպես նշում է փաշայի դուստրը և նրա կենսագիրը, ու-
սումնառության ընթացքում նա անընդհատ պարապել է,
նույնիսկ ազատ օրերին և արձակուրդներին, և ընդամենը եր-
կու անգամ է մայրաքաղաքից դուրս գնացել²⁹:

Չորրորդ դասի գիտնականների մասին Ահմետ Ջևեթ փա-
շան նշում է. «Եթ գտնվի մի մարդ, որը հասներ նրանց դրա-
նը»³⁰: Կ.Պոլսում նրա առաջին ուսուցիչը հենց չորրորդ դասի
ալիմ էր՝ Թորյանը Մեհմետ էֆենդին: Մի քանի պարապ-
մունքից հետո նա դադարում է հաճախել այդ դասերին և նա-
խընտրում է այդ ժամանակ մեծ համբավ ունեցող Վիդինցի
Սուսրաֆա և Բիրզիլի Շաքիր էֆենդիների դասախոսութ-
յունները: Նրանք մեծ հեղինակություն էին վայելում և միշտ
ունենում էին զգալի թվով ուսանողներ:

²⁶ Ahmed Cevdet Paşa, Tezâkir, 40-Tetimme, s. 8.

²⁷ Şimşirgil A., Ekinci E. B., նշվ. աշխ., էջ 14.

²⁸ Çiğdem R., նշվ. աշխ., էջ 81.

²⁹ Fatma Aliye, նշվ. աշխ., էջ 25.

³⁰ Ahmed Cevdet Paşa, Tezâkir, 40-Tetimme, s. 8.

Վիդինցի Մուսթաֆա հոջան դասավանդում էր «Մութավել»-ը (Mutavel) Նիշանջը ջամփում՝ Ֆարիհ ջամփի հարևանությամբ, իսկ Բիրգիվի Շաքիր հոջան՝ տրամարանություն Դյուլգերօնու մզկիթում, որը գտնվում էր Սարաջհանե քաղամասում (Ստամբուլի Եվրոպական հատվածում):

Հատկապես մարդաշատ էին Վիդինցի Մութաֆայի դասախոսությունները՝ շուրջ 300 ուսանող, որոնց մի մասը ստիպված էր կանգնել դրսում, սակայն դասախոսության ժամանակ տիրող լուրջունը թույլ էր տալիս դոնից և պատուհաններից լսել հոջային: Այս գիտնականը հայտնի էր նաև նրանով, որ իր ժամանակի ամենաշատ ուսանող պատրաստած դասախոսն էր: Նրանք իրենց պատրաստվածությամբ գերազանցում էին նույնիսկ չորրորդ դասի ալիմներին³¹: Ապագա շեյխուլիմաններ Քեզուրի Հասան Էֆենդին, Քարահալի Էֆենդին և այլք եղել են նրա սաները:

Խնչ վերաբերում է իսլամական ուսուցման մյուս կարևոր բաղադրիչներին՝ թերքեններին և սուֆիների կացարաններին, դրանք շարունակում էին լինել կրոնական ուսուցման կարևոր կենտրոններ և հնարավորություն էին տալիս մասամբ լրացնելու մեղրեսեական կրթության բացը:

Սհմեն Զեղեր փաշան երբեմն չի դառնում որևէ շեյխի աշակերտ կամ որևէ թերքեի անդամ, սակայն նրա ուսման հաջորդ փուլը կապված է Մուրադ մոլլա թերքեի հետ: Այս որոշումը պայմանավորված էր այն հանգամանքով, որ մշտական զբաղվածության և գերլարված ուսման և դասապատրաստման հետևանքով վատթարացել էր նրա առողջական վիճակը: Բժիշկ Համիդ Էֆենդիի խորհրդով նա որոշում է դադար վերցնել և սկսում է հանգիստը համատեղել պարսկերենի ուսուցմամբ³²:

Սհմեն Էֆենդին սկսում է հաճախել Մուրադ մոլլա թերքե, որը գտնվում էր Չարշամբափազարի հարևանությամբ: Նարշբենդիական³³ այս հաստատությունը հիմնադրվել էր 1769 թ. Ռումենիի քաղաքեր Դամարզարէ Սեհմեն Մուրադ Էֆենդիի կողմից, ով ծագումով Բուրսայի հեղինակավոր ուկեմների ընտանիքից էր: XIX դ. առաջին կեսին այս թերքեն համարվում էր համալասարան (darülfünun) և ժամանակի գիտնականների ու գրական դեմքերի սիրելի հավաքատեղին էր: Բարձրաստիճան տարբեր դեմքեր մասնակցել են այնտեղ անցկացվող դասախոսություններին և գիտական ընսարկումներին: Այս թերքեն վայելում էր սուլթան Աբրուլմեջիդի (1839-1861) բարեհանությունը, և նա ամեն տարի ուսմազանի (Ramazan)³⁴ երեկոներից մեկն անցկացնում էր այնտեղ որպես շեյխ (şeyh-թերքեի առաջնորդ, ով դեկավարում միստիկ կրթությունը տվյալ կրոնական հաստատությունում) հատուկ հյուր³⁵:

Այն ժամանակ, եթե Սհմեն Էֆենդին սկսում է հաճախել թերքե, շեյխը Սեհմեն Մուրադ մոլլան էր, ով իր անունը ստացել էր ի պատիվ թերքեի հիմնադրի: Նա ուներ մեծ հեղինակություն և հարզանք Ստամբուլի վերնախավի շրջանում: Ինչպես նշում է Զեղեր փաշան, «այդ տարիներին Ստամբուլում «Սեսնիի»³⁶ երկու հայտնի գիտակ կար», և մեկը հենց Մուրադ մոլլան էր: Սահմանված օրերին նա ուսանողների հետ «Սեսնիի» էր կարդում, իսկ այլ օրերին դասավանդում տարբեր առարկաներ: Մուրադ մոլլան հանդես էր գալիս որպես կրթության հովանավոր: Նա միաժամանակ սուլթան Սհմեն մզկիթի քարոզիչն (faiz) էր ուրբաթ օրերին և

³¹ Ամենատարածված միստիկական ուղղություններից մեկն է իսլամում: Տե՛ս Algar H., Nakşibendiyye, ԼԱ, 2006, с. 32, с. 335-342.

³² Ռամազանը հիջրեթի օրացույցի 9-րդ ամիսն է, որի ընթացքում հավատացյալ մուտուլմանները պահեի մեջ են գտնվում:

³³ Fatma Aliye, նշվ. աշխ., էջ 33.

³⁴ Սևյան Զեյալերդին Ռումենի (մ. 1273 թ.) 6 հաստրից բաղկացած «Masnavi-I Ma'navi» (թուրքերէն՝ Mesnevi) աշխատությունն է:

³¹ Şimşirgil A., Ekinci E. B., նշվ. աշխ., էջ 12.

³² Ahmed Cevdet Paşa, Tezâkir, 40-Tetimme, с. 13.

հայտնի էր նրանով, որ այդ ամբիոնից հաճախ հնչեցնում էր խիստ քննադատություններ որոշ պաշտոնատար անձանց հասցեին³⁷:

Թերքեում Սհմեր էֆենդին պարսկերեն էր ուսումնասիրում Հաֆրզ Թևսֆիք էֆենդիի հետ³⁸:

1844 թ. հունվարին հատուկ «Մեսնիի» ուսումնասիրության համար նախատեսված շենքի (mesnevîhâne) բացման հանդիսավոր արարողության ժամանակ, որին ներկա էր սուլթան Աբդուլմեջիդը, Սուլթան Մոլլան Սհմեր էֆենդիին է հանձնում ավարտական վկայական, որով նրան տրվում էր որպակուրում դասավանդելու «Մեսնի»³⁹:

Պարսկերենի իմացությունը խորացնելու համար Սհմեր էֆենդին սկսում է հաճախել Սյուլեյման Ֆեհմիթի⁴⁰ առանձնատուն Քարաօյումրուք թաղամասում (Ստամբուլի Եվրոպական հատված): Ժամանակի պետական գործիչները և արվեստագետները շատ հաճախ էին լինում այնտեղ: Նա հայտնի բանաստեղծ էր, տիրապետում էր պարսկերենին և հետաքրքրվում էր փիլիսոփայությամբ: Նա երկար տարիներ աշխատել էր կառավարությունում և քաջածանոթ էր ներքին և արտաքին քաղաքականության հարցերին⁴¹: Այստեղ է Սհմեր էֆենդին ստանում է «Զնդեր» գրական կեղծանունը (mahlas)⁴²:

³⁷Ahmed Cevdet Paşa, Tezâkir, 40-Tetimme, s. 15. Խորը մասնավորապես Կրոնական հաստատություններով զրադարձ նախարարության (Evkâf-ı Hümâyûn Nezâreti) դեկապարի մասին է: Նախարարության մասին տես N. Öztürk, Evkâf-ı Hümâyûn Nezâreti, İA, 1995, c. 11, s. 521-524.

³⁸ Çiğdem R., նշվ. աշխ., էջ 80.

³⁹ Baysun M. C., Cevdet Paşa Şahsiyetine ve ilim sahasındaki faaliyetine dair, Türkiye Mecmuası, vol. XI, 1954, s. 215. M.B. Tanman, Mesnevîhâne tekkesi, İslâm Ansiklopedisi, 2004, c. 29, s. 335.

⁴⁰ Fatma Aliye, նշվ. աշխ., էջ 35.

⁴¹ Նա հիմնադիրն է միասիկ Հալլվեթի համայնքի: Տե՛ս Ş. Mardin, The Genesis of Young Ottoman Thought, Princeton, 1962, p. 58.

⁴² Մինչ այդ կուել է Վեհրի գրական կեղծանունը, որով հայտնի չէ: Սհմեր փաշայի կեղծանունների մասին տես Arik Ş., Ahmed Cevdet Paşanın

1843 թ. լոֆշացի Սհմեր էֆենդին առաջին անգամ անվանվում է Սհմեր Զնդեր⁴³ և այդ թվականից հետո ողջ կյանքի ընթացքում պահում է այն:

Սհմեր Զնդեր փաշան մասնակցել է նաև հոգա Հյուսամուլդին էֆենդիի դասախոսություններին, ով, ըստ Սհմեր Զնդերի «Մեսնիի» մյուս խոշոր գիտակն էր: Ինչպես պարզ է դառնում շարադրանքից, դասերը տեղի էին ունենում Քյուչյուր Սուլթանական մասում), սակայն, եթե Հյուսամուլդին էֆենդին տեղափոխվում է Էյուբ, Սհմեր էֆենդին այլս չի կարողանում ունկնդրել նրան⁴⁴:

Իսլամական միստիցիզմի խոշոր դեմքերից է եղել Քուշադալի (Kuşadasi) Իբրահիմ էֆենդին⁴⁵, ում քնակարանը գտնվում էր Փափազողլու մելլեւեկի դիմաց և հանդիսանում էր կրթված անհատների հավաքատեղի: Սհմեր Զնդերը նույնպես ներկայանում է Իբրահիմ էֆենդիին՝ ցանկանալով քննարկել մի շարք հարցեր, որոնք առաջացել էին նրա մոտ սուֆիական գրականություն ուսումնասիրելու ժամանակ: Ինչպես նշում է Զնդեր փաշայի դուստրը, Քուշադալը էֆենդին տպավորված է լինում երիտասարդի պատրաստվածությամբ և գիտելիքներով և նրան է տրամադրում «իր ժամանակը և գիտելիքները»⁴⁶:

Այս ամենին գործակեռ Սհմեր Զնդերն ուսումնասիրել է մաթեմատիկա, աստղագիտություն, աշխարհագրություն, սու

kullandığı mahlâslar ve yayımlanmamış bazı şiirler, Atatürk Üniversitesi Sosyoloji Bilimler Enstitüsü Dergisi, 2005, c. 05, s. 219-234.

⁴³ Chambers R. L., The Education of a Nineteenth-century Ottoman Îlim, Ahmed Cevdet Paşa, International Journal of Middle East Studies, 1973, vol. 4, N. 4, p. 457.

⁴⁴ Fatma Aliye, նշվ. աշխ., էջ 23.

⁴⁵ Ahmed Cevdet Paşa, Tezâkir, 40-Tetimme, s. 15. Նա մահացել է 1845/46 թ.:

⁴⁶ Fatma Aliye, նշվ. աշխ., էջ 36.

վորել ֆրանսերեն⁴⁷: Իր ուսման տարիներին՝ ընդհուած մինչև 1844 թ., նա մասնակցել է նաև ուսանողական հավարույթների, գիտական քննարկումների:

Այսպես, ուսումնասիրելով թանգիմարի դարաշրջանի խոշոր պետական գործիչ, այիս և պաշտոնական պատմազիր Ահմետ Զևդեթ փաշայի անցած կրթական ուղին, կարող ենք փաստել, որ 19-րդ դարում օսմանյան ավանդական կրոնական կրթությունը սպառել էր իրեն: Բարձրագույն կրոնական (իսլամական) կրթական հաստատությունները պահպանելով դարեր ի վեր մշակված ուսուցման կարգն ու մեթոդները՝ ի զորու չեն ապահովելու ժամանակի պահանջներին համապատասխան որակյալ կրթություն: Այդ հաստատություններն աստիճանաբար հեռանալով իրենց բուն՝ գիտակրթական առաքելությունից, ավելի ու ավելի էին ներգրավվում քաղաքական գործընթացների մեջ: Դարակեսին թե՝ *մեղրեսեների* աշակերտները և թե՝ այնտեղ դասավանդող հոգաները դարձել էին խավարամիտն և հետադիմական մի զանգված, որը դեմ էր ամեն տեսակ նորամուծությունների:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում գիտական կենտրոնի իրենց համբավն էին պահպանում *թեքքեները*, որոնք իրենց զգալի ներդրումն ունեին օսմանյան կրթության ոլորտում: Այս հաստատությունները, ինչպես նաև ժամանակի հեղինակավոր այիսերի դասախոսությունները հնարավորություն էին տալիս մասամբ լրացնելու այն բացը, որ կար *մեղրեսեական* կրթական համակարգում:

Սահմուղ II-ի օրոր ձեռնարկված կրթական ոլորտի բարենորոգումները, որոնք նպաստակ ունեին ձևավորելու հանրային կրթություն և բարձրացնելու հասարակության կրթական մակարդակը, ինչպես նաև դրանց հաջորդած թանգիմարի բարենորոգումները, որոնց նպատակն էր ձևավորել պատրաստված կադրեր նախատեսված փոփոխություններն իրա-

կանացնելու համար, մասամբ կարողացան կրոնավորներին գրեթե կրթության ոլորտում իրենց մենաշնորհային դիրքի և հարված հասցնել նրանց ֆինանսական վիճակին⁴⁸:

Այդուհանդերձ, ուշեմայի ներկայացուցիչները շարունակում էին իրենց զգալի դերն ունենալ կայսրության կրոնական, իրավական, կրթական ու մշակութային կյանքում ընդհուած մինչև իսլամական կրոնական դպրոցների փակվելն արդեն քեմալական հեղափոխությունից հետո՝ 1922 թ.:

ИСТОРИОГРАФ АХМЕД ДЖЕВДЕТ ПАША О РЕЛИГИОЗНОМ ОБУЧЕНИИ В ОСМАНСКОЙ ИМПЕРИИ *Каролина Саакян* (резюме)

Исследование образования, полученного видным османским государственным деятелем и богословом Ахмедом Джевдет-пашой (1822-1895гг), проливает свет на состояние религиозного обучения в Константинополе в первые годы после объявления танзиматских реформ. В то время, когда традиционная система медресе уже не была в состоянии обеспечивать качественное образование, текке и алимы в определенной степени восполняли пробелы в религиозном образовании. Невозможно отрицать ту важную роль, которую они играли в образовательном процессе.

⁴⁷ Simşirgil A., Ekinci E. B., նշվ. աշխ., էջ 10.

⁴⁸ Առավել կարևոր միջոցառումներից էին 1826 թ. Կարֆերի (մեղրեսեները հովանավորող կազմակերպություն) նախարարության (Evkafî Hümâyûn Nezareti) հիմնումը, որով ծանր հարված էր հասցվում նրանց ֆինանսական դրության, և ավելի ուշ՝ 1847 թ. Կրթության նախարարության (Ma'arif Nezareti) ձևավորումը, որը պետք է վերահսկեր ողջ կրթական գործընթացը կայսրությունում:

Эти и другие вопросы, касающиеся Османской империи 19-го века, нашли свое место в одной из основных исторических работ Ахмеда Джевдета паши – «Теза'кир» («Заметки»), которую он написал в годы пребывания на посту вака-и нювиса (официального историографа).

IMPERIAL ANNALIST AHMED CEVDET PAŞA ON RELIGIOUS EDUCATION OF THE OTTOMAN EMPIRE

Karolina Sahakyan

(summary)

The examination of education of prominent Ottoman statesman and Islamic scholar Ahmed Cevdet Paşa (1822-1895) makes clear the whole picture of religious education in Constantinople at the beginning of Tanzimat reforms. While traditional *medrese* system was no longer able to give a qualified education, the *tekkes* and *âlims* somehow were completing the gaps in religious education. The important role they were playing in educational process can't be ignored.

These questions along with other problems on 19th century Ottoman Empire are discussed by Ahmed Cevdet Paşa in one of his main historical works - the "Teza'kir" (Memoranda) – which he made as *Vaka'a-Nüvis* (official annalist).

Տաթևիկ Հակոբյան

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԵՄԱՏԻԿԱՆ ԱԲԴՈՒՆ ՀԱՄԻԴ Հ-ՐԴԻ ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր՝ թուղթական պատմագրություն, հայերի կովորածներ, Օսմանյան կայսրություն, Աբդուն Համիդ Հ-րդի հուշեր, «կարմիր կենդանի», կեղծարարություն, խոռվություններ

Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի նկատմամբ տարբեր ժամանակներում կատարված ոճրագործությունների ուսումնասիրման հարցում մեծապես կարևորվում են ինչպես թուրք և օսմանացի պետական, քաղաքական ու հասրավական գործիչների, այնպես էլ հայերի տեղահանության և կոտորածի հրամաններ արձակած բարձրաստիճան թուրք պաշտոնյանների հուշերը: Թուրքիայում վերջին տասնամյակներում բազմիցս հրատարակվել են ինչպես Թալեաթի¹, Զեմալի², Էնվերի³, այնպես էլ սուլթան Աբդուն Համիդ Հ-րդի⁴ հուշագրությունները: Սույն հոդվածում քննության է ներարկվել Աբդուն Համիդ Հ-րդի հուշերը, որում, չնայած սուլթանը շատ սահմանափակ է անդրադարձել հայերին վերաբերող ինդիքներին, այնուամենայնիվ, փորձել է իրողությունը ներկայացնել որպես հայերի ներքին խնդիրներ կամ ներքին պառակտվածության արդյունք՝ դրանով քողարկելով իր վարած քաղաքականության՝ հատկապես հայերի նկատմամբ իրականացրած հանցագործությունների էությունը:

¹ Bardakçı M., Talat Paşa'nın Evrak-ı Metrukesi, İstanbul, 2008.

² Kabacalı A., Hatıralar Cemal Paşa, İstanbul, 2001.

³ Cengiz H. E., Enver Paşa'nın Anıları (1881-1908), İstanbul, 1991.

⁴ Bozdağ İ., Sultan Abdülhamid'in Hatira Defteri, İstanbul, 1985.

«Սուլթան Արդուլ Համիդի հուշագրությունները» (Sultan Abdülhamid'in Hatıra Defteri) թուրքական պատմագրության մեջ ամենաքննարկվող գրքերից մեկն է, որտեղ սուլթանը պատմում է իր հուշերը, երբեմն՝ պատասխանում իրեն ուղղված «մեղադրանքներին»: Գրքի առաջարանում, որը գրվել է «Փընար» հրատարակչության կողմից, նշվում է, որ գիրքը պետք չէ դիտարկել որպես Արդուլ Համիդին պաշտպանող քայլ, այն պարզապես օսմանյան տվյալ ժամանակաշրջանի պատմության լիարժեք և օրիենտիվ ուսումնասիրման համար շատ կարևոր աղյուր է⁵: Անհրաժեշտ ենք համարում ի սկզբանե նշել, որ սուլթանի օրագրային գրառումների վերաբերյալ թուրքական պատմագրության մեջ կան լուրջ տարակարծություններ: Այդ հարցին անդրադարձել է հայտնի պատմաբան Ալի Բիրինջին⁶, ով 2005 թ. հրատարակել է մի հոդված⁷ «Sultan Abdülhamid'in Hatıra Defteri» (Սուլթան Արդուլ Համիդի հուշագրությունները) գրքի վերաբերյալ, որը դարձել էր բուռն քննարկումների առարկա: Բիրինջին պնդում է, որ բազմիցս տպագրված և տարբեր վերնագրերով հրատարակված («Hâtırât-ı Abdülhamit Han-ı Sâni», (Արդուլ Համիդ 2-րդի հուշերը), «Abdülhâmid Anlatıyor», (Արդուլ Համիդը պատմում է), «Hâtırat», (Հիշողություններ), «Abdülhâmid' in Hatıra Defteri», (Արդուլ Համիդի հուշագրությունները), «Sultan Abdülhamid'in Hatıra Defteri», (Սուլթան Արդուլ Համիդի հուշագրությունները)), փոփոխված ու խմբագրված տեքստով գիրքը իրականում Արդուլ Համիդի գրչին չի պատկանում, այն պարզապես վերագրվել է նրան: Հուշերի մի մասը գրել է քուրք պետական գործիչ և գրող Սուլեյման Նազիֆը,

⁵ Նույն տեղում, էջ 8:

⁶ Ալի Բիրինջին 2008-2011 թթ. եղել է Թուրքական պատմագիտական ընկերության նախագահը:

⁷ Birinci A., Sultan Abdülhamid'in Hatıra Defteri, DİVÂN İlimi Araştırmaları, sy. 19 (2005/2), s.177-194.

իսկ մյուս մասը՝ գիրքը հրատարակության պատրաստած Իսմեր Բողդաղը⁸: Շրջանառվում է այն տեսակետը, որ Սուլյաման Նազիֆը խնդիրներ է ունեցել իշթիհաղականների հետ, որոնք փորձում էին քննադատել Արդուլ Համիդի գործունեությունը՝ նսեմացնելով նրա կերպարը, այդ պատճառով էլ Նազիֆը ձեռնամուխ է լինում Արդուլ Համիդ 2-րդի անունից գրել սուլթանի հուշերը՝ փորձելով հակադարձել իշթիհաղականների այդ գործելատճին⁹: Պատմաբանը կարևոր նկատառում է անում, նշելով, որ այդ հուշերում առկա բառապաշտը չի հսմապատասխանում այն ժամանակվա կայսրության խոսակցական կամ գրավոր լեզվի բառապաշտին, դեռ ավելին, այն շատ ավելի մոտ է ժամանակակից թուրքերնի գրավոր և խոսակցական ոճին¹⁰: Վերոնշյալ Իսմեր Բողդաղի կողմից գրքի վերջում որպես հավելված «Արդուլ Համիդի հուշերի հետևից 30 տարի» վերնագրով բաժնում մակարամասն նկարագրվում է հուշերի տետրը 30 տարի փնտրելու և գտնելու արկածային և ինչ-որ տեղ կիսահեքարթային և լուրջ կասկածներ հարուցող պատմություններ: Այստեղ պատմվում է, թե իբրև 1944 թ. աշնանը Բուրսայում «Բողդաղ գրախանուր» է մտել մի կին, որը ցանկացել էր կիլոգրամով գրքեր վաճառել, և դրանց մեջ էր նաև առանց կազմի այս հուշագրությունների տետրը, որտեղ մատիտով գրեթե անընթեռնելի գրված է եղել, որ այս հուշերը պատկանում էն Արդուլ Համիդ 2-րդին: Կինը պատմել է, որ գրքերը մնացել են Օսման Սենայի բեյից, որը, ի դեպ, Մուսթաֆա Քեմալի ուսուցիչն է եղել: Բողդաղը մտածել է, որ սուլթանի հուշերը պետք չէ գաղտնի պահել և

⁸ Նշենք, որ չնայած նրանից առաջ և հետո էլ հրատարակվել է Արդուլ Համիդի հուշերի ևս մի բանի տարբերակ, սակայն մեր ուսումնասիրության հիմքը Բողդաղի աշխատությունն է որպես հուշերի առավել ամբողջական տարբերակ:

⁹ Birinci A., Աշխ. աշխ., էջ 185:

¹⁰ http://www.dailymotion.com/video/x1j0kqn_sultan-abdulhamid-in-uydurma-hatira-defterleri_school

դա քննարկել է նաև որոշ պատմաբանների հետ: Այդ ընթացքում պարզվել է, որ Արդուլ Համիդի օրագրային որոշ գրառումներ են հրատարակվել դեռևս 1919 թ. Լայպցիգում «Ութարիթ» անունով մի ամսագրում: Սակայն Բողդադը որոշում է գտնել և հրատարակել հուշերն ամբողջությամբ: Իր նպատակին հասնելու համար Բողդադը բազմաթիվ դժվարությունների միջով է անցնում: Նախ Արդուլ Համիդի աղջկների միջոցով պարզում է, որ սուլթանի հուշերը հավանաբար տպագրվել են Լայպցիգի «Քոլզե» հրատարակչությունում, որը, սակայն, փակվել էր 1923 թ.: Նա հանդիպում է Ահմեթ Էմին Բեյին, և նրանք գիտակցելով սուլթանի հուշերի կարևորությունը, այնուամենայնիվ, որոշում են ամեն գնով գտնել որա ամբողջական տարբերակը: Վերջապես Գերմանիայում հանդիպում են ուսն Շեթին Սուլեյմանի, ով շատ դժվարությամբ խոստովանում է, որ իր հայրը մահից առաջ իրեն է հանձնել Համիդի հուշերը և ասել. «Լավ պահպանիր, սա իմ լավ ընկեր Արդուլ Համիդի հուշերն են, սրա հետևից շատ մարդիկ են եկել, բայց ես ասել եմ, որ դրանք ինձ մոտ չեն, հավանաբար նրանք երիտթուրքեր են եղել: Ես կարդացել եմ, այստեղ շատ բան կա գրված: Ես չկարողացա հրատարակել, դու դեռ երիտթասարդ ես, դու կիրատարակես, բայց գոռոշ կլինես թշնամիներից»¹¹: Բոլոր նյութերը հավաքելուց և միավորելուց հետո Իսմեթ Բողդադը հրատարակում է դրանք մի գրքով:

Սեկ այլ թուրք պատմաբան և իրավաբան Էքրեմ Բուտրա Էքինջին նույնպես կասկած է հայտնում հուշագրության իրական լինելու հարցում՝ ընդգծելով, որ ընդունված չի եղել սուլթանների կողմից իրենց հուշերը գրի առնելը¹²: Օսմանյան կայսրության վերաբերյալ մի շարք գիտական աշխատանքների հեղինակ էնօֆի Դնենիկ Աքարլըն և կարծում է, որ Հա-

միդին վերագրվող հուշագրությունները իրականում սուլթանին չեն պատկանում¹³: Իսկ գրող Արդուլհամիդ Քըրմըզըն համոզված է, որ հուշերը սուլթանին չեն կարող պատկանել, քանի որ կառավարման ընթացքում հավանաբար ժամանակ չեր ունենա գրելու, իսկ Սալոնիկում եղած ժամանակ էլ իր թիհադականները կարգելեին սուլթանին թոթին հանձնել իր հուշագրությունները, որում կարող էին տեղ գտնել նաև իր թիհադականների գործունեության վերաբերյալ բացասական բնույթի մտքեր¹⁴: Չնայած այս պնդումներին՝ բազմաթիվ պատմաբաններ բավարար իմաստ չեն տեսնում այս հուշագրությունը կեղծ համարելու համար, ավելին, գտնում են, որ դրանում առկա տեղեկությունները բավական արժեքավոր են Արդուլ Համիդ 2-րդի կառավարման ժամանակաշրջանը պատկերացնելու համար: Հուշերի՝ իրականում սուլթանի կողմից գրված լինելու կամ չլինելու հարցում թուրքական պատմագրության մեջ առաջացած հակասական կարծիքների արդյունքում է նաև, որ գիրքն առաջացրել է մեծ հետաքրքրություն:

Ուստիմասիրելով քննարկվող հուշագրությունը մենք փորձել ենք ներկայացնել գրքում տեղ գտած պատմագիտության տեսանկյունից կարևոր և հետաքրքրություն ներկայացնող հուշերը՝ անդրադառնալով հատկապես Հայկական հարցի և հայերի կոտորածների, կայսրությունում նրանց կյանքի ու կարգավիճակի, ինչպես նաև սուլթանի հրամանով հայերի «խոռվությունները» ձևելու և այդ միջոցով հայ ժողովրդին լուեցնելու մասին պատմող հատվածներին:

Համիդը սկսել է իր հուշերը գրի առնել 1917 թ. Բեյերքեյ պալատում տնային կալանքի ընթացքում: Գրքի «Հուշեր գրելու պատճառը» բաժնում սուլթանը գրում է հետևյալը. «Իմ

¹¹ Birinci A., Աշխ. աշխ., էջ 177:

¹² Ekinci E. B., Osmanlı'nın Çöküşü, İstanbul, 2014, s. 48.

¹³ Birinci A., Աշխ. աշխ., էջ 187:

¹⁴ Abdülhamid Kirmizi, Sultan II. Abdülhamid İmparatorluğun Son Nefesi, II. Abdülhamid Modernleşme Sürecinde İstanbul, İstanbul, 2011, s. 23.

կառավարման 33 տարիների ընթացքում կայսրությունում տեղի են ունեցել այնպիսի իրադարձություններ, որոնց մասին միայն ես գիտեմ և ինձ շրջապատող մի քանի մարդիկ: Եվ երեւ այդ մասին ես չգրեմ, և նրանք էլ չպատմեն, ապա այս իրադարձությունները պատմությանն անհայտ կմնան.... գտնում եմ, որ իմ հիշողությունները ոչ միայն իմն են, այլ նաև պատմությանը»¹⁵: Համիդի մտքերը սկզբնական շրջանում գրի է առել Ալի Սուլիմանի անունով մի պալատական գրագիր, սակայն ուսմազանի ժամանակ նրանք գրելը դադարեցրել են, և, ինչպես նշում է Արդուլ Համիդը, ուսմազանից հետո այլև չեն հանդիպել: Միայն որոշ ժամանակ անց որդու՝ Արդուլահիմի միջոցով տեղեկացել է, որ Սուլիման թեյին բանտարկել են պալատի նկուղում: Արդուլ Համիդի դուստր Այշէ Օսմանողուն ես, իր հուշերում անդրադառնալով այս թեմային, նշում է, որ Սուլիման Բեյի բանտարկության պատճառը հոր հուշերը գրի առնելն էր¹⁶:

Իր հուշագրությունում սուլթանը անդրադառել է այն իրողությանը, որ Հայկական հարցը անդադար շրջանառվել է եվրոպական թերթերում, որտեղ հասարակությանը տրամադրել են իր դեմ և անվանել «կարմիր սուլթան»: «Հայկական հարց» վերնագրված բաժնում Համիդը հիշատակում է նաև, որ բրիտանացի պետական գործիչ և գրող Ուիլյամ Գլադստոնը ևս իրեն անվանել է «կարմիր սուլթան»¹⁷: Իսկ հուշագրության «Կարմիր կենդանի» (Kızıl Hayvan-Bete Rouge) վերնագրված բաժնում սուլթանը գրում է, որ այսպես իրեն առաջին անգամ անվանել է ֆրանսիացի փիլիսոփա և գրական գործիչ Փիեր Քիյարը, ով, 1893 թ. զարով Սուլամբուլ, հայկական դպրոցներում չարություն և երկպառակություն է սերմանել: Ուսուցիչներ Սահրոնյանի ու Չոբանյանի հաղորդմամբ Քի-

յարը Սուլամբուլի հայկական դպրոցներում ուսուցչություն է արել, փիլիսոփայության և գրականության դասերին գուզընթաց տվել է նաև «թուրքական լծից ազատվելու» դասեր: Համիդը Սասունում և Զեյթունում առաջացած խնդիրները կապում է Քիյարի անվան հետ, նրան մեղադրելով հայ ժողովրդի շրջանում հակասութանական և ազատագրական քարոզչություն կատարելու մեջ¹⁸:

Հայկական հարցի մասին խոսելիս սուլթանը գրում է, որ այն հայերի հարցը չէ: Համիդն անդրադառնալով ազգային փոքրամասնությունների, մասնավորապես հայերի նկատմամբ Օսմանյան պետության քաղաքականությանը նշել է, որ հայ ժողովուրդը միշտ աշքի և ընկել օսմանյան քաղաքակրթությանը մատուցած ծառայություններով և հավատարմությամբ: Սակայն Ռուսաստանը, հայերի շրջանում հրահրելով խոռվություններ և ազատամբություններ, նպատակ էր հետապնդում խնդիրներ առաջանել Թուրքիայի համար, քանի որ Ռուսաստանը նույնպես չէր ցանկանում, որ հայ ժողովուրդը ձեռք բերի անկախություն և ունենա անկախ պետականություն:

Խոսելով կոտորածների մասին՝ սուլթանը փորձում է խուսափել քրիստոնյաների, հատկապես հայերի կոտորածների պատասխանատվությունից և դրա զիսավոր մեղավոր է համարում ռուսական կառավարությանը: Համիդը խոստովանում է, որ հայ-թուրքական պայքարին վերջ տալու նպատակով Զերի փաշայի զիսավորությամբ գործ է ուղարկել և ճնշել Սասունում տեղի ունեցող ազատամբությունները, պատճառաբանելով, որ հայերի նպատակը թուրք ազգարնակչությանը հրահրելն էր, ինչը կարող էր հանգեցնել խնդիրին եվրոպական տերությունների միջամտությանը: Համիդի հուշերը հայ ժողովրդի ազատամբությունները ճնշելու վերաբերյալ հիմ-

¹⁵ Bozdağ İ., նշվ. աշխ., էջ 141:

¹⁶ Osmanoğlu A., Babam Sultan Abdülhamid, 6. Baskı, İstanbul, 2013, s. 184.

¹⁷ Bozdağ İ., նշվ. աշխ., էջ 55:

նավորում են 1894-1896 թթ. համիլյան ջարդերը, որի ընթացքում սպանվեց ավելի քան 300 հազար հայ:

Համիլյը մի առանձին բաժին է հատկացրել է հայ-երիտրուրքական համագործակցությանը, նշելով, որ երիտրուրքերը լինելով արևմտականացման կողմնակիցներ լուրջ հարաբերություններ էին ձևավորել կայսրությունը մասնաւու և պետականություն ստեղծել ցանկացող հայերի հետ: Մեղադրելով երիտրուրքերին հայերի հետ համագործակցության, երկրում առկա խնդիրների, ողբերգական իրավիճակի և քանակի պարտության համար՝ Համիլյը փորձում է անտեսել այն իրողությունը, որ ինչպես պետության առաջ ծառացած խնդիրները, այնպես էլ հայ ժողովրդի նկատմամբ կիրառված հետագա բոլոր ոճագործությունները սկիզբ են դրվել հենց իր կառավարման ժամանակաշրջանում: Համիլյը գրում է. «Ես չեմ զարմանում, որ հայերը տարված են անկախության մոլոցով, սակայն զարմանում եմ, որ որոշ երիտրուրքեր փախելով Եվրոպա համագործակցում են այդ հայերի հետ: Նրանք ասում են, որ ցանկանում են Օսմանյան կայսրությունը փրկել մասնատումից, սակայն միևնույն ժամանակ համագործակցում են մասնատողների հետ... Անատոլիայի սրտում հայկական պետականություն ստեղծելը հայրենասիրության ապացու յօ է... Այս ամենով դուք հարվածում եք ոչ թե Արդուլ Համիլյին, այլ Օսմանյան պետությանը»: Նա երիտրուրքերին համեմատում է «նոր օսմանների հետ»՝ գտնելով, որ այս երկու խմբերն էլ արևմտականացման կողմնակիցներ են, երկու խմբերն էլ մտածում են որ երկրի փրկության միակ ճանապարհը սահմանադրության մեջ է: Երիտրուրքերի մասին խոսելով՝ Համիլյը նշում է, թե իբրև թուրք մտավորականները հայ «խոռվարարներին», ապստամբներին ծափահարություններով են ընդունել: Սակայն հիմա երկրում առկա խնդիրները, ողբերգական իրավիճակը, բանակի պարտությունը տեսնելով պատմության առաջ իրենց արդարացնելու և հա-

արակական թշնամանքից խուսափելու համար մեղադրում են սուլթանին ասելով, որ այս «կրակը» թողել է Արդուլ Համիլյը: Մեղադրելով հայերին՝ նա իր հուշերում անդրադարձել է նաև իր դեմ կատարված մահափորձին՝ նշելով, որ ոչ մի ազնիվ հայ գիտակցաբար սուլթանի սպանությունը չի ծրագրի¹⁹:

Հայերին, երիտրուրքերին, Եվրոպացիներին բոլոր անհաջողություններում մեղադրելուց հետո Արդուլ Համիլյն ինքն իրեն ներկայացնում է որպես իր երկրի և ժողովրդի համար ամեն ինչի պատրաստ անձնավորություն՝ նշելով, որ ինքն ամեն ինչ անում է իր երկրի և ժողովրդի խաղաղության ու բարգավաճման համար մի կողմ դնելով սեփական զգացմունքներն ու շահերը: Սուլթանը գրում է, որ եթե նույնիսկ ոչ ոք չիմանա և զգնահատի իր կատարած բարի գործերը, Ալլահին և պատմությանը այս ամենը հայտնի է²⁰: Արդուլ Համիլյը անդրադարձել է նաև իր կառավարման տարիներին մոլեգնող գրաքննությանը: Սուլթանը գրում է. «Երբեմն Եվրոպա ուղարկված մարդիկ իրենց հետ Թուրքիա են քերում վնասակար մտքեր, փորձում ցույց տալ Եվրոպական քաղաքակրության առավելությունը: Ես չեմ կարող նրանց դատել իրենց սխալ կյանքի համար, սակայն պարտավոր եմ կանխել, որ նրանք չփոխանցվեն մյուսներին: Եվրոպա ուղարկված երիտասարդներից ումանք, Ֆրանսիայում ծանոթանալով Ֆրանսիական հեղափոխությանը, ժողովրդին հրահրում են ապստամբությունների՝ ուա համարելով հայրենասիրություն: Բնականաբար, ես դա չեմ կարող թույլ տալ: Իսկ նրանք իմ երկրի թշնամիների նման ինձ կոչում են «կարմիր սուլթան»: Ահա այստեղ է, որ գործում էր գրաքննությունը, և ես արգե-

¹⁹ 1905 թ. հուլիսի 21-ին Ստամբուլի Յըլլըր մզկիթում հայ դաշնակցականները կազմակերպեցին Օսմանյան կայսրության սուլթան Արդուլ Համիլյ 2-րդի սպանությունը: Մահափորձը ձախողվեց, իսկ զիսավոր կազմակերպիչ Քրիստոնակոր Սիրայելսանը զոհվեց:

²⁰ Bozdağ I., նշվ. աշխ., էջ 86:

լում եմ միայն նման բովանդակությամբ նյութերի հրատարակումը: Բուկ, օրինակ, գրականության կամ որևէ այլ գիտության ոլորտում ես նույնիսկ խթան եմ հանդիսանում և պետության անունից շնորհակալություն հայտնում»²¹: Նա իրեն համեմատում է վնասակար միջատներից իր ծաղիկները պաշտպանող այգեպանի հետ: Իրականում, սակայն, անհերթելի փաստ է, որ «արյունոտ սուլթանը» դաժանորեն հալածում էր մասնությունը: Նրա օրոր փակվեցին բազմաթիվ թերթեր, եղած մի քանի թերթերը կոչված էին միայն փառարանելու սուլթանին, նրա ներքին և արտօքին քաղաքականությունը: Ուժեղ հսկողության տակ դրվեցին դպրոցները: Հայոց պատմության, աշխարհագրության դասավանդումն արգելված էր ամրող Թուրքիայում. այդ առարկաներին նվիրված գրեթե բռնազրավում էին, այրվում, իսկ ուսուցիչներն ու հեղինակները ենթարկվում պատժի՝ որպես ոճագործներ: Նշենք նաև, որ, կարծես փորձելով արդարացնել սուլթանի վարած քաղաքականությունը, հուշերի խմբագիր Իսմեր Բողդանը գրի վերջում նրան վերաբերող որոշ մեջքերումներ է անում: Օրինակ, մի շարք մեջքերումներով նա փորձում է ապացուցել, որ Արդուլ Համբիդի վախիկոտ և կասկածամիտ լինելու հայտնի փաստը չի համապատասխանում իրականությանը: Մասնավորապես, Բողդանը գրում է, որ նախկին ներքին գործերի նախարար Ռեշիդ Քեյն, իր հուշերում անդրադառնորդ Համբիդին, նշում է, որ նրա նման ազնիվ ու շիտակ մարդիկ շատ քիչ կան²², իսկ աբդուլհամիդյան ժամանակաշրջանի հայտնի դրամատերերից Զարիֆին պատմում է, որ ինքը օսմանյան իշխողների մեջ չի ճանաչում մեկին, ով կլիներ Համբիդի նման տնտեսող, իր հաշիվները իմացող, կապիտալը գնահատող, խելացի և պարզ անձնավորություն²³:

²¹ Նույն տեղում, էջ 101:

²² Նույն տեղում, էջ 191:

²³ Նույն տեղում, էջ 194:

Արդուլ Համբիդի ավելորդ կասկածամտությունը բողարկող պնդումներ կան նաև այլ թուրք պատմաբանների գործերում: Օրինակ, հայտնի թուրք պատմաբան Զուհուրի Դանըշմանը գրում է, որ սուլթանը ոչ թե վախիկոտ էր, այլ զգուշավոր, քանի որ պատասխանատու էր ոչ միայն իր, այլ ամբողջ ազգի համար²⁴: Նա նաև նշում է, որ նման «մեծահոգի» սուլթանը, ով ոչ մի կարիք արյուն չի թափել, չի կարող կոչվել կարմիր սուլթան, նրան կարմիր սուլթան անվանումը տվել են հայերը²⁵:

Օսմանյան պետության և կոնկրետ Արդուլ Համբիդի վարած քաղաքականությունից հայերի «գոհունակությունը» ցույց տալու նպատակով Ի. Բողդանը մեջքերում է որոշ հատվածներ Առաջին սահմանադրական խորհրդի արձանագրությունից: 1877-1878 թթ. ոռու-թուրքական պատերազմի վերաբերյալ մեջիսում քննարկումների ընթացքում Հալեպի հայ պատգամավոր Մանուկ Քարաջա Էֆենդին ասում է, որ հայ ազգը չունի ոռուական պետության աջակցության կարիքը և հայերը շատ գոի են օսմանյան կառավարությունից, նրանք երբեք չեն հեռացել իրենց մուսուլման եղբայրներից և հիմա եւ չեն հեռանանաւ²⁶:

Արդուլ Համբիդի հուշերի ուսումնասիրության արյունքում հաստատվում է այն փաստը, որ Թուրքիայի Հանրապետության հոչակումից հետո տասնամյակներ շարունակ թուրքական պատմագրության մեջ շրջանավոր հակահայ կեղծարարության և Ժիտողականության իմբրերը դրվել են դեռևս Օսմանյան պետության շրջանում, ինչի վառ ապացույցներից մեկն էլ հանդիսանում է սուլթանի կողմից պատմական իրողությունների սուրբեկտիվ և կողմնակալ շարադրումը: Թուր-

²⁴ Danişman Z., Osmanlı İmparatorluğu tarihi XIII, Sultan İninci Abdülhamid Han, İstanbul, 1966, s. 268.

²⁵ Նույն տեղում, էջ 266-267:

²⁶ Bozdağ İ., Աշխ., էջ 211-212:

քական կողմի այս պնդումները, որ օսմանները «հայապահպան» քաղաքականություն են վարել, որ արևմտահայերն ազգային-ազատագրական պայքար երբեւ չեն մղել, իսկ բոլոր հոլովումները հրահրել են արտաքին ուժերը և որ 1894-1896 թթ. կոստրածները սուսկ երկուստեր կորուստներով հայրուրքական ընդհարումներ էին, շրջանառության մեջ են դրվել հենց Արդու Համիդի կողմից:

**АРМЯНСКАЯ ТЕМАТИКА В МЕМУАРАХ СУЛТАНА АБДУЛ
ГАМИДА II**
Татевик Акопян
(резюме)

В своих мемуарах султан Абдул Гамид II, вскользь обращаясь к Армянскому вопросу и резне армян (1894-1896 гг.), пытается представить резню как результат внутренней разобщенности армян и тем самым скрыть истинную сущность своей антиармянской политики. Изучение мемуаров султана дает основание утверждать, что основы политики отрицания и фальсификации исторических фактов, широко распространенная в современной турецкой историографии, заложены еще в Османский период.

1. Հայոց մասին, Ե. Խուման, 1931.
2. Հայոց մասին, Ե. Խուման, 1931.
3. Հայոց մասին, Ե. Խուման, 1931.

**THE ARMENIAN SUBJECT IN THE MEMOIRS OF THE
SULTAN ABDUL HAMID II**
Tatevik Hakobyan
(summary)

The article is devoted to the examination of the reflection of the Armenian question and Armenian massacres (1894-1896) in the memoirs of the sultan Abdul Hamid II. Even though the Red Sultan has only mentioned in passing these problems, he tried to present the Armenian massacres as the result of internal disassociation of Armenians and thus veil the real intentions of his policy towards Armenians. The memoirs of the sultan Abdul Hamid II represents that the policy of denial and falsification of the historic facts widely used in the modern Turkish historiography was initiated in the Ottoman period.

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ «ԴԻԱՍՊՈՐԱՅԻ»
ՆԿԱՏՄԱՄԲ. ՆՈՐ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՈՐՈՌՈՒՄՆԵՐ

Բանալի բառեր՝ թուրքական դիասպորա, դիասպորայի ու ուղղականություններ, Թուրքիայի Հանրապետություն, սփյուռք, կապույտ քարտ, հակահայկական լոբինգ, նեռումանիզմ, պանթեյուրքիզմ

Թուրքական իրականության մեջ «դիասպորա» հասկացությունն ունի հակասական բնույթ: Մինչև 1980-ական թթ. տերմինն օգտագործվել է հայկական, հրեական, խոհ ավելի ուշ նաև հունական սփյուռքը բնորոշելու համար: Բացի այդ, բառն ունեցել է նաև բացասական իմաստ. նշանակել է ձախակողմյան, անջատարար և այլն: Հետաքրքիր է, որ երկրի քա-դաքական և զիտական որոշ պանթեյուրքական շրջանակներ էլ այս հասակցության մեջ ներառում են Կենտրոնական Ասիայում, Բալկաններում, ՌԴ-ում ապրող թյուրքական ժողովուրդներին: Այնուամենայնիվ, վերջիններիս բնորոշելու համար ներկայումս Թուրքիայում օգտագործվում է akarba toplulukları բառակապակցությունը, որը կարելի է քարզմանել որպես բարեկամ հասարակություններ:

Այժմ Թուրքիայում «դիասպորա»-ն կրում է քաղաքական իմաստ, խոհ տերմինի օգտագործումը լայն տարածում է ստացել: Կանադացի զիտնական Բրուքերը գրում է, որ եթե 1970-ական թթ. զիտական աշխատանքներում «դիասպորա» տերմինը որպես բանալի բառ էր նշվել մեկ-երկու անգամ,

իսկ 1980-ական թթ.՝ 13 անգամ, ապա միայն 2001 թ. եզրույթն օգտագործվել է 130 անգամ¹:

Ըստ Էւրիյան, սա կապված էր Թուրքիայի կառավարության՝ դիասպորայի վերաբերյալ մոտեցման և քաղաքականության փոփոխության հետ: Մինչ այդ, արևմուտք և առավելացնելու նվազագույն մեջնած աշխատավորներին բնորոշելու համար օգտագործվում էր gurbetçi (քարզմանաբար՝ պանդուխտ, տարագիր, մեր ընկալման տերմինաբանությանը համապատասխանում է նաև «խոպանչ» եզրույթը) բառը, և միայն 1980-ական թթ. շրջանառության մեջ մտավ «դիասպորա» տերմինը²: Հետաքրքիր է նաև, որ զիտական գրականության մեջ եզրույթը ներառում է միայն Արևմուտքում ապրող թուրքական փոքրամասնությունները:

Աշխատանքային գաղթի առաջին տարիներին թուրքական իշխանությունները զաղ-քականներին դիտարկում էին որպես ժամանակավոր հեռացող աշխատուժ, որն իր աշխատած գումարն ուղարկելու և Թուրքիա՝ այսպիսով նպաստելով երկրի մի շարք տնտեսական խնդիրների լուծմանը: 1964 թ. ընդունվեց թիվ 499 օրենքը, որը խրախուսում էր զաղքականների հավաքած գումարների հայրենիք ուղարկելը: Օրենքը նախատեսում էր հատուկ վարկ այն զաղքականների համար, ովքեր արտաքույթով հաշվեհամար էին բացում³: Արդյունքում, 1960 թ. սկսած Թուրքիան ստացել է տարեկան համարյա \$ 1.9 միլիարդ գումարային փոխանցում: Բացի այդ, Թուրքիան սկսեց խրախուսել նաև Օսմար ուղղակի ներդրումները (FDI), ինչի հոսքը շեշտակիորեն աճեց. Եթե 1980-

¹ Akçay E., Alimukhamedov F., «Reevaluating Contemporary “Diaspora Policy” of Turkey», Suleyman Demirel University, The Journal of Faculty of Economics and Administrative Sciences, vol. 18, n. 1, Kaskelen 2013, p. 106.

² Ünver O., «Changing Diaspora Politics Of Turkey And Public Diplomacy», Turkish Policy Quarterly, v. 12, n. 1, Is-tanbul, Spring 2013, pp. 183.

³ Abadan- Unat N., «Turks in Europe: From Guest Worker to Transnational Citizen», New York, 2011 May, p. 32.

1984 թթ. այն կազմում էր \$ 65.4 միլիոն, ապա 1990–1994 թթ.՝ \$ 716.4 միլիոն⁴:

Արդեն 1970-ական թթ. գումարային փոխանցումները նվազել էին, ինչը կապված էր ընտանեկան վերամիավորման հետ: Պարզ էր դառնում, որ գաղթականները մտադրություն չունեն վերադառնալ Թուրքիա, ինչին հաջորդեցին պետության առաջին քայլերը՝ պայքարելու գաղթականների ասիմիլացիայի դեմ: 1971 թ. Կրոնական գործերի նախարարությունը (Diyane) սկսեց իմասներ և ուսուցիչներ ուղարկել Եվրոպական երկրներ, սկսեցին անցկացվել ժամանակավոր վերադարձի ծրագրեր: Չնայած այս ջանքերին, գաղթականների մեծամասնությունը նախընտրեց մնալ Եվրոպայում:

Դիմապորայի նկատմամբ նոր մոտեցում դրսնորվեց փոխարշապետ, վարչապետ և այնուհետ նախագահ Թուրքության կառավարման շրջանում, եթե իշխանությունները սկսեցին հատուկ ուշադրություն դարձնել թուրքական համայնքների քաղաքականացմանը: 1981 թ. ընդունվեց օրենք երկրադարձության մասին, հոչակվեց Աշխատավորների համակարգման գերազույն խորհուրդը, որն ուներ հասարակական և տնտեսական գործերի կոմիտեներ, իսկ գլխավոր նպատակն էր քաղաքացիներին Թուրքիային մոտ պահելը: 1986 թ. հոչակված մեկ այլ օրենքով հեշտացվում էր քաղաքական համագործակցությունը գաղթականների հետ. վերջիններս կարող էին մասնակցել ընտրություններին մարսային կետերում:

Այս ամենն իր արտահայտումը գտավ նաև 1982 թ. հոչակված սահմանադրության մեջ, որտեղ առաջին անգամ անդրադարձ կատարվեց արտասահմանում բնակչող թուրքերին: 62-րդ հոդվածով ամրագրվում էր. «Պետությունը պետք է

⁴ İçduyu A., Aksel B., «Turkish Migration Policies: A Critical Historical Retrospective», Center for Strategic Research, Perceptions, v. XVIII, n. 3, Autumn 2013, Ankara, p. 175.

անհրաժեշտ քայլեր կատարի՝ ապահովելու ընտանիքի միասնությունը, երեխաների կրթությունը, մշակութային պահանջները, արտասահմանի թուրք աշխատավորների տոյիական անվտանգությունը, միջոցներ ձեռնարկի, որպեսզի վերջիններս պահպանեն կապերը հայրենիքի հետ, օգնի երանց վերադառնալ հայրենիք»⁵:

Արտասահմանի քաղաքացիների համար գործում է նաև այսպես կոչված Կապույտ քարտը (նախկինում՝ Վարդագույն քարտ): Քանի որ կան երկրներ, որոնք երկրադարձություն չեն ճանաչում, իսկ Թուրքիայի կառավարությանը ամեն կերպ խրախուսում է թուրքերի մասնակցությունը տվյալ երկրի քաղաքական, տնտեսական, հասարակական, մշակութային կյանքին, սկսել են գործադրել կապույտ քարտը, որը Թուրքիայի քաղաքացիություն չունեցող թուրքերին հնարավորություն է տալիս օգուզել որոշակի առավելություններից: Այս մասին առաջին օրենքն ընդունվել է 1995 թ., ապա որոշակի կարգավորումներ է մտցվել 2004 թ.: Հարցի վերաբերյալ վերջնական որոշում է ընդունվել 2012 թ., որի համաձայն կապույտ քարտի հետ մեկտեղ թուրքերին տրվում է անձնական համար: Եթե մինչ այս կապույտ քարտ ստանալու իրավունք ունեին միայն նրանք, ովքեր ծնվել են Թուրքիայում, իսկ հետո կորցրել քաղաքացիությունը, ապա նոր կարգավորմամբ վերջիններիս սերունդները ևս կարող են կապույտ քարտ ստանալ: Կապույտ քարտը համարվում է անձնական փաստաթուղթ: Քարտ ունեցողները կարող են աշխատել ՀԿ-ներում, այլ աշխատավայրերում ժամանակավոր և պայմանագրային պայմաններով⁶: Կապույտ քարտ

⁵ Bilgili Ö., Siegel M., «Understanding the changing role of the Turkish diaspora», Maastricht Economic and social Re-search Institute on Innovation and Technology, UNU- MERIT, September 2010, Maastricht, p. 7.

⁶ Mavi Kart Tarihçesi, <http://www.ytb.gov.tr/tr/mavi-kart/757-mavi-kart-tarihcesi>

ստանալու համար անհրաժեշտ է դիմել տվյալ երկրում գործող Թուրքիայի դեսպանատուն կամ հյուպատոսարան, իսկ թույլտվությունը տրվում է Թուրքիայի արտաքին գործերի նախարարության կողմից⁷: Թուրքական իշխանությունները մյուս տարիներին ևս շարունակեցին կառույցներ հռչակել, որոնք զբաղվելու էին արտասահմանի թուրքերով: 1998 թ. ստեղծվեցին Արտասահմանի թուրք քաղաքացիների խորհրդատվական կառույցը (Yurtdışında Yaşayan Vatandaşlar Danışma Kurulu) և Արտասահմանի թուրքերի գերազույն կոմիտեն (Yurtdışında Yaşayan Vatandaşlar Üst Kurulu), որոնք լինելու էին վարչապետի վերահսկողության ներք, ուսումնասիրելու էին զաղթականների խնդիրները, փորձելու էին լուծումներ տալ: Շուտով իր լիազորությունների շրջանակները լայնացրեց նաև Արտաքին հարաբերությունների և արտասահմանի աշխատավորների ծառայությունների զինավոր տնօրինությունը (Dış İlişkiler ve Yurtdışı İşçi Hizmetleri Genel Müdürlüğü), ստեղծվեց Հայրենիք-Խորհրդատվական բյուրոն (Yurt-Danış Bürosu): Վերջին ինստիտուցիոնալ քայլը եղավ Արտասահմանի թուրքերի և քարեկամ հասարակությունների նախարարության (Yurtdışı Türkler ve Akraba Topluluklar Bakanlığı, այսուհետ՝ YTВ) հռչակումը 2010 թ.⁸:

Քայլեր ձեռնարկվեցին նաև համակարգելու հարաբերությունները թյուրքական ժողովուրդների և պետությունների հետ: 1992 թ. ստեղծվեց Թուրքական համազործակցության և համակարգման գործակալությունը (Türk İşbirliği ve Koordinasyon Ajansı, այսուհետ՝ TIKA): Վերջինիս պաշտոնա-

⁷ Yurt Dışında Bulunanların İşlemleri, http://pasaport.iem.gov.tr/?page_id=794

⁸ Aksel B., «Kins, Distant Workers, Diasporas: Constructing Turkey's Transnational Members Abroad», ASN World Convention, Columbia University, April 2013, p. 11,

http://www.migrationpolicycentre.eu/docs/SummerSchool2013/readings/Icd_uugu_Reading%203.pdf

կան կայքում գրված է, որ ԽՍՀՄ կործանումից հետո, եթե Կենտրոնական Սահայի և Կովկասի երկրները անկախություն ձեռքբարձր թյուրքական կառավարությունը որոշում ընդունեց ստեղծել ТИКА-ն, որը զբաղվելու էր տնտեսական, հասարակական, մշակութային գործունեությամբ, իսկ 1995 թ. այն հանդես եկավ նոր նախաձեռնությամբ: այն է կրթությունը Թուրքիայում⁹: Չնայած կառույցը կոչված էր աշխատելու թյուրքախոս ժողովուրդների հետ, 1990-ական թթ. այն համագործակցում էր միայն Աղբքաջանի, Ղազախստանի, Ղրղզստանի, Ուզբեկստանի և Թուրքմենստանի հետ¹⁰, անուշադրության մատնելով Իրաքի թուրքմեններին և բուղարաբուրքերին: Վերջին տարիներին կառույցը ակտիվ գործունեություն է ծավալում Աֆրիկայում:

Դիասպորային ուղղված քաղաքականությունը որոշակիութեն փոփոխվեց ԱԶԿ-ի օրոք: 2011 թ. դեկտեմբերի 23-ին Թուրքիայի ԱԳՆ-ում կազմակերպված կոնֆերանսի ընթացքում դիասպորայի նոր ըմբռնումը ներկայացրեց այն ժամանակված արտաքին գործերի նախարար Սհմեր Դավութօղլուն, ով նշեց, որ ցանկացած անհատ, ով արմատներով «Անտոլիայից» է, անկախ էրնիկ կամ կրոնական պատկանելությունից, համարվում է թյուրքական դիասպորայի անդամ: Սա վերաբերում է հայերին, հույներին: «Մենք պետք է խստենք ամեն հայի, առաքելական եկեղեցու յուրաքանչյուր ներկայա-

⁹ Hakkımızda, <http://www.tika.gov.tr/tr/sayfa/hakkimizda-14649>

¹⁰ Հետարքիք է, որ Խորհրդային Սիոնիրյան վկուզումից հետո, ամերիկյան ամենահայտնի թիկրթանքերից մեկի՝ RAND Corporation-ի վերլուծաբաններից երկուսը՝ Փոլ Հենքը և Գրեհեմ Ֆուլլերը ծրագիր էին մշակել, որի համաձայն Կենտրոնական Սահայի երկրները պետք է զարգանան թյուրքական մոդելով, ինչը նրանց բույլ չէր տա ընկնել ծայրահետ խլամական ազդեցության տակ: Այս ծրագրում Թուրքիային հասկացվում էր հասուն դեր: Վերջինս պետք է հովանավորեր այս երկրներին, նրանց համար օրինակ ծառայեր, կրթեր, կամուրջ հանդիսանար Կենտրոնական Սահայի և Արևմտասրի միջև: Ըստ եռյան, հենց այս ծրագրի շարունակությունն է հանդիսացալ ТИКА-ի ստեղծումը:

ցուցչի հետ, որը գաղթել է Թուրքիայից: Մենք պետք է խոսենք մեր ընդհանուր փառահեղ անցյալից»¹¹:

Այսպիսով, թուրքական իշխանությունները ևս մեկ անգամ փորձում են օգտագործել դիասպորան իրենց քաղաքական նպատակների համար: Նոյն քաղաքական հետաքրքրությունների շրջանակներում դիասպորան դիտվում է որպես կամուրջ Եվրոպայի և Թուրքիայի միջև, որը նպասելու է Թուրքիայի՝ ԵՄ անդամակցությանը: Մյուս կողմից, վերջին տարիներին թուրքական համայնքները հանդես են զայն Հայոց ցեղասպանության ժխտման, Քրդական հարցը Թուրքիայի պաշտոնական տեսակետից ներկայացնելու հարցում:

Թուրքիայի դիասպորային ուղղված քաղաքականության մեջ հատուկ տեղ է հատկացվում մշակութին, որը նախ և առաջ արտահայտվում է Յունուս Էմրեի մշակութային կենտրոնների միջոցով (Yunus Emre Kültür Merkezleri, այսուհետ՝ YEKM): Կենտրոնները, որոնց թիվն արտասահմանում հասնում է 25-ի, մշակութային կամուրջներ է կառուցում հասրակությունների միջև, թուրքական մշակութային ժառանգության, թուրքերնի դասընթացներ է անցկացնում, նպաստում է արտասահմանում Թուրքիայի վարկանիշի բարձրացմանը: Կենտրոնները ֆինանսավորվում են Յունուս Էմրեի ֆոնդի կողմից (Yunus Emre Vakfı, այսուհետ՝ YEV), որի անդամ է Թուրքիայի նախագահը:

Պետք է նշել, որ մշակութային կենտրոնների գործունեության մեջ բացահայտ նկատվում են նեոսմանիզմի տարրեր, քանի որ սրանց միջոցով թուրքական իշխանությունները փորձում են ազդեցություն ունենալ Բալկաններում, Կովկասում, Կենտրոնական Ասիայում, Մերձավոր Արևելքում: Սարաևոյում վերոնշյալ կենտրոնի բացման ժամանակ՝ 2009 թ.

¹¹ Aydin Y., «The New Turkish Diaspora Policy: Its Aims, Their Limits and the Challenges for Associations of People of Turkish Origin and Decision-makers in Germany», SWP Research Paper, October 2014, Berlin, p. 14.

հոկտեմբերի 16-ին, ելույթ ունեցավ Ա. Դավութօղլուն, նշելով: «Սա առաջին կենտրոնն է, որ բացում ենք, և պատահական չէ, որ այն բացվում է Սարաևոյում: Մենք սրա շուրջ շատ երկար ենք մտածել: Եթե որևէ մեկը հարցնի, թե ո՞ր քաղաքն է լավագույն կերպով արտահայտում թուրքական մշակույթը, պատասխանը կլինի՝ Սարաևոն: Եթե Ստամբուլը թուրքական մշակույթին արտացոլող հիմնական քաղաքն է, ապա Սարաևոն արտացոլում է մեր ընդհանուր մշակույթը»¹²:

Վերոնշյալ կառույցների մասին է խոսել նաև Ռեժիփ Թայիփ Էրդողանը. «Արտասահմանում բնակվող եղբայրներ, իմացե՛ք, դուք այլս մրայնակ չեք: Թուրքիայի Հանրապետությունը ձեզ հետ է: TİKA-ի միջոցով մեր ձեռքերը հասնում են աշխարհի բոլոր ծայրերը, տարածում ենք մեր ժառանգական նյութերը: YTB-ի միջոցով բաժանում ենք Թուրքիայի շերմությունը և ուժը, իսկ Յունուս Էմրեի ինստիտուտների միջոցով մենք աշխարհին թուրքերն ենք սպորեցնում»¹³:

Տնտեսական ցանցերի լայնացմամբ է գրադարձ Թուրքիայի առևտրական պալատների և բորսաների միությունը (Türkiye Odalar ve Borsalar Birliği, այսուհետ՝ TOBB): 1986 թ. TOBB-ի վերահսկողության ներքո ստեղծվել է Արտաքին տնտեսական հարաբերությունների կառույցը (Dış Ekonomik İlişkiler Kurulu, այսուհետ՝ DEİK), ինչը հաստատվում է թիվ 5174 օրենքով: Օրենքը ամրագրում է, որ կառույցը գրադարձու է «թուրքական հատուկ արտաքին տնտեսական հարաբերությունները իրականացնելու» գործունեությամբ¹⁴: Այսպիսով, DEİK-ը զարգացնում է արտաքին տնտեսական հարա-

¹² Նոյն տեղում, էջ 18:

¹³ İçduyu A., Aksel B., «Turkish Migration Policies: A Critical Historical Retrospective», *Center for Strategic Research, Perceptions*, v. XVIII, n. 3, Autumn 2013, Ankara, p. 185.

¹⁴ Çahicioglu B., «Dünyada Diaspora Stratejileri: Türk Diasporası İçin Öneriler», *Türk Diasporası ve Türk Dünyası Vizyon 2023*, İstanbul, Tasam Yayıncılık, 2014, s. 79.

բերությունները, աջակցում է ներմուծման և արտահանման լայն ցանցի ստեղծմանը, թուրքական ապրանքանիշի՝ արտասահմանում տարածմանը և այլն: 2011 թ. նոյեմբերի տվյալներով DEİK-ը ներառում է 800 անդամ կազմակերպություն, 34 կառուցղական խորհուրդ, 103 աշխատանքային խորհուրդ, 108 գրասենյակային ներկայացություն և 3 արտասահմանյան ներկայացություն¹⁵: TOBB-ի և DEİK-ի համատեղ որոշմամբ 2008 թ. ստեղծվել է Աշխարհի թուրքերի աշխատանքային խորհուրդ (Dünya Türk İş Konseyini, այսուհետ՝ DTİK):

DEİK-ի ղեկավարությունը պարբերաբ հանդիս է զայիս տարեր զիտաժողովների, կոնֆերանսների ժամանակ՝ առաջարկելով դիասպորայի հետ հարաբերություններ զարգացնելու իր ծրագրերը: Հատուկ ուշադրության է արժանի Թուրք-ասիական ուսումնական հետազոտությունների կենտրոնի¹⁶ (Türk Asya Stratejik Araştırmalar Merkezi, այսուհետ՝ TASAM) կազմակերպած կոնֆերանսը, որի ընթացքում ելույթ են ունեցել ոչ միայն ներկայացուցիչներ DEİK-ից, այլև ձեռնարկատերեր, զիտնականներ, նախարարներ, քաղաքական գործիչներ: Կոնֆերանսը վերնագրված է եղել «Türk Diasporası ve Türk Dünyası Vizyon 2023», թարգմանարար՝ «Թուրքական դիասպորայի և թյուրքական աշխարհի 2023 թ.

¹⁵ «Dünyada Diaspora Stratejileri: Türk Diasporası için Öneriler», Dış Ekonomik İlişkiler Kurulu (DEİK) Kasım 2011, pdf, s. 1.

¹⁶ TASAM-ը թուրքական ամենահայտնի ուղեղային կենտրոններից մեկն է, որի անցկացնում է տնտեսական, մշակութային, պատմական, քաղաքական, իրավական, սոցիալական, միջուկային հետազոտություններ, իր տասնամյա գործունեության ընթացքում կարողացել է կապեր հաստատել տարբեր երկրների, այդ քվում Ա-դըրքեցանի, Վրաստանի, ՌԴ և միջնասիական հանրապետությունների հեղինակավոր «մտավոր կենտրոնների» հետ, ստեղծել համագործակցության ձևաչափեր: Այս մասին ավելի մակարման տես' Սիմավորյան Ա., «Հայկական խնդիրները Երրորդ համաշխարհային թյուրքական ֆորումի օրակարգում»,

http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=12886

տեսլականը»: Կոնֆերանսի շրջանակներում անդրադարձ է կատարվել Հայոց ցեղասպա-նության 100-ամյակին ընդառաջ կատարվելիք գործողություններին: Հարկ ենք համարում ներկայացնել դրանցից մի քանիսը:

Նախ պետք է խոսել DEİK-ի տնտեսական ծրագրի մասին, որն առաջարկում է զարգացնել Թուրքիա-դիասպորա հարաբերությունները չինական, հնդկական և խրայելական սփյուռքերի մոդելով: Այսպիսով, առաջարկվում է արտասահմանում թուրքական կազմակերպությունների, հկ-ների ավելի լայն ցանց ստեղծել, խրախուսել երիտասարդ, կին ձեռնարկատերերին, ամեն տարի կազմակերպել «Դիասպորայի հաջողակներ» մրցանակարաշխություն, որտեղ կլինեն՝ դիասպորայի լավագույն ձեռնարկատեր, դիասպորայի լավագույն կին ձեռնարկատեր, դիասպորային լավագույն երիտասարդ ձեռնարկատեր, դիասպորայի կյանքի նվաճումներ և այլ անվանակարգեր¹⁷: Նաև առաջարկվում է Թուրքիա քերել մի շարք թուրք երիտասարդների՝ կրթություն ստանալու, ապա նրանց գումարային աջակցություն ցուցաբերել, որպեսզի վերջիններս վերադառնան իրենց երկրները, կազմակերպություններ բացեն, ինչպես նաև ներդրումներ կատարեն Թուրքիայում: Ծրագրում հատուկ կետ է նվիրված նաև արտասահմանում թուրքական ռեստորանների վարկանիշի բարձրացմանը:

«Թուրքական դիասպորայի և թյուրքական աշխարհի 2023 թ. տեսլականը» կոնֆերանսի ժամանակ Հայոց ցեղասպանության 100-ամյակի, հայկական սփյուռքի լոբբիստական գործունեության մասին է խոսել Ա.ԶԿ պատգամավորներից մեկը՝ Իդրիս Բալը: Վերջինս, անդրադառնալով 2015 թ. ընդառաջ հայկական կողմի իրականացրած գործողություններին,

¹⁷ Çalıcıoğlu B., «Dünyada Diaspora Stratejileri: Türk Diasporası İçin Öneriler», Türk Diasporası ve Türk Dünyası Vizyon 2023, İstanbul, Tasam Yayınları, 2014, s. 84.

առանձնացրել է ՀՀ Սփյուռքի նախարարության ստեղծումը, իսուել է ԱՄՆ-ում և Ֆրանսիայում հայկական համայնքների գործունեության մասին, ինչպես նաև նշել է, որ այս ամենի պատասխանը Թուրքիան տալու է 2023 թ.՝ հանրապետության հոչակման 100-ամյակին: Ըստ պատգամավորի, այդ ժամանակ Թուրքիան լինելու է աշխարհի ամենազարգացած տնտեսությունն ունեցող 20 երկրներից մեկը, ինչին հասնելու համար կարևորվում է թուրքական դիասպորայի դերը¹⁸:

Թուրքիայի կառավարության և դիասպորայի համար նախատեսված առաջարկների փաթեթով է հանդես եկել 2005–2009 թթ. Գերմանիայի դաշնային խորհրդարանի, ԵՄ խորհրդարանի պատգամավոր, Գերմանիա–Թուրք–ադրբեյջանական միության դեկանար Քեսքին Հարքըն: Նրա խոսքերով, Թուրքիան պետք է շարունակի հանդես գալ հայ և թուրք գիտնականների համատեղ խմբի ստեղծման առաջարկով, քանի որ սա բարձրացնում է Թուրքիայի վարկանիշն արտասահմանում: Բացի այդ, թուրք գիտնականները պետք է շարունակեն ուսումնասիրություններ անցկացնել ԱՄՆ-ի, ՌԴ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Հայաստանի արխիվներում, պետք է հասուկ դոկտորական կրթաթոշակ սահմանվի օտարերկրացի այն երիտասարդների համար, ովքեր պաշտպանում են թուրքական պաշտոնական թեզը: Հատուկ մասնագետների խումբ պետք է ստեղծվի ուսումնասիրելու ԱՄՆ-ի, Հոլանդիայի, Բելգիայի, Անգլիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի պատմության էջերը, որպեսզի փաստեր ներկայացվի տվյալ երկրների իրականացրած ցեղասպանությունների մասին: Հատուկ կետ է առանձնացվում նաև հայկական սփյուռքի լորրիստական գործունեության հակադարձմանը, որի հարցում կարևոր դեր է հատկացվում նաև թյուրքական

աշխարհին¹⁹: Ըստ Քեսքինի, թյուրքական պետությունները Թուրքիային և Ադրբեյջանին պետք է աջակցեն նաև ԼՂ հիմնահարցի լուծման հարցում²⁰:

Եվ վերջում կցանկանայինք հատուկ անդրադարձ կատարել Ուսմիթ Օզդաղի ելույթին, ով ներկայումս «21. Yüzyıl Türkiye Enstitüsü»-ի (21-րդ դար Թուրքիա ինստիտուտ) նախագահն է²¹: Վերջինիս առաջարկները կարելի է ներկայացնել մի քանի կետով. առաջին կետը վերաբերում է հայկական սփյուռքին թյուրքական ազգանուններ և անձնազրեր տալուն: Գիտնականը գտնում է, որ հայկական սփյուռքին պետք է հնարավորություն տալ մասնակցել Թուրքիայում անցկացվող ընտրություններին: Երկրորդ կետի շրջանակներում Օզդաղը անդրադառնում է մինչև 2023 թ. կատարվելիք գործողություններին, որոնք բաժանում է երեք մասի. 1. մինչև 2016 թ. կատարվելիք քայլեր. նախատեսվում է դադարեցնել Հայաստանի քաղաքական, հոգեբանական հարձակումները, 2. մինչև 2018 թ. կատարվելիք քայլեր. նախատեսվում է դադարեցնել հայկական «պնդումների» համաշխարհային տարա-

¹⁹ Ադրբեյջանը և Թուրքիան թյուրքական աշխարհին ուղղված հականակական քարում Խալամական կոնֆերանս կազմակերպության շրջանակներում ևս, կոնֆերանսի յուրաքանչյուր հանդիպման ժամանակ խուելով «ազրեսոր Հայաստանի» և «կեղերված ադրբեյջանցի զարդարանների» մասին: Այս մասին ավելի մանրամասն տես՝ Փաշայան Ա., «Խալամական կոնֆերանս կազմակերպություն. նպատակներ, կառուցվածքը, դիրքորոշումը Ղարաբաղյան հարցի նկատմամբ», ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2003:

²⁰ Keskin H., «Ermeni Diasporalari Vizyon 2015 ve Türk Diasporalari Vizyon 2023», Türk Diasporası ve Türk Dünyası Vizyon 2023, İstanbul, Tasam Yayıncıları, 2014, s. 275:

²¹ Մինչ այդ Օզդաղը դեկանար է «Հայկական հետազոտությունների ինստիտուտ» (Ermeni Araştırmaları Enstitüsü), որը գործել է Թուրքիայի Եվրասիական ռազմավարական հետազոտությունների կենտրոնին կից, սակայն 2009 թ. ինստիտուտը փակվել է: Ամբավորյան Ա., Հովհաննես Ս., «Արտերկրի հայագիտական կենտրոնները. ներուժի գնահատում», Երևան, 2014, էջ 32:

¹⁸ Bal İ., «Ermeniler 2015 İçin Hazırlanıyor...», Türk Diasporası ve Türk Dünyası Vizyon 2023, İstanbul, Tasam Yayıncıları, 2014, s. 270.

ծումը, 3. մինչև 2023 թ. կատարվելիք բայլեր. նախատեսվում է Ֆրանսիայում, Լիտվայում, Գերմանիայում Հայոց ցեղասպանությունը ճանաչող օրինագծերը չենյալ հայտարարել: Այս պետությունների ընտրությունը պատահական չէ. Ֆրանսիայի դեպքում կարևոր դեր է խաղալու երկրի առաջնորդը, Գերմանիայում նպատակն իրականացվելու է թուրքական ուժեղ լորրինզի միջոցով, իսկ Լիտվայում էլ դա հնարավոր է դառնում թույլ համակարգի շնորհիվ²²:

Օգդաղը նշում է, որ պետք է գիտնականների փոքր խումբ գործողի Ալժիր և Մարոկկո, որտեղ վերջիններս հետազոտություններ կանցկացնեն և փաստեր կրերեն Ֆրանսիայի իրականացրած ցեղասպանության վերաբերյալ: Այս ցեղասպանության հարցը օրակարգ բերելու համար թուրքական կողմը պետք է կրթաթոշակներ սահմանի նաև ալժիրցի և մարոկկացի գիտնականների համար: Հակաֆրանսիական գործողությունների շրջանակներում վերջինս առաջարկում է Ֆրանսիայի հետ դիվանագիտական հարաբերություններն իշենել ամենացածր մակարդակի, պայքարել Թուրքիայում ֆրանսիական դպրոցների բացման դեմ, իսկ արդեն գործողների վրա ավելի ուժող վերահսկողությունն սահմանել: Օգդաղը խորհուրդ է տալիս նաև դադարեցնել Ֆրանսիայի հետ գինվորական վարժանքները, ինչպես նաև հակաֆրանսիական քարոզություն անցկացնել Բուալիայում, քանի որ ներկայիս Նիցցան, որը գտնվում է Ֆրանսիայի կազմում, պատմական իտալական տարածք է, այստեղ է ծնվել Գարիբալդին, իսկ խտալացների մոտ ազգայական զգացմունքներ առաջանելով՝ հնարավոր է Ֆրանսիայի նկատմամբ ատելություն սերմանել:

Հատ թուրք գիտնականի, Լիտվայում հնարավոր է հասնել իրենց նպատակին՝ շատ քիչ աշխատանք տանելով: Նախ և

առաջ պետք է Թուրքիա հրավիրել լիտվական լրատվամիջոցներին, մամլո ասուլիս անցկացնել, ներկայացնել «իրականությունը»: Լիտվերեն հարուստ գրականություն պետք է թարգմանել, պետք է ցույց տալ տնտեսական հարաբերություններ պոտենցիալը, կրթաթոշակներ սահմանել լիտվացի գիտնականների համար: Օգդաղի առաջադրած երրորդ կետը վերաբերում է հայագիտական ուսումնասիրություններին, ինչը նրա խոսքերով պետք է առաջնային լինի: Բոլոր արժեքավոր աշխատանքները պետք է տպագրվեն աշխարհի տարրեր լեզուներով: Գրագետ և հասկանալի թարգմանության համար այս գիտնականներին պետք է տրվեն կրթաթոշակներ, հնարավորություն ստեղծվի վերջիններիս համար մի քանի տարի ապրել տվյալ երկրներում լեզվին ավելի լավ տիրապետելու համար: Թուրքիան պետք է ֆինանսավորի նաև իր պաշտոնական թեզը պաշտպանող օտարերկրացի գիտնականներին: Հետաքրքիր է, որ թուրք գիտնականը, խոսելով թարգմանվող գրականությունից, նշում է, որ Հայաստանում այս աշխատանքն իրականացվում է բարձր մակարդակով, իսկ թուրքերը զիջում են անգամ РКК-ականներին:

Իր ելույթում մի առանձին կետ է Օգդաղը նվիրել է ԼՂ հիմնախնդրին և Խոչալուի «ցեղասպանությանը»: Հստ նրա, թուրք-ադրբեջանական համատեղ ուժերով պետք է հասնել «ցեղասպանության» ճանաչմանը, ինչի համար գիտնականը առաջ է քաշում վերոնշյալ առաջարկությունները:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Թուրքիայի իշխանությունները դեռևս չունեն կոնկրետ մշակված դիասպորայի քաղաքանություն, բայց շարունակում են լավագույն տարբերակներ փնտրել իրենց տնտեսական, քաղաքական նպատակներին հասնելու համար: Այս ամենին հասնելու համար նրանք օգտագործում են արդեն վաղուց փորձված և նոր զաղափարախոսությունները՝ պանթյուրքիզմը, նեռումանիզմը և այլն:

²² Özdağ Ü., «2015 Yaklaşınca», Türk Diasporası ve Türk Dünyası Vizyon 2023, İstanbul, Tasam Yayıncıları, 2014, s. 287.

ПОЛИТИКА ТУРЕЦКОЙ РЕСПУБЛИКИ ПО ОТНОШЕНИЮ К ДИАСПОРЕ: В ПОИСКАХ НОВЫХ СТРАТЕГИЙ

*Сона Карапогосян
(резюме)*

По официальным данным турецкого МИДа, за границей живут 5 миллионов турков, из которых 4 миллиона в Европе. Уже с начала 1980-х гг. правительство Турецкой Республики начало создавать новые организации, которые будут работать с диаспорой. Турция выделяет диаспоре важную роль- они должны быть мостом между Турцией и Европейским Союзом, должны распространять турецкие официальные версии по отношению нескольких важнейших проблем страны, а также бороться против армянского лоббинга. В тоже время правительство Турецкой Республики продолжает использовать в своих стратегиях такие идеологии, как пантюранизм и неоосманализм.

THE POLITICS OF REPUBLIC OF TURKEY TOWARDS TURKISH DIAPORA: IN SEARCH OF NEW STRATEGIES

*Sona Karapoghosyan
(summary)*

According to official data of Ministry of Foreign Affairs of Republic of Turkey there are 5 milion turks living abroad, while 4 milion of them are living in Europe. From the start of 1980s the government of Turkey started to establish organizations to work with Turkish diaspora. For Re-public of Turkey diaspora has an important role- they can be as a bridge between Turkey and Europe Union, can spread Turkish official views on some essential issues of country, as well as work against Armenian lobby. At the same time, Turkey continues using such ideologies as Pan - Turkizm and Neo – Osmanizm in its strategies.

Լարիսա Ալեքսանյան

ԶԳԵՆԵԲՈՒՐԻՆԵՐԸ (ԽՍԼԱՄԱՑԱԾ ՎՐԱՅԻՆԵՐ) ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԱՐԴԻ ԻՐԱՎԻՃԱԿ

Բանալի բառեր՝ Օսմանյան կայսրություն, Թուրքիայի Հանրապետություն, իսլամացում, ձուղում, վրացի, չվեներուրի, Աջարիա

Պատմական տարրեր ժամանակահատվածներում Հարավային Կովկաս են ներխուժել նվաճողներ, որոնք հաստատվելով նոր տարածքներում ձգտել են ձուղել տեղի բնակիչներին, այդ թվում և վրացիներին: Այդ ձուղողական քաղաքականության հիմնական մեթոդներից մեկն էլ եղել է բոնի կրոնափոխումը՝ իսլամացումը: Թյուրքերից առաջ այս տարածքները բափանցած իսլամադավան արաբները, իրենց տիրապետությունը հաստատելով նաև Վրաստանի վրա, ձգտել են տեղի բնակչությանը իսլամացնել: Պատմաբան Վ. Ռումանվակին այդ մասին գրում է. «.... Որոշ ժամանակ անց Վրաստանը ենթարկվեց ամայացման արաբական արշավանքների հետևանքով, որոնց նպատակն էր նաև իսլամի տարածումը Վրաստանում և Հայաստանում»¹: Այս մտքի կարծես տրամաբանական շարունակությունն են Խ. Գուրեանի խոսքերը. «...Հարիւր ութառն տարիներ Վրաստան ուժնակոի եղավ Արաբներէ, որը սրով կստիպէին բնակիչները ընդունիլ իսլամութիւնը»²: Բացի մահվան սպառնալիքը, որը կիրառվում էր

¹ Романовский В., Очерки из истории Грузии, Тифлис, 1902, стр. 71.

² Գուրեան Խ., Վրացիներ և Վրաստան, Արև օրաթերթ, Ալեքսանդրիա 1917, թիվ 111 (267), Յունվարի 26, էջ 2:

նաև վրաց իշխանների ու թագավորների նկատմամբ³, բռնի իսլամացման քաղաքականության ավանդական մեթոդներից էր ծանր հարկային լուծը, որից խուսափելու նպատակով շատերը ընդունում էին իսլամ: Հստ արաբների սահմանած «Պաշտպանական կանոնադրության» այն վրացիները, որոնք դառնում էին իսլամադավան, համարվում էին արաբների եղբայրները և ազատվում էին իրենց համար սահմանված հատուկ հարկերից⁴: Մրա հետևանքով և եկվոր արաբների հաշվին մասնավորապես Թիֆլիսում ձևավորվեց մուսուլմանական համայնք, որը ժամանակի ընթացքում բավական ընդլայնվեց և կոնսոլիդացվեց⁵: Աստիճանաբար մեծացավ նաև համայնքի քաղաքական դերը, որը 9-րդ դարի կեսերից սկսեց անկում ապրել և արդեն վրաց թագավոր Դավիթ Շինարարի կողմից 1122 թ. Թիֆլիսի ազատազրումից⁶ հետո բավական թուլացավ: Կորցնելով քաղաքական նշանակությունը՝ համայնքն այնուհանդերձ շարունակեց պահպանել իսլամական աշխարհում մշակութային ու գիտական կենտրոնի իր դերը: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ արաբների տիրապետության օրոր բռնի իսլամացման քաղաքականությունը լայնամասշտաբ բնույթ չի կրել՝ դրսորվելով զուտ առանձին շրջաններում:

³ Տե՛ս Վաչնաձե Մ., Գուրուլի Բ., Բախտաձե Մ., Իстория Грузии, Грузия в VII-VIII веках. http://www.gumer.info/bibliotek_Buks/History/Vachn/05.php, նաև՝ Ռомановский В., указ. соч., стр. 72.

⁴ Խալաբեկանց Բ., Արարացի մատենագրեր Հայաստանի մասին, Վիեննա, 1919, էջ 46-47: http://greenstone.flib.sci.am/gsdl/collect/hajigirqn/book/arabaci_matenagrer_index.html

⁵ Asatrian G., Margarian H., The Muslim Community of Tiflis (8th-19th Centuries), Iran and the Caucasus, Vol 8, No. 1 (2004), p. 31.

⁶ Ռոմանովский В., указ. соч., стр. 77.

Նոյնը չի կարելի ասել արդեն սեղուկ-թուրքերի մասին, որոնք առավել մոլեռանդ գտնվեցին⁷: Այսպես, եթե 11-րդ դարի սկզբին թյուրքական տարրը թափանցեց Փոքր Ասիա, առեղծեց պետական կազմավորումներ և սկսեց էլ ավելի ընդարձակել իր նվաճումների աշխարհազրությունը, նա իր առջև նպատակ դրեց զավթած տարածքներում ստեղծելու իսլամադավան մեծամասնություն, քանզի այդ ժամանակ բնակչության գերակշռող մասը ոչ մուսուլմաններն էին: Վերջիններիս թվական գերակշռության մասին են խոսում Վիլեամ Ռուբրուկի և այլ հեղինակների հաղորդումները, որոնցում մասնավորապես նշվում է, որ «Էկոնիոյ Սելճուք Ռումի սուլթանութեան (1080-1300 թթ.) բնակչութեան տասից մեկը մահմեդական է եղել և ինը քրիստոնեայ»⁸: Բնակչության այս հարաբերակցությունը փոփոխելու և իրենց բացարձակ մեծամասնությունը ապահովելու նպատակով թյուրքերը ձեռնամուխ եղան բնիկ ծողովուրդների ձուլման քաղաքականությանը, որի անլյունարարը դարձավ բռնի իսլամացումը:

«Սելճուքները սկզբի շրջանում իրենց տիրապետած երկրներում շատ աւերտումներ են կատարում և շատերին ստիպում են, որ իսլամություն ընդունեն»⁹: Գ. Ամասունու այս խոսքերը վկայում են այն մասին, որ սեղուկները նոր տարածքներում հաստատվելուց հետո սկսեցին խառնվել և, որ ամենակարենը է, ձուլել զավթած շրջանների բնակչությանը: Ինչպես նշում է արևելագետ Դմիտրի Երեմեևը. «Թյուրքերի նստակյաց դառնալը սկսված էթնիկական պրոցեսների միջողմն էր միայն: Մյուս կողմը նվաճված բնակչության իսլամացումը:

⁷ Абу Халид Аль- Газали, Воскрешение наук о вере (перев. В.В. Наумкина), Москва 1980, стр 25.

⁸ Ամասունի Գ., Դարերու ընթացքին թրքացած հայեր, քրտացած հայեր, Նայիրի շաբաթաթերթ, Բեյրութ, 1980, 15 մայիս, թիվ 1-2:

⁹ Նոյն տեղում:

մացումն էր, որը հետագայում հաճախ վերջանում էր թյուրքացմամբ¹⁰:

Ուստի տրամաբանական է, որ սելջուկ-թուրքերը 1071 թվականի Մանազկերտի ճակատամարտից հետո նվաճելով Վրաստանի մեծ մասը և հաստատվելով այդ վայրերում՝ ձեռնամուխ եղան տեղի բնակչության բոնի իսլամացմանը: Ռուսական բանակի գեներալ, պատմաբան Վ. Պուտոռն նկարագրելով այդ պերիշ արշավանքները, նշում է, որ դրանց գումարվեցին նաև բնության սարսափելի առեսները, որոնք ժողովուրդը ընդունում էր որպես Աստծո պատիճ՝ հավատություն համար¹¹, քանզի այդ ժամանակ բնակչության շրջանում կրոնափոխության դեպքերը բավական շատ էին:

Հարկ ենք համարում նշել, որ ինչպես արաբների, այնպես էլ սելջուկների տիրապետության շրջանում վրացիների խլամացման հիմնական մեթոդներից մեկը շարունակում էր մնալ հարկային քաղաքականությունը: Դրա ապացույցներից է օրինակ այն փաստը, որ Սելջուկյան առաջնորդ Ալփ-Ասլանը վրաց թագավորից խաղաղության դիմաց պահանջել էր կամ կրոնափոխություն կամ զիզիե հարկի վճարում¹²: Դ. Երեմեսը նշում է. «Սուտուլմանները Ռումի սուլթանությունում, ինչպես նաև ավելի ուշ Օսմանյան կայսրությունում և ընդհանրապես բոլոր մուսուլմանական պետություններում, վճարում էին ավելի քիչ հարկեր, քան այլ կրոն դավանողները»¹³.

¹⁰ Երեմես Դ., Թուրքերի ծագումը, Երևան, 1975, էջ 138-139:

¹¹ Потто В., Кавказская война, том 1, Санкт-Петербург, 1899. <http://www.vehi.net/istoriya/potto/kavkaz/21.html>

¹² Özdemir V., XII. ve XIII. Yüzyılda Türk-Gürcü münasebetleri (Türkiye Selçukları ve Doğu Anadolu Türk beylikleri döneminde), Yüksek Lisans Tezi, Selçuk Üniversitesi, Konya, 2011, s. 20. <http://acikerisim.selcuk.edu.tr:8080/xmlui/bitstream/handle/123456789/1437/30889.pdf?sequence=1>

¹³ Еремеев Д., На стыке Азии и Европы. очерки о Турции и турках, Москва, 1980, стр. 36.

Սակայն վերոնշյալ փաստերից չպետք է եղակացնել, որ վրացիների կողմից իսլամի ընդունումը եղել է «կամովին» (շահշված առանձին դեպքերը), ինչպես պնդում են թուրք հեղինակները¹⁴: Իրականում այն գերակշիր դեպքերում տեղի է ունեցել բոնի մեթոդների ազդեցության տակ՝ մեծապես կիրառվելով մահվան սպառնալիքը: Անողջակիորեն դրա մասին է փաստում թուրք ուսումնասիրող Ի. Թէլիօլլուի հակագիտական պնդումներով և խեղաթյուրումներով լեցուն հոդվածում տեղ գտած այն միտքը, որ կրոնական կոնֆլիկտը, իր հիմքում ունենալով մուսուլման թյուրքերի կրոնական պատերազմը՝ զիհաղը ընդդեմ Վրաստանի, և վերջինիս դիմադրությունը հանուն իրենց քրիստոնեական հավատքի և անկախության պահպանման, միջնադարում թուրք-վրացական հարաբերությունների ձևավորման վճռորոշ գործոնն է եղել¹⁵:

Թյուրքական գինանցում առկա բոնի իսլամացման քայլականությունը էլ ավելի կարևորվեց արդեն Օսմանյան կայսրությունում: Յ. Դարբինեանը «Արև» օրաթերթում լույս տեսած իր հոդվածներից մեկում անդրադառնալով կրոնական բռնաձնշումներին, նշում է, որ բոնի իսլամացման քայլականությամբ «օսմանցի խալիֆները մոռցնել տուին եւ ստուերի մեջ թողուցին իրենց նախորդները: Կրօնական մոլեունադութիւնը թուրք-թաթարական մորթի մեջ աւելի դաժան դարձած էր»¹⁶:

¹⁴ Özdemir V., a.g.e., s. 96.

¹⁵ Telioğlu İ., Orta Çağda Türk-Gürcü Münasebetlerini Şekillendiren Faktörler, VI, 6/2012, ICANAS 38 uluslararası Asya ve Kuzey Afrika Çalışmaları Kongresine (Ankara, 10-15 Eylül 2007), s. 3077. <http://www.ayk.gov.tr/wp-content/uploads/2015/01/TELL%C4%80%C4%9EFLU-%C4%B0brahim-ORTA-M%C3%9CNASEBETLER%C4%80N%C4%80-B0-C5%9EEK%C4%80BOLLEND%C4%80REN-FAKT%C3%96RLER.pdf>

¹⁶ Դարբինեան Յ., Կրօնական հայածանը և հակակրոն պայքար, «Արև» օրաթերթ, Կահիրե, 1930, թիվ 3374, մարտի 7, էջ 1:

Իշխան Ս. Շերվաշիձեն ընդգծում է, որ Կոստանդնուպոլիսի և Տրապիզոնի նվաճումից հետո «Մուսուլման կառավարիչների նպատակը դարձավ լիովին ոչնչացնել Վրաստանը, Վերջինիս բնակիչներին վերածել մոլեռանդ մուսուլմանների և քարթվելական ժողովրդի տարածքները բնակեցնել եկվոր տարրերով...»¹⁷: Ուստի պատահական չէ, որ 16-րդ դարի սկզբից իրենց տիրապետությունը հաստատելով Արևմտյան (Դմերեթիա), հետագայում նաև հարավ-արևմտյան (Սամցխե-Սաարաբագո) Վրաստանում, օսմանցիները ձեռնամուխ եղան տեղի քրիստոնյա բնակիչների բռնի կրոնափոխման քաղաքականությանը:

Պատմական բոլոր դեպքերի համարությունը ցույց է տալիս, որ Օսմանյան կայսրությունում վրացիների խլամացման գործընթացը բավական հետաքրքրական ուղղվ է զարգացել արտահայտվելով 2 հիմնական մակարդակներում: Այսպես, Օսմանյան կայսրության՝ վրացիների բռնի կրոնափոխման առաջին մակարդակում տեղի էր ունենում վրաց վերնախավի կամովին խլամացումը¹⁸: Վերջիններս ելեկով իրենց նեղ անձնական շահերից սեփական իշխանությունն ու հարստությունը պահպանելու նպատակով կամովին ընդունում էին խլամ, դառնում Օսմանյան կայսրության սիրելիները, ստանում կոչումներ և անզամ բարձր պաշտոններ արքունիքում¹⁹: Յ. Տաշեանը, ներկայացնելով օսմանցիների կողմից Թորթումի նվաճումը և տեղի վրացիների խլամացու-

¹⁷ Эристов-Шарвашидзе Н., Памятная записка о нуждах грузинского народа, Москва, 1906, стр. 9.

¹⁸ Sh'u Gül M., Türk-Gürcü ilişkileri ve Türkiye Gürcüler, SAÜ Fen Edebiyat Dergisi 2009, Cilt 11,sayı 1.s. 85-86. http://www.fed.sakarya.edu.tr/arsiv/yayinlenmis_dergiler/2009_1/2009-1-M-6.pdf

¹⁹ Çevikalp M., Ottoman Gerogians: A noble history marked by grand viziers sultans' mothers, Today's Zaman, 18.03.2011. http://www.todayszaman.com/features_ottoman-georgians-a-noble-history-marked-by-grand-viziers-and-sultans-mothers_238458.html

մը, նշում է: «...Թուրքերը Պարսից դեմ.... պատերազմելով տիրեցին ԹորթումիԱրարեկութեան հողերուն, զորոնք պահեցին 1590 դաշամբ մինչեւ 1828: Ամիջապէս կը սկսէր հալածանքը. եւ նախ մանր իշխաններէն մաս մը՝ անձնական շահերու համար կը մահմետականանար, և աթարեկ Բեզակ Գիր իշխանութիւնը փրկելու համար, մահմետական կըլլար ինքնին՝ առնելով Սաֆար փաշա անունը...»²⁰: Ս. Գյուլն էլ իր հերթին հիշատակում է վրաց Յ եղբայրների, որոնք կրոնափոխու ու անվանափոխու լինելով՝ դարձան ազգությամբ վրացի առաջին սահչակբեկերը²¹: Իսկ ահա 17-րդ դարից սկսած շուրջ երկու դար վրացական իշխանությունների ու թագավորությունների գահին են արժանանում խլամացած վրացի կառավարիչները²², որոնք դառնալով իրանի կամ Օսմանյան կայսրության խամաճիկը՝ մշտական երկպառակշական կորիվների մեջ էին գտնվում: Օսմանցիներն ու իրանցիները «հաշտեցնելու» նպատակով մշտապէս միջամտում էին այդ խոռվություններին իրականում ավելի սրելով դրանք և գործադրելով կրոնական բռնություններ: Ինչպէս նշում է Վ. Ռոմանովսկին, նրանց նպատակն էր այդ կերպ «Վրաստանում մարել քրիստոնեական հավատքի լույսը և տարածել խլամ»²³: Պատմությանը հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ վրաց վերնախավում հայր-որդի, եղբայր-եղբայր անվերջանալի պայքարը ավարտվել է նրանցից մեկի հավատությունությամբ և դրանից բխող օսմանական կամ իրանական աջակցությամբ, ինչն էլ ապահովել է տվյալ անձի հաղթանակը: Այս փաստերը թույլ են տալիս եզրակացնելու, որ առաջին փուլում վրացիների խլամացումը եղել է միջիշխանական ու

²⁰ Տաշեան Յ., Հայ բնակչութիւնը Սև ծովին մինչեւ Կարին, Վիեննա, 1921, էջ 74-75:

²¹ Güл M., a.g.e., s. 86.

²² Մակարաման տէն Իօսելիան Պ., Исторический взгляд на состояние Грузии под властью царей-магометан, Тифлис, 1849.

²³ Романовский В., указ. соч., стр. 104.

թագավորական կոիվների արդյունք և մեծամասամբ կրել է կամովին բնույթ:

Ինչ վերաբերում է վերոնշյալ քաղաքականության երկրորդ մակարդակին, ապա նշենք, որ այդ փուլը (17-18-րդ դարեր) կապված էր իսլամացած վրաց պաշտոնյաների ձեռքով հասարակ ժողովրդի ինտենսիվ բռնի կրօնափոխման հետ, ինչի հետևանքով հասարակության ցածր շերտերում քրիստոնեական հավատքը թուլանում էր, տարածում էին գտնում իսլամական սովորույթները²⁴: Տաշեանը շարունակելով վերոհիշյալ իր միտքը, գրում է. «Յաջորդը Ուսուֆ փաշա (1635 է սկսեալ) մոլեռանդ մահմետական մը եղած էր և այնպէս սաստկացուց կրօնի հալածանքն, որ թիշ մ'ետքը բռն վրական (մեսին եւն) տարրը լիովին մահմետական եղած էր ... հազիվ սակավաթիվ զյուղացիք մնացած էին քրիստոնեա «առանց հովվաց» հոս ու հոն»²⁵: Իշխան Շերվաշիձեն ամբողջացնում է միտքը. «Վերին Քարթլիում և Լազիստանում թուրք փաշաների վարած քաղաքականության արդյունքում տեղի բնակչությունը կորցրել էր իր ազգային դիմագիծն ու սովորույթները»²⁶:

Ընդհանուր առմամբ Օսմանյան կայսրությունում վրացիների վերոնշյալ 2 մակարդակով բնորոշվող ուժացման քաղաքականության ժամանակագրությունը, որի սկզբնավորումը պատմագրության մեջ պայմանականորեն ընդունված է համարել 1578 թ. (Սամցին-Սաաթարագոյի նվաճման տարեթիվը), կարելի է բաժանել 3 հիմնական փուլերի.

1. Առաջին փուլն ընդգրկում է 16-17-րդ դարերը: Այս շրջանում վերոնշյալ քաղաքականությունը գործի է դրվել հիմնականում ռազմական և ժողովրդագրական նկատառումներով: Բանն այն էր, որ Օսմանյան կայսրությունը

ձգուում էր ունենալ լոյալ ազգաբնակչություն, հատկապես իր սահմանային շրջաններում: Չպետք է մոռանալ նաև այն հանգամանքը, որ այս դարերում Օսմանյան կայսրության բռնի իսլամացման քաղաքականությունը կյանքի էր կոչվում քուրք-իրանական պատերազմների ընթացքում: Դրանց արդյունքում օսմանցիները իրենց տիրապետությունը հաստատելով ողջ Սամցին-Սաաթարագոյ վրաց իշխանության վրա, ստեղծեցին Ախալցխայի փաշայությունը²⁷, որտեղ իրականացնելով սիստեմատիկ իսլամացման քաղաքականություն (քրիստոնյաների ծանր հարկային լուծ, եկեղեցիների և վանքերի ոչնչացում, մզկիթների կառուցում, կրօնափոխությունը որպես հողատիրության միակ միջոց, մահվան սպառնալիք և այլն՝) ստեղծում էին սունի մուսուլման բնակչություն՝ ի հակակշիռ շիայական իրանի: Սամցին-Սաաթարագոյի դեմոգրաֆիկ պատկերը խիստ կարևորվում էր Թուրքիայի կողմից նաև այն բանի համար, որ այս իշխանությունը՝ շնորհիվ իր աշխարհագրական դիրքի, մշտապես կատարել է Վրաստանի «դարպասների» դերը²⁸:

2. Երկրորդ փուլը վերաբերում է 18-րդ դարից մինչև 19-րդ դարի սկիզբը: Սա մի ժամանակաշրջան էր, երբ Օսմանյան կայսրությունը ձեռք էր բերել մի նոր հզոր ախտյան՝ Ռուսաստանին, որը ձգուում էր գրավել իր քաղաքական հետաքրքրությունների կենտրոնում հայտնված Հարավային Կովկասը, այդ թվում նաև Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող վրացաբնակ հողերը: Այդտեղի քրիստոնյաներին թուրքերը, դիտարկելով որպես Ռուսաստանի պոտենցիալ դաշնակիցներ, բռնի իսլամացման են ենթար-

²⁴ Նույն տեղում, էջ 127:

²⁵ Տաշեան Յ., Խշկ. աշխ., էջ 75:

²⁶ Էրիստով-Շարվաшиձե Հ., սկզ. սու. 16.

²⁷ Տե՛ս Հակոբյան Հ., «Անդրկովկասը XIX դարի սկզբին » (պատմական քարտեզ), Երևան, 1938(?): <http://greenstone.flib.sci.am/gsdl/collect/No Date Books/index/assoc/HASHc407.dir/map.pdf>

²⁸ Վաճաnidze M., Guruli B., Baxtadze M., История Грузии (с древнейших времен до наших дней) http://www.gumer.info/bibliotek_Buks/History/Vachn_index.php

կում՝ այդ կերպ ստեղծելով կրոնական պատճեց: Հավելենք, որ այս փուլի ավարտին արդեն ողջ Սամցիս-Սաաթարազոյի (Ներառյալ ներկայիս Աջարիան) բնակչությունը համատարած խլամ էր դաշտանում:

3. Երրորդ շրջանը ընդգրկում է 19-րդ դարի վերջից մինչև 20-րդ դարի կեսերը: Այս փուլը արդեն կապված է Օսմանյան կայսրությունում մուսուլման վրացիների վերջնական ուժացման քաղաքականության հետ, որը խարսխվում էր բուրքիզմի գաղափարախոսության վրա:

Հենց այս վերջին փուլում էլ սկսվեց խլամացած վրացիների մի մասի՝ Մուհաջիր վրացիների (արար. թարգմ. զաղթական) ողիսականը: Նշենք, որ «Մուհաջիր վրացի» (վրաց. «Մուհաջիրի Քարթվելի») տերմինը վրացերենի և ընդհանրապես վրաց պատմագրության մեջ մուտք գործեց 19-րդ դարի վերջին քառորդում ոուս-թուրքական պատերազմի հետևանքով Օսմանյան կայսրություն գաղթած մուսուլման վրացիներին տարբերակելու նպատակով²⁹: Վրաց ազգի այդ հատվածը իր հերթին սկսեց իրեն անվանել Չվեներութի (վրաց. թարգմ.՝ «Երրոն», «Մեզնից»)՝ այդ կերպ պատճեշվելով թե՛ մուսուլման վրացիների մյուս հատվածից և թե՛ քրիստոնյա իր եղբայրներից: Չվեներութիների գաղթի (վրաց. մուհաջիրոբա) պատմությունը բավական խճճված է և միաժամանակ գուգահեռվում է կովկասյան այլ մուսուլմանների՝ չերքեզների, դաղստանցիների, աղբյուների գաղթին: Այն սկիզբ է առել դեռևս 1828-1829 թթ. ոուս-թուրքական պատերազմից հետո, որը սակայն էական ծավալներ չի ընդգրկել: Այս երեսութը լայն մասշտաբներ է ընդունել մասնավորապես 1877-1878 թթ. ոուս-թուրքական հերթական պատերազմից հետո, եթե Բեն-լինի կոնֆերանսի որոշմամբ Մուսաստանի տիրապետության տակ անցած նախկին օսմանահպատակ տարածքների՝

²⁹ Putkaradze Ş., Muhacir gürcüler yada Çveneburiler, Mamuli dergisi, sayı 2, İstanbul, 1997, <http://www.chveneburi.net/tr/default.asp?bpgid=115>

Զորուքութի, Բաթումի, Կարսի, Արդահանի, Արդվինի, Արգանուցի, Բորչայի, Շավշարի և Քեմալփաշայի³⁰ բնակչութեան, այդ թվում և մուսուլման վրացիներին իրավունք տրվեց կամ ընդունել ոուսական տիրապետությունը, կամ տեղափոխվել Օսմանյան կայսրություն³¹: Սա ամբողջացվեց 1879 թ. հունվարի 27-ին Ստամբուլում Օսմանյան կայսրության և Մուսաստանի միջև կնքված պայմանագրով, համաձայն որի 1879 թ. փետրվարի 3-ից 1882 թ. փետրավարի 3-ը ընկած ժամանակահատվածը հայտարարվում էր գաղթի իրականացման շրջան³²: Հաշվի առնելով գաղթականների մեծ հոսքը և շալ վերջնաժամկետը երկարացվեց մինչև 1884 թվականը³³: Սակայն այս գործընթացը շարունակվեց հետագա տարիներին ևս՝ ընդհուպ մինչև 1921 թ.:

Հարկ է նշել, որ այս գաղթը համարվում է վրաց պատմության ամենածանր էջերից մեկը՝ հիշատակվելով որպես «Սև տարիներ» կամ «Սև գաղթ»³⁴: Հենց այս ժամանակահատվածում Մուսաստանի տիրապետության տակ անցած Աջարիայի, Սաշահելիի, Լիփանեի, Գոնյեի, Չուրուքութի (Քորուլեթի) և Բաթումի³⁵ խլամացած վրացիները հոծ խմբերով լրելով իրենց բնակավայրերը՝ տեղափոխվել են Օսմանյան կայսրության տարածքը: Գաղթական վրացիները սկսեցին հիմնականում բնակություն հաստատել Գիրեսունում, Օրդուում, Սամսունում, Թորքարում, Ամասիայում, Սինոփում, Բոլուում,

³⁰ Çiloğlu F., 100 yıl önce Türkiyede Gürcü köyleri, CC Haber Merkezi, <http://www.circassiancenter.com/cc-turkiye/BasindaCerkesler/045-gurcu.htm>

³¹ Putkaradze Ş., a.g.e.

³² Putkaradze Ş., Türkiyedeki Gürcü köylerinde Alan Çalışmasının sonuçları, Mamuli, İstanbul, Mayıs, 1998, sayı 5. <http://www.chveneburi.net/TR/default.asp?bpgid=168&pg=1>

³³ A.g.e.

³⁴ Güll M., a.g.e., s. 92.

³⁵ Yıldız B., Emigrations from the Russian Empire to the Ottoman Empire: An Analysis in the light of the New archival Materials, Master's thesis, Ankara, 2006, p. 59. <http://www.thesis.bilkent.edu.tr/0003216.pdf>

Սարարիայում, Քոջակլիում, Յալովայում, Բուրսայում, Բալըրքեսիրում, Զանիրում³⁶ և այլն: Նրանց թվի վերաբերյալ հստակ տվյալներ չեն պահպանվել: Տարբեր հեղինակների մոտ հանդիպում ենք տարբեր թվերի, որոնք երբեմն անցնում են երևակայության սահմանները՝ հասնելով մինչև 1 մինի³⁷: Առավել արժանահավատ են Օ. Օզելի՝ օսմանյան և ուսական աղբյուրների վրա հիմնված հաշվարկները, համաձայն որի հետպատերազմյան առաջին տարիներին մուհաջիր վրացիների թիվը հասել է մոտավորապես 200-300 հազարի³⁸: Չուրուքուլու Ալի Փաշան³⁹, որն անձամբ կազմակերպել է մուսուլման վրացիների գերակշիռ մասի տեղափոխումն ու վերաբնակեցումը Օսմանյան կայսրությունում, նշում է, որ 1882 թ. մուհաջիր վրացիների թիվը 120. 000 էր, իսկ 80. 000-ն էլ սպասում էր իր հերթին⁴⁰: Բատաղի հեղինակ Ե. Դ. Դալեսին, որին վկայակոչում է պրոֆ. Շ. Պուտկարաձեն, վերոնշյալ հեղինակների տվյալներին գումարելով նաև Օսմանյան կայսրության կենտրոնական և արևմտյան նահանգներում հաստատված մուհաջիր վրացիների թվաքանակը, նրանց ընդհանուր թիվը հասցնում է 400. 000-ի⁴¹: Իսկ անձամբ պրոֆ. Շ. Պուտկարաձեն նշում է, որ Օսմանյան կայսրությունը ամենաքիչը ընդունել է կես միլիոն զաղթական վրացի⁴²: Այսուհենդեռ այս ցուցանիշները միանշանակ լինել չեն կարող, քանզի այդ շրջանում եղել է նաև ապօրինի ներգաղթ, քանի

³⁶ Durmuş Mosiaşvili A., Türkiye Gürcüler (1), Gürcülerin sesi, <http://gurculerinsesi.net/content/t%C3%BCrkiye-g%C3%BCrc%C3%BCler-1-atanur-durmu%C5%9F-mosiashvili>

³⁷ Putkaradze Ş., Muhacir gürcüler yada Çveneburiler.

³⁸ Özel O., Çürüksulu Ali Paşa ve Ailesi Üzerine Biyografik Notları, Kebikeç / 16, 2003, s.103. http://kebikedergi.files.wordpress.com/2012/07/08_ozel.pdf

³⁹ Մանրամասն տես նույն տեղում:

⁴⁰ Yıldız B., ibid., p. 60.

⁴¹ Putkaradze Ş., Muhacir gürcüler yada Çveneburiler.

⁴² Putkaradze Ş., Türkiyedeki Gürcü köylerinde Alan Çalışmasının sonuçları.

այդ հարկ է հաշվի առնել նաև այն, որ Օսմանյան կայսրությունը մշտապես կրծատել է երկրում բնակվող այլ էթնիկ խմբերի իրական թվերը:

Անդրադառնալով այն հարցին, թե ինչպիսի մոտիվացիոն գործընթացներ էին ընկած մուհաջիր վրացիների կամ չկենբարի վերոնշյալ զաղթի իրականացման հիմքում, անհամաժայռ ենք համարում նախ և առաջ ընդգծել այն փաստը, որ այդ էթնիկ խմբի տեղաշարժը բխում էր թե՛ Ռուսաստանի, թե՛ Արևմուտքի և թե՛ Օսմանյան կայսրության շահերից: Այսպես, Ռուսաստանը շահազրգոված էր չվեներութիւնների զաղթով, քանզի ձգուում էր իր սահմանամերձ բնակավայրերը «մարել» անբարեհույս տարրերից՝ տվյալ դեպքում մուսուլման վրացիներից՝ մտավախություն ունենալով, որ վերջիններս կարող են Օսմանյան կայսրության ձեռքում իր դեմ գործիք ծառայել⁴³: Ուստի ուսական կառավարությունն իր խնդիրն էր համարում տեղահանման այնպիսի շափորշչներ մշակել, որոնք կրացանեին նրանց ետ վերադարձը⁴⁴:

Արևմուտքը ի դեմ Անգլիայի, ևս շահազրին էր այս տարրերի զաղթի իրականացմամբ՝ նրանց դիտարկելով որպես գործիք ընդդեմ Ռուսաստանի⁴⁵: Մասնավորապես նրա նպատակն էր տարհանման միջոցով մուհաջիրների մոտ ատելություն սերմանել Ռուսաստանի նկատմամբ և իրահել Կովկասյան պատերազմ:

⁴³ Դզիձարյա Ա., Մահաճկирство и проблемы истории Абхазии XIX столетия, Сухум, 1975, стр. 9. http://www.apsuara.ru/portal/book/_export/html/140

⁴⁴ Ավազյան Ա., Հյուսիսկովկասյան մահմեդական ցեղերի զանգվածային վերաբնակեցման գործընթացը Օսմանյան կայսրությունում (1858-1874), Թուրքագիտական և օսմանազիտական հետազոտություններ, Երևան, 2002, էջ 8: http://serials.flib.sci.am/openreader//turq_ost_het_1/book/Binder1.pdf

⁴⁵ Դզիձարյա Ա., սկզբ. սույն 8.

Բակ ահա Օսմանյան կայսրությունը անձամբ խրախուսելով և «հովանավորելով» այդ գործընթացը⁴⁶՝ ձգտում էր զաղթականների միջոցով լուծել միանգամից մի քանի խնդիր: Առաջին հերթին նրա նպատակն էր մուհաջիր վրացիների շնորհիվ փոփոխել կայսրության արևելյան նահանգների ժողովրդագրական պատկերը: Կայսրության այդ հատվածում դեռևս մեծ թիվ էր կազմում ոչ մուսուլման բնակչությունը, որը դիտարկվում էր որպես Ռուսաստանի պոտենցիալ դաշնակից: Ուստի այս սպառնալիքը վերացնելու, նրանց շրջանում խլամադավան մեծամասնություն ապահովելու և այն Ռուսաստանի դեմ օգտագործելու նկատառումով սկսեց մուհաջիր վրացիների հոծ խմբերի բնակեցումը սահմանամերձ արևելյան տարածքներում: Մուսուլման վրացիների այդ զանգվածը ընդհանուր առմամբ դիտարկվեց որպես հակաշիռ ուժ կայսրության այդ շրջանում բնակվող ոչ մուսուլման բնակչությանը՝ թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական⁴⁷ և թե՛ դեմոգրաֆիկ տեսանկյունից:

Օսմանյան կայսրության մյուս նպատակը կապված էր բնակչության թվածի ապահովման հետ, ինչը կարևորվում էր թե՛ ռազմական և թե՛ տնտեսական առումով: Ռազմական տեսանկյունից մուհաջիրների մուտքը Օսմանյան կայսրություն դիտարկվում էր որպես մարդկային նոր ռեսուրսների աղբյուր բանակի համար⁴⁸: Տնտեսական դիտանկյունից եթե հարցին նայենք, ապա ակները է այն փաստը, որ այս գործընթացը երկրին խոստանում էր թե՛ անմշակ հողերի յուրացում, թե՛ արտադրական աճ, թե՛ տնտեսական աշխուժացում և թե՛ հարկատու խավի ընդլայնում⁴⁹:

⁴⁶ Там же, стр. 12.

⁴⁷ Yıldız B., ibid., p. 14.

⁴⁸ Berber F., 19 yüzyılda Kafkasya'dan Anadolu'ya yapılan göçler, Karadeniz Araştırmaları, Güz 2011, sayı 31, s. 22. http://www.karam.org.tr/Makaleler/1986089047_003_berber.pdf

⁴⁹ Նուն տեղում:

Օսմանյան կայսրության մյուս կարևորագույն նպատակն է հետազոյում այս հատվածին տեղի քրիստոնյաների, այդ թվում հայերի բռնածնչումներին, ջարդերին ու կրոնափոխման գործընթացին մասնակից դարձնելն էր⁵⁰ և որպես գործիք ծառայեցնելը:

Իսկ ինչ վերաբերում է մուհաջիր վրացիներին, ապա նշենք, որ վերջիններս մի կողմից կրոնական, տնտեսական ու կենցաղային թեկերով կապված լինելով Օսմանյան կայսրությանը և շրնդունելով ոռոսական կարգերը, մյուս կողմից ենթարկվելով շահագրգիռ պետությունների քարոզչությանը լրեցին իրենց բնակավայրերը՝ հուսալով ապահով ապատան գոնել իրենց հավատակիցների սահմաններից ներս: Այսուղ մի հետաքրքիր հանգամանք ենք ցանկանում ընդգծել, որ այս զաղթի անմիջական «ոգեշնչողներից» էին նաև վրաց իշխանները և պաշտոնյաները, որոնք կրկին ելնելով նեղ-անձնական շահերից լրում էին արդեն ոռոսահպատակ դարձած հողերը Օսմանյան կայսրությունում իրենց իշխանական դիրքը պահպանելու համար:

Օսմանցիները հաշվի առնելով այս ամենը՝ չվեներութիների զաղթը խթանելու, ինչպես նաև նրանց ընդունման, գրանցման և բնակեցման գործընթացն առավել համակարգված ձևով իրականացնելու նպատակով ձևավորեցին հատուկ միգրացիոն կոմիտե⁵¹՝ «Մուհաջիրների բարձրագույն հանձնաժողով»⁵² (նմանատիպ կոմիտե ձևավորվել էր դեռևս 1860 թ. «Մուհաջիրների հանձնաժողովը», որին հաջորդել էր «Մուհաջիրների վարչական հանձնաժողովը»), որին անմիջապես հետևեց պետության կողմից հրապարակված հատուկ փաս-

⁵⁰ Güл M., a.g.e., s. 95.

⁵¹ Yıldız B., ibid., p. 16.

⁵² Berber F., a.g.e., s. 21.

տարութքը՝ «Մուհաջիրների բնակեցման ուղեցույցը»⁵³, համաձայն որի 1. մուհաջիրներին արգելվում էր երբէ լրել բնակության վայրը, 2. նրանց տվյալները ընդգրկվում էին հատուկ գրանցամատյաններում և ուղարկվում վերոհիշյալ կոմիտեի դեկավարին, 3. դրամական օգնություն ստանում էին միայն երեխաները և անապահովները, 4. զյուղերում և զյուղաբաններում 10 տնից 1-ը գաղթականներին պարտավորվում էր հյուրընկալել մինչև վերջիններիս բնակարանների կառուցումը, 5. զյուղատնտեսությամբ գրաղվելու համար տրվում էր անհրաժեշտ գործիքներ, եզ, հացահատիկ և այլն 6. եկվորները կարող էին հաստատվել ոչ միայն զյուղերում, այլ նաև քաղաքների և զյուղաբանների ծայրամասային թաղամասերում, 7. քաղաքներում հաստատվողները պետք է բարձրաստիճան անձինք լինեին, ունենային որևէ մասնագիտություն կամ ուսուցությամբ գրաղվեին⁵⁴: Փաստորեն, այս բոլոր կետերը կայսրության մեր կողմից հիշատակված նպատակների պաշտոնական ձևակերպումներն էին:

Օսմանցիները զյուղատնտեսությանը զարկ տալու և զանձարանը նոր հարկերով հարստացնելու նպատակով եկվոր մուսուլման վրացիներին բնակեցնում էին ամայի, լրված, խոպան կամ արքունիքի վարքիներին պատկանող հողերում⁵⁵: Միաժամանակ 5-րդ կետի համաձայն ներգաղթյալներին հողակտոր, համապատասխան գործիքներ, անասուններ էր տրվում նրանց տեղաշարժը բացառելու նպատակով: Իսկ նրանք, ովքեր խախտում էին հիշյալ փաստարդի առաջին կետը, այն է լրում էին իրենց բնակավայրը, գրկում էին հո-

ղոց, համապատասխան անձնագրերից⁵⁶ և ընդհանրապես պատճենական աջակցությունից ու «հովանավորությունից»:

Անությունից բացի չվենեբուրիներին պարտավոր էին օգնությունից տան շինարարություն, ինչն ամրագրված էր նաև մուսուլմանների վերաբերյալ հիշյալ փաստարդում: Այս երկարամյամ օգնությունից բացի, չվենեբուրիները որոշ խնդիրներ բանում էին նաև իրենց կողմից հիմնած վարքիների միջոցով⁵⁷, որոնք հիմնականում ծառայում էին մզկիրներ կառուցնելու համար: Վերջին հանգամանքը ընդգծում էր չվենեբուրիների բավական կրոնասեր լինելու փաստը:

Այս ամենը, սակայն, մերայի մի կողմն էր միայն, որն այնպիսի տպավորություն էր ստեղծում, թե իբր չվենեբուրիները ուղակի դրախտային պայմաններում էին հայտնվում Օսմանյան կայսրությունում՝ փրկվելով ոռուսական «բռնապետությունից»: Իրականում մեղալն ուներ նաև իր երկրորդ երեսը, որն այնքան էլ ներդաշնակ չէր առաջինի հետ: Օսւսուման վրացիների՝ Օսմանյան կայսրությունում ապահով և բարեկեցիկ ապաստան գտնելու հույսերը ի դերև ելան առաջին իսկ պահից՝ բախվելով թե՛ բնակեցման, թե՛ ապաստանի, թե աշխատանքի հայթայթման խնդիրներին: Օսմանյան կայսրությունը, որը սկզբնական շրջանում մեծ ոգևորվածությամբ էր դիմավորում մուհաջիրներին, որոշ ժամանակ հետո գիտակցեց, որ նրանց լայնածավալ հոսքի արդյունքում ուղղակի կրատարկվի Աջարիան, ինչն ավելի կիեշտացնի վերջինիս ինտեղրումը Ռուսաստանի հետ: Ունենալով այս մտավախտությունները, Օսմանյան կայսրությունը արհեստականորեն սկսեց դժվարություններ ստեղծել մուհաջիրների հետագա խմբերի համար՝ հարկերը բարձրացնելով, նրանց

⁵³ Kara A., XIX. Yüzyılda Çorum'da göçmenlerin yerleştirilmesi ve yaşanan sorunlar, Turkish studies, Ankara 2013, Vol 8/6, s. 4. http://www.turkishstudies.net/Makaleler/992145919_21Kara%20Adem%20sos-333-344.pdf

⁵⁴ A.g.e.

⁵⁵ Berber F., a.g.e., s. 23.

⁵⁶ A.g.e.

⁵⁷ Մակրամասն տե՛ս՝ Yüksel H., Kafkas göçmen vakıfları, OTAM, Ankara, 1994, sayı 5, s. 475-490. <http://dergiler.ankara.edu.tr/dergiler/19/1151/13527.pdf>

ձրի աշխատեցնելով, երկար ժամանակ բնակության մշտական վայր չտրամադրելով և այլն: Արդյունքում մեծ թվով չվեներուրիներ հայտնվում էին աղքատության եզրին դառնալով մուրացկաններ, անտուններ անգամ ավագակներ⁵⁸: Ինչպես նշում է Ա. Զիձարիան, շատերի մոտ ցանկություն առաջացավ հետ վերադառնալ իրենց հայրենի բնակավայրերը, սակայն դա գրեթե անհնար էր՝ Ռուսաստանի, ինչպես նաև Թուրքիայի խիստ քաղաքականության պատճառով⁵⁹:

Այնուհանդերձ, կատարված փաստ էր, որ անկախ ամեն ինչից Աջարիայի մուսուլման վրացիները կարևորելով առաջին հերթին կրոնական գործոնը, չէին դադարում հոծ խմբերով տեղափոխվել Օսմանյան կայսրություն: Նկատենք նաև, որ ի տարբերություն հյուսիսկովկասյան մուսուլման զաղթականներին, որոնց իշխանությունները ենթարկում էին խառը բնակեցման, չվեներուրիներին թույլատրվեց իիմնել իրենց կոմպակտ գյուղերը: Սակայն սա ոչ թե օսմանցիների բարի կամքի դրսուրումն էր, այլ այն բանի, որ չվեներուրիները աշխրեթային համակարգով չէին ապրում, բավական մոլեռանդ մուսուլմաններ էին և հազար ու մի թելերով կապված էին օսմանյան կայսրությանը: Հենց այս փաստն էլ նպաստեց նրանց շրջանում օսմանցիների կայուն իշխանության հաստատմանը, մարտունակ (նրանք պարտավոր էին անցնել զինվորական պարտադիր ծառայություն⁶⁰), ինչպես նաև վստահելի հապատակներ ունենալուն⁶¹: Չվեներուրիները դարձան պետական բյուրոկրատական համակարգի և ռազմական ոլորտի կարևորագույն տարրերից մեկը և պատահական չէ, որ

⁵⁸ Berber F., a.g.e., s. 26.

⁵⁹ Դզիձարիա A., սկզբ. սույն գործության մասին պատմությունը պահպանված է անհայտ հայտնի հայության մեջ:

⁶⁰ A.g.e., s. 40.

⁶¹ Erdogan S. (Davitadze), Dünden bugüne Türkiye'nin Gürcülere Bakışı ve Türkiyeli Gürcülerin kimlik Algısı, Gurcu.org, <http://www.gurcu.org/dunden-bugune-turkiye-nin-gurculere-bakisi-ve-turkiyeli-gurculerin-kimlik-algisi-erdogan-senol-davitadze-icerigi-220.html>

շնչառական շարժման մի շարք հայտնի դեմքեր հենց մուսուլման վրացիներ էին⁶²: Նշենք նաև, որ վերոհիշյալ Շուշրուտը Ալի Փաշան անձամբ ստեղծել էր չվեներուրիների գլուխած խմբավորումներ, որոնք անվերապահորեն ծառայում էին Օսմանյան կայսրությանը և, ինչպես նշում է բուրք հեղինակ O. Oզելը անմիջական մասնակցություն են ունեցել հայերի ցեղասպանության իրականացմանը⁶³: Հարկ է նշել, որ մշակութային ու կենցաղային առանձնահատկություններով տարբերվող չվեներուրիները աստիճանաբար հեռանում էին իրենց քրիստոնյա վրացի եղբայրներից: Մյուս կողմից նրանք պատնեշվում էին նաև մուսուլման վրացիների աջարաբնակ հատվածից, ինչպես նաև Արդվինի շրջանի տեղաբնիկ համարվող իսլամադավան վրացիներից: Այս հանգամանքը բերես էլ ավելի էր հեշտացնում Օսմանյան կայսրության ուժացման քաղաքականությունը, որը փորձում էր չվեներուրիների միջից ջնջել վրացականությունը և վերջնականապես բուրքացնել: Իրավամբ կրոնը նման պայմաններում էականութեան հաղթանակող էր դուրս գալիս ազգային ինքնազիտակցության նկատմամբ, ինչի արդյունքում չվեներուրիները որպան հեռանում էին իրենց էթնիկ արմատներից, այնքան մոտենում էին կրոնական «եղբայրներին»:

Շուրջ 40 տարի տևած մուսուլման վրացիների գաղթը Օսմանյան կայսրություն իր պայմանական վերջնակետին հասավ 1921 թ., եթեՌուսաստանի և Թուրքիայի միջև կնքված Սոսկվայի պայմանագրով Բարթումը անցավ Խորհրդային Վրաստանին, իսկ այդ շրջանի բնակչներին պայմանագրի 12-րդ հոդվածով իրավունք ընձեռվեց անարգել հեռանալ Թուրքիա՝ իրենց հետ վերցնելով ունեցվածքը կամ դրան հայության մասին պահպանված գործությունը:

⁶² Yıldız B., a.g.e., s. 129.

⁶³ Georgian muhajirs were privy to mass killings of Armenians and Greeks in Ottoman Empire, 04.06.2008. <http://www.panarmenian.net/eng/world/news/26120/>

մարժեք գումարը⁶⁴: Այս կետից օգտվեցին թերևս մեծ թվով մուսուլման վրացիներ, որոնք հիմնականում կոմունիստական կրոնամերժության պատճառով լքելով իրենց բնակավայրերը՝ մշտական բնակություն հաստատեցին Թուրքիայի արևելյան շրջաններում:

Օսմանյան կայսրության՝ չվենեբուրիների ձուլման քաղաքանությունը նոր թափ ստացավ արդեն հանրապետական Թուրքիայում: Քեմալական ազգայնականությունը, որ, ըստ էության, նույն թուրքիզմն էր, զնալով արագորեն ստանում էր անհանդուրժող շռվինիզմի ձև: Այն ամբողջությամբ արտացոլվեց նաև ԹՀ առաջին սահմանադրության մեջ, որի 2-րդ հոդվածը նշում էր. «... Դետական լեզուն հանդիսանում է թուրքերենը»: Այս պայմաններում այլ լեզուների շարրում արգելվեց նաև վրացերենի կիրառումը: Նմանատիպ օրենք ընդունվեց օրինակ Արդվինի նահանգի զիսավոր ժողովի կողմից 1927 թ.⁶⁵: Նմանօրինակ օրենքների հետևանք էր այն փաստը, որ արդեն 1950 թ. մարդահամարի տվյալներով վրացերենը որպես մայրենի լեզու ճանաչել էր ընդամենը 72. 000 մարդ, իսկ 1965 թ.՝ 83. 000⁶⁶ (այս թվերը միանշանակ չպետք է ընդունել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանք մշտապես կրածատվել են իշխանությունների կողմից): Բնականաբար, այս ամենը ուղղված էր պետության թուրքացմանը և քեմալականների՝ ազգային առումով միատարր պետություն ստեղծելու նկրտումներին: Այս ամենի հետևանքով՝ չվենեբուրիները էլ ավելի օտարվելով իրենց արմատներից նետվում էին թուրքականության գիրկը: Դրան նպաստող հանգամանք հանդիսացավ նաև Վրաստանի խորհրդայնացումը, ինչի արդյունքում չվենեբուրիների և քրիստոնյա, ինչ-

պես նաև աջարաբնակ մուսուլման վրացիների միջև կապը դաշտին կտրվեց: Բավական է նշել միայն այն փաստը, որ չվենեբուրիների երիտասարդ սերնդի մեծ մասը նույնիսկ տեղական շեր Վրաստանի գոյության մասին:

Սակայն 1970-ական թթ. վերջերից սկսած չվենեբուրիների մասունքների են դառնում ազգային որոշակի աշխատացումներ, որոնք արձանագրվեցին առաջին հերթին մշակութային պրոտում և բնականաբար անդրանիկ քայլերը կատարվեցին Թուրքիայի սահմաններից դուրս: Այսպես, 1977-1979 թթ. Շվեյցարիայի մայրաքաղաք Ստորհոլմում սկսեց լույս տեսնել «Չվենեբուրի» ամսագիրը⁶⁷, որը յուրահատուկ կամուրջի դեր ստանձնեց: Այնուհետև 1986 թ. Բուրսայում ստեղծվեց «Բարումի գաղթականների» խմբակը: Նման մի խմբակ ստեղծվեց նաև Ստամբուլում⁶⁸: Ակավեցին փոխադարձ այցելություններ Վրաստան և Թուրքիա, միաժամանակ կազմակերպվում էին կոնֆերանսներ՝ մուսուլման վրացիներին իրենց արմատներին ծանոթացնելու նպատակով: Չվենեբուրիների շրջանում ազգային ինքնազիտակցության վերհանման գործում մեծ դեր ունեցավ «Չվենեբուրի» ամսագրի հիմնադիրներից մեկը՝ Սամեդ Օզքայ Մելաշվիլին⁶⁹, ում սպանությունից հետո դադարեց նաև այդ ամսագրի տպագրությունը⁷⁰: Նշենք, որ Օզքայը իր կենդանության օրոք ևս ակտիվ գործունեության պատճառով թուրքական իշխանությունների կողմից պարբերաբար ձևականացների է ենթարկվել, որոնց շարքում կարելի է առանձնացնել 1968 թ. նրա ձերբակալությունը՝ «Վրաստան» խորա-

⁶⁴ Ազատյան Հ., նշվ. աշխ., էջ 120:

⁶⁵ Erdogan S. (Davatadze), a.g.e.

⁶⁶ Durmuş Mosiaşvili A., Türkiye Gürcüler (2), Artvin haber, 15.03.2012. <http://www.artvinhaberci.com/yazar/868-turkiye-gurculeri-2-.html>

⁶⁷ Durmuş Mosiaşvili A., Türkiye Gürcüler (1).

⁶⁸ Yakut M. (Khimisiasvili G.), Türkîeli Gürcülerin, Gürcistan'ın Türkiye ile ilişkilerinin Dünü, Bugün, Yarını, Gurcu.org <http://www.gurcu.org/turkiyeli-gurculerin-gurcistan-in-turkiye-ile-iliskilerinin-dunu-bugunu-yarini-mustafa-yakut-guram-khimsiasvili-icerigi-379.html>

⁶⁹ A.g.e.

⁷⁰ Diasamidze C., Türkîeli Gürcülerin kültürel faaliyetleri, Chveneburi.net, 17.05.2004. <http://www.chveneburi.net/tr/default.asp?bpgid=82&pg=1>

փիրը կրող իր գրքի⁷¹ պատճառով: Սա խոսում է մի հստակ հանգամանքի մասին, որ թուրքական իշխանությունները բնավ չիրախուսելով չվեներուրիների էթնիկ զարքոնքը ամենայն ուշադրությամբ վերահսկում էին դրա շուրջ տեղի ունեցող գործնթացները և կանխարգելում դրանք տարատեսակ մեթոդներով: Թուրքիայի նմանատիպ մոտեցումը որոշակի երանգավորումներ ստացավ և փոփոխություններ կրեց արդեն ԽՍՀՄ փլուզման արդյունքում Վրաստանի անկախացումից հետո: Թուրքիան, ռազմավարական, տնտեսական, քաղաքական տեսակյունից կարևորելով հարավկովկասյան այս պետության աշխարհազրական դիրքը, քայլեր էր ձեռնարկում նրա հետ իր հարաբերությունների աշխուժացման և սերտացման ուղղությամբ: Հենց այս համատեքստում է իրենց ուրույն տեղը զբաղեցրին չվեներուրիները, որոնք իրենց հերթին դիտարկվեցին որպես «Թուրքիայի և Վրաստանի միջև կամուրջ»⁷²:

Բնականաբար, քաղաքական նմանատիպ զարգացումները խթանեցին չվեներուրիների շրջանում ազգային ինքնազիտակցության աշխուժացմանը: Մյուս կողմից դա պայմանավորված էր նաև փոխադարձ ճանաչողական այցելություններով: Այդ գործնթացի դրսնորման առաջին հարթակն ինքնուստինքյան շարունակեց մնալ մշակութային ոլորտը: Այսպես, Ահմեդ Օզքայի ընկերների ջանքերով 1993 թվականից Բուրսայում, այնուհետ Ստամբուլում Վերսկսկվեց «Չվեներուրի» ամսագրի հրատարակումը⁷³, որը լույս տեսնելով մինչև 2006 թ.՝ իր էջերում տեղ գտած հոդվածների միջոցով փորձում էր վրաց ազգի այդ հատվածին մոտեցնել իր էթնիկ ար-

⁷¹ Durmuş Moşiaşvili A., Türkiye Gürcüler (1).

⁷² A.g.e.

⁷³ Tezcanoglu S., Baba 1980'de öldürüldü Çveneburiyi oğul üstlendi, Chveneburi.net, 01.02.2003. <http://www.chveneburi.net/tr/default.asp?/bpgid=105&pg=1>

էթներին, ծանոթացնել նախնյաց պատմությանը, լեզվին, ավանդույթներին, մշակույթին, անգամ խոհանոցին և այլն:

Սագրամով վրացի թուրք գրող Ֆահրեթին Չիլօղլուն (Փարևա-Բերա Չիլաշվիլի), «Չվեներուրի» ամսագրի խմբագրությունից առանձնանալով, նախաձեռնեց մեկ այլ ամսագրի «Մամուլի» տպագրությունը, որը լույս տեսավ 1997 թ. նույնարդությամբ մինչև 1998 թ. մայիսի⁷⁴: Ամսագրում հիմնականում պատացողվում էին վրաց արվեստին, գրականությանը, ազգագրությանը վերաբերող թուրքաբեզու հոդվածներ:

Չվեներուրիների ազգային զարքոնքին նպաստ թերող երրորդ ամսագիրը Ֆ. Չիլօղլուի խմբագրությամբ լույս տեսնող կրկեզու (թուրքերեն-վրացերեն) «Փիրօսմանին» էր (2007-2010 թթ.), որը լինելով թուրքաբնակ վրացիների «ձայնը» և նրանց մշակութային ինքնության առավել բացահայտ դրսնումը, մեծ տպաքանակով տարածվում էր թե՛ Թուրքիայում և թե՛ Վրաստանում: Մրանք այն 3 հիմնական ամսագրերն էին, որոնց միջոցով թուրքաբնակ և վրաստանարնակ վրաց մտավորականները փորձում էին չվեներուրիներին հնարավորինս ծանոթացնել ու մոտեցնել իրնեց ազգային արմատներին: Թուրքիայում հրատարակվող վրացական ամսագրերից էր նաև «Կամուրջը»⁷⁵, որը նույնպես այսօր արխիվային ամսագրի կարգավիճակ է ձեռք բերել:

Մեծ նշանակություն ունեն նաև չվեներուրիների զարթի, նրանց կենցաղի, մշակույթի, սովորույթների և ընդհանրապես Վրաստանի պատմությանն առնչվող գրքերի տպագրությունը, չվեներուրիների գյուղերում դաշտային աշխատանքների իրականացումը և այլն:

Չվեներուրիների շրջանում վրաց մշակույթի և պատմության տարածման առումով լայնորեն սկսեց օգտագործվել նաև

⁷⁴ Türkiye'de yayınlanmış Gürcü Kültürel Dergileri, Gurcu.org, <http://www.gurcu.org/turkiye-de-yayinlanmis-gurcu-kulturel-dergileri-icerigi-279.html>

⁷⁵ Diasamidze C., a.g.e.

համացանցը, որն էլ ավելի դյուրացրեց շվենեբուրիների կապը Վրաստանի և վրաց մշակույթի հետ: Շվենեբուրիների կողմից ստեղծված առաջին ինտերնետային կայքը դարձավ Chveneburi.Net-ը⁷⁶, որն իր մեջ ներառում է ամենատարբեր բաժինները՝ սկսած Թուրքիայի վրացական գյուղերի պատմությունից մինչև վրացերենի ուսուցում: Այն մեծամասամբ մշակութային բնույթ է կրում և կոչված է շվենեբուրիներին լուսաբանելու այդ ոլորտի անցուղարձը: Կարևորվում է նաև շվենեբուրիների կողմից ստեղծված Cürcühaber⁷⁷ ինտերնետ կայքը, որը հիմնականում իրազեկում է Վրաստանում տեղի ունեցող իրադարձությունների մասին: Այս շարքում կցանկանայինք առանձնացնել նաև իր կարևորությամբ աշքի ընկնող MuslimGeorgia⁷⁸ կայքը, որը Վրաստանի մուսուլման վրացիների համար Նուրանի և Սուրբ գրքերի վրացերեն թարգմանության ուղղությամբ է աշխատում: Հավելենք, որ դեռևս 2003 թ. սկսված Նուրանի մեկնաբանությունների վրացերեն թարգմանությանն ուղղված աշխատանքները իրենց հանգուցալուծումը ստացան 2013 թվականին⁷⁹: Նշենք, որ իրենց կարևորությամբ չեն զիջում նաև շվենեբուրիների կողմից ստեղծված մյուս ինտերնետ կայքերը, որոնց նպատակն է նպաստել թուրքաբնակ մուսուլման վրացիների լեզվական, մշակութային ու ինքնուրյան աճին:

Հարկ է արձանագրել այս փաստը, որ այս ողջ գործընթացում իրենց ուրույն տեսն ունեն նաև թուրքաբնակ մուսուլման վրացիների 1990-ական թվականների կեսերից ստեղծած տասնյակից ավելի կազմակերպությունները, միավորումները, խմբակները, հիմնադրամները: Այս շարքում պետք

⁷⁶ <http://www.chveneburi.net/tr/>

⁷⁷ <http://www.gurcuhaber.com>

⁷⁸ <http://www.muslimgeorgia.org/yeni/>

⁷⁹ İlk Gürcüce Kur'an-ı Kerim Meali basıldı, 03.06.2013. <http://www.ilkehaberajansi.com.tr/haber/ilk-gurcuce-kuran-i-kerim-meali-basildi.html>

շվենեბացնել Վրացական Մշակույթի կենտրոնը, Վրաստանի բարեկամության ասոցիացիան, Իզնիքի կովկասյան մինիերությունը, Անկարա-Վրաստան բարեկամության հիմնադրամը⁸⁰ և այլն: Անհրաժեշտ է նշել, որ այս բոլոր կազմակերպությունները առաջին հերթին զբաղվում են շվենեբուրիների և վրաստանաբնակ քրիստոնյա ու մուսուլման վրացիների միջև սերտ հարաբերությունների ստեղծմամբ և պահպանմամբ, շվենեբուրիների շրջանում վրաց մշակույթի, լեզվաբանական առանձնացնել 2010 թ. հիմնված «Վրացական (շվենեբուրի) մշակույթի տուն» կազմակերպությունը⁸¹, որի նպատակն է վրացերենի և վրաց մշակութային արժեքների տառամասիրությունը, տնտեսական, մշակութային և սոցիալական բնագավառներում ներդրումներ կատարելը, թուրքացական հարաբերությունների զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացումը և այլն: Այս կազմակերպությանը հաջողվել է թափանցել նաև թուրքական հեռուստաեսային ոլորտ կազմակերպելով վրացական հեռուստաշոուների ցուցադրումը թուրքական հեռուստաալիքներով և մինչ օրս արդեն ներկայացրել է վրացական ֆոլկլորի, երգի, պարի շուրջ 13 հաղորդում՝ թուրքական հեռուստաեսությամբ⁸²:

Հարկ ենք համարում նշել, որ վերջին շրջանում շվենեբուրիների կազմակերպությունների մոտ միասին աշխատելու հստակ միտում է նկատվում: Այսպես, 2011 թ. հոկտեմբեր

⁸⁰ Gürcü Çalıştaylarına dair, Gürcülerin sesi, <http://www.gurculerinsesi.net/content/3-g%C3%BCrc%C3%BC-%C3%A7al%C4%B1%C5%9Ftyalar%C4%B1na-dair>

⁸¹ Gürcü (Chveneburi) kültür evi İstanbul'da kuruldu, Chveneburi.net, <http://www.chveneburi.net/tr/default.asp?bpgpid=2040>

⁸² Georgian Diaspora and Migrant Communities in Germany, Greece and Turkey: Transnational realities and ties with Georgia, prep. by the International Centre for Migration Policy Development, Vienna 2014, p. 90. <http://diaspora.gov.ge/nd/wp-content/uploads/2015/02/ERGEM-Case-study-in-English.pdf>

ամսին չվեներուրիների 10-ից ավել կազմակերպությունների մասնակցությամբ տեղի ունեցան սեմինարներ, որոնց նպատակն այդ կազմակերպությունների աշխատանքը միավորելն ու կոռորդինացնելն էր: Սեմինարների ընթացքում կարևորվեց մուսուլման վրացիների ասիմիլացիոն գործընթացները դադարեցնելը և վրաց մշակույթի պահպանման ուղղությամբ հստակ քայլեր կատարելը: Մասնավորապես առանձնացվում էր վրացերենի ուսուցման խնդիրը⁸³: Թերևս հենց նրանց ջանքերի, ինչպես նաև թուրքական որոշակի մարտավարական քայլերի արդյունքում Թուրքիայում սկսեցին և այժմ էլ շարունակում են ավելի մեծ թվով դարրոցներում կամընտրական լեզուների մեջ ընդգրկել վրացերենի դասավանդումը⁸⁴:

Պետք է փաստել, որ այս կազմակերպությունները, միաժամանակ համագործակցելով ամսագրերի և ինտերնետ կայքերի հետ, ժամանակ առ ժամանակ կազմակերպում են համատեղ մշակութային երեկոներ, գիտական կոնֆերանսներ, որոնց իրենց մասնակցությունն են ունենում նաև Վրաստանի մտավորականներն ու գիտնականները։ Չվեներուրինների կազմակերպությունները մասնավորապես սերտ կապեր են հաստատել մուտուլման վրացիներով բնակեցված Աջարիայի հետ, որտեղ ևս հիմնվում են նմանատիպ ընկերություններ, որոնց շարքում իր գործունեությամբ հատկապես աչքի է ընկնում Բաթումի խմբակը⁸⁵։ Ամբողջացնելով կարելի է ասել, որ այս բոլոր կազմակերությունները և նրանց կյանքի կոչած միջոցառումները յուրօրինակ կամուրջ են ձևավորել Վրաստանի և չվեներուրինների, ինչպես նաև Թուրքիայի տեղաբնիկ

⁸³ Gürcü Çalıştaylarına dair, Gürcülerin sesi

⁸⁴ Putkaradze Ş., Türkiye'de Okullarda Seçmeli Ders Olan Lazca Hangi Alfabe Kullanılarak Öğretilмелidir?, Gurcu.org, <http://www.gurcu.org/turkiye-de-okullarda-secmeli-ders-olan-lazca-hangi-alfabe-kullanilarak-ogretilmelidir-tariel-putkaradze-icerigi-686.html>

⁸⁵ Diasamidze C., a.g.e.

Առավելան վրացիների միջև: Սակայն նկատենք, որ նման պրեծությունների տված օգուտը, ըստ էության, միակողմանի չէ և դրանով թուրքական կողմը բացահայտ ու քողազկված իրականացնում է իսլամի քարոզ և իսլամի ամրապնդում Աքարիայում, որն ուսումնասիրման առանձին թեմա է:

Սակայն հարկ է նշել, որ վերոնշյալ բոլոր գործընթացների արդյունքում չվեներութիների շրջանում տեղի է ունենում «փացական ինքնության աճ»: Որպես վերջինիս ամենացայտուն դրսևորում կարող ենք հիշատակել այն փաստը, որ 2008 թվականի վրաց-ռուսական «օգոստոսյան ճգնաժամի» ժամանակ առաջին անգամ մուտքման վրացիները՝ ի պաշտպանություն Վրաստանի շահերի, դուրս եկան Ստամբուլի փողոցներ՝ միաժամանակ իրենց բողոքը արտահայտելով Ռուսաստանի նկատմամբ: Զվեներութիների շրջանում անգամ կազմվեցին ինքնապաշտպանական ջոկատներ՝ Վրաստան մեկնելու և իրենց եղբայրներին օգնելու համար: Չուզահեռաբար սկսեցին նաև դրամահավաք տուժած ընտանիքներին աջակցելու նպատակով⁸⁶: Այդ ընթացքում մամուլում նույնիսկ տարածվեց նրանց դիմումը աշխարհի երկրներին՝ «քարրարոս» Ռուսաստանին կանգնեցնելու պահանջով⁸⁷: «Ինքնության աճ» վառ օրինակ է նաև այն հանգամանքը, որ չվեներութիները հրապարակավ սկսել են խոսել իրենց ազգային, մշակութային, ինքնության իրավունքների մասին: Այսպես, դեռևս 2009 թ. հոկտեմբերի 9-ին մուտքման վրացիների մի շարք կազմակերպություններ՝ համագործակցելով թուրքաբնակ այլ ազգային փորձամասնությունների հետ, հանդես եկան ժողովրդավարական նոր սահմանադ-

⁸⁶ Gürcistan yardım kampanyası başlatıldı, Chveneburi.net, 01.09.2008.
<http://www.chveneburi.net/TR/default.asp?bpgid=17318pg=1>

⁸⁷ Bütün Dünyaya Sesleniyoruz: Barbarları Durdurun! <http://www.chveneburi.net/tr/default.asp?bpgpid=1693&pg=1>

րության պահանջով⁸⁸, հայտարարելով, որ իրենց իրավունքները ուժնահարվում են: Այնուհետ 2011 թ. դեկտեմբերին կոլեկտիվ աշխատանքի արդյունքում մշակելով սահմանադրական փոփոխության հետ կապված իրենց պահանջի համապատասխան կետերը՝ ներկայացրին Թուրքիայի ազգային ժողովի Սահմանադրական համաձայնության հանձնաժողովի նախագահությանը⁸⁹: Դրանցում մասնավորապես ըննադասվում էր էթնիկ խմբերի, այդ թվում՝ մուսուլման վրացիների նկատմամբ իրականացվող ասիմիլիացիոն քաղաքականությունը և պահանջվում էր իրավունքների ընդլայնում՝ մասնավորապես առաջ քաշելով մայրենի լեզվով կրթություն ստանալու հարցը:

«Վրացական ինքնության աճի» դրսուրումներից մեկն էլ կապված է չվեներուրիների շրջանում ընդհանուր հայրենիքի Վրաստանի կերպարի ի հայտ գալու հետ: Դրա մասին է խոսում այն փաստը, որ 2013 թ. Վրաստանի նախկին նախագահ Միխաիլ Սաակաշվիլի՝ չվեներուրիներին քաղաքացիություն շնորհելու վերաբերյալ Թուրքիայում արված հայտարարությունից հետո հազարավոր չվեներուրիներ այդ նպատակով դիմումներ ներկայացրեցին⁹⁰:

Սակայն չվեներուրիների ինքնության աճի հետ կապված պատկերը երբեմն միտումնավոր ավելի «վարդագույն» է ներկայացվում: Ըստ թուրքական պաշտոնական տվյալների՝ 1 միլիոնի⁹¹ հասնող չվեներուրիների ազգային ինքնազիտակ-

⁸⁸ Türkiyeli Gürcüler yeni Anayasa yapım sürecinin neresinde?, Gurulerin sesi, <http://www.gurulerinsesi.net/content/4-t%C3%BCrkiyeli-g%C3%BCrc%C3%BCler-yeni-anayasa-yap%C4%B1m-s%C3%BCrecinin-neresinde>

⁸⁹ A.e.

⁹⁰ “Чвенебури” или как Саакашвили дарует гражданство тысячам жителей Турции, 14.10.2013. http://news.finance.ua/ru/news/_/310864

⁹¹ Türkiye'deki Kurtlerin sayısı!, Milliyet, 06.06.2008. <http://www.milliyet.com.tr/turkiye-deki-kurtlerin-sayisi-/yasam/magazindetay/06.06.2008/873452/default.htm>

ցորյան մակարդակի մասին խոսելիս հարկ է նշել, որ դա պահպանվել է զուտ կովկասյան որոշ ավանդույթների, սովորույթների, վրացերենի բարբառային ձևերի կիրառման տեսքով: Ինչպես նշում է «Թուրքաբնակ վրացիների պլատֆորմի» անդամ Ֆ. Քայան, չվեներուրիների ճնշող մեծամասնությունը պայօք գտնվում է ձուլման վերջին փուլում⁹²:

Վրացախոսությունը չվեներուրիների շրջանում բավական ցածր մակարդակի վրա է գտնվում և կրում է լոկ ազգային նույնականացման սիմվոլիկ բնույթ: Այն առավել տարածված է զուղերում և ինչպես փաստում է ծագումով վրացի Արանուր Դուրմուշը, ձեռք է բերել «ընտանեկան լեզվի» կարգավիճակ⁹³: Այն գրական մակարդակի չէ և պրոֆեսոր Շուշան Պուտկարաձեի վկայությամբ լեզուն է արաբապարսկական բազմաթիվ բառերով⁹⁴: Այդ մասին են վկայում նաև ծագումով վրացի թուրք գրող Ֆ. Զելիօլուի խոսքերը. «Ես միշտ ցանկանում էի սովորել այն լեզուն, որը երբեմն կիրառում էինք տանը.... Ես ցանկանում էի իմանալ գրական վրացերնեն»⁹⁵: Վրացախոսության անկմանը խթանող երևոյթ է նաև զուղից քաղաք տեղաշարժը: DİSK-ի (Հեղափոխական աշխատավորների արհմիությունների կոնֆերացիա) նախագահ, արմատներով վրացի Սուլեյման Զելերիի խոսքերով. «զուղից, ընտանիքից կտրվելով լեզուն մոռացվում է, թուլանում»⁹⁶:

⁹² Akten S., Gürcüler Anadilde eğitim istiyor, BIA Haber Merkezi, 02.08.2012. <http://www.bianet.org/bianet/azinliklar/140093-guruler-anadilde-editim-istiyor>

⁹³ Durmuş Mosiaşvili A., Türkiye Gürcüleri (1).

⁹⁴ A.e.

⁹⁵ Georgian Diaspora and Migrant Communities in Germany, Greece and Turkey: Transnational realities and ties with Georgia, p. 89.

⁹⁶ Disk Genel Başkanı Süleyman Çelebi ile söyleşi, Çveneburi Kültürel Dergi, sayı 54-55, İstanbul 2004. <http://www.chveneburi.net/tr/default.asp?bpgid=946&pg=1>

Հետաքրքիր է, որ չվեներուրիների շրջանում լայն տարածում ունի ներքին ամուսնությունների էնդոգամիայի երևոյթը: Այն սկիզբ է առել մուտքման վրացիների Օսմանյան կայսրություն գաղթից անմիջապես հետո, ինչի արդյունքում այսօր չվեներուրիների ցանկացած գյուղում բոլորը միմյանց բարեկամ են⁹⁷: Ներքին ամուսնությունների սովորույթը, սակայն չի պահպանվում քաղաքաբնակների շրջանում:

Չվեներուրիները միաժամանակ բնորոշվում են որպես մոլոխանդ կրոնասերներ⁹⁸, ինչի մասին վկայում են թերևս նրանց գյուղերում առկա մեծ թվով մզկիթները: Չվեներուրի ուսումնասիրող Ս. Ուլուդաղը նշում է. «Կրոնական պահպանողականությունը Թուրքիայում մի շարք մուհաջիր վրացիների գյուղերում այսօր կ վճռական դեր ունի և բավականաշափ ազդում է նրանց քաղաքական կողմնորոշումների վրա»⁹⁹: Թերևս հենց սրանով և Թուրքիայի հետևողական ձուլման քաղաքականությամբ է պայմանավորված այն հանգամանքը, որ չվեներուրիների գերակշիռ մասը թեկուզե ընդունում է իր վրացական ծագումը, սակայն իրեն համարում է առաջին հերթին Թուրքիայի քաղաքացի: Նույնիսկ շատ-շատերն իրենց արմատների պատճառով բարդույթավորվում են և այն ստվերելու համար թուրքական ազգայնական հոսանքներին միանալով՝ թուրքերից շատ ավելի համառորեն են պայքարում թուրքականության համար: Սրանց թվին կարելի է դասել մի շարք քաղաքական լուրջ դեմքերի, որոնք գրադեգում են ամենատարեր պաշտոններ պետական ապարա-

⁹⁷ Uludağ M. B. (Hmaladze M.), Acara Özerk Cumhuriyetinde Kültürel ve Dinsel Etkileşimlere Sosyolojik Bakış, Çveneburi Kültürel Dergi, İstanbul, Temmuz-Eylül 2002, sayı 45, <http://www.chveneburi.net/tr/brochure.asp?bpcid=2&cat=y&sbmt=y#PJD151>

⁹⁸ Müslüman Gürcülerin 400 yıllık öyküsü, BIA Haber Merkezi, 15.06.2002. <http://eski.bianet.org/2002/06/15/haber10783.htm>

⁹⁹ Uludağ M. B. (Hmaladze M.), a.g.e.

առաջ, անդամակցում են տարրեր կուսակցությունների և վառապես խուսափում են խոսել իրենց արմատներից:

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ չնայած չվեներուրիների մոտ վերջին շրջանում նկատվում են ազգային զարթությի միտումներ, այնուհանդերձ, Թուրքիայի երկարատև ունցանականության հետևանքով նրանք լիովին ինտեղրվել են թուրք հասարակությանը:

Տես այս հանգամանքն էլ հաշվի առնելով՝ Թուրքիան համեմատաբար մերմ քաղաքականություն է որդեգրել այս երեխի խմբի նկատմամբ՝ միաժամանակ հետապնդելով իր սեփական շահերը: Առաջին հերթին այդ կերպ փորձում է առավել դեմոկրատ երևալ և ևս մեկ քայլ կատարել ԵՄ անդամ դառնալու ճանապարհին: Այուս կողմից՝ Թուրքիան սկսեց մուտքման վրացիների այս հատվածին դիտարկել որպես ևս մի գործիք՝ Աջարիայում ազբեցություն ձեռք բերելու նպատակով, քանզի թուրքաբնակ վրացիները բավական ամուր կապեր ունեն Բաթումում¹⁰⁰: Այդ նպատակին է ուղղված նաև դեռևս 2000 թ. Թուրքիայի շանքերով ստեղծված կրթության և մշակույթի թուրք-վրացական հիմնադրամը, որը կոչված է ակտիվացնելու չվեներուրիների և իրենց հայրենակիցների միջև կապերը¹⁰¹:

Ինչ վերաբերում է Վրաստանին, ապա վերջինս իր հերթին ևս փորձում է որոշ խնդիրների լուծում տալ չվեներուրիների միջոցով: Նախ և առաջ Վրաստանի նպատակն է այս հատվածի շնորհիվ որոշակի դերակատարություն ձեռք բերել Թուրքիայի ներքաղաքական կյանքում և չվեներուրիներին օգտագործել վրացական շահերի լորրինզի համար¹⁰²: Որոշ

¹⁰⁰ Türkiyeli Gürcüler, 24.09.2011. <http://www.abhazyam.com/haber/2112/turkiyeli-gurculer.html>

¹⁰¹ Иванов В., Грузино-турецкие отношения: реалии и перспективы(III), Научное Общество Кавказоведов, 04.02.2013. <http://www.kavkazoved.info/news/2013/02/04/gruzino-tureckie-otnoshenija-realii-i-perspektivy-iii.html>

¹⁰² Там же.

մասնագետների կարծիքով Վրաստանը անգամ փորձում է չվեներութիներն որպես գործիք ծառայեցնել՝ Թուրքիայի արտաքին քաղաքականության վրա ազդելու նպատակով: Այնուհանդերձ, Վրաստանը որոշակի նպատակների հասնելու համար բավական ակտիվացրել է իր հարաբերությունները չվեներութիների հետ: Մասնավորապես այդ հարցում բավական լայն գործունեություն է ծավալում 2008 թ. ստեղծված Վրաստանի սփյուռքի նախարարությունը¹⁰³, որը միաժամանակ փորձում է չվեներութիների խնդիրները վրաց-թուրքական հարաբերություններում օրակարգային դարձնել:

Ամփոփելով, կարող ենք արձանագրել այն փաստը, որ Օսմանյան կայսրության գործադրած բոնի իսլամացման քաղաքանության հետևանքով վրաց ժողովրդի մի զգակի հատված դարձավ մուսուլման: Աջարաբնակ մուսուլման վրացիների մի մասը լրելով իրենց հայրենիքը, հայտնվելով Օսմանյան կայսրությունում, վերջինիս, այնուհետև հանրապետական Թուրքիայի ուժացման քաղաքանության հետևանքով ամրողությամբ կտրվեց իր ազգային արմատներից: Թուրքիան վրաց ազգի այդ հատվածի թուրքացման գործընթացը գրեթե հասցնելով իր ավարտական փուլին, այժմ նպատակադրվել է աջարաբնակ իսլամադավան վրացիների շրջանում ևս տարածել իր ազդեցությունը՝ Աջարիան լիակատար կախվածության մեջ գցելու նպատակով: Իրադարձությունների քննությունը ցույց է տալիս, որ Թուրքիան թե՛ պետական, թե՛ ոչ պետական ուղիներով և թե՛ չվեներութիների միջոցով նպատակադրված և հետևողականորեն իրականացնում է իր այդ քաղաքականությունը:

¹⁰³ Челидзе Н., Политика в отношении диаспор: Грузия, пояснительная записка 13/109, Карим Восток, сентябрь 2013, стр. 2. http://www.carim-east.eu/media/exno/Explanatory%20Note_2013-109.pdf

ГРУЗИНО-МУСУЛЬМАНСКОЕ МЕНЬШИСТВО (ЧВЕНЕБУРИ) В ТУРЦИИ: ИСТОРИЯ, ТЕКУЩАЯ СИТУАЦИЯ

Лариса Алексанян
(резюме)

Одна часть грузинского народа из за насильственной исламизации Османской империи, а позднее политики турецкой ассимиляции была полностью отрезана от своих корней, всегда придерживаясь турецкой идеологии. Такой участнике подверглись чвенебури (одна часть аджарских мусульманских грузин), которые еще в 17-18 веках насильственно исламизировались и в конце 19 века по причине оказывания под властью Российской Империи, по своей воле и в результате импульсов внешних сил переехали в Османскую Империю и таким образом второй раз приняли османское иго. Далее из за последовательной политики последнего и затем турецкой республики, они были подвергнуты ассимиляции отдавшись от этнических корней. Несмотря на национальные продвижения в их кругах, сегодня они полностью интегрированы в турецком обществе, служат только интересам Турции и не обеспокоены возвращением к грузинским корням.

պետության հիմնադրման տարեթիվն է: Ժամանակաշրջանի այս ընտրությունը միտված է ամփոփելու նաև Հայոց ցեղասպանությանը վերաբերող արձագանքները, բնորոշումներն ու որակումները, որոնք առկա են թուրքական դասագրքերում՝ սկսած համիլյան շարդերից, ավարտած երիտրուրքական և քեմալական Թուրքիայում տեղի ունեցած հանցագործություններով, որոնց զին է զնացել հայ ժողովրդի մի պատկառելի հատվածը:

1878Թ. ԲԵՌԼԻՆԻ ՎԵՀԱԺՈՂՈՎԻՑ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Թուրքական պատմագրությունը յուրօրինակ կերպով է ներկայացնում հայերին, հայերի ապրած կյանքը Օսմանյան կայսրությունում և Հայկական հարցի առաջացումը: Այստեղ կարևոր է արձանագրել, որ, ըստ թուրքական պատմագրության, հայերը և թուրքերը մինչև 19-րդ դարը որևէ խնդիր չեն ունեցել, ամեն ինչ սկսվել է 19-րդ դարի վերջին քառորդում, երբ մեծ տերությունները օգտագործել են հայ ժողովրդին իրենց իսկ քաղաքական խնդիրները առաջ մղելու նպատակով, իսկ հայերն էլ, որոնք մինչ այդ համերաշխ էին ապրում Օսմանյան կայսրության տարածքում, 1877-1878 թթ. ոուսթուրքական պատերազմի ընթացքում առաջին անգամ խոռվություններ են բարձրացրել պետության դեմ: Ամենեին հարկ չկա թվարկել 1299-ից (Օսմանյան կայսրության հիմնադրման տարեթիվն է, չնայած, որոշ պատմաբաններ, վիճելի են համարում այս տարեթիվը, - Հ.Դ.) մինչև 1878 թվականը տեղի ունեցած մեծ ու փոքր հայ-թուրքական բախումները, ճակատամարտերը, թշնամանքի այլ դրսնորումները, որ հնարավոր լինի մերժել այդ ակնհայտ կեղծ տեսակետը: Դեռևս 16-րդ դարում տեղի ունեցած թուրք-պարսկական պատերազմների ընթացքում հայ ժողովրդի կրած վնասները, Դավիթ Բեկի,

Հայի Հասան Զալայյանի և Միհթար սպարապետի դեկադարձ ազատազրական շարժումները Սյունիքում և Արցախում, 1724թ. թուրքերի ներխուժելը Արարատյան դաշտ, Կարքի գյուղի 40-օրյա հերոսական ինքնապաշտպանությունը, 1724թ. սեպտեմբերի 26-ի Երևանի գրավումը (թուրքական բանակը կրել է մոտ 20.000 զոհ), հայ ժողովրդի գործուն մասնակցությունը 1828-1829թ. ոուս-թուրքական պատերազմին, 1862թ. Գեյթունի ապստամբությունը բավարար են՝ փաստելու համար, որ թուրքական պատմագրության վերոնշյալ տեսակետը չի կարող արտացոլել իրականությունը: Այնինչ Թուրքիայի միջնակարգ կրթության (դպրոցի) (Ortaöğretim կամ lise) 10-րդ դասարանի պատմության դասագրքում ասվում է. «Օսմանյան կայսրության հիմնադրումից ի վեր հայերն ու թուրքերը մշտապես ապրել են խաղաղ՝ կողքի: Մինչև 19-րդ դարը հայերը Օսմանյան կայսրությունում հիշատակվել են որպես «հավատարիմ ազգ» (millet-i sadika) («հավատարիմ ազգ» ասելով՝ դասագիրքը նկատի ունի, որ հայերը հավատարիմ են եղել Օսմանյան կայսրությանը. - Հ.Դարբինյան): «Հայերը, որոնք Օսմանյան կայսրությունում ամենաբարձր դիրքերի են հասել, մինչև 1877-1878թթ. օսմանա-ոուստական պատերազմը որևէ խնդրի առջև չեն կանգնել: Հատկապես մեծահարուստ են եղել կայսրության մեծ քաղաքների ազգությամբ հայ բնակիչները, որոնք գրադիւն էին առևտրով, արվեստով և բանկային ու միջնորդական գործունեությամբ: Քանի որ հայերը կողք կողքի ապրել են թուրքերի հետ, նրանք կրել են նաև որոշակի մշակութային ազգեցույթը»¹: Անդրադառնալով արդեն ոուս-թուրքական պատերազմին, հարկ ենք համարում մեջքերել այդ իրադարձության հայերին վերաբերող առավել ուշագրավ այն հատվածները, որոնք ներկայացնում են դասագիրքը. «Առաջին անգամ այս պատերազմի ժամանակ էր, որ ոուսների կողմից հրահ-

¹ Özsü H., Aymergen Y., 10. Sınıf, TARIH, Ankara, 2013, s.188.

ված հայերը ապստամբեցին»²: Միանգամից ուշադրություն է զրավում «ռուսների կողմից հրահրված հայերը» ձևակերպումը: Այն տողատակին թարցնում է մի նրբություն. թուրքական պատմագրությունը հայերի՝ ապստամբելու պատճառը ներկայացնում է այն, թե իբր ռուսները հրահրել են հայերին, հայերն էլ, տրվելով սադրանքներին, ապստամբել են Օսմանյան կայսրության դեմ: Այս նույր ձևակերպումը ընթերցողին փորձում է հասցնել, որ հայերը ապստամբելու որևէ պատճառ չեն ունեցել, թուրքերի հետ ապրել են հաշտ և համերաշխ և հանկարծ տեղի տալով ռուսական սադրանքներին, ապստամբել են կայսրության դեմ: Մինչդեռ ճշմարտություն է, որ հայ ժողովուրդը Օսմանյան կայսրության տարբեր ժամանակաշրջաններում մշտապես ենթարկվել է բազմապիսի ճնշումների և մշտապես փորձել է թոթափել թուրքական լուծը, և այդ համատերասում ռուս-թուրքական պատերազմը հարմար առիթ է ընկալվել հայ ժողովրդի նպատակները իրականացնելու համար:

Թուրքական պատմագրությունը նշում է, որ պարտություն կրելով 1877-1878թ. ռուս թուրքական պատերազմում, թուրքերը հաշտություն խնդրեցին ռուսներից: Հաշտության պայմանագիրը կնքվեց 1878թ. մարտի 3-ին (ՀՀ ավագ դպրոցի հումանիտար հոսքի Հայոց պատմության 11-րդ դասարանի դասագրի մեջ նշված է 1878թ. փետրվարի 19)³ և հայտնի է Սան Ստեֆանոյի պայմանագիր անունով: Այս միջազգային պայմանագրում առաջին անգամ տեղ գտավ Հայկական հարցը: Ընդ որում, պետք է արձանագրել, որ թուրքերը, Սան Ստեֆանոյում Հայկական հարցի միջազգային հարթակ բերելը, կրկին կապում են Ռուսաստանի հետ. «Զգուելով ներխուժել

² Նոյն տեղում, էջ 187:

³ Մելքոնյան Ա., Բարիսութարյան Վ., Հարությունյան Գ., Չոբանյան Պ., Սիմոնյան Ա., Նազարյան Ա., «Հայոց պատմություն, 11-րդ դասարան, հումանիտար հոսք», Երևան, 2010, էջ 173:

առաջածաշրջան՝ ռուսները այդ պայմանագրի մեջ հայերին վերաբերող մի հողված ավելացրին, որով է առաջին անգամ միջազգային պայմանագրում արտացոլում գտավ Հայկական հարցը»⁴:

Հայտնի է, որ Բալկաններում և Արևելքում ռուսական կայսրության դիրքերի նման ամրապնդումը, որը Ռուսաստանը ձեռք բերեց Սան Ստեֆանոյի պայմանագրի միջոցով, անհանգստություն առաջացրեց Եվրոպական երկրների շրջանում, և անիրաժեշտություն առաջացավ վերանայել Սան Ստեֆանոյում ձեռք բերված պայմանավորվածությունը: Նոր պայմանագիրը կնքվեց 1878թ. հուլիսի 13-ին Բեռլինում: Թուրքական դպրոցական դասագրի մեջ Բեռլինի խորհրդաժողովում Հայկական հարցի անդրադարձ հետևյալն է. «Հայկական հարցը մտցնելով տարբեր միջազգային պայմանագրերի մեջ, քննարկման թեմա դարձնելով, այն դարձավ միջազգային քաղաքականության առարկա: Բեռլինի պայմանագրով Եվրոպական տերությունները իրավունք ստացան խառնվել հայ-թուրքական հարաբերություններին»⁵: Նախկինում արդեն նշելով, որ հայ և թուրք ժողովուրդները որևէ խնդիր չեն ունեցել մինչև 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմը, թուրքական դասագիրքը ստիպված է բացատրություններ փնտրել, թե ինչն էր պատճառը, որ հայերը, որոնք «նախկինում որևէ խնդիր չեն ունեցել թուրքերի հետ», հանկարծ տրվեցին Ռուսաստանի և Եվրոպական որոշ երկրների անդրանքներին և սկսեցին պայքար մղել թուրք ժողովուրդի և Օսմանյան կայսրության դեմ: Այս խնդիրը լուծումը փորձում է առաջարկել Թուրքիայի միջնակարգ կրթության (դպրոցի) 10-րդ դասարանի դասագրի 189-րդ էջը, որում տեղ գտած 2 ենթավերնագրերն ել վերաբերվում են հայերին: Առաջին ենթավերնագրիրը վերնագրված է «Հայերի հրա-

⁴ Özsü H., Aymergen Y., 10. Sınıf TARİH, Ankara 2013, s.187

⁵ Նոյն տեղում, էջ 188.

հրումները և կազմակերպությունների ստեղծումը» (Ermenilerin Kışkırtılması ve Örgütlenmeleri): Այս ենթավերնագրի ներքո մասնավորապես ասվում է. «Օսմանյան կայսրության տիրապետության տակ ապրող հայերը սկզբում ազդեցություն կրեցին ազգայնական հոսանքներից, որոնք Ֆրանսիական հեղափոխության արդյունքում քաղաքական նոր որակ ստացան: Սակայն այս իրավիճակը փոխվեց, եթե Միջերկրական ծով ելք ունենալ ձգտող Ռուսաստանը, 19-րդ դարի երկրորդ կեսերից սկսած, սկսեց իրահրել հայերին: Ռուսական քարոզության ազդեցությամբ 1860 թվականից սկսած ի հայտ եկան առաջին հայկական օգնության կոմիտեները: Հայերը ոուսների աջակցությամբ հիմնադրեցին հեղափոխական կոմիտեներ: Շվեյցարիայում 1887թ. ձևակրթեց Հնչակյան կոմիտեն, իսկ Ռուսաստանում 1889-ին (հայկական պատմագրության համաձայն՝ ՀՅԴ հիմնադրման տարեթիվը համարվում է 1890թ., վայրը՝ Թիֆլիսը, - Հ.Դ.)՝ Դաշնակցական հայկական կոմիտեն: Ռուսաստանը 1877-1878թթ. պատերազմի ժամանակ հայերին գայթակող էր անկախության խոստումով: Օսմանյան կայսրության դեմ համախմբված հայերը, այս պատերազմի ընթացքում առաջին անգամ ապստամբելով, մարտնչել են ռուսական բանակի կազմում: Սան Ստեֆանովի պայմանագրում և Բեռլինի վեհաժողովի համաձայնագրում տեղ գտավ հոդված, որը նախատեսում էր բարեփոխումներ իրականացնել հայաբնակ վայրերում: Այսախով, Հայկական հարցը դարձավ միջազգային քաղաքականության թեմա: Հայկական եկեղեցին, որը պատվիրակություն էր ուղարկել Բեռլինի վեհաժողով, պատրաստել էր մի գեկուցագիր, ըստ որի՝ Վանի, Էրզրումի և Դիարբեքիրի հայ բնակչությունը գերակշռում է թուրք բնակչությանը: Սակայն անզինացիները նշեցին, որ հայկական բնակչությունը գերակշռող չէ, հայերը

գրված են տարբեր վայրերում, իետևաբար հայերի ցանկությաներ ընդունելի չհամարվեցին»⁶:

Թուրքական պատմության դասագրքերում ահա այսպես է ներկայացվում հայերի և թուրքերի միջև տեղի ունեցած առաջին անհամաձայնությունները և դրանց պատճառները: Նոյն եղում երկրորդ ենթավերնագիրը կոչվում է «Հայերի իրահրած գեղարքերը» (Ermenilerin Çıkardığı Olaylar): Այս ենթավերնագիրը ամբողջովին նպատակ ունի բացասական երանգներով ներկայացնել հայ ժողովրդին, այնտեղ ներկայացնելով այն ապստամբությունները, որոնք դիմել է հայ ժողովուրդը: Ուշագրավ է, որ վերոնշյալ ենթավերնագրի տակ պարզապես բվարկվում են այդ իրադարձությունները, և չկա գեթ մեկ դեպք, որն անդրադարձ կատարի նաև այս կամ այն իրադարձության պատճառներին: Ենթավերնագրի տակ գրված է. «Հայկական կազմակերպությունները առաջին անգամ ապստամբություն կազմակերպեցին 1890թ. Էրզրումում և Աղանայում: 1893թ. հայերը զինված գրոհ ձեռնարկեցին Սերգիփոնի (Ամասիայից 32 կմ. հեռու) անվտանգությունը ապահովող թուրքական բանակի վրա, 1894թ. հայերը հարձակում գործեցին Ստամբուլի Բար Ալի քաղամասի Օսմանյան կայսրության կառավարության շենքի վրա: Հայկական ապստամբություններից ամենաուժեղը տեղի ունեցավ 1894թ. Սասունում: Հայերը ապստամբություններ են կազմակերպել նաև Կեսարիայում (հայերեն անվանումը՝ Մաժար), Յոզգաթում, Քահրամանմարաշում և Չորումում, իսկ 1896թ. գրավելով Բեյօղլու քաղամասի Օսմանյան բանկը, կրկին ապստամբեցին: Հայերը մահափորձ են կատարել նաև օսմանյան սուլթան Աբդուլ Համիդ Երկրորդի դեմ»⁷:

⁶ Նոյն տեղում, էջ 189:

⁷ Նոյն տեղում, էջ 188:

Ակնհայտ է, որ նման կերպ ներկայացվածից որևէ ընթերցողի մեջ չի կարող դրական տպավորություն առաջանալ հայ ժողովրդի մասին: Դասագրքում պարբերաբար նշվում է, որ Օսմանյան կայսրությունը մշտապես պատրաստ է եղել բարեփոխումներ անել հայերով բնակեցված շրջանում, սակայն «անհնար էր այդ բարեփոխումների արդյունքը տեսնել կարծ ժամանակահատվածում, բացի այդ, հայերը նպատակ ունեին անջատվել Օսմանյան կայսրությունից⁸»: Այս ձևակերպումը նպատակ ունի ընթերցողին ցույց տալ, որ հայերը ոչ միայն համբերատար չեն բարեփոխումների հարցում, այլև անջատողական տրամադրություններին տուրք տալով, ավելի շատ ձգտել են ոչ թե բարեկավել իրենց վիճակը կայսրության ներսում, այլ անջատվելով՝ անկախություն ձեռք բերել: Այս ամենը մատուցելուց հետո, դասագրքի հեղինակները, առաջ անցնելով իրադարձություններից, մի քանի նախադասությամբ, համառոտ տեղեկության միջոցով, փորձում են ներկայացնել թուրքական պատմագրության մեջ ամբարված այն տեսակետը, թե ինչպես «հանգուցալուծվեց Հայկական հարցը»:

Այսպիսով, հարևան երկրի պատմագրությունը, ընդունելով, որ 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմի արդյունքում առաջացավ Հայկական հարցը, փորձում է ներկայացնել նաև դրա հանգուցալուծումը: Այն է. «Հայկական հարցը արդիական էր նաև Առաջին համաշխարհային պատերազմի և Ազատագրական պատերազմի⁹ (Kurtuluş Savaşı) ընթացքում: Արևելյան ռազմածակատի իրամանատար Քազիմ Քարարեքիր փաշան, պարտության մատնեց հայերին, և 1920թ. դեկտեմբերի 3-ին կնքված Գյումրիի (Ալեքսանդրապոլ) պայմանագրով լուծվեց հայկական հարցը»¹⁰: Այսպիսով,

⁸ Ըստ տեղում, էջ 189:

⁹ Սուսթափա Քեմալի զիսավորած շարժումը օբյեկտիվ պատմագրությունը կոչում է Ազգայնամոլական շարժում:

¹⁰ Özsü H., Aymergen Y., նշվ. աշխ., էջ 190:

կարող ենք արձանագրել, որ հարևան երկրի պատմագրության կարծիքով հայկական հարցը դադարել է գոյություն ունենալ դեռևս 1920թ., և դրա ամբողջ պատմությունը ամփոփված է 1878-1920թք:

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՉԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՄԻՆՉԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՉՎԱԿՈՒՄԸ

Թուրքիայի միջնակարգ կրթության (դպրոցի) 10-րդ դասարանի պատմության դասագրքում Առաջին համաշխարհային պատերազմի մասին ընդարձակ անդրադարձի մեջ առանձին տեղ են զբաղեցնում այն ռազմածակատները, որտեղ կովել է թուրքական բանակը: Մեզ առավել հետաքրքրող Կովկասյան ռազմածակատի մասին ասվում է հետևյալը: «Նոյեմբերի 1-ին ռուսները ներխուժեցին Կովկաս, այդպիսով բացելով պատերազմի՝ Կովկասյան ռազմածակատը: Այս ռազմածակատում կովելով՝ թուրքական բանակը նպատակ ուներ վերջ տալ Օսմանյան պետության նկատմամբ ռուսական երազանքներին և կապ հաստատել Միջին Ասիայում ընակվող թուրքերի հետ: Օսմանյան բանակը սաստիկ ցրտերի, սովի և վարակիչ հիվանդությունների պատճառով առաջին պարտությունը կրեց 1914թ. դեկտեմբերի 22-ից հունվարի 19-ը տևած Սարիդամիշի ճակատամարտում (ՀՀ ավագ դպրոցի հայց պատմության հումանիտար հոսքի 11-րդ դասարանի դասագրքում Սարիդամիշի ճակատամարտը հիշատակվում է 1914թ. դեկտեմբերի 9-ից 1915թ. հունվարի 5-ը¹¹), որի հետևանքով զրիվեցին տասնյակ հազարավոր թուրք զինվորներ: 1915թ. ապրիլին կրկին հարձակման անցած ռուսական բանակը գրավեց Էրզրումը, Տրավիգոնը, Երզնկան,

¹¹ Մելքոնյան Ա., Բարիսուղարյան Վ., Հարությունյան Գ., Չորանյան Պ., Սիմոնյան Ա., Նազարյան Ա., նշվ. աշխ., էջ 243:

Վանը, Բիթլիսը և Մուշը: Այս շրջաններում ապրող հայերը, որոնք կովում էին ոռուսների հետ միասին, կոտորածներ կազմակերպեցին նվաճված վայրերում»¹²: Այստեղ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել Սարիղամիշի ճակատամարտի անդրադարձի մեջ թուրքական պատկերացումներին ու դիրքորոշմանը: Թուրքական պատմագրությունը, չնշելով ճակատամարտի մանրամասները, նրբորեն շրջանցում է թուրքական 3-րդ բանակը զիսավորած Էնվեր փաշայի հրամանաւարության տակ գտնվող 90.000-անոց բանակի լիակատար ջախջախման փաստը, պարտությունը պատճառարանելով սաստիկ գրտերով, սովոր և վարակիչ հիվանդություններով:

Թուրքիայի միջնակարգ կրթության (դպրոցի) 10-րդ դասարանի պատմության դասագրքի Առաջին համաշխարհային պատերազմին նվիրված հատվածի մեջ հատուկ անդրադարձ կա հայերին և Հայկական հարցին: Անդրադարձը վերնագրված է «Հայկական հարցը Համաշխարհային պատերազմի տարիներին»: Ուշագրավ է, որ դասագրքի հեղինակները այստեղ ևս պարբերաբար հիշեցնում են, որ եվրոպական որոշ տերություններ և առավելապես Ռուսաստանը, իրենց շահերը առաջ տանելու նպատակով մշտապես սաղրել և օգտագործել են հայերին ընդդեմ թուրքերի: Այս է պատճառը, որ հայերը շարունակաբար անհնազանդ են եղել՝ այդպիսով դավաճանելով թուրքերին, որոնց հետ ապրում էին միևնույն հայրենիքում: Հայերին վերաբերող հատվածում կարդում ենք. «Ռուսաստանը, օգտագործելով հայերին, փորձում էր տիրել Անատոլիային: Այս է պատճառը, որ ոռուսները, գրավելով Երզրումը, Երզնկան, Մուշը և Բիթլիսը, այս տարածքներում ապրող հայերին հրահրեցին նոր ապստամբություններ կազմակերպել: Հայերը, որոնց զինում էին ոռուսները, հարձակվելով թուրքական զյուղերի վրա, կորոտածներ էին իրա-

կանացնում»¹³: Շարունակելով հայերի մասին թեման, հեղինակները գրում են. «Հայերը մի շարք ապստամբություններ են կազմակերպել արևելյան և հարավ-արևելյան Անատոլիայում: 1915թ. փետրվարին ապստամբություն կազմակերպվեց Վանում: Ռուսները, հայերի օգնությամբ, զավթեցին Վանը և այստեղ հայ նահանգապետ նշանակեցին: Ժամանակի Օսմանյան կայսրության կողմից նշանակված նահագապետ Զենգեր թեյր կազմակերպեց թուրք ժողովրդի գաղթը դեպի Դատուսան, Բիթլիս և Դիարբերի, որպեսզի փրկի թուրք բնակչությունը հայկական կոտորածներից: Գաղթի ճանապարհը բռնած թուրքերը ավազակային հարձակումների էին ենթարկվում հայ ավազակախրերի կողմից: Հայերին աջակցում էր ոչ միայն Ռուսաստանը, այլև Անգլիան և Ֆրանսիան»¹⁴: Այս հատվածից անմիջապես հետո անդրադարձ է կատարվում 1915թ. ապրիլի 24-ին. «Տեսնելով, որ հայկական կոմիտեների աջակցությամբ կազմակերպվող ապստամբությունները մեծ չափերի են հասնում, Օսմանյան պետությունը 1915թ. ապրիլի 24-ին մի շրջաբերական հրապարակեց: Այս շրջաբերականով կայսրության կենտրոններին հրահանգավորվում էր փակել հայկական կոմիտեների օջախները և ձերբակալալ նրանց նեկավարներին»¹⁵: Դասագրքի այդ հատվածում ոչ մի անդրադարձ չկա տեղի ունեցած զանգվածային սպանություններին և խոշտանգումներին, որոնց ենթարկվեցին հայերը:

Նշված դասագրքի այս հատվածում ապրիլի 24-ին տեղի ունեցած դեպքերից անմիջապես հետո անդրադարձ է կատարված 1915թ. մայիսի 27-ին հրապարակված «Տեղահանության մասին օրենքին» (Zorunlu Göç kanunu): Ահա այսպէս է ներկայացված հայ ժողովրդի աքսորը. «Օսմանյան կայս-

¹² Özsü H., Aymergen Y., նշվ. աշխ., էջ 207:

¹⁴ Özsü H., Aymergen Y., նշվ. աշխ., էջ 208:

¹⁵ Նոյն տեղում:

բուրյան՝ նախկինում ձեռք առած միջոցները արդյունք չտվեցին, ինչի պատճառով էլ 1915թ. մայիսի 27-ին հրապարակվեց «Տեղահանության» մասին օրենքը: Օրենքի նպատակը միայն այն էր, որ ապստամբությունների մեջ ներգրավված հայերին հեռացնեն պատերազմական շրջաններից և տեղափոխեն երկրի ավելի ապահով շրջանները: Հայերին բնակեցրին այսօրվա Միրիայի և հարավ-արևելյան Անատոլիայի միջև ընկած տարածքներում: «Տեղահանության» օրենքով հայ ավագակախմբերի ճիրաններից փրկվեցին այն հայերը և ապահովվեց նրանց անվտանգությունը, որոնք հրաժարվում էին մասնակցել ապստամբություններին և այլ ահաբեկչական գործողություններին: Օսմանյան կայսրության Ներքին գործերի նախարարությունը կանոնակարգ էր հրապարակել, որն ամենայն մանրամասնությամբ կարգավորում էր զաղթի ամրող գործընթացը: Ուշադրություն է դարձվել նոր բնակեցվելիք վայրերում զյուղատնտեսական հողերի բերքի լինելուն, հայերի անվտանգությունը ապահովելու համար հիմնվել են ոստիկանատներ: Նոյնիսկ հնարավորություն է տրվել նոր բնակեցված վայրերում գրաղվել իրենց նախկին մասնագիտությամբ¹⁶:

Թուրքիայի 10-րդ դասարանի պատմության դասազրի՝ Համաշխարհային պատերազմի ընթացքում հայերին կատարված անդրադարձի վերոնշյալ հատվածը իրականության խեղարքության ամենացինիկ դրսնորումն է: Որևէ աղերս չունենալով իրականության հետ, վերոնշյալ մեջքերումը նաև անհաջող և անփոյթ փորձ է, որը միտված է դահձին ներկայացնել զոհի կերպարանքով և հակառակը, իսկ օսմանյան պետությանը իբրև թե հոգատար իր հայ քաղաքացիների նկատմամբ:

Թուրքական դասազիրք, ամփոփելով «Տեղահանության» օրենքին վերաբերող թեման, նշում է. «Հայերի զաղթը ամբող-

քամին ավարտվել է 1916թ. հոկտեմբերին: Գաղթի ընթացքում ներարկվելով ավագակային հարձակումների, զոհվել է շուրջ 10.000 և համաձարակների պատճառով՝ շուրջ 30.000 հայ: Անկողմանակալ հետազոտողների անցկացրած ուսումնասիրությունները փաստում են, որ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում տեղի ունեցած բոլոր ապստամբությունների, ուզմական գործողությունների և զաղթի հետևանքով զոհվել է շուրջ 300.000 հայ: Ի հակադրություն դրան, հայերը կոտորել են շուրջ 600.000 բոլոր և շուրջ 500.000-ն էլ ստիպված է եղել դիմել զաղթի¹⁷:

Դասազրերում ներկայացված են այն պայմանագրերը, որոնք կնքվեցին Առաջին համաշխարհային պատերազմի պատրիարքի հետո: Հարկ ենք համարում անդրադառնալ այդ պայմանագրերի՝ մեզ առավել հետաքրքրող հատվածներին: 1918թ. հոկտեմբերի 30-ին Սուլլուսի զինադարձը մասին ասվում է. «Պատերազմից դաշնակիցների դուրս զայուց հետո, պաղեստինահրիմական ուզմաճակատում կրած պարտությունների հետևանքով երիտթուրքական կառավարությունը հրաժարական տվեց (երիտթուրքերի դեկավարներ հեվեր փաշան, Թալեկար փաշան և Զեմալ փաշան լրեցին երկիրը), որին փոխարինեց Սիմեդ Իզզեր փաշան: Օսմանյան կայսրությունը հրադարար խնդրեց Անտանտի երկրներից: Հաշոտության բանակցությունները տեղի ունեցան Լեմսու կղզու Սուլլուսի նավահանգստում: 1918թ. հոկտեմբերի 30-ին կնքվեց զինադարձը: Սուլլուսի զինադարձը վերջ դրեց Օսմանյան կայսրությանը և յուրօրինակ սկիզբ հանդիսացավ Թուրքիայի Հանրապետության հիմնադրման համար:

¹⁶ Նոյն տեղում: Հավելենք, որ «Առաջին համաշխարհային պատճառազմի ընթացքում զոհվել է շուրջ 300.000 հայ» թեղի հեղինակ է համարվում թուրք պատմաբան և քաղաքական գործիչ Յուսուֆ Հալաչօղլուն: Այս պարուն 1993-2008թթ. եղել է Թուրքական պատմագիտական ընկերության (Türk Tarih Kurumu) նախագահ, Ազգայնական շարժում կուսակցության (MHP) անդամ է, պատգամավոր:

¹⁷ Նոյն տեղում:

Զինադադարի 24-րդ հոդվածը, որը անհանգստություն էր առաջացրել թուրքերի շրջանում, նախատեսում էր, որ Անտանտի երկրները կարող են ներխուժել Արևելյան Անատոլիայի 6 վիլայեթներ (Vilayet-i Sitte) (Էրզրում, Վան, Խարբերդ, Սեբաստիա, Ֆիրլիս, Դիարբերի): Այս հոդվածը հիմք էր նախապատրաստում տեսանելի ապագայում հայկական պետության ստեղծման համար: Զինադադարի մեկ այլ տեղում նշվում էր, որ պատերազմի ընթացքում գերեվարված Անտանտի երկրների քաղաքացիները և հայերը վերադարձելու են Անտանտին»¹⁸:

Թուրքիայի 11-րդ դասարանի պատմության դասագրքի մյուս ուշագրավ անդրադարձ տեղ է գտել 1919թ. հունվարի 18-ին Փարիզում բացված խաղաղության վեհաժողովին (վեհաժողովը ավարտվել է 1920թ. հունվարի 21-ին) նվիրված հատվածում. «Փարիզի խաղաղության վեհաժողովը հրավիրվեց տևական խաղաղության հաստատման, իսկ իրականում՝ Օսմանյան կայսրության վերաբաժանումը իրականացնելու ծրագրերը ևս մեկ անգամ ճշտելու նպատակով: 1919թ. հունվարի 18-ին հրավիրվեց Փարիզի խաղաղության վեհաժողովը, որին մասնակցում էին 32 երկրներ: Կոնֆերանսին մասնակցելու էին հրավիրվել նաև հույների, հայերի և արաբների պատվիրակությունները... Վեհաժողովն ընդունեց Արևելյան Անատոլիայում հովանավորության սիստեմով գործող հայկական պետություն հիմնադրելու գաղափարը»¹⁹:

Ուշադրության է արժանի նաև անդրադարձ ԱՄՆ 28-րդ նախագահ Կուլոր Վիլսոնին: Թուրքական դասագրքերում զգալի չափով անդրադարձ է կատարվում ԱՄՆ նախագահին, նրա հրապարակած հայտնի 14 սկզբունքներին և տարբեր հարցերի շուրջ դիրքորոշումներին, սակայն դասագրքերում նրբանկատորեն գրեթե շրջանցված են Հայաստանին և

նոյն ժողովրդին վերաբերող նրա մոտեցումները: Քաջ հայտնի 1920թ. Սևրի պայմանագրի թուրքական դասագրքում ներկայացրած տարբերակը սա է. «Դաշնակից պետությունները վերջնական խաղաղության հաստատմանը և այլ հարցերի լուծմանը հասնելու համար Օսմանյան կայսրության հետ մի պայմանագիր կնքեցին: Պայմանագրի՝ ազգային փոքրամասնություններին վերաբերող հատվածում նշվում է, որ Օսմանյան տարածքներում ապրողները ունեն կրոնական, լեզվական ազատություն և հավասար իրավունքներ: Սահմաններին և քաղաքական որոշումներին վերաբերող հատվածում նշվում է, որ Արևելյան Անատոլիայում Հայաստան և Քրդատան անուններով հիմնադրվելու են երկու նոր պետություններ»²⁰: Դասագրքում նշվում է նաև, որ Թուրքիայի Ազգային մեծ ժողովը 1920թ. օգոստոսի 19-ին կայացրել է մի պատմական որոշում, ըստ որի, մեջիսը «հայրենիքի դավաճան» է որակում «թուրք ժողովրդի ապրելու իրավունքը ոտնահարած» Սևրի պայմանագիրը ստորագրողներին և վավերացնողներին:

Թուրքիայի 11-րդ դասարանի պատմության դասագրքի 3-րդ գլուխը նվիրված է Սուստաֆա Քեմալի զինավորած Ազգայինամոլական շարժմանը և այդ շարժման ռազմաճակատներին: Հայտնի է, որ այս շարժման ընթացքում թուրքերը բազմաթիվ ճակատամարտներ և կոփվեր են մղել հույների և հայերի դեմ, իրականացրել են բազմաթիվ կոտրածներ: Թուրքիայի դպրոցական վերոնշյալ դասագրքում, սակայն, Ազգայինամոլական շարժումը ներկայացված է որպես հերոսական շարժում, որի ժամանակ էլ դրվել է այսօրվա Թուրքիայի Հանրապետության հիմքը: Դասագրքի այն հատվածում, որը անդրադարձում է այդ շարժման պատերազմներին և Քեմալի զինավորների մղած կոփվերին, ասվում է. «Սուստաֆա Քեմալի առաջնորդությամբ թուրք ժողովուրդը համախմբվեց միակողմանի նվաճումներ իրականացնող Դաշ-

¹⁸ Özsu H., Baştürk N., 11. Sınıf TARIH, Ankara, 2013, s. 41-42.

¹⁹ Նույն տեղում, էջ 44:

նակից երկրների դեմ՝ այդպիսով ամբողջովին ներգրավվելուվ ազգային ազատագրական պայքարի մեջ։ Ազգային ազատագրական շարժման ընթացքում արևելքում պատերազմներ են մղվել հայերի, հարավում՝ ֆրանսիացիների, արևմուտքում՝ հույների դեմ²¹։ Մրանից հետո մանրամասն խոսվում է ամեն ռազմաճակատի մասին առանձին։ Մեզ առավել հետաքրքրող արևելյան ռազմաճակատի մասին անդրադարձ հետևյալն է. «Քազըմ Քարաբերիր փաշան, չնայած Մուդրոսի զինադադարի պահանջներին, հայկական սպառնալիքների առկայության պարագայում, զգինաթափեց իր գլխավորած 15-րդ կորպուսը։ ԹԱՍԾ (Թուրքիայի ազգային մեծ ժողով)-ը Քարաբերիր փաշային նշանակեց Արևելյան ռազմաճակատի հրամանատար, որին տրվեց անսահման լիազորություններ։ Հայերի դեմ ուղղված Արևելյան ռազմաճակատը Ազգային ազատագրական շարժման ընթացքում բացված առաջին ռազմաճակատն էր։ Բոլշևիկները, որոնք Ռուսաստանում տապալեցին ցարական ռեժիմը, 1918թ. Բրեստ-Լիտովսկի պայմանագրով Թուրքիային հանձնեցին 1878թ. Բեյինի խորհրդաժողովով իրենց անցած Կարսը, Արդահանը և Բարումը։ Թուրքական բանակը, չբավարարվելով այսքանով, Բարումից առաջխաղացում կատարեց մինչև Բարու։ Քանի որ Ռուսաստանը նահանջեց, այդ տարածքներում հիմնադրվեցին ազատ և անկախ Հայաստան, Վրաստան և Աղրբեջան պետությունները։ Զայած ԱՄՆ նախագահ Վիլսոնի կողմից ուղարկված գեներալ Հարբորդի գլխավորած պատվիրակության հերքումներին, Վիլսոնի սկզբունքներով ոգևորված հայ ժողովուրդը, պնդելով, որ կազմում է Արևելյան Անատոլիայի բնակչության մեծամասնությունը, սկսեց հավակնություններ ներկայացնել Անատոլիայի հանդեպ։ Դաշնակից երկրների կողմից հայերի Փարիզի կոնֆերանսին հրավիրվելը հայերի շրջանում բորբոքեց մեծ Հայաստան ունենալու երազանքը։

²¹ Նույն տեղում, էջ 82։

Հայերը, օգտվելով Անգլիայի աջակցությունից, որն ուզում էր իր ենթակայության տակ պահել հատկապես Արևելյան Անատոլիայի և Կովկասի բնակչությանը, Վանում, Բիթլիսում, Էրզրումում, Նախիչևնանում, Գյումրիում, Իզդիրում, Օլթիում հարձակումներ գործելով՝ սպանեցին թուրք շատ քաղաքացիների։ Քազըմ Քարաբերիր փաշայի հրամատարությամբ բարքական բանակը հայերի դեմ հարձակումներ սկսեց գործել 1920թ. սեպտեմբերի 28-ին։ 1920թ. սեպտեմբերի 29-ին ազատագրվեց Սարիհամիշը, սեպտեմբերի 30-ին՝ Կարսը, իսկ հետևյալի 7-ին Գյումրին։ Հայերը, հասկանալով, որ անգոր են դիմակայել թուրքական բանակին, ստիպված էին հաշտություն խնդրել։ Օսմանյան կայսրությունից մնացած այս կանոնավոր բանակի հաղթանակը առաջինն էր, որը տարվեց ԹԱՍԾ-ի անունից։ 1920թ.դեկտեմբերի 3-ին հայերի և ԹԱՍԾ-ի միջև ստորագրվեց Գյումրիի (Ալեքսանդրապոլ) պայմանագիրը։ Այս պայմանագրով Կարսում, Սարիհամիշում, Իզդիրում փրկված հայերը հրաժարվեցին Սևրի պայմանագրից մնացած Անատոլիայի հանդեպ պնդումներից²²։ Բնշպես երևում է Թուրքիայի համար ոչ ձեռնտու Սևրի պայմանագրի առանձին դրույթներին շատ քիչ է անդրադարձ արված, իսկ փոխարենը թուրքական զավթողական պատերազմը և դրա հետևանք Ալեքսանդրապոլի պայմանագիրը ներկայացված է բավական մանրակրկիտ և ազգայնամոլական շեշտադրումներով։

Թուրքիայի պատմության 11-րդ դասարանի դասագրքի մեջ ներկայացված Մոսկվայի պայմանագրի մասին հատվածում բավական քիչ անդրադարձ է կատարված հայերին։ Վերոնշյալում ասվում է, որ «Բարումը մնում էր Վրաստանին, իսկ Սովետների իշխանությունը ճանաչում էր ԹԱՍԾ-ի և Հայաստանի ու Վրաստանի միջև կնքված պայմանագրերը»²³։

²² Նույն տեղում, էջ 83։

²³ Նույն տեղում, էջ 88։

Այս պայմանագրի անդրադարձով էլ հիմնականում ավարտվում են հայ-թուրքական հարաբերությունների և առհասարակ հայերին վերաբերվող հատվածները։ Հարեան երկրի պատմագրության պաշտոնական տեալկետները ահա այսպիսին են այն ժամանակահատվածի մասին, որի ընթացքում մեր ժողովրդի շուրջ մեկուկես միլիոն զավակները ենթարկվեցին ցեղասպանության և տեղի ունեցավ հայրենագրկում։ Նմանատիպ տեսություններով են Թուրքիայում դաստիարակվում սերունդներ, որոնք մի կողմից՝ համարում են Հայոց ցեղասպանությունը ժխտողների բանակը, իսկ մյուս կողմից՝ զուրկ մնում օբյեկտիվ ճշմարտությունը իմանալու հնարավորությունից։

АРМЯНСКИЙ ВОПРОС В ШКОЛЬНЫХ УЧЕБНИКАХ ПО ИСТОРИИ ТУРЦИИ. ОТ БЕРЛИНСКОГО КОНГРЕССА ДО ПРОВОЗГЛАШЕНИЯ ТУРЕЦКОЙ РЕСПУБЛИКИ

*Айк Дарбинян
(резюме)*

Учебники по истории Турции, утвержденные Министерством национального образования этой страны, можно считать одним из действенных методов отрицания Геноцида армян, а также формирования негативного отношения к армянскому народу. В учебниках по истории Турции армян не представлены крайне отрицательно, а эволюция Армянского вопроса с 1878 до 1923 гг. представлена с грубыми ошибками и с умышленным искажением исторических фактов. Кроме того, по логике учебников, существование армян и Армянского вопроса считаются угрозой национальной безопасности Турции.

THE ARMENIAN QUESTION IN SCHOOL HANDBOOKS OF TURKISH HISTORY: FROM THE CONGRESS OF BERLIN TO THE DECLARATION OF INDEPENDENCE OF THE REPUBLIC OF TURKEY

*Hayk Darbinyan
(summary)*

Textbooks of Turkish history approved by the Turkish National Education Ministry is considered one of the most influential methods of denial of the Armenian Genocide as well as the formation of negative mindset towards the Armenian people. In the handbooks of Turkish history Armenians are presented under an extremely negative light. The period of Armenian question from 1878 to 1923 is presented with rough errors and deliberate distortions of historical facts. Furthermore, according the logic of handbooks the existence of our people and the Armenian question are considered to be a threat to Turkish national security.

**ԳԱՐԴ ՍՊԻՇԻԱՆՅԱՆ
պ. գ. դ., պրոֆեսոր**

**ԳԱԼԱԿ-ԵԼԻԶԱՎԵՏՊՈԼԻ ՆԱՀԱՆԳԻ ՆՈՒԽԻ ԵՎ
ԱՐԵՇ ԳԱՎԱՌՆԵՐԻ ՈՒ ԲԱՔՎԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅ
ԲԱԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ
ՀԱՄԱՌՈՒՄ ԱԿՆԱՐԿ
(XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ-XX ՍԿԻՖ)**

Բանալի բառեր. Շիրվան, Նուխի և Արեշ գավառներ, Բարփի նահանգ, վարչական բաժանում, հայ բնակչություն, Արևելյան Այսրկովկաս, ժողովրդագրություն, ցեղասպանություն

Վաղ ժամանակներից Հայաստանը սերտ հարաբերությունների մեջ է գտնվել Կուր գետով սահմանակից Բուն Աղվանք երկրի հետ¹: X դարի վերջերից Կուրի ստորին հոսանքից մինչև Կասպից ծով ընկած տարածքը սկզբնադրյուրներում առավելապես հայտնի էր Շիրվան անունով²: Միքայել Չամշյանն այդ մասին գրում է. «Աղվանից աշխարհ..., որ է

¹ Բուն Աղվանքի աշխարհագրական սահմանների և առներէր հարցերի մանրամասն բննությունը տե՛ս Ակոպյան Ալ., Ալբանիա-Ալուանք և հրուտական աշխարհագրական տարածքների մասին (Ակոպյան Ալ., Ալբանիա-Ալուանք և հրուտական տարածքների մասին), Երևան, 2006, տե՛ս նաև Վարդանյան Ա., Աղվանքի պատմաաշխարհագրական բննությունը, Երևան, 2013:

² Տե՛ս Մինօրսկի Բ., Իստորիա Շիրվանա և Դերբենդա Խ-ԽI վվ., Մոսկվա, 1963, ս. 85, 106-119, տե՛ս նաև Փափազյան Հ., Անանուն Տաջիկ աշխարհագիրը Հայաստանի և Արևելյան Վրաստանի աշխարհագրության և տնտեսական հարաբերությունների մասին (X դ.), «Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ (հաս. գիտ.), Երևան, 1953, N 5, էջ 80, 86:

մեջ Կուր գետոյ և Կասպից ծովու՝ մինչև ի Դարբանդ. և աղվանք Աղվանք Շիրվանայ կամ Շիրվան...»³: 1846 թ. Վերջինից երկրամասը կոչվել է Շամախու, իսկ 1859 թ. վերջերից՝ Բարփի նահանգ անուններով⁴: Ռուսաց կայսր Ալեքսանդր II-ի 1867 թ. դեկտեմբերի 9-ի՝ «Կովկասյան և Այսրկովկասյան երկրամասի կառավարման բարեփոխման մասին» երամանագրով, եթիւ հերթական անգամ վերաձեւեց Այսրկովկասի գարշական բարտեզը, ձևավորվեցին Քուրայիսի, Թիֆլիսի, Բարփի, Գանձակ-Ելիզավետպոլի և Երևանի նահանգները⁵: Գանձակ-Ելիզավետպոլի նահանգը, որ պետք է կազմավորվեր Թիֆլիսի, Բարփի և Երևանի նահանգների տարածքների հաշվին, գործողության մեջ դրվեց 1868 թ. փետրվարի 19-ին⁶: Գարշատարածքային այս նոր բաժանման հետևանքով Բարփի նահանգի կազմից դրւու մնացին և նորաստեղծ Գանձակ-Ելիզավետպոլի նահանգին կցվեցին Կուրի ձախափնյակում գտնվող Նուխիի (Շարի) և Արեշի գավառները: Այսպիսով՝ վերջնականորեն ձևավորված Բարփի նահանգն ուներ 34.286,3 քառ. կմ տարածություն և ընդգրկում էր Գյոքչայի, Երևանի և Շամշյանի գավառները:

³ Չամշյան Ա., Հայոց պատմություն (սկզբից մինչև 1784 թվականը), հ. գ. Երևան, 1984, էջ 131:

⁴ Տե՛ս Վесь Кавказ. Промышленность, торговля и сельское хозяйство Северного Кавказа и Закавказья. Составил и издал М. С. Шапшович, Баку, 1914 (Бакинская губерния), с. 21.

⁵ Տե՛ս Полное собрание законов Российской империи. Собрание 2-е, т. 42, СПб., 1871, N 45260 (այսուհետև՝ ՊԾՅРИ).

⁶ Տե՛ս Списки населенных мест Российской империи. По Кавказскому краю, LXV. Бакинская губерния. Список населенных мест по сведениям 1859 по 1864 год (այսուհետև՝ ԾՀՄ-1859-1864). Издан Кавказским статистическим комитетом при главном управлении наместника Кавказского. Сост. главным ред. комитета Н. Зейдлицем, Тифлис, 1870, с. II..

Շամախու, Բարվի, Ղուբայի⁷, Զավաթի և Լենքորանի⁸ զավառները⁹:

⁷ Ցարական կառավարության 1840 թ. ապրիլի 10-ի օրենքով Շամախի կենտրոնվ ստեղծվում է յոթ զավառներից բաղկացած Կասպիական մարզը: Նորաստեղծ Ղուբայի զավառը (կազմվեց Ղուբայի պրովինցիայից և Սամուրի շրջանից), ենթարկվում էր Դերբենդի ռազմաօկրուգային կառավարիչին (տե՛ս և ՊԸՀՐԻ, собрание 2-е, թ. 15, отд-ие I, СПб., 1841, N 13368, տե՛ս և նաև Եվանգոլով Գ., Մետнա բարեփոխություն Կավազական կառավարության տարածքում, Տիֆլիս, 1918, с. 86, 98): 1846 թ. դեկտեմբերի 14-ի Վարչատարածքային բաժնման արդյունքում Ղուբայի զավառը մտնում էր Դերբենդի նահանգի մեջ: Այսրկովկասում 1867 թ. դեկտեմբերի 9-ին անցկացված վարչատարածքային բաժնման արդյունքում, երբ ենթարկան անզամ վերաձեց Այսրկովկասի վարչական բարտեզը և վարչական միավորները կազմելիս անտևակեցին բնակչության ազգային պատմա-էրնիկական հատկանիշներն ու առանձնահատկությունները, 1860 թ. մայիսի 5-ին Բարվի նահանգին կցվեց նաև Ղուբայի զավառը (տե՛ս և Գեографическо-статистический словарь Российской империи, сост. П. Семеновъ, т. I, СПб., 1863, т. I, с. 186, տե՛ս և նաև Յեյդլից Հ., Исторический обзор Бакинской губернии, Кавказский календарь на 1871 г., Тифлис, 1870 (այսուհետև՝ КК), с. 45). «Վարչական նոր բաժնումով, գրում է Ռուբեն Տեր-Մինասյանը, - Դադաստանը տկարացնելու համար կը բաժնեն Ղուբայի զավառը և կը միացնեն Բազուի նահանգին: (Ղուբան գիւտարապէս կը բաղկանար Կովկասեան կիրենցի և բաշինցի ցեղերէն, Սիւնին): Այս բաժնումով կը բարեխառնուիր Բազուի նահանգին միապաղադ Շիա թաթար ազգաբնակութիւնը» (Ռուբեն, Գանձակ-Ղարաբաղի վեճը, «Դրօշակ», Փարիզ, 1926, յունուար, N 2, էջ 46):

⁸ Թուրքմենչայի 1828 թ. փետրվարի 10-ի հաշտության պայմանագրով Այսրկովկասում Ռուսական կայսրության տիրապետության հաստատումից հետո անցկացվեցին վարչատարածքային բաժնումներ: Ցարական կառավարությունը նախ Կասպիական մարզի (1840 թ.), ապա՝ Շամախու նահանգի (1846 թ.), իսկ այսուհետև՝ Բարվի նահանգում (1867 թ.) Շիրվանի, Բարվի և Ղուբայի պրովինցիաներից բացի ընդգրկեց նաև Մեծ Հայրի 11-րդ՝ Փայտակարան նահանգի արևելյան երկրամասերը. իյուսիում Սուլանի դաշտի մեծ մասը (հետագայի՝ Զավաթի զավառը), հարավարևելյում՝ Կասպից ծովի առափնյա շրջանը, Լենքորանի ցածրավայրը և Թալիշի լեռնային շրջանը (հետագայի՝ Լենքորանի զավառը): Փայտակարանում Զավաթ և Լենքորան զավառների տեղադրությանը հետևյալ բացատրությունն է տվել Գ. Պատկանյանը. «Փայտակարանի մասն, որ է

Պատմական հավաստի հիշատակությունները վկայում են, որ Կուրի ձախափնյակի տարեթնիկ տարածքում վաղ ժամանակներից բնակվել է հայկական որոշակի էրնիկ տարր, որն ուրույն դերակատարություն է ունեցել երկրամասի մշակութային և քաղաքական զարգացումներում¹⁰: Հր. Աճառյանի ընտրշմամբ՝ «...Աղուանից երկրին մեջ գտնուեին հայկական նազում ունեցող ցեղեր...: Ասոնք այնպէս ուժեղ էին և այնպէս նաստատուն կերպով տեղատրուած երկրին մեջ, որ ոչ թէ միայն իրենց ինքնուրույնութիւնը կորցրած չէին, այլև ընդհանուրակը՝ զանազան հաջող հանգամանքներու պատճառաւ այնպէս ազդէր էին երկրին վրայ...»¹¹: Կուրի ձախափնյակում նայ էրնիկ տարրի վաղեմության և տեղաբնակության փաստի առնչությամբ Սիմեոն Ա Երևանցի պատմագիր կաթողիկոսն իր հիշատակարանում գրում է. «Իսկ բազմութիւնը հայութեզու և հայակրօն ժողովրդոցն, որը այժմ գոն ի յերկիրն

Սալեանի Մուլան դաշտի և Լանքարանի հողերը» (Պատկանեան Գ., Հայոց ազգի պատմութիւնը, Սանկտ-Պետերբուրգ, 1863, էջ 4): 1920 թ. ապրիլի վերջերին Փայտակարանի արևելյան շրջանները բնակվել են Աղրբեշանական ԽՍՀ-ի, այսուհետև՝ Աղրբեշանական Հանքապետության կազմում (տե՛ս և Հարությունյան Բ., Փայտակարան, ՀՍՀ, հ. 12, Երևան, 1986, էջ 301-302 տե՛ս և նաև նույնի՝ Հայաստանն ըստ «Աշխարհացոյց»-ի և այլ աղյուրների (քարտեզ), Երևան, 2001):

Տե՛ս և նաև Հարությունյան Բ., Փայտակարան, ՀՍՀ, հ. 12, Երևան, 1986, էջ 301-302):

⁹ Տե՛ս և Օտчет по главному управлению наместника кавказского за первое десятилетие управления Кавказским и Закавказским краем его императорским высочеством великим князем Михаилом Николаевичем, 6 декабря 1862-6 декабря 1872 гг., Тифлис, 1873, с. 49-50, տե՛ս և նաև Եվանգոլով Գ., Աշվածիւ, ս. 10, 13, տե՛ս և նաև Շահատյան Ա., Աշվ. աշխ., ս. 86, 98.

¹⁰ Տե՛ս և Գալստյան Հ., Հակոբյան Ալ., Երևանկավական գործընթացները Բուն Աղվանում (Գալստյան Հ., Հոդվածներ, հուշագրություններ, հարցարկույցներ, Երևան, 2003, էջ 91-92):

¹¹ Աճառյան Հ., Հայ գաղթականության պատմություն, Երևան, 2002, էջ 44:

Աղուանից, հայր են ի բնէ»¹²: Հայ բնակչության՝ հնուց և վաղ միջնադարից եկող մշակութակերտ գործունեության շարունակականության վերաբերյալ ուշազրակ դիտարկում է արել նաև Լեռն՝ նշելով, որ «Հայերը Շիրվանում բնակութիւն են հաստատել շատ հին ժամանակներից: Բացի դրանից, չը պէտք է մոռանալ, որ Շիրվանը հին Աղուանից երկրի մի մասն է, իսկ Աղուանից երկիրը երկար դարերի ընթացքում եղել է հայերի կուլտուրական եւ քաղաքական խիստ ազդեցութեան տակ»¹³: Երկրամասում հայերի տեղաբնակ լինելը փաստում են նաև օտար աղբյուրները: Հատկապես ակնառու է ցարական կառավարության պաշտոնյա, կովկասագետ Յու. Գագեմեյստերի տեղեկությունը. «Նախկին Կասպիական մարզի ամբողջ բնակչությունից իրենց նախարանակությունը կարող են ապացուցել միայն հայերը և ուղիները»¹⁴: Ըստ որոշ տեղեկությունների՝ միջնադարում երկրամասի ողջ տարածքում՝ Կուրից մինչև Կասպից ծով, բնակվում էին մեծ թվով հայեր. հայաբնակ բնակավայրերի թիվը հասնում էր ավելի քան 200-ի¹⁵: Զգալի թվով հայ բնակչություն էր կենտրոնացված Շարի (Նուխի) և Շամախի քաղաքներում ու շրջակա հայկական գյուղերում: Հայկական հոծ ներկայությունն այդ տարածքում այնքան որոշակի էր, որ XIX դարասկզբին երկրամասում շրջազայած Տեր Բաղդասար Գասպարյան Շուշեցին Շիրվանից մինչև Դերբենդ ու Կասպից ծով ազգողությունը տա-

¹² Գիւան Հայոց պատմութեան, Գ գիրք, մասն Բ, Սիմեոն կաթողիկոսի լիշտակարանը, հրատարակեց Գիւտ քահանայ Աղանեանց, Թիֆլիս, 1894, էջ 417-418:

¹³ Ա [Լեռ], Շամախի, «Մշակ», Թիֆլիս, 1902, փետրվարի 7, N 28:

¹⁴ Гагемейстер Ю., Хозяйственный очерк Закавказского края: народонаселение (Сборник газеты Кавказ), издаваемой О. Н. Константиновым, первое полугодие 1847 года. Тифлис, 1847, с. 58 (բնագրում) «Из всего населения бывшей Каспийской области одни Армяне и Удинцы могут доказать первобытность свою».

¹⁵ Տե՛ս Կարապետյան Ս., Շամախու գավառի գյուղերի պատմությունից, Լ-ՀԳ, Երևան, 1989, N 2, էջ 57:

բանքը համարել է Հայաստան. «...Հարբանդ քաղաք է ի Հայաստան ի եզր Կասպից ծովու... Շիրվան է լայնատարած աշխարհ մի ի մայրաքաղաքացն Հայոց և ունի բազում գեղօթեարք... Յելից վերկալով առ Շարի. սայ ևս է ի ներքոյ լեառն Պովկասայ, որ գոյ ի մեջ Հայաստան աշխարհումն...»¹⁶: Հատկանշական է, որ 1828 թվականին, երբ Ռուսաստանը տեղում էր Հայկական մարզը, Լազարյաններն իրենց առաջնորդ ծրագրով հայկական քաջավորության սահմաններում ընդգրկել էին նաև պատմական Հայաստանից դուրս գուևող Շամախին և Շարին: «Շատ մարզեր,- ասված էր ծրագրում,- ինչպես հին Նախիջևանի, Երևանի, Ղարաբաղի, Շարու և Շամախու մարզերը՝ Էջմիածնի նախազահ վանքով, կազմում են Հայաստանի վաղեմի քաջավորության ընդհանուր կորիզը և զիւավոր հիմքը»¹⁷:

Որպես երկրամասի տեղաբնակ և մշակութակերտ ժողովուրդ՝ հայերն իրենց մասնակցությունը բերեցին երկրամասի ընդհանուր առաջընթացին և կերտեցին հարուստ պատմություն: Հայկական գյուղերի մշակութակերտ գործունեության անվիճելի վկայություններ են հայ ճարտարապետության հորինվածքներով կառուցված քազմաթիվ եկեղեցիները, վանքերը (Քիշի Ա. Եղիշա Առարյա (Գիսավանք), Ճալերի Ա. Աստվածածին, Սաղիանի Ա. Ստեփաննոս Նախավկա, Մեյսարիի Ա. Աստվածածին) և մատուռները, հնավայրերի հայերեն քազմանույթ արձանագրություններ ունեցող հարյուրավոր խաչքարերն ու տապանաքարերը, որոնցով հարուստ են Նիժ, Վարդաշեն, Ճալեր, Ամուրավան, Գանձակ, Ղալակա, Վարդաշեն, Ճալեր, Ամուրավան, Գանձակ, Ղալակա,

¹⁶ Տեր Բաղդասար Գասպարյան Շուշեցի, Շաղկաբաղ աշխարհացոյց: Տպագրության պատրաստեց՝ Հ. Քյուրտյան, ԲՄ, Երևան, 1969, N 9, էջ 292-294: Տեր Բաղդասար Գասպարյան Շուշեցի, Շաղկաբաղ աշխարհացոյց: Տպագրության պատրաստեց՝ Հ. Քյուրտյան, ԲՄ, Երևան, 1969, N 9, էջ 292-294:

¹⁷ Դիլոյան Վ., Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայ-ուսական հարաբերությունները, Երևան, 1989, էջ 308:

Վանք, Ռուշանացեն, Հնդար, Սաղիան, Մատրասա և այլ գյուղերի գերեզմանատները¹⁸: Պատմական բացարիկ արժեք են ներկայացնում նաև երկրամասի տասնյակ գրչօջախներում (Մեծ Սոկորլու (Ուտեկան), Ճալեթ, Սաղիան, Մեյսարի, Մատրասա, Շամախի, Բաքու և այլն) XIV-XVIII դդ. ընթացքում ընդօրինակված հայերեն ձեռագիր բազմաթիվ մատյանները (Ավետարան, Սաղմոսարան, Քարոզգիրը, Ճաշոց, Մաշտոց և այլն)¹⁹:

Ք. Շաքի (Նուխի)²⁰: Նուխիի գավառի կենտրոնն էր Շաքի (Նուխի) քաղաքը: Մատենագրական, վիմագրական և ուղեգրական տեղեկությունները վկայում են, որ Շաքիում վաղժամանակներից եղել է հայ բնակչություն: Շաքիում քրիստոնյա, այդ թվում հայ բնակչության առկայության և պահպանված քրիստոնեական ավանդույթների վկայությունն են մատենագրական աղբյուրներում V դարից ի վեր հիշատակվող Շաքիի եպիսկոպոսական թեմը, որի առաջնորդներից Եղիազարը (680-686 թթ.) և Տեր Միքայելը (705-742 թթ.) եղել են նաև Աղվանից կաթողիկոսներից²¹: VIII-X դդ. երկրամասի տարածքի մի զգալի մասում Տարոնի Բազրատունի Աշոտ իշխանի որդիները հիմնում են հայկական իշխանություն՝ Շաքի կենտրոնով²²:

Արխիվային վավերագրի տվյալներով՝ 1820-ական թվականների սկզբներին հայերը Շաքիում ունեին 319 տուն՝ 1501

¹⁸ Տե՛ս Կարապետյան Ս., Բուն Աղվանից հայերեն վիմագրերը, Երևան, 1997:

¹⁹ Տե՛ս Եղանյան Օ., Մեսրոպ արքեպ. Սմբատյանի «Ակարագիր Շամախոյ թեմի» գրքում հիշատակված ձեռագրերը, «Էջմիածին», 1970, N Ա, էջ 45-48:

²⁰ 1846 թ. ուսական իշխանությունները Շաքին վերանվանել են Նուխի:

²¹ Տե՛ս Սովուն Կաղանկատուացի, Պատմութիւն Աղոստինց աշխարհի, ընսական ընացիքը և ներածությունը՝ Վարագ Առաքելյանի, Երևան, 1983, էջ 213, 344, տե՛ս նաև Ակոպյան Ալ., Ալբանիա-Ալյանք, ս. 277.

²² Տե՛ս Բարխուտարյան Ս., Արցախի, Շաքիի և Փափստսի իշխանությունները, ՊԲՀ, Երևան, 1971, N 1, էջ 58-72:

ընակցով²³: 1897 թ. հունվարի 28-ին (հին տոմարով) անցկացված համառուսաստանյան առաջին մարդահամարի տվյալներով քաղաքի հայ բնակչության թիվը 4186 էր, իսկ 1916 թ. հունվարի 1-ին՝ 8009²⁴:

Նուխիում հայերը գրադիւն են արհեստներով, այգեգործությամբ և հատկապես շերամապահությամբ: 1888 թ. դրությամբ Նուխիում գործող մետաքսաթելի 13 գործարաններից 8-ը պատկանում էր հայերին: Մետաքսաթելի խոշոր գործարանների թվին էր պատկանում Տեր-Գևորգյան եղբայրների հաստատությունը, որտեղ աշխատողների քանակը հասնում էր 300-ի: Քաղաքի հայկական թաղամասը բաժանված էր երկու մասի՝ արևմտյան և արևելյան, որոնք նուխեցիներն անվանում էին «Էն դոլի գեղ» և «Էս դոլի գեղ»: Թաղամասերից յուրաքանչյուրն ուներ իր եկեղեցին: Արևմտյան թաղում էր գտնվում «Ղարիպականաց» Ս. Աստվածածին եկեղեցին, որին կից գործել է նաև Ս. Մարիամյան օրիորդաց դպրոցը, իսկ արևելյանում՝ «Բնիկ քաղաքացոց» Ս. Մինաս եկեղեցին²⁵:

Նուխիի գավառն ուներ 32 հայկական գյուղ (Դաշբուլաղ, Գյոյգբուլաղ, Չարդար, Սարաթու, Աղփիլարյան, Ղոզլու, Մալդ, Մեջլիս, Նոր շեն, Զուշամիշ, Սալիբեկ, Օթմանլու, Ալյար, Այղինբուլաղ, Գյոյգբեյլի, Թարաքա, Փաղառ, Զաֆարաքաղ, Բղեիզ (Պարտեզ), Օրաբան, Զառափ, Թոփեր, Յաղութի, Վարդանի գյուղ, Զովլան, Գյուլութաղ, Ճալեթ, Կապաղակ-

²³ Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 332, գ. 1, գ. 866, թ. 1:

²⁴ Տե՛ս Պервая всеобщая перепись населения Российской империи, 1897, LXIII-Елисаветпольская губерния (այսուհետև՝ ՊՎՊԻՐԻ-1897, Ելիսավետոլյան գубերնիա), под редакцией Н. А. Троицкого, СПб., 1904, т. 63, с. 3, 74-75, տե՛ս նաև ԿԿ Կա 1917 թ., Տիֆլիս, 1916, с. 191.

²⁵ Տե՛ս Սովուն Գ., Նուխի և Արցախ գավառների հայերի պատմական անցյալից (համառուսականաց), «Երան-Նամեն», Երևան, 1997, N 4-6, էջ 28-29:

Նուիսի, Սիրզաքելու, Զոռոլու, Նիժ, Վարդաշեն)²⁶: Վերջին հինգ օյուղերը եղել են նաև ուտիաբնակ: Ընդ որում, նրանց առաքելադավան հաստվածն անվանվել է «հայ ուտի», իսկ ուղղափառ-վրաց եկեղեցու կողմնակիցները՝ «օյուրջ ուտի»²⁷: 1897 թ. տվյալներով հայ բնակչության թիվը զավառում 14.713 էր²⁸, 1916 թ. հունվարի 1-ին՝ 17.751²⁹:

Արեջի զավառն ուներ 21 հայկական գյուղ (Բեզլարաշեն, Ամիրվան, Բլեղ, Էյրին, Սիրթենգիջա, Խալդան, Թոսիկ, Շիրիկ, Գիրդայոյուլ, Չանադրուլադ, Հավարիկ, Մազրոյի, Մամաթավա, Քանդակ, Հայի շուկա (Արաշ), Խանարադ, Ղայարաշի, Գետաշեն (Չայրյանդ), Մեծ Սոկութլու (Ուտեկան), Փոքր Սոկութլու, Խոշշաշեն)³⁰: 1897 թ. մարդահամարի տվյալներով՝ հայ բնակչության թիվը զավառում 13.822 էր³¹, 1916 թ. հունվարի 1-ին՝ 19.161³²: 1917 թ. դրությամբ երկու զավառներում հայ բնակչության թիվն անցում էր 50.000-ից³³: Ցարական կառավարության 1836 թ. մարտի 11-ի ընդունած կանոնադրությամբ («Պոլոժենիե») Նուիսի և Արեջ զավառներն ի հոգևոր

²⁶ Տե՛ս Սատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 61, վավ. 760, թ. 88, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 56, գ. 1, գ. 305, թ. 43-45, տե՛ս նաև Պամյտնա հայական կողմանը Ելիսավետպոլսկոյ գործադրության վեհական գործադրության մասին, թիվին, 1904, տե՛ս նաև Լապան Ե., Նիժի և Վարդաշենի ուտիները ազգագրական տեսակետից, Երևան, 1926, տե՛ս նաև Առաքելյան (Խառատյան) Հ., Ուղիներ (Աղվանների առասպելը), «Գրան-Նամե», Երևան, 1994, սեպտեմբեր, N 2, էջ 12-16:

²⁷ Տե՛ս և ՊԲՊԻՐԻ-1897, Ելիսավետպոլսկա գուբերնիա, ս. 3, 74-75:

²⁸ Տե՛ս և ԿԿ հա 1917 թ., ս. 195.

³⁰ Տե՛ս Սատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 61, վավ. 760, թ. 88, տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 56, գ. 1, գ. 305, թ. 43-45, տե՛ս նաև Պամյտնա հայական կողմանը Ելիսավետպոլսկոյ գործադրության վեհական գործադրության մասին, թիվին, 1904, տե՛ս նաև Լապան Ե., Նիժի և Վարդաշենի ուտիները ազգագրական տեսակետից, Երևան, 1926, տե՛ս նաև Առաքելյան (Խառատյան) Հ., Ուղիներ (Աղվանների առասպելը), «Գրան-Նամե», Երևան, 1994, սեպտեմբեր, N 2, էջ 12-16:

³¹ Տե՛ս և ՊԲՊԻՐԻ-1897, Ելիսավետպոլսկա գուբերնիա, ս. 3, 74-75:

³² Տե՛ս և ԿԿ հա 1917 թ., ս. 191.

³³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 121, գ. 1, գ. 8, թ. 55:

անցում են Արցախի թեմի ենթակայության տակ³⁴: XIX դարի երկրորդ կեսին Նուիսի փոխանորդությունում կար գործող 45 եկեղեցի և 2 վանք (Քիշի Սր. Եղիշա Առաքյալի (Գիսա-վանք), Ճալեթի Սր. Աստվածածին)³⁵:

Գավառների հայ բնակչությունը կարևոր մասնակցություն ուներ գրեթե բոլոր արհեստների զարգացման մեջ: Արհեստագործության ամենատարածված ճյուղերից էր մետարաշգործությունը, որն ապրուստի միջոց էր հայ ընտանիքների համար թե՝ Նուիսի քաղաքում, թե՝ գյուղական վայրերում: Ըստ որում՝ մետարաշգործությամբ էին զբաղվում հավասարապես և կանայք, և տղամարդիկ՝ ինչպես արհեստանոցներում, այնպես էլ տներում: Նուիսին համարվում էր բամբակյա, բրյու և մետարայա գործվածքների արտադրության կենտրոններից մեկը: Արհեստագործության կարևոր ճյուղերից էր նաև գորգագործությունը: Առևտուրը զավառներում տնտեսական կյանքի կարևորագույն խթան էր: Այդ ասպարեզում ևս հայերն ակնառու դեր ունեին:

XIX դարի սկզբներից հայկական եկեղեցական-ծխական դպրոցներ են գործել Նուիսի քաղաքում, Վարդաշեն, Նիժ, Գետաշեն, Ճալեթ, Բեզլարաշեն, Ղայարաշի, Հավարիկ, Մամաթավա, Մեշլիս և մի շարք այլ գյուղերում³⁶:

1918 թ. հունիսին, Բարվի դեմ թուրքական արշավանքի ժամանակ, Նուիսի և Արեջ զավառների հայությունը բուրք-քարարական զորքերի կողմից ենթարկվեց կոտորածների ու տեղահանության: Կողոպտվեցին և ավերվեցին բոլոր գյուղերը, 50 հազարից ավել հայերից զոհ գնաց շուրջ 40 հազար³⁷:

³⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, գ. 1, գ. 4573, թ. 1:

³⁵ Տե՛ս Երիցեանց Ալ., Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայր XIX դարում, մասն Բ, Թիֆլիս, 1895, էջ 256:

³⁶ Տե՛ս և Խուլդյան Ս., Արևելահայ դպրոցները 1830-1920 թթ. (ժամանակագրությունը հավելյալ մանրամասներով), Երևան, 1987, էջ 342-353:

³⁷ Մանրամասն տե՛ս և Ստեփանյան Գ., Նուիսի և Արեջ զավառների հայերի կոտորածներն ու ինքնապաշտպանությունը 1918-1920 թթ., պատմ.

Կոտորածներից հետո Նուխի քաղաքը գրեթե հայաթափվեց Հայաստանի Հանրապետության նախարարների խորհուրդը մտահոգված նուխեցի և արեցի հայերի հետագա ճակատազրով, 1919 թ. հունիսի 24-ի նիստում որոշում է նրանց տեղափոխել Հայաստանի Հանրապետություն և վերաբնակեցնել Էջմիածնի, Սուրբալուի և Արարատի շրջաններում: 1919 թ. օգոստոսից 1920 թ. հունվար ընկած ժամանակահատվածում ներքաղթեցին 3255 նուխեցիներ և արեցիներ³⁸: Գաղթական-ների մի մասը հաստատվեց Երևան քաղաքի հարավ-արևելյան ծայրամասում, իիմնելով Նոր-Արեշ և Վարդաշեն քաղամասները: Հայահայած քաղաքականությունը գավառներում շարունակվեց նաև մուսավարական իշխանության օրոք: 1921 թ. տվյալներով միայն Նուխի քաղաքում մնացել էր 1628 հայ³⁹:

Ք. Շամախի: Շամախիի գավառի կենտրոնն էր Շամախի քաղաքը: Շամախին տարածված է Կովկասյան լեռնապարի հարավարեւյան ճյուղերի ստորոտին՝ փոքրիկ բլրաշարի վրա՝ Ս. Սահակ և Զագալավա գետակների միախառնման վայրում: Շամախիի մեծ գավակ Ալ. Շիրվանզադեն «Իմ կյանքից» խորագրով հուշերում զմայլանքով է նկարագրել ծննդավայրի գեղաշուր բնությունը. «Անդրկովկասի մի անկինում կայ մի քաղաք, անունը Շամախի կամ Շիրվան: Ա՛հ, հրաշալի է այդ քաղաքի բնութիւնը. Այստեղ երկինքը կապոյտ է, ինչպէս Փիրուզա, երկիրը բոյսերով, ծաղիկներով փարթամ, ինչպէս մի սքանչելի պարտէզ: Այնտեղ ձմեռը եղանակը մեղմ է, դիլթեկան, ոչ քամի, ոչ փոթորիկ: Իսկ զարնանը և ամունը բարձրագագաթ ծառերի վրայ գիշեր-ցերեկ երգում են անքիւ

գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 1996:

³⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, գ. 1, գ. 64, թ. 71, տե՛ս նաև գ. 7, թ. 21-24, տե՛ս նաև ֆ. 205, գ. 1, գ. 599, թ. 12-17:

³⁹ Տե՛ս Զակավազье. Советские республики (Статистико-экономический сборник), Тифлис, 1925, с. 152.

առխակներ: Եւ ի՞նչ համեռ մրգեր կան այստեղ, եթէ գիտենար, ի՞նչ հոտաւետ պտուղներ»⁴⁰:

Աշխարհագրական դիրքով Շամախին գտնվել է հին աշխարհի հաղորդակցության և առևտրական մեծ ճանապարհների վրա: Այդտեղով էր անցնում առևտրառազմական մեծ նշանակությամբ հայտնի Պարտավ-Դերբենդ ճանապարհը: Տարանցիկ այդ ուղին միմյանց հետ կապում էր Պարտավ, Շամախի, Շարվան, Ղուրա և Դերբենդ քաղաքները⁴¹: Շամախիում վաղ ժամանակներից կենտրոնացած էր Կուրի Ճախափնյակի հայության մի զգալի մասը: Քաղաքը համարվել է Շիրվանահայության կրթական, մշակութային, քաղաքական կյանքի և վաճառականության հիմնական կենտրոնը: Շամախիի առևտրատնտեսական կյանքում հայերի ազդեցիկ դերի մասին է վկայում այն փաստը, որ հայ վաճառականները մետարսի հումքի արտաքին առևտրով մրցակցում էին բրիտանական առևտրական գորեղ ընկերությունների հետ, որոնք ձգուում էին առևտուրը ընդլայնել Այրկովկասում: «Անգլիացիները, - գրում է Հ. Քյուրտյանը, - 1561-ին մտան Կովկասեան Հայաստան, Շամախի, Շիրվանի եւն կողմերը առևտուրի՝ մասնաւրապէս հում մետարսի համար, սակայն հազիւ քանի մը տարի վերջ սկսած ինքինքնին անզօր գտնել Հայոց հետ մրցակցելու գործի մէջ»⁴²: Անգլիացի ճանապարհորդ ու

⁴⁰ Շիրվանզադ Ալ., Իմ կենանքից, «Հասկեր», Թիֆլիս, 1910, N 11, էջ 320-321, տե՛ս նաև Հին թուղթեր. նիւթեր Շիրվանզադի մասին, «Վեմ», Փարփ, 1935, Դ տարի, սեպտեմբեր-դեկտեմբեր, N 4, ԺԲ, էջ 90.

⁴¹ Տե՛ս Կարայով Հ., Сведения арабских писателей о Кавказе, Армении и Адербейджане: Ал-Истахрий (Сборник материалов для описания местностей и племен Кавказа, с. 29-31), տե՛ս նաև Մանանյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, Բ մասի նյութեր (Մարզպանության հաստատության հայաստանում մինչև Բագրատուկաց քազակության անկումը), Երևան, 1960, էջ 343:

⁴² Քյուրտյան Յ., Հայ ազատագրական փորձ մը ԺԶ դարուն (հատուած մը իմ «Հում մետարսի վաճառականութիւնը եւ հայերը» գործէս), «Անհիտ», Փարփ, 1937, Ը տարի, N 5-6, հուլիս-դեկտեմբեր, էջ 60:

վաճառական Անթոնի Զենքինսոնը 1563 թ. ապրիլի 10-ին՝ Շամախիում եղած ժամանակ, թողել է հետևյալ ուշագրավ գրառումը. «... այս քաղաքը (Շամախին – Գ. Ս.)... բնակեցված զիսավորապես հայերից...»⁴³: Շամախահայերի վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ է թողել 1636 թ. դեկտեմբերի 30-ից 1637 թ. մարտի 27-ը Շամախիում հանգրվանած Սարսոնիայի քաղաքոր Ֆրիդրիխ Շեզվիգ-Հոլշտինացու դեսպանության քարտուղար Արամ Օլեարիուսը: Ըստ նրա՝ Շամախիի բնակչությունը կազմված էր պարսիկներից, հայերից և մի քանի վրացիներից: Ա. Օլեարիուսը մանրամասն և հետաքրքիր տեղեկություններ է հայտնում նաև Շամախիի Հայոց թեմի առաջնորդ Արքահամ Եպիսկոպոսի (1635-1644 թթ.) զիսավորությամբ քաղաքի հայերի՝ 1637 թ. հունվարի 6-ին կազմակերպած Ջրօրիների ծիսակատարության վերաբերյալ⁴⁴: Քաղաքի ազգաբնակչության թվակազմի վերաբերյալ ուշագրավ հիշատակություն է թողել 1686 թ. Շամախի այցելած ֆրանսիացի միսիոներ Ֆիլիպ Ավրիլը: Ըստ նրա՝ 50-60 հազարանոց բնակչություն ունեցող Շամախիում «Բացի հայերի մեծ թվից, որ կարելի է հասցնել 30 000-ի, կան նաև հնդիկներ, մուսուլմաններ, վրացիներ... և քաղմաթիվ այլ ժողովուրդներ...»⁴⁵:

Վաղ ժամանակներից հայաշատ այս քաղաքում 1820-ական թվականների սկզբներին հայերն ունեին 252 տուն՝ 1260 բնակչով⁴⁶: Ըստ Սարգիս արքեպ. Զալայյանցի՝ Շամախիում 1850 թ. կար 4000 տուն, որից հայապատկան էր

⁴³ Հակոբյան Հովհ., Ուղեգործություններ. Աղբյուրներ Հայաստանի և Անդրկովկասի պատմության, հ. Ա, ԺԳ-ԺԶ դր., Երևան, 1932, էջ 372:

⁴⁴ Տե՛ս Պодробное описание путешествия Голштинского посольства в Московию и Персию в 1633, 1636 и 1639 годах, составленное секретарем посольства Адамом Олеарием, Москва, 1870, с. 526, 531-534.

⁴⁵ Philippe Avril, Voyage en divers etats d'Europe et d'Asie. Paris, MDCXCII (1692), p. 114.

⁴⁶ Տե՛ս ՀԱՍ, ֆ. 332, գ. 1, գ. 866, թ. 1:

ՀՅՀ-ը⁴⁷: 1851 թ. տվյալներով՝ քաղաքն ուներ 6238 հայ բնակչություն: Շամախին, գտնվելով ակտիվ սեյսմիկ շրջանում, բազմուց վնասվել է երկրաշարժերից: Հաճախակի կրկնվող ավելիությունները երկրաշարժերը խլել են բազմաթիվ գոհեր և պատճառել նորական ծանր վնասներ:

1859 թ. մայիսի 31-ին Շամախիում տեղի ունեցած աղեղությունից երկրաշարժի հետևանքով փլատակների տակ մնաց 400 մարդ: Երկրաշարժից հետո շամախահայերից շատերը հաստատվում են Բաքվում և այլուր: Եթե 1861 թ. տվյալներով՝ քաղաքում հայապատկան տների թիվը 876 էր⁴⁸, ապա 1864 թ. արխիվային մի վագերագրում, որտեղ ամփոփված են Շամախիի Ս. Աստվածածին հին և նոր եկեղեցիների քահանաների ու նրանց ծիւերի թիվը, «տանց նորոք եկեղեցոյն հայոց Շամախիոյ» ծիւերի թիվը կազմում էր 357, իսկ «հնոյ եկեղեցոյ Շամախիոյ» ծիւերի թիվը՝ 347: Ըստ այդմ՝ քաղաքն ուներ 704 ծուխ հայ բնակիչ⁴⁹: 1872 թ. հունվարի 16-ի երկրաշարժի հետևանքով հիմնովին վնասվեց քաղաքի հայկական քաղամասը: 1897 թ. տվյալներով քաղաքի բնակչության թիվը շուրջ 20 հազար էր, որից հայ՝ 2515-ը⁵⁰:

XX դարասկզբի Շամախիի բնակչության, այդ թվում նաև հայերի բնական աճի վրա իր բացասական ազդեցությունն է թողել 1902 թ. հունվարի 31-ին տեղի ունեցած կործանիչ երկրաշարժը, որը վայրկյանների ընթացքում հողին է հավաքվել:

⁴⁷ Տե՛ս Զալայյանց Ս., Հանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ.-Տիֆլիս, 1858, էջ 400:

⁴⁸ Տե՛ս Черпановъ П., Статистическое описание Шемахинской губернии. Шемаха, КК на 1852 г., Тифлис, 1851, с. 429:

⁴⁹ Տե՛ս Սմբատեանց Ս., Նվարագիր Սուրբ Ստեփանոսի վանաց Սաղմանի և միւս վանօրեից և ուխտատեղեաց եւս և քաղաքացն և զիւղութիւն որք ի Շամախիոյ թեմի. Տիֆլիս, 1896, էջ 138:

⁵⁰ Տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիման, թղթ. 198, վավ. 56:

⁵¹ Տե՛ս Պервая всеобщая перепись населения Российской империи, 1897, LXI-Բաքինսկայա գումարություն՝ ՊԲՊԻՐԻ-1897, Բաքինսկայա գуберնիա, ուժի մեջ մտնելու օրը՝ 1905 թ. 61, ս. 52-53:

սարեցրել գրեթե ամբողջ քաղաքը: «Ով զոնէ մի անզամ տեսել է Շամախին, նա այժմ կարող է զարդուրել այն աւերմունքից, որ գործել է այս թշուառ քաղաքում յունվարի 31-ի երկրաշարժը...»⁵², - նշել է քաղաքի մի տարեգիր: Շամախու հերթական աղետալի երկրաշարժից հետո փրկվածներից շատերը զարթել են Բարու:

Շամախին համարվում էր հայկական մշակույթի կենտրոններից մեկը, հայերի՝ քաղաքաշինության ժամանակակից պահանջներին համապատասխան կառուցված երկիրեւահարկ տներով: Քաղաքում գործել են թեմական դպրոցը կամ սեմինարիան (հիմնվել է 1844 թ.), Ս. Սանդիխտյան օրիորդաց դպրոցը (հիմնվել է 1867 թ.): Շամախի քաղաքի ուսումնարանում (հիմն.՝ 1838 թ.) 1858 թ. դրությամբ 144 սովորողներից 81-ը հայեր էին⁵³: Գործել են Ս. Աստվածածին անվամբ երկու եկեղեցիներ (առաջինը կառուցվել է 1701 թ., երկրորդ՝ 1851 թ.), ինչպես նաև հայոց գրադարան-ընթերցարանը, հայոց թատրոնը և այլն:

Մատենագրական աղբյուրները փաստում են, որ դեռևս միջնադարից Շամախին եղել է երկրամասի հարուստ գրչօջախներից մեկը: 1849 թ. բանաստեղծ Մովսես Զոհրապյանց Արցախեցին, Մարզար Ղուկիյանցը և Մինաս Տարոկիչյանցը հիմնադրել են տպարան⁵⁴: Զարգացնելով տպագրական աշխատանքը՝ շամախեցի Աթա Գրիգորյանը Սոսկվայից բերած հայկական տառերով 1856 թ. հիմնում է մի նոր տպարան⁵⁵: Շամախիի քաղաքային հայ բնակչության մեջ

⁵² Շամախու աղետը (ժողովածու), Բագու, 1902, էջ 24:

⁵³ Տե՛ս Սանթրոսյան Ս., Արևելահայ դպրոց XIX դարի առաջին կեսին, Երևան, 1964, էջ 40:

⁵⁴ Տե՛ս Ստեփանյան Գ., Շամախի և Բարու քաղաքների հայկական տպագրության պատմությունից: Հայկական տպագրությունը դարերի միջով (հոդվածների ժողովածու), Երևան, 2014, էջ 95:

⁵⁵ Տե՛ս Լևոնյան Գ., Հայ գիրքը և տպագրության արվեստը (պատմական տեսություն սկզբից մինչև XX դարը), Երևան, 1958, էջ 229:

գոյական տոկոս է կազմել արհեստավոր և առևտրական դասը: Արհեստներն ու առևտուրը շամախահայերի համար համարվում էին հիմնական կենսապահովման աղբյուր: Տնտեսության բնագավառում շամախահայերը արտադրական այլ ճյուղերի համեմատությամբ հատկապես զբաղվել են մետարածելի արտադրությամբ և ունեին գործարաններ: Շամախի նոյ առևտրականները զբաղվում էին մեծածավալ առևտուրված կապ էին պահպանում հեռավոր երկրների հետ, իրենց ձեռքին կենտրոնացնում տարանցիկ առևտուրը: Նրանց գործունեության սահմանները տարածվում էին Ըուսաստանից, Իրանից, Եվրոպայից մինչև Կենտրոնական և Միջին Ասիայի երկրներ: Հնուց ի վեր նրանց էր պատկանում Շամախու հում մետաքսի արտահանման առաջնությունը: Օրինակ՝ Պողոս բնեկ Լալայանին պատկանող մետաքսաթելի ֆաբրիկայի արտադրանքը հիմնականում արտահանվել է Ըուսաստան, Իրան և Հնդկաստան: Ուստի պատահական չէ ուս հեղինակ Վ. Շերեպանովի այն վկայակոչումը, որ Շամախիի գրեթե ամբողջ կապիտալը գտնվում էր հայերի ձեռքին⁵⁶:

Քաղաքում հայերը զբաղվում էին 27 տարբեր արհեստներով, կային հայապատկան 97 ձեռնարկություններ⁵⁷: Հայերի շրջանում տարածված արհեստներից էին ջուկակությունը, ոսկերչությունը, տակառագործությունը, զինագործությունը, դերձակությունը, փականագործությունը, ներկարարությունը, դարբնությունը և այլն: Տեղական գործարանային արտադրության մեջ հայերն ընդգրկված էին կոշկակարության, Եվրոպական հազուստի կարի, արձաթագործության, մաշկակարության, ժամագործության և զինագործության բնագավառում: Շամախին հայտնի էր իր այզիներով: Քաղաքի շրջակայրում եղած այզիներում ամենատարածված ծառատեսակ-

⁵⁶ Տե՛ս Չերեպանով Պ., նշվ. աշխ., ս. 428.

⁵⁷ Տե՛ս Զелинский Ս., Описание города Шемаха, Тифлис, 1896, с. 31-34.

ներից էր բրենին: Կային նաև խաղողի, սերկեսիլի և պտղատու այլ ծառեր: Շամախու շրջապատում եղած այգիների մեջ նշանավոր էին Քալանթարյաններին, Տեր-Հովհաննիսյաններին և Թառանյաններին պատկանող այգիները⁵⁸:

Շամախի քաղաքի առևտրաքարյունաբերության և հասարակական կյանքում հայ մելիքական տոհմերից առանձնահատուկ դերակատարություն է ունեցել Լալայան գերդաստանը, հատկապես բարերարներ Պողոս, Կարապետ և Ալեքսանդր Լալայանները:

Շամախիայերն իրենց դերակատարությունն են ունեցել 1896 թ. դեկտեմբերից գործող քաղաքային ինքնավարությունում: 1896-1899 թթ. Շամախու քաղաքային ավագն էր տեղի ազդեցիկ հայերից մեծահարուստ Ալեքսանդր Լալայանը, որի օգնականն էր վաճառական Անտոնյանը: Շամախին մի շարք հայ մեծանուն գործիչների ծննդավայրն է: Այդտեղ են ծնվել Ամենայն հայոց կաթողիկոս (1759-1763 թթ.) Հակոբ Ե Շամախին, գրողներ Ալ Շիրվանզադեն, Կոստան Զարյանը և Վահան Գալֆայանը, դերասան Հովհաննես Աբեյյանը, գրականագետ և թարգմանիչ Սեդրակ Թառայանը, նկարիչ Ստեփան Ներսեսյանը, պարուիի և դերասանուի Սոֆյա Փիրբուդայյանը (Արմեն Օհանյան) և շատ ուրիշներ:

Հայ բնակչության մի ստվար հատված բնակվում էր Շամախու գավառում: Շամախից «Մշակին» 1909 թ. հուլիսին հղած թղթակցությունում գյուղագիր Սմբատ Գարգաշյանը հայերի հնաբնակության վերաբերյալ գրում է. «Հայ գիլերը Շամախու շրջակայրում գյութիւն ունին շատ հնուց, տասնեակ դարեր առաջ»⁵⁹: Սարգիս արքեպ. Զալավյանը Շամախու գավառի հայերի տեղաբնակ լինելու վերաբերյալ գրել

⁵⁸ Տե՛ս Քաջբերունի Գ., Բազմամիլիոն ժառանգութիւն (ՀԱԱ, ֆ. 57, գ. 1, գ. 439, թ. 8):

⁵⁹ ՀԱԱ, ֆ. 227, գ. 1, գ. 639, թ. 37:

։ «Այսորիկ գիլորայր իին են, և բնակիչքն (հայերը - Գ. Ս.) բնիկ շամախինեցիք...»⁶⁰:

Շամախու գավառն ունեցել է հայկական 24 գյուղ (Արմատուտ, Դարա-Քարքանց, Խանիշեն, Քարքանց, Սատրասա, Քաղաքան, Միրիշեն, Մեյսարի, Զարիսու, Սաղիան, Փախրաց, Ղաջար, Թալիշ, Դվարի (Դվարիշեն), Քոհում, Գյուրցանան, Գյուրցաշեն, Հնդար, Գյուրդաշեն, Նորշեն, Զարգարան, Բավանտ, Բահլիան, Բիլիստան): 1897 թ. գավառի (առանց Շամախի քաղաքի) հայ բնակչության թիվը 11.768 էր⁶¹: 1916 թ. հունվարի 1-ին գավառում (ներառյալ Շամախի քաղաքը) հայ բնակչության թիվը 22.350 էր⁶²:

Գյորչայի գավառ: Գավառի կենտրոնն էր 1873 թ. հիմնադրված Գյորչա (Գյորչա) ավանը, որն աղբյուրներում հիշատակվում է նաև որպես գյուղաքաղաք⁶³: Դեռևս XVII դարի 40-ական թվականների սկզբներին երկրամաս այցելած բուրք ուղեգրող Էվլիյա Շելեբին իր «Ուղեգրության» մեջ Շամախիի բարեշեն գյուղերի թվում հիշատակվում է նաև «Գյորչու» անվամբ մեծ գյուղը, որն ուներ 700 տուն, այգիներ և պարտեզներ⁶⁴: Հայ բնակչությունն ավանում հիմնականում հաստատվել է Շամախից և Նուխիից⁶⁵ և մեծ մասամբ գրավվել է առևտրով, դերձակությամբ, կոշկակարությամբ, գինեգործությամբ ու դարբնությամբ: 1886 թ. տվյալներով՝ ավանում հայերի թիվը 189 էր⁶⁶: Ավանի հայերի հանգանա-

⁶⁰ Զալավեանց Ս., նշվ. աշխ., մասն Բ, էջ 394:

⁶¹ Տե՛ս ՊՎՊԻՀՐԻ-1897, Բաքինская губерния, таблица XIII, с. 53.

⁶² Տե՛ս ԿԿ на 1917 թ., с. 179:

⁶³ Տե՛ս Բարիուտարեանց Ս., Աղուանից երկիր եւ դրացիր (Միջին Շամախան), Թիֆլիս, 1893, էջ 210:

⁶⁴ Տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 4, Թուրքական աղբյուրներ, Գ, Էվլիյա Շելեբի, թարգմանություն բնագրից, առաջարան և ծանրթագրություններ՝ Ս. Սաֆրաստյանի, Երևան, էջ 91-92:

⁶⁵ Տե՛ս Բարիուտարեանց Ս., նշվ. աշխ., էջ 210:

⁶⁶ Տե՛ս Սвод статистических данных о населении Закавказского края, извлеченные из посемейных списков 1886 г., Бакинской губернии (այսու-

կությամբ 1893 թ. կառուցվել է մատու⁶⁷: 1897 թ. տվյալներով՝ ավանի ազգաբնակչությունը 2201 էր, որից հայ՝ 296⁶⁸:

Գյորչայի գավառն ունեցել է հայկական 21 գյուղ (Ազայիշեն (Նորշեն), Աղբուլաղ, Ավանաշեն (Ղոշաքեն), Բզավանդ, Գանձակ, Գիրք, Դայմադաղ, Թուրիշեն, Խոշավատ, Կարմախան, Կուգուն (Գիրք-Կուգուն), Ղալակա, Նորշեն (Ղուղշեն, Աշորայրամ), Շուրուրչի, Ռուշանաշեն, Վանք, Ուշտալ, Փաթակլու, Փոքր Գանձակ, Քալբանդ, Քեշխուրդ): 1897 թ. գավառի (առանց Գյորչա ավանի) հայ բնակչության թիվը 12.698 էր⁶⁹: 1916 թ. հունվարի 1-ին՝ գավառում հայ բնակչության թիվը 17.207 էր⁷⁰:

Գյուղերում հայերն արդյունավետ զբաղվում էին այգեգործությամբ, հաստկապես խաղողագործությամբ, բանջարաբուծությամբ և շերամապահությամբ: Գյուղատնտեսական մթերքների մշակման մեջ առանձնակի տեղ էր զբաղվում խաղողագործությունը: Գինեգործության կենտրոններում՝ Մատրասայում, Մեյսարիում, Քարքանջում, Սաղիանում և Գյուրջևանում պատրաստված զինին հիմնականում արտահանվում էր Թիֆլիս, Բարու, Ռուսաստան և Անդրկասպայան երկրներ⁷¹: Հատկապես մեծ հոշակ էր վայելում Մատրասա գյուղի անջրդի այգիների սև խաղողից ստացված զինին: XIX դարի երկրորդ կեսից մինչև 1918 թ. բուրքական արշավանքը Շամախու և Գյորչայի գավառների 21 հայկական գյուղերում

հետև՝ ССДНЗКИПС-1886). Издан по распоряжению главнона-чальствующего гражданскою частию на Кавказе Закавказским статистическим комитетом, Тифлис, 1893 (б. с.)..

⁶⁷Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, գ. 1, զ. 8865, թ. 16, տե՛ս նաև «Արձագան», Թիֆլիս, 1892, փետրվարի 14, Ն 19:

⁶⁸Տե՛ս ՊՎՊԻՐԻ-1897, Бакинская губерния, таблица XIII, с. 53.

⁶⁹Տե՛ս ՊՎՊԻՐԻ-1897, Бакинская губерния, таблица XIII, с. 53.

⁷⁰Տե՛ս ՀԿ на 1917 թ., с. 179.

⁷¹Տե՛ս և Сборник сведений о Кавказе, т. III. Очерк виноделия Кавказа, Тифлис, 1875, с. 442, 460, 462:

(Սաղիան, Մատրասա, Զարգարան, Քարքանց, Գանձակ, Գիրք և այլն) գործում էին եկեղեցական-ծխական դպրոցներ⁷², իսկ Սաղիանի Ս. Ստեփանոս Նախավկա վանքին կից՝ նույնական դպրոց: 1916 թ. Շամախու հայոց թեմի երկու գյուղաներում գործում էին 31 եկեղեցի (14-ը՝ Շամախու, 17-ը՝ Գյորչայի գավառում) և 2 վանք (Սաղիանի Ս. Ստեփանոս Նախավկա, Մեյսարի Ս. Աստվածածին)⁷³:

1918 թ. հունիսին, Բարվի դեմ բուրքական արշավանքի ժամանակ, Շամախի քաղաքի և շրջակա գավառների հայության վրա ևս փլվեց ցեղասպանության արհավիրը. բուրքարարական գորքերը կողոպտեցին և կոտորեցին ինչպես Շամախի, այնպես էլ շուրջ 45 հայկական գյուղերի հազարվոր հայերի⁷⁴:

Ք. Ղուրա: Ղուրայի գավառի կենտրոնն էր վաճառաշահ Ղուրա քաղաքը, որ կենտրոնացած էր նահանգի հայ բնակչության մի ստվար հատվածը: Տեղաբնակ հայ բնակչության կազմը առավելաբար համարվում է XIX դարի երկրորդ կեսին Արցախից և մասամբ նաև Շամախուց եկածներով, որոնք հիմնականում զբաղվում են տորոնի առևտորով: «Թափառական» ծածկանունով հանդես եկող Վահան Ճարակյանը «Ղուրա քաղաքի հայերը» հոդվածում գրում է, որ «...տորոնի առևտորը ծաղկելով զալիս են այդտեղ բաւականին թուով թիֆլիզեցի, դարաբաղցի և շամախեցի հայ դրամատերեր, որոնցից շատերը բերելով իրանց ընտանիքները՝ մշտապես հաստատվում են քաղաքում: Վերջիններիս օրինակին հետևելով՝ ժամանակի մասք վաճառականները ևս բերել են տալիս իրանց ընտանիքները և նոյնպես մշտական բնակութիւն հաստատում. այսպիսով՝ հետզհետէ կազմվում է տեղ-

⁷² Խուլբյան Ս., նշվ. աշխ., էջ 443-462:

⁷³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, գ. 14, զ. 298, թ. 56-62:

⁷⁴ Տե՛ս և Ստեփանեան Գ., Շամախի քաղաքի հայերի պատմությունից, Երևան, 2012, էջ 64-65:

տոյս հայերի ներկայ պատկառելի թիւը»⁷⁵: Սարգիս արքեալ Զալայյանցի վկայությամբ այստեղ մի շարք վաճառականների հետ միասին բնակություն է հաստատել թիֆլիսեցի վաճառական, նահանգային քարտուհար Ստեփանոս Լազարյանցը և որպես հուսադրության նշան՝ կառուցել առաջին սեփական շինությունը: Ստեփանոս Լազարյանցի և նրա եղբոր՝ առաջին կարգի վաճառական Հովհաննեսի միջոցներով 1845 թ. հայկական թաղի մեջ կառուցվում է Ս. Աստվածածին եկեղեցին⁷⁶: Եկեղեցու պատին արձանագրված էր. «Յանուն Օգոստոսափառ Կայսրութեան Նիկողայոսի առաջնոյ կառուցաւ եկեղեցին Ամենասուրբ Աստուածածնի սեպհական արդեամբ եւ ծախիւր հարազատ եղբարց Գուրենսկի Սեկրետարի Ստեփաննոսի եւ առաջին կարգի վաճառականի Ցովհաննիսի Անդրեասեան Լազրովեանցի, ի 1845 ամի ի 15 օգոստ.»⁷⁷: Քաղաքում գործել են հայկական ծխական արական (հիմնադրվել է 1870 թ.), իգական (հիմնադրվել է 1871 թ.) և հայոց եկեղեցական ծխական երկսեռ (հիմնադրվել է 1889 թ.) դպրոցները: 1897 թ. տվյալներով՝ Ղուրան ուներ 807 հայ բնակիչ⁷⁸: 1916 թ. հունվարի 1-ի դրությամբ քաղաքն ուներ 579 հայ բնակիչ⁷⁹:

Ղուրայի գավառն ունեցել է հայկական 2 (Խաչմաս (Նոր Խաչմաս, Խաչմազ), Քիլվար) և հայաբնակ 1 (Ղարաջալի) գյուղ:

Խաչմասը հիմնված էր Վատնյան դաշտի շարունակության վրա՝ մի գեղեցիկ դաշտահովտում⁸⁰: Դեռևս XVIII դա-

⁷⁵ Թափառական [Վահան Ճարակյան], Ղուրա քաղաքի հայերը (հայերի թիւն ու նրանց գաղթը, պարապմուսքն ու բնոյթը, եկեղեցին ու դպրոցը), «Արձագակ», Թիֆլիս, 1896, մարտի 15, N 31:

⁷⁶ Զալայեանց Ս., նշվ. աշխ., Բ մաս, էջ 423:

⁷⁷ Սմբատեանց Մ., նշվ. աշխ., էջ 538:

⁷⁸ Տե՛ս ՊՎՊՀՐԻ-1897, Բակինսկայ գубերնիա, տաблиց XIII, ս. 53.

⁷⁹ Տե՛ս ԿԿ հա 1917 թ., ս. 179.

⁸⁰ Տե՛ս Բարիստարեանց Ս., նշվ. աշխ., էջ 130:

բավերջին և XIX դարասկզբին 52 տուն հայ բնակչությամբ զբարյուն են ունեցել Մեծ և Փոքր Խաչմաս գյուղերը⁸¹, որոնք, հարակից լինելով, կազմել են քաղաքավան⁸²: XIX դարի երկրորդ կեսի ոռոսական պաշտոնական վիճակագրական տեղեկագրերի տվյալների համաձայն՝ Մուշկուրի տեղամասի Խաչմաս գյուղական համայնքը և համանուն գյուղը կրում էր Նոր Խաչմաս անունը⁸³, որից ոչ հեռու՝ 10 կմ հեռավորության վրա, գտնվում էին հին հին Խաչմասի ավերակները և ընդարձակ գերեզմանատունը: «Ղարաջալեցի» ծածկանունով հեղինակը 1783 թ. լինելով հայոց ավերակ գերեզմանատանը, «Մեղու Հայաստանի» լրագրին հղած թյթակցությունում դառնացած գրում էր. «...իբրև յիշատակ մնացել են միայն Հայոց գերեզմանատները, որոնց մամհապատ և մինչև բողազը հողի մեջ ներս խրուած քարէ յիշատակարանները ցարուցիւ սփռուած են այս և այն ձորում կամ փոսում, որտեղից շատ հեշտութեամբ թուրքի սրբավիղծ ձեռորվ դուրս են քարշվում և մի քանի հաջիների կամ բեզերի շինութիւնների հիմնաքարը դառնում»⁸⁴: Հին Խաչմասի հայերը դեռևս 1796-1797 թթ. գաղթել էին Հյուսիսային Կովկաս և հաստատվել Սուրբ Խաչում⁸⁵: Գյուղատեղին, որն ունեցել է պտղաբեր հող և առատ ջուր,

⁸¹ Տե՛ս և Բրոնևսկի Ս., Նովейшая географическая и историческая извесьтия о Кавказе, ч. II, гл. III, Ширван (Ханство Кубинское), Москва, 1823, с. 383, տե՛ս և նաև Բուտков Պ., Материалы для новой истории Кавказа, с 1722 по 1803 год, ч. I, СПб., с. 94, տե՛ս և նաև չ. III, с. 424, տե՛ս և նաև Յակոբեան Ս., Հայ-թաթերի տարարաշխվածութեան ու տեղահանութիւնների պատմութիւնց (ԺՇ դարի սկիզբ-ԺՇ դարի վեցը), «Հայկագեան հայագիտական հանդէս» հ. ԻԱ, Պէյրութ, 2001, էջ 131-132:

⁸² Տե՛ս և Էփրիկեան Ս., Պատկերազարդ Բնաշխարհիկ քառարան, հ. Բ, գիրը Ս., Վենետիկ-Ս. Ղազար, 1907, էջ 149:

⁸³ Տե՛ս և ՇՀՄ-1859-1864, ս. 92, տե՛ս և նաև ՍՀՀՀՀԿԱՊԸ-1886:

⁸⁴ Ղարաջալեցի, Սաջան (Սուրբ Խաչ քաղաք), «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, հուլիսի 7, 1879, N 51:

⁸⁵ Տե՛ս և նույն տեղում:

համարվել է Ներսես Սարումյանցի սեփական կալվածքը⁸⁶. Թեև վերջինս մտադրություն է ունեցել վերաշինել զյուրը և այն բնակեցնել հայ ընտանիքներով, սակայն վերաբնակեցման մասին հետազա աղբյուրները, ըստ Էռիքյան, տեղեկություններ չեն պահպանել:

Նոր Խաչմասը նահանգի թաթախոս հայերի բնակավայրերից մեկն էր⁸⁷: Ըստ որում, զյուղամիջով հոսող գետակի աջ ափին բնակվել են հայերը, իսկ ձախին՝ առևնի և շիա մահմեդականները: 1850 թ. զյուղ այցելած Սարգսի առքեպ. Զայա-

⁸⁶ Տե՛ս Սմբատեանց Ա., նշվ. աշխ., էջ 546:

բացը վկայում է. «...բնակիչը են Հայր, տունք յիստն, օդն ձանք, երկիրն արգաւանդ և բերրի, ծառազարդ և պտղալի, լի-ի առատ գարի, ցորեան, բրինձ, տորոն, և մետաքս շատ»⁸⁸: 1863 թ. ընտանեկան ցուցակների տվյալներով զյուղն ունեցել է 38 ծուխ՝ 164 բնակչով⁸⁹: Նույն բվականի տվյալներով՝ զյու-ղում բնակվել են նաև փոքր թվով սուննի կովկասյան թա-րարներ⁹⁰: 1873 թ. տվյալներով՝ հայերն ունեցել են 30 ծուխ՝

³⁸Տէ՛ս Զայտականգ Ա., նշվ. աշխ., Բ մաս, էջ 420:

= St. u CHM-1859-1864, ч. VI, с. 67

* Ст. и написан в телеграмме: XIX դարի երկրորդ կեսի ուստաղան աղբյուրներում թյուրք-թաթար տերմիններից առավել գործածական է դանում թաթարը (տե՛ Շահմամատ ՅՈ., Закавказские очерки, СПб., 1845, с. 12, տե՛ և նաև Հեյդլից Հ., Этнографический очерк Бакинской губернии, Кавказский календарь на 1871 г., Тифлис, 1870, с. 47), пры աստիճանաբար դառնում է Այսրկովկան ներխուժման թյուրքական գեղերի համար մեկ ընդհանուր համարական անվանում (տե՛ և Էնցիկլոպедический словарь, под ред. проф. И. Андреевского, т. XIIIА, издатели Ф. Брокгауз, И. Ефрон, СПб., 1894, с. 836, տե՛ և նաև Էնցիկլոպедический словарь, под ред. проф. И. Андреевского, т. XXVIIА, издатели Ф. Брокгауз, И. Ефрон, СПб., 1899, с. 86, տե՛ և նաև Шопен И., Исторический памятник Армянской области в эпоху присоединения ее к Российской империи, СПб., 1852, с. 537): Միաժամանակ, Կազանի, Աստրախանի և Ղրիմի թաթարներին տարբերելու համար Արևելյան Այսրկովկանի թյուրքական բնակչությունը հանրագիտական բառարաններում և պաշտոնական Վիճակագրական տեղեկագրերում սկսեց անվանվել կովկասյան կամ այսրկովկասյան թաթարներ (տե՛ և Էնցիկլոպедический словарь русского библиографического института гранат. т. 4, изд. 7-ое, Москва (б. г.), с. 459, տե՛ և նաև Статистическое бюро Бакинской городской управы. Пособия при разработке материала переписи г. Баку 22-го октября 1903 года, Баку, 1904, с. 102): Այդրեջանական ԽՍՀ-ում 1930-ական թվականներին տեղի ունեցած անձնագրավորման ժամանակ, եթե համարած «այդրեջանականացվեց» թյուրքական բնակչությունը, 1939 թ. հունվարի 17-ի մարդահամարի պաշտոնական նյութերում նոր միայն արեւածածին «Այդրեջան» վարչարարական անունից ի հայտ եկավ այդրեջանցին տերմինը (տե՛ և Всесоюзная перепись населения 1939 г.: основные итоги, Москва, 1992, с. 71, տե՛ և նաև Большая Советская Энциклопедия, изд. 2, т. 1, Москва, 1949, с. 440, տե՛ և նաև Ստեփանյան Գ., Արևելյան

168 բնակչով⁹¹: 1886 թ. ընտանեկան ցուցակների տվյալներով՝ զյուղն ունեցել է 45 ծուխ, որից հայ բնակչությունը՝ 32, իսկ թաթարները՝ 13 ծուխ⁹²: 1914 թ. հունվարի 1-ի դրությամբ Նոր Խաչմասն ուներ 298 հայ բնակչի⁹³:

1918 թ. գարնանը թաթարների կողոպուտից, ավերածություններից և սպանություններից մեծապես տուժեց նաև Ղուբայի գավառի հայ բնակչությունը, հաստկապես Խաչմասի հայությունը: Ապրիլի 3-ին թաթարական զինված ջոկատները Դերբենդից եկած չեցներով և քուրքերով հարձակվում են Խաչմասի հայկական թաղամասի վրա և բոլորին կոտորում, այդ թվում գյուղի երկու քահանաներին: «Անտառի մեր թագստեան տեղից օրուայ ժամը 4-ին, - պատմել են ականատեսները «Արեւ» օրաթերթի խմբագրատանը, - տեսանը որ Դերբենդից կայարան ժամանեցին զինած չեցների և քուրքերի երկու էշելուններ, որոնք կես ժամից յետոյ սկսում են կոտորել Խաչմաս զիտի բոլոր հայերին»⁹⁴: Այդ սարսափելի ջարդից կարողանում են փրկվել միայն երեք հոգի, որոնց հաջողվում է լուսադեմին հեռանալ գյուղից և ապաստան գտնել շուրջ 12 վերստ հեռավորության վրա գտնվող Միխայլովկա (Նիզավո) ոռոսական գյուղում: Խաչմասում հայ բնակչության նկատմամբ իրականացվող ոճագործությունները անմիջականորեն իրակրում և խրախուսվում են Ղուբայի գավառական կոմիսար Ալի-բեկ Զիզիկսկիի կողմից: Շամախու հայոց թեմի

Այսրկովկասում «աղբբեջանից» էքնանվան գործառման հարցի շուրջ, «Մերձավոր Արևելք», պր. V, Երևան, 2008, էջ 137-144):

⁹¹Տե՛ս և Списки населенных мест Кавказского края Бакинской губернии. Список населенных мест по сведениям 1873 г. (այսուհետև՝ CHM-1873). Издан Кавказским статистическим комитетом при главном управлении наместника Кавказского. Сост. гл. ред. ком. Н. Зейдлицем, Тифлис, 1879 (б. с.).

⁹²Տե՛ս և ССДНЗКИПС-1886.

⁹³Տե՛ս և КК на 1915 г., Тифлис, 1914, с. 141.

⁹⁴Ը. Խ., Խաչմասի դեպքերը, «Արեւ», Բազու, 1918, ապրիլի 10 (23), էջ 73 Նոյն տեղում:

առաջնորդ Բագրատ եպս. Վարդագարյանը Հայոց կաթողիկոս Գևորգ Ե. Սուրենյանցին հղած զեկուցագրում այդ ոճագործության մասին գրել է հետևյալը. «...Խաչմաս զիտի հայերին ամբողջովով կոտորեցին իրենց երկու քահանայի հետ: Այժմ այդ տեղերը հայ չկայ»⁹⁵:

Քիլվարը գտնվում էր Կովկասյան Մեծ լեռնաշղթայից Փոքր լեռնաշղթայի վրա կախված մի լեռնաբազկի վրա, որի հյուսիսային կողմով հոսել է Շապորան գետը⁹⁶: Գյուղը թաթախոս հայերի բնակավայրերից էր: 1929 թ. Քիլվար այցելած արևելագետ Բ. Միլլերի հայտնած տեղեկության համաձայն՝ 140 ընտանիքներից 30-ը վաղ ժամանակներում՝ մի քանի սերունդ առաջ, գաղթել են Շամախիից, Քարքանջից, Քալախանից, Մատրասայից, ինչպես նաև մեկական ծովս Երևանից, Արցախից և Ղարաջալիից⁹⁷: Նոյն հեղինակի վկայակոչած տվյալներով՝ Հյուսիսային Կովկաս գաղթից հետո XVIII դարի վերջին Քիլվարն ունեցել է 50 ծովս հայ բնակիչ⁹⁸: Նոոց ի վեր Քիլվարի հայաբնակ լինելու վկայությունը գյուղի Աբ. Գրիգոր Լուսավորիչ հին եկեղեցին է, որը հիմնովին վերանորոգվել էր Շամախիի թեմի առաջնորդ Ներսես վարդապետի օրոր (1551-1601 թթ.), ըստ արձանագրության՝ ՈՒԴ (1585) թվականին⁹⁹: 1873 թ. գյուղն արդեն ուներ 78 ծովս՝ 513 բնակչով, ընդ որում, բնակչության շրջանում գերիշխող էր թաթերեն լեզուն¹⁰⁰: 1886 թ. ընտանեկան ցուցակների տվյալներով՝ գյուղն ունեցել է 82 ծովս՝ 680 բնակչով¹⁰¹: 1890 թ.

⁹⁵ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, գ. 193, թ. 1:

⁹⁶Տե՛ս և Բարխուտարեանց Ս., նշվ. աշխ., էջ 139:

⁹⁷Տե՛ս և Միլլեր Բ., Տալышский язык, Մ.-Լ., 1953, ս. 15..

⁹⁸Տե՛ս և նոյն տեղում, թ. 14, տե՛ս նաև Հակոբյան Ար., Թաթախոս հայեր, էջ 73:

⁹⁹Տե՛ս և Բարխուտարյան Ս., նշվ. աշխ., էջ 147:

¹⁰⁰Տե՛ս և CHM-1859-1864, գ. VI, ս. 55, տե՛ս նաև CHM-1873.

¹⁰¹Տե՛ս և ССДНЗКИПС-1886.

բնակչությունը կազմում էր 100 ծովի՝ 420 բնակչով¹⁰²: 1914 թ. հունվարի 1-ի դրությամբ Քիլվարն ուներ 556 հայ բնակիչ¹⁰³:

Կովկասագետ Ս. Բրոնևսկու տեղեկացմամբ՝ 1796-1897 թթ. Հյուսիսային Կովկաս գաղթից հետո XIX դարի սկզբներին Դուրայի պրովինցիայում վերոնշյալ գյուղերից բացի, հայաբնակ էին Բարախում (I), Բարախում (II), Ղարաջալի և Ղարադուրտ գյուղերը¹⁰⁴: Դուրայից Ն. Սարումյանից՝ 1871 թ. հոկտեմբերի 8-ին «Մեղու Հայաստանի» ամսագրին հղած թղթակցությունից պարզվում է, որ Հյուսիսային Կովկաս գաղթից հետո Ղարաջալի հայաբնակ գյուղն ուներ դեռևս 4 գերդաստան հայ¹⁰⁵: 1886 թ. գյուղն ուներ 14 ծովի՝ 67 բնակչով, որից հայեր՝ 3 ծովի՝ 14 բնակչով (11 ար., 3 իգ.)¹⁰⁶: Ղարաջալի և մերձակա Արար-Սարու գյուղերը ժամանակին եղել են շամախեցի Լալայան եղբայրների սեփական կալվածքը¹⁰⁷: Ղարաջալի գյուղի փոքրաթիվ հայերի մասին հետագա աղյուրները, մասնավորապես Դուրայի գավառում շրջագայած Մակար Եպիսկոպոս Բարխուտարյանից ու Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցի տեղեկությունները բացակայում են: Բ. Միլլերի վերոբերյալ տեղեկությունից ենթադրվում է, որ գյուղի վերջին հայերը վերաբնակվել են Քիլվար և Խաչմաս գյուղերում¹⁰⁸:

Բարվի գավառ: Գտնվում էր համանուն նահանգի արևելյան մասում՝ Կասպից ծովի արևմտյան ափին՝ Ապշերոնյան

¹⁰² Տե՛ս Բարխուտարեանց Ս., նշվ. աշխ., էջ 139:

¹⁰³ Տե՛ս ԿԿ հա 1915 թ., ս. 141.

¹⁰⁴ Տե՛ս Բրոնևսկի Ս., նշվ. աշխ., չ. II, թլ. III, Շիրվան (Խանություն Կубինսկու), ս. 383.

¹⁰⁵ Տե՛ս Ներսես Սարումեանց, «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1871, հոկտեմբերի 16, դ 38, էջ 299:

¹⁰⁶ Տե՛ս ՍՀՀՆՀԿՊԸ-1886.

¹⁰⁷ Տե՛ս Խ. ա. թ. Ա. [Խորեն ավ. թին. Միլրաբելյան], Կենսագրական ակնարկ շամախեցի Լալայեանց ազնիւ տոհմի (ՀԱՍ, ֆ. 57, գ. 1, գ. 309, թ. 11, տե՛ս Սմբատեանց Ս., նշվ. աշխ., էջ 337):

¹⁰⁸ Տե՛ս Բ. Միլլեր, նշվ. աշխ., ս. 15.

Քերակղզում: Կասպից ծովի արևմտյան ափին՝ հրվանդանածների, շուրջ 60 կմ երկարությամբ ծովի մեջ խորացած Ապշերոնյան թերակղզում, հայերը բնակվել են առնվազն վաղ միջնադարից: Բարու քաղաքից 30 վերստ հեռավորության վրա՝ թերակղզու հյուսիսային եզրին գտնվող երթեմնի հայկական, սակայն հետագայում մահմեդաբնակ դարձած Բուզովնա գյուղում բնակվող հայերի և նրանց սրբատեղիների մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում 1842 թ. օգոստոսին այդտեղ այցելած պրոֆ. Ի. Բերյոզինը: Նա վկայում է Ս. Հովհաննեսի և Անդրեասի ղամբարանի, նրա վրա եղած հայատառ արձանագրությունների մասին¹⁰⁹: Բուզովնա գյուղից պահպանվել են նաև տապանաքարերի և խաչքարերի բնեկորներ՝ 1251, 1351 և 1451 թվականների արձանագրություններով, եկեղեցական շինությունների ավերակներ, որոնք վերագրվում են XII-XIII դարերին: Եթ. Տեր-Հովհաննիսյանցը, XX դարասկզբին լինելով Բուզովնայում, «Ս. Եղիայի վանքը Բուզովնում» հողվածում արժեքավոր տվյալներ է հաղորդում հայերին վերաբերող վիմագրական նյութի պատահիների մասին: Ըստ նրա՝ «Բուզովնան, որ մի ժամանակ հայի գիտ է եղել, ներկայումս ծառայում է Բազուեցոց համար իբրեւ ամարանց...»¹¹⁰:

Ապշերոնյան թերակղզում հայաբնակ գյուղեր են եղել նաև Սարունչին, Մաշթաղան, Շաղանը, Մարդարյանդը և Բալախանը: XIX դ. վերջին «Մշակին» հղած թղթակցությունում Ալ. Քալանթարյանցը գրում է, որ այդ գյուղերը 180-200 տարի սրանից առաջ բնակեցված են եղել հայերով¹¹¹: Ուշագրավ է

¹⁰⁹ Բերեզին Ի., Պутешествие по Дагестану и Закавказью, Казань, 1850, ч. III, թլ. V (Օտ Բակո դո Սալյան), ս. 64-65.

¹¹⁰ Տեր-Յովհաննիսյանց Եթ., Ս. Եղիայի վանքը Բուզովնում, «Արարատ», 1902, Ե-Զ, էջ 482:

¹¹¹ Քալանթարեանց Ալ., Նամակ Բուզովնայից, «Մշակ», Թիֆլիս, 1874, սեպտեմբերի 19, Ն 37:

այն տեղեկությունը, որ Բարվից 4 վերստ հարավ-արևմուտք գտնվող Բիբի-Շեյբար ուխտատեղիում նախկինում եղել է վանք. «...Քառասուն հայ կուսանաց վանք է եղել յիշեալ ուխտատեղին»¹¹²: 1850 թ. թերակղզու նավթահանքային շրջան այցելած Սարգս արք. Զալայյանցը վկայում է, որ դեռ երեսում էին ավերակ եկեղեցու հետքերը. «...երեւին աւերակը տանց, ընդ որս եւ եկեղեցւոյ...»¹¹³:

Ք. Բարու: Այշերոնյան թերակղզու հայաբնակ բնակավայրերի շարքում հայ ժողովրդի պատմության մեջ հատկապես կարևոր տեղ է գրավում Բարու քաղաքը¹¹⁴: 1684 թ. հունվարին Բարվում հանգրվանած գերմանացի թժիշկ, ճանապարհորդ Էնգելբերտ Կեմպֆերը տեղեկություններ է հայտնում քաղաքի ամրոցի զիսավոր մուտքի՝ «Շամախյան» դարպասների մոտ գտնվող հայկական ութանկյուն քարավանատան մասին: Ըստ Կեմպֆերի՝ «Հասարակական շենքերից ամենաներկայանալին սրբատաշ քարով կառուցված ութանկյուն սյունազարդ քարավանատունն է կամ հյուրանո-

¹¹² Ալեք[սանդր] Հ. Նաջարեանց, Բազուի նաւթագործարանատիրոց ծայրահեղ անհոգութիւնը, «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1883, փետրվարի 23, էջ 18:

¹¹³ Զալայյանց Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տիֆլիս, 1858, էջ 409-410:

¹¹⁴ Բարվի հայության հնաբնակ լինելը փաստում է քաղաքի ամրոցի ներսում Հայոց Արևելյանց կողմանց (Արցախ, Ուտիք) թագավոր Առանշահիկ Վաշագան Բարեպաշտի (485-VI դարի առաջին կես) կողմից կառուցված Ս. Աստվածածին մատուռ-եկեղեցին: Ավանդության համաձայն՝ «Հին մատուռը... շինուած է եղել այն քագնեաց տեղումը, որ կանգնած էին մինը իբրեւ կրակի շաստուած և միւսը ծովի շաստուած, զոր կործանեց Եղիշէ առարթալը Աղուանից աշխարհը զայլու միջոցին, և տեղը Բիհստուի խաչի նշանը կանգնեց, որ ապա Մեկրովք քարգմանից շինել տուեց մատուռ յանուն Տիրամօրն: Խոկ Վաշագան քարեպաշտ քազաւորն Աղուանից յամի Տեառն 500 շինեց եկեղեցի, ըստ այս և Բազուայ հին և նշանաւոր եկեղեցին և ուխտատեղին է սուրբ Աստվածածնայ եկեղեցին, որ թերդի մեջ է և փարուեան աշտարակի դիմացն ե» (Սմբատեանց Ս., նշվ. աշխ., էջ 373):

թթ. որը ներսում ունի շրջանաձև սրահ»¹¹⁵: 1796 թ. Շիրվանի պրովինցիայի և Ապշերոնի բնակավայրերի տեղագրության և շարտեզագրման աշխատանքներին մասնակցած Ի. Դրենյանինի վկայությամբ՝ Բարուն ուներ մինչև 580 տուն պարսիկ և շուրջ 40 տուն հայ բնակչություն¹¹⁶: Աստրախանի մաքսան տնօրեն Խվանովի՝ 1809 թ. հունիսի 25-ի՝ Վրաստանի և Կովկասյան զծի զիսավոր հրամանատար, գեն. Ա. Տորմանցին ուղղված զեկուցազրի համաձայն՝ Բարուն իր արվարձանով ուներ 992 ընտանիք՝ 5007 բնակչով: Ըստ այդմ՝ բուն քաղաքում պարսիկներն ունեին 861 ընտանիք՝ 4341 բնակչով, հայերը՝ 34 ընտանիք՝ 163 բնակչով, հրեաները՝ 10 ընտանիք՝ 66 բնակչով¹¹⁷: Վիրահայոց թեմի առաջնորդ Ներսէս արքեպիսկոպոս Աշտարակեցու՝ 1822 թ. հունվարին կազմած ցուցակագրության համաձայն՝ Բարվում հայերն ունեին 49 ծովի, 1 եկեղեցի և 5 հոգևորական¹¹⁸: Նույն ժամանակաշրջանի մեկ այլ արխիվային վագերազրի վկայությամբ՝ հայերը Բարվում ունեին 49 տուն՝ 277 բնակչով¹¹⁹: Նույն աղյուրը տեղեկություններ է հաղորդում նաև հայ բնակչության սոցիալ-դասային կազմի վերաբերյալ: Ըստ այդմ՝ «Կնեազր, ազնականք և ազատք»՝ 2 տուն՝ 13 բնակչով, «Թագաւորական հպատակը»՝ 47 տուն՝ 264 բնակչով¹²⁰:

¹¹⁵ Kempfer E., Amoenitatum Exoticarum Politico-Phisico-Medicarum Fasciculi, Lemgoviae, 1712, p. 267.

¹¹⁶ Տե՛ս Դրենյան Ի., Описание Ширвана. 1796 г., История, география и этнография Дагестана XVIII-XIX вв. (архивные материалы), под редакцией М. О. Коссена и Х. М. Хашаева, Москва, 1958, с. 168.

¹¹⁷ Տե՛ս Ակты, собранные Кавказскою археографическою комиссию, под ред. Ад. Берже, т. IV, Тифлис, 1870, док. 865, с. 575.

¹¹⁸ Տե՛ս Գեղաման Ե., Պատմական քաղուածքներ, «Հովիտ», Թիֆլիս, 1910, օգոստոսի 16, N 16, էջ 249:

¹¹⁹ Տե՛ս ՀԱԱ, Փ. 332, գ. 1, գ. 866, թ. 1:

¹²⁰ Տե՛ս նույն տեղում:

Բարու բաղարի աստիճանական զարգացման և քաղաքային բնակչության աճի հետևանքով նկատելի է դառնում նաև հայ բնակչության թվի անընդհատ աճը: Հայերի թիվը Բարփում առանձնապես աճեց XIX դարի 70-80-ական թվականների և XX դարի սահմանագլխին՝ նավթային վերելիքի շրջանում՝ ի հաշիվ Հայաստանի տարբեր վայրերից տեղափոխվածների: 1832 թ. Բարփում հայերն ունեին 80 տուն՝ 333 բնակիչ¹²¹: 1850 թ. սկզբներին է կազմվել Բարփի ամենահաջող նկարագրությունը: Այն պատկանում է 1847 թ. հուլիսին աշխատանքի բերումով Բարփում բնակություն հաստատած ուսու գիտնական Կուլմա Ֆեռորի Սպասսկի-Ավտոնոմովի գրչին¹²²: «Բարու» համառոտ ուսումնասիրությունում տրված է բաղարի բազմակողմանի նկարագրությունը. հեղինակը տեղեկություններ է հայտնում բաղարի բնակչիմայական պայմանների, կառավարման, բնակչության գրադմունքի, դասային կազմի, եկեղեցիների և ուսումնարանների, առևտրական գործառույթների, ըստ ազգային ու դավանական պատկանելության բնակչության թվի մասին և այլն¹²³: Հատկանշական է այն փաստը, որ Կ. Սպասսկի-Ավտոնոմովը հայերին նշում է որպես բաղարի տեղաբնիկ բնակչիներ և տեղեկություններ հայտնում նրանց թվի և գործող հայկական եկեղեցու մասին¹²⁴: Կ. Սպասսկի-Ավտոնոմովի տվյալներով՝ 7431 բնակիչ ունեցող Բարփում հայ առաքելականների թիվը 405 եր¹²⁵: 1897 թ. տվյալներով (ներառյալ արդյունագործական

¹²¹ Տե՛ս Տյզինկևիչ Յ., Первая перепись населения Баку, Доклады АН АзССР, т. II, Баку, 1946, N 6, с. 251-252.

¹²² Կ. Ֆ. Սպասսկի-Ավտոնոմովը (ծն. է 1807 թ., մահ.՝ 1890 թ.) եղել է Բարփի մարսային վարչության (հիմնվել է 1807 թ. հունվարի 25-ին) պետական խորհրդական:

¹²³ Տե՛ս Ավտոնոմ-Спасский К., Баку, КК на 1852 г., отд. III, с. 296-309.

¹²⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 307.

¹²⁵ Տե՛ս նույն տեղում, թ. 305, 307: Հմմ. Տումար ընտանեկան 1874-1875 թթ., հ. Ա, աշխատափեաց Տ. Արբուհի Ա. Երիցեանց, Թիֆլիս, 1874, էջ 123:

գործարանային շրջանները) Բարուն ուներ 45.402 հայ բնակչի¹²⁶: Այդ տարիներին բաղարի հայ ընտանիքների մեծամասնությունն ապրում էր ին բաղարի կենտրոնական մասում, նրա միջուկը կազմող բերդ-պալատի շրջակայրում՝ բերդաբաղում, Սբ. Աստվածածին եկեղեցու շրջակայրում: Բաղարի աստիճանական զարգացման հետևանքով հայերը սկսեցին բնակվել նաև բերդի և բաղարի հարավային կողմում՝ արվարձանում: 1916 թ. հունվարի 1-ի դրությամբ Բարփում (ներառյալ Բալախան-Սարունչի) ոստիկանական տեղամասը) հայերի թիվը 77.166 էր¹²⁷:

Իրենց ստեղծագործ և գիտամշակութային բարձր մակարդակով առաջնակարգ և ուրույն տեղ գրավելով Բարփի հասարակական-տնտեսական ու կրթամշակութային կյանքում՝ հայերը XIX դ. երկրորդ կեսից հասարակության սոցիալական կառուցվածքի մեջ գրադերել են բարձր ու միջին օղակներ և ապրել են բարեկեցիկ: Բարփի հասարակական վերնախավում բաղարի տնտեսության մեջ հատկապես աշքի էր ընկնում նոր ձևավորված հայ առևտրաարդյունաբերական խավը: Բարփում կային խոշոր կարողության և զգալի թվով միջին ունեցվածքի տեր հայեր: Դեռևս 1808 թ. հունիսից բաղարի տուրքերի գանձումը չորս տարի ժամկետով, տարեկան 112 500 ոռութիւն կապալով տրվել էր հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչ, ծագումով Նախիջևանի Երնջակ գավառի Շահկերտ ավանից հայտնի վաճառական Բարա Թառումյանին¹²⁸: Առևտրական կապերով կապված լինելով Եվրոպայի հետ՝ հայ առևտրաարդյունաբերողներն առաջիններ

¹²⁶ Տե՛ս Ա. Կարապետ եպիսկոպոս, Նամակներ խմբագրութեան (I), «Արձագան», Թիֆլիս, 1897, հոկտեմբերի 31, N 126, տե՛ս նաև Stepanyan G., Armenians of Baku province in the second half of the the 19th century (historical-demographic study), Yerevan, 2013, p. 214.

¹²⁷ Տե՛ս ԿԿ հա 1917 թ., թ. 183, 185.

¹²⁸ Տե՛ս Ճանապարհորդութիւն Մեսրոպյան Շ. Թաղիադեանց. Վ. Ա. Սարկասյան սրբոյ Էջմիածնի ի Հայո, հ. Ա, էջ 291-292:

թից էին, որ կանխազգացին Բարվի նավթի նշանակությունն ու արժեքը և սկսեցին զարգացնել արդյունաբերության այդ ճյուղը: Բարվում հայ առաջին նավթահորերի սեփականատերն էր գործունյա և տնտեսազիտական լայն մտահորիզոնի տեր, թիֆլիսեցի վաճառական Հովհաննես Միրզոյանը: Նա 1868 թ. Սուրախանիում հիմնեց նավթի վերամշակման գործարան, իսկ 1871 թ.¹²⁹ Բալախանիում առաջին արդյունաբերական հորատանցը, որով և հիմք դրվեց զարգացման սարդմնային վիճակում գտնվող նավթարդյունաբերությանը¹²⁹:

Բարվի խոշոր ձեռնարկատերերի շարքում մեծ տոկոս էին կազմում հատկապես հայ նավթարդյունաբերողները (Փիթոյան եղբայրներ, Չուշեցի Պողոս, Հակոբ, Արքահամ և Արշակ Ղուկասյան եղբայրներ, Հովհաննես Միրզոյան, Գևորգ Լիանովյան, Առաքել Շատուրյանց և շատ ուրիշներ): Նրանց հիմնած հայանուն ընկերությունները («Արամազդ», «Սյունիք», «Մասիս», «Աստղիկ», «Արարատ» և այլն) մեծ դեր են խաղացել Ապշերոնյան թերակղզու նավթի արդյունահանման և վաճառքի կազմակերպման, Բարվում ֆինանսավարկային և բանկային համակարգերի կազմակորման գործում: Նավթարդյունաբերությունը ոչ միայն հարստացրեց Բարվուն, այլև XIX դ. երկրորդ կեսից՝ առավելապես դարձ վերջում, վճռական դեր խաղաց հայ դրամատիրության ձևավորման գործնթացում:

Փաստերը վկայում են, որ Բարվի նավթարդյունաբերության զարգացման գործում իրենց առանձնահատուկ դերն են ունեցել հատկապես արցախահայերը: Արցախից թերևս առաջին նախաձեռնողներից էր հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչ Պետրոս Մանչեյանը, որը կառավարութ-

¹²⁹Տե՛ս ՀԱԱ, ֆ. 196, ց. 1, գ. 23, թ. 27, տե՛ս և նաև Գуլիշամբար Ս., Օчерки развития и современное состояние нефт-яной промышленности Бакинского района (Список сведений о Кавказе, т. VII. Изданый под ред. Н. Зейдлица, Тифлис, 1880, с. 345)..

յան հետ 1810 թ. ստորագրած համաձայնագրով կապալով սկսեց շահագործել Ղուրայի նավթահորերն ու ծովային ձկնորսարանները¹³⁰: Արցախիցներ էին խոշոր նավթահանցների տերեր, եղբայրներ Առաքելյանները, Ղուկասյանները, Կրասիլնիկյանները, Գրիգոր և Հովսեսի Թումայան եղբայրները, Գրիգոր Դիլդարյանը, Սուսայել Շահգեղանյանը, Դավիթ Ավան-Յուզբաշյանը, Չուշեցի Լազարյանների գերդաստանի ներկայացուցիչ, գեներալ-լեյտենանտ Հովհաննես Դավիթ Լազարյանը, Սամվել Բաղիրյանը, Հարություն (Արտեմ) Սադարյանը, Միքայել Արամյանցը և շատ ուրիշներ¹³¹: Այս առումով ուշագրավ է «Տարազ» ամսագրի վկայակրոշած հետևյալ տեղեկությունը. «Գաղտնիք չէ, որ Բարվի հայ հարուստները մի աննշան բացառութեամբ, բոլորը դարաբաղջներ են: Արանք, զարթելով Բագու, իրանց բնածին ընդունակութեամբ եւ տոկունութեամբ մի երեսուն-քառասուն տարւայ ընթացում շինել են այժմեան Բագու քաղաքը եւ ձեռք բերել ահազին հարստութիւն»¹³²: Տնտեսական կյանքի աշխուժացման պայմաններում հայ առևտրարդյունաբերողներից շատերը Բարվում հիմնել են գործարաններ, ֆաբրիկաներ և արդյունաբերական այլ ձեռնարկություններ: Եթե 1889 թ. Բարվուն գրանցված 69 նավթարդյունաբերական ընկերություններից հայկական էր 34-ը, ապա՝ 1907 թ. 154-ից՝ 89-ը (58%), 1909 թ. 176-ից՝ 99-ը (56%): 1907 թ. դրությամբ 448 միլիոն փութ նավթի հանույթի 52,4 %-ը պատկանում էր հայերին, 36,9 %-ը՝ թիֆլիսի 52,4 %-ը պատկանում էր հայերին, իսկ 8,7 %-ը՝ կովկասյան ժողովուներին և եվրոպացիներին, իսկ 8,7 %-ը՝ կովկասյան ժողովուներին:

¹³⁰Տե՛ս Դիլդյան Վ., Արեւելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսամյակին և հայ-ուստական հարաբերությունները, Երևան, 1989, էջ 117:

¹³¹Տե՛ս Ստեփանյան Գ., Արցախահայության դերը Բարվի առևտրարդյունաբերության զարգացման գործում. XIX դ. XX դարասկիզբ, Միջազգային գիտաժողովի նյութեր Ավելիված ԱրՊՀ հիմնադրման 40-ամյակին, պրակ 1, Ստեփանյակերտ, 2009, էջ 262-266:

¹³²«Տարազ», Թիֆլիս, 1892, Ն 25, էջ 350:

Դովուրիներին: Արդեն 1917 թ. 368 միլիոն փութ նավթի հանույթի 53 %-ը պատկանում էր հայ ձերիստանունքերին.¹³³

Բարգում հայ առևտրաարդյունաբերական դասի խոշոր ներկայացուցիչն ու առաջամարտիկն Ալեքսանդր Մանթաշյանը էր, որը կարծ ժամանակամիջոցում իր շուրջն է համախմբում հայկական խոշոր և միջին մի շարք նավթարդյունաբերական ընկերություններ և 1889 թ. հիմնում «Ա. Հ. Մանթաշյան» և ընկ. առևտրական տունը» ու նոր սկիզբ դնում նավթարդյունաբերության զարգացմանը՝ հետզհետեւ դառնալով Բարգի նավթարդյունաբերության առաջնորդներից մեելու¹³⁴:

Հայ առևտրապարունաքերողները, նավթի վերամշակման և արդյունաբերական այլ գործարաններից զատ, ունեին նաև նավամատույցներ և սեփական շրեղ շոգենավեր: Կասպից ծովում բեռնափոխադրումներ են կատարել նաև հայկական այլ ընկերությունների և առանձին անհատների «Մասիս», «Արարատ», «Կիլիկիա», «Անի», «Սևան», «Արմենիա», «Արմենակ», «Արցախ», «Հայաստան», «Շուշանիկ», «Արաքս», «Վան», «Մուշ», «Զանգի», «Արծուի Վասպուրական», «Թամարա», «Արշալույս», «Աննա», «Մենաստան», «Վահան» և հայանուն այլ մարդատար ու ապրանքատար շոգենավեր և առազատանավեր¹³⁵: 1890 թ. հունիսին հայ նավթարդյունաքերողները հիմնել էին նաև «Հայոց շոգենավային ընկերությունը»¹³⁶:

¹³³ Сб. и ЗЧУ, ф. 196, г. 1, к. 23, п. 30-31, исп. и вкл. Микаелян В., Мирзоян С., Участие армян в экономической жизни Восточного Закавказья (вторая половина XIX- первые десятилетия XX вв.), Л29. Ереван, 1990. N 2. л. 77.

¹³⁴ Սանրաման տե՛ս Սարուխան Ա., Աղեքսանոր Մաթրաշեանց: Մեծ վաճառականներ և բարեգործը (իշխողութիւններ իր մահուան 20-ամեակի առթիւ), Վիեննա, 1931:

¹³⁵ «Упрор»-ի պատկերազարդ օրացույց 1894 թուականին Քրիստոնի, Բաքու, 1893, էջ 35, տես և նաև Ежегодник Баку и его районов 1909. Адресная и справочная книга, С.-Петербург, 1909, стр. V, с. 221-222.

¹³⁶ Եղիշէ քահ. Գեղամեանց, Նամակ Բագրիկց, «Արձագանք», Թիֆլիս, 1890, հունիսի 24, N 18, էջ 14:

Բարվի հայերն առաջատար դիրք են ունեցել հասարակական-քաղաքական կյանքի գրեթե բոլոր ոլորտներում: Նրանք պատասխանատու պաշտոններ են վարել ինչպես նահանգային, այնպես էլ գավառային և քաղաքային վարչություններում: Նրանց մեջ եղել են մեծ թվով իրավաբաններ, փաստաբաններ, երդվալ ատենակալներ, գանձապահներ և այլն: Բարվի բարձրաստիճան հայերից ումանք եղել են քաղաքավորներ տեղապահ և անզամ ընտրվել քաղաքավորության 1840-ական թվականների կեսերին Բարվի քաղաքապետն էր Արդության նշանավոր իշխանական տոհմի ներկայացուցիչ, պորուչիկ Պավել Փարսադանի Արդության-Երկայնաբազուկը (Դոլգորուկի): Քաղաքավորության Ստանիսլավ Զենովիչի (1879-1893 թթ.) կառավարման շրջանում քաղաքային վարչության անդամ և քաղաքավորներ տեղապահն էր «Մարդասիրական ընկերության» նախագահ Քրիստափոր Անտոնյանը: Մեծ թվով բարձրաստիճան հայեր տարբեր տարիներին մշտապես տեղեր են գրադերել Բարվի Քաղաքային դումայում¹³⁷:

Տնտեսական աշխուժության պայմաններում կարճ ժամանակում ծնունդ էն առել բարեգործական և հասարակական մի շարք կազմակերպություններ («Մարդասիրական ընկերություն հանուն Ս. Գրիգորի Լուսավորչին Հայաստանի», 1864 թ., հիմնադրել է Բարձրի նահանգի բժշկապետ Դավիթ Արտեմի Ռոստովյանը), «Բարձրի Հայոց աղքատախնամ եկեղեցական հոգաբարձությունը» (1872 թ. հիմնադրել է Բարձրի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու ավ. քին. Թաղևոս Բուղարյանցը), «Բարձրի Հայոց կուլտուրական միությունը» (1906 թ. հիմնադրել է Կոստանդին Խատիսյանը), «Բարձրի որբախնամ ընկերությունը», (1914 թ. ապրիլի 25-ին հիմնադրել էն Ալեքսանդր, Անդրեաս և Պատվական Թառայանց եղբայր-

¹³⁷ Մանրամասն տե՛ս Ստեփանյան Գ., Բարու քաղաքի հայության պատմությունը (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, 2012, էջ 178-179:

ները)¹³⁸, «Բարվի հայկական ծխական դպրոցների չքավոր աշակերտ-աշակերտուիիներին նպաստող ընկերություն» (1914 թ. հոկտեմբեր), որոնք իրենց հայանպաստ գործունեությունը ծավալեցին ոչ միայն Բարվի նահանջի սահմաններում, այլև դրանից դուրս:

Բարվի հայերի հոգևոր ու մշակութային կյանքը ընթացել է համահայկական հունով՝ սերտորեն կապված լինելով ազգային կյանքին ու ավանդներին: 1870 թ. փետրվարի 28-ին նավթարդյունաբերող Ներսես Կրասիլնիկյանի տանը սկսել է գործել ռեալական դպրոցի սաներից կազմված հայկական դերասանական խումբը, որը հիմնադրել է Բարվի հայկական թատրոնը: Այդուեղ են գործել հայ դերասանական լավագույն ուժերից Սաֆրազյան ամուսինները, Հովհաննես Արեյյանը, Ազնիվ Հրաշյան, Սիրանուշը, Արտաշես Վրույրը, Արուս Ռուկանյանը և շատ ուրիշներ: Բարվում 1885 թ. նոյեմբերի 12-30-ը Ա. Գոնչարովի ոռուսական թատերախմբի հետ հյուրախաղերով հանդես է եկել հանճարեն դերասան Պետրոս Աղամյանը:

XIX դարի երկրորդ կեսին Բարվի հայ թատերական կյանքին համահունչ առաջ էր ընթանում նաև երաժշտական կյանքը: Բարվի հայ երաժշտակաների կյանքում իր ուրույն ու հաստատուն տեղն է ունեցել հայ երաժշտության ամենանշանավոր գործիչներից մեկը՝ Երգահան, խմբավար, երաժշտական բանահավաք ու քառաձայն երգարվեստի մեծ վարպետ Քրիստովոր Կարա-Սուլրան, որը 1885-1893 թթ. անընդմեջ ապրել և ստեղծագործել է Բարվում: 1896 թ. այդ քաղաքում իր երգչախմբով հանդես է եկել հայ երգարվեստի

մեկ այլ երախտավոր՝ Մակար Եկմայյանը, որը քաղաքի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Եկեղեցում կատարել է իր ստեղծած քառաձայն «Պատարագը»: «Կուլտուրական միության» գեղարվեստական մասնաժողովը 1908 թ. մարտի վերջերին Բարվու է հրավիրել Կոմիտաս վարդապետին, որն իր աշակերտ Կահան Տեր-Առաքելյանի հետ միասին «Մարդասիրական ընկերության» դահլիճում տպավորիչ համերգ է տվել:

Քաղաքի գրական կյանքի աշխուժացմանն է նպաստել 1880-ական թվականների վերջերին հիմնված «Հույս» միությունն իր համանուն հանդեսով: Բարվում գրական-հասարակական գործունեության խթան հանդիսացավ 1890-ական թվականներին գրող-մանկավարժներ Ս. Հովհաննի, Ս. Նազարեթյանի, Ս. Բալայանի, Ս. Մատինյանի և Ս. Բեզլարյանի ջանքերով կազմակերպված «Օջախ» գրական-գեղարվեստական հնչակյան ակումբը¹³⁹, որի աշխատանքներին տարբեր տարիներին մասնակցել և Բարվի հայ կրթամշակութային կյանքին կարևոր մասնակցություն են բերել հայ դասական գորոնները: «Օջախի» պատվավոր անդամներն են Ղ. Աղայանը, Ալ. Շիրվանզադեն, Հովհ. Թումանյանը և այլք¹⁴⁰: Բարվի գրական շարժմանը խթանեց 1915 թ. մայիսին գրական մի խումբ գործիչների ջանքերով հիմնադրված «Բարվի հայ գրասերների ընկերությունը»¹⁴¹:

XIX դարի 70-ական թվականների սկզբից Բարվում միաժամանակ սկսում է ձևավորվել ու զարգանալ տպագրական գործը: «Մարդասիրական ընկերության» նախաձեռնությամբ 1872 թ. հիմնվում է քաղաքի առաջին տպարանը, որի հայկա-

¹³⁸ Տե՛ս «Պատմական համառու տեսութիւն Բագուայ Հայոց Մարդասիրական ընկերութեան 25-ամեայ գործունեութեան, աշխատասիրեց ատենադպիր ընկերութեան Ա. Գալստեանց, Բազու, 1891, էջ 5-6): Պատմութիւն Բագուայ Հայոց աղքատախնամ եկեղեցական հոգաբարձութեան (1872 թ. ապրիլի 1-ից մինչեւ 1893 թ. ապրիլի 1-ը), կազմեց՝ Ա. Գալստեանց, Բազու, 1895, էջ 3: Կանոնադրութիւն Բագուայ որբախնամ ընկերութեան, Բազու, 1914, էջ 1, 8:

¹³⁹ Տե՛ս «Հորիգոն», Թիֆլիս, 1914, հունվարի 30, N 22:

¹⁴⁰ Տե՛ս Խնձօհյան Ա., Հովհաննես Թումանյանի կյանքը և ստեղծագործության պատմությունը (1869-1899), Երևան, 1969, էջ 378, տե՛ս նաև Հովհաննիսիս Ա., Հովհաննես Թումանյանի կյանքի ու ստեղծագործության պատմությունը (1900-1912 թթ.): Գիտական կենսագրություն, Երևան, 2012, էջ 568-569:

¹⁴¹ «Արեգ», Բազու, 1915, մայիսի 30, N 56:

կան տառերը բերվում են Թիֆլիսից՝ «Հ. Էնֆիաճյանց և ընկ.» ձուլարանից: Այդտեղ լույս են տեսնում «Սոխակ Հայաստանի» երգարանի չորս պրակները (1874 թ.), «Միսիթար Գոշ», «Ողոմպիանոսի և Եզովպոսի առակները», (1878 թ.), Խորեն Ստեփանեի «Հայկական աշխարհ» ամսագիրը (1877-1878 թթ.) և արժեքավոր այլ գործեր: XIX դարի վերջին գործել են «Մալաֆյանց և ընկ.» (1874 թ.), «Ա. Ղասարյանց» (1876 թ.), «Մարդասիրական ընկերության» տպարանի գրաշարներ U. Տեր-Շովիաննիսյանի ու Ա. Ղասարյանցի տպարանը (1876 թ.): 1890-ական թվականներին U. Շահբաղյանի կողմից հիմնվում է նաև «Արոր» տպարանը¹⁴²: XX դարի սկզբին Բարգվում հիմնվում են նաև Գյուլբուրդաղյանցի, և Եղբ. Ղազարյանների, Ն. Երևանցյանի, Կ. Խատիսյանի, «Արծվաբերդ», «Արամազդ», «Բարվի Հայոց կուլտուրական միության» տպարանները և այլն¹⁴³:

XIX դարի կեսին և XX դարի սկզբներին հրատարակվել են հայկական բազմաթիվ պարբերականներ: Մինչև 1920 թ. Բարգվում հրատարակվել է ավելի քան 62 անուն հայկական պարբերական: Դրանցից են՝ «Հայկական աշխարհ (1877-1879 թթ.)», «Օրեր (1907 թ.)», «Անի (1908 թ.)», «Նոր խօսք (1911-1912 թթ.)», «Արեւ (1914-1919 թթ.)», «Առաւտո» (1909 թ.), «Գործ» (1914 թ.), «Նաւակ» (1914-1915 թթ.), «Ծիլ» (1914-1916 թթ.), «Բազվի ձայն» (1913-1914), «Աշխատանքի ձայն» (1918 թ.) և այլ պարբերականներ¹⁴⁴:

Բարվի և Ապշերոնյան թերակղու մյուս բնակավայրերի կառուցապատման ուղղությամբ և քաղաքաշինության ոլորտում մեծ դեր են խաղացել հասկապես հայ ձարտարապետ-

ներն ու շինարարները: Հատկանշական է ձարտարապետներ Գ. Տեր-Միքելյանի, Վ. Սարգսյանի, Ն. Բանի, Հ. Քաջազնունու և Ֆ. Աղայանի ավանդը, որոնց կառուցած բնակելի շենքերը, հասարակական ու մշակութային շինությունները կանգուն են ցարդ և զարդարում են ներկայիս Բարուն:

«Մարդասիրական ընկերության» նախագահ Մովսես Զուրաբյանի նախաձեռնությամբ 1870 թվականից ընկերությանը կից գործել է գրադարան-ընթերցարանը, որի առաջին վարիչն էր Ալ. Շիրվանզադեն: Գրադարանը հետագայում կողոպուտի ենթարկվեց մուսավարական իշխանության և դրան հաջորդած խորհրդային կարգերի հաստատումից հետո:

Պակաս կարևոր չեր Բարվի հայերի դերն ու մասնակցությունը հասարակական-քաղաքական կյանքին: XIX դարավերջից Բարգվում գործում էին ՀՅԴ, ՍԴ Հնչալյան, Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության («Սպեցիֆիկներ»), իսկ ավելի ուշ՝ Հայ ժողովրդական կուսակցությունները: Հայ քաղաքական ուժերն իրենց մեծ դերակատարությունն են ունեցել նաև մյուս քաղաքական կուսակցությունների՝ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական («ՌՍԴԲԿ») և Սոցիալիստ-հեղափոխականների (Էսլո) Բարվի մասնաճյուղերի ստեղծման և գործունեության մեջ:

Բարվի հայ հասարակական-քաղաքական կյանքում զգալի դեր ունեին Թիֆլիսի Ազգային կենտրոնական բյուրոյի Բարվի մասնաճյուղը (1917 թ. հունիսին այն վերանվանվում է Բարվի հայ հասարակական և քաղաքական հոսանքների ժամանակավոր խորհուրդ (նախագահ՝ Հայկ Տեր-Միքայելյան) և 1917 թ. դեկտեմբերի 30-ին ստեղծված Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդի Բարվի մասնաճյուղը:

Բարգվում հայկական առաջին դպրոցը բացվել է 1860 թ. Ալեքսեյ Տեր-Ղուկասյանի ջանքերով¹⁴⁵: «Մարդասիրական ընկերությանը» կից գործել են Ա. Մեսրոպյան երկդասյան

¹⁴² Տե՛ս՝ Ստեփանյան Գ., Շամախի և Բարու քաղաքների հայկական տպագրության պատմությունից, էջ 96-97:

¹⁴³ Տե՛ս՝ Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1967) համահավաք ցանկ, կազմեց՝ Ա. Կիրակոսյան, Երևան, 1970, էջ 613:

¹⁴⁴ Տե՛ս՝ Ստեփանյան Գ., Շամախի և Բարու քաղաքների հայկական տպագրության պատմությունից, էջ 99-100:

արական և Ս. Հոհիսիմյան օրիորդաց միջնակարգ դպրոցները (հիմնվել են 1869 թ.): Ընդհանուր առմամբ, մինչև թուրքերի կողմից Բաքվի գրավումը (1918 թ. սեպտեմբեր) գործել են տարաբնույթ 21 դպրոցներ¹⁴⁶: 1916 թ. քաղաքում գործող եկեղեցիների թիվն արդեն հասնում էր 5-ի (Ս. Աստվածածին, Ս. Գրիգոր Լուսավորիչ (կառ.) 1869 թ.), Ս. Հովհաննես Մկրտիչ (կառ.) 1895 թ.), Ս. Թարգմանչաց (կառ.) 1907 թ.), Ս. Թադևոս և Ս. Բարդուղիմեոս (կառ.) 1914 թ.): Նախատեսված էր կառուցել նաև Ս. Հոհիսիմե, Ս. Սահակ և Ս. Մեսրոպ եկեղեցիները, սակայն Առաջին աշխարհամարտի սկսվելու պատճառով այդ ձեռնարկն այդպես էլ չիրականացվեց¹⁴⁷:

1905 թ. փետրվարին, երբ ցարական իշխանությունների հրահրմամբ կովկասյան թաթարները սկսում են հայերի կոտորածներ, ՀՅԴ Բաքվի Ռուկանապատի կենտրոնական կոմիտեն կազմակերպում է ինքնապաշտպանություն՝ Նիկոլ Դումանի գլխավորությամբ: Համաթուրքական ծրագրերը իրականացնելու և Բաքվի նավթին տիրանալու նպատակով 1918 թ. գարնանը թուրքական գորքերը Նուրի փաշայի հրամանատարությամբ արշավում են Բաքու: Հիմնականում հայ սպաներով և զինվորականներով համարված Կոմունայի բանակի չորսամյա համառ և արյունահեղ դիմադրությունից հետո սեպտեմբերի 15-ին թուրքական գորքերը Նուրի փաշայի գլխավորությամբ գրավում են Բաքուն և արհեստածին «Աղբեջանական Դեմոկրատական Հանրապետության»¹⁴⁸

¹⁴⁶ Տե՛ս Ստեփանյան Գ., Բաքու քաղաքի հայության պատմությունը, էջ 648:

¹⁴⁷ Տե՛ս Ստեփանյան Գ., Համառոտ ակնարկ Բաքու քաղաքի հայկական եկեղեցիների պատմության, Հայոց պատմության հարցեր (զիտական հոդվածների ժողովածու), հ. 8, Երևան, 2007, էջ 152-170:

¹⁴⁸ Արևելյան Այսրկովկասում երբեւ գյուղուն չի ունեցել «Աղբեջան» անվամբ որևէ աշխարհագրական վայր կամ պետություն: Արտ. Արեւյանի դիպուկ ընորոշմամբ՝ «Ասորբէջան եւ ատրբէջանցի անունով երկիր ու ժողովուրդ գյուղուն չընեին պատերազմից (իմա՝ Առաջին աշխարհամարտից - Գ. Ա.) առաջ: Ռուսական հին վիճակագրութիւնը գիտէր միայն

մուսավաթական կառավարության աջակցությամբ, հանձին ներքին գործոց նախարար Բեհրուդ-խան Զիվանշիրի, տեղի թաթարական ջոկատների հետ միասին երեք օր շարունակ (15-17-ը) կոտորածի ենթարկում ավելի քան 30.000 հայերի՝ կողոպտելով նրանց ունեցվածքը¹⁴⁹: Կոտորածը համընդհանուր էր, ավերն ու թալանը՝ նույնպես: Քաղաքի ոչ մի հայ ըստանիք գերծ չի մնում ահօնի ջարդերից ու կողոպուտից: Բնակչության մի մասը կոտորվում է տեղում՝ հարազատ օջախներում, մյուս մասը՝ փողոցներում և ապաստանած վայրերում: Ամբողջովին ավերվում է Հայկավան թաղամասը,

«Արեւելյան Ասորկովկաս», «Բազուի նահանգ» և այլն, փոխարինելով նույնանուն խանութիւններին՝ պարսկական տիրապետության տակ: Այդ երկրամասի մեծամասնութիւն կազմող ցեղն էլ հին վիճակագրութիւններում թաթար և կամ պարզապես մահմեդական յորջործումով էր յայնոն» (Արեւելյան Արտ., Մեր եւ մեր հարեւանները (ազգային քաղաքականության խնդիրներ), «Հայրենիք», Պուրքըն, 1928, Զ տարի, մայիս, N 7, էջ 135): 1918 թ. մայիսի 26-ին՝ Ասորկովկասայան Սեյմի լուծարություն հետո, երբ կովկասյան թաթարների «ազգային» խորհուրդը (նախագահ՝ Սամեդ Էմին Շասուլզադե) երիտրուքտերի թեկադրանորդ մայիսի 28-ին Թիֆլիսում հոչակց արիստուածին նոր «պետության» ստեղծումը, նպատակ ունենալով նոյն անվան միջոցով հավակնել Իրանի հյուսիսարևմտյան պատմական Ասորպատական-Ազարբայջան երկրամասին, հակառակ Իրանի բողոքների այն հորցութեց «Աղրբեջանական Դեմոկրատական Հանրապետություն» (հետագայում՝ Աղրբեջանական ԽՍՀ, ներկայում՝ Աղրբեջանական Հանրապետություն): Սանրամասն տե՛ս Բարտոլդ Վ., Место прикаспийских областей в истории мусульманского мира, Сочинение, т. II, ч. I, Москва, 1963, с. 703; Էներեռության Ուզեա, Ազարբայջան եւ Աղու (Կովկասիան Ալբանիա), Երևան, 1994, էջ 151-152; Swietochowski T., Russian Azerbaijan. 1905-1920. The Shaping of National Identity in a Muslim Community. Cambridge, Cambridge University Press, 1985, p. 129; Ապատյան Գ., Գևորգյան Ն., Աղրբեջան. յուրացման սկզբունքը և իրանական աշխարհը, Երևան, 1990; Galichian R., The Invention of History. Azerbaijan, Armenia and the Showcasing of Imagination (Second, revised and expanded edition), London/Yerevan, 2010, p. 35.

¹⁴⁹ Տե՛ս Գеноոց արման в Османской империи. Сборник документов под редакцией М. Г. Нерсисяна, Ереван, 1982, док. 245, с. 524.

ուր անխնա կոտորածի են ենթարկվում ծերերն ու մինչև անգամ ծծկեր երեխաները¹⁵⁰: Ցեղասպանությունից փրկված հայերի մի զգալի հատված հանգրվանեց Կրասնովդուկում, Հյուսիսային Կովկասում, Անդրկասպայան երկրում և Պարսկաստանում¹⁵¹:

Բարվի նահանգի հարավային՝ մերձկասպայան Զավար և նրանից հարավ ընկած Լենքորան գավառները Երասխի (Արարս) ստորին հոսանքից հարավ գտնվող Մեծ Հայրի 11-րդ նահանգի՝ Փայտակարանի մասն են կազմել, և այդ տարածքների տեղաբնիկները հայերն են եղել: Դարեր շարունակ այնտեղ են գտնվել Արտաշեայանների ու Արշակունիների ձմեռանցները, նաև տեղակայված էին հայկական գինվորական կայազորները¹⁵²: Ի լրումն սեծովյան և միջերկրածովյան նավահանգիստների, Հայոց պետականության (Մեծ Հայք, Փոքր Հայք, Հայկական Կիլիկիա) հզորության ժամանակներում Կասպիական նավահանգիստների միջոցով կապվում էր առևտրի ասիական կենտրոններին՝ դրանով իսկ մասնակցելով և ներդրում ունենալով համաշխարհային տնտեսական, մշակութային ու քաղաքակրթական գործընթացներում¹⁵³: Ինչպես գրում է Ս. Շոցիկյանը. «Հայ այս ծովի (իմա՝ Կասպից - Գ. Ս.) եզերներուն վրայ բնակող այլ և այլ ազգի ժողովուրդներուն կը վաճառէին ամեն տեսակ թանկագին ապրանքներ: Տեղ տեղ ունէին նաև վաճառականութեան մեծ կայարան-

¹⁵⁰ Տե՛ս Իշխանեան Բ., Բագուի մեծ սարսափները: Անկետային ուսումնասիրութիւնն սեպտեմբերեան անցքերի 1918 թ., Թիֆլիս, 1920:

¹⁵¹ Տե՛ս Ստեփանյան Գ., Բարվի անկումը և հայերի զաղթը Պարսկաստան (1918 սեպտեմբեր-1919 մարտ), «Դրան-նամե», Երևան, 2000, հ. 35, էջ 58-65:

¹⁵² Տե՛ս Հակոբյան Թ., Հայաստանի պատմական աշխարհագրություն (ուրվագծեր), Երևան, 1968, էջ 251:

¹⁵³ Տե՛ս Դանիելյան Է. Լ., Հայոց քաղաքակրթական ներդրումը ին և միջնադարյան տնտեսական ու մշակութային քաղաքակրթական գործընթացներում, «Ծովի մշակությը՝ մարդկության մշակույթն է քաղաքակրթությունների երկխոսությունում»: «Այսա» ծովային ակումբի 25-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր (2010-մայիսի 14-16), Երևան, 2010, էջ 27:

ներ»¹⁵⁴: Փայտակարանի երնիկ կազմը սկսեց խաթարվել օտարամուտ թյուրքալեզու քոչվոր ցեղերի և մոնղոլ-թաթարների ներթափանցման հետևանքով: Հայ բնակիչներից շատերը դուրս մղվեցին հայրենի եզերքից, իսկ մի մասը հարթավայրերից քաշվեց լեռնային շրջաններ¹⁵⁵: Այդուհանդեռձ, որոշ թվով հայեր մնացին իրենց բնորրանում: Ս. Էջմիածնի նոտար Երեմիա աբեղա Օշականցու՝ 1765 թ. հունիսի 18-ի պատրաստած «Խվիրակական վիճակների» սահմանները ճշտող վավերագրում հայարնակ վայրերի թվում նշված են նաև Զավարի գավառի կենտրոն Սալիանը, ինչպես նաև Լենքորանը¹⁵⁶: 1836 թ.՝ «Պոլոժենիե»-ի վավերացումից հետո, այդ տարածքներն ի հոգևոր պատկանել են Արցախի թեմին¹⁵⁷:

Զավարի գավառ: Գավառի կենտրոնն էր Սալիան ավանը, ուր հիմնականում կենտրոնացած էր Բարվի նահանգի ձկնարդյունաբերությունը: Ավանում աշխատանքի և զբաղմունքի բնույթի հետ կապված բնակվել են նաև հայեր: Սալիանից Հ. Յուզբաշյանի՝ «Մշակ» և «Նոր-Դար» լրագրերին հղած թղթակցություններում տեղեկացվում է, որ 1880-ական թվականների սկզբներին ավանն ուներ «հայ փոքրիկ հասարակութիւն»¹⁵⁸, և ունեին աղոթատուն: 1897 թ. տվյալներով՝ հայերի թիվը 108 էր¹⁵⁹: 1914 թ. հունվարի 1-ի դրությամբ՝ ավանում ազգաբնակչության թիվը 17.465 էր, որից հայ՝ 90¹⁶⁰:

¹⁵⁴ Շոցիկեան Ս., Արարատ-Կովկաս, մասն երկրորդ, Կովկաս, հ. Բ, Փարիզ, 1922, էջ 278:

¹⁵⁵ Տե՛ս Բերեզին Ի., նշվ. աշխ., վ. III. գլ. VI (Օտ Սալիան դեպի Լենկորան), ս. 108.

¹⁵⁶ Տե՛ս Դիմիան Հայոց պատմութեան, Գ գիրք, մասն Բ, էջ 802:

¹⁵⁷ Երիցեանց Ալ., Ամենայն Հայոց Կարողիկոսութիւնը և Կովկասի Հայք XIX դարում, մասն Բ, Թիֆլիզ, 1895, մասն Բ, էջ 568: Լենքորանի իր շրջատարածույթը Բարվի և Թուրքեստանի Հայոց թիվի ենթակայության անցավ միայն 19-27 թ-ին (տե՛ս ՀԱԱ, ֆ. 149, գ. 1, գ. 141, թ. 156):

¹⁵⁸ Յուզբաշյան Յ., Նամակ Սալեանից, «Մշակ», Թիֆլիս, 1880, մարտի 28, N 52, նույնի՝ Սալեան, «Նոր-Դար», Թիֆլիս, 1884, նոյեմբերի 20, N 188:

¹⁵⁹ Տե՛ս ՊԲՈՒՀԻ-1897, Բակինաց գубերնիա, տаблицա XIII, ս. 53:

¹⁶⁰ Տե՛ս ԿԿ դեպի 1915 թ., ս. 219, 221.

Թեև Զավաթի զավառում հայկական գյուղեր չկային, սակայն տեղաբնիկ հայերից բացի, աշխատանքի բերումով այստեղ բնակություն են հաստատել քիչ բվով հայեր Հայաստանի այլ շրջաններից: Այսպէս՝ հայտնի է, որ հայ դրամատերերն առաջատար դիրքեր են զբաղեցնում նաև ձկնարդյունաբերության ոլորտում: Կուր գետն, իր ջրառատ վտակներով ողողելով Զավաթի զավառը, նպաստավոր պայմաններ էր ստեղծել Սալիհանում ձկնարդյունաբերության համար, որը տեղացիների գլխավոր զբաղմունքն էր: Այս բնագավառում մեծ էր հատկապես Վարդան Արշակունու դերը՝ մերձկասայցան ավագանում զարգացման սահմանային վիճակում գտնվող ձկնկիթի արդյունաբերության մեջ: 1847 թ. նա կապալով շահագործում էր Սալիհանի հարուստ ձկնավայրը: 1853 թ. նա իրականացնում է թիթեղյա տուփերով ձկնկիթի առարումը Ռուսաստան: Զավաթի զավառում հայ բնակչության հետագա ստվարացումը հիմնականում պայմանավորված էր ձկնարդյունաբերության բուրն զարգացմամբ: 1916 թ. հունվարի 1-ի դրությամբ այդ թիվն արդեն հասնում էր 984-ի¹⁶¹:

Լենքորանի զավառ: Հայ բնակչության մի փոքր հատված կենտրոնացած է եղել նաև զավառի կենտրոն Լենքորան քաղաքում և համանուն զավառում: 1830-ական թվականների սկզբներից Լենքորանում հիշատակվում է հայկական եկեղեցու գոյության մասին¹⁶²: Քաղաքում գործել են Ս. Գևորգ եկեղեցին և աղոթատունը¹⁶³: Քաղրասար մետրոպոլիտի՝ 1838 թ. դեկտեմբերի 3-ին Արցախի թեմի վանքերի և եկեղեցիների վերաբերյալ կազմած ցուցակի համաձայն՝ Լենքորանում

մշտարնակ հայերը 17 ծուխ էին¹⁶⁴: Համաձայն 1830-ական թվականների սկզբների տվյալների՝ քաղաքի բնիկ և ժամանակավոր հայ բնակչներն ունեին 48 տուն¹⁶⁵: «Տումար ընտանեկան» օրացույցի մի տեղեկության համաձայն՝ 1848 թ. այդ թիվն արդեն հասել է 160-ի¹⁶⁶: Դ. Ալիշանի տվյալներով՝ 1850-ական թվականների սկզբին քաղաքն ուներ 34 տուն բնիկ հայ բնակչ¹⁶⁷: 1897 թ. տվյալներով զավառի հայ բնակչության թիվը 483 էր, որից միայն քաղաքում՝ 299¹⁶⁸: 1916 թ. դրությամբ զավառն ուներ 836 հայ բնակիչ, որից միայն 550-ը բնակվում էր Լենքորանում¹⁶⁹:

Լենքորանի զավառում փոքր բվով հայ բնակչություն կար նաև Պարսկաստանին սահմանակից նավահանգստային Աստարա ավանում: 1898 թ. օգոստոսի 18-ին այդտեղ է այցելում Պարսկա-Հնդկաստանի հայոց թեմի առաջնորդ Մաղաքիա Եպիսկոպոս Տերունյանը: Թեմակալի ուղևորության մանրամասները գրի է առել դպիր Մկրտիչ Երկարակեցյանը: Նա նշում է, որ չհասած ավանին՝ «հանդիպեցինը Աստարայի սակաւաթի Հայերի խմբին, որոնք ձանապարհին մեկ կողմից վերայ բացազուխ շարուած էին սպասում Հայ Եպիսկոպոսի օրինաբեր զալստեանը»¹⁷⁰: Հայ վաճառականները գործուն մասնակցություն ունեին Աստարա ավանի առևտրական գործարքներում: Այդտեղ գործել է «Եղբ. Թումայան»

¹⁶⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 56, գ. 4, գ. 273, թ. 276:

¹⁶⁵ Տե՛ս Обозрение российских владений на Кавказе (Талышинское ханство), ч. III, с. 206, 238-239.

¹⁶⁶ Տե՛ս Տումար ընտանեկան 1874-1875 թթ., հ. Ա, էջ 136, տե՛ս նաև ԿԿ հա 1850 թ., Տիֆլիս, 1849, ս. 64.

¹⁶⁷ Ալիշան Դ., Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1855, էջ 93:

¹⁶⁸ Տե՛ս և ՊԲԻԻՐԻ-1897, Բակինская губерния, таблица XIII, с.53.

¹⁶⁹ Տե՛ս նաև ԿԿ հա 1917 թ., ս. 179, 181.

¹⁷⁰ Երկարակեցեան Ս., Ուղևորության առաջնորդին Հայոց Պարսկ. Եպիսկոպոսի Տերունեան, Նոր-Չուղա, 1899, էջ 41-42:

¹⁶¹ Տե՛ս ԿԿ հա 1917 թ., ս. 179, 181:

¹⁶² Տե՛ս և Обозрение российских владений на Кавказе (в статистическом, этнографическом, топографическом и финансовом отношении) (Талышинское ханство), СПб., 1836, ч. III, с. 206.

¹⁶³ Տե՛ս Ստեփանյան Գ., Բարձր նահանգի հայություն XIX դարում (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, 2010, էջ 196:

առևտրական տան մթերանոցը¹⁷¹: Ավանի նշանավոր հայերից էր Արցախից այստեղ վերաբնակված Մարզաքան Ահարոնյանցը, որի նախաձեռնությամբ 1894 թ. կառուցվել էր տեղի փայտաշեն հայկական եկեղեցին¹⁷²:

Աղբեջանական Հանրապետության գոյության ամբողջ ընթացքում (1918 թ. մայիսի 28-1920 թ. ապրիլի 28) զավառներում շարունակաբար իրականացվել է հայահալած քաղաքականություն: Փաստերը վկայում են, որ մուսավարական իշխանությունը որդեգրել էր տեղաբնիկ ժողովուրդների (հայեր, ուղիներ, լեզգիներ, թաթեր, թալիշներ և այլն) բռնի ուժացման, էթնիկ զուման, զանգվածային կոտորածների և հայրենագրկման ճանապարհով Արևելյան Այսրկովկասի՝ Կուրից մինչև Ապշերոնյան թերակղզի ընկած տարածքում «միատարր» թյուրք-թաթարական «տարածք-հայրենիք» ստեղծելու երիտթուրքերի ռազմավարությունը¹⁷³:

Երիտթուրքերի և մուսավարական Աղբեջանի կողմից տեղաբնակ հայ բնակչության նկատմամբ 1918-1920 թթ. իրականացված ցեղասպանության քաղաքականության հետևանքով Կուրից մինչև Ապշերոնյան թերակղզի ընկած տարած-

¹⁷¹Տե՛ս և նույն տեղում, էջ 42:

¹⁷²Տե՛ս և նույն տեղում:

¹⁷³ Աղբեջանական Հանրապետությունում սկսած մուսավարականների կառավարման շրջանից հայ և այլազգի բնակչության նկատմամբ իրականացված հալածական և ձուլման քաղաքականության մանրամասն ընկած տե՛ս Վոլкова Հ., Էთнические процессы в Закавказье в XIX-XX вв., "Кавказский этнографический сборник", N 4, Москва, 1969, с. 47-50; Григорян В., Насильственная ассимиляция мусульманских национальных меньшинств в Азербайджане, Ереван, 1992; Чобанян С., Государственная и национальная политика Азербайджана, Ереван, 1993; Алексеев М., Казенин К., Сулейманов М., Дагестанские народы Азер-байджана, Москва, 2006, Ընդեմ Աղբեջանի հայտուց քաղաքականության, կազմող՝ Ալիքրյան Հ., Երևան, 2007, Միքոյեան Բ., Էթնիկ ժողովուրդների զանգվածապատճենության Աղբեջանում, «Դրօշակ», Երևան, 2008, N 2-3, էջ 24-33.

քում զգալիորեն փոխվեց եթևողովրդագրական պատկերն՝ ի վեսա հայերի: Զարդերից հետո կտրուկ նվազեց հայերի թիվը: 1921 թ. մարդահամարի տվյալներով Գյորչայի, Շամախու, Ղուբայի, Բարձի, Լենքորանի և Զավարի զավառներում հայ բնակչության թիվը կազմում էր 50.212¹⁷⁴: Այդ թիվը համապերելով հայ բնակչության՝ նախքան կոտորածներն արձանագրված թվի (127.318)¹⁷⁵ հետ, պարզորոշ երևում են փաստացի կորուստների այն մեծ չափերը, որ պատճառել էին երիտթուրքերն ու մուսավարականները: Ըստ այդմ՝ կոտորածներին զոհ էր գնացել շուրջ 77.106 մարդ, որից միայն 49.927-ը Բաքու քաղաքում (նախքան կոտորածները Բաքվում (ներառյալ արյունաբերական-գործարանային շրջանները) հայ բնակչության թիվը 88.673¹⁷⁶ էր, ապա 1921 թ. տվյալներով կազմում էր 38.746¹⁷⁷): Աղբեջանական ԽՍՀ-ում 1921 թ. օգոստոսին անցկացված զյուղատնտեսական վիճակագրության տվյալների համաձայն՝ Շամախիի, Գյորչայի, Ղումիի և Արեշի զավառներում մնացել էր մոտ 12.716 հայ¹⁷⁸: Կողոպտվեցին և ավերվեցին նաև հազարամյակներով ստեղծված հայկական բազմաթիվ խաչքարեր, մատուռներ ու եկեղեցիներ, այսինքն՝ թուրք-մուսավարականները իրագործել են նաև մշակութային եղեն: Կոտորածներից հետո հայաթափ-

¹⁷⁴ Տե՛ս և Զակավազье. Советские республики (Статистико-экономический сборник), с. 152-153.

¹⁷⁵ Տե՛ս և ՀԱԱ, ֆ. 149, գ. 1, գ. 46, թ. 2-8, տե՛ս և նաև գ. 133, թ. 19, տե՛ս և նաև ֆ. 57, գ. 3, գ. 512, թ. 1-2, տե՛ս և նաև ֆ. 409, գ. 1, գ. 2634, թ. 1-2, տե՛ս և նաև Ստեփանյան Գ., Հայերի կոտորածներն ու ինքնապաշտպանական մարտերը Բաքվի նահանգում 1918-1920 թթ., ՊԲՀ, Երևան, 2008, N 3, էջ 31-48:

¹⁷⁶ Տե՛ս և Իշխանեան Բ., նշվ. աշխ., էջ 17:

¹⁷⁷ Տե՛ս և Զակավազье. Советские республики (Статистико-экономический сборник), с. 152-153:

¹⁷⁸ Տե՛ս և Կարապետյան Մ., Էթническая структура населения Нагорного Карабаха в 1921 г. (посельскохозяйственной переписи Азербайджана 1921 г.), Ереван, 1991, с. 4.

ված հայկական բնակավայրերում աղբբեջանական իշխանությունները բնակեցրին կովկասյան թաթարներին:

Այսպիսով՝ ինչպես ակներև է ցեղասպանության միջազգայնորեն ճանաչված սահմանումից, այն ամենը, ինչ տեղի է ունեցել Կուրի ձախափնյակի հայության հետ 1918-1920 թթ., անառարկելիորեն փաստում են, որ կատարվածը ցեղասպանություն էր: Հատկանշական է այն իրողությունը, որ երկրամասի տեղաբնիկ հայ բնակչությունը ցեղասպանության ենթարկվեց իր բնօրրանում, այնպես, ինչպես երիտրուրքերն իրավորձեցին արևմտահայերի բնաշնչումը 1915-1916 թթ. Արևմտյան Հայաստանում: Ուստի, թուրք-մուսավարականների կիրառած քաղաքականությունը պետք է որակել որպես արևմտահայերի ցեղասպանության շարունակություն և քաղացուցիչ մաս, քանզի Հայոց ցեղասպանությունն իր աշխարհագրական ընդորլմամբ (Վիլիկիայից մինչև Բաքու) համարուրբականության ամբողջական ծրագրի իրականացման հետևանք էր:

**КРАТКИЙ ИСТОРИКО-ДЕМОГРАФИЧЕСКИЙ ОЧЕРК ОБ
АРМЯНСКОМ НАСЕЛЕНИИ УЕЗДОВ НУХИ И АРЕШ
ГАНДЗАК- ЕЛИЗАВЕТПОЛЬСКОЙ ГУБЕРНИИ И
БАКИНСКОЙ ГУБЕРНИИ
(ВТОРАЯ ПОЛОВИНА 19-ГО И НАЧАЛО 20-Х ВЕКОВ)**

*Геворг Степанян
(резюме)*

С древних времен Армения имела тесные взаимоотношения с Кавказской Албанией, с которой граничила по реке Кур. Достоверные исторические источники свидетельствуют, что многоэтническое население региона с древних времен включало армянский этнический элемент,

который сыграл особую роль в культурном и политическом развитии региона. Армянское население было распределено в Гекчайском, Шемахинском, Бакинском, Кубинском, Джеватском, Ленкоранском уездах Бакинской губернии и в Нухинском и Арешском уездах Гандзак-Елизаветпольской губернии.

**HISTORICAL AND DEMOGRAPHIC SKETCH OF THE
ARMENIAN POPULATION IN NUKHI AND ARESH GAVARS
OF THE GANDZAK-ELIZAVETPOL PROVINCE AND BAKU
PROVINCE
(THE SECOND HALF OF THE 19TH – EARLY 20TH CENTURY)**

*Gevorg Stepanyan
(summary)*

Since ancient times Armenia maintained a close relationship with Caucasian Albania sharing a common border along the river Kur. There is historical evidence that since ancient times the multi-ethnic population of the region comprised an Armenian ethnic element which played a unique role in the cultural and political development of the region. The Armenian population was distributed in Geokchai, Shamakha, Baku, Kuba, Dzhevat and Lenkoran uyezds of Baku governorate and Nukhi and Aresh uyezds of Gandzak-Elisabethpol Governorate.

Գայանե Չորանյան

ԱԴՐԵԶԱՆԻ ՀԱԿԱՎՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ «ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

**Բանալի բառեր՝ Աղրբեզան, քաղաքական իսլամ,
իսլամական համագործակցություն կազմակերպություն,
իսլամական համերաշխություն, Ղարաբաղյան հիմնա-
խնդիր, հակահայկական քաղաքականություն**

Աղրբեզանի Հանրապետության հակահայկական քաղաքականության նշանակալի գործոններից է իսլամական երկրների հետ արտաքին հարաբերությունների կառուցման հիմքում իսլամի քաղաքական պոտենցիալի ներդրումը։ Աղրբեզանի անկախացումից հետո իսլամական աշխարհի անբաժան մի մաս կազմելուն ուղղված պաշտոնական քայլերը և իսլամական սկզբունքներին իր հավատարմությունը ցույց տալու նկրտումները նախ և առաջ միտված են Ղարաբաղյան պայքարում ապահովելու իսլամական երկրների ռազմական, քաղաքական, տնտեսական աջակցությունը։ Հետևաբար չենք կարող խորքային և բազմակողմանի պատկերացում կազմել Աղրբեզանի հակահայկական ռազմավարության մասին՝ առանց դիտարկելու իսլամի քաղաքական գործոնը և դրա շահարկումը իսլամական միջազգային ամենախոշոր կազմակեպության «Իսլամական համագործակցություն» կազմակերպության շրջանակներում։

20-րդ դարի 60-ականների վերջերին և 70-ականների սկզբներին իսլամական շարժումների ակտիվացումը և դրանց ազդեցությունը միջազգային հարաբերությունների համակարգի վրա ձևավորեցին աշխարհակարգի իսլամա-

կան ընկալման այլընտրանքային ուղղություն։ Արևելի երկրների մեծ մասում աշխարհիկ քաղաքական կուսակցությունների նկատմամբ հասարակության անվստահությունը, նրանց անզորությունը լուծելու հասունացող սոցիալական, տնտեսական, քաղաքական ճգնաժամը հանգեցրին իսլամի քաղաքականացմանը։ Իսլամը, որի գործառույթները մինչ այդ սահմանափակվում էին հոգևոր-մշակութային կարիքների սպասարկման, իրավական և գույքային, միջեղային, ընտանեկան հարաբերությունների կարգավորման ոլորտներով, այժմ իր վրա ստանձնեց երկրի ներքին և արտաքին քաղաքական խնդիրները կարգավորողի դերը։ Կարձ ժամանակահատվածում ստեղծվեցին միջկառավարական և ոչ կառավարական կառույցներ¹, որոնց նպատակը աշխարհներական իսլամական հայեցակարգի հիմնական գաղափարների իրագործումն էր։ Այս գործընթացի արդյունքում ձևավորվեց համախամական ռազմավարություն, որի կարևոր տարրերից է հանդիսանում իսլամական երկրների քաղաքական, տնտեսական, գաղափարական և մշակութային ինսեքրացիան։ Բազմաթիվ միջայտական և ոչ պետական, հասարակական-կրոնական, տնտեսական, գիտական և մշակութային իսլամական կազմակերպություններից թերևս ամենամեծ և ամենաազդեցիկ համախամական քաղաքական մարմինը «Իսլամական համագործակցություն» կազմակերպությունն է (ԻՀԿ), որը մինչև 2011 թ. կոչվել է «Իսլամական կոնֆերանս» կազմակերպություն (ԻԿԿ)։ Ներկայումս կազմակերպության շարքերում միավորված են Ասիայի, Աֆրիկայի և Եվրոպայի 57 իսլամական պետություն, իր անդամներում գործություն ունենալու համար։

¹ Իսլամական միջազգային կազմակերպություններից առավել ազդեցիկներն են «Իսլամական աշխարհի լիգան», «Համաշխարհային իսլամական կոնֆերանս», «Աֆրո-Ասիական իսլամական կոնֆերանս», «Իսլամական երիտասարդության համաշխարհային ասոցիացիան», «Փրկության միջազգային իսլամական կազմակերպությունը» (Ալ-Իգաս) և այլն։

րի քանակով այն ՍԱԿ-ից հետո աշխարհում երկրորդ ամենամեծ միջազգային կազմակերպությունն է²:

Ելնելով այն սկզբունքից, որ կազմակերպության գործառույթի մեջ է մտնում տարբեր երկրներում մուտքմանների իրավունքների պաշտպանությունը, ԻՀԿ անդամ պետությունները հսկայական ֆինանսական և մարդկային ռեսուրսներ են տրամադրում Աղրբեջանի Հանրապետությանը՝ նպաստելով հայ-աղրբեջանական հակամարտության խորացմանը և հետազայում սպառնալիքի տակ դնելով տարածաշրջանային անվտանգությունը:

Անկախացումից հետո Աղրբեջանը իր արտաքին քաղաքական ուղիների հիմնայուններից մեկը կառուցեց իսլամական համերաշխության զաղափարախոսության վրա: Այն առաջին հետառվետական երկիրն էր, որը 1991թ. Դարրարում կազմակերպության անդամ պետությունների դեկավարների առաջնորդների կայացրած զագաթնաժողովի արդյունքում դարձավ «Իսլամական կոնֆերանս» կազմակերպության անդամ: Դա առաջին միջազգային կազմակերպությունն էր, որին անդամազրկեց Աղրբեջանի Հանրապետությունը: ԻԿԿ-ին անդամակցումը հնարավորություն տվեց Աղրբեջանին, օգտագործելով կազմակերպության քաղաքական և տնտեսական հնարավորությունները, սերտ հարաբերություններ կառուցել իսլամական տարբեր երկրների, իսլամական միջազգային կառույցների, կազմակերպությունների հետ՝ հայ-աղրբեջանական հակամարտության մեջ ձեռք բերելու նրանց աշակցությունը: Կարելի է ասել՝ ԻԿԿ-ն դարձավ Աղրբեջանի և իսլամական աշխարհի միջև շփման ամենալարևոր օրակը: Անտեսելով Ղարաբաղյան հակամարտության ծագման քա-

ղարական դրդապատճառները՝ Աղրբեջանի իշխանությունները իսլամական երկրներին ուղղված իրենց հուտորաբանության մեջ փորձում էին հակամարտությունը ներկայացնել կրոնական հիմքի վրա խարսխված առակատում: Դրանով նպատակ էր հետապնդվում հայ-աղրբեջանական պատրազմի մեջ ներգրավել ողջ իսլամական աշխարհի «ջիհադի մարտիկներին»: Արդյունքը եղավ այն, որ Աֆղանստանից, Պակիստանից, Սաուդյան Արաբիայից, Թուրքիայից, Հյուսիսային Կովկասից վարձկան մոշահեղների մեծ հոր եկավ Աղրբեջան հայերի դեմ պայքարելու կարգախոսով, որոնք հետազայում նպաստեցին երկրում իսլամական ծայրահեղական շարժումների և ահաբեկչական խմբավորումների հաստատմանն ու տարածմանը³:

1991 թ. ԻԿԿ պատվիրակությունը՝ ԻԿԿ գլխավոր քարտուղար Համիդ Ալգարիդի օգնական Սուհամելի Սոհիսինի ղեկավարությամբ այցելեց Աղրբեջան՝ հայ-աղրբեջանական խնդիրն ուսումնասիրելու և գտնելու հնարավոր բոլոր միջոցները խաղաղ ճանապարհով հակամարտության լուծմանը հասնելու համար⁴: Այնուհետև 1992 թ. պատվիրակությունը այցելեց Իրան, Թուրքիա, Ռուսաստան, Հայաստան, հանդիպումներ ունեցավ բարձրաստիճան պաշտոնյաների հետ: Նախքան այդ, Հայաստանը դիմել էր Արաբական պետությունների լիգային և ԻԿԿ-ին՝ հակամարտության գոտի դիտորդներ ուղարկելու խնդրանքով: Հայաստանում պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ ՀՀ ԱԳՆ-ում և Ազգային ժողովում: Պատվիրակության անդամներին ընդունեց նաև ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, որի հետ գրու-

³ Ղարաբաղյան պատերազմին մասնակցած իսլամական վարձկաների վերաբերյալ մանրամասն տե՛ս Չորսեան Գ., Խամսական վարձկաները Ղարաբաղյան պատերազմում, «Վեմ» համահայկական հանդես, Երևան, 2013, հուլիս-սեպտեմբեր, թիվ 3 (43), էջ 163-173:

⁴ <http://www.azembassy.org.tr/?options=content&id=93>

ցում Ա. Սոհինն ընդգծեց կազմակերպության անկերծ ցանկությունը՝ աջակցել տարածաշրջանում խաղաղության և կայունության հաստատմանը: Կողմերն անթույլատրելի համարեցին խնդիրը կրոնական տեսանկյունից դիտարկելու միտումները⁵: Սակայն հակամարտության ընթացքում, հայերի ռազմական ձեռքբերումներին զուգահեռ, ԻԿԿ պաշտոնական դիրքորոշումը բացահայտորեն դարձավ աղբեջանամետ՝ մերժելով դարաբաղյան կողմի որևէ իրավական արդար պահանջ:

Ոչ առանց Թուրքիայի Հանրապետության ակտիվ ջանքերի, ԻՀԿ-ն հայ-աղբեջանական հակամարտությանն առաջին անգամ անդրադարձել է 1992 թ. հունիսի 14-ին Ստամբուլում կայացած անդամ երկրների արտաքին գործերի նախարարների 5-րդ արտահերթ ժողովի ժամանակ: Թեև որևէ բանաձև չի ընդունվել Աղբեջանին էական նյութական օգնություն տրամադրելու վերաբերյալ, սակայն կառույցը դատապարտել է Հայաստանի զինված ուժերի կողմից Լեռնային Ղարաբաղի, Լաշխնի շրջանի և Նախիջենանին սահմանակից շրջանների «բռնազավթումը», ինչպես նաև անդամ պետությունները ճանաչել են Աղբեջանի տարածքային ամբողջականությունը⁶: Ավելի ուշ՝ 1992 թ. օգոստոսին, Թուրքիան, որը ստանձնել էր ԻԿԿ արտաքին գործերի նախարարների ժողովի նախազահությունը, դիմեց ՄԱԿ-ին՝ գումարելու ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի արտահերթ համագումար, որպեսզի միջոցներ ձեռնարկվեն սերբերի և Բոսնիա-Զերգեզովինայի մուտքամանների, ինչպես նաև նորանկախ Հայաստանի և

⁵ Զրոյցի գրառում՝ կայացած 1992 թ. մարտի 21-ին Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի և ԻԿԿ գլխավոր քարտուղարի օգնական Ս. Սոհինի միջև (ՀՀ ԱԳՆ փաստաթղթեր, արխիվ), մեջբակա է՝ Փաշայան Ա., Խալամ Աղբեջանում. անցալը և ներկան, Երևան, 2014:

⁶ Final Communiqué of the Fifth Extraordinary Session of the Islamic Conference of Foreign Ministers, Istanbul, 1992.

Աղբեջանի միջև առկա եթնիկ լարումներին վերջ դնելու համար: Աղբեջանի տարածքում Թուրքիայի ազգային շահերը հիմնավորվում են նաև իսլամական համերաշխության շրջանակներում Աղբեջանի թուրքական համայնքի իրավունքները պաշտպանելու պարտականությամբ⁷: Այս ժամանակաշրջանում էլ վերջնականորեն ձևավորվեց խնդրի վերաբերյալ ԻԿԿ-ի հակահայկական դիրքորոշումը, և հայաղբեջանական հակամարտության թեման մտավ կազմակերպության օրակարգ:

1993 թ. Կարաչյում (Ղակիստան) տեղի ունեցած ԻԿԿ արտաքին գործերի նախարարների 21-րդ համաժողովի ժամանակ Ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ արդեն ընդունվել է առաջին բանաձևը: Բանաձևում խստորեն դատապարտվում էր Աղբեջանի Հանրապետության դեմ Հայաստանի «ազրեսիան», պահանջվում էր անհապաղ դուրս բերել հայկական զորքերը Աղբեջանի բոլոր «բռնազավթված» տարածքներից, կոչ էր արվում Հայաստանին հարգել Աղբեջանի Հանրապետության ինքնիշխանությունը ու տարածքային ամբողջականությունը, ինարավություն ստեղծել, որպեսզի Աղբեջանի տեղահանված բնակչությունն ապահով վերադառնա իր տները, ինչպես նաև պահանջվում էր անդամ պետություններից, Իսլամական զարգացման բանկից և այլ իսլամական կառույցներից Աղբեջանի Հանրապետությանը հրատապ տրամադրել ֆինանսական և մարդասիրական օգնությունը⁸:

1994 թ. մայիսին Հեյղար Ալիևի հրամանով Սառույան Արարիայում Աղբեջանի դեսպանին տրվեց ԻԿԿ Գլխավոր քարտուղարությունում մշտական ներկայացուցչի մանդատ,

⁷ See u Aykan M. B., Turkey and the OIC: 1984-1992, The Turkish Year Book, Vol: XXIII, 1993, p. 117-118:

⁸ Resolution No. 12/21-P, Conflict between Armenia and Azerbaijan, <http://mfa.gov.az/?language=en&options=content&id=550>

և դեսպանատունը սկսեց արդյունավետ աշխատանք տանել կազմակերպության Գլխավոր քարտուղարության և համապատասխան մարմինների հետ ներառյալ Իսլամական զարգացման բանկը Զեղայում⁹: Արտաքին քաղաքականության մեջ Հեղաքար Ալիսի կողմից շահարկվող իսլամական սինվոլիկան, տվեց իր արդյունքները: Երբ նա 1994 թ. հուլիսին առաջին անգամ պաշտոնական այցով մեկնեց Սաումյան Արաբիա (1918 թվականից ի վեր Աղրբեջանի առաջին դեկավարներ, ով ուստագնացություն կատարեց Մեքքա), նորանկախ Աղրբեջանի վրա սեւեց իսլամական հանրության ուշադրությունը հոդ նախապատրաստելով Աղրբեջանի և ԻԿԿ միջև հետագա սերտ համագործակցության զարգացման համար¹⁰:

Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ մեկ այլ բանաձև է ընդունվում 1994 թ. դեկտեմբերին Կասաբլանկայում (Մարոկկո) կազմակերպության անդամ պետությունների դեկավարների գումարված 7-րդ գագաթնաժողովի ժամանակ: Այդ բանաձևը շատ չէր տարբերվում նախորդից, սակայն կարևոր էր նրանով, որ արդյունքում «Հայ-աղրբեջանական հակամարտության» խնդիրը պարբերաբար ներառվեց ՄԱԿ-ի և ԻԿԿ-ի միջև համագործակցության շրջանակներում քննարկվելիք խնդիրների ցուցակում: Սույն բանաձևում պահանջվում էր հայկական զինված ուժերի դուրսերումը «Աղրբեջանի» Լաշինի և Շուշիի շրջաններից և հորդրումը էր ՄԱԿ-ի զինված քարտուղարությանը խիստ վերահսկել ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի ընդունած 822, 853, 874, 884 բանաձևերի կատարումը¹¹:

⁹ The relations between Azerbaijan and the Organization of Islamic Conference (OIC), <http://www.mfa.gov.az/?language=en&options=content&id=550>

¹⁰ Azerbaijan and OIC, <http://mfa.gov.az/?language=en&options=content&id=550>

¹¹ <http://www.mfa.gov.az/index.php?language=en&options=content&id=841>

1996 թ. հոկտեմբերի 16-18-ը ԻԿԿ նախաձեռնությամբ և մի շարք այլ իսլամական իմանադրամների աջակցությամբ Բարգում կայացավ Աղրբեջանի փախստականների հարցին նվիրված առաջին միջազգային կոնֆերանսը, որտեղ Աղրբեջանի նախագահ Հեղաքար Ալիսի ներկայացրեց «հայերի ազգեսիայի զոհ դարձած մեկ միլիոն աղրբեջանցի զաղթականների ծանր վիճակը»¹²: Կոնֆերանսն ընդունեց ամբողջությամբ աղրբեջանանպաստ մի բանաձև, որում նշվում էր անհրաժեշտությունն աշխարհին ավելի հանգամանորեն տեղեկացնել աղրբեջանցի զաղթականների մասին, նրանց դրությունը բարելավելու համար ապահովել միջազգային օգնություն: Որոշվեց Բարգում հիմնել մշտական քարտուղարություն¹³: Այդ կոնֆերանսի գումարումը Բարգում և նրա ընդունած որոշումները համարվեցին աղրբեջանական դիվանագիտության փայլուն հաղթանակ և նշանակալի հարված Հայաստանի հեղինակությանը¹⁴:

Աղրբեջանական կողմից բազմաթիվ շնորհիվ 1996 թ. դեկտեմբերի 9-13 Զակարտայում (Բնդունեզիայում) գումարված ԻԿԿ արտաքին գործերի նախարարների 24-րդ համաժողովի արդյունքում Ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ ընդունված քաղաքական բանաձևի վերնագիրը «Հայաստանի և Աղրբեջանի միջև հակամարտության վերաբերյալ»-ից փոխվեց «Աղրբեջանի Հանրապետության դեմ Հայաստանի Հանրապետության ազրեսիայի վերաբերյալ»¹⁵:

¹² Տե՛ս «The First International Conference for Support to Azerbaijan Refugees Took Steps to Increased International Assistance», «OIC Newsletter», Istanbul, 1996, December, No 41.

¹³ Տե՛ս նոյն տեղում:

¹⁴ Հովհաննիսյան Ն., Աղրբեջանի հակամարտական քաղաքականությունը «Բազմամական կոնֆերանս» կազմակերպության շրջանակներում, «Աշխատանքային տեսություն», «Հայկական Բանակ» ուսումնակարգական հանդեսի հավելված 3 (3) 2007, էջ 43:

¹⁵ Report and Resolutions on Political, Muslim Communities and Minorities Legal and Information Affairs, Twenty-Fourth Session of the Islamic Conference

Այդ քայլով հարցին արդեն տրվում էր հստակ քաղաքական ընտրոշում և Ղարաբաղյան խնդրի հետ կապված ԻՀԿ-ի ընդունած հերթական բանաձևերը կրում են այդ վերնագիրը:

Հեյդար Ալիևի մահվանից հետո նրան փոխարինած Իհամ Ալիևը հավատարիմ մնաց իր հոր իսլամական արտարին քաղաքականությանը՝ միևնույն ժամանակ ակտիվացնելով երկրի ներսում կրոնական ճնշումները։ Եթե մինչև 2003 թ. ԻԿԿ կոնֆերանսների ժամանակ ընդունված բանաձևերում միայն առանձին հատված էր հատկացվում հայ-ադրբեջանական հակամարտությանը, ապա ԻԿԿ 10-րդ իսլամական զագարնաժողովի ժամանակ ընդունվեց առանձին հատուկ բանաձև «Ադրբեջանի դեմ Հայաստանի Հանրապետության ազրեսիայի մասին»։ Այս բանաձևում վերահստատվում էր անդամ պետությունների հարգանքը Ադրբեջանի Հանրապետության ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և քաղաքական անկախության նկատմամբ, խստորեն դատապարտվում էր Ադրբեջանի Հանրապետության դեմ Հայաստանի Հանրապետության «ազրեսիան», Ադրբեջանի «բռնազավթված» տարածքներում Ադրբեջանի քաղաքացիական բնակչության դեմ գործողությունները որակվում էին որպես հանցագործություն մարդկության դեմ, դատապարտվում էր Ադրբեջանի «զրավյալ» տարածքներում հնագիտական, մշակութային և կրոնական հուշարձանների կողոպուտը և ոչնչացումը։ Կոչ էր արվում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին ճանաչելու Ադրբեջանի Հանրապետության դեմ ազրեսիայի առկայությունը, ձեռնարկելու համապատասխան քայլեր, պարտավորեցնում էր բոլոր պետություններին ձեռնպահ մնալ Հայաստանին գենք ու զինամթերք մատակարարելուց, ինչը կարող էր խրախուսել «ազրեսորին»՝ արդյուն

ընալով հակամարտության ընդլայնման և Ադրբեջանի այլ տարածքների «բռնազավթման» համար¹⁶։ Կոչ անելով ոչ միայն ԻԿԿ անդամ պետություններին, այլև միջազգային հանրության անդամ այլ երկրներին դադարեցնելու գենքի մատակարարումը Հայաստանին և թույլ չտալու այդ նպատակով օգտագործել իրենց տարածքը, Հայաստանի դեմ կիրառելու արդյունավետ քաղաքական և տնտեսական միջոցներ՝ զագարնաժողովը փորձ է անում Հայաստանի շուրջ ստեղծել շրջափակման երկրորդ գոտի¹⁷։

Կարևոր նշանակություն ունի նաև 2005 թ. դեկտեմբերի 6-7-ը Մերքայում գրամաված Երրորդ արտակարգ իսլամական զագարնաժողովը, որի արդյունքում ընդունվեց «21-րդ դարում Խալամական Ումմային սպասող մարտահրավերներին դիմագրավելու գործողությունների տասնամյա ծրագիր»¹⁸։ Սույն բանաձևում Իրաքի, Պաղեստինի և Երուսաղեմի, սիրիական Գուլանի բարձունքների և արարական այլ զրավյալ տարածքների ազատազրման, կիպրոսի թուրքերի և «թուրքական» Կիպրոսի, Սուլանի, Սումալիի, Քաշմիրի, իսլամական համերաշխության, իսլամական ինքնության պահպանման և կարևոր մարտահրավերներ համարված այս հարցերի կողքին առանձին ենթարածին էր հատկացված Ադրբեջանի դեմ ուղղված «հայկական ազրեսիային»։ Սա նշանակում էր, որ Ադրբեջանը, իր իսլամական քաղաքականության արդյունքում, առաջիկա 10 տարիների ընթացքում ապահովում էր ԻՀԿ անդամ պետությունների քաղաքական, տնտեսական, ֆինանսական աջակցությունը։

¹⁶ Տե՛ս «Resolution N 12/10-P(IS) on the Aggression of the Republic of Armenia against Azerbaijan. Tenth Session of the Islamic Summit Conference», Malaysia, 2003, 16-17 October.

¹⁷ Հովհաննեսյան Ն., Խ2Վ. աշխ., էջ 47։

¹⁸ Տե՛ս «Meeting of Challenges of the 21st Century. The Third Extraordinary Islam Summit ». Convened in Mecca, 2005, 6-7 December. «OIC Newsletter», Istanbul, 2005, September-Desember, No 68։

Իլհամ Ալիևը ԻԿԿ շրջանակներում իր ակտիվ գործունեության շնորհիվ կարողացավ հասնել նրան, որ կազմակերպության արտաքին գործերի նախարարների 33-րդ կոնֆերանսը 2006 թ. հունիսի 19-21-ը գումարվեց Բարգում: Ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ հերթական ադրբեջանամետ բանաձևի ընդունումից բացի, Ադրբեջանը Հայաստանին մեղադրեց իսլամական մշակութային արժեքները ոչնչացնելու բարբարոսության մեջ: Ընդունվեց «իսլամական սրբառեղիների պահպանման մասին» բանաձև, որում անդրադարձ էր կատարվում հիմնականում չորս իսլամական հուշարձանների պահպանման խնդրին: Առաջինը վերաբերում էր Այողայի Բարի մզկիթին՝ Շնդկաստանում, երկրորդը՝ Չարար-Է-Շարիֆ իսլամական համալիրին՝ Քաշմիրում, երրորդը՝ Իրաքին, իսկ չորրորդը՝ իսլամական պատմական և մշակութային հուշարձաններին և գերեզմաններին՝ Ադրբեջանի «բոնազավթված տարածքներում»¹⁹: Սակայն միևնույն ժամանակ՝ 2006 թ., Ադրբեջանի կառավարության հրահանգով ավարտին հասցվեց Նախիջևանի տարածքում գտնվող հայկական խաչքարերի և ճարտարապետական հուշարձանների հիմնահատակ ոչնչացումը: Զույգ քաղաքի հայկական գերեզմանատան խաչքար-շիրմաքարերը գետին են հավասարեցվել, իսկ գերեզմանատան տարածքը վերածվել է հրաձգարանի: Հայաստանը պաշտոնական բողոք է ներկայացրել և ՅՈՒՆԵՍԿՕ-ից պահանջել հանձնաժողով ուղարկել Զույգ, ձեռք առնել բոլոր հնարավոր միջոցները ադրբեջանական վանդալիզմը դադարեցնելու համար: Սակայն շանսարով միջազգային հանրության բողոքին՝ Ադրբեջանի կառավարությունը շթուլատրեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի և Եվրա-

¹⁹ Տե՛ս «The Thirty-third Session of the Foreign Ministers (Session of Harmony of Rights, Freedoms and Justice), held in Baku, Republic of Azerbaijan». 2006, 19-21 June. «OIC Newsletter», 2006, May-August, No 70:

խորհրդի հանձնաժողովի ներկայացուցիչներին անզամ մտնել Նախիջևանի տարածք՝ տեղում ստուգումներ անցկացնելու նպատակով:

2008 թ. մարտի 13-14-ը Սենեգալի մայրաքաղաք Դարարում տեղի ունեցած ԻԿԿ 11-րդ գագաթնաժողովի ժամանակ, որը կրում էր «Բալամը 21-րդ դարում» խորագիրը, Ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ ընդունվեց հերթական հակահայկական բանաձև, որը վերահաստատեց բոլոր նախորդ համապատասխան որոշումները, Ադրբեջանի «բոնազավթված» տարածքներում Ադրբեջանի քաղաքացիների նկատմամբ իրականացված գործողությունները որակվեցին որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն, դատապարտվեց Ադրբեջանի «բոնազավթված» տարածքներում հնագիտական, մշակութային և կրոնական հուշարձանների ոչնչացումը, հայերի «անօրինական» տեղափոխումը այդ տարածքները: Ստահոգություն հայտնելով Ադրբեջանի Հանրապետության տարածքում գտնվող ավելի քան մեկ միլիոն տեղահանված անձանց և փախստականների գոյության փաստի առքիվ՝ ԻԿԿ անդամ պետություններին, Իսլամական բանկին և այլ Իսլամական կառույցներին հորդորվում էր Ադրբեջանին ցուցաբերել խիստ անհրաժեշտ ֆինանսական և հումանիտար օգնությունը²⁰: Ադրբեջանին զզալի տնտեսական օգնության հատկացում էր նախատեսվում նաև ԻԿԿ անդամ երկրների արտաքին գործերի նախարարների 36-րդ համաժողովի ժամանակ (2009 թ., մայիսի 23-25, Դամասկոս) ընդունված ժամանակ (2009 թ., մայիսի 23-25, Դամասկոս) ընդունված բանաձևում²¹: ԻԿԿ զիսավոր քարտուղար Էրմելեդ-

²⁰ Տե՛ս «Organization of Islamic Conference. Resolution on political affairs adopted by the eleventh session f the Oslamic Summit conference», p. 23-26, <http://www.oic-oci.org/is11/english/res/11-SUM-POL-RES-FINAL.pdf>

²¹ Տե՛ս «Resolution on Economic Affairs Adopted by the Thirty-Sixth Session of the Council of Foreign Ministers» (Session of Enhancing Islamic Solidarity), Damascus, Syrian Arab Republic (23-25 May 2009), OIC/36-CFM/ECO/RES/ FINAL

դին Իհսանօղուն «հայերի կողմից մզկիքների ոչնչացումը և անտառների հրկիգումը» Աղբբեջանի «բռնազավթված» տարածքներում որակեց որպես մեծ սխալ. «Մենք չենք ընդունում այդ գործողությունները և չենք կարծում, որ Հայաստանի գործողություններին պետք է պատասխանենք նմանատիպ մեթոդներով, որովհետև դա մեզ արգելում է մեր հավատը»²²:

Բացի Աղբբեջանին տրամադրվելիք նյութական օգնությունից, ԻՀԿ Գլխավոր քարտուղարությունը հրահանգում է ՍԱԿ-ում իր ներկայացուցիչն Գլխավոր Ասամբլեայի նստաշրջանների ժամանակ համապատասխան աշխատանքներ վարել՝ Աղբբեջանի նախաձեռնությունների աջակցմանն ուղղված, ինչպես նաև հորդորում է կազմակերպության անդամներին քվեարկել աղբբեջանանպաստ քանաձեռների ընդունման համար: Խսլամական տեղեկատվական ընկերությունը մշտական աշխատանք է տանում Ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ աղբբեջանանպաստ քարոզական տեղեկատվության տարածման ուղղությամբ, որի համագործակցության բաղկացուցիչ մասն է կազմում խսլամական պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից Աղբբեջանին հատկացվող ֆինանսական և հումանիտար օգնությունը:

2010 թ. Երկխոսության և համագործակցության ԻԿԿ երիտասարդական ֆորումը²³ դիմեց ԻԿԿ-ին, որպեսզի հայերի կողմից իրականացված «Խոջալուի ցեղասպանության» վերաբերյալ ընդունեն դատապարտող հոչակագիր: Արդյունքում, ԻԿԿ անդամ երկրների խորհրդարանական միության

²² Է. Իխսանոլու: «ОИК не приемлет действий Армении на оккупированных территориях Азербайджана», <http://www.day.az/print/news/politics/180795.html>

²³ Երկխոսության և համագործակցության ԻՀԿ երիտասարդական ֆորումը, որի հիմնադիր համագումարը տեղի է ունեցել 2003 թ. օգոստոսին Բաքվում, ստեղծվել է Աղբբեջանի երիտասարդական կազմակերպությունների ազգային ասամբլեայի առաջարկով:

գագաթնաժողովի 6-րդ նիստի ժամանակ (2010 թ., հունվարի 30-31, Ուգանդա) դատապարտվեց հայերի զինված ուժերի կողմից Խոջալու քաղաքում աղբբեջանցի բնակչության «զանգվածային կոտորածը» և կոչ արվեց կազմակերպության բոլոր անդամ երկրներին «տալ համապատասխան ճանաչում մարդկության դեմ այս հանցագործությանը և աջակցել քարոզական՝ ազգային և միջազգային մակարդակներում»²⁴: ԻՀԿ-ն միակ միջազգային կազմակերպությունն է, որը պաշտոնապես ճանաչել է «Խոջալուի ցեղասպանությունը» և այն ընդգրկել իր կողմից հիշատակվող իրադարձությունների ցանկում:

Ըստհանուր առմամբ ԻՀԿ գագաթնաժողովներում, արտաքին գործերի նախարարների խորհրդաժողովներում և այս կազմակերպության այլ ֆորումներում հայ-աղբբեջանական հակամարտության հետ կապված ընդունվել են 3 բանաձև. «Աղբբեջանի Հանրապետության դեմ Հայաստանի Հանրապետության ազրեսիայի վերաբերյալ», «Աղբբեջանի Հանրապետության տարածքում Հայաստանի Հանրապետության ազրեսիայի հետևանքով պատմական և մշակութային հուշարձանների ոչնչացման վերաբերյալ» և «Աղբբեջանի Հանրապետությանը տնտեսական աջակցություն տրամադրելու վերաբերյալ»:

Սակայն ԻՀԿ-ի շրջանակներում Աղբբեջանի հակահայկական քաղաքականությունը չի սահմանափակվում միայն Ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ աղբբեջանանպաստ քաղաքական բանաձեռների ընդունմամբ: Աղբբեջանի ակտիվ գործունեության շնորհիվ՝ ԻՀԿ-ի կողմից կազմակերպված բազմաթիվ կարևոր խսլամական գիտաժողովներ, ֆորումներ, հանդիպումներ անցկացվում են հենց Բաքվում,

²⁴ OIC Resolution No. 26/6-CONF, on cooperation between PUIC and ICYF-DC, SSCPE/4-2010/DR/RES.26/Rev.1.

որոնց հարթակները Աղբբեջանի իշխանությունների կողմից հմտորեն օգտագործվում են հակահայկական քարոզչության և դարաբարյան խնդրի վերաբերյալ սխալ տեղեկատվության տարածման համար: Նշենք որանցից առավել կարևորները:

Նշանակալից է 1998 թ. դեկտեմբերի 9-11 Հեյդար Ալիևի հովանավորությամբ Բարվում անցկացված «Խալամական քաղաքակրթությունը և Կովկասը» թեմայով միջազգային գիտաժողովը: Գիտաժողովի ժամանակ Հ. Ալիևի ելույթը կարևոր հենք հանդիսացավ երկրի խալամական քաղաքականության տեսական ձևակերպման համար: Աղավաղելով տարածաշրջանի ժողովուրդների պատմությունը՝ նա ջանում էր խալամական մշակույթի և քաղաքակրթության մեջ ներկայացնել Աղբբեջանի պատմական ժառանգության, տարածաշրջանում խալամական մշակույթը տարածողի իր դերը՝ բնորոշելով Աղբբեջանը որպես Եվրոպան Ասիային, արևմուտքը արևելքին կապող կամուրջ²⁵: Հ. Ալիևը հնարավորությունը բաց չէր թողնում նման հավաքները հակահայկական նպատակներով օգտագործելու հնարավորությունը: Մասնակից երկրների ներկայացուցիչների հետ անձնական հանդիպումների ժամանակ նա և իր թիմակիցները անդրադառնում էին հայ-աղբբեջանական խնդրին՝ Հայաստանը ներկայացնելով որպես ազգեսոր:

2006 թ. սեպտեմբերի 9-12-ը Բարվում տեղի ունեցավ ԻԿԿ զբոսաշրջության նախարարների 5-րդ կոնֆերանսը, որի արդյունքում ընդունվեց Բարվի հոչակագիրը: Հոչակագրում խատորեն դատապարտվում էր «Հայաստանի կողմից Աղբբեջանի բնագավթված տարածքներում բնական ռեսուրսների

անօրինական շահագործումը և մշակութային ու պատմական հուշարձանների ավերումը²⁶:

2007 թ. ապրիլի 26-28-ը Բարվում կայացավ «Լրատվամիջոցների դերը հանդուրժողականության և փոխըմբռնման գարգացման գործում» միջազգային համաժողովը, որի ժամանակ Աղբբեջանը հետապնդում էր երկու նպատակ. 1. ապացուցել, որ միջազգային հարաբերություններում ստանձնում է նոր ավելի բարձր և կարևոր դեր 2. ցույց տալ, որ Աղբբեջանը հանդուրժողականության կենտրոն է, իսկ, օրինակ, Հայաստանը բնագավթող և ցեղասպան²⁷:

2009 թ. ԻԿԿ կողմից Բարվուն հայտարարվեց Խալամական մշակույթի կենտրոն, (2018 թ. այդ կոչումը ստանձնելու է Նախիջևանը): Այդ որոշումը կայացվել էր ԻԿԿ անդամ երկրների մշակույթի նախարարների 5-րդ համաժողովի ժամանակ (2007 թ., նոյեմբերի 21-23, Լիբիա): Իրամ Ալիևը մշակութային տարվա բացման արարողության ժամանակ, ներկայացնելով Աղբբեջանի ուրույն տեղը խալամական աշխարհում, կրկին անդրադարձավ Ղարաբաղյան խնդրին. «... մեր բնագավթված տարածքներում հայկական վանդալները դաժանաբար ոչչացնում են մեր ճարտարապետական հուշարձանները: Մենք ուզում ենք տեղեկացնել միջազգային հանրությանը հայերի գաղանությունների մասին: Աղբբեջանը զարգանում է ամեն օր, սակայն Հայաստանում չի նկատվում այդ տեսնենքը: Միջազգային հանրությունը և բոլոր միջազգային կազմակերպությունները չպետք է վարեն երկերեսանի քաղաքականություն: Աղբբեջանը չի գնա ոչ մի զիջման տարածքային ամբողջականության հարցում, քանի որ մեր հողե-

²⁶ Baku Declaration of 5th Session of the ICTM condemns deliberate destruction of Islamic monuments by Armenia, <http://www.today.az/news/politics/30051.html>

²⁷ «Baku Hosts International Conference on «Role of Media in development of Tolerance and Mutual Understanding», <http://www.azembassy.com/news/news.php?id=414>

²⁵ International symposium on Islamic Civilisation in Caucasia, 1998, <http://www.ircica.org/international-symposium-on-islamic-civilisation-in-caucasia-1998/irc673.aspx>

րի 20%-ը գտնվում է բռնազավթման տակ, մեզ մոտ կան մեկ միլիոնից ավել փախստականներ»²⁸:

Չնայած այն հանգամանքին, որ Աղրբեջանի հետևողական քաղաքականության շնորհիվ ԻՀԿ տարբեր մարմինների և կառույցների կողմից ընդունվում են հակահայկական բանաձևեր, այնուհանդերձ, դրանք չունեն իրավական ուժ, այլ կրում են խորհրդատվական բնույթ: Թեև տեսականորեն այս կառույցի գործունեությունը հիմնված է «փալամական համերաշխության» սկզբունքի հիման վրա, սակայն անդամ երկրների քաղաքական շահերի բախումները, միմյանց նկատմամբ տարածքային հավակնությունները²⁹ և կրոնական ուղղությունների միջև գոյություն ունեցող տարածայնությունները (սուննիականություն և շիայականություն) խոշրնդուտում են իսլամական աշխարհի միասնությանը և կազմակերպության արդյունավետ գործունեությանը:

ԻՀԿ անդամ երկրների մեծ մասը բարեկամական հարաբերություններ ունի Հայաստանի Հանրապետության հետ և համագործակցում է տարբեր ոլորտներում: Դրանցից են Իրանի Իսլամական Հանրապետությունը, Սիրիան, Լիբանանը, Իրաքը, ՄԱԷ-ն, Եգիպտոսը և այլն: Կազմակերպության անդամ միայն որոշ պետություններ են, որ Հայաստանի Հանրապետության հետ չունեն դիվանագիտական հարաբերություններ (Սաուդյան Արաբիա, Պակիստան, Թուրքիա)՝ նախապայման առաջադրելով Ղարաբաղյան հակամարտության հիմնախնդիրը:

²⁸ С. Керимова, В центре исламского мира. В Азербайджане состоялись торжественные мероприятия, посвященные открытию года «Баку – столица исламской культуры-2009», «Region plus», 2009, №5 (73), с. 64-67.

²⁹ Սաուդյան Արաբիան տարածքային հավակնություններ ունի Օմանի, Իրաքի, Յեմենի, Իրաքը՝ Քուվեյթի, Իրանի, Իրանը՝ Բահրեյնի, Աֆղանստանի, ՄԱԷ-ի, Մարոկոն Ալժիրի նկատմամբ և այլն:

Լինելով ԻՀԿ ակտիվ անդամ՝ Աղրբեջանը, իր հերթին, հավատարիմ է մնում «փալամական համերաշխության» գաղափարներին այնքանով, որքանով դրանք կարող է ծառայեցնել ուժիական շահերին: Թեև այս կազմակերպության անդամ երկրների համախմբան հիմնական առանցքը հանդիսանում է Պաղեստինի հարցը, Աղրբեջանը շարունակում է խորացնել իր համագործակցությունը Խորայելի հետ՝ քաղաքական, տեսչական, ուսումնական և այլ ոլորտներում: Բավական է նշել այն փաստը, որ Խորայելը հանդիսանում է աղրբեջանական նավթի երկրորդ ամենախոշոր արտահանողը:

Հաշվի առնելով վերջին ժամանակներում արաբական երկրներում իսլամական ծայրահեղական խմբավորումների աննախադեպ ակտիվացումը և տարածաշրջանային ոչ կայուն իրավիճակը, ինչը կարող է լուրջ վնաս հասցնել Հայաստանի Հանրապետության անվտանգությանը, պետք է պատրաստ լինել դիմակայելու իսլամական աշխարհի՝ մասնավորապես միջազգային ահարեկչական կառույցների հենակետ հանդիսացող Աղրբեջանի կողմից սպառնացող հավանական մարտահրավերներին: Ղարաբաղյան հակամարտության տարիներին Հեյդար Ալիևի իրավերով և հովանավորությամբ երկրում հաստատված իսլամական ծայրահեղական տարբեր շարժումների ներկայացուցիչները հանդիսացան ահարեկչական կառույցների («Ալ-Քահիյա», «Ալ-Ջիհադ», «Զամաա ալ-խալամիա», «Զեյշուլլահ» և այլն) աղրբեջանական մասնաճյուղերի հիմնադիրները³⁰, որոնց կենսունակության վառ ապացույց է 2006 թ. կազմավորված և այժմ «Իսլամական պետություն» անվանումը կրող ահարեկչական խմբավորման շարքերում Աղրբեջանի քաղաքացիների ակտիվ մասնակցությունը:

³⁰ Տե՛ս Bodansky Y., The new Azerbaijan Hub: How Islamist operations are targeting Russia, Armenia and Nagorno-Karabakh, «Strategic Policy», 10/9:

АНТИАРМЯНСКАЯ ПОЛИТИКА АЗЕРБАЙДЖАНА В РАМКАХ ОРГАНИЗАЦИИ ИСЛАМСКОГО СОТРУДНИЧЕСТВА

Гаяне Чобанян
(резюме)

После обретения независимости Азербайджан стал активно использовать исламский фактор в своей антиармянской политике. Первой международной организацией, членом которой стал Республика Азербайджан, это Организация исламского сотрудничества (ОИС). Ассоциируя себя неделимой частью исламского мира, Азербайджан стал использовать военный, политический, экономический потенциал членов стран ОИС против Армении. В результате активной исламской политики Азербайджана в рамках ОИС, вопрос Карабахского конфликта было внесено в список существующих проблем исламского мира.

ANTI-ARMENIAN POLICY OF AZERBAIJAN IN THE FRAMEWORK OF THE ORGANIZATION OF ISLAMIC COOPERATION

*Gayane Chobanyan
(summary)*

After Azerbaijan gained independence it became actively use islamic factor in his anti-armenian policy. The first international organization that Republic of Azerbaijan became member is the Organization of Islamic Cooperation (OIC). Considering itself indivisible part of the Islamic world, Azerbaijan uses military, political, economic potential of the member states of OIC against Armenia. As a result of the active Islamic politics of Azerbaijan in the framework of OIC, Karabakh conflict have been included to the list of existing problems of the Islamic world.

Ողբեն Մելքոնյան
բ.գ.թ., դոցենտ

ՅԵՂԱՍՊԱԼՈՒԹՅՈՒՆԻՑ ՓՐԿՎԱԾ ՀԱՅ ՈՐԲ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹՈՒՐՔԱԼԵԶՈՒ ՀՈՒՇԱԳՐԱԿԱՆ-ՓԱՍՏԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԵջ¹

Բանալի բառեր՝ փաստագրական գրականություն,
Հայոց ցեղասպանություն, երեխաների իսլամացում,
թուրքալեզու, դրավմա

Ինչպես վկայում են մի շարք աղբյուրներ, այդ թվում և թուրքական, Հայոց ցեղասպանության տարիներին մեծ թվով հայ երեխաներ ոչ միայն ենթարկվել են սպանդի, այև առևանգվել են թուրքերի և քրդերի կողմից, այնուհետև բռնի իսլամացվել ու շարունակել իրենց կյանքը երբեմն որպես աղախին-ստրուկներ, երեւմն որպես հարեմի զոհեր: Գերմանացի արևելագետ Յոհաննես Լեփսիուսն աքսորյալ հայ կանաց, երեխաներին համարում էր «իսլամի իսկական ավար»²: Որք մնացած հայ երեխաների մի մասը օսմանյան իշխանությունների հրամանով և նախաձեռնությամբ բաժանվել է մուսուլման ընտանիքներին³, ինչպես նաև հավաքվել թուրքական որբանոցներում և իսլամացվել: Այս մասին վկայող փաստեր են պահպանված օսմանյան արխիվներում, որոնք

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № SCS 13YR-6B0034 գիտական թեմայի շրջանակներում:

² Լեփսիուս Յ., Գերմանիան և Հայաստանը 1914-1918 (Դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու) հատոր 1-ին, (թարգմանիչ՝ Վ. Մինալյան) Երևան, 2006, էջ 45:

³ Başyurt E., Ermeni Evlatlıklar, İstanbul, 2006, s. 36.

տեղ են գտել հայ պատմագրության և զրականության մեջ: Համադրելով տարբեր աղբյուրների ներկայացրած տվյալները՝ կարելի է եզրակացնել, որ Հայոց ցեղասպանության տարիներին հայ երեխաների բոնի իսլամացումն ու ձուլումը կատարվել են երկու մակարդակով՝ պետության և հասարակության լայն խավերի կողմից:

1. Ծնողներին կրցրած, կոտորածից մի կերպ փրկված, անտեր, անտուն, անխնամ մնացած հայ երեխաները պետության աջակցությամբ իսլամացվել են և բաժանվել մուսուլման ընտանիքներին: Որպես վերը նշվածը հաստատող օրինակ կարելի է մեջքերել օսմանյան արխիվում պահպանված 1915 թ. հուլիսի 10-ով թվագրված պաշտոնական հրամանը, որտեղ ասվում է, որ իսլամացված ոքք հայ երեխաներին պետք է հանձնել բարեկեցիկ մուսուլման ընտանիքներին, հատկապես այն զյուղերում ու զյուղաքաղաքներում, որտեղ հայեր չկան: Եթե երեխաների թիվը մեծ է, նրանց պետք է հանձնել դժվարությամբ ապրուստը հոգացող մուսուլման ընտանիքներին և ամեն երեխայի համար ամսական 30 քուրուչ վճարել նրանց: Ապա պետք է ցուցակագրել այդ երեխաների թվի և գտնվելու վայրի մասին տվյալներն ու դրանք ուղարկել կենտրոն⁴: Հատուկ նշվում է, որ այս երեխաները հանձնվում են այդ ընտանիքներին այն պայմանով, որ նրանց տրվի մուսուլմանական կրթություն: Նույն բովանդակությամբ գրություններ հանդիպում են նաև հետազայում՝ ուղղված տարբեր նահանգների դեկավարներին:

2. Հայ երեխաների իսլամացմանը և թուրքացմանը ներգրավված են եղել նաև թուրքական հասարակության լայն շրջանակները. Հայոց ցեղասպանության տարիներին թուրքերը և քրդերը առևանգել են բազմաթիվ հայ մանուկների և իսլամացրել: Թուրքական կողմը, չկարողանալով ժխտել այս

անառարկելի փաստը, միևնույն ժամանակ շրջանառության մեջ է մտցրել այն վարկածը, թե իբր «բարեգութ» մարդիկ ուղղակի հումանիստական զգացումներից ելնելով՝ «փրկել» են արտրյալ հայ երեխաներին: Կողմ չինելով բացարձակ զնահատականների՝ հնարավոր ենք համարում ընդունել, որ երբեմն, խիստ սակավ դեպքերում կարելի է չբացառել նման վարկածը, բայց զերակշիռ դեպքերում հայ երեխաներին իմել են բոնությամբ նրանց իսլամացնելու, թուրքացնելու նպատակով և առաջնորդվել ոչ թե հումանիստական, այլ զուտ անձնական, նաև տնտեսական շահերով: Մուսուլմանները ձեռք բերելով հայ աղջիկ երեխաներին, ինչպես ցույց են տալիս բազմաթիվ փաստեր, այնուհետև նրանց ամուսնացնում են իրենց տղաների հետ՝ այդպիսով խուսափելով նաև ամուսնական «զլիազին» վճարելու ծանր պարտականությունից: Տարատեսակ շահախնդրություններից դրդված՝ թուրքերը և քրդերը բավական թվով հայ երեխաներ էին առևանգել, «փրկել», և այս երևույթը բավական մեծ ծավալներ էր ընդգրկել: Ինչպես նշվում է ցեղասպանությունը վերապրած մտավորական Վահան Մինախորյանի արժեքավոր գրքում. «Հայու երեխայ ունենալը մի մարմանց էր դարձել. ամէն մարդ ուզում է մեկը ունենալ»⁵: Ի դեպ, նշված գրքում մեկ այլ տեսակետ է հնչում, համաձայն որի ոռւսական զորքերի մոտալու հաղթանակի լուրը ստիպում էր շատ մուսուլմանների «փրկել» հայ երեխաներին⁶, որպեսզի «ապացուցեն» իրենց մարդասիրական մղումները և խուսափեն հնարավոր հաշվեհարդարից ու վրեժից: Հարցի սահմուկեցուցիչ կողմերից է հայ որբերի սեռական այլասերված շահագործման երևույթը այդ և հետազա տարիներին:

Հայ որբերի դաժան ողիսականների և բոնի իսլամացման մասին վերջին շրջանի թուրքերն փաստագեղարվեստական

⁴ Atetur İ., Türkイヤde Ermeni Kadınları ve Çocukları Meselesi (1915-1923), Ankara, 2005, s. 65.

⁵ Մինախորյան Վ., 1915 թականը. արհամիրի օրեր, Թեհրան, 2006, էջ 328:

⁶ Նույն տեղում, էջ 327:

գրականության մեջ մի շարք օրինակների ենք հանդիպում: Դրանցից է 2005 թվականին Թուրքիայում տպագրված «U.Ş.» անունով երեխայի աքսորի հուշերը՝ զիրքը, որը գրվել է 1906 թ. Աղանայում ծնված Մանվել Քրբյաշարյանի հուշերի հիման վրա: 1980 թ. Ավստրալիայի Սիդնեյ քաղաքում բնակվող Մանվելը ցեղասպանության և դրան հաջորդած տարիներին իր ապրած կյանքի մասին հիշողությունները ձայնագրել է, և ավելի ուշ՝ 2005 թ. թուրք հայտնի հրապարակախոս Բասրըն Օրանը այն պատրաստել է հրատարակության: Գրքում տեղ է գտել նաև Քրբյաշարյանի հուշերի ձայնագրության խտասկավառակը, որտեղ նա բարբառային թուրքերենով պատմում է իր ողիսականը: Ինը տարեկանում Մանվելն իր ընտանիքի հետ բռնում է աքսորի ճամփան, որի ընթացքում տեսնում է մոր՝ Մարիամի ինքասպանությունը, հոր՝ Ստեփանի մահը, իրենց քարավանի սպանողը և այլ սարսափներ: Հրաշրով փրկվելով՝ 9-ամյա երեխան ենթարկվում է անասելի տառապանքների՝ մեկ վաճառվելով ստրուկների շուկայում, մեկ «որդեգրովելով» տարբեր մուսուլմանների կողմից և, ի վերջո, տասը տարի դեգերելուց հետո գտնում է իր ազգականներին: Գրքի կազմող Բասրըն Օրանը իրավացիորեն նկատում է, որ փոքրիկ երեխան ուղղակի ենթագիտակցորեն փնտրել է իր արմատները, իր ազգականներին և վերջապես գտել նրանց⁷: Այս պատմությունը մեկն է տառապանքի այն հազարավոր օրինակներից, որոնց հայ երեխաները ենթարկվել են Հայոց ցեղասպանության տարիներին, սակայն Մանվել Քրբյաշարյանի հուշերի, թերևս ամենակարևոր, առանձնահատկությունը ապրած վախի խորքային պատկերումն է: Այսպես, ցեղասպանությունից տասնամյակներ անց Ավստրալիայում բնակվող արդեն 74-ամյա Մանվել Քրբյաշարյանը որոշում է իր հուշերը ժապավենին

⁷ Oran B., "M.K." Adlı Çocukun Tehcir Anıları: 1915 ve Sonrası, İstanbul, 2005, s.14.

հանձնել, սակայն նույնիսկ առաջացած տարիքը և Թուրքիայից հազարավոր կիլոմետրերի հեռավորությունը նրա միջից չեն հանել վախի այն ահոելի զգացումը, որը նա ձեռք է բերել 1915-ին: Մկնելով իր պատմությունը՝ նա վախենում է ասել իր ամբողջական անուն, ազգանունը, այլ նշում է դրանց միայն սկզբնատառերը՝ «Իմ անունը U. Ş. է»⁸: Գրքում նշվում է նաև, որ Մանվելը մինչև կյանքի վերջ ամեն գիշեր մղձավանջներ է տեսել, արքնացել, ստուգել տան դռները, պատուհանները, երեխաններին, թոռներին: Սա կրկնվել է ամեն օր գիշերը ժամը 2-ին, և դրա բացատրությունն այն է, որ 1915-ին աքսորի ժամանակ օրերից մի օր հենց գիշերվա 2-ին է, որ արքնանալով՝ 9-ամյա Մանվելը իր կողքին տեսել է մահացած հորը, և այդ մտապատկերը մինչև կյանքի վերջ ուղեկցել է նրան: Մանվել Քրբյաշարյանը լինելով մուտումանական գերության մեջ՝ ոչ միայն պահել է քրիստոնյա լինելու գիտակցումը և ձգտել գտնել իր ազգականներին, այլև փորձել է ինչ-որ կերպ՝ ավելի շատ խորհրդանշական, շարունակականություն ապահովել իր կյանքի 1915-ին նախորդած և հաջորդած շրջանների միջև: Ահա հենց այդ նպատակով է Մանվել Քրբյաշարյանը տարիներով փնտրում և, ի վերջո, Կիպրոսում գտնում է իրենց նախկին հարեւանի աղջիկ Զարուհուն, որին Մանվելի մայրը դեռևս 1914 թվականին նրա ծնվելուց հետո ոչ պաշտոնական խոսքապահ⁹ արել այն նպատակով, որ հետազոտում աղջիկան ամուսնացնի իր որդի Մանվելի հետ: Ցեղասպանությունից ավելի քան 20 տարի անց՝ 1937 թվականին Մանվելը Կիպրոսում ամուսնանում է Զարուհու հետ և այդպիսով՝ հեռակա կարգով, կատարում մոր իղձը: Հետազոյում՝ արդեն 1968 թ. Քրբյաշարյանները

⁸ Նոյն տեղում, էջ 14:

⁹ Ժողովրդի մեջ այս երևոյթը երեսն անվանում են «բաշիքյարթմա» (հայերեն՝ օրորոցախազ), որը թուրքերեն եօնիք կերտե այսինքն՝ օրորոցից նշանված բառակապակցության աղավաղլած ձևն է:

ընտանյոր հանդերձ հաստատվում են Ազգարախայում, Սիդ-նեյ քաղաքում, որտեղ Մանվելն ապրում է մինչև 1997 թվականը և մահանում 91 տարեկանում: Մահանալուց առաջ Մանվելը ասում է. «Ես պետք է մահանայի 9 տարեկանում և ապրած տարիները Աստծո բարեհաճությունն են իմ նկատմամբ»: Գրի կազմող Բասրըն Օրանն իր ընդարձակ նախարանում ենթատեքստերում կամ բացահայտ ընդհանրացումներ է անում ցեղասպանության հարցի շուրջ, փորձում անուղակիորեն ներկայացնել թուրքական պաշտոնական տեսակետները, սակայն գրի իրական արժեքը վերապրած Մանվել Քրյաշարյանի պատմություններն են՝ առանց մեկնարանությունների: Նա իր պատմությունը սկսում է իրենց ընտանիքի տեղահանության նկարագրությամբ և դեպքերի բնական շարունակականությունը մի-փոքր խախտելով՝ ներկայացնում իրադարձությունները: Մանվելի խոսքից պարզ է դառնում, որ իրենց քարավանը ուղղվել է դեպի Տերքոր և մանրամասնորեն նկարագրում է Ռես-ուլ-այն նահանգում տեղի ունեցածները: Քրյաշարյանի պատմության մեջ շատ է խոսվում նրանց քարավանը ուղղվել է չեպի Տերքոր և մանրամասնորեն նկարագրում է Ռես-ուլ-այն նահանգում տեղի ունեցածները: «Վերջապես զարու եկավ (խոսքը 1916 թվականի գարնան մասին է - Ո.Ս.): Այս չեցենները ցերեկները շրջում էին զաղթականների մեջ և իրենց նկատած գեղեցիկ կանանց ու աղջիկներին զիշերը զալիս փախցնում էին: Մի հայ կին Աստվածաշունչ էր կարդում և մի չերքեղ նրան հարցրեց. «Էղ ի՞նչ ես կարդում, այ կին», «Աստվածաշունչ», - պատասխանեց կինը: «Ի՞նչ է գրված», - հարցրեց չերքեղը, «Աստծո խոսքը», - ասաց կինը: «Տուր տեսնեմ այդ զիրքը ինձ», - ասաց չերքեղը և վերցնելով Աստվածաշունչը՝ սկսեց պատռել ու հողին նետել նրա

ները: «Մա՞ էր ձեզ փրկելու», - վիրավորական ասաց նա»¹⁰: Մանվել Քրյաշարյանի գրքում բազմաթիվ են այն նկարագրությունները, որտեղ հասարակ մուսուլման ժողովուրդը բարձանում է անպաշտպան զաղթական հայերին. «Ումանք են էին մնում և քարավանի ետևից եկող չերքեղները կրկին նրանց ստուգում էին, որպեսզի եթե նրանց մոտ փող լիներ՝ վերցնեին: Եթե զաղթականները այլևս չեին կարողանում քայլել, քարավանի ետևից եկող արաբները մահակներով հարվածում էին նրանց զլիխն, վերցնում էին հագուստները և նրանց մերկ թողնում: Իհարկե մահակի հարվածն ուտելուց և այդ ցրտին մերկ մնալուց հետո ապրելն այլևս անհնար էր»¹¹: Մանվելի մոտ վառ է մնացել մոր ինքնասպանության պահը, որը նա գրքում պատմում է երկու անգամ: Արսորի ճանապարհին անվերջ քայլելուց ուժասպառ դարձած մայրը նախընտրում է ինքնասպան լինել. «Մայրս այլևս չէր կարողանում քայլել, ուտքերը ուտել էին, մեր կողքից մի գետ էր հոսում՝ Սուրադը (նկատի ունի Եփրատը կամ դրա վտակներից մեկը - Ո.Ս.): Մայրս ասաց հորս. «Սուավույան ինձ այս գետի ափ տար, նետվեմ ջուրը: Մեկ է, եթե մնամ, արաբները ինձ շարշարելով կսպանեն (ըստ երևույթին, նկատի ուներ նաև բռնաբարվելու հավանականությունը - Ո.Ս.):» Մակայն հայրս շոտարավ, չէր ուզում տանել: Մայրս ասաց, որ եթե շտանի՝ կանիծի: Մենք մի համեմերկացի ունեինք, որք երկու զավակ ուներ՝ մեկը տղա, մյուսը աղջիկ: Տղան իմ դասրներն էր: Անունը Եզնիկ էր, հիշում եմ: Այս մարդը մորս իր հետև զցեց, ես էլ նրանց հետ, որոշեցինք տանել գետի ափ: Տեր հայր կանչեցինք: Մայրս հաղորդություն ստացավ, այնուհետև մորս այդ մարդու հետ գետի ափ տարանք: Դեմքս մի կողմ թերեցի, որպեսզի չտեսնեմ, թե ինչպես է մայրս իրեն ջուրը նետում: Մայրս իրեն ջուրը նետեց: Թերվեցի նայեցի,

¹⁰ Նույն տեղում, էջ 47-48:

¹¹ Նույն տեղում, էջ 51:

այս մայրս: Սորս գետը տանում էր»¹²: Սոր մահից հետո փոքրիկ Մանվելը ապրում է նաև երկրորդ ցնցումը. «Ժողովուրդը շարունակում էր քայլել: Գնում էինք, սակայն ո՞յզ: Սոված, ծարավ: Վերջապես մի տեղ հասանք, դադար տվեցինք: Այնտեղ արարները հաց, բղուր էին բերում և փոխանակում հագուստների հետ: Իմ ոտքին մի զույգ կարմիր կոշիկ կար: Դրանք մի թաս բղուրի հետ փոխանակեցինք: Հաջորդ օրը ճանապարհը շարունակեցինք: Մի տեղ կրկին դադար տվեցինք և զիշերը այնտեղ քննեցինք: Առավոտյան կողմ զարթնեցի տեսա, որ հայրս մահացել էր»¹³: Մանվել Քրքյաշարյանը աքսորի ճանապարհի բոլոր զրկանքների ու սարսափների կողքին ականատես է եղել նաև ստրկավաճառության բազմաթիվ օրինակների և հենց ինքն էլ վաճառվել է նման կերպով: Մասնավորապես՝ նրանց ուղեկցող չեշենները սկսել են այդ վայրերում բնակվող արարների հետ բանակցել հայ երեխաներին և կանանց վաճառելու հարցի շուրջ: «Մեկ էլ տեսանք արարները չեշենների հետ միասին սկսեցին ժողովրդի մեջ շրջել: Նրանք սկսեցին զննել տղա և աղջիկ երեխաներին: Նրանց, որոնց հավանում էին՝ ասում էին չեշեննին. «Ես ուզում եմ այս երեխային վերցնել»: Չեշենն էլ թարգմանություն էր անում, որովհետև չեշենները արարերեն, չեշեններեն և թուրքերեն գիտեին: Երեխայի մորը և հորը, կամ էլ տիրոջ ասում էին. «Այս երեխային տվեք այս արարին, առանց այդ էլ դրոք, այս անհավատներ, մեռնելու եր»: Երեխայի տերերից ումանք համաձայնվում էին, ումանք՝ ոչ: Երբ արարը վերցնում էր երեխային՝ չեշենն էլ արարից զանձում էր միջնորդավճար»¹⁴: Աքսորի ճանապարհի մի հատվածում Մանվելը այլևս ի վիճակի չլինելով քայլել՝ որոշում է մնալ այդ վայրում: Քիչ անց քրդերը և չեշենները սպանում են այնտեղ

¹² Նույն տեղում, էջ 51-52, 54-55:

¹³ Նույն տեղում, էջ 52:

¹⁴ Նույն տեղում, էջ 53-54:

մացած հայ զաղթականների մի մասին, իսկ երեխաներին բաժանում իրար մեջ: Մանվելին մոտակա զյուղից մի քուրդ է վերցնում և ցանկանում տանել իր տուն, սակայն ճանապարհին միտքը փոխում է և որոշում թալանել տղային: Որք մնացած 9-ամյա հայ երեխայի մոտ բացի հագրւատից ուրիշ ոչինչ չի լինում, և այդ քուրդը վերցնում է Մանվելի շորերը, իսկ նրան կիսամերկ բողնում ճանապարհին: Դրանից հետո Մանվելը մնում է միայնակ և պատսպարվում մի բարանձավում, որտեղ հաջորդ օրը նրան գտնում է մոտակա զյուղից մի մուտլման և տանում իր տուն: Օրեր անց հարեւան Սարմբար զյուղից, որն այսօր գտնվում է Սիրիայի և Թուրքիայի սահմանին, մի քանի քուրդ են զալիս և վերցնում Մանվելին որպես աղախին: Գյուղի ճանապարհին Մանվելը տեսնում է սպանված կամ կիսամեռ մարդկանց և հասկանում, որ դա իրենց թարավանն էր, որին չեշենները բերել և հանձնել էին քրդերին, որոնք էլ հայ զաղթականների շորերը թալանելուց հետ բոլորին սպանել էին¹⁵: Նույն օրվա երեկոյան, երբ Մանվելին տանում են Սարմբար զյուղը, սկսվում է մի իրարանցում. «Մեկը քրդերեն բղավում էր՝ հասեր, հասեր, օգներ: Բոլորը վազում էին ձայնի ուղղությամբ: Պարզվում է, որ քուրդը տեսել է 14-15 տարեկան լիովին մերկ մի հայ պատանու, որը պատահաբար ողջ էր մնացել սպանդի ժամանակ: Գյուղացիները զնացին և քարկոծելով սպանեցին պատանուն»¹⁶: Մեկ օր այդ զյուղում մնալուց հետո առավոտյան Մանվելին վերցրած քուրդ զյուղացու երկու երեխաները՝ տղա և աղջիկ, նրան զյուղից դուրս են տանում և հարձակվում վրան, որպեսզի խլեն նրա միակ «հարստությունը» շալվարը և վարտիքը: Մանվելը ստիպված է լինում նրանց տալ իր վերջին շորերը, և երեխաները վերադառնում են զյուղ, իսկ Մանվելը մորեմերկ մնում է ճանապարհին: Քիչ անց այդ ճանապարհին

¹⁵ Նույն տեղում, էջ 60:

¹⁶ Նույն տեղում:

նա տեսնում է մի քուրդ տղամարդու, որի կողքին կար հաճացի մի հայուիի: Մանվելի աչքի առաջ քուրդը ձեռքին եղած մահակով խփում է կնոջ գլխին և գետին զցելուց հետո մի քանի անգամ դանակահարելով՝ սպանում, այնուհետև վերցնում նրա շորերը և գնում: Մանվելը մոտենում է սպանված հայուին և նստում կողքին: Այդ ժամանակ նրանց կողքով են անցնում չորս քուրդ կանայք, որոնցից ամենաերիտասարդը վերցնելով քարի մի կտոր՝ ցանկանում է հարվածել Մանվելի գլխին և սպանել, սակայն մյուսները չեն քողնում, իսկ նրանցից մեկը Մանվելին է տալիս իր երեխայի շորերից մի կտոր, որպեսզի նա ծածկվի: Այդ նույն կինը Մանվելին վերցնում է իր հետ և տանում իրենց զյուղ՝ Հայաք, որտեղ էլ որոշ ժամանակ ապրում է Մանվելը¹⁷: Նկարագրված տեսարանները լավագույնս փաստում են, որ մուտքամանական հասարակության տարբեր շերտերի և տարիքային խմբերի ներկայացուցիչներ են ընդգրկված եղել ցեղասպանության իրականացման գործում: Զարհուրելի է այն հանգամանքը, որը ընդամենք հագուստի համար շատ քրդեր, արաբներ, թուրքեր հեշտությամբ սպանել են հայերի: Այս բոլոր սարսափների միջով անցնելով և հրաշռով փրկվելով՝ Մանվելը ապաստանում է այդ քրդական զյուղում, աշխատում զյուղացիների տներում որպես աղախին, սակայն ամենաուշագրավն այն է, որ ամեն հնարավորություն օգտագործում է իր ազգակիցներին գտնելու համար: Տառապանքների տասը տարիների ընթացքում ազգային և կրոնական ինքնազիտակցությունը պահպանելու հարցում Մանվելի համար կարևոր դեր է խաղացել քրիստոնեական դաստիարակությունը. «Երբեք չէի մոռանում Հայր մերը ասել, շարունակ կրկնում էի այն»¹⁸: Փոքրիկ երեխայի մեջ հայությունը ասոցիացվել է քրիստոնեության հետ, և նա զգուշորեն սկսել է իր շրջապատում հե-

տաքրրովել, թե որտե՞ղ կան քրիստոնյաներ, որպեսզի այդ միջոցով գտնի նաև իր ազգակիցներին: Ի վերջո, փնտրությունը Մանվելին հասցնում են Սոսուլ, և տեղի հայկական եկեղեցու քահանան վերցնելով նրա տվյալները՝ խոստանում է օգնել: Եվ իրոք, որոշ ժամանակ անց պարզվում է, որ Մանվելի ազգականներից մի քանիսը գտնվում են Հալեպում, և շուրջ տասը տարի տառապելուց ու դեգերելուց հետո նա, ի վերջո, գտնում է ազգականներին: Այնուհետև Մանվելն իմանում է, որ իր երկու քույրերից մեկը՝ Օժենը, Կիպրոսում է, իսկ մյուս քույրը՝ Սիրուիին՝ ԱՄՆ-ում: 1925 թ. Մանվելը գնում է Կիպրոս, հաստատվում այնտեղ, ամուսնանում, երեխաներ ունենում և արդեն 1968 թ. տեղափոխվում Ավստրալիա: Վերջում արժե հավելել, որ իր ազգականներին փնտրելու և գտնելու կամքը Մանվելին ուղեկցում է ամբողջ կյանքում և 1985 թ. արդեն 79-ամյա Մանվելը այցելում է ԱՄՆ-ում գտնվող քրոջը՝ Սիրուիուն, որին վերջին անգամ տեսել էր 2 տարեկանում:

Ցեղասպանության ականատեսները և նրանց սերունդները ոչ բոլորն են կարողացել կամ համարձակություն ունեցել զրի առնել իրենց վերապրածներն ու իմացածները, ուստի հաճախ լրել են, սակազ դեպքերում՝ դիմել ուրիշներին: 2008 թվականին Թուրքիայում տպագրվեց «Սարգիսը այս հողերը սիրում էր» վերնագրով մի հուշագրություն, որտեղ Գերմանիայում բնակվող հայազգի Սարգիս Խմասը վերապատմում է ցեղասպանության մասին իր ընտանիքի հուշերը: Իր զրի առած նյութերը նա ուղարկում է թուրք լրագրող և հրապարակախոս Ֆարուք Բիլլիրիշիին՝ խնդրելով խմբագրել և հրատարակության պատրաստել դրանք: Սարգիս Խմասի և Ֆարուք Բիլլիրիշիի միջև հաստատվում է նամակագրական և հեռախոսային կապ, ու թուրք լրագրողը ստանձնում է հուշերի հրատարակման գործը, սակայն, ցավոք, մինչև զրի տպագրվելը Սարգիս Խմասը վախճանվում է: Չնայած նրան,

¹⁷ Նույն տեղում, էջ 61-62:

¹⁸ Նույն տեղում, էջ 82:

որ գրքի կազմողն առաջարանում որոշ համահավասարեցնող մեկնաբանություններ է արել և փորձել է հատկապես վեր հանել Սարգիս Իմասի հուշերում առկա բարեկամության, եղբայրության կոչերը, սակայն, այնուամենայնիվ, գիրքը նախ թուրք գրականության հուշագրական ժանրի մեջ ավելացնում է հայկական թեմատիկայով գրված ստեղծագործությունների թիվը և, բացի այդ, ունի աղբյուրագիտական արժեք ցեղասպանության պատմության համար: Սարգիս Իմասի մայրական պապը՝ Ասատուրը, Խարբերդի շրջանի Քոնաքալմազ գյուղի ջրաղացանն է եղել և հենց այդ հանգամանքն էլ նրան փրկել է աքսորից: Ասատուրը կնոջ մահից հետո հիմնականում բնակվել է գյուղի դուրս գտնվող ջրաղացում, և երբ ոստիկանները ներխուժել են գյուղ ու բոլորին տեղահանել են՝ նա գյուղում չի եղել: Նրա ընտանիքը՝ մայրը, աղջիկը՝ 7-ամյա Շուշանը, տղան՝ 3-ամյա Անդրանիկը, գյուղի մյուս բնակչության հետ բռնել են աքսորի ճամփան և տարվել դեպի Սադեն քաղաք: Նոյն օրվա երեկոյան անվերջ քայլելուց ուժասպառ Ասատուրի 70-ամյա մայրը խնդրել է իրենց ուղեկցող ոստիկանից սպանել իրեն, քանի որ այլևս չէր կարողանում քայլել: «Ընդառաջելով» տարեց կնոջ խնդրանքն՝ ոստիկանը հենց թռոների աշխ առաջ սվինահարում է նրան և արյունաշաղախ դիակը թռոնում ճանապարհին¹⁹: Երկու մանկահասակ երեխանները մնում են տատի անշունչ մարմնի կողքին և չեն հասկանում, թե ինչ է տեղի ունեցել: Մինչև ուշ գիշեր երեխանները փարված տատի մարմնին խնդրում են նրան վեր կենալ և շարունակել ճանապարհը, քանի որ քարավանը գնացել է, իսկ իրենք մնացել են միայնակ: Այդպես մինչև առավոտ երկու երեխաններ տատի մարմնի կողքին կուշ եկած սպասել են՝ ցրտից դողալով: Առավոտյան կողմ Շուշանը եղբոր հետ ստիպված սկսում է շրջել անձանոթ վայրերում՝ ուտելիք գտնելու հույսով: Եթե հասնում

են մոտակա գետակին, նրանց դիմաց են դուրս գալիս երեք քառր տղամարդ: Տեսնելով անպաշտպան երեխաններին՝ քրդերը սկսում են իրար մեջ ինչ-որ բան խոսել: Հետազայում պարզվում է, որ Սադեն քաղաքում բնակվող զինվորական քժիշկ Սամի թեյր այս քրդերին պատվիրել է գտնել 7-8 տարեկան արտօրյալ հայ աղջիկ երեխա, որպեսզի նա դառնա իր 3 տարեկան աղջկա ընկերուիին: Արա դիմաց քժիշկը խոստացել է վաճրել քրդերին: Եվ ահա տեսնելով Շուշանին և Անդրանիկին՝ քրդերը հասկացել են, որ գտել են իրենց պատվերը, սակայն նրանց պատվիրված է եղել միայն աղջիկ երեխա, ուստի 3-ամյա Անդրանիկը հարկավոր չէր: Այդ պահին տեղի է ունենում մի դեպք, որի մասին հիշողությունը ամբողջ կյանքում ուղեկցելու էր Շուշանին. մինչ քրդերից երկուսը խոսում էին իրար հետ, երրորդը մոտենում է երեխաններին. «Այդ ընթացքում կարձահասակ երրորդ մարդը մոտեցել էր երեխաններին: Առանց Շուշանին մի բան ասելու, փոքրիկ Անդրանիկին կոպտորեն ձեռքից բռնելով՝ քարշ տվեց քիչ այն կողմ հոսող գետի մոտ: Երեխայի գլուխը մտցրեց ջրի մեջ և այդպես որոշ ժամանակ սպասեց: Անդրանիկը թռչնի ձագի պես զայրվում էր: Շուշանը սարսափահար էր, ո՞չ կարողանում էր բղավել, ո՞չ էլ փախչել: Առանց շարժվելու հետևում էր եղբոր մահը: Սարդը իրական մարդասպան էր, նրա համար իր սիրուն եղբայրը ոչ մի արժեք չուներ: Սպանությունը կատարելիս այնքան հանգիստ էր, ասես անում էր աշխարհի ամենաբնական, ամենահասարակ գործը: Ակնհայտ էր, որ առաջին անգամը չէ, որ մարդ էր սպանում: Երբ երեխան անշնչացավ, նրա մարմինը դուրս բերեց ջրից և վրան ինչ հազուստ որ կար՝ հանեց: Իսկ փոքրիկ մարմինը արդեն նրան չէր հետաքրքրում, վերցրեց ու շարտեց ջրի մեջ»²⁰: Այս անմարդկային տեսարանից քարացած Շուշանին ավազակները վերցնում և տանում են քաղաքում գտնվող մի մեծ տուն ու հանձնում:

¹⁹ Bildirici F., Serkis Bu Toprakları Sevmiştı, İstanbul, 2008, s. 18.

²⁰ Նոյն տեղում, էջ 19:

նում մի մարդու, որը վճարում է մարդասպան քրդերին: Դա զինվորական բժիշկ Սամի բեյն էր, որը Շուշանին վերցնում է իր տուն որպես որդեգիր և փոխում նրա անունը՝ կոչելով Սուլան: Ինչպես Սարգիս Խմանն է պատմում, Շուշանին այդ տանը լավ են վերաբերվել, և նա այդտեղ է մնացել 5-6 տարի: Տարիներ անց Սաղեն այցելած շրջիկ հայ վաճառականներից մեկը նկատում է, որ երեխան հայերեն է հասկանում: Իսկ մինչ այդ Շուշանի ջրաղացպան հայրը՝ Ասատուրը, շարունակ փնտրել է իր կորած ընտանիքը և այս շրջիկ վաճառականին ևս խնդրել, որ եթե իր երեխաններից կամ մորից լուր խման՝ իրեն հայտնի: Խոսելով երեխայի հետ՝ վաճառականը հարցնում է նրա անունը, ինչին երեխան պատասխանում է, թե իիմա իր անունը Սուլան է, սակայն նախկինում իրենց զյուղում իրեն Շուշան էին կոչում²¹: Վաճառականը այս լուրը հասցնում է Ասատուրին, որն էլ գնալով Սաղեն քաղաք՝ այցելում է բժիշկ Սամի բեյին և ներկայացնում իրավիճակը՝ խնդրելով իրեն վերադարձնել երեխային. «Պարոն, դու էլ ես հայր: Իմ կյանքում այս աղջկանից բացի ոչ ոք չի մնացել: Նա էլ ձեր շնորհիվ է ողջ մնացել: Ինչ կլինի՝ խեղճ ու տկար հորը իր զավակից մի բաժանեք»²²: Բժիշկ Սամին տեղի է տալիս, սակայն նշում, որ երեխային Ասատուրին կտա միայն այն պարագայում, եթե աղջիկը ճանաչի նրան: Բժիշկ Սամին և Ասատուրը միասին գնում են տուն, և Շուշանը տեսնելով հորը՝ անմիջապես ճանաչում է ու հայերեն «հայրի կ, հայրի կ» բռավելով փաթաթվում նրան: Այս տեսնելով՝ բժիշկ Սամին Շուշանին վերադարձնում է հորը, և նրանք գնում են Քոնաքալմազ զյուղ, որն արդեն շատ էր փոխվել, նոր մարդիկ էին տեր կանգնել հայերի տներին և ունեցվածքին: Մի քանի տարի անց, եթե Շուշանը մեծանում է՝ նրան ամուսնացնում են

²¹ Նոյն տեղում, էջ 20-21:

²² Նոյն տեղում, էջ 21:

Խարբերդի թիլք զյուղից հայազգի Մարտիրոսի հետ, որը ևս ցեղասպանությունից փրկված հայ երեխաններից է լինում:

Գրում առկա է նաև Շուշանի խորթ մոր՝ Յեղայի վերաբանները: Խարբերդի Նաջարան զյուղից Յեղան ցեղասպանության ժամանակ կորցնում է ամուսնուն և փոքրահասակ աղջկա՝ Մարթայի հետ արտրվում: Հետազայում Յեղան իր հուշերում նկարագրում է արտրի ճանապարհին տեղի ունեցած ստրկավաճառության տարբեր դրվագներ. «Ճանապարհին ցանկացած մուսուլման իր ուզած հայ կնոջը, աղջկան կարող էր հանգիստ վերցնել: Քարավանին ուղեկցող զինվորների ղեկավարին մի քանի գրոշ տալով՝ ասես ձմեռուկ կամ սեխ ընտրելու նման, իր ուզած հայ կնոջը վերցնում տանում էին մուսուլմանները»²³: Նմանատիպ ճակատագիր է բաժին հասնում Յեղային, որին մի քանի գրոշով գնում է մի մուսուլման զյուղացի, որը հետո նրան կրոնափոխ է անում և ամուսնանում հետք: Ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ երկու ամիս իր «ամուսինը» համարված մարդու անզամ չի հիշատակում Յեղան իր հուշերում և ակնհայտ է, որ նրան տանջում է նաև բարոյական հարցեր. «Խառը զգացումների մեջ երկու ամիս անցկացրեցի, սակայն դրանք ինձ համար հարյուրամյակների չափ երկար թվացին: Թե ինչպես են այդ ամիսները անցել միայն ես և Աստված զիտենք: Ես ինքս ինձ անընդհատ ասում էի. «Միայն իմ մարմինն է պղծվում, հոգիս մասմաքուր է մնալու»»²⁴: Այստեղ ի հայտ են զալիս նաև առևանգված և բռնությամբ մուսուլմանի կին դարձած հայուիհների վերինտեղրման խնդիրները, թե ինչպես են նրանք իրենք իրենց հալթահարելու և առևանգիչ-մարդասպանի կինը լինելուց հետո ինչպես են վերադառնալու իրենց նախկին միջավայր: Ահա հենց այս մտ-

²³ Նոյն տեղում, էջ 137:

²⁴ Նոյն տեղում, էջ 139:

րումներն են, որ շատ հայուիիների նույնիսկ հնարավորության դեպքում հետ են պահել մուսուլմանական գերությունից ազատվելու ռեալ հնարավորությունները օգտագործելուց: Յեղան իր հետ է վերցնում նաև մանկահասակ աղջկան՝ Մարթային, որին ի պահ են տալիս նրա նոր մուսուլման «ամուսնու» ազգականներից մեկին: Որոշ ժամանակ անց հայ աղջիկ երեխային խնամքի վերցրած ընտանիքի տղամարդը բռնաբարում է նրան, վերջինս մի կերպ հասնում է ամառային արոտավայրում գտնվող մոր մոտ, որից հետո նրանք փախչում ու ապաստանում են իրենց հեռավոր ազգական Ասատուրի ջրաղացում: Ավելի ուշ Յեղան ու Ասատուրը ամուսնում են, ունենում երկու երեխա, իսկ Մարթան գաղթում է Խորհրդային Հայաստան ու այստեղ ընտանիք ձևավորում:

Սարգիս Իմասի հուշերում նաև տեղ է գտել ուշագրավ մի տեղեկություն այն մասին, թե ինչպես ցեղասպանության ժամանակ Խարբերդի Թիլը զյուղից Ղազար Թորայանը իր մոր և քրոջ հետ մի քանի օր հերոսական դիմադրություն է ցույց տվել քուրդ ջարդարար խաժամութին, սպանել շատերին և ինքն է մահացել զենքը ձեռքին հերոսական մահով:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ Հայոց ցեղասպանությունից մազապուրծ հայության այս պարագայում երեխաների վկայությունների մի յուրահատուկ դրսնորում են այն պատմությունները, որոնք ել հիմք են դարձել քուրքալեզու հուշագրությունների հրատարակման համար: Սրանք մի կրդմից լինելով ականատես-վերապրոդի վկայություն, մյուս կրդմից փոքր-ինչ գեղարվեստական գունավորմամբ ել ավելի մատչելի են դառնում ընթերցանության համար, իսկ դրանց քուրքերն լինելը կարող է թեկուզ և փոքր, սակայն նպաստավոր քայլ լինել թուրքական անտեղյալ և Ժիստողական քաղաքականության զոհ հասարակությանը ճշմարտությունը իմանալու ճանապարհին:

Հայության պատմություններ

**СВИДЕТЕЛЬСТВА СПАСШИХСЯ ОТ ГЕНОЦИДА
АРМЯНСКИХ СИРОТ В МЕМУАРНО-ДОКУМЕНТАЛЬНОЙ
ЛИТЕРАТУРЕ НА
ТУРЕЦКОМ ЯЗЫКЕ**
Рубен Мелконян
(резюме)

Ряд источников, в том числе и турецких, свидетельствует о том, что в годы Геноцида армян много детей не только подверглись резне, но и были украдены турками и курдами, а после насилия приняли ислам и жили или как рабы-слуги, или как жертвы гарема. В последнее время в документально-художественной прозе на турецком языке приводятся примеры жестоких историй жизни армянских сирот и их насильственной исламизации. Среди этих примеров опубликованная в 2005 году в Турции книга “Воспоминания о ссылке ребенка по имени “М. К”, написанная на основе воспоминаний родившегося в 1906 году в Адане Манвела Кркяшаряна, а также опубликованные в 2008 году мемуары “Саргис любил эти земли”, в которых проживающий в Германии армянин Саргис Имас пересказывает воспоминания своей семьи о геноциде.

THE TESTIMONIES OF ARMENIAN ORPHANS ESCAPED FROM THE GENOCIDE IN THE AUTOBIOGRAPHIC – DOCUMENTARY LITERATURE IN TURKISH

Ruben Melkonyan
(summary)

According to the range of sources including Turkish during the Armenian Genocide many children were not murdered, but captured by Turks and Kurds, then forcedly Islamized and had to live as either slaves or victims of harem. Recently some examples of the cruel stories of Armenian orphans and their islamization are represented in the documentary-fictional works in Turkish. «Memories of the exile of the child «M. K.» (2005) written on the basis of memories of Armenian Manvel Kirkyasharyan born in 1906 in Adana or family memories on Genocide of Germany living Armenian Sargis Imas «Sargis loved these lands» (2008) are among these examples.

Նախագծել Պողոսյան

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ
ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԹՈՒՐՔ ԳՐՈՂՆԵՐԻ
ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ՝

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, Գերմանիա-
թուրքական համայնք, թուրքական գրականություն,
ոգեված թեմա, բռնի իսլամացում

Ինընության փնտրուքների խաչմերուկներում, որքան էլ զարմանալի թվա, Գերմանիայի թուրք գրողների համար, թերևս ինչ-որ գենետիկ հիշողության կանցով, ուսումնասիրման և քննարկման առարկա է դառնում Հայոց Ցեղասպանության հարցը: Այս թեմային ծավալուն անդրադարձների ենք հանդիպում հատկապես Գերմանիայի թուրք գրողների 1990-ականների կեսերին զրված ստեղծագործություններում: Անշուշտ, ժողովրդավարական ու ազատական եվրոպական հասարակությունը պարարտ հող էր ստեղծում պատմական իրողությունները բազմակողմանի ուսումնասիրելու և օբյեկտիվ գնահատականներ տալու համար: Արդեն եվրոպական նորմերով մեծացած Գերմանիայի թուրք գրողների համար թերևս փոքր-ինչ ավելի հեշտ էր կոտրել Թուրքիայում այդ ժամանակ դեռ խստագույնս պահպանվող Ցեղասպանության տարրուն:

Հարկ ենք համարում նշել, որ թուրքական իշխանություն-ները մշտապես փորձել են երկրից դուրս բնակվող քաղաքա-գիների շրջանում պահպանել արտաքին և ներքին քաղաքա-

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրված ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № SCS 13YR-6B0034 գիտական թեմայի շրջանակներում:

կան մի շաբ հարցերի շուրջ՝ ինչպես, օրինակ, Քրդական հարցը, Կիպրոսի խնդիրը, Հայոց Ցեղասպանության ժխտումը, իրենց ձեռնտու ընկալումները: Այս պատակով Թուրքիայի դիվանագիտական ներկայացություններն, իսկ ավելի ուշ նաև պաշտոնական Անկարայի կողմից ֆինանսավորվող ամենատարբեր հասարակական կազմակերպությունները բավական ակտիվ գործունեություն են ծավալել Գերմանիայում թուրքական համայնքի սկզբնավորման առաջին տարիներից: Միջանկյալ շեշտենք, որ Թուրքիայի կառավարության 2010 թ. որոշմամբ արտերկրում բնակվող թուրքերի և ազգակից հասարակությունների վարչության² ստեղծումից հետո այս գործունեությունը սկսեց ավելի համակարգված և ուղղորդված բնույթ կրել և ներկայումս իրականացվում է ոչ միայն քաղաքական, հասարակական, այլ նաև կրթական ու մշակութային մակարդակով: Բնական է, որ բոլոր այս մակարդակներում գործող ամենատարբեր թուրքական կազմակերպությունների թիրախային կետերից մեկն էլ մշտապես եղել է Հայոց Ցեղասպանության մերժողականության ամրապնդումը և հակահայկական լոբբինգը (փոփոխական հաջողությամբ):

Այս պայմաններում, պարզ է, որ Հայոց Ցեղասպանության ոչ թուրքական տարրերակը ներկայացնող ստեղծագործությունները հիմնականում անընդունելի են թուրքական համայնքի համար: Սրան ավելացնելով Թուրքիայից անխուսափելիորեն եկող բացասական անդրադարձը կարող ենք փաստել, որ նույնիսկ Եվրոպայում բնակվող թուրք գրողի համար Ցեղասպանության թեմային անդրադարձ կատարելով բավական համարձակ քայլ է, որն արժանի է ուսումնասիրման և արժենորման:

² Վարչության մասին մանրամասն տե՛ս պաշտոնական կայքէջում՝ <http://www.ytb.gov.tr>

Գերմանաքննակ թուրք գրողների շարքում Հայոց Ցեղասպանության թեման վեր են հանել Զաֆեր Շենոցարը, Էմինե Մազի Օգդամարը, Քեմալ Յալշընը: Ընդ որում, եթե ք. Յալշընի ստեղծագործություններն որոշ շափով հայտնի են հայ ընթերցողին, իսկ նրա «Սիրտս քեզնով է խայտում» գիրքը նույնիսկ հասանելի հայերենով, ապա է. Ս. Օգդամարի և Զ. Շենոցարի անունները Հայաստանում գրեթե արծարծված չեն: Մինչեն երանց ստեղծագործություններում Հայոց Ցեղասպանությանը վերաբերող ակնարկները, առաջին հայացքից հպանցիկ բավացող հիշատակումները բավական ուշագրավ են:

Ցեղասպանության թեմային փոքրիկ ակնարկով անդրադարձել է նաև ավելի վաղ սերնդի գրող Նիհաթ Բեկրանը: Նրա «Օտարություն» գրքի հերոսներից մեկը՝ Մուսան, իր որդուն՝ Վեյսելին քառասունքից դուրս գալուց հետո ուղարկում է Կարսի մոտակայքում գտնվող հայրենի գյուղում ապրող իր տարեց քրոջ մոտ: Քույրը երեխային չորս տարվա ընթացքում հերքարի փոխարեն անընդմեջ 1910-ականների հայկական դեպքերն է պատմում. «Գարբիսյանը 30 մարդով Ուզունմինարեն գրավեց: Իմամ Սեիդը մինարեի վրա երեկոյան էզան էր կարդում: Արքա Բեյը ձիով դուրս եկավ Միրզա Բեյի մոտ: Լուր տարավ: Զիմշիթը Բյույուք գերեւում էզանի ավարտին էր սպառում: Հորքերը սկսեցին բառաշել, ոչխարները մկկալ: Ազուակները զգացին արյան հոտը: Գյուղը տակնուվրա եղավ: Ստվերները սև ամառերի նման կախվեցին երկրի վրա: Զագերը կաղկանձում էին, շները ոռնում: Զիերը խրտնել էին, թխսկան հավերը ձագերին հավաքելով բներն էին բաշվում: Նազարյանը դանակը կոկորդում ընկապ Ասլան Բեյի դրան մոտ: Զարկերակից հոտող արյունը ձեռքից շուտ հասավ դրան բռնակին... Երեսը մրցունները պատեցին: Զայնը խոպտեց, խեղդվեց»³:

³ Behram N. , Gurbet, İstanbul, 1998, s. 35.

Զ. Շենօչարի «Կտանգավոր բարեկամություն» վեպը թուրքական միջավայրում Հայոց ցեղասպանությանը անդրադարձող առաջին ստեղծագործություններից է: 1998 թ. գրված այս վեպով ամբողջանում է ավելի վաղ տպագրված «Ներքնաշապիկով մարդը» և «Դրերիա» ստեղծագործությունների գիշավոր հերոսի՝ Սաշայի կյանքը: Մեծ ճանաչում չվայելող գրող Սաշան փորձում է սեփական ես-ը գտնել գերմանական հասարակության ոլորաններում: Թուրք հորից և գերմանացի-հրեա մորից սերող Սաշան ինքն իրեն հասկանալու համար նույնիսկ մեկնում է ԱԱՆ, սակայն այնտեղ էլ չգտնելով իր հարցերի պատասխանը՝ վերադառնում է Գերմանիա:

«Կտանգավոր բարեկամություն» վեպը սկսվում է տխուր իրողության փաստմամբ: Սաշայի տարիներ առաջ բաժանված ծնողները նրա համար անհասկանալի պատճառով նույն ավտոմեքենայով վրարի են ենթարկվում և զրիվում: Որպես միակ ժառանգ, նա ստանում է բավական լուրջ կարողություն: Սակայն, երբեք գումարի կարիք չունեցած, Սաշայի համար առավել մեծ կարևորություն է ներկայացնում հորից մնացած արծաթյա տուփը, որտեղ պահված են դեռևս 1936 թ. ինքնասպանություն գործած պապի օրագրերը: Գուցե՞ այս «մոխրագույն կազմով, սովորական ֆրանսիական» տեսրերի արարատառ և ոռուսատառ զրությունները լույս կսփռեն պապի տարօրինակ ինքնասպանության պատմության վրա և կօգնեն հերոսին ավարտի հասցնել իր կյանքի փնտրությունները: Գրականագետ Ջեյմս Չորդանը գրում է. «Սաշան հույս ունի, որ գոյություն ունի բացահայտման կարու հստակ ինքնություն և որ ընտանիքի անցյալը պարզելուն պես բոլոր կապերն ինքնըստինքյան կհաստատվեն»⁴: Տեսրերն այնքան կարևոր են թվում հերոսին, որ նա նույնիսկ չի ուզում դրանց

որևէ մեկին ցույց տալ, որոշում է ինքնուրույն սովորել թուրքերն և համարելով արաբերներից իր ունեցած սակավ գիտելիքներն ապակողավորել գրություններն, ապա դրանց հիմն վրա պապի մասին վեպ գրել: Որոշ ժամանակ անց, սակայն, Սաշան հասկանում է այս աշխատանքի ապարդյունությունը և դիմում թարգմանչի օգնությանը: Մի քանի ամսվա ընթացքում մաս-մաս թարգմանվող տեսրերից նա անպատճելի բացահայտումներ է անում:

Այս պատմության ամբողջ ընթացքում, որ ներառում է սոսիք ստանալուց մինչև օրագրերի թարգմանությունները ընթերցողին ներկայացնելու պահը, երկխոսություններ գրեթե չկան, այուժեն կառուցված է Սաշայի հոգեվիճակը արտացոլող մտորումների ներկայացման վրա: Այդ մտքերն իրականում ոչ միշտ են կապված պապի օրագրերի կամ ինքնության խնդրի հետ: Իրարից համարներով առանձնացված գրքի 35 գլուխները արտացոլում են գերմանական հասարակությանը հուզող ամենատարբեր խնդիրների վերաբերյալ այդ խնդիրների պրիզմայում բնակվող հրեա-թուրքի տեսանկյունը: Գլուխները հստակ տրամաբանական կապ չունեն՝ իրար հաջորդելով ու միախառնվելով ըննության են առնվում պապի ինքնասպանությունից մինչև Բեռլինի պատի քանդման պատճառներն ու հետևանքները ներառող հարցեր:

Գրքի ողջ ընթացքում պապը, ում անունն այդպես էլ հայտնի չի դառնում, բայց ով վաստորեն կարևորագույն գործող անձ է, միայն հապանցիկ է հիշատակվում: Այստեղ-այնտեղ թարնված փաստերն ի մի բերելով՝ հասկանում ենք, որ Սաշայի պապը ծագումով Կարսից է (այստեղից է ոռուերեն տառերի իմացությունը): 1914-1918 թթ. օսմանյան բանակի զինվոր է եղել: Բաց գույնի մաշկ ունենալու և հայերենին ու ուստրենին լավ տիրապետելու շնորհիվ հետախուզական աշխատանքով է զբաղվել⁵: Պատերազմի տարիներին հայերի

⁴ Jordan J., Zafer Şenocak's essays and early prose fiction: from collective multiculturalism to fragmented cultural identities, Zafer Şenocak, editors: CHeesman T., Yeşilada K., Cardiff, 2003, p. 101.

անուններով առաջին ցուցակը նա է կազմել: Այդ ցուցակում 500 անուն պետք է լիներ: Մեկը դուրս է մնացել ցուցակից: Մի կնոջ անուն: Բայց ինչո՞ւ⁶: Այս հարցն ամենասկզբից հուզում է Սաշային: Հատկանշական է, որ նրան չի հետաքրքրում, թե 500 անուն ներառող ցուցակն ինչ նպատակով է կազմվել: Այսինքն՝ ի սկզբանե հեղինակը նպատակ չի դնում ներկայացնել Հայոց ցեղասպանությունը: Այն ավելի շուտ ֆոնային երևույթ է, քան հիմնական թեմա: Ուստի զարմանալի չէ, որ հեղինակն որևէ բացատրություն չի էլ տալիս: Միայն պապի օրագրից 1921 թ. փետրվարի 21-ին արքած մի գրություն է մեջբերում. «Մեր մշակույթում մեղավորություն տերմինը չկա: Մենք միայն մեղր գիտենք: Մեղրը մեր կրոնական, աստվածային գոյության առջև ունեցած պատասխանատվության սահմաններն է շրջագծում: Սակայն երբեմ ինքներս մեր առջև պատասխանատվություն չենք զգում: Մեղավորությունը մադկային հարց է: Մարդին իր մեղրի հետ միշտ դեմ դիմաց է: Մենք միայնակ մնալուն սովոր չենք»⁷:

1920-ական թվականներին պապն եղել է քեմալական շարժման ակտիվ մասնակից, կովել «մեծ փրկիչ» Սուսրաֆա Քեմալի կողքին: Ավելին, «մեծ փրկիչը» Սաշայի պապի ու տատի հարսանիքի վկան է եղել: Հանրապետության հոչակումից հետո պապը կարողացել է լուրջ հաջողությունների հասնել, նույնիսկ Սումբուլում համայնքապետ դառնալ: Պապի կերպարի ողջ նկարագրությունն այսքանով է սահմանափակվում: Ամբողջ գրքի ընթացքում պահպանվող այս անհստակությունը, տողատակերում ինչ-որ քան գտնելու, կիսասպարտ նախադասություններում թաքնված փաստեր հայթայթելու անհրաժեշտության ինտրիգ է ստեղծում, ստիպում անընդհատ լարված մնալ և անհամբեր սպասել վերջաբանին: Սակայն հեղինակը բնակ չի շտապում: Եվ մեղրի

գցացման կամ հայերի ցուցակների մասին մտորումներից հանկարծակի անցում է անում, օրինակ, պատերազմից հետո պարհացած գերմանացի կանանց խնդիրներին:

Չուտ գերմանական խնդիրներին գրքում բավական լուրջ տեղ հատկացնելու փաստը հստակ արտացոլում է հեղինակի դիրքորոշումը: Գերմանիան կարևորագույն դեր ունի նրա կյանքում: Մինչդեռ Թուրքիային շատ քիչ տեղ է հատկացված: Հերոսի համար Թուրքիան հեռու, անձանոր մի երկիր է նա ոչ թուրքերեն գիտի, ոչ էլ առանձնապես ծանոթ է թուրքական մշակույթին: «Երբեք թուրքերեն որպես այդպիսին չեմ կարողացել սովորել: Միայն մի քանի քան գիտեմ: Միջին գերմանական տուրիստից ոչ ավելի», - անկեղծորեն ասում է Սաշանք: Ավելին, Թուրքիան գրքում ներկայացված է հիմնականում բացասական երանգներով: Օրինակ, պապի կենսագրությունը ներկայացնող մի դրվագ հստակ արտացոլում է Թուրքիայում տիրող ոչ ժողովրդավարական մթնոլորտը. «Պապս 35 տարեկան են: Ուժեղ մարդ է: Համայնքապետի թեկնածու: Մրցակիցն էլ է նույն կուսակցությունից: Պապս կեղծիք է անում, որպես կաշառք ընտրողներին ընտրությունից առաջ ձախ ոտքի կոշիկներ է բաժանում են: Սյուսն էլ ընտրությունից հետո է խոստանում տայ: Պապս ընտրությունից կոշիկի գործարան է հիմնում: Ընտրություններում հաղթում է»⁸: Ավելին, մարտահրավեր նետելով Աթաքուրի անվան անձեռնմխելիությանը՝ հեղինակը մի տեսակ հեգնանորվ է գրում բոլորին կրթելու, քաղաքակրթելու նրա մոլոցի մասին: «Միզուց նա կարողացավ փրկել, բայց քաղաքակրթել՝ երբեք»⁹: Նման վերաբերմունքը հատկապես աչքի է ընկնում, քանի որ գրքում ինչ-որ իրադարձությունների կամ մարդկանց հստակ գնահատականներ գրեթե չկան: Հեղինա-

⁶ Նույն տեղում, էջ 38:

⁷ Նույն տեղում, էջ 110:

⁸ Նույն տեղում, էջ 12:

⁹ Նույն տեղում, էջ 38:

¹⁰ Նույն տեղում, էջ 30:

կը միշտ աշխատում է փաստերի համարությամբ վերջնական հետևողունները թողնել ընթերցողին:

Փոքր-ինչ այլ է վերաբերմունքը մորական կողմից իրեն ժառանգություն հասած հրեական արյան նկատմամբ: Հրեական մշակույթն էլ Սաշային առհասարակ հետաքրքիր չէ: Սոր ջանքերով մինչև ուղնուծուծը գերմանական ստանդարտներով ապրող այդ մարդը, սակայն, իրեն գերմանացի էլ չի կարող համարել, քանի որ կարծես ամրող հասարակությունն է դրան դեմ դուրս գալիս: Նույնիսկ Գերմանիայի խնդիրներին անդրադարձող նրա գրքերն են ընթերցողի զարմանքն առաջացնում: ընթերցողն ուզում է տեսնել հեղինակի օտարական, միզրանտ լինելը ընդգծող ստեղծագործություններ, ինքնության փնտրությում տվյալտվող հերոսներ: Պատահական չէ, որ Սաշայի կարծիքով «Գերմանիայում որքան շատ ես ուզում գերմանացի թվայ, այնքան ավելի օտար ես դառնում»¹¹: Այս խնդիրը գրող Զ. Շենոցարին բավական շատ է հետաքրքրում: Լինելով երկրորդ սերնդի միզրանտ, նա թերևս մշտապես առերեսվել է երկու մշակույթի մեջտեղում ոչ մի մշակույթին չպատկանելու խնդրին: Պատահական չէ, որ գրքի գլուխներից մեկում հերոսին տալով թուրքական համայնքի ներկայացուցիչների հետ հարցազրույցների հիման վրա նրանց մասին հոդվածներ պատրաստող լրագրողի աշխատանք, Զ. Շենոցարն, ինքն իրենից հարցազրույց վերցնելով, պատմում է իր կյանքի, իր փորձառության մասին: «Գրող եմ, - ասում է նա, - ոմանց կարծիքով թուրք գրող: Այս թուրք գրողը, սակայն, գերմաներեն է գրում: Այժմ գերմանական անձնագիր ունի, սակայն միննույն ժամանակ արտասանությունը դեռևս շատ դժվար համարվող այնպիսի մի ազգանուն ունի, որ ամեն անզամ ստիպված է տառ առ տառ կողավորել այն. Շ - Շամուել, Է - Էմիլ, Ն - Նյուրնբերգ, Օ - Օտտոն, Զ - Զե-

առ /Կեսար/, Ա - Արկտիկա, Ք - Քարլ: Այսպիսով, մի էկզոմիկ անունից յոթ ծանոթ անուն է ծնվում»¹²:

Թեև հրեական մշակույթը կարևորություն չի ներկայացնում հերոսի համար, սակայն Գերմանիայում և ընդհանրապես աշխարհում հրեաների ունեցած ազդեցության, Հոլոքոստի և հետհոլորուստային Գերմանիայի մասին մտորումներն կարևորագույն ներ ունեն նրա համար: Գերմանիայում տառածված համբարձանուր մեղքի զգացման ալիքի վրա հրեաների մասին գրքում խոսվում է անսահման ակնածանքով, մինչդեռ քրիստոնյաները ներկայացվում են որպես սադրիչներ ու դավաճաններ: Ըստ որում, այս իդեալականացված վերաբերմունքին առաջին հերթին արժանանում են Թուրքիայի բնակվող հրեաները՝ դարեր շարունակ Օսմանյան կայսրության հլու-հնազանդ և հավատարիմ հպատակները: Մինչդեռ քրիստոնյաները ոչ միայն դարերով հալածել են հրեաներին, Իսպանիայից Օսմանյան կայսրություն զալուց հետո նրանց դիտարկել որպես թշնամիներ, այևս կազմակերպել Հոլոքոստ և այսօր էլ շարունակում են անտիսեմիտիզմի զաղափարներ քարոզել ոչ միայն Գերմանիայում, այևս ամրող աշխարհում: Ավելին, ներկայացնելիս կնոջ՝ Մարիի Սալոնիկ գործուղումը, Սաշան չի մոռանում շեշտել, որ երբ քաղաքն անցավ Հունաստանին, հրեաներն էլ թուրքերի հետ միասին լրեցին այն: Օսմանյան կայսրության փլուզումը Բալկաններում բնակվող հրեաների համար ամենաքիչը թուրքերի չափ աղետալի եղավ: Քրիստոնյաները շատ լավ էին հիշում, ինչպես հրեաների պոտենցիալ թշնամի լինելը, այնպես էլ Օսմանյան կայսրությունում հրեաների և թուրքերի միջև մտերմությունն ու փոխըմբռնումը¹³:

Հեղինակի համար հրեական և թուրքական ճակատագրերի միասնականության ու բարեկամության լրջագույն ապա-

¹¹ Նոյն տեղում, էջ 93:

¹² Նոյն տեղում, էջ 95:

¹³ Նոյն տեղում, էջ 68:

ցույց է այն փաստը, որ ինչպես XVI դարում հազարավոր հրեաներ տեղափոխվեցին Թուրքիա, այնպես էլ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Սաշայի մոր ընտանիքը և նրանց հետ մեկտեղ բազմաթիվ այլ հրեաներ նացիստական հետապնդումներից զերծ մնալու համար տեղափոխվում են Ստամբուլ: Պատերազմի նախօրեին և դրա տարիներին, հեղինակի վկայությամբ, «գերմանական հրեաների համայնքը Թուրքիայում գնալով ավելանում էր: Շվեյցարիայում գործող կազմակերպությունը հրեա գիտնականներին՝ իրավաբաններին, տնտեսագետներին, բանասերներին ուղարկում էր թուրքական համալսարաններ»¹⁴: Այն փաստը, որ Թուրքիան Գերմանիայի լուր դաշնակիցն էր, գրում անտեսվում է: Բայց կրկին առաջ է քաշվում քրիստոնյաների ու հրեաների հակադրումը: Մասնավորապես, գրում շեշտվում է, որ Երկրորդ համաշխարհայինի տարիներին Ստամբուլի Թորաքյան հայկական հյուրանոցը¹⁵ նացիստների հավաքատեղի էր, ուր հրեաների մուտքն արտոնված չէր:

Հրեաների նկատմամբ ընդգծված լավ վերաբերմունքն արդեն իսկ նշված գերմանական հասարակության մեջ տարածված մեղքի կոմպլեքտվ բացատրվելու հետ միասին մեկ այլ հիմք էլ ունի: 1970-ականներին Գերմանիայում թուրքերին

¹⁴ Նույն տեղում, էջ 52:

¹⁵ Թորաքյան հյուրանոցն, խկապես, հայտնի է եղել Ստամբուլում: Սակայն, նրա տերն էլ է դարձել Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում կիրառված Ունեցվածքի հարկի գոհ: Երբ հայ գործարար Թորաքյանը բոլորի համար անսպասելի կերպով կարողացավ կանխիկ հավաքել իր համար սահմանված բավական խոշոր 1 մլն լիրա հարկի գումարը և տարավ այս Ստամբուլի հարկային վարչություն, թուրք պաշտուեաները հանկարծակի հայութաբեցին, որ նրա հարկը ոչ թե 1 մլն, այլ 10 մլն թուրքական լիրա է և սխալմամբ մեկ գրո չի գրվել: Լսելով այս՝ Թորաքյանը սրտի կաթված ստացավ: Այս մասին մանրամասն տես Սելրոնյան Ռ., Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության (1920-ականներից մինչև մեր օրերը), Եր., 2010, էջ 19:

հաճախ էին համեմատում հրեաների հետ: Ըստ որում, համեմատությունը միշտ էլ հրեաների օգտին էր: Հեղինակն այս իրողությունը ներկայացնում է օգտագործելով մի այրի կնոջ հետևյալ խոսքերը. «Հիմիկվա թուրքերն այն ժամանակվա հրեաներից շատ ավելի վատն են: Հրեաներն զնե գերմանացի էին հասնում, գերմանացիների պես էին իրենց պահում... Հրեաների ու գերմանացիների միջև ատելությանը միախառնված սեր կար, սակայն թուրքերի ու գերմանացիների միջև ատելությունից բացի ուրիշ բան չկա»¹⁶: Գրքի մեկ այլ եպիզոդիկ հերոս՝ Հայնրիխը, ում հետ Սաշան ծանրթանում է համալսարանի գրադարանում 1930-ականների թուրք-գերմանական հարաբերություններն ուսումնասիրելիս, ասում է. «Գերմանացիները պատմությունից ոչինչ չեն սովորել: Հիմա էլ թուրքերին վերցրին-բերին: Մինչեռ նույնիսկ հրեաների հետ կոմպրոմիսի չեն եկել»¹⁷: Գրքում մեջբերված են նաև գերմանացի լրագրող Կառլ Շումանի հետևյալ դիպուկ խոսքերը. «Թուրքերի մեծարվությունը նվազեցնում է եվրոպական ազգերի պաշտպանվելու ուժը: Արաթուրքի բարեկոնսումները միայն թուրքերի հագուստներն եվրոպական դարձրին: Սակայն դիմակները չեն կարող թաքցնել նրանց ասիական, արևելյան բնույթը: Թուրքերը կայսերական ազգ են: Իշխող ազգ: Միշտ ուզում են իշխանությունն իրենց ձեռքը վերցնել: Հրեաների զոհի շապիկը նրանց չի սազում: Հրեաներից տարրերվում են, իշխանություն են ուզում: Արվեստով ու գիտությամբ չեն բավարարվելու: Դրանք թուրքերի ուժեղ կողմերը չեն: Բանակ և քաղաքականություն են ուզում մտնել: Քանի որ կարողանում են լավ ելույթ ունենալ ու պատերազմ վարել»¹⁸: Փաստորեն, Գերմանիայի համար ավանդական հրեաներ-գերմանացիներ հակամարտության մեջ 1960-ականներից մինչև մեր օրերը».

¹⁶ Տեսօնակ Z., նշվ. աշխ., էջ 62:

¹⁷ Նույն տեղում, էջ 77:

¹⁸ Նույն տեղում, էջ 81:

կաններից որպես երրորդ կողմ ընդգրկում են նաև թուրքեր: Ըստ Զ. Շենօջարի, մեր օրերում «ո վ է խսկական գերմանացի» հարցի պատասխանը, այսինքն՝ սեփական ինքնուրյան փնտրութը, պեսար է դիտարկել թուրքեր, զերմանացիներ, իրեաներ եռանյան համատեքստում: Զ. Շենօջարը գերմանաբնակ թուրքերի մեծ մասին այնքան հուզող սեփական ես-ի հարցը ձևակերպում է վերաշարադրելով հայտնի հերիարի բառերը. «Հայելի, հայելի ինձ ասա, ով է այս Գերմանիայում ամենազերմանացի»¹⁹: Հարցը, սակայն, հուետորական է և պատասխան ակնկալելն էլ անհմատ:

Գրում զարգանում է փոքրիկ երկրորդ այուժետային գիծ, որն անմիջական կապ ունի հայերի հետ: Սաշայի կինը՝ գերմանուիի Մարին, վավերագրական ֆիլմ է նկարահանում Թալեաթ փաշայի մասին: Թալեաթի կերպարի վերաբերյալ Մարիի դիրքորոշումն հստակ է. հարյուր հազարավոր անմեղ զոհերի մարդասպանը արդարացում չունի: Սակայն այս փաստը զարմանալիորեն տիհած է Սաշային: Որքան էլ նա հեռու է իր թուրքական արմատներից, այնումենայնիվ, նա ըմբռատանում է Թալեաթ փաշայի ցեղասպան, վայրենի թուրքի կերպարի դեմ: Նա նույնիսկ կնոջը մեղադրում է Թալեաթ փաշայի կերպարը միայն Եվրոպական աղբյուրների հիման վրա ձևակորելու մեջ և առաջարկում նրան ծանրանալ Թալեաթի գործունեությանը նվիրված թուրք հեղինակների անդրադարձներին՝ միակողմանի կարծիքից խուսափելու համար: Դիմելով կնոջը և կնոջ կերպարում, անշուշտ, ամբողջ Եվրոպային, նա ասում է. «Խսկական արևելյան ժողովուրդ հայերին միայն մուտուլմանների շրջապատում ապրող քրիստոնյաներ լինելու համար արևմտյան են համարում: Արա հետ մեկտեղ տարածաշրջանի բոլոր ժողովուրդներից առավել ուժեղ արևմտյան կողմնորոշում ունեցող թուրքերին մուտուլման լինելու պատճառով երբեք Եվրոպայի, Արևմտյան

թի մաս չեն համարում»²⁰: Ավելին, Ժխտելով հայերին կոտորելու թուրքերի միտումը՝ միաժամանակ պատմությունից պրիեսակներ բերելով, Սաշան ուզում է ցույց տալ, որ նույնիսկ նրեւ հայերի զանգվածային սպանություններ են եղել, դա դեռ առգեստ բարձրացնելու առիթ չէ. «Ֆրանսիացիներն էլ Ալժիրում են կոտորած կազմակերպել, իսկ բրիտանացիներն ընդհանրապես աշխարհի կեսը կողոպտել են, սակայն նրանց Եվրոպայի Խորհրդից և Եվրոպայի Միությունից չեն հանել: Դուք, Եվրոպացիներդ, կեղծ խաղ եք խաղում, երկերեսանի եք: Սպիտակ մարդը միշտ երկերեսանի ե»²¹: Արյան կանչն է ատիպում Սաշային նման արտահայտություններով նեղացնել սիրելի կնոջը, թե՝ սա Եվրոպական ազատականության ու հավասարության սկզբունքների ծայրահեղ արտահայտումն է Հեղինակն եզրահանգումները թողնում է ընթերցողի հայեցողությանը: Նույնիսկ Թալեաթ փաշային վերաբերող որևէ գևահատական, վերջնական կարծիք գրքում չենք գտնում: Սաշան ինքն իրեն հարցնում է. «Թալեաթ փաշան Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում հարյուր հազարվոր հայերի օսմանյան կայսրությունում բռնազարդի համար պատասխանատո՞ւ է: Ինչպես ս կարող եք լուսավորության կողմնակից, հաջողակ քաղաքական գործիչը զանգվածային սպանության կազմակերպիչ լինել»²²: Հարցը մնում է անպատճախան: Մարին մեկնում է Սալոնիկ, ապա Թուրքիա՝ նոր նյութեր հավաքելու: Ըսթերցողը չի իմանում, սակայն, թե ինչեր է նա այստեղ բացահայտում իր համար, նոր տեղեկություններն ամրապնդում են նրա կարծիքը, թե՝ գործե ստիպում հրաժարվել կտրուկ զնահատականներից: Կարծես հեղինակը չի ուզում կարծիքը պարտադրել, միայն մտածելու համար հիմք է ստեղծում:

¹⁹ Նոյն տեղում, էջ 85:

²⁰ Նոյն տեղում, էջ 65:

²¹ Նոյն տեղում, էջ 67:

Սաշայի մեկը մյուսին հետևող մտքերի հորձանուտում պապի մասին տրվող ցարուցրիվ տեղեկություններն ամբողջանում են գրքի վերջին գլխում: Տետրերն ընթերցված են, պապի ու, հետևաբար, նաև ամբողջ ընտանիքի պատմության մի մեծ գլուխ՝ բացահայտված: Փաստորեն, Առաջին համաշխահային պատերազմի տարիներին որպես օսմանյան զինվոր պապը մասնակցել է հայերի տեղահանությանը: Արդեն հիշատակված ցուցակի նպատակը կազմակերպված արտորն էր: 500 հոգուց միայն մեկի անունն է ջնջել, մնացածներից և ոչ մեկի չի խոհացել, ոչ մեկի հանդեպ մեղքի զգացում չի ունեցել: Ավելին, չնայած երկիրն աղքատացել է, բայց նա կարողացել է երկրի արևելքում ստեղծված կողոպուտի հնարավորություններն օգտագործել և տեղահանվածների «լքյալ գույքի» հաշվին հարստանալ, քանի որ, իր իսկ վկայությամբ, «նրանց վերադարձն կտրականապես անհնարին է: Դրա համար անհրաժեշտ ամեն ինչ արված է»: Սաշան, վերաձևակերպելով պապի նորերը, գրում է. «Հաշվի չեր առնում, որ մի օր նորից ստիպված է լինելու անցյալի մասին մտածել: Երեկ երեկ էր, այսօր այսօր է, հատկապես, երբ պետք է անցած գնացածը մոռանալ»: Ավելին, պապը գտնում էր, որ իր երկրի անցյալով կարող է հպարտանալ, քանի որ «նոյնիսկ բոլոր պարտություններից հետո ոտքի վրա մնաց: Ամեն անզամ վերջնական հաղթանակին հավատաց: Հաղթեց: Թանկ վճարեց: Սակայն, եթե հաղթանակի համար թանկ չես վճարում, հաղթանակն արժեք չի ունենում: Իրական հաղթանակները ձեռքբերման հետ կապ չունեն: Կորուստներով են լի»²³.

Պապն էլ, չնայած հաղթանակել է, հերոս է հոչակվել, բայց կորցրել է իր կյանքի ամենակարևոր կնոջը, իր կյանքի իմաստը: Նորից մեջքերելով պապին՝ Սաշան գրում է. «Այն կնոջը սիրում էր: Այն ժամանակ, սակայն, դեռ զիտեր, թե սերն ինչ-պիսի զգացմունք է: Կարծում էր, որ այդ զգացմունքն իրեն չի

սազում: Սպանելու համար էր պետք պայքարել, ոչ սիրելու: Այն ժամանակ կյանքն իմաստ ուներ»²⁴: Ճակատազրի հեղնանքով այդ կինը հայուիի է: Նրա անունն է ջնջել տխրահոշակ ցուցակից: Ընթերցողի համար, սակայն, անհայտ մնացող պատճառներով այդ կինն էլ է տարազրվել: 1936 թ. անցյալից ստացված մի նամակ տակնուվրա է անում պապի կարծես թե հաջողված կյանքը: Նամակից ընդամենը մի քանի տող մեջքերելով՝ հեղինակը ներկայացնում է մի ամբողջ կործանված կյանքը: Կինը գրում է. «Մեր աղջիկը քեզ չի ճանաչում: Մինչդեռ արդեն 20 տարեկան է: Կարծում է, հայրը մահացել է: Այսքան էլ հեռու չի ճշմարտությունից, այնպէս չէ: Թե ինձնից անտեղյակ դեռ ապրում ես: Եթե այլս չկարողանանք միասին լինել, կյանքիդ վերջ ես տալու, չի՞ր խոստացել... Փախուստի ճանապարհին հազար անգամ հարձակումների ենթակվեցի: Գուցե մեր երեխան էլ քեզնից չի, դեմս դուրս եկած մորթարարներից և զինվորական համազգեստով վիժվածքներից է»²⁵: Պապի դասավորված կյանքն մի ակնթարթում տակնուվրա է լինում: «Դորում էր, - պատմում է թոռը, կյանքի միակ սիրած կինը նա էր: Ինչպէս սէ էր այսքան տարի առանց նրա ապրել: Ինչպէս էր կարողացել ուրիշ կնոջից երեխա ունենալ»: Նա այլս չի կարող սպասել: Նա իրագործում է իր խոստումը:

Գիրը նման վերջարան ունի: Ոչ մի մեկնաբանություն: Ի՞նչ է զգում Սաշան: Ինչպէս է փոխվում նրա աշխարհայացքը: Զոհի ու դահիճի արյունը կրելու գիտակցությունը ինչի՞ կիանգեցնի: Ոչ մի հստակ պատասխան: Ցեղասպանությունը զրքի այուժեի առանցքային մասն է կազմում, սակայն կարծես շշոշափված է մնում: Չկան մանրամասն նկարագրություններ, փաստեր, թվեր: Ինչո՞ւ, ինչպէս և ո՞ւր են ուղարկել հայերին, ի՞նչ է պատահել նրանց հետ: Այս հարցերի

²⁴ Նոյն տեղում, էջ 126:

²⁵ Նոյն տեղում, էջ 127:

պատասխաներն ամփոփված են վերը նշված հակիրճ նախադասություններում։ Հայերը տեղահանվել են, սպանվել, կոռոպտվել, ունեզրկվել։ Ավելին, երիտթուրքերն ու քեմալականները գրեթե նույնականացված են՝ պապի անցումը մի թեից մյուս թե հեշտ ու բնականու է թվում։ Այս ամենը, սակայն, պարզ գրված չէ, այս ամենը պետք է տեսնել տողատակերում։ Գրականագետ Լ. Անդրեսոնը գրում է. «Տեսուն (ի նկատի ունի Զ. Շենոչարի «Վտանգավոր բարեկամությունը») երեք հստակ չի ներկայացնում 1915 թ. Հայոց Ցեղասպանությունը։ Սակայն այն առաջինն է ներկայացնում հայերի տեղահանության ցուցակները»²⁶։ Թերևս Զ. Շենոչարը միտումնավոր չի տալիս պատրաստի լուծումներ՝ թույլ տալով, որ ամեն մարդ ինքն իր համար որոշի հնարավոր հանգուցալուծումը։ Կամ հեղինակն ինքն էլ չգիտի, թե որն է բարդագույն գուխոտրուկի բանալին։

Այսպիսով, Զ. Շենոչարի «Վտանգավոր բարեկամություն» վեպը յուրօրինակ անդրադարձ է Հայոց Ցեղասպանության թեմային։ Գրքում թեև քողարկված, բայց ներկայացված են Հայոց Ցեղասպանության հիմնական պատկերները։ Գրքում չկա որևէ քննադատություն, բացասական վերաբերմունք, բայց ստահու ժխտողականություն ու խեղաթյուրում էլ չկա։

Հարկ է նշել, որ Հայոց Ցեղասպանությանը վերաբերող անդրադարձներ հանդիպում ենք Զաֆեր Շենոչարի նաև այլ ստեղծագործություններում։ Օրինակ, նրա «Ուր ենք զնում» վեպի զիսավոր հերոսի՝ արվեստի գործերի ոչնչացումով զբաղվող թուրք երիտասարդ Զումեյթի երազների կինը՝ Լարան, ով փոքր հասակում իրեն դայակություն է արել, ծագումով հայ է։ Հեղինակը ներկայացնում է Լարայի կյանքի պատմությունը։ Նրան գտել են զնշուներն արևելքի լրված զյուղե-

րից մեկի ավիրված եկեղեցու դրան մոտ սարսափելի ցրտից կիսատ-պուտ պաշտպանող մի ծածկոցի մեջ փաթաթված։ Երեխայի կենդանի մնալն արդեն հրաշք պետք է համարվի։ Գնչուները նրան որոշ ժամանակ իրենց հետ պահելուց հետո վաճառել են²⁷։ Չամ դառը օրեր է ապրել Լարան և որ ամենասարսափելին է ուր տարեկանում, եթե Անկարայում մի վաճառականի տանն էր ապրում, ենթարկվել է դաժան սեռական բռնությունների, որի բաց նկարագրությունը տրվում է գրքում²⁸։

Այսպես, ձեռքից ձեռք անցնելով, 15 տարեկանում Լարան հասել է Զումեյթի տուն։ Զումեյթի ընտանիքում ապրած տարիները Լարայի համար ամենաերջանիկն են եղել։ Այդտեղից էլ, սակայն, ստիպված հեռացել է. «... օդանավակայանի Ճանապարհին փողոցները դատարկ են, քանդուտված։ Նկատեց, որ հայերին և հույներին պատկանող կամ այդպիսիք համարվող խանութները կողոպտված են...»²⁹ Ինքնաթիո նստելիս հասկացավ, որ Ստամբուլ այլևս երեք չի վերադառնալու։ Այն, այն, մի ժամանակ իր ընտանիքի հայրենիքը համարվող, սակայն այժմ արդեն նրան չընդունող, օտարի աշքով զնուող այս երկիր չեր վերադառնալու»³⁰։ Լարայի հանկարծակի հեռանալու զաղտնիքն այդպես էլ չբացահայտված է մնում։ Արդեն մեծահասակ Զումեյթն հիշում է, որ մայրը Լարայի զնալու մասին իր հարցին շատ խորհրդավոր տեսքով պատասխանել է, որ Լարայի համար ուրիշ երկրում ապրելն ավելի լավ կլինի, քանի որ նա հայ է³¹։ Նույնիսկ տարիներ հետո Թուրքիայի հետ կապերը լիովին կտրած Զումեյթի համար այս փաստն անհասկանալի է մնում։ Լարայի կերպարը

²⁷ Senocak Z., Yolculuk Nereye, İstanbul, 2007, s. 37.

²⁸ Նույն տեղում, էջ 31-32:

²⁹ Հավանաբար ի նկատի ունի 1955 թ. սեպտեմբերի 6-7-ի պողորմները։

³⁰ Senocak Z., նշվ. աշխ., էջ 36:

³¹ Նույն տեղում, էջ 40:

²⁶ Adelson L. A., *The Turkish Turn in Contemporary German Literature: Toward a New Critical Grammar of Migration*. New York, Palgrave Macmillan, 2005, p. 108.

ներկայացնելով՝ Զ. Շենոշաբը փաստորեն ներկայացնում է հազարավոր հայ երեխաների ճակատագիրը, որոնք դատապարտված են եղել կիսասորկական կարգավիճակով ապրել թուրքերի ու քրդերի տանը, իրենց ուսերին կրել կենցաղի ծանր բեռ և նույնիսկ հառնալ նրանց սեռուկները:

Լարայի պատմության մեջ ուշագրավ է այն, որ տարիներ անց նրան հաջողվում է Փարիզում գտնել իր մորն ու մինչև վերջինիս մահը վայելել այն սերն ու զերմությունը, որ երբեք չէր տեսել: «Այդ երկու տարիները Լարայի կյանքի ամենակարևոր փուլն են: Մոր հետ երկար-երկար խոսակցությունների ընթացքում ճանաչեց ընտանեկան նկարին պատկերված շատ դեմքեր, բազմից լսեց այդ դեմքերի անուններն ու պատմությունները, նրանց տեղափորեց իր հիշողության մեջ և վերստավ իր ինքնությունը, որի մասին տարիներ շարունակ անտեղյակ էր եղել»³²: Ցեղասպանությունից հետո մասնատված ընտանիքների կարևորագույն հարցն է՝ վերամիավորումը և ինքնաճանաչումը փաստորեն դուրս չի մնում թուրք գրողի ուշադրությունից:

Զ. Շենոշաբի Հայոց ցեղասպանությանը կատարած անդրադաների մասին խոսելիս, կցանկանայինք ներկայացնել նաև 2005 թ. գերմանական թերթերից մեկում տպագրված «Ժխտված ցեղասպանություն» հոդվածին³³: Եթե վեպերում ցեղասպանությունը ներկայացված է մի տեսակ քողարկված, ապա հոդվածում Զ. Շենոշաբը գրում է, որ Հայոց ցեղասպանության հարցում թուրքական մերժողականությունը, առավել ևս հայկական սփյուռքին ազգայնականության մեջ մեղադրելու փորձերը բացահայտ անամորություն են: Նա շեշտում է, որ Թուրքիայի կողմից ցեղասպանության ճանաչումը հույժ կարևոր է և ոչ մի դեպքում չի կարող փոխարինվել

³² Նոյն տեղում, էջ 35:

³³ Հոդվածի ամբողջական տարբերակն հասանելի է <http://www.signandsight.com/features/154.html> կայքում:

քննարկումներով կամ պատմաբանների տված գնահատականներով: Տեղինակը սակայն ցավով նշում է, որ ժխտողականությունն այնքան խորն է արմատավորվել թուրք հասարակության մեջ, որ դրանից հրաժարվելը դարձել է ինքող քեզ դավաճանելու պես մի բան: Ամենից շատ Զ. Շենոշաբին անհանգստացնում է այն փաստը, որ թուրքական իշխանություններն հայերի ողբերգությունն օգտագործում են Գերմանիայում թուրքական ազգայնականությունը բորբոքելու համար: Նման վերաբերմունքը սիսակ և անթույլատրելի որակելով՝ մտավորականը դա համարում է արտերկրում բնակվող թուրքերի իրական խնդիրների նկատմամբ կատարյալ անտարբերություն և նրանց միայն սեփական շահերը առաջ տանելու գործիքի վերածելու փորձ: Խսկապես, եթե դիտարկում ենք թուրքական սփյուռքի հետ կապված պաշտոնական Անկարայի հայտարարությունները, ապա պարզ է դառնում, որ վերջինս սփյուռքը համարում է որպես բացառապես պրո-թուրքական գաղափարներն առաջ տանելու միջոց, թուրքական մշակույթի ազդեցությունը ավելացնելու հարթակ:

Զ. Շենոշաբը անդրադանում է նաև Թուրքիայի պապայի հարցին, նկատի ունենալով, հավանաբար, նաև ԵՄ անդամակցումը: Նա գրում է, որ եթե հասարակությունն ի վիճակի չի ընդունել, քննադատել նման չափերի հանցագործությունը և հրաժարվում է մեղավորություն կամ գոնե պատասխանատվություն ճանաչել, ապա նոյն հանցանքի կրկնությունը բացառված չէ: Հիշելու կարողություն չունեցող հասարակությունը դատապարտված է անցյալի սիսակներում բանտարկված մնալուն: Նման վճիռը շատ ավելի դաժան է, քան ցանկացած դատապարտվուն, որ կարող է բաժին ընկնել մի կառավարության: XXI դարում թուրքական հասարակությունը, եթե ուզում է եվրոպացիների շրջանում ընդունված լինել, չի կարող այլևս թույլ տալ իրեն այս փուած ու կոպիտ պատմական խեղաթյուրումը: Թուրքերը չեն կարող պահանջել, որ

մյուսներն ընդունեն իրենց պատմությունը, եթե իրենք անձամբ կարող են հավատալ միայն իրենց խոհ հորինած տարբերակին:

Հնչած արդեն նշել ենք, Հայոց ցեղասպանության թեման իր արտացոլումն է զուել նաև Էմինե Սևի Օգդամարի ստեղծագործություններում: Ի տարբերություն Զ. Շենօջարի, Է. Ս. Օգդամարն, ապրելով իր գիտակից կյանքի մեծ մասը Թուրքիայում և այնտեղի միջավայրին շատ լավ ծանոթ լինելով, իր ստեղծագործություններում հիմնականում անդրադառնում է թուրքական իրականությանը կամ գոնե խնդիրները ներկայացնում սովորական թուրքի տեսանկյունից: Նրա ստեղծագործություններից անպակաս են Թուրքիայի խոլ գյուղերն իրենց սննապաշտ կենցաղով. Ստամբուլն իր աղմկոտ փողոցներով և ընդհանրապես Թուրքիան այնպես, ինչպես որ կա: Գերմաններենով գրված Է. Ս. Օգդամարի վեպերում հատուկ տեղ ունեն թուրքական առածներն ու ասացվածքները, որոնք գերմաններեն ուղիղ թարգմանությամբ հատուկ համ ու հոտ են տալիս նրա գրքերին առանձնացնելով նրան այլ թուրք գրողներից:

Է. Ս. Օգդամարի ստեղծագործություններում Հայոց ցեղասպանությունը ոչ թե սյուժեի բաղադրիչ մասն է, այլ կարծես հերոսների կյանքի լրացնցքներում մնացած դրվագ: Եթե կարդում ես նրա գրքերը, տպավորություն է ստեղծվում, որ ցեղասպանության հիշողությունը կարող է ցանկացած թուրք ընտանիքի անցյալի մի մասը լինել հատկապես եթե այլ ընտանիքը սերում է Թուրքիայի արևելյան նահանգներից: Է. Ս. Օգդամարն ցեղասպանությունը ներկայացնում է որպես իր տատի և պապի կենասագրության փոքրիկ, բայց անբաժանելի հատված: Ընդ որում, ցեղասպանությանը վերաբերող մեկներկու դրվագ կրկնվում է հեղինակի կյանքի տարբեր էտապներ ներկայացնող ինքնակենսագրական վեպերում ու պատմվածքներում:

Է. Ս. Օգդամարի հորական տատը ծագումով Կապադովկիայից է եղել, որ մեծ թվով հայեր են բնակվել: Ցեղասպանության ժամանակ երիտասարդ աղջիկը ականատես է եղել սպանդի և դաժանությունների: Տասնամյակներ անց ցեղասպանության պատկերներն հանգիստ չեն տալիս յոթ երեխա կորցրած այս կնոջը: Ուստի զարմանալի չեն, որ տատի մասին խոսելիս, Է. Ս. Օգդամարը ամեն անգամ մեջքերում է հետևյալ տողերը. «Տասու հանկարծակի վեր եր թոշում տեղից, վագում պատուհանի մոտ ու գոռում. «Աբոնն, Աբոնոնն, Աբոնն, հայ հարսներն ինչպես իրենց կամուրջներից զցեցին: Հետո նորից տեղն եր նստում»³⁴: Մեկ-երկու կարճ նախադասությունն էլ բավական է, որ ընթերցողի աչքի առաջ հառնեն Հայոց ցեղասպանության սարսափազրու տեսիլքները: Է. Ս. Օգդամարի վկայությամբ, տատը իրեն պարտավոր էր զգում նաև օգնել Ստամբուլի իրենց բնակարանի շրջակայրում բնակվող հայերին: Հատկապես հաճախ է հեղինակը հիշատակում իրենցից մի քանի տուն այն կողմ նկուղում բնակվող ծեր հայուհուն, ով գրպանում միշտ չոր հաց էր պահում, որպեսզի սովոր չմեռնի, եթե նորից ստիպված լինի բարաձավում թաքնվել³⁵: Օրինաչափ և բնական է, որ ոչ մի պաշտոնական ժխտողականություն չի կարողացել ջնջել մարդկային հիշողություններն ու անգամ ցեղասպանությունից տարիներ անց թուրքերի մի փոքրիկ հատված գոնե շարունակել է ապրել մեղքի ու ամորի զգացումով:

Եթե Է. Ս. Օգդամարի հորական տատը պարզապես ողբերգական դեպքերի ականատեսն էր եղել և ամբողջ կյանքում փորձում էր ինչ-որ կերպ օգնել հայերին և աղոթում էր զոհերի հոգիների հանգստության համար, ապա մորական

³⁴ Özdamar E.S., Hayat Bir Kervansaray İki Kapısı Var Birinden Girdim Birinden Çıktım, İstanbul, 2007, s. 45.

³⁵ Özdamar E.S., Tuhaftı Yıldızlar Dünnyaya Bakıyorlar Gözlerini Kırpmadan, İstanbul, 2012, s. 194.

պապը իրադարձությունների թոհուրոհում է եղել: Գրողը իր մոր խոսքերից պատմում է, որ պատերազմի տարիներին նաև ներգարված է եղել հայերի տեղահանության գործին: Կոտորածի ժամանակ տեսել է կամրջից գետը նետվել ցանկացող հայուհուն և փրկել նրան: Է. Ս. Օգդամարի մայրն այսպէս է բնորոշում հորը. «Դաժան մարդ չէր: Երիտասարդ հայ աղջկան կոտորածից փրկելու դիմաց երկրորդ անգամ ամուսնացավ նրա հետ»: Սակայն աղջիկն այդպէս էլ չի կարողանում հաշտվել իր ճակատազրի հետ, ամուսնուն չի ներում, իսկ տեղահանության ժամանակ ապրած վախերն անհետեանք չեն անցնում: Նրա հոգեկան աշխարհը խանգարվում է: Գրողի մայրը պատմում է. «Հայ մայրս կարծում էր հոդը կրակից է, վախից բակ դուրս չէր գալիս, միշտ տանն էր մնում: Ճավատացեք ինձ, հայրս կրակը պակասեցնելու համար նրա ոտքերը սառը ջրով լվանում էր»³⁶: Նույնիսկ սիրո նման արտահայտումները չեն ստիպում նրան ներել ամուսնուն կամ գոնե խոսել նրա հետ: Միայն մահից առաջ աղջկան ասում է, որ հորը փոխանցի: «Ասա նրան ներել եմ, ազատ ե»³⁷: Այս պատմությունը կրկին ներկայացնում է ցեղասպանության ժամանակ հայ կանանց անելանելի վիճակը, թուրք, քուրդ ու արաբ տղամարդկանց բարեհաճությունից կախված լինելը, հազարավոր խեղված ճակատազրերի շքննարկված, չիմացված մնալը:

Հայոց ցեղասպանությանը և առհասարակ թուրքիայի հայության խնդիրներին է. Ս. Օգդամարն անդրադառնում է նաև Հրանտ Դինքի սպանության կապակցությամբ գրված իր հոդվածում: Հոդվածը սկսվում է հետևյալ պատկերով. «Սևացավ ծովը... Բերլինյան տարսի եմ նստել: Ձեռքիս՝ բաց թերթ: Թերթում մի դիմակ: Այնտեղ պառկած է, մեջքով դեպի ինձ: Հրանտ Դինքի մեջքն է: Սպանել են: Մի հունվարյան օր, Ստամբու-

³⁶ Özdamar E.S., Hayat...., s. 228.

³⁷ Նույն տեղում:

լում: Ո՛չ Հրանտ Դինք, ո՛չ Հրանտ Դինք, այս երկրում աղավնիներին սպանում են»³⁸: Այնուհետև գրողը սկսում է երեակայության մեջ երկխոսել Սև ծովի հետ: Ծովը լայիս է. «Ամեն արցունքում մի դիմակ կա, անզույն և հազարող: Ինչքան նժամանակ է, գերեզման չունեցող դիմակների հետ է ապրում: Այստեղ մնացեք, իմ մեջ այնքան մաս կա որ... Պոնտոսի հովներ, հայեր, թուրքեր, արաբներ, հոմուեացիներ, սկյութներ, մաքրոններ, քողիներ, քարդուքներ, վրացիներ, արխազներ... նրանց երեսներին նայեք: Շուրթերը դեռ գյուղերի անուններն են մրմնջում: Լսեք, լսեք»³⁹: Ծովը դիմում է մարդկանց. «Եհ, ափերիս մոտ այժմ ապրող թուրքեր, Պոնտոսի հովները, հայերը չկան, ձեր արյունը ավելի մաք՞ ո՞ր է, ձեր արյունը մաքրվե՞լ է»⁴⁰:

Երևակայական երկխոսությունից գրողն անցնում է լրիվ իրական գրույցի տաքսու վարորդի հետ: Վարորդն ասում է. «Ես էլ լաց եղա, քույրիկ»⁴¹: Ամաշում եմ, որ մարդասպանը Սև ծովի կողմերից է: Ես էլ եմ Սև ծովից: Հրանտ Դինքը նրանց ի՞նչ է արել: Այդ ֆաշիստը չի կարող սկսովցի լինել: Մենք ֆաշիստ չենք⁴²... Բայց եթե այդպէս է, ուրեմն ես այլս թուրք չեմ»⁴³: Տարսիստը շարունակում է. «Ո՞վ գիտի, Ստամբուլի հայերն ու իրեաները ինչքան են վախենում: Իսկ նրանց պետք է պաշտպանել: Նրանք մեր դեմոկրատիայի երաշխիքն են: Եթե մեր հայերին ու քրդերին չկարողացանք պաշտպանել, թուրքիան ԵՄ ինչպէս կմտնի»⁴⁴: Է. Ս. Օգդամարի ստեղծագործություններում ներկայացված դրվագներն ու դրանց մեկնաբանությունները, կարծում ենք, Հայոց ցեղաս-

³⁸ Özdamar E.S., Aynadaki Avlu, İstanbul, 2012, s. 130.

³⁹ Նոյն տեղում, էջ 132:

⁴⁰ Նոյն տեղում, էջ 133:

⁴¹ Նոյն տեղում:

⁴² Նոյն տեղում, էջ 134:

⁴³ Նոյն տեղում:

⁴⁴ Նոյն տեղում:

պանության խնդրի գրական արտացոլման հետաքրքիր և ուշադրության արժանի մոտեցումներ են:

Հայոց ցեղասպանության անբաժան մասը հանդիսացող բռնի իսլամացումներն զեղարվեստի նյութ է դարձել Թուրքիայից Գերմանիա մեկնած, բայց ծագումով քուրդ Քեմալ Յալընը: Եթե Զ. Շենոցարը և Է. Ս. Օզդամարը ցեղասպանության թեմային անդրադառնում են հպանցիկ, փորբիկ նկարագրությունների ձևով, ապա Ք. Յալընի «Քեզնով է ուրախանում սիրտս», «Սարը գելին» վեպերում և «Անատոլիայի զավակները. 100-ամյակի վկաները» փաստագրական-զեղարվեստական գրքում մանրակրկիտ ձևով ներկայացված է իսլամացված հայերի կյանքը, նրանց կրած զրկանքներն ու կորցրած երազանքները, Ցեղասպանությունից մազապուրծ հայերի նկատմամբ թուրքական պետության վարած հետագա քաղաքականությունը:

«Սարը գելին» վեպում ներկայացված Քյոլնում բնակվող Արյամանցի մի քուրդ ընտանիքի պատմության համատեստում բացահայտվում է թուրքական պետության վարած իսլամացման քաղաքականության ողջ խորությունը և այն կրողների ողբերգությունը, որ չի փարատվում նույնիսկ ցեղասպանությունից մեկ դար անց: Գրքի հերոսուհին՝ Շիրինը, դպրոցահասակ տարիքում է իմանում իր հայ լինելու մասին: Հայրը՝ հաջը Իբրահիմն է նրան պատմում. «Աղջիկս, մի ժամանակ մեծ աղեստ է եղել, մեր հայ նախնիների մեծ մասը մահացել, սպանվել է... Ես էլ հաստատ զփտեմ: Եղել անցել է: Կենդանի մնացողները փրկվելու, ապրելու համար իսլամ են ընդունել... Ցերեկը մզկիթ էին գնում, զիշերները տանը զաղտնի-զաղտնի խաչակնքվում... Մի օր չե, երկու օր չե... Սարդիկ, որոնք ամբողջ կյանքը ստիպված են շրջապատի մարդկանցից թաքուն ապրել... Ահա մենք այդ մարդկանցից ենք: Իրար զիտենք: Ասեմ հայ ենք, հայ չենք, ասեմ մուսուլման ենք, մուսուլման էլ չենք: Մենք ահա այս բախտի մարդիկ

ենք... Ազգուտակով, ցեղով, արմատով հայ ենք, լեզվով քուրդ, կրոնով՝ մուսուլման: Մարդ առանց իր ցանկության ինչքան կարող է մուսուլման լինել, այդ շափով էլ մուսուլման ենք»⁴⁵: Աղջկա համար վերջապես պարզ է դառնում, թե ովքը ո՞ր էին այն տարօրինակ «մերոնք», որոնք ժամանակ առ ժամանակ իրենց տուն էին զալիս, և ով, ծնողների հետ խոսելիս, աշքերով խոսելու տարօրինակ, բոլորի համար անհասկանալի, զաղտնի լեզու էին օգտագործում⁴⁶: Շիրինը, սակայն, չի հասկանում զաղտնի, ծպտված ապրելու իմաստը: Հայրը բացատրում է. «Նույնիսկ Գերմանիայում ապրելիս մարդ պիտի մտածի Թուրքիայում մնացած բարեկամների մասին: Այս տարիին եմ հասել, դեռ միջից վախր չեմ կարողանում վերացնել: Չուզեցի, դուք էլ վախր մեջ մեծանաք»⁴⁷: Թուրքիայում տիրող վախր, անվստահության մթնոլորտն էլ ավելի ակնառու է դառնում, եթե Շիրինն արձակուրդներին գնում է Աղյաման. հարազատներն անընդհատ խնդրում են նրան զգուշ արտահայտվել, ոչ ոքի չխստահել: Չորս կողմից նրան ասում են. «Աման, աղջիկս, նա տաճիկ է: Մի վստահիր», «Աման, Շիրին, նա մերոնցից չի, լոիր», «Աղջիկս, ձագուկս, այստեղ Գերմանիա չէ: Շատ ուշադիր եղիր, ո՞ւր ես գնում, ի՞նչ ես ասում»⁴⁸:

Աղյամանցի ծպտյալ հայ-հերոսների պատմությունների միջոցով հեղինակը ներկայացնում է ցեղասպանության հետևանքները: Շիրինը հարազատներից իմանում է, որ տեղի հարուստների ունեցվածքի մեծ մասը հայերին է պատկանել: «Չկարծես, որ այդ տաճիկի հարստությունը հորից է մնացել: Հայ Նակորի ունեցվածքով հարուստ դարձավ: Սակայն հարամ ունեցվածքը հալավ չի լինում: Աստված տա, մի օր մի

⁴⁵ Yalçın K., Sarı Gelin, İstanbul, 2005, s. 59.

⁴⁶ Նույն տեղում, էջ 49:

⁴⁷ Նույն տեղում, էջ 62:

⁴⁸ Նույն տեղում, էջ 94:

ցավի գա, սատկի» կամ «Մի նայի այն աղայի զլուխ գովալուն: Հայ աքսորյալների քարավանները կողոպողների դեկավարներից է եղել: Հայերի ոսկիները կարասներով է տուն բերել: Բայց Աստված ամեն ինչ զիտի, մի օր պատիժը կստանա»⁴⁹:

«Անատոլիայի զավակները. 100-ամյակի վկանները» գրքում տեղ է գտել Գերմանիայի Հայոց թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Բերյանի պատմությունը: «Ես քարեկամներ, քեռիներ, պապիկներ, տատիկներ չունեի: Նախանձում էի տատիկ-պապիկ ունեցող երեխաններին: «Մայրիկ, իմ տատիկ, պապիկներն ու են», - հարցում էի: Սայրս կամ լուս էր, կամ էլ պատասխանում. «Սահացել են»: Ու սկսում էր լացել: Ոչ մի բան չէի հասկանում»⁵⁰: Եթե 18 տարեկան դարձա, մայրս ասաց, որ մի շարք հիշողություններ ունի, բայց ինձ չի ուզում պատմել, որ չափաբանացնի: Եթե պնդեցի. «Պատմիր դառը հիշողություններդ, ես էլ եմ ուզում իմանալ», պատմեց: «Որդիս, - ասաց, - իմ կողմը հարուստ, շատ մեծ ընտանիք էր»: 8-9 քետի ունեիր: 1915 թ. նրանք աքսորվեցին և նրանցից լուր էլ չեղավ: Սայրս, այս դառը հիշողություններն պատմելիս, սակայն չասաց, թե ինքն ու հայրս ինչպես են փրկվել: Մի բանի անգամ հարցրի: Ասաց. «Ոչ դու հարցրու, ոչ էլ ես ասեմ»⁵¹:

Այսպիսով, կարելի է ասել, որ Հայոց ցեղասպանության խնդիրը 1990-ականների սկզբից եղել է գերմանարնակ բուրքերի առաջադեմ որոշ ներկայացուցիչների ուշադրության ոլորտում: Թուրք գրողների երեսն մանրամասն, երբեմն էլ հպանցիկ անդրադարձները մի կողմից մասնագետներին ուսումնաժրման համար քավական հետաքրքիր նյութ են տալիս, մյուս կողմից էլ հասարակ գերմանացի կամ թուրք ընթերցողին թույլ են տալիս ծանոթանալ XX դարասկզբի մեծ ոլորտագործական առանձին դրվագների հետ:

⁴⁹ Նույն տեղում, էջ 95:

⁵⁰ Yalçın K., Anadolunun Evlatları: Yüz yılın Tanıkları, Köln, 2008, s. 112.

⁵¹ Նույն տեղում, էջ 113:

ТЕМАТИКА ГЕНОЦИДА АРМЯН В РАБОТАХ ТУРЕЦКИХ ПИСАТЕЛЕЙ ГЕРМАНИИ

*Наира Погосян
(резюме)*

С начала 1990-ых годов тема Геноцида армян, несмотря на существующее в Турции строгое табу, нашла свое отражение в работах турецких писателей Германии. К этой теме обращаются такие известные представители турецкой общины Германии, как Зафер Шеноджак и Эмине Севги Оздамар. Они создают реалистичные картины массовой резни и гонений армян. Исследование работ этих писателей является актуальным, в особенности, в свете усиливающегося антиармянского лоббинга турецкой общины Германии.

THE SUBJECT OF ARMENIAN GENOCIDE IN THE WORKS OF TURKISH-GERMAN WRITERS

*Naira Poghosyan
(summary)*

From the early 90s the subject of Armenian Genocide was reflected in the works of Turkis -German writers despite of strict taboo on discussing it in Turkey. Such famous authors as Emine Sevgi Ozdamar and Zafer Shenocak refer to this subject. They create realistic pictures of massacres and deportation of Armenians. Investigation of the works of these writers is especially important in the light of increasing Anti-Armenian lobbying activity of the Turkish community of Germany.

**«ԵՐԳԵՆԵՔՈՆ» ԷՊՈՍՆ ՈՒ ԴՐԱ
ՔԱՐՈՉՉՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ**

Բանալի բառեր՝ էպոս, «Երգենեքոն» կազմակերպություն, թուրքական քարոզություն, ազգայնամոլություն, գաղափարախոսական, քաղաքական

Թուրքական իշխանությունները սկսած երիտթուրքական շրջանից փորձում են թուրքիան ներկայացնել որպես աշխարհի հնագույն պետություններից մեկը: Գաղտնիք չէ, որ ժամանակակից թուրքիայի տարածքում ապրել են աշխարհի հնագույն ժողովուրդները, ինչի մասին վկայում են բազմաթիվ հնագիտական փաստեր: Նույնպես և գաղտնի չէ, որ այս ժողովուրդների մշակույթի հետ թուրքերը չունեն և ոչ մի ընդհանուր բան, այն պարզ պատճառով, որ այս տարածքում բնիկ ժողովուրդ չեն և այստեղ են եկել միայն միջնադարում, երբ հնագույն քաղաքակրթություններից շատերը դուրս էին մղվել պատմական թատերաբեմից: Թուրքերի Փոքր Ասիայում հայտնվելուց հետո, տարածաշրջանում ապրող ժողովուրդները, ընկնելով թուրքական լծի տակ, անընդհատ ստիպված էին պայքարել իրենց մշակույթը, հավատքը, ազգային արժեքները, սովորույթներն ու ավանդույթները պահպանելու համար:

Այսպիսի պատմական զարգացման պարագայում թվում է, թե թուրքական իշխանությունները ոչ մի իրավունք չունեն խոսելու իրենց և ինն քաղաքակրթությունների մշակութային կապի մասին: Սակայն փաստերը ցույց են տալիս, որ թուրքիտնականները հաճախ առաջ են քաշում թուրքերի և ներկայիս թուրքիայի Հանրապետության տարածքում բնակված

հնագույն ժողովուրդների ոչ միայն մշակութային կապի, այլ նաև թուրքիայի այդ մշակույթի իրական և միակ ժառանգործ լինելու մասին թեզը: Այս երևույթը նկատվում է թե զիտական, թե հասարակական ու քաղաքական ոլորտներում: Վաս օրինակ է «Սյումերքանկի» անվանումը (ծագում է շումեր բարից) և շատ ուրիշ անվանումներ, որոնք միտված են իրեն թե ցույց տալու թուրքիայի և այս տարածքի անտիկ պատմության «կապը»:

Տարբեր ոլորտներում այս կամ այն երևույթն ու անվանումը դառնում են թուրքական «հնագույն պատմությունն ու մշակույթը» ներկայացնող բրենդ: Այսպիսի մի բրենդ է դարձել նաև թյուրքերի առասպեկտական նախահայրենիքի մասին պատմող «Երգենեքոն» եպոսը:

Երգենեքոն վայրի մասին առաջին անգամ հիշատակվում է պարսիկ տարեգիր Ռաշիդ ադ-Դինի «Տարեգրությունների ժողովածու» ("Cami at-Tavarikh") աշխատության մեջ, որտեղ նշվում է հետևյալը. «Մոնղոլական ցեղերը թյուրքական ցեղերի ընդհանուր խմբից էին սերում: Նրանց վրանները տեղակայված էին ուղղուրների երկրից մինչև Խիթայ և Չուչե բնակվայրերը, այն տարածքում, որը հիմա կոչվում է Մոգուլիստան... Սրանից մոտ 2000 տարի առաջ մոնղոլ կոչվող ցեղը ընդհարվում է մյուս թյուրքական ցեղերի հետ, և նրանց միջև պատերազմ է սկսում... Կա պատմություն, որը հավաստում են վատահելի անձինք, որ մոնղոլները ենթարկվում են ջարդերի և նրանցից կենդանի են մնում միայն երկու տղամարդ և երկու կին: Նրանք փախչում են դժվարամատչելի մի վայր, որն ամբողջությամբ շրջապատված էր լեռներում ու անտառներով: Դեպի այս վայրը տանող միայն մի արահետ կար, որով շատ դժվար էր անցնել: Այս լեռների միջև կար մի տափաստան: Այդ վայրը կոչվեց «Երգուն-կուն»... ինչը նշանակում էր շեղ իշվածք: Իսկ մարդկանց անուններն էին Նուրուզ և Կիյան: Նրանց սերունդները երկար ժամանակ մնացին Եր-

գունե-կունում: Երբ այս տեղը շատ նեղ դարձավ, նրանք խորհուրդ հավաքեցին և որոշեցին դուրս գալ այդտեղից: Լեռան մեջ մի հատված գտան, որտեղ մետաղ էր պարունակվում: Անտառներից հավաքեցին փայտ և յոթանատուն հատ խարույկ վառեցին: Այսպիսով՝ հալացրեցին լեռը և դուրս եկան այնտեղից»⁵²:

Էրգենեքոնի մասին պատմությունը հիշատակվում է նաև 17-րդ դարի Հիվայի խան Արուլ-զազի Բահադրը խանի գրած «Թյուրքերի տոհմածառ» («Şeçere-i Türk») աշխատության մեջ⁵³: Արուլ-զազին իր հերթին օգտվել է թէ՝ Ռաշիդ-ադ Դինի վերոհիշյալ աշխատությունից, թէ՝ գրավոր ու բանավոր այլ աղբյուրներից: Նրա պատմության մեջ «Էրգենեքոն» դեսրանի հետ կապված հավելյալ տեղեկություններ ենք գտնում:

«Էրգենեքոն» էպոսի ուսումնափրոդները հաճախ նշում են, որ դրա նախատիպերը հանդիպում են չինական տարեգրություններում: Այս կարծիքն առաջին անգամ առաջ է քաշել ֆրանսիացի արևելագետ Զ. դե Գինեն, ով նմանություններ է գտել Էրգենեքոնի ու Աշխնայի տոհմի մասին պատմությունների միջև⁵⁴: Նման տեսակետ է առաջ քաշել նաև հայտնի

⁵² Պաշիդ-ադ-Դին, Սборник Летописей, Москва-Ленинград, 1952, стр. 153-154.

⁵³ Արուլ-Գազին հայտնի է իր երկու աշխատություններով՝ «Թուրքմենների տոհմածառ» («Şajara-i Terakima»), «Թյուրքերի տոհմածառ» («Şajara-i Türk»):

⁵⁴ Չինական տարեգրություններից մեկը՝ «Չժու-շոռու» պատմում է 557-580 թթ. Չինաստանում կառավարող Չժու դինաստիայի մասին: Այս տարեգրության մեջ հանդիպում է զյոր-թյուրքերի առաջացման մասին պատմող երկու լեզենք: Դրանցից առաջինի համաձայն զյոր-թյուրքերը սերում էին խոններից և առաջացել են Աշխնա անվամբ մեկի տոհմից: «Չժու-շոռու» նշվում է, որ զյոր-թյուրքերը ամրոջությամբ ոչխացվում են չինական լին տոհմի կողմից և կենդանի է մտնում միայն մի տասնամյա տղա: Թշնամիները կտրում են այս տղայի ոտքերն ու ձեռքերը և ցցում նրան ճահիճը: Այստեղ տղային կերակրում է մի եզ զայլ, որը հետագայում հղիանում է նրանից: Երբ թշնամիներն իմանում են այն մասին, որ տղան

արևելագետ Ժ. Արել-Ռեմյուսան, ով առաջիններից մեկն էր, որ սկսեց ուսումնափրել թյուրքերի ու մոնղոլների պատմությունը՝ հիմնվելով չինական աղբյուրների վրա:

Ծնայած որոշ նմանությունների (ժողովրդի վերածնվելը, շրջակա աշխարհից թաքնված վայրում պատսպարվելն ու մի քանի հարյուրամյակ հետո այնտեղից դուրս գալը) չինական ու միջնադարյան աղբյուրներում տեղ գտած պատմությունները էականորեն տարբերվում են միմյանցից: Առաջին և ամենաեական տարբերությունն այն է, որ մի դեպքում խոսվում է Աշխնայի ցեղի, մյուս դեպքում օդուզների կամ մոնղոլների վերածնվելու մասին: Մասնավորապես, իին չինական աղբյուրների համաձայն, խոնների վերածնվելը կապված է առաջին հերթին նրանց արքայազնին սնող եզ զայլի հետ: Հաջորդ կարևոր տարբերությունն այն է, որ չինական աղբյուրներում չի հիշատակվում այն վայրի անվանումը, որտեղ պատսպարվում է զայլը և որտեղ հետագայում ապրում է Աշխնայի տոհմը: Միայն ավելի ուշ աղբյուրներում է հիշատակվում նաև վայրը՝ Իրգանա-Խոն կամ Էրգոնե-Քոն տեղանունը:

Որոշ թուրք հետազոտողներ գտնում են, որ «Էրգենեքոնը» կարելի է ոլոտարկել որպես, այսպես կոչված, «Մեծ թյուրքական էպոսի» մաս՝ դրան միացնելով նաև Աշխնայի և Բողոքութի մասին էպոսները: Ըստ նրանց «Էրգենեքոնը» սկսվում է այնտեղ, որտեղ ավարտվում է «Բողոքութ» էպոսը: Նշենք, որ վերջինս պատմում է թյուրքական ժողովուրդների՝ զայլից սերած լինելու մասին: Պետք է նշել, որ «Էրգենեքոնը», ի տարբերություն այլ թյուրքական էպոսների, չունի լոկալ տարբե-

ող է, նրանք փորձում են սպանել և տղային և՝ զայլին, սակայն վերջինիս հաջողվում է փախչել Ալթայի լեռները, որտեղ նա լուս աշխարհ է թերում տաս որդիներ: Նրանց ցեղը բազմանում է և շատ տարիներ անց ուն Այսան-Շե (տոհմ, ցեղ) դուրս է զայլս քարանձավից և ճանաչում ժումանների տիրապետությունը:

րակներ, զրեթե բոլոր թուրքական աղբյուրները նշում են, որ կա «Էրգեներոն» էպոսի չորս կամ հինգ տարբերակ⁵⁵, սակայն որպես տարբերակ նշվում են միայն չինական և միջնադարյան աղբյուրները, այլ ոչ թե լոկալ, այս կամ այն նահանգում կամ գյուղում տարածված տարբերակը:

Ինչ վերաբերում է Էրգեներոն բարի ստուգարանությանը, ապա Դ. Յըլլըրըմը նշում է, որ «Էրգենե» բառը թուրքերեն «erk» բարից առաջացած «erkin» բարի մոնղոլական արտասանությունն է: Իսկ «քոն»-ը, ըստ նրա, «քուն» այսինքն՝ «ցուօր» բարի հնչյունափոխված տարբերակն է: Այսպիսով՝ ստացվում է Էրբին բուն, ինչը կարելի մեկնաբանել, որպես պատսպարան, անկախություն ստեղծելու վայր:⁵⁶

Հետաքրքրական է, որ որոշ գիտնականներ, հիմնվելով պատմա-աշխարհագրական տվյալների վրա փորձում են գտնել Էրգեներոն առասպեկտական, բնակավայրի գտնվելու ճշգրիտ տեղը: Որոշ գիտնականներ պնդում են, որ այն գտնվում է ժամանակակից Մանչժուրիայում՝ Առգուն լճի շրջակայրում: Որոշներն էլ ենթադրում են, որ թյուրք-մոնղոլական ժողովուրդների բնօրրանը գտնվում է ժամանակակից Տուվայի հանրապետության տարածքում:⁵⁷

«Էրգեներոն» էպոսի բարոզությունը Թուրքիայում

Սուաջին անգամ «Էրգեներոն» էպոսը թուրք հասարակությանը ներկայացրեց թանգիմարի շրջանի հայտնի քաղաքական գործիչ, դիվանագետ և քարգմանիչ Ահմեդ Վեֆիկ Փա-

⁵⁵ Özkan İ., Ergenekon Destanı Hakkında, Türk Yurdu, cilt 29(61), sayı 265(626) s. 43-47.

⁵⁶ Kaya M., Ergenekon Destanından yararlanan eserler üzerine bir değerlendirme http://muharremkayam.ssu.tr/g/Ergenekon-Destan_%26%_23305%3B.htm

⁵⁷ Абаев Н., О прародине всех тюрков и монголов: "Эргенекон", "Эргунэхун" или Танну-Урянхай?

http://www.tuva.asia/journal/issue_9/3042-abaev.html

շան օսմաներեն թարգմանելով Արուլ-զազի խանի «Թյուրքերի ծագումնարանությունը» աշխատանքը⁵⁸: Այստեղ տեղ էր գտնում նաև թյուրքերի Էրգեներոն վայրից դուրս գալու և ամրող աշխարհով մեկ տարածվելու մասին պատմությունը: Արուլ-զազի այս պատմությունը օսմաներեն թարգմանելը շատ կարևոր էր, քանի որ փաստորեն առաջին անգամ թուրքական հասարակության էր ներկայացվում իր իսկ պատմությունը, իր իսկ անցած պատմական ուղին: Այս թարգմանության շնորհիվ Էրգեներոն վայրի մասին պատմությանը հասանելի դարձավ թուրքերին:

Թուրք գիտնականները հիմք ընդունելով Արուլ-զազիի, ինչպես նաև Ռաշիդ աղ-Դինի, պնդումն այն մասին, որ մոնղոլները և թյուրքերը մի ժամանակ եղել են մեկ ժողովուրդ, սկսեցին ներկայացնել Էրգեներոնի մասին պատմությունը որպես բուն թուրքական:

«Էրգեներոն» էպոսի լայնածավալ քարոզչությունը թուրքիայում և հաստկապես թուրքական գրականության մեջ սկսում է քեմալական շարժման տարիներին, սակայն հասարակության մեջ «Էրգեներոն»՝ որպես բուն թյուրքական էպոսի սերմանումը սկսվել է դեռևս երիտթուրքերի կառավարության շրջանում: Երիտթուրքական կուսակցությունն իշխանության գալուց ի վերը բավականին մեծ ուշադրություն էր դարձնում ազգայնականության և թյուրքականության զաղափարների տարածմանը: Նոր զաղափարախոսության տարածմանը նպաստող կարևոր քայլերից մեկն էլ այսպես կոչված «Քուն թյուրքականի» վերհանումն էր: Բուն թյուրքական էր նաև Էրգեներոնի մասին պատմող էպոսը և հենց Էրգեներոն երևույթը: Եվ, քանի որ Օսմանյան կայսրության տարածում ապրող ժողովրդի համար միանգամայն խորք էր «Քուն

⁵⁸ Ա. Վեֆիկ փաշան թարգմանել է 1825 թ. Կազանում լույս տեսած օրինակից: Թագմանությունը հրապարակվել է «Թասֆիր-ի Էֆքար» թերթում՝ սկսած դրա 131-րդ համարից:

թյուրքական» «Էրգեներոն» էպոսը, անհրաժեշտ էր թե՝ անվանումը, թե՝ երևույթին ինքնին հասանելի դարձնել ժողովրդական լայն զանգվածներին: Այդ նպատակով թուրքական իշխանությունների ընտրած տարբերակը թերևս ամենաազդեցիկը եղավ. Էրգեներոնը՝ որպես թուրքական տոն մտավ տոնական օրացույցի մեջ մտավ և նրա մասին սկսեցին ակտիվորեն խոսել:

Մի քանի տարի Էրգեներոն-Նովրուզը նշվեց որպես մեկ ընդհանուր տոն: Նշենք, որ Օսմանյան կայսրությունում Նովրուզի տոնախմբությունը միշտ էլ նշվել է, և ունեցել էիր ուրույն տեղը ժողովրդական տոնախմբությունների օրացույցում: Այս տոնը նշվել է նաև Քայքամոնու նահանգում, սակայն 1914-1915 թթ. նահանգի «Քյորողլու» թերթի տվյալներով, տոնվել է որպես Էրգեներոն-Նովրուզ: Նահանգային այս թերթի 1914 թ. մարտի 27-ի համարում նշում էր, որ Քայքամոնուի «Թուրքական ուժ» (Türk Gücü) կազմակերպությունը կնշի ազգային մի տոն: Թերթի այս հոդվածը սկսում էր հետևյալ բառերով. «Այսօր ամենահին թուրքերի տոնն է: Սեփական հայրենիքից բաժանված մի բուռ թուրքեր չորս հարյուր տարի աշխարհի ամենահեռավոր վայրում այսօր՝ մարտի 27-ին հնարավորություն ունեցան թեթևացնել իրենց սրտերը, որոնք վառվում էին Ալթայի լեռների կրակով և այդ օրվանից, ցրվելով աշխարհի չորս կողմերով, ցույց տվեցին իրենց քաջությունը և ամբողջ աշխարհին ստիպեցին ճանաչել իրենց»⁵⁹:

Կազմակերպված տոնախմբություններին մասնակցում էին մի քանի հոգևոր և աշխարհիկ դպրոցների սաներ: Տոնախմբությունների ժամանակ բանաստեղծ Թ. Քարաօղուզը⁶⁰

ընթերցում է «Նոր Օր» բանաստեղծությունը: Տոնախմբության ժամանակ ելույթով հանդէս են զալիս նահանգի նշանավոր դեմքերը: Բանաստեղծությունների ընթերցումից և ճառերից հետո սկսում է «Էրգեներոն» տոնի ապրուտային միջոցառումները:

«Քյորողլու» պարբերականում տեղ են գտել նաև 1915 թ. անցկացվող միջոցառումները: Այդ տարի ևս տոնը անց է կացվում Էրգեներոն անվան ներքո, և կրկին տոնախմբությունները կազմակերպում է «Թուրքական ուժ» ընկերությունը:

Պետք է նշել, որ հիշատակված ժամանակաշրջանում Նովրուզի տոնի ժամանակ «Էրգեներոն» էպոսը հիշատակվում է ոչ միայն Քայքամոնու նահանգում: Օրինակ, 1918 թ. Քոնյայում Նովրուզի տոնախմբությունների ժամանակ, որը կազմակերպվել էր «Թուրքական օջախներ» ընկերության կողմից, ընթերցվում է «Էրգեներոն» էպոսը:⁶¹

«Էրգեներոն» էպոսի հետագա քարոզչությունն արդեն կապված էր քեմալական շարժման հետ: Էրգեներոնի՝ որպես թյուրքական ժողովուրդիներ նախահայրենիքի մասին առաջին անգամ խոսեցին Զիա Գյորքալիքը և Օմեր Սեյֆեդիլինը: Այս գրական գործիչները, լինելով ժամանակի թյուրքականության զաղափարի տարածողներից, լավ հասկանում էին, որ հասարակության մեջ ազգային ոգին արքնացնելու, ավելի ճիշտ այն սերմանելու համար պետք էր այդ ազգի համար ստեղծել իր պատմական անցյալը, հաջողությունները: Պետք էր ստեղծել մի իդեալական երկրի, իդեալական, պայքարող, չընկածվող ազգի և, որ ամենակարևորն է, պետք էր ժողովրդին տալ իդեալական առաջնորդի առասպել, որը նրան կստիպէր զենք բարձրացնել ու կռվել:

Քում: Ուսանողական տարիներին «Թուրքական ուժ» կազմակերպության առաջադիմ անդամներից էր:

⁶¹ Sakaoğlu S., Konyada 1918 yıl Ergenekon Bayramı, Türk Kültüründe Nevruz Birin I uluslararası Bilgi Şöleni bildiriileri, Ankara, 1995, s. 89-90.

⁵⁹ Yılmaz M.S., Kastamonuda Ergenekon Bayramı/Novruz, 1914-1915, Bilge Dergisi, 2004, s. 13-40.

⁶⁰ Թ. Քարաօղուզը ծնվել է 1898թ. Սաֆրանբոյում: Քայքամոնուի լիցեյն ավարտելուց հետո բանաստեղծություններ է գրել «Քյորողլու» թեր-

Զ. Գյորգալփի «Էրգեներոն» պոեմում ազգայնամոլ հեղինակը խոսում է ոչ միայն «Էրգեներոն» էպոսի, այլ նաև առհասարակ թյուրքերի ծագման մասին: Իր բանաստեղծության մեջ Գյորգալփը, որպես թյուրքերի նախահայր համարվող ժողովուրդներ է նշում նաև աքքաղներին, շումերներին, մերի ժողովրդին և խեթերին:

Խոկ Օ. Սեյֆեդինը իր «Նոր օր, Էրգեներոնից ելքը մարտի 27» բանաստեղծությության⁶² մեջ իրար է միացնում «Էրգեներոնի» էպոսը և առասպելական Թուրան երկրի մասին պատկերացումները: Բանաստեղծության մեջ երկխոսություն է ծավալվում Բոզրուրքի և թուրքերի միջև: Բոզրուրքը քաջալերում է ժողովրդին ու կոչ անում դուրս գալ ու ազատվել չորս հարյուր տարվա գերությունից: Նա որպես իսկական առաջնորդ, թուրքերին ներշնչում է ազգային հպարտության զգացում և Էգեներոնից դուրս բերելով՝ նրանց տանում է դեպի Թուրան: Հեղինակը իր ժամանակի Օսմանյան կայսրության խառնաշփոր վիճակը նմանեցնում է Էրգեներոնին և Բոզրուրքի նման մի փեկչի սպասում:

Քեմալական շարժման տարիներին և դրանից հետո «Էրգեներոն» էպոսը դարձավ այդ շարժման խորհրդանիշներից մեկը: Թուրք զրոյները իրենց ժամանակի Թուրքիան համեմատում էին առասպելական Էրգեներոնի հետ և կոչ անում ժողովրդին ոտքի ելնել: Հաճախակի էին զուգահեռներ տարվում նաև Սուլթանա Քեմալի ու ըստ ավանդության թյուրքերի նախահայրերին Էրգեներոնից (այսինքն՝ մթությունից ու ճնշվածությունից) դուրս գալու ճանապարհը ցույց տված Բոզրուրքի գորշ գայլի միջև: «Էրգեներոն» էպոսի քարոզության տեսանկյունից կարևոր էր նաև Յաքուֆ Քաղրի Քարաօսմանօլոյի «Էրգեներոն» գիրքը, որը լույս տեսավ 1924 թ.: Այն ոչ մի ընդհանուր կապ չունենալով «Էրգեներոն» էպո-

սի հետ, այնուամենայնիվ, նպաստում էր դրա քարոզության և հեղինակության ավելացմանը: Այս գրքում հեղինակը զետեղել էր քեմալական շարժման մասին իր հուշերը և ուզմանկատում լսած պատմությունները:

Պետք է նշել, որ քեմալական շարժման ու հանրապետության հոչակման առաջին տարիներին «Էրգեներոն» էպոսի քարոզությանը ուղղուշով հետևում էր անձամբ նախազան Սուլթանա Քեմալ Արարյուրքը: Այս մասին թերեւ լավագույնը վկայում էն ժամանակի ամենահայտնի թուրք գեղանկարիչներից մեկի՝ Իբրահիմ Չալլիի՝ Արարյուրքի պատվերով արված նկարները: Նկարներից առաջնում, որը կոչվում է «Էրգեներոն 1», պատկերված էն լեռներ, որոնց միջով թյուրքերը դուրս են զալիս Էրգեներոնից, իսկ թյուրք զինվորներին առաջնորդում է եղ զայլը: Մյուս նկարը կոչվում է «Էրգեներոն 2», այսուել արդեն պատկերն այլ է: Նկարում առջևի ֆոնին տեսնում ենք քարուքանդ եղած Թուրքիան, այսուել կա ընդամենը երկու մարդ, մեկը պատկանդանի վրա կանգնած Սուլթանա Քեմալն է, որը ձեռքով ցույց է տալիս դեպի արդեն վերակառուցված երկիր, որտեղ թոշում են ինքնարթիոներ, իսկ երկնորում երևում է կիսալրուսնի մահիկը: Մյուս կերպարն այս նկարում թուրք երիտասարդն է, ով կանգնած հին Թուրքիայի փլատակների վրա հայացքը հատել է դեպի նոր Թուրքիան:

«Էրգեներոն» էպոսի ակտիվ քարոզությունը բերեց նրան, որ 1930-ական թվականներին այդ դարձավ ազգայնամոլության խորհրդանիշներից մեկը: Այս համատերսում պատահական չէր «Էրգեներոն» պարբերականի առաջացումը: Պարբերականի առաջին համարը լույս է տեսել 1938 թ. նոյեմբերի 10-ին, թերթի շապիկին պատկերված էր գորշ գայլ, իսկ հողվածներից մեկը պատմում էր «Էրգեներոն» էպոսի մասին⁶³:

⁶² Այս բանաստեղծությունն առաջին անգամ լույս է տեսել «Halka Doğru» թերթի 1914թ. ապրիլի 9-ի համարում:

⁶³ Koçlar B., Türk Milliyetçiliği Düşünçesini Tanımlama ve Temellendirme Çalışmalarına Bir Örnek: Ergenekon Dergisi, History Studies, international jurnal of history, Vol. 5, Issue 2, March 2013, p.263-284.

«Էրգենեքոն» պարբերականի գրեթե բոլոր համարների շապիկներին պատկերված էր զորշ զայլ և թուրքականության ու ազգայնամոլության որևէ «խորհրդանիշ»: Թերթի առաջին համարում, այլ հոդվածների շարքում տեղ էր գտել նաև Զիա Գյորալիի «Էրգենեքոն» բանաստեղծությունը:

«Էրգենեքոն» թերթում շատ է անդրադարձ կատարվել նաև Աթարթուրին ու նրա գործունեությանը: Պարբերականի 2-րդ համարը ամբողջությամբ նվիրված էր Աթա-թյուրթի հիշատակին: Այստեղ տեղ գտած հոդվածներում Աթարթուրը և նրա գործունեությունը ներկայացվում էին որպես առասպելական մի երևոյթ: Ըստ Բերիի Քոչշարի Աթարթուրի վերաբերյալ «Էրգենեքոն» պարբերականում տպագրված ամենակարևոր հոդվածը Ս.Էսար Քոզգուրթի գրչին է պատկանում:

«Էրգենեքոն» պարբերականի գործունեության մյուս կարևոր «Ճակատը» ազգայնամոլության քարոզումն էր: «Էրգենեքոնի» համարների շապիկներին հաճախ էին հայտնվում նմանատիպ կարգախոսներ կամ հոդվածների վերնագրեր ինչպիսիք են: «Ամեն ինչից առաջ թուրք ազգը», «Մեր երկիրը մեր ցեղակիցների երջանկությունն է», «Քոլոր ազգերից առաջ թուրք ազգը» և այլն:

Պարբերականի տարբեր համարներում տեղ են գտել նաև փիլիսոփայությանը, սոցիոլոգիային, գրականությանը, պատմությանը և տարբեր գաղափարախոսություններին վերաբերող հոդվածներ:

«Էրգենեքոն» էպոսի քարոզությունը շարունակվում էր նաև 20-րդ դարի 2-րդ կեսին: Եվ եթե քեմալական շարժման ժամանակ այն փրկվող և վերածվող թուրքիայի, Քեմալի իշխանության և թուրք ազգային գաղափարի խորհրդանիշն էր, ապա 1950-ականներին «Էրգենեքոնը» կարող էր դառնալ միակուսակցական համակարգի դեմ պայքարի խորհրդանիշ, 60-ականներին այս էպոսի գաղափարը կարող էր թուրքիայում ՆԱՏՕ-ի գորքերի տեղակայման դեմ ուղղված լինել, տա-

սը տարի հետո այն խորհրդանշում էր ուսանողներին, ովքեր դուրս էին եկել հակառավարական ցույցերի: Այն ունիվերսալ էր և կարող էր օգտագործվել թուրքիայի, նրա քաղաքացիների ազատությունը սահմանափակող ցանկացած գաղափարի ու երևույթի դեմ:

20-րդ դարի 2-րդ կեսին թուրքական գրականության մեջ զգացվում է էպոսների սյուժեի հիման վրա վեպ կամ պատմածքներ գրելու միտումը: Շատ թուրք գրողներ իրենց վեպերում ու պատմվածքներում օգտագործում են ոչ միայն էպոսների մոտիվները, այլ հենց էպոսների այս կամ այն պատումի սյուժեները⁶⁴: «Էրգենեքոն» էպոսի սյուժեի հիման վրա ևս գրվում է մի քանի վեպ:

«Էրգենեքոն» էպոսը, որը սկսեց նույնացվել մայր-զայլի (կամ Քոզգուրթի) մասին առասպելի հետ թուրքիայում ստացավ համակողմանի պետական աշակցություն: Չորշ զայլի պատկերը հայտնվեց պետական դրամի՝ լիրայի, դրոշմանիշների և տարբեր էմբլեմաների վրա: Ներկայումս «Էրգենեքոն» անվանումն է կրում նաև Ստամբուլի Շիշի թաղամասերի համայնքներից մեկը, ինչպես նաև նույն անվամբ քաղամասեր կան Անկարայում, Մանիսայում, Յենիշեհիրում, Մերսինում և այլ քաղաքներում: Արդեն 20-րդ դարի կեսին, էպոսի քարոզությունը գրական շրջանակներից տեղափոխվեց նաև քաղաքական ոլորտ: 21-րդ դարի սկզբին Էրգենեքոն անվանումը էլ ավելի ճանաչելի դարձավ թուրքիայում գործող «Էրգենեքոն» ծայրահեղ-ազգայնական գաղտնի կազմակերպության գործունեության ու նրա անդամների դատավարությունից հետո⁶⁵: Ի դեպքում, «Էրգենեքոն» կազմակերպության

⁶⁴ Ժամանակակից թուրք գրականության մեջ էպոսների ու ժողովրդական պատմությունների մասին տես Kaya M., Türk Romanında Destan Etkisi, Ankara, 2004.

⁶⁵ Иванова В.В., Волк Охраняющий и волк нападающий http://www.kunstkamera.ru/lib/rubrikator/03/03_978-5-88431-182-4/.

մասին խոսելիս հարկավոր է նշել, որ այն ուներ շեշտադրված հակահայկական տրամադրվածություն: Հայտնի է, որ «Էրգենեներոն»-ին կից գործող «Թալեաք փաշա» կազմակերպությունը զլիավորապես զբաղվում էր եվրոպական երկրներում հակահայկական գործունեությամբ: Այս ընկերության շանքերով Լոզանում (2005 և 2007 թթ.) և Բելինում (2006 և 2007 թթ.) մի քանի անգամ կազմակերպվեցին հակահայկական ցույցեր:

Այսպիսով, կարող ենք ասել, որ «Էրգենեներոն» էպոսը թեև թուրք հասարակությանը հայտնի դարձավ բավականին ուշ, լավ կազմակերպված քարոզչության հետևանքով շատ արագ այն դարձավ նոր Թուրքիայի և թուրքական ազգայնամոլության խորհրդանշներից մեկը:

ЭПОС “ЭРГЕНЕКОН” И ЕГО АГИТАЦИЯ В ТУРЦИИ

Айвазян Рипсиме
(резюме)

Рассказ об Эргенеконе, мифическом ущелье и прародине всех тюрков, впервые встречается в "Сборнике Летописей" Рашида ад-Дина. В Турции данный эпос стал известен только в конце 19-го века, но уже в начале 20-го века началась активная агитация Эргенекона, как исконно тюркского эпоса. Местность Эргенекон начала упоминаться в художественной литературе, как аллегория терпевшей упадок Турции. А образ Волка, который по легенде помог тюрко-монголам найти выход из местности Эргенекон, стал ассоциироваться с образами Мустафы Кемалья.

В результате всесторонней агитации эпос “Эргенекон” стал одним из символов кемалистского движения, а также турецкого национализма, а также свободы турецкого народа.

THE EPIC OF ERGENEKON AND ITS AGITATION IN TURKEY

Hripsime Ayvazyan
(summary)

The epic of Ergenekon, which is a story about mythical valley and legendary birthplace of Turkic people, was first introduced in *The Jami at-Tawarikh* ("Compendium of Chronicles") written by persian statesman, historian and physician Rashid ad-Din. In Turkey this epic became known only at the end of the 19th century, and at the beginning of the 20th century the Turkish Government had already started the agitation of this legend as ingeniously Turkic epic. The story of Ergenekon valley started to appear in the Turkish fiction as the allegory of Turkey. The character of wolf, which helped to find the way out from Ergenekon, started to be associated with Mustafa Kemal.

As a result of widespread agitation The Legend of Ergenekon became one of the symbols of Kemalism, Turkish nationalism and the freedom of Turkish nation.

Անժելա Ավագյան

19-ՐԴ ԴԱՐԻ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԸ Զ. Զ. ՄՈՐԻԵՐԻ «ԱՅԵՇԱՆ՝ ԿԱՐՍԻ ՀԱՐՃԸ» ՎԵՊՈՒՄ

Բանալի բառեր՝ բազմամշակութային հարաբերություններ, փարբեր էթնիկ խմբեր, Արևելի ու Արևմուղի փոխհարաբերություններ, անզիական գրականություն, օրիենտալիզմ, քրիստոնեություն, մուսուլմանություն

Անզիական գրականության մեջ հետաքրքրությունը Արևելի նկատմամբ առաջացել է շատ վաղ ժամանակներից: Անզիայի զաղութային քաղաքականության ընդլայնման պատճառով արևելյան թեմատիկան աստիճանաբար սկսում է ավելի մեծ տեղ զբաղեցնել անզիացի գրողների ստեղծագործություններում:

18-րդ դարում առաջացած գիտական օրիենտալիզմը նպաստում է զրական օրիենտալիզմի ձևավորմանը, որը զարգանում է երկու ուղղությամբ: Առաջին ուղղությանը պատկանող հեղինակները, իրապուրվելով Արևելի Էկզուտիկ պատկերներով, գրում էին ճանապարհորդական օրագրեր, օրինակ՝ Ի. Հենվեյի երկիատորյա գիրքը՝ Ծուսաստանից Պարսկաստան կատարած ճանապարհորդության վերաբերյալ (1754 թ.), կամ արկածային վեպեր, օրինակ՝ Լիթունի «Պարսկական նամակներ», «Մի պարսիկի ուղարկած նամակներն Անզիայից Խապահան»⁶⁶ երկերը:

Իսկ երկրորդ խմբի հեղինակները, ձգտելով ընկալել «Արևելի հոգին», փորձում էին իրենց ժամանակի առաջայինական զաղափարներն արտահայտել՝ արևելյան հազուստ-

ների մեջ պարուրած: Այդ խմբի հեղինակների համար Արևելը հիմնականում հանդես էր զալիս որպես դեկորացիա, իսկ երբեմն նաև՝ որպես դիմակ: Երկրորդ խմբի վառ ներկայացուցիչներից էին այնալիսի հսկաներ, ինչպիսին Բայրոնն է՝ իր «Արևելյան պոեմներ»-ով, և Շելլին՝ «Խալամի ապստամբություն» ստեղծագործությամբ⁶⁷: Որոշ հեղինակներ էին իրենց ստեղծագործություններում կարողանում էին հմտորեն համարել այս երկու ուղղությունները:

Առաջին խմբի հեղինակների ստեղծագործություններում լիովին այլ Արևելը էր ներկայացված. այն Էկզուտիկ էր, հարեմային, էսթետիկ, իսկ երբեմն նաև՝ դատարկ: Այս ուղղության ամենահայտնի ներկայացուցիչներից է Թումաս Սուրբ իր «Լալլահ Ռուհ» ստեղծագործությամբ (1817 թ.)⁶⁸: Առաջին ուղղության հեղինակների շարքում իր համեստ տեղն է զրադեշնում անզիացի հայտնի գրող, ճանապարհորդ ու դիվանագետ Զեյմս Սորիերը, ով կարողացել է իր ստեղծագործությունների մեջ հմտորեն համատեղել ուալիստական վեպին բնորոշ հատկանիշները ուսմանտիկ վեպի առանձնահատկությունների հետ:

Սորիերի հասարակական և քաղաքական հայցքների ձևավորման վրա մեծ ազդեցություն է թողել արևելյան մշակույթը, որին հեղինակը ծանոթացել է ճանապարհորդությունների ժամանակ, ինչպես նաև արևելյան գրականություն ընթերցելիս: Սորիերը մեծ հետաքրքրությամբ է ընթերցել «Հազար ու մի գիշերվա» ֆրանսերեն թարգմանությունը՝ կատարված Անտուան Գալլանի կողմից (1704 թ.), ինչպես նաև արաբական ու պարսկական պոեզիան, որոնք ժամանակի պահանջով թարգմանվում էին անզիերեն⁶⁹:

⁶⁷ Նույն տեղում:

⁶⁸ Նույն տեղում:

⁶⁹ Ayesha, The Maid of Kars, Author of "Zohrab", "Haiji Baba" &c. - By the The Quarterly Review, Vol. LI, No. CII, March & June 1834, London, p. 481-493.

⁶⁶ Мориер Дж., Похождения Хаджи-Бабы из Исфагана, Москва, 1970, стр. 15-16.

Չնայած այն հանգամանքին, որ Սորիերին դասում էն վերոնշյալ գրական խմբերից երկրորդի անդամ, նրա հետաքրքրությունը կամ վերաբերմունքը Արևելքի նկատմամբ չէր սահմանափակվում միայն հիացմունքով ու զվարձությամբ: Նրա հիացմունքը ավելին էր, քան միայն զմայլվելը Արևելքի բնական գեղեցկություններով ու հասարակական զվարձություններով. նա սիրում էր ամբողջ Արևելքը իր դյուրիչ միջավայրով: Սորիերը Արևելքը տեսնում էր որպես բնության առատաձեռն նվեր՝ իր ջինջ ջրերով, պարզ երկնքով ու տաղանդավոր պոետներով:

Մի կողմից դա տարածք էր, որն ուներ հարուստ տնտեսություն, որտեղ Բրիտանիան կարող էր էժան հումք ձեռք բերել և իր ապրանքները վաճառել, իսկ մյուս կողմից հրաշքների, դյուրանքի, գուշակությունների, սև կախարդանքի, մելամաղձության, միստիցիզմի, էրգորցիզմի, գերբնական ուժերի, դեմքերի, «չար հրեշտակների» խառնարան էր: Արևելյան այս գրավիչ պատկերներին զուգահեռ այնտեղի մարդիկ շատ դեպքերում Սորիերին ներկայանում էին որպես անհավատ, կոռուպցիած, հետաքրքրասեր, շատախոս, ուխտադրուժ, իսկ երբեմն նաև՝ պարզամտ ու հիմար:

Այսպիսով՝ Արևելքն իր ուրույն տեղն է ունեցել Սորիերի կյանքում, ինչպես նաև նրա ստեղծագործություններում: Սորիերի գրած թե՛ ճանապարհորդական ստեղծագործություններում, թե՛ արկածային վեպերում մենք ականատեսն ենք դառնում հեղինակի նկարագրած արևելյան պատկերների, բարքերի և մարդկանց՝ իրենց բնորոշ հատկանիշներով, բնափորության գծերով:

Քանի որ հեղինակը գտնվել է 18-րդ դարի նեռկլասիցիզմի և 19-րդ դարի ոռմանտիզմի սահմանում, նրա մոտ Արևելքի սկզբանական պատկերները նեռկլասիկ են, բայց հետազոտ նա սկսում է զարգացնել ոռմանտիզմը՝ հիմնվելով Բայրոնի, Սքոթի, Սուրի աշխատությունների վրա: Սորիերի առաջին

աշխատություններից է 1812 թ. լույս տեսած «Ճանապարհորդություն Պարսկաստանով, Հայաստանով և Փոքր Ասիայով մինչև Կ. Պոլիս 1808 և 1809 թվականներին» ստեղծագործությունը, որտեղ հեղինակը տալիս է իր ճանապարհորդության մանրամասն նկարագիրը: Նրա գրչին են պատկանում նաև մի քանի վեպեր, որոնցում հեղինակը շատ լավ ներկայացրել է Արևելքն ու այստեղ բնակվող մարդկանց՝ իրենց բարքերով ու բնորոշ հատկանիշներով: Այդ վեպերն են «Հաջի Բարայի արկածներն Խապահանում» (1824 թ.), «Հաջի Բարան Անզիլիայում» (1828 թ.), «Զոհրաբ պատանդը» (1832 թ.) և «Այեշան՝ Կարսի հարձը» (1841 թ.)⁷⁰:

«Այեշան՝ Կարսի հարձը» վեպը՝ գրված 1841 թ., պատկանում է Սորիերի այն ստեղծագործությունների շարքին («Հաջի Բարա», «Զոհրաբ պատանդ»), որոնք ներկայացնում են հերոսի ճանապարհորդությունները, որոնց ընթացքում վերջինս հանդիպում է տարբեր մշակույթների ներկայացուցիչների հետ⁷¹: Ստեղծագործությունը կառուցվում է Արևմուտքի և Արևելքի բաղաքակրթությունների զուգադրմամբ, որի շնորհիվ բացահայտվում են սեփական և օտար մշակույթների առանձնահատկությունները, և ստեղծվում է օտարի ազգային նույնականության կերպարը: Բացի այդ՝ Սորիերը ոչ միայն ստեղծում է երկու բաղաքակրթությունների նկարագիրը, այլ նաև դիտարկում է դրանց փոխադարձ հաղորդակցման խնդիրները, ինչպես նաև հնարավորություն է տալիս ընթերցողին ներսից տեսնել 19-րդ դարի բազմամշակութային թուրքիան:

⁷⁰ Bates W., The MacLise Portrait Gallery of Illustrious Literary Characters With Memoirs, London, 1898, p. 157-158.

⁷¹ Исхакова Л., Имперский дискурс в формировании образа Востока в творчестве Джеймса Мориера (на примере романа “Аэша, девушка с Карса”), Филология и культура, 2013. Н. 2 (32), стр. 115.

«Այեշան՝ Կարսի հարձը» վեպի գլխավոր հերոսը երիտասարդ անգլիացի լորդ Օսմոնդն է, ով Պարսկաստան կատարած երկարատև այցելությունից հետո վերադառնում է Անգլիա՝ անցնելով Թուրքիայի տարածքով։ Կարս մտնելուն պես տեղի է ունենում մի պատահար, որի պատճառով ժամանակավորապես հետաձգվում է նրա ճանապարհորդությունը։ Այդ պատահարի ժամանակ անգլիացի լորդը հանդիպում է մի շատ գեղեցիկ աղջկա՝ Այեշային, և նրանք առաջին հայացքից սիրահարվում են միմյանց։ Բայց քանի որ Օսմոնդը քրիստոնյա էր, իսկ Այեշան մուսուլման, նրանց սերն ընդունելի չեր ու անզամ արգելված էր մուսուլման կրոնավորների կողմից։ Կարսում Օսմոնդը՝ անգլիացի լորդը, ում ուղեկցում էին հոյն Ստամբուլ և մուսուլմանություն ընդունած Սուստաֆան, ապաստան է գտնում մի քրիստոնյա հայի՝ Պողոսի տանը։ Այստեղ էլ նա պարզում է, որ Այեշան Կարսի՝ մեծ հարգանք վայելող մուսուլմաններից մեկի՝ Սուլեյման աղայի և նրա հոյն կնոջ՝ Զարեստայի դուստրն է։ Այուժեի զարգացմանը գուգահեռ ածում է Օսմոնդի խիզախությունը, ով ցանկանում է գրավել գեղեցիկ թրքուհու սիրտը։ Այս ամենն առաջացնում է Կարսի իշխանությունների նախանձն ու դժոհությունը, որն էլ պատճառ է դառնում վտանգավոր հետապնդումների և տարբեր արկածների։ Կարսում բարձրաստիճան հոգևորականների հրամանով Օսմոնդը ձերքակալվում է և քիչ է մնում սպանվի, բայց կարողանում է փախչել քանտից՝ ընկնելով այս անզամ իր դաժանությամբ հայտնի քուրդ Քարա Բեյի ամրոցը։ Անգլիացի լորդին ուսական քանակի օգնությամբ հաջողվում է ազատվել նաև Քարա Բեյի ճանկերից, բայց դրանով արկածները չեն ավարտվում։ Հայտնվելով ազատության մեջ Օսմոնդը մեկնում է Կ. Պոլիս, որտեսզի այստեղից իր սիրելի Այեշայի հետ հեռանա Անգլիա։ Սակայն այստեղ էլ նա հայտնվում է մի շարք նոր վտանգավոր արկածների մեջ, մեղադրվում է մուսուլման կնոջ

առևանգման համար, որի պատճառով բանտարկվում է Նոռդոս կղզում։ Բարեբախտաբար այս բոլոր փորձությունները վերջիվերջո ավարտվում են, և վեպը դրական հանգուցալուծում է առնում։ Վերջում պարզվում է, որ Այեշան ոչ թե թրքուհի է, այլ մի նշանավոր անգլիացու աղջկի, ում մասնուկ հասակում գողացել էին քրիստոնյա ծնողներից, իսլամացրել և դաստիարակել որպես թրքուհի։ Վեպի պարտին Այեշան ընդունում է քրիստոնեություն և ամուսնանում Օսմոնդի հետ։

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ վեպում առկա են տարբեր էթնիկական խմբերի պատկանող հերոսներ։ Բացի վերջիններից՝ թուրքերից, պարսիկներից, հայերից ու հույներից, վեպում նկարագրվող գործողությունների զարգացմանը զուգահեռ ի հայտ են գալիս նաև այլ էթնիկ հերոսներ՝ ոռու զինվորականներ, վրացիներ, մի հրեա ատամանարույժ և այլք։ Մորիերը շատ լավ, բազմակողմանիորեն կարողանում է ներկայացնել այդ տարբեր էթնիկ խմբերի փոխհարաբերությունները, միջմշակութային շփումները, նրանց զբաղեցրած դիրքն ու տեղը 19-րդ դարի թուրքիայում։ Մի կողմից հեղինակը ներկայացրել է արևմտյան մարդու ու արևելյան մարդու շփման եզրերը, նրանց ընդհանրություններն ու տարբերությունները, զարգացվածության տարբեր աստիճանները, մեկի առավելությունը մյուսի նկատմամբ, մյուս կողմից՝ հենց Արևելյի ժողովուրդների՝ թուրքերի, պարսիկների, հայերի, քրիստուկի փոխհարաբերությունները, ներքին շփումները, ազգային տարբերությունները, մշակութային նմանությունները, մեկի գերիշխանությունը, մյուսի ստորադասությունը։

Հեղինակի նախապատվությունը արևմտյան հերոսի կողմն է, որին վեպում մարմնավորում է անգլիացի լորդ Օսմոնդը։ Վեպի հենց սկզբում Սորիերը տալիս է Օսմոնդի նկարագիրը, որտեղ հերոսին վերագրում է թե՝ արտաքին շատ գեղեցիկ տվյալներ, թե՝ վեհ զգացմունքներ ու լուսավորչական գաղափարներ, և բազմից շեշտում է նրա ազնվական

ծագումը: Իսկ արևելյան մարդու այսպիսի անհատական կերպար հեղինակը չի ստեղծում, չի ներկայացնում վեպում: Ի հակադրություն լորդ Օսմոնդի՝ Սորիերը ստեղծում է Արևելքի մարդկանց ընդհանրական, միասնական կերպարներ՝ առանց ազգային կոնկրետ բնավորության, և այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ արևելյան բոլոր հերոսները նրա մոտ հանդես են զայխ «նույն դեմքով»: Վեպում Արևելքի մարդիկ հիմնականում ներկայացված են որպես ալարկոտ, արատավոր, շատախոս, սահմանափակ և ծանր ու տանջալից աշխատանքից խուսափող, որոնց նկարագրելու համար հեղինակը կիրառում է «վայրենիներ», «բարբարոսներ», «կոպիտ մուսուլմաններ», «ալարկոտ ասխացիներ» արտահայտությունները: Արևելյան ժողովուրդների այս հավաքական կերպարը հեղինակը ներկայացնում է հիմնականում արևմտյան կերպարների հետ զուգադրելիս կամ հակադրելիս, իսկ երբեմն էլ Սորիերը բավականին լավ նկարագրում է առանձին ժողովուրդների ներկայացուցիչների անհատական պատկերը:

Այստեղ գուցե հարց առաջանա՝ ինչով է պայմանավորված օտար մշակույթի այսպիսի ըմբռնումը հեղինակի կողմից: Կարծում ենք, որ դա նախ և առաջ կարելի է բացատրել եվրոպական օրիենտալիզմի ավանդույթներով՝ որպես Արևելքի նկատմամբ վերաբերմունքի որոշակի մոտեցում: Արևելքի ընկալումն ու մեկնաբանությունը Սորիերի վեպում արտահայտում են եվրոպական օրիենտալիզմի մեջ ձևավորված կարծրատիպերը, որոնց համաձայն Արևելքը մի վայր էր, որը կարելի էր ուսումնասիրել ու նկարագրել կառավարելով նրան ու միևնույն ժամանակ պաշտպանվելով նրանից:

Այսպիսով՝ օրիենտալիզմը, որն Արևմուտքի գաղութային բաղարականության գործիքն էր, իր վառ արտահայտումն է գտել գրականության մեջ: Իզուր չէ Ս. Արդելվահիդը իր աշխատության մեջ նշում. «Արևմտյան գրականությունը մի հա-

յելի է, որտեղ արտացոլվում են Արևմուտքի քաղաքական կորերը»⁷²:

Մյուս գործոնը «բրիտանական կայսերական մտածելակերպն էր», որը ձևավորվել էր 19-րդ դարում անզլիական գորոգամտությանը (սնորիզմին) զուգահեռ: Բանն այն է, որ 19-րդ դարում Անզլիայում մեծ տարածում ուներ «Բնիկները սկսվում են Կալեից» ասացվածքը, որն արտահայտում էր անզլիացիների վստահությունն իրենց գերակայության վերաբերյալ ոչ միայն հեռավոր արևելյան ժողովուրդների, այլ նաև եվրոպական ուրիշ ազգերի նկատմամբ⁷³: Արևելյան ժողովուրդներն ընկալվում են որպես երեխաներ կամ վայրենիներ: Այսքանից պարզ է դառնում, որ չնայած Սորիերը երկար տարիներ ապրել ու աշխատել է Արևելքում, ծանոթ եղել այնտեղի մարդկանց, նրանց սովորույթներին, միևնույն է, նա, գիտակցելով իր բաղարակրթության գերազանցությունն ու գրադեցրած դիրքը, արևելյան մարդուն համադրելով արևմտյան մարդու հետ, նրան ներկայացրել է ավելի հետամնաց, բույլ, անկիրք, փառամոլ, շատախոս, իսկ երբեմն նաև՝ հիմար:

Անդրադառնալով Սորիերի կերտած արևելյան ժողովուրդների հավաքական կերպարին նշենք, որ հեղինակը երգիծանքի ու հումորի միջոցով է ցույց տալիս արևելյան ու արևմտյան մարդկանց, մշակույթների, կրթվածության մակարդակի տարբերությունները: Օրինակ, վեպի դրվագներից մեկում ցույց է տրվում, թե ինչպես թուրքերը, պատկերացում շունենալով մի շարք իրերի մասին, որոնք սովորական են արևմտքի մարդկանց համար, հայտնվում են բավականին բարդ և միևնույն ժամանակ բավականին զվարճալի իրա-

⁷² Abdelwahed S., England and the East in James Morier's Hajji Baba of Ispahan, -

<http://www.arabworldbooks.com/Literature/england.htm>

⁷³ Исхакова Л., նշվ. հոդ., էջ 116:

դրության մեջ: Այսպէս, լորդ Օսմոնդը և նրա երկու ուղեկիցները ստիպված են լինում փախչել Կարսից՝ թողնելով իրենց իրերն այն հայի տանը, ում մոտ նրանք ապրում են: Կարսի մուտքման առաջնորդները (Փաշան, Սուֆթին, Սուլեյման աղան) որոշում են, որ իրենք իրավունք ունեն տնօրինելու այդ իրերն իրենց հայեցողությամբ: Նրանք հերթով ուսումնասիրում ու քրքրում են Օսմոնդի ճամապրուկը, դեղատուփը և անձնական ինսամբի պարագաները՝ գտնելով իրեր, որոնք զարմանք են առաջ բերում նրանց մոտ: Բոլոր հազուստներն ուսումնասիրելուց հետո այդ բարձրաստիճան մուտքմաններն իրենց ուշադրությունը կենտրոնացնում են մի կաշվե տարատի վրա: Ահա թե ինչպես է հեղինակը ներկայացնում բարձրաստիճան թուրք պաշտոնյաներին սովորական տարատը զննելիս. «Բայց երբ նրանք սկսեցին ուսումնասիրել կաշվե տարատը, նրանցից ամենահնարամիտներն անզամ չկարողացան հասկանալ, թե ինչի համար կարելի է օտագործել այդ զարմանալի իրը: Նախ նշենք, որ թուրքերի տարատները նման են մեծ պարկերի, որոնք հաճախ օգտագործում են ջրադաշտանները: Այդ պարկանման տարատների երկու կողմում անցրեր են արված՝ ոտքերը մտցնելու համար: Եվ հենց այս պատճառով էլ թուրքերը չեն հասկանում, թե ինչպես է պետք օգտագործել արևմուտքի մարդկանց բնորոշ տարատը: Նրանք այն շրջում են, թերում այս ու այն կողմ, բայց կիրառման եղանակը չեն գտնում: Առաջինը կարծիք հայտնեց Սուֆթին՝ ասելով, որ այն կարող է լինել հազուստի պարագա, և մոտ կանչեց մի մորուքավոր պահակի, ով, զարմանքով ու ապշանքով պարուրված, չեր կողմնորոշվում, թե ինչպես պետք է հազնի այդ տարօրինակ իրը: Սուֆթին գտնում էր, որ տարատը պետք է հազնել զիսխն. այն մասը, որը դերձակները անվանում են նստատեղ, ամրացվեց պահակի զիսխն, իսկ տարատի ոտնամասերը օձի նման կախվեցին

պահակի ուսերից ու մեջքից՝ նրան նմանեցնելով Հերկուեսին առյուծի կաշին զիսխն զցած:

- Փառ ոք Ալլահին,- բացականչեց Սուֆթին,- ես զտա սրա օգտագործման ձևը, սա անզիլիացի փաշաների հազուստն է:

- Շա տ լավ է մտածված,- բացականչեցին հավաքվածներ:

Բայց Փաշան այլ կարծիքի էր. նա դիտարկում էր տարատը լրիվ այլ կողմից:

- Ինչի՞ համար կարող է այս իրն օգտագործվել,- բացականչեց նա, և նրա մոայլ աշքերը սկսեցին փայլել,- ուրիշ ինչի՞ համար, եթե ոչ զինու: Սա պետք է որ եվրոպական մի ինչոք կենդանու կաշի լինի: Եվրոպացիները խմում են զինի, և նրանք պահում են իրենց զինին կաշվե տարաների մեջ, ինչպես մեր անհավատներն են անում:

- Այդպես չէ՞,- ասաց Փաշան՝ դիմելով հայ Պողոսին:

- Այդպես է,- պատասխանեց հայ ներկարարը,- այնպես կլինի, ինչպես Զերդ մեծությունը կկամենա:

- Լավ, ուրեմն այս կաշվի մեջ զինի է պահվել,- շարունակեց Փաշան՝ ոգևորված իր բացահայտմամբ,- և Ալլահի զորությամբ այն կրկին կլցվի զինով:

Նա կանչեց իր մոտ ծառաներից մեկին և հրամայեց այս տարատի ծայրերը կարել ու լցնել ջրով: Մի քանի օր անց տարատը տեսել էին ջուր կրողների ուսերին պարկի փոխարեն օգտագործվելիս: Սակայն հետազոյում պարզ դարձավ, որ որոշ ժամանակ անց Փաշան հրամայել էր տարատը լցնել իր սիրած զինով և այդպես պահել»⁷⁴:

Վեաի այս հատվածը ակնհայտ ցույց է տալիս, թե ինչպես է Սորիկերը միանգամից մի քանի կողմից ծաղրում ու բացահայտում թուրք պաշտոնյաների հետամնացությունը: Նախ հեղինակը նկարագրում է թուրքական շալվարի ձևը այն

⁷⁴ Morier J., Ayesha, the maid of Kars, London, 1834, p. 158-159. Այս գրքից կատարված այս և հետագա բարգմանությունները իմ են-Ա. Ա.:

նմանեցնելով պարկի, որը կիրառում էն ջրաղացպանները, իսկ հետո արդեն անդրադառնում է այն փաստին, որ թուրքերը պատկերացում չունեն արևմտյան մարդու համար հագուստի ամենօրյա պարագա հանդիսացող տարբատի մասին։ Սորիերը իր հեզնանքն ու ծաղը մուսուլմանների նկատմամբ արտահայտելիս նրանց տվել է խոսուն բնութագրումներ. օրինակ, Կարսի բարձրաստիճան մուսուլմաններին հեզնաբար անվանելով «ամենախելացիները»՝ ցանկացել է ծաղրանքով ցույց տալ վերջիններիս չտեսությունը, այն, թե ինչպես են նրանք անզամ մի սովորական տարբատ տեսնելիս շփորչում և անում ամենատարբեր տիսմար ենթադրություններ։ Ուշագրավ է նաև այն դրվագը, որտեղ Փաշան առաջարկում է տարբատի մեջ խմիչք պահել. թվում է՝ հեղինակը կրկին ներկայացնում է բարձրաստիճան թուրքի տգիտությունը, բայց ավելի ուշադիր լինելիս հասկանում ես, որ Սորիերը մատնացույց է անում մի կարեռ բան ես. փաշան հրամայում է այդ տարբատի մեջ պահել իր սիրած գինին, մինչդեռ մենք գիտենք, որ մուսուլմաններին չի թույլատրվում խմել ալկոհոլային խմիչքներ⁷⁵: Այդ կերպ, կարծում ենք, Սորիերը ցանկացել է ցույց տալ, որ շատ մուսուլմաններ իրենց կենցաղավարությամբ զաղտնի խախտում էին իսլամի կանոնները։

Ուշադրության պետք է առնել վերը նկարագրված դրվագից նաև այն միջադեպը, երբ Փաշան իր միամիտ ենթադրության ճշմարտացիության ու հավաստիության համար հարց է ուղղում հայ Պողոսին։ Վերջինս առանց երկար-բարակ մտածելու սույ փաշայի ասածը չվիճարկելու համար հնազանդորեն հաստատում է նրա ենթադրությունը։ Վեպում այս հատվածն ընդգծված է, որը ենթադրել է տալիս, թե Սո-

րիերը հատուկ ցանկացել է ընթերցողի ուշադրությունը բնեղական այս հանգամանքի վրա՝ ցույց տալով այլազգիների, այս պետքում հայերի՝ իրենց թուրք իշխանավորների խոսքին ու ցանկությանը իրու կամակատար լինելը։ Այս կերպ հեղինակն արտահայտել է իր քննադատական վերաբերմունքը թուրքերի նկատմամբ՝ նշելով, որ իրերը չեն կարող այսպես կամ այսպես լինել ինչ-որ մեկի ցանկությամբ կամ հրամանով⁷⁶:

Վեպի այլ դրվագներում ևս տարրեր միջադեպերի միջոցով Սորիերը բազմից ներկայացնում է, թե ինչպես են Արևելի ու Արևմուտքի մարդկանց արժեհամակարգերը տարբերվում միմյանցից։ Նա ցույց է տալիս, որ Արևելքում հարցերը, խնդիրները պետական ամենաբարձր ասյաններում ավելի հաճախ լուծվում են ստի, փողի, կաշառքի միջոցով, այդ երեսույթները սովորական բնույթ են կրում այստեղ։ Մինչդեռ Արևմուտքից եկած Օսմոնյի համար սուսն ու կաշառքն ընդունելի չեն, նա սովոր է խնդիրները լուծել արդար ձանապարհով, ճշմարտության միջոցով⁷⁷։ Այդ կերպ Սորիերը ցանկացել է իր սիրելի անզիացի հերոսին իր բարոյական կերպարով վեր դասել թուրքական բարձրաստիճան պետական պաշտոնյաներից, մինչև անզամ փաշայից ու սուլթանից։

Ամեն հնարավոր ձևով Արևմուտքը վեր դասելով Արևելքից՝ Սորիերը, սակայն, նկատելի ջերմությամբ է վերաբերվում արևելյան մշակույթին, արևելյան իմաստությանը։ Նա տարրեր առիթներով հաճախ օգտագործում է արևելյան ասացվածքներ կամ արևելյան պոեզիայից քաղվածքներ է մեջքերում։ Հետաքրքիրն այն է, որ եթե մի կողմից հեղինակը գովերգում, փառարանում է իր կերտած արևմտյան հերոսներին, որոնք ավելի բանիմաց են, ավելի կրթված ու զարգացած, քան արևելյան մարդիկ, մյուս կողմից, սակայն, արևմտ-

⁷⁵ Buja E., Ethnic Humour in Intercultural Encounters: An Analysis of James Morier's Ayesha, The Maid of Kars, - Topics In Linguistics, Contexts, References and Style Constantine, Issue 12, Constantine the Philosopher University in Nitra, December 2013, p. 19.

⁷⁶ Նույն տեղում:

⁷⁷ Ste' u Morier J., նշան. աշխ., էջ 205-207:

յան հերոսների մտքերն արտահայտելիս նա բազմիցս դիմում է արևելյան ասացվածքներին կամ արևելյան պոետներին։ Ահա, օրինակ, ներքոհիշյալ քաղվածքում տեսնում ենք, թե ինչպես է արևելյան ասացվածքի միջոցով հեղինակը դիպուկ արտահայտում վեայի գլխավոր հերոսի միտքը. «Երբ Օսմոնդը նավապետին խորհուրդ տվեց փոխել նավի ուղղությունը, վերջինս պատասխանեց. «Տեսնենք, թե վաղը ինչպես կլինի»։ Այդ պահին Օսմոնդի մտքին եկավ պարսկական մի ասացվածք. «Փոքր հույսի խալին և ծխիր համբերության չիրույթ»⁷⁸։

Իսկ այս մյուս դրվագում հեղինակը, փորձելով ավելի տպավորիչ ներկայացնել պատկերը, մեջբերում է մի հատված պարսկական պոեզիայից. «Սև ծովի փոթորիկից, անհանգիստ ջրերից ու անորոշությունից անցումը դեպի Բոսֆորի հանգիստ ու խաղաղ նեղուցը կարելի է ներկայացնել պարսկական պոեզիայից մի մեջբերմամբ. «Գիշերը գնում ես քնելու դահճի տանը պարանը վզիդ կապված, իսկ առավոտյան արքնանում ես ծաղկանցում, որտեղ մատովակները քեզ վարդագույն գինի են մատուցում»⁷⁹։

Թվում է, թե հեղինակն ինքն իրեն հակասում է՝ մի կողմից ցույց տալով Արևելի հետամնացությունը, մյուս կողմից դիմելով հենց այդ նույն Արևելի իմաստությանը։ Բայց եթե փորձենք մի փոքր այլ կերպ նայել այս ամենին, ապա կարող ենք եզրակացնել, որ Սորիերն այս հակասության միջոցով փորձում է իր իրական վերաբերմունքն արտահայտել Արևելի նկատմամբ։

«Այեշան՝ Կարսի հարձը» գրելով 19-րդ դարի երկրորդ քառորդում՝ Սորիերը բատ էության ընդառաջ է գնացել արևմտյան հասարակության՝ Արևելի նկատմամբ ձևավորված վերաբերմունքին, որի համաձայն Արևմտութն ավելի բարձր էր

Արևելքից։ Սակայն, երկար տարիներ ապրելով ու աշխատելով Պարսկաստանում, Սորիերը Արևելքը տեսել ու հասկացել էր ներսից և եկել այն գիտակցման, որ եթե Արևելքն իր զարգացվածությամբ, կրթվածությամբ զիջում է Արևմտութիւնին, ապա իր իմաստությամբ այն ավելի խորն է, պոեզիայով ավելի բարձր, քանի որ նրան հաջողվել է հասնել ու դիպչել մարդկային հոգու ամենանուրք լարերին։

Անդրադառնալով Սորիերի կերտած արևելյան կերպարներին՝ նշենք, որ արևմտյան շատ մասնագետներ, ինչպես, օրինակ, Խոհակովան, գտնում են, որ Սորիերը «Այեշան՝ Կարսի հարձը» վեպում ստեղծել է Արևելքի մարդկանց ընդհանրական, միհաննական կերպարը՝ առանց ազգային կոնկրետ բնավորության նկարագրման⁸⁰։ Սակայն ավելի խորն ուսումնասիրելով վեպը՝ կարելի է համոզվել, որ Սորիերի ստեղծած արևելյան մարդկանց կերպարը ընդհանրական է միայն արևմտյան մարդու կերպարի ֆոնի վրա, իսկ առանձին դեպքերում էլ հեղինակին հաջողվել է ստեղծել արևելյան տարբեր ժողովուրդների մարդկանց անհատական լիարյուն կերպարներ։ Օրինակ, նա բազմիցս անդրադարձել է քուրքերին, ներկայացրել նրանց բնորոշիչ հատկանիշները. «Թուրքերը մեծ դեր են հատկացնում հանգստությանը և ատում են աղմուկը։ Նրանք սիրում են նստել իրենց բազմոցի մի անկյունում, լսել շատրվանի՝ անդադար հոսող ջրի ձայնը և ծխել իրենց հանգստության շիրուխը կամ մեղմ ու հանգիստ գրուցել ընկերների հետ։ Բայց եթե նրանց անհանգստացնում են, նրանք անմիջապես դիմում են ծայրահեղության, որի պատճառով սպանում են կամ սպանվում։ Հանգիստը խանգարողին նրանք արագ վերացնում են՝ հաշվի շառնելով ճիշտն ու սխալը, և նորից վերադառնում են իրենց ծխամորձի ու շատրվանի մոտ, կարծես ոչինչ չի պատահել»⁸¹։ Վեպի մի

⁷⁸ Նույն տեղում, էջ 205-207։

⁷⁹ Նույն տեղում, էջ 311։

⁸⁰ Искакова Л., նշվ. հոդ., էջ 116։

⁸¹ Morier J., նշվ. աշխ., էջ 117-118։

այլ հատվածում հեղինակը նկարագրում է քրդերին. «Քրդերը հնագույն ռասա են, որոնց ահաբեկչական փորձն այնքան հին է, որքան և իրենք: Նրանք չեն ենթարկվում ո՛չ սուլթանին, ո՛չ էլ փաշային, և նրանց իսկ առաջնորդները հազիվ են կարողանում հնագանդեցնել քրդերին»⁸²: Մորիերը ցույց է տալիս, որ միմյանց դեմ պատերազմող թուրքերի և պարսիկների համար քրդերը դարձել են ատելության առարկա:

Հեղինակային այսախիս առանձին նկարագրություններից բացի՝ մենք նաև վեպի հերոսների խոսքերից, գրույցներից տեղեկանում ենք թուրքերի և հայերի, թուրքերի և հրեաների միջև տեղի ունեցող հակասությունների և բախումների մասին (Սուստաֆա, Պողոս, Այեշա): Մշտական առձակատումն այդ աշխարհի հիմնական բնորոշիչ հատկանիշն է: Թուրքերը, փորձելով ցույց տալ իրենց գերակայությունը, ամեն հարմար առիթով ստորացնում ու նվաստացնում են իրենց տիրապետության ներքո գտնվող ժողովուրդներին, անմարդկային վերաբերմունք ցույց տալիս նրանց նկատմամբ. «Օսմոնի և նրա ուղեկիցների փախուստի պատճառները հետախուզելիս, - գրում է Մորիերը, - հայտնի է դառնում, որ նրանց վերջին անգամ տեսել են հայ ներկարարի տանից դուրս զալիս զինված և ձի հեծած: Այս տեղեկությունը լսելուն պես փաշան իր մարդկանց ուղարկում է՝ Պողոսին բերելու: Շուտով վախից դողացող խեղճ Պողոսը կանգնում է փաշայի առջև: Նրան տեսնելով՝ թուրքերը ոգևորվում են, և ամեն մեկը հային ողջունում է տարբեր արտահայտություններով: Մեկն ասում է. «Շան տղա»: Մյուսն ասում է. «Անահավատ խոզ»: Իսկ Մուֆթին, դիմելով Պողոսին, հարցնում է. «Ո՞ւր է անհավատ եվրոպացին, պատասխանի՞ր, թե չէ կգնաս ուղիղ դժոխը»⁸³: Վեպից մեջբերված այս հատվածը շատ լավ ցույց է տալիս

բուրբերի վերաբերմունքը ազգային փոքրամասնությունների նկատմամբ: Այսախիս դրվագները քիչ չեն վեպում:

Հեղինակը տարբեր դրվագներում նաև ցույց է տալիս, որ բուրբերը ոչինչ հաշվի չեն առնում, նրանք անտեսում են օրենքն ու բարոյական նորմերը, միայն թե ճնշեն այլազգիներին, ցույց տան իրենց գերակա լինելը. «Կաշառակերությունը գենուս շատ մեծ ծավալներ էր ընդգրկում, - վկայում է հեղինակը: Մի հրեա միջնորդ ու մի թուրք նպարավաճառ՝ բարձր մակարդակի երկու սրիկա, միավորվել էին, որպեսզի խարեն մի հայ առևտրականի: Հրեան գնացել էր հայի մոտ և ասել. «Ես գտել եմ զնորդ, ով մեծ քանակությամբ շաքարավազ, սուրճ, համեմունքներ և այլ ապրանքներ կգնի, նա շատ ազնիվ մարդ է, ում համար ես կարող եմ երաշխավորել, ի՞նչ կասես»: Հայր համաձայնվել էր, հանդիպել էր թուրք նպարավաճառի հետ, ով նրան որպես կանխավճար հազար պիաստր էր տվել ու տարել ապրանքները: Եվ հիմա այդ թուրք նպարավաճառը դատարանի առջև էր կանգնել հայ վաճառականի ներկայացրած հայցի համաձայն, բայց թուրքը երդվում էր, որ ամբողջ գումարը վճարել է: Նա իր ասածները հաստատում էր երկու սուս վկաների միջոցով: Երկար դատավարությունից հետո Մեծ Վեզիրը խորհուրդ է տալին նրանց լուծել վեճը երրորդ դատարանի միջոցով: Խորհուրդն ի կատար ածելուց հետո կայացվում է որոշում, որի համաձայն հայ վաճառականը կորցնում է իր ունեցվածքի երկու երրորդը, թուրք նպարավաճառը հեռանում է որպես հայողող և քացիով դուրս հանում իրեա միջնորդին իր խանութից, քանի որ վերջինս համարձակվել էր ավարից բաժին պահանջել⁸⁴: Փաստորեն, թուրք նպարավաճառը հանցագործ խարբայությամբ ներգրավվում է խարդախության մեջ կանխավաստակ լինելով, որ ինչ էլ լինի, միևնույն է, ինքը չոր դուրս կգա ջրից, ավելին՝ դեռ շահույթ էլ կունենա:

⁸² Նույն տեղում, էջ 55-56:

⁸³ Նույն տեղում, էջ 157:

⁸⁴ Նույն տեղում, էջ 323-333:

Թուրքերի ու հրեաների փոխարարերությունները նկարագրող ևս մի հատված կա վեպում. մեջբերենք. «Մի առավոտ Օսմոնդը նստած էր իր ընկեր Յուզբաշի հետ, ծխում էր հանգստացնող չիբուխը և զրուցում թուրքերին բնորոշ անիմաստ բաներից. երբ լսվում են աղաղակներ ու բղավոցներ: Այդ բղավոցների պատճառն այն էր, որ թուրքերը հարձակվել էին մի հրեայի վրա, որի թշվար արտաքինը ցավակցություն էր առաջացնում: Այդ հրեան գունատ, անհույս հայացքով մի մարդ էր, ում հազուկապր բաղկացած էր մաշված կապույտ տարատից և կապույտ վերնաշապիկից, նրա նիհար վերջույթները դուրս էին գալիս տարօրինակ ծագում ունեցող ծակերից: Այն բառերը, որոնք այդ հրեան արտաքրում էր կամ ավելի շուտ գոյուում էր, զրավեցին Օսմոնդի ուշադրությունը:

- Ես ատամնարույժ չեմ, երդվում եմ, ես ատամնարույժ չեմ, - ասում էր հրեան:

- Ո՞չ, դու ատամնարույժ ես, ատամնարույժ, - գոյում էին հարձակվողները, - բռնի՛ ր նրան, խփի՛ ր նրան, ջարդի՛ ր նրա գլուխը, այ շուն հրեա, դու ատամնարույժ ես:

Լսելով և տեսնելով այս ամենը՝ Օսմոնդը վեր կացավ տեղից և փորձեց օգնել խեղճ հրեային.

- Ի՞նչ է պատահել:

- Դու դեռ հարցն ում ես՝ ինչ է պատահել, - ասաց հարձակվողներից մեկը, - այս շուն հրեան ատամնարույժ է, բայց պնդում է, որ ատամնարույժ չէ:

- Բայց ինչո՞ւ եք դրա համար ուզում խփել նրան, - հարցեց Օսմոնդը, - արդյո՞ք հանցագործություն է ատամնարույժ չլինելը:

- Այն, որ հրեան չի ցանկանում կատարել մուտումանի ցանկությունը, արդյոք հանցագործությո՞ւն չէ, - պատասխանեց մյուսը, - նա հրաժարվում է հեռացնել մեր պարոններից մեկի ատամը:

Այդ հրեան մասնագիտությամբ, իրոք, ատամնարույժ էր ու շողոքորք: Երբ նրան կանչել են Բոսրանցի Բաշի ատամը հետացնելու, նա սխալմամբ հեռացրել է առողջ ատամը փշացածի փոխարեն: Գիտակցելով իր սխալը՝ նա մի քանի շաբաթ բարնվել է՝ վախենալով, որ իրենից կցանկանան վրեժ լուծել: Վեց ամիս անց, երբ նա վերջապես համարձակվել է դուրս գալ իր թաքստոցից հուսալով, որ ամեն ինչ արդեն մոռացվել է, նա հանդիպել է Բոսրանցի Բաշին: Հրեա ատամնարույժը փորձել է թաքնվել բայց անհաջող: Նրան բռնել են, տարել Բոսֆորի նեղուցի կառավարչի մոտ, որն էլ, բացականչելով. «Այ շուն հրեա, դու կարծում ես, որ ես մոռացել եմ քո արարքը, ապա նայի թ այստեղ», նրա աշքի առջև թափահարել է իր ատամը: Բոսրանցի Բաշին հրամայել է հեռացնել հրեայի բոլոր ատամները: Բարեբախտարար հրեան զրկվել է ընդամենը մի քանի ատամից, որից հետո ձերբակալվել է ու արտնել»⁸⁵:

Վեպում Սորիերը նաև շատ լավ է ներկայացրել մուտումանների անհանդուրժողական վերաբերմունքը այլադավանների նկատմամբ իրենց կրոնի խւամի դիրքից: Օրինակ, Օսմոնդի ուղեկից թուրք Սուստաֆայի մասին նա գրում է. «Բնկական մուտուման լինելով՝ նա, հայտնվելով քրիստոնյաների միջավայրում, նմանվում է հավերի մեջ հայտնված արլորի: Նա իրեն շատ մեծամիտ և լկտի է պահում: Հայերի տանը իրեն զգում է այնպես, ինչպես իր սեփական տանը, հրամաններ է արձակում ու կարգադրություններ տալիս տանտիրոջը»⁸⁶: Նույնպիսի վարքազիծ ունի նաև Կարսի բարձրաստիճան պաշտոնյաններից Սովեյման աղան, ով «քրիստոնյաների հետ շների նման է վարվում»⁸⁷:

⁸⁵ Նոյն տեղում, էջ 397-399:

⁸⁶ Նոյն տեղում, էջ 61:

⁸⁷ Նոյն տեղում:

Սորիերը չի հանդուրժում կրոնական այսպիսի խտրականությունը, այն զաղափարը, թե մի կրոնը գերակա է մյուսից, և զանում է, որ տարակրոն հարաբերությունների պայքարում մեղավոր են ոչ թե կրոնական դավանաբանությունները, այլ դրանց մոլեռանդ հետևորդները, որոնք կրոնը իրենց համար ավելի օգտագործում են որպես քաղաքականություն, քան որպես սույն հավատամբ: Հստ հեղինակի սահմանափակությունն ու մոլեռանդությունն բնորոշ են անզրագետ, կոպիտ, մշակութային ցածր մակարդակով մարդկանց (Մուստաֆա, Սուլեյման աղա, Քարա թէյ):

Այսպիսով, ուսումնասիրելով Զ. Զ. Սորիերի «Այեշա՝ Կարսի հարճը» վեպը, տեսնում ենք, որ այն հստակ ու ծավալուն պատկերացում է տալիս 19-րդ դարի Օսմանյան Թուրքիայի քաղաքական ներքին, բազմամշակութային կյանքի մասին: Եվրոպացի ճանապարհորդն ականատեսի աշքերով հյուտում է տիսուր, հաճախ սարկագույն հարուստ վավերագիր պատություն, որտեղ հերոսն ինքն է խճճում թուրքական խարդավանքների սարդոստայնում:

Վեպում ընտրված աշխարհագրական վայր է պատմական Կարս քաղաքը, որը դնելով նկարագրվող պատմական կարևոր իրադարձությունների կիզակետում, հեղինակը փաստում է Օսմանյան Թուրքիայում ազգային փոքրամասնությունների՝ հայերի, հույների, հրեաների նկատմամբ իրականացվող դաժան քաղաքականության մասին:

МУЛЬТИКУЛЬТУРНЫЙ ОБРАЗ ТУРЦИИ 19-ОГО ВЕКА В
РОМАНЕ ДЖ. ДЖ. МОРИЕРА “АЭША, ДЕВУШКА С КАРСА”
Анжела Авагян
(резюме)

Роман “Аэша, девушка с Карса” написанная известным английским писателем, путешественником и дипломатом Дж. Дж. Мориером в 1841 г., дает ясное представление о внутренней политике и мультикультурной реальности Османской Турции 19-ого века. В романе автор с помощью действий и поведения героев представляет межкультурные контакты, различия и сходства народов приналежавших к разным этническим группам и показывает отношения между Западом и Востоком. Автор также свидетельствует о жестокой политике Османской Турции по отношению национальных меньшинств: армян, греков, евреев.

THE MULTICULTURAL IMAGE OF 19TH CENTURY TURKEY IN
“AYESHA, THE MAID OF KARS” BY J. J. MORIER
Anjela Avagyan
(summary)

The novel “Ayesha, The Maid of Kars”, written in 1841 by famous English writer, traveler and diplomat J. J. Morier, gives a clear picture of the domestic policy and the multicultural reality of 19th century Ottoman Turkey. In the novel, the author presents intercultural contacts, using action and behavior of epic characters, he shows the differences and similarities between people, who belong to different ethnic groups and the relationship between the West and the East. The author also indicates the severe policy of the Ottoman Turkey against minorities: Armenians, Greeks, Jews.

**ԱՆՈՂԻԿ ՄԱՐՊԻՐՈՍՅԱՆ
ՌՈՒԲԵՆ ՄԵԼքոնյան
բ.գ.թ., դոցենտ**

**ԱԴԱԼԵԹ ԱԴԱԾԼՈՒԻ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՃԱԿԱՆ ԵՎ
ԹԵՄԱՏԻԿ ԱՌԱՆՁԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐԶ**

**Բանայի բառեր՝ «Մարդի 12-ի վեպ», ծախակողմյան
շարժում, կին հեղափոխական, անհաղի օդարում, «ակն-
թարթի» վեպ, գիրակցության հոսք**

Աղալեթ Աղաօղլուն 20-րդ դարի թուրքական գրականության անվանի ներկայացուցիչներից է, ով հայտնի է ոչ միայն իր վեպերով ու պատմվածքներով, այլև երեխաների համար գրված 14 գրքի, 10 ուսումնական գրքերի, թատերական պիեսների հեղինակ է: Նշենք նաև, որ Աղալեթ Աղաօղլուի ստեղծագործությունների հիմնա վրա 5 գեղարվեստական ֆիլմ է նկարահանվել: Նա ծնվել է 1929 թ. հոկտեմբերի 23-ին Նալլիրիան զյուղաքաղաքում: 1938 թ. նախակրթարանն ավարտելուց հետո ընտանիքի հետ միասին տեղափոխվել է Անկարա և կրթությունը շարունակել Անկարայի առջիկների լիցեյում: 1950 թ. ավարտել է Անկարայի համալսարանի լեզվի, պատմության և աշխարհագրության ֆակուլտետի ֆրանսերեն լեզվի ու գրականության բաժինը, որից հետո աշխատանքի անցել Անկարայի ուսումնական համակարգում: Այս տարիներին իր դերասան չորս ընկերների՝ Քարթալ Թիրերի, Ուներ Էլսուների, Չերին Քյոլօղուի և Նուր Սարունջուի հետ միասին հիմնել է Անկարայի առաջին առանձնահատուկ թատրոնը՝ «Հրապարակի բեմը»: 1951 թ. գրել է առաջին ուսումնական գրքը՝ «Սիրո երգը», ինչպես նաև բազմաթիվ պատմվածքներ, որոնք ընթեցվում էին «Կյանքը գեղեցիկ է» անկախ ամեն ին-

չից՝ կյանքը գեղեցիկ է» ուսումնական շրջանակներում: Անկարայի ուսումնական աշխատել է մինչև 1970 թ., որից հետո գրադարձ է միայն գրականությամբ՝ երբեմն հանդես գալով Ռեմյոս Թեալարա և Փարքեր Քուինը կեղծանուններով: 1983 թ. Աղալեթ Աղաօղլուն ապրում և ստեղծագործում է Ստամբուլում:

Աղալեթ Աղաօղլուի անունն ընթերցողների լայն շրջանակի համար ճանաչելի դարձավ 1960-ական թթ., եթե մեկը մյուսի հետեւ սկսեցին լուս տեսնել նրա պիեսները՝ «Տանիքի մեղք» («Çatıdaki Çatlak»), «Սահմաններին» («Sınırlarında») «Երեք պիես» («Üç Oyun»): Վերջինը 1973 թ. արժանացել է Թուրքական լեզվաբանական ընկերության, իսկ 1974 թ.՝ Բարձրագույն թատերական մրցանակներին¹: 1974 թ. լուս տեսավ գրողի «Բարձր լարում» («Yüksek Gerilim») պատմվածքների ժողովածուն, որը սոցիալիստական գաղափարախոսության և հեղինակի՝ «հեղափոխական» աշխարհներակալումների արտացոլանք էր²: Ավելին՝ գրողի պարզաբանմամբ այն պետք է նպաստեր գրականության մեջ նման ընկալումների ամրապնդմանը. ժողովածուն գործնական քայլ էր, ի տարբերություն տեսական ըննարկումների, թե «...բոլորը պետք է սոցիալիստ լինեն»³: Քաղաքական հայտարարությունները, գաղափարախոսական ուղերձները ծանրակշիռ էին նաև նրա երկրորդ՝ «Լոռության առաջին ձայնը» («Sessizliğin İlk Sesи») գրքում:

¹ Ա. Աղաօղլուի ստեղծագործություններն արժանացել են Օրհան Քեմայի, Սահի Ֆահրի անվան, Մադարալի, ինչպես նաև Սեղաթ Սիմակի հիմնարարի գրական հեղինակավոր մրցանակներին: 1995 թ. թուրքական հասարակության մշակութային և գեղարվեստական կյանքում ունեցած մեծ ներդրման համար Ա. Աղաօղլուին շնորհվել է Մշակության և արվեստի նախարարական մեծ մրցանակը (Cumhurbşakanlığı Kültür ve Sanat Büyük Ödülü):

² Репенкова М., От реализма к постмодернизму, Москва, 2008, с. 211.

³ Tosun N., Adalet AĞAOĞLU Öykücüllüğü, <http://www.ustkurgu.com/?p=71>

Դետք է նշել, որ Ադալիք Աղաօղլուն թուրքական գրականության մեջ այն գրողներից է, ով մեծ ներդրում է ունեցել 1970-80-ական թթ. Թուրքիայում տեղի ունեցած իրադարձությունների ողջ համայնապատկերը գեղարվեստորն ներկայացնելու, գրականության նկարագիրը որոշակիացնելու գործում: Նա «Մարտի 12-ի»⁴ այն եզակի գրողներից է, ով հանդիս է եկել ժամանակի պոպուլյատուական գրականություն հասկացության քննադատությամբ: Գրականագետների համոզմամբ Ա. Աղաօղլուի ստեղծագործությունները «Մարտի 12-ի» ժամանակաշրջանի քննադատուական ռեախտական պատմածաճրների ու վեպերի շարքում քաղաքային տեսանկյունից գրված կեղծ գյուղագրությունների՝ իր բնորչմամբ «լավ, ճշմարիտ ուսուցիչ, վատ, կեղտոտ գյուղապետ» կաղապարով ստեղծագործությունների մերժում էին⁵: Ըստ նրա՝ իր վեպերը ձևի փորձարկումներ էին, որոնց նպատակն էր գտնել այն մեթոդը, որը հնարավորություն կտար լավագույն պատկերել ազատություն ձեռք բերելու համար քաղաքան և մշակութային ճնշումների դեմ անհատի մղած պայքարը: Նկատենք, սակայն, որ Ա. Աղաօղլուի գրականությունը նույնպես հագեցած էր ժամանակաշրջանի խնդիրների, գաղափարախոսական պայքարի և հեղափոխության մթնոլորտով: Նրա վեպերը երիտասարդական շարժման ձախողումից հետո ձախակողման անհատի ֆիզիկական ու հոգեբանական «ոչնչացման», թուրքական հասարակության քենոացման տարբեր դրսնորումների, երիտասարդության ծայրահե-

⁴ 1971 թ. մարտի 12-ին Թուրքիայում տեղի ունեցած ռազմական միջամտությունը և ձախակողման շարժումը վերացնելու համար իշխանությունների կիրառած բռնաձնշումներն իրենց արտացոլումը զուսն ժամանակի գրականության մեջ: Քաղաքականացմած արձակի այս աննախադեպ վերելքն ընդունված է կոչել «Մարտի 12-ի վեպ» ընդհանուր անունով:

⁵ Coşkun B., Adalet Ağaoğlu'nun Hikâyelerinde Bir Eleştiri Vasisitasi Olarak İroni, A. Ü. Türkiyat Araştırmaları Enstitüsü Dergisi, Sayı 49, 2013, s. 147.

գրական գործողությունների, ժողովրդի և մտավորականության դերի ընկալման, հեղափոխական պայքարի մարտավարության վերաբերյալ իրարամերժ կարծիքների յուրատեսակ վկայություն են: Այս առումով Ա. Աղաօղլուն ստեղծել է գրական համալիր աշխարհ, որտեղ միավորվել են սոցիալ-քաղաքական և պատմական իրականություններն ու իր կերպարների հոգեկան աշխարհը, միաձուլվել են անցյալն ու ներկան: Նրա ստեղծագործությունները գրականագետ Ռոբերտ Ֆինը Ֆիննի բնորոշմամբ «սահմուկեցուցիչ կերպով ճիշտ են ընկալում իրականության և երևակայության սահմանը»⁶: Սա պայմանավորված է նրանով, որ գրողը կարողացել է հավասարակշռություն ստեղծել արվեստը որպես հասարակական նյութ ներկայացնելու միջոց օգտագործելու և նյութն արվեստի ստեղծագործություն դարձնելու միտումների միջնորդությունում է: Բացի այդ՝ Ա. Աղաօղլուն իր հարցագրույցներից մեկում ընդգծել է, որ գրում է միայն այն իրադարձությունների մասին, նկարագրում միայն այն վայրերը, որտեղ անձամբ է եղել, քանի որ ինչպես նշում է: «Զեմ կարող գրել այն, ինչ չկա իմ մեջ... վեպն իմ մտքում կառուցելուց, նույնիսկ վեպի ուրվագիծը գրելուց հետո անզգայացած ոճագործի նման շրջում եմ այնպիսի վայրերում, որտեղ կան այդ հերոսների նմանները»⁷:

Ա. Աղաօղլուի 8 վեպերից յուրաքանչյուրը և թեմատիկ ընդգրկումների, և տեխնիկական ու ստեղծագործական մեթոդների առումով միմյանցից տարբեր են: Մինչդեռ միևնույն ժամանակ դրանցում շարունակականություն կա. յուրաքանչյուր վեպ նախորդում պատկերված հասարակական և գրական խնդիրները բացելու և լուծումները զարգացնելու

⁶ Akbatur A., Turkish Women Writers in English Translation, MonTI 3, 2011, p. 171.

⁷ Moran B., Türk Romanına Eleştirel Bir Bakış, III cilt, İstanbul, 2005, s. 33.

⁸ Yalçın A., Siyaset ve Sosyal Değişmeler Açısından Cumhuriyet Dönemi Çağdaş Türk Romanı 1946-2000, Ankara, 2. Baskı, 2005, s. 462.

միտում ունի: Այս շարունակականությունը, որ ստեղծագործական առանձնահատկության արդյունք է, հեղինակն ապահովում է 3 հիմնական թեմայի՝ թուրք կնոջ կարգավիճակի ընկալումների, ուզմական հեղաշրջումների արտացոլումների և անհատի ներքին ճգնաժամի միջոցով⁹: Այս վեպերի սյուժեի բաղադրիչ տարրերն են անհիմն ձերբակալությունները, դատավորությունները, խոշտանգումները, բաները, խուզարկությունները, մահը, հասարակությունից օտարումը և դրանց կործանիչ ազդեցությունն անհատի վրա:

Նշենք, որ Ա. Աղաօղլուի ստեղծագործություններում առանձնահատուկ տեղ ունի կնոջ թեմատիկան: Սա պատահական չէ, քանի որ հեղինակն ինքը լինելով հեղափոխական մտավորական և իր խնդիրը համարելով խոսել ուզմական միջամտության ժամանակաշրջանում թուրքական հասարակության մեջ ձախակողմյան շարժման մասնակից կնոջ կարգավիճակի մասին, որպես ստեղծագործության գլխավոր հերոս ընտրեց նրան, փորձեց ներկայացնել վերջինիս նկատմամբ հասարակական վերաբերմունքն ու այն գինը, որը կինը պետք է վճարեր «հեղափոխական» լինելու համար: Այլ կերպ ասած՝ նրա ստեղծագործություններում հիմնականում պատկերված են այն արգելքները, որոնք թույլ չեն տալիս կնոջն ինքնադրսուրպել, ապրել որպես անհատ: Ընդ որում՝ դրանք հիմնականում կառուցված են եզրահանգմամբ, որ թուրք կնոջ ճնշվածության պատճառը թուրքական հասարակական-քաղաքական կյանքն է, ավանդական ընկալումները, ինչը գրողը փորձել է հիմնավորել Արևելք-Արևմուտք հակադրումներով¹⁰: Հավելենք, որ Ա. Աղաօղլուն հանդես է եկել նաև կնոջ նկատմամբ իսլամի միջոցով օրինականացված

ասիմանափակումների քննադատությամբ: Այս տեսանկյունից հատկանշական է նրա «Աստծու վերջին ծանուցումը» («Tanrı'nın Sonuncu Tebliğî») ստեղծագործությունը, որտեղ բացեիրաց դրսերրվել է կրոնի հարցում գրողի բավական կուպիտ և անհանդուրժողական վարքագիծը:

Գրողի ստեղծագործություններում տարբերակվում են երկու տեսակի կանայք՝ «գիտակից» և «անգիտակից»: «Գիտակից» են միայն նրանք, ովքեր քաղաքական ակտիվություն են դրսեւում: Այս կանանց կենսաձևերը լիովին տարբեր են, նույնիսկ իրարամերժ: Եթե «անգիտակից» կինը պատկերված է տիպիկ բուրժուական կենցաղով, ապա «գիտակից», հեղափոխական կնոջ դեպքում գործողությունների շղթան պատվում է միայն պարբերաբար խոշտանգումների ենթարկվելու տեսարանների շորոշ: Այս կերպարները դեմ են դուրս գալիս թուրքական հայրիշխանական հասարակության մեջ հաստատված նորմերին և իրենց երազանքներն իրականություն դարձնելու համար պատրաստ են կատարել անհրաժեշտ բոլորը քայլերը: Հետաքրքիր է, որ Աղաօղլուն անդրադարձել է նաև անվճռական կանանց: Այս հանգամանքը, ըստ բուրք գրականացես Նեշիփ Թոսունի, «Գուցե և մի ձև է, որով Աղաօղլուն կարծես գտել կամ վերահսկում է իրեն»¹¹:

Ա. Աղաօղլուի կերտած կերպարները տարբեր տարիքի են, սերի ու դասի, նրանք որոշակի վայրի և ժամանակի ծնունդ են: Հեղինակի բնորոշմամբ այս կերպարները երբնէ որպես թիրախ չեն դիտվել, այլ տեղակորվել են օբյեկտիվ իրավիճակների մեջ և ազատ ապրել են իրենց կյանքը¹²: Նրա ռեալիստական վեպերն արտացոլել են «այն անհատի ներաշխարհը, ով «վերացել է պատմությունից, հասարակությունից, նույնիսկ չի կարողանում երեկն իր ապագայի հետ կապել»¹³:

⁹ Erol S., On Adalet Ağaoğlu, http://www.lightmillennium.org/2005_15th/aagaoglu_serol.html

¹⁰ Aslan A., The Role of the Intellectual in Contemporary Turkish Women's Narratives, Comparative Literature and Culture 14.1, Purdue University Press, 2012, p. 3-8.

¹¹ Tosun N., Adalet Ağaoğlu Öykücülüğü, <http://www.ustkurgu.com/?p=71>

¹² Ağaoğlu A., Karşılaştırmalar (1984-1992): Deneme, İstanbul, 1997, s. 265.

¹³ Sunat H., Hayal, Hakikat, Yaratı, Adalet Ağaoğlu ve Roman Dünyasına Psikanalitik Duyarlıklı Bir Bakış, İstanbul, 2001, s. 7.

Ուստի՝ կարող ենք փաստել, որ հեղինակն իր ստեղծագործություններում կարևորել է իրավիճակների արտացոլումը, մեծ տեղ է հատկացրել անհատների ներքին ձայնին: Գրողը կարողացել է նուրբ հավասարակշռություն ստեղծել արտաքին սոցիալական իրականության նկարագրության, որը հիմնավորում է կերպարների գործողություններն ու սյուժեի այդօրինակ զարգացումը, և հոգական աշխարհի, նրանց իդեալների միջև: Նման մոտեցումը թերևս պայմանավորված է գրողի՝ վեպի ժանրի ընկալումներով, քանի որ այն, ըստ նրա, «ձև է», որտեղ միաձուլվում են կյանքն ու մտածելակերպը՝ դառնալով բացառիկ գենք մարդկային կյանքի հատվածայնության դեմ¹⁴:

Ա. Աղաօղլուի վեպերի այուժեում կարևոր տեղ է գրավում ժամանակը: Իր հարցագրույցներից մեկում նա նաև նշել է, որ սկսել է ստեղծագործել զուտ թուրքական գրականության մեջ ավանդական ժամանակի հասկացության կադապարները կոտրելու, «ակնթարթի» վեպը գրելու համար¹⁵: Հեղինակն իր այս ձգուում այսպես է բացատրում. «Մարդը հազարավոր տարվա մարդկության կյանքում այդ կյանքի որոշակի ժամանակաշրջանն է ապրում, ընդհանուր առմամբ 60 տարի է ապրում, և շատ կարճ ժամանակահատվածի ներկայացուցիչ է մարդը: Սակայն այդ կարճ ժամանակահատվածը երեկ և այսօր ունի: Ապագա էլ է ունենալու: Եթք վեպն այսպես ենք ընկալում, բնական է դառնում կարճ ժամանակի ընտրությունը»¹⁶: Հետևաբար, Ա. Աղաօղլուն իր ստեղծագործություններն այնպես է կառուցում, որ մի կողմից մերժում է իրականության ժամանակագրությունը, մյուս կողմից ստեղծում է այն-

պիսի հավասարակշիռ խառնաշփոթ, որտեղ անցյալը զուգահեռվում է վեպի ներկա ժամանակի հետ: Մասնավորապես՝ թեև Ա. Աղաօղլուի տիպիկ վեպերում գործողությունը կարծես տեղի է ունենում միայն մեկ գիշերվա կամ նույնիսկ մեկ ժամվա ընթացքում, սակայն իրականում իրադարձությունների մասին հերոսների հետընթաց հիշողությունների շնորհիվ այն իր մեջ խոր անցյալ է պարունակում: Նման ստեղծագործությունների շարադրանքի հիմնական եղանակներն են գիտակցության հոսքը, ներքին մենախոսությունը և վերացականությունը:

Ա. Աղաօղլուի ստեղծագործություններում ուշադրություն են գրավում տեքստի ամբողջականությունը և կրկնվող ձայնների, բառերի ու նախադասությունների միջոցով ստեղծված ներդաշնակությունը, որն ապահովում է այուժեի զարգացումն ու ընթերցողին հասցնում վեպի հիմնական ուղերձը: Հավելենք, որ գրողի ստեղծագործությունների կարևոր բաղադրիչներից են նաև ոիթմը և հեգնանքը: Եվ Ա. Աղաօղլուն, իրավամբ, համարվում է թուրքական գրականության մեջ ոիթմը որպես ստեղծագործության հիմնական տարր կիրառած գրողների առաջամարտիկը: Ինչպես հայտնի է, ոիթմի միջոցով գրողները ընդգծում են տեքստի իմաստն ու անհրաժեշտ խորություն հաղորդում դրան: Սա իրականացվում է երբեմն կանոնավոր ընդմիջումներով կրկնվող նախադասությունների, երբեմն տեքստի մեջ տարրապուծված տեսիլների, երբեմն էլ նկարագրությունների միջոցով: Մինչդեռ Ա. Աղաօղլուի ստեղծագործություններում ոիթմը ձևավորվում է կրկնվող նախադասությունների միջոցով: Արանք ոչ թե պատահական նախադասություններ են, այլ հիմնական շեշտեր են, որոնք ստեղծագործության թեման թարցնում են նրա կառուցվածքի մեջ: Այուժեի զարգացմանը զուգահեռ այս նախադասություններն անկանոն կերպով տեքստ են ներթափանցում և ստիպում, որ ընթերցողը չկտրվի ստեղծագործության

¹⁴ Erol S., On Adalet Ağaoğlu, http://www.lightmillennium.org/200515th-aagaoglu_serol.html

¹⁵ Apaydin A., Adalet Ağaoğlu'nun Dar Zamanlar Üçlemesinde Zaman Kurgusu Üzerinde Bazı Değerlendirmeler, Ç.Ü. Sosyal Bilimler Enstitüsü Dergisi, Cilt 15, Sayı 2, 2006, s. 19.

¹⁶ Ağaoğlu A., նշվ. աշխ., էջ 221:

մթնոլորտից¹⁷: Ինչպես նշվեց Ա. Աղաօղլուի ստեղծագործությունների շարադրանքի ձևերից մեկն է հեզնանք է, որը ի ցույց է դնում գրողի քննադատական վերաբերմունքը բնությունների նկատմամբ: Նրա ստեղծագործություններում հեզնանքը ծնվում է ալազոնի և էիրոնի¹⁸ հակադրությունների միջոցով: Նշենք, սակայն, որ Ա. Աղաօղլուի ստեղծագործություններում այս կերպարներն օժտված չեն իրենց բնորոշ ավանդական ակնհայտ տարբերություններով: Գրողը սովորաբար հեզնանքի գոհին բնորոշ տգիտություն, անտարբերություն, նախապահարմունք, անփորձություն, զգացմունքների բացակայություն հատկանիշներից կիրառում է գերազանցապես երկուսը՝ տգիտությունն ու զգացմունքների բացակայությունը: Գրողն իր վեպերում այս եսասեր, սնոր և տիպիկ բուրժուա կերպարներին հակադրում է սոցիալական պատասխանատվության մղումով առաջնորդվող հեղափոխականներին¹⁹:

Ամփոփելով նշենք, որ ձեփ և բովանդակության առումով Ա. Աղաօղլուի վեպերը հմտորեն մտածված են և առանձնանում են իմաստի բազմապլանությամբ՝ որպես «կառնավալային վեպի» ժանրի լավագույն օրինակներ: Այս վեպերը նաև հնարավորություն են տալիս հոգեվերլուծական քննադատական ուսումնասիրություն կատարել, քանի որ նրա կերտած հերոսները դեկավարվում են իրենց հիշողություններով ու երևակայությամբ: Այս առումով Ա. Աղաօղլուի ստեղծագործությունները յուրօրինակ են և դուրս են թուրք որևէ գրողին, գրական դպրոցին կամ սերնդին բնորոշ ստեղծագործական ավանդույթների շրջանակներից: Այս գրողի ստեղծագոր-

¹⁷ Elmas N., Adalet AĞAOĞLU Hikâye Dilinde Ritim, Karadeniz Araştırmaları, Sayı 27, 2010, s. 183-184.

¹⁸ Ալազոնն ու էիրոնը հունական սատիրայի 4 զլյավոր կերպարներից են: Ալազոնը սատիրայի գոհն է, իսկ էիրոնը՝ ինքնարնեալատը:

¹⁹ Coşkun B., Adalet AĞAOĞLU'nun Hikâyelerinde Bir Eleştiri Vasıtası Olarak İroni, A. Ü. Türkiyat Araştırmaları Enstitüsü Dergisi, Sayı 49, 2013, s. 161.

ձուրյուններն ավելի շատ նման են համաշխարհային գրականության օրինակներին: Մասնավորապես՝ Ինգերորդ Բախմանի «Մային» ստեղծագործության մեջ կնոջ աշխարհը, Ելիս Քանեթթի «Կուրացում» վեպի հեզնական ոճը միանգամայն նման են Ա. Աղաօղլուի ստեղծագործական ոգուն: Նա նույնպես չի խուսափում նշել որ, «Քանեթթիին ընկալում եմ այնպես, որ կարծես իմ աշխարհից է գրում, մեծ է նրա ազդեցությունը: Ընդհանրապես չգիտեմ, թե ումից ինչպես եմ ազդվել, սակայն Քանեթթիի հետ այնպիսի նույնականացում եմ ստեղծել, որ կարծես նա ևս ապրում է այն, ինչ ես եմ գրում»²⁰: Նշենք նաև, որ Աղաղեթ Աղաօղլուն այն եզակի գրողներից է, ով 2008 թ. դեկտեմբերին միացել էր 1915 թ. Օսմանյան կայսրությունում իրականացված Հայոց ցեղասպանության համար հայերից ներողություն խնդրելու թուրք մտավորականների նախաձեռնությանը:

О СТИЛИСТИЧЕСКИХ И ТЕМАТИЧЕСКИХ ОСОБЕННОСТЯХ ПРОИЗВЕДЕНИЙ АДАЛЕТА АГАОГЛУ

Анушик Мартиросян

Рубен Мелконян

(резюме)

Адалет Агаоглу - одна из самых выдающихся писательниц современной турецкой литературы. Закончив филологический факультет Анкарского университета, она начала свою писательскую карьеру в качестве драматурга на радио Турции. Романы Адалет Агаоглу, герои которых как правило представители левой интеллигенции, арестованных после государственного переворота 12 марта 1971 года, и прошедших через тюремные застенки, неоднократно удостаивались

²⁰ Tosun N., Adalet AĞAOĞLU Öyküsürü, <http://www.ustkurgu.com/?p=71>

престижных премий. Особенностью этих романов является сокращение времени действия произведения: применение ассоциативного письма дает возможность возвращаться в прошлое героев, описывая важные события их жизни и акцентируя нравственный поиск героев.

OVERVIEW OF THE STYLISTIC AND THEMATIC CHARACTERISTICS OF THE NOVELS OF ADALET AĞAOĞLU

*Anushik Martirosyan
Ruben Melkonyan
(summary)*

Adalet Ağaoğlu is one of the most prized novelists of Turkey. She was born on October 23rd 1929. After graduating from the French Language and Literature Department of The Ankara University, she started her career as a dramaturge for Turkish national radio. In her novels, Ağaoğlu generally deals with the events that took place in Turkey during the politically chaotic 1970s, especially concentrating on the lives of individuals who are repressed, destroyed, and condemned to lose. So her prose is a balance between a realistic milieu of Turkey and the broader, more humanistic elements of social pressure and gender prejudice. These novels are also amenable to psychoanalytical critical study, as her characters are driven by their memories and fantasies. Adalet Ağaoğlu is one of the signatories of the "I Apologize Campaign" which was launched in December 2008 in Turkey by numerous journalists, writers, politicians, and professors that called for an apology for what they considered as the "Great Catastrophe that Ottoman Armenians were subjected to in 1915".

Գևորգ Սահակյան

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԵՏՄՈԴԵՌՈՆԻՍՏԱԿԱՆ ԱՐՁԱԿԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Բանալի բառեր՝ հետմոդեռնիզմ, թուրքական գրականություն, մոդեռնիզմ, ֆիկցիա, ունայիզմ, վեպ, թեմա

Այսօր բավական տարածված և ընդունված է այն տեսակետը, որ ժամանակակից աշխարհը ու տեղի ունեցող գործընթացները գտնվում են հետմոդեռնիզմի (postmodernism) ուղղության ծիրում՝ դրանից բխող տարրեր երևույթներով։ Հասարակական-քաղաքական, ինչպես նաև արվեստի մի շարք բնագավառներում ընդունված է երևույթները բնորոշել հենց այս տերմինով։ Գրականության ասպարեզում ևս այդ տեսդենքը գերակայում է արդեն մի քանի տասնամյակ, և բացառություն չէ նաև թուրքական գրականությունը։

Սակայն կա նաև ընդունված մեկ այլ կարծիք, որ հնարավոր չէ հետմոդեռնիզմի համար տալ որևէ և որոշակի սահմանում, ուստի և բարդ է հստակեցնել, թե գրական որ ստեղծագործությունը և դրա հատկապես որ առանձնահատկությունն է այն դարձնում հետմոդեռնիստական։ Շատ գիտնականներ գրեթե միակարծիք են, որ առաջմ հետմոդեռնիզմի հստակ սահմանում և դասակարգում չկա. դա վերաբերում է ինչպես գրականությանը, այնպես էլ ընդհանրապես հետմոդեռնիզմի դրսորման այլ արեաներին։ Դրա փոխարեն կան հետմոդեռնիզմի բազմաթիվ սահմանումների փորձեր, դիպուկ և ոչ այդքան ձևակերպումներ։ Ամենադասական սահմանումներից մեկն այն է, թե հետմոդեռնիզմն այն ժամանակահատվածն է, որը հաջորդել է մոդեռնիզմին և իր մեջ կրում է մոդեռնիզմի գրական ուղղության որոշակի սկզբունքներ կամ դրանց վերափոխված ձևեր։ Հայտնի հետմոդեռնիստ գրող

Ումբերտ Էկոն այս մասին նկատում է. «Հետմողեռնիզմը մոդեռնիզմի պատասխանն է: Եթե հնարավոր չէ ոչնչացնել անցյալը, քանի որ վերջինիս ոչնչացումը տանում է կործանման, ապա պետք է վերանայել այն հեգնանքով, առանց միամտության»:¹

Հետմողեռնիզմի սահմանումների մեջ երեմն կարևորվում են այն ընդհանուր գծերը, որոնք բնորոշ են բազմաթիվ գրական ստեղծագործություններին: Օրինակ՝ փնտրությը, դեղեկտիվ ուղղվածությունը, այլաբանական նկարագրությունները, պատմական ետնաբեմը: Գերիշխող կարծիքների մեջ կարելի է առանձնացնել այն, որ հետմողեռնիզմի մեջ նորություն չկա, այլ կա հնի «նոր փաթեթավորմամբ» ներկայացումը: Որոշ ուսումնասիրողներ հետմոդեռնիստական գրականության առանձնահատկություններից են համարում այն, որ նման ստեղծագործություններում բավական շատ են տեղ տրված ավելի վաղ գրված հայտնի երկերից մեջքերումների²: Այսինքն՝ ըստ էռության, հետմոդեռնիստական ստեղծագործության ընթերցողը պետք է ունենա որոշակի պատրաստվածություն, ծանոթ լինի համաշխարհային դասական ստեղծագործություններին: Այստեղից էլ բխում է մյուս առանձնահատկությունը, որ հետմոդեռնիստական երկ կարդալը մտավոր լարում է պահանջում և չի կարող լինել ուղղակի գրադարձությունը կամ «գիրք քնից առաջ»: Իրենց հերթին հետմոդեռնիզմին դեմ արտահայտվողները այս երևույթը անվանում են «ինտելեկտուալ շանտաժ», որով էլ հետմոդեռնիստ հեղինակները փորձում են արդարացնել իրենց «իմաստ չպարունակող և չստացված» ստեղծագործությունները: Սակայն ամենաբնորոշ ձևակերպումներից, որը տրվում է հետմոդեռնիս-

տական ուղղության համար, քառան է, խառնաշփորք և քառատիկ իրավիճակները: Մեր կարծիքով հետմոդեռնիզմի յուրահատկությունն այն է, որ յուրաքանչյուրը այն կարող է մեկնարանել յուրովի ինչպես տեսության առումով, այնպես էլ դրա դրսնորման թե՝ գրականության և թե՝ արվեստի այլ ճյուղերում: Այդ կարծիքները երբեմն կարող են լինել ոչ թե փոխլրացնող, այլ իրար հակասող:

Գալով գրական ուղղությունների միջև հարաբերակցության խնդրին՝ պետք է ասել, որ խորքային իմաստով հետմոդեռնիզմը պետք է Ժիստի ռեալիզմը և շարունակի մոդեռնիստական որոշակի սկզբունքները, սակայն բավական շատ են հանդիպում ստեղծագործություններ, որտեղ հաճախ տեղ է տրվում ռեալիստական նկարագրություններին և այնուհետև դրանք բախում մտացածին, անիրական պատկերների հետ ու այդպիսով էլ ստեղծում քառու: Հետմոդեռնիստական ստեղծագործություններում ամենաշատ կիրառվող մեթոդներից է ֆիկցիան կամ մետաֆիկցիան (metafiction), որը թերևս կարելի է համարել պարտադիր տարրերից մեկը: Եվ ընդհանրապես հետմոդեռնիստական հայեցակետով իրականությունը և երևույթները դիտարկվում են որպես «առեղծվածային», ուստի դրանց մեկնաբանությունն ու ընկալումը նույնպես պետք է լինի այդպիսին:

Գրականգիտության մեջ հստակ չէ նաև հետմոդեռնիզմի սկզբելու կամ մոդեռնիզմից հետմոդեռնիզմին անցնելու շրջանը. ոմանք դա համարում են 1941 թ., երբ մահացան հայտնի մոդեռնիստ գրողներ Ջեյմս Չոյսը և Վիրջինիա Վուլֆը³, ոմանք էլ Լեսլի Ֆիլիպը 1969 թ. "Playboy" ամսագրում հրատարակած հոդվածը⁴:

¹<https://ru.wikipedia.org/wiki/%D0%9F%D0%BE%D1%81%D1%82%D0%BC%D0%BE%D0%B4%D0%B5%D1%80%D0%BD%D0%B8%D0%B7%D0%BC>

² Culture and Society: contemporary debates, (edited by Jeffrey C. Alexander, Steven Seidman), Cambridge 1990, p. 336

³ Նոյն տեղում, էջ 332:

⁴<https://ru.wikipedia.org/wiki/%D0%9F%D0%BE%D1%81%D1%82%D0%BC%D0%BE%D0%B4%D0%B5%D1%80%D0%BD%D0%B8%D0%B7%D0%BC>

Գալով թուրքական գրականության մեջ հետմոդեռնիզմին և դրա կայացման խնդրին, ապա պետք է ասել, որ գրականագիտական շրջանակներում դրա սկզբնավորման առավել ընկալելի ժամանակահատված է նշվում 1980-ականները, և, բացի այդ, թուրքական հետմոդեռնիզմին վերագրվում է որոշակի յուրահատկություն, որը մեր ձևակերպմամբ կարող ենք անվանել «արևելյան հետմոդեռնիզմ», քանի որ դրանում միահյուսված են արևմտյան ու արևելյան գրական տրադիցիաները, թեմաները և անգամ հերոսները: Իհարկե, այս ամենը մեծապես ձևավորվել է թուրք հայտնի գրող և Նորելյան մրցանակի դափնեկիր Օրհան Փամուրի ստեղծագործությունների շնորհիվ և միջոցով, քանի որ հենց նրա վեպերն են թարգմանված աշխարհի մի քանի տասնյակ լեզուներով և այլալեզու ընթերցողներին հնարավորություն են տվել ծանոթանալ այդ գրականության հետ: Սակայն թուրքական հետմոդեռնիստական գրականության հետ ծանոթացումը հստակ ցույց է տալիս այն ահոելի ազդեցությունը և երբեմն անգամ կոնկրետ համընկնումները և ընդօրինակումները, որոնք արվել են համաշխարհային գրականությունից: Ուղղակի այդ ամենը արվել է արևելյան մոտիվների կամ արևելյան միջավայրի պատկերմամբ և դրանով որոշակի տարրերակող երանք հաղորդել նման ստեղծագործություններին:

Արդեն մինչև 1980-ականներն էլ թուրքական արձակում եղել են հստակ մոդեռնիստական ուղղության ստեղծագործություններ և անգամ ուրույն մոդեռնիստական ուղղվածություն, որն առավել հայտնի է «Ճգնաժամի գրականություն» (խոնամ edebiyatı) անվամբ: Կարծիք կա, որ թուրքական արձակում «Ճգնաժամի գրականությունը» ձևավորվել է ընդհատումներով, սակայն որպես դրա հիմնադիր է համարվում հայտնի արձակագիր Սահիդ Ֆահրը (1906-1954 թթ.): Ավելի ուշ՝ 1970-80-ականներին «Ճգնաժամի գրականությունը» նոր լիք ստացավ և ակտիվացավ: Որոշ գրականագետներ, ինչ-

պիսին է օրինակ Թոփիք Մելիքին, նշում է. «Զարգանում էր նոր շարժումը արձակում՝ ճգնաժամի գրականությունը», որը մեր կարծիքով առնվազն ձևակերպման առումով սխալ է և փաստացի անտեսում է Սահիդ Ֆահրի շրջանը: «Ճգնաժամի գրականությունը» զարգացավ, և ինքն էլ զարգացրեց ուսալիզ-ֆի քննադատությունը. այդ ուղղվածության հետևող գրողներից ունանք քննադատում էին կոնկրետ ստցիալական ուսալիզ-ֆի, զուղագրությունը: Բացի այդ, «Ճգնաժամի գրականության» կողմանակիցները կրելով և պաշտպանելով մոդեռնիզմի ուղղության սկզբունքները կոչ էին անում ուսումնասիրել «Վերիքականը»⁵, այսինքն՝ մարդու ներաշխարիք: Նոյն ժ. Մելիքին կարծիք է հայտնում, որ 1960-ականներին թուրքական մոդեռնիստական գրականությունը հանդես է եկել հենց «Ճգնաժամ» ձևով՝ որպես մոդեռնիզմի ու ուսալիզմի յուրահատուկ միաձուլում:⁶ Մելիքին «Ճգնաժամի գրականության» ավելի ուշ շրջանի, այսինքն՝ 1980-ականների ներկայացուցիչներ է համարում Օքքա Աքքալին, Լեյլա Էրբիլին, Ֆիլգե Քարասուին⁷, որոնք այլ գրականագետների կողմից համարվում են թուրքական ուշ մոդեռնիզմի կամ հենց հետմոդեռնիզմի առաջին ներկայացուցիչներ: Մեր կարծիքով թուրքական մոդեռնիզմը արդեն 1960-ականներին գտնվում էր սահմանային վիճակում և 1980-ականների սկզբներին այդ ուղղվածության ակտիվացումը անմիջապես վերածվեց հետմոդեռնիզմի:

1950-ականներին երիտասարդ գրողների մի խումբ՝ Օրհան Նուրու, Ֆերիք Էքքու, Օզդեմիր Նուրբրու, համախմբել էր նոր ստեղծված «Մավի» ամսագրի շուրջ, որի անունից էլ այդ գրողների դաշտանած ուղղվածությունը կոչվեց «մավիական»:

⁵ Меликчи Т., История литературы Турции, Москва, 2010, стр. 195.

⁶ Նոյն տեղում:

⁷ Նոյն տեղում:

⁸ Նոյն տեղում:

Երիտասարդ այդ գրողները հանդես էին զալիս ռեալիզմի քննադատությամբ, կոչ անում ուսումնասիրել և վեր հանել հերոսների ներքին աշխարհը⁹: Այս ուղղությունը ևս որոշակի ազդեցություն է ունեցել նոր մեթոդների կիրառման և թեմաների արծարժման համար, որոնք էլ հետազայում դառնալու էին հետմոդեռնիստական գրականության կարևոր հիմքերից:

Հետմոդեռնիստական կամ ուշ մոդեռնիստական վերոհիշյալ նախահիմքերի վրա ավելի ուշ՝ 1970-ականներին թուրքական գրականության մեջ ի հայտ եկան առավել ընդգծված ոչ ռեալիստական ստեղծագործություններ, որոնցում էլ ավելի շատ էին գերիշխում ուրվագծվող նոր ուղղության՝ հետմոդեռնիզմի քառորդիկ սկզբունքները: Այդ ստեղծագործություններից հարկ է նշել Օղուզ Արայի «Վտանգավոր խաղեր» (“Tehlikeli oyunlar”) վեպը:

1980 թ. սեպտեմբերի 12-ին Թուրքիայում տեղի ունեցած ուղմական հեղաշրջումից հետո և սկսված բնաճնշումների հետևանքով թուրքական գրականության մեջ, ըստ տարբեր գրականագետների, սկսվեց նոր վակուումի շրջան, որի ընթացքում փորձեցին գրական ասպարեզում հաստատվել ստեղծված վիճակից օգտվել ցանկացող քիչ հայտնի և քիչ օժտված գրողներ, սակայն ըստ թուրքագետ-գրականագետ Մարիա Մեպենկովայի՝ դա երկար չտևեց, իսկ այդ գրողները չկարողացան ձեռք բերել հաջողություն և ձանաչում¹⁰: Թուրքական գրականության մեջ և, հատկապես արձակում, ակտիվացումը առավել տեսանելի է դառնում 1982 թ. Վերջերին, երր կրկին լույս են տեսնում արդեն հայտնի գրողների և գրականության ասպարեզ մուտք գործող ու որոշակի գրական տաղանդ ունեցողների ստեղծագործություններ: Մեպենկովայի կարծիքով սոցիալական ռեալիզմի ուղղության հետ-

նոր գրողները կրկին ակտիվանում են¹¹, իսկ մեր կարծիքով նրանք փորձում են նոր շունչ տալ այդ ուղղությանը ներառելով նոր թեմաներ, նոր մեթոդներ: Սոցիալական թեմաները գործել նույնությամբ կրկնում էին նախորդները, սակայն արդեն նոր միջավայրի պատկերմամբ: Կրկին ակտիվացման փորձ է անում գյուղագրությունը՝ մաս կազմելով սոցիալական ռեալիզմին, սակայն այս անգամ ավելի շատ կանգ առնելով ուրբանիզացիոն խնդիրների և քաղաքում հայտնված գյուղացու սոցիալական, իրավական, մշակութային ու հոգեբանական խնդիրների վրա: Ընդհանրապես 1980-ականների սոցիալական ռեալիզմում սկսում են ավելի շատ գերակշռել հոգեբանական նկարագրությունները, մարդու ներաշխարհի պատկերումը:

Սակայն վերոնշյալ զարգացումները չկարողացան դառնալ գերակայող, և իրենց տեղը զիջեցին արդեն հստակ հետմոդեռնիստական ուղղվածություն ունեցող ստեղծագործություններին: Գրականագետները թերևս միակարծիք են այն հարցում, որ թուրքական գրականության հետմոդեռնիստական ուղղությունը սկսել է ձևակորպել և հաստատվել 1970-ականների վերջին և 1980-ականների սկզբին: Այդ տարիներին հրատարակվում են Յուսուֆ Աքրիզանի «Հայրենիք հյուրանոցը» (1973 թ.), Փընար Քյուրի «Վաղը վաղը» (1976 թ.), «Մի հանցագործության վեպ» (1989 թ.), Աղալեթ Աղաօղլուի «Մի ամուսնական գիշեր» (1979 թ.), Բիլգէ Քարասուի «Գիշեր» (1985 թ.), «Ուղեկից» (1990 թ.)¹² վեպերը, որոնք ել հենց համարվում են թուրքական առաջնի հստակ հետմոդեռնիստական ստեղծագործությունները: Սակայն գրականագետները նաև միակարծիք են, որ թուրքական հետմոդեռնիստական գրականության արմատավորումը և ընդհանրապես զարգացումը ինչպես Թուրքիայում, այնպես էլ դրա սահմաններից

⁹ Türk Edebiyatı Tarihi, İstanbul, 2007, s. 359.

¹⁰ Репенкова М., От реализма к постмодернизму: современная турецкая проза, Москва, 2008, стр. 18.

¹¹ Նոյն տեղում, էջ 19:

¹² Türk Edebiyatı Tarihi, İstanbul 2007, s. 359.

դուրս գերազանցապէս ասոցացվում է Օրհան Փամուրի անվան հետ:

Մեր կարծիքով Օրհան Փամուրի առաջին վեպը՝ «Զնդեքյը և որդիները», գտնվում է ռեալիզմի և հետմոդեռնիզմի սահմանագծում: 1982 թ. իրատարակված վեպում գերակշռում են ռեալիստական շեշտադրումները, սակայն արդեն իսկ ակնհայտ էին հետմոդեռնիզմի որոշակի տարրեր: Այդ վեպը չէր էլ կարող լիովին համարվել ռեալիստական, քանի որ հենց հեղինակը՝ Օրհան Փամուրը արդեն այդ ժամանակի իր էրետիկ հայացքներով դեմ էր արտահայտվում ռեալիստական, «անատոլիական վեպին» և դրա սկզբունքներին: «Զնդեքյը և որդիները» վեպում ներկայացվում է մի ընտանիքի երեք սերունդների ընկալումների աճը և տարբերությունները: Թուրք գրականագետն Նյութեք Էսենը սա համարում է կլասիկ “bildungstroman”-ի օրինակ, որոնցից են Թոմաս Մանի «Բուդինքրությունների ընտանիքը», Չարլզ Դիքենսի «Սեծ հույսերը»¹³: Վեպի ժամանակային սահմանները 1905-1970 թթ. Թուրքիան է, անգամ ժամանակային այս ընտրությունն իր մեջ սահմանագծային շեշտադրում է պարունակում՝ Օսմանյան կայսրության անկում և Թուրքիայի Հանրապետության ձևավորման տարիներ: Վեպում ներկայացվում է այդ շրջանում Թուրքիայի հասարակական, քաղաքական, մշակութային զարգացումները, և մեկ ընտանիքը ուղղակի հիմք է ցույց տալու այդ երևույթի ավելի ընդհանրական զարգացման համայնապատկերը: Վեպում մեջքերումներ են արված ժամանակի թերթերից և որոշ մասնագետներ սա համարում են ռեալիստական ուղղության ընդգծում, սակայն ձևավորվող հետմոդեռնիզմի սկզբունքներում ևս, ինչպես նշվեց վերևում, նման մեջքերումները դարձել էին որոշակի ոճ, որը նաև օգ-

նում է իրականի և ֆիկցիայի համադրումը կամ հակադրությունը կառուցելու և այդ երկու ընկալումների սահմանները էլ ավելի ոչ հստակ դարձնելու և ընթերցողի ընկալմանը հանձնելու համար: Ի դեպ, հետմոդեռնիստական վեպի որոշակի առանձնահատկություն կարելի է համարել նաև ընթերցողի ակտիվ մասնակցությունը ստեղծագործության կայացմանը, որն այս դարձնում է տարբերակալելի, այսինքն՝ ամեն ընթերցող ոչ միայն յուրովի է պատկերացնում և ընկալում վեպը, այլև յուրովի է այն կառուցում: Օրհան Փամուրը, խոսելով նորագույն շրջանի վեպի և դրա հիմնական տենդենցների մասին, նշում է. «20-րդ դարի աշխարհը արդեն այնպիսին է, որ տեղ շատ հեշտ չէ պատճառահետևանքային կապը կառուցել... Ուստի այս աշխարհը արդեն հնարավոր չէ պատկերել 19-րդ դարի վեպերի լավատեսությամբ, հեշտությամբ, նույնիսկ միամտությամբ, նախվությամբ և պարզունակությամբ»¹⁴: Խոսելով գրողի և ստեղծագործության ու հերոսների հարաբերությունների մասին՝ Փամուրը կարծիք է հայտնում, որ ժամանակակից հեղինակը ձգուում է պատկերել ոչ թե հերոսի տեսանկյունը և մոտեցումները, այլ այն, ինչ կա նրա ընկալման մեջ: Եվ զգալով, թե ինչ բարդ է ըմբռնել աշխարհի և դեպքերի էռությունն ու տրամարանությունը «հեղինակը որոշում է, որ ինքը սահմանափակ է և իրեն հետ է քաշում: Վեպը համարյա թե հանձնում է հերոսին»¹⁵: Ի դեպ, հետմոդեռնիստ հեղինակների մոտ վեպի հերոսին գերբնական և, որ ամենակարևորն է, անկախ զործառույթներ հաղորդելը նույնպես դարձել է բնորոշ: Ֆիկցիայի կամ մետաֆիկցիայի սկզբունքները տարածելով նաև իրական կյանքի վրա նրանք առանց վարանելու փորձում են պատկերել հենց նման հերոսի, որը անկախ է հեղինակից, և երբեմն հեղինակն անգամ ի գորու էլ

¹³ Esen N., Modern Türk Edebiyatı Üzerine Okumalar, İstanbul, 3-üncü Baskı, 2012, s. 216.

¹⁴ Նոյն տեղում, էջ 215:

¹⁵ Pamuk O., Öteki Renkler, İstanbul, 1999, s. 115.

չէ կառավարել հերոսի գործողությունները: Փամուրի կիրառած մեթոդը (հատկապես պատմողի ընդգծված նահանջած վիճակը, զիսավոր գաղափարի անորոշությունը, բազմընկալությունը) ավելի կարևոր և միևնույն ժամանակ ինդիվիդուալ է դարձնում ընթերցողի ընկալումը: Ինչպես նշում է Ն. Էսենը: «Ընթերցողը ոչ թե պասիվ ստացող է, այլ ակտիվ ստեղծող»¹⁶: Այսինքն՝ ընթերցողը Փամուրի և հետմոդեռնիստական այլ ստեղծագործություններում ունի կարևոր դեր, նա պարտավոր է ներդրում անել ստեղծագործության իրականացման գործում, ուստի հետմոդեռնիստական վեպերը ընթերցելը բարդ է և հոգնեցնող: Հետմոդեռնիստական վեպերի ընթերցողների համար զիրք կարդալը դարձնում է յուրահասուկ մի աշխատանք, ջանք, որտեղ նրանք ինչոր տեղ գրքի ստեղծողն են: Եվ ըստ ընթերցողների՝ տարբեր են լինում գրքի ընկալումները և զիսավոր գաղափարի սահմանումը:

Փամուրը իր հաջորդ ստեղծագործություններում շարունակեց զարգացնել հետմոդեռնիզմի հեղիեղուկ սկզբունքները, և արդեն «Սպիտակ ամրոց» (1985 թ.), «Աև զիրք» (1990 թ.), «Բմ անուն Կարմիր է» (1998 թ.) վեպերում դրանք էլ ավելի ցայտուն են դրսնորվում: Գրականագետ Թոֆիք Մելքիլիի կարծիքով Փամուրի ստեղծագործությունների մեջ հաջողությամբ ներդաշնակվել են թուրքական ռեալիզմի և մոդեռնիզմի ուղղությունների որոշակի առանձնահատկություններ և ձեռքբերումներ, ինչպես նաև Փամուրը կիրառել ու օգտվել է ավելի վաղ շրջանի և իր ժամանակակից թուրք գրողների ուրոշ մոդեռնիստական շեշտադրումներից: Այդ գրողների թվին են պատկանում Սահիդ Ֆահրը, Օքքայ Արքալը, Փընար Քյուրը և ուրիշներ¹⁷: Մելքիլին նույնպես ընդգծում է «Ճնաժամի գրականության» և 1950-ականներին թուրքական պոե-

գիայում ձևավորված ու «երկրորդ նոր» անվանումը ստացած ուղղության որոշակի ազդեցությունը Փամուրի հետմոդեռնիստական գրականության վրա¹⁸:

Հետազայում Փամուրի ստեղծագործություններում մեկ այլ «պարտադրանք» է հայտնվեց ընթերցողի համար. նրա յուրաքանչյուր վեպում բացահայտ կամ անուղղակի խոսվում է իր նախորդ վեպերից, այդ վեպերի կերպարներից և ընկալելու համար տվյալ ստեղծագործությունը ընթերցողը պետք է կարդացած լինի Փամուրի նախորդ գործերը, ընդ որում՝ ժամանակագրական աճին համապատասխան, որպեսզի կարողանա հասկանալ ամրող համատեքստը և «ստեղծել» իր գիրքը կամ մասնակցել այդ գրքի ստեղծմանը:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ համաշխարհային գրականության որոշակի տեսնենցները, որոնք նախկինում ել նկատվում էին թուրքական գրականության մեջ, 1980-ականներին հանգեցրին հետմոդեռնիստական գրականության ձևավորմանը: Շնորհիվ Օրիան Փամուրի՝ թուրքական հետմոդեռնիստական գրականությունը մեծապես շարունակում է զարգացում ապրել թուրքիայում, ինչպես նաև ճանաչելի է այդ երկրի սահմաններից դուրս:

О ФОРМИРОВАНИИ ТУРЕЦКОЙ ПОСТМОДЕРНИСТИЧЕСКОЙ ПРОЗЫ

**Геворг Саакян
(резюме)**

Сегодня довольно распространено убеждение, что современный мир и текущие события находятся в рамках постмодернизма со всеми вытекающими явлениями. В литературе тоже, эта тенденция преобладает и турецкая

¹⁶ Esen N., նշվ. աշխ., էջ 221:

¹⁷ Меликли Т., նշվ. աշխ., էջ 256:

литература не является исключением. В литературных кругах принято считать начало турецкой постмодернистической литературы конец 20-го века. Кроме того, турецкий постмодернизм характеризуется определенной особенностью, которую мы можем назвать «восточным постмодернизмом», так как он совмещает как восточные так и западные литературные традиции, темы и героев. Конечно, всё это сформулировалось благодаря работам известного турецкого писателя и лауреата Нобелевской премии Орхана Памука.

**ABOUT THE FORMATION OF TURKISH
POSTMODERN PROSE**
Gevorg Sahakyan
(summary)

Nowadays, the viewpoint that modern world and current events are in the scope of postmodernism with variety of its consequences is rather widespread and accepted. In literature as well this tendency seems predominant for the last few decades and Turkish literature is not an exception. In literary circles it is accepted to consider the beginning of Turkish postmodern literature as of 1980th. Besides, Turkish postmodernism is characterized by a specific feature that we can formulate as “eastern postmodernism” as it encompasses both eastern and western literary traditions, themes and even heroes. Certainly, all of these was formulated by famous Turkish author and Nobel Prize laureate Orhan Pamuk’s works.

ԻՐԱԿԱԳԻՏՈՒԹՈՒՆ

ԻՐԱՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ՄԻՋԱՉԳԱՅԻՆ
ՓՈԽԱՌԱՋՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՇԱԳՐԱՎ ՄԻ ԷԶ
(Արքի Հովհաննիսյան. արվեստագետի
դիմանկարի փորձ)

Բանալի բառեր՝ հանդիսանք, դրամապուրգիա, թա-
տրգություն, ոռուուզի, թաազիե, սալեք-ճամփորդ,
օդարվածություն, մշակույթ, դրամա, արվեստ

Հայ-իրանական մշակութային դարավոր, բազմեզր փո-
խառնություններում նշանակալից տեղ ունի թատրոնի բնա-
գավառը: Հանդիսանքային արվեստի հարուստ ավանդույթ-
ներ ունեցող Իրանում նոր, եվրոպական բնույթի թատրոնի
սկզբնավորումը վերաբերում է 19-րդ դարի վերջին քառոր-
դին՝ լուսավորական շարժման վերելքի ժամանակաշրջա-
նին: Իրանցուն անծանոթ հանդիսանքի այդ տեսակը հայրենի
երկիր ներբերելու անհրաժեշտության գիտակցումը կապված
էր նորացման և առաջընթացի այն գաղափարների հետ, որ
դաշտանում և ձգուում էին իրողություն դարձնել իրանցի լու-
սավորիչները:

Եվ, ինչպես վկայում են պարսիկ և այլազգի հետազոտող-
ները, իրանական նոր բնույթի թատրոնի առաջին իսկ քայլե-
րում իրենց զգալի ավանդն են ներդրել մշակույթի իրանահայ
գործիչները¹: Եթե մտովի թերթելու լինենք այս բնագավառում
նրանց գործունեության էջերը, ապա այն կմասնավորվի
պարսիկ լեզվով թատերգության սկզբնավորման (Միրզա

Մելրոն իսան)² առաջին քայլերն առնող արվեստի համար
գրականության ստեղծման (Հ. Մասեհյան), երաժշտական
թատրոնի առաջին ճաշակին հաղորդակցելու (Ս. Աղաբաբյո-
վա, Տերյան և ուրիշներ), պրոֆեսիոնալ առաջին պարսից
թատերախումբը ստեղծելու (Ա. Օհանյան) և իրանական
թատրոնում բեմական գործունեության ծավալման (Ֆելեքյան
քոյրեր, Սաֆրազելյան ամուսիններ և ուրիշներ) իրողութ-
յուններով, որոնց այսպիսի փութանցիկ թվարկումն անզամ
ակնհայտ է դարձնում երևոյթի նշանակալիությունն ու Իրա-
նի թատրոնի պատմության մեջ գործոնային տեղ գրավելու
ակներևությունը:

Ոչ պակաս կարեոր է այն հանգամանքը, որ այդ գործու-
նեությունը չընդհատվելով և հաջողությամբ զարգանալով նո-
րագույն ժամանակներում (միայն ամենանշանավոր գործիչ-
ների թվարկումն իսկ՝ Վահրամ Փափազյան, Հայկ Գարագաշ,
Սամվել Մարության և ուրիշներ, դրա վառ վկայությունն է) հարատեսեց մինչև մեր օրերը:

1960-1970-ական թվականներին Իրանի թատրոնի աչքի
ընկած հայ գործիչների շարքում վառ անհատականությամբ
առանձնանում է ռեժիսոր Արքի Հովհաննիսյանը: Որևէ մաս-
նագետի կամ կազմակերպության ավանդը ըստ արժանա-
վույն գնահատելու համար հարկ է, թեկուզ սեղմ, անդրադար-
նալ տվյալ բնագավառում տիրող այն իրավիճակին, որը եղել
է նրանց գործունեության մեկնակետը:

¹ Այս առթիվ ավելորդ չէ մեկ անգամ ևս նշել աղբեջանցի հեղինակներ
Ա. Իրանականուվի, Ա. Ալիզադեի, Մ. Մուրարիի և Հ. Մամազադեի՝ պար-
սից թատերգության սկզբնավորողի պատմիվը Իրանի ֆրանսիական դես-
պանատան երեմսի անհայտ մի գրաքի ուն Միրզա Աղայի վերաշնոր-
հելու ձախավեր տքնանքը: Այս առթիվ նրանց թերած փաստարկները իրա-
նական հասարակական մտքի պատմության հայտնի մասնակիւն Ն. Ա.
Թալիրովը աներկայուն համարում է անհամոզիք: Տե՛ս Հայտիս Հ., Օ-
պատեան պատմության հայտնի մասնակիւն Ա. Ա. Թալիրովը աներկայուն համարում է անհամոզիք: Տե՛ս Հայտիս Հ., Օ-

² Բազմաթիվ վկայություններից նշենք մեկ-երկուուր. Rezvani M., he
Teâtre et la Danse in Iran, Paris, MCMLXII, p. 137, 138, 141. Jenati A.,
Zendegāni va Āsāre Reza Kamal Šahrzād, Tehrān, 1965, s. 15-19.

1910թ. Թեհրանում պրոֆեսիոնալ առաջին թատերախմբի կազմակերպումից ի վեր, չնայած մշակույթի գործիչների ջանքերին, իրանական դրամատիկ թատրոնը պետական լուրջ հովանավորության բացակայության պատճառով կայուն տեղ չգրավեց երկրի նորօրյա արվեստում, ակնկալված զարգացումը չստացավ: 30-ական թվականներին թատերական գործում նկատված աշխուժացումը երկրում քաղաքական ռեակցիայի սաստկացման հետևանքով երկար չպահպանվեց³: Իրանի մշակույթի «երկրորդ ձմեռը» վրա հասավ 1950-ական թվականների սկզբին: 1953թ. մի տարի գոյությունը պահպանելուց հետո փակվեց «Սաադի» թատրոնը, կարձատև եղավ նաև երիտասարդական առաջադիմական «Բահար» թատրոնի կյանքը:

Հասարակական մտքի և մշակույթի զարգացման համար անհամեմատ բարենպաստ պայմաններ ստեղծվեցին 1960-ական թվականների սկզբից իշխանությունների՝ ձեռնարկած բարեփոխությունների ծրագրով: Անշուշտ, այդ պայմանները հայտնի չափով սահմանափակվում էին այլախոհների նկատմամբ շահական բռնակարգի հաստատած դաժան

³ Այս աշխուժացումը, ինչպես նշում են մասնագետները, նշանակալի չափով պայմանավորված էր նաև պարսից թատրոնի զարգացմանը նպաստելու նպատակով կառավարության կողմից Իրան հրավիրված Վահրամ Փափազյանի գործունեությամբ: 1933 թ. նրա կազմակերպած թատերական դպրոցի սաների խումբը «կազմեց հետագա իրանական ազգային թատրոնի կորիզը» (Տե՛ս Վանևա Դ., Советско-иранские культурные связи, Ташкент, 1965, с. 24-25): Ի դեպ, Իրանում 1932 թ. թատերական ստուդիա էր կազմակերպել նաև իրանահայ թատրոնի խոշոր գործիչ Մ. Մարությանը, որին ժամանակի պարսկերեն և օտարալեզու թերթերը որակում էին որպես «եվրոպական բնույթի մեծ դերասան» («Մեսամեր դը Թեհրան») և տեղի բնմական ուժերին կոչ անում «սովորել նրանից» («Էթելլաքք»): Ստուդիայի գոյության երկու տարիներին այնտեղ դասավանդում էին Սոսկվայում և Վիեննայում թատերագիտական կրթություն ստացած մասնագետներ Ա. Հակոբյանը և Մ. Դավթյանը: Տե՛ս Դերասան-թատերազիր, Մ. Մարության, Թեհրան, 1969, էջ 6, 39:

գրաքննության իրողությամբ: Այնուհանդերձ, կառավարող շրջանակներն իրենց քաղաքականության ազգանպաստ լինելն ընդգծելու և դրանով իսկ առաջադեմ մտավորականության հանդրաժողական վերաբերմունքը շահելու հեռահար մտայնությամբ սկսեցին մեծ ուշադրություն դարձնել իրանական մշակույթի՝ մասնավորապես գեղեցիկ արվեստների զարգացմանը, դրանց կենցաղավարման հնարավորությունների ընդլայնմանը: Դա հնարավորություններ էր ընձեռում ազգային մշակույթի հիմքերի վրա իրանական նորօրյա արվեստի զարգացման համար:

Օրինակ՝ այդ տարիներին կառավարությունը որոշ քայլեր էր անում արվեստագիտական կայրեր պատրաստելու ուղղությամբ: Թեհրանի և Շիրազի համալսարաններում բացվում էին գեղեցիկ արվեստների ֆակուլտետներ, թատերական, վոկալի և բալետի մեկ տասնյակից ավելի դպրոցներ և ստուդիաներ էին կազմակերպված երկու խոշոր քաղաքներում: Թատերական գործի զարգացման մեծ խթան դարձավ 1960-ական թվականներին հիմնված մշակույթի և արվեստների նախարարությունը 1966 թ. նրան կից գործող թատրոնների վարչությամբ:

Այս ամենը, անշուշտ, նպաստավոր հող էին ստեղծում, ի թիվս այլ արվեստների, թատերարվեստի աշխուժացման համար: Իսկ վերջինիս «հացը» ինչպես հայտնի է, թատերգությունն է, գրականության այն տեսակը, որն ամենից բռույլն էր զարգացած Իրանի նորագույն գրականության մեջ: Եվ, անկանած, դա էր այն կարևոր պատճառներից մեկը, որ նոր բնույթի թատրոնը մարմրող գոյություն էր պահպանում Իրանում դարասկզբից ի վեր:

Գրականության այս տեսակի իսկական զարթոնքի տարիներ եղան 1960-1970-ական թվականները: Եթե մինչ այդ ստեղծագործող փոքրաթիվ դրամատուրգների գործերը հազարեալ էին դուրս գալիս պատմական դրամայի, վողիլի

կամ կենցաղային կոմեդիայի ժանրային շրջանակներից, ապա այս տարիներին հանդես եկավ դրամատուրգների մի ամբողջ սերունդ (Ղ. Սահելի, Բ. Սոֆիդ, Բ. Ֆորսի, Ա. Նալբանդյան, Ա. Նասիրիան և ուրիշներ), որի ստեղծագործությունը թեմատիկայով սերտորեն կապված էր երկրի տցիալքաղաքական արդիականությանը, արձագանքում էր ժամանակակից կյանքի իրատապ խնդիրներին։ Սա այս հիմքն էր, որի վրա պիտի բարձրանար բռն իրանական նոր թատերաբեստը։ Եվ, իրոք, վերջինիս նշանակալի աշխուժացման նշանները ակնբախ էին։ Ստեղծվեցին տասնյակ պրոֆեսիոնալ և բազմաթիվ սիրողական թատերախմբեր։

Թատերագրության զարգացումը խրախուսելու նպատակով պարբերաբար հայտարարվում էին լավագույն պիեսների և ներկայացումների մրցույթներ, կազմակերպվում էին թատերական փառատոններ, թատերական կյանքն ու նրա արդիական խնդիրները լայնորեն քննարկվում էին պարբերական մամուլում, հաճախակի կազմակեպվող «կոր սեղանների» շուրջ։ Գեղեցիկ արվեստների և, մասնավորապես, թատերարվեստի զարգացման ծրագրավորված գործունեություն էր ծավալվում Միջազգային թատերական ինստիտուտի, Իրանի մշակույթի և արվեստների նախարարության նախաձեռնությամբ 1967 թ. սկզբնավորված ամենամյա Արվեստների իրանական միջազգային փառատոնների շրջանակներում։ Այդ փառատոնների նպատակն էր «ասպարեզ բացել ազգային ավանդական արվեստների համար», «իրանցի ստեղծագործողներին հաղորդակից դարձնել արտասահմանյան երկրների մշակութային ուղղություններին», «քարձրացնել իրանական արվեստների մակարդակը», «իրանական հասարակայնությանը ծանոթացնել այլ երկրների արվեստների նվաճումներին»⁴։

⁴ The Book of Eighth Iran Festival of Arts, Tehran, 1974, p. 7. Ի դեպ, Современный Иран, М., 1975 ստեղծագործ (էջ 448) սխալմամբ նշված է, քեզ այլ փառատոնները տեղի էին ունենալ «երկու տարին մեկ»։

Իրանց ընթացքում իրանցի հանդիսատեսը հաղորդակից էր դառնում ինչպես եվրոպական, այնպես էլ Արևելյան երկրների լավագույն թատերական խմբերի արվեստին։ Իրանական կողմը արդիական պիեսների բեմադրություններից բացի նրանց էր ներկայացնում իր ավանդական թատրոնի տարատեսակները, որոնցից մի քանիսը մինչ այդ մոռացված (*Շուկուզի*, թագիե, մշջախաղ), այդ փառատոնի բերումով նորից աշխուժացան⁵։ Աշխարհի լավագույն թատրոնների նվաճումներին ծանոթանալը իրանական թատրոնի գործիչներին հնարավորություն էր տալիս նորովի իմաստավորել և գնահատել սեփականը՝ համամարդկային հումանիտար և գեղարվեստական արժեքների համարդման առումով։

Ավանդականը և նորօրյան, սեփականը և այլ երկրայինը համարելու այս մթնոլորտում իրանցի մտավորականության առջև բնականաբար ծառանում էր ազգային մշակույթի հետագա զարգացման ուղիների ընտրության խնդիրը։ Գրականության բնագավառում վերջինս մասնավորվում էր բանաստեղծության դասական ձևերի և «նոր բանաստեղծության» վերաբերյալ վերստին բորբոքված բանավեճերով։

Այսուհանդեռձ, 1960-ական թվականների վերջերից Իրանի թատերական գործիչների շրջանում գորեղանում և իր գործունեությունն էր ծավալում արվեստագետների այն թևը, որը առաջնորդվում էր թատրոնի նորագույն ուղղությունները ներդնելու միջոցով իրանցի հանդիսականի գեղագիտական ձաշակը բարձրացնելու, այդ ուղղությունների ազգային և քարգմանական լավագույն պիեսների բեմադրությամբ իրանական թատերարվեստը զարգացման լայն հունի մեջ դնելու

⁵ Շուկուզի՝ յուրօրինակ ընտանեկան թատրոն, որի ներկայացումները ստացինար թատերախմբերի ուժերով ներկայացվում էին տների բառում, շրավագանի վրա կառուցված հարթակներում (այսուղի՝ «քավակերու», շրավագանի վրա կառուցված հարթակներում այսուղի՝ «քավակերու»)։ Թագիե կրոնական միստերիայի թատրոն, ուր բեմադրվում են շիա իմամների կյանքի և նահատակման վերաբերյալ ավանդություններ, առավելապես կրոնական սգի՝ աշուրայի օրերին։

ծրագրերով: Ազգային, իրանական թատրոնի էական նորացման կողմնակիցները դրամատուրգիայում կազմեցին «Նոր ալիք» (Mouj-e nou) ուղղությունը (հայտնի գրողներ Ա. Նալբանդիան, Բ. Ֆորսին և ուրիշներ):⁶

Թատերարվեստի մեջ նոր ուղղությունների ներքերման և արմատավորման ջատագովներից էր նաև 1960-1970-ական թվականներին Իրանի թատրոնի ակնառու գործիչներից մեկը՝ Արքի Հովհաննիսյանը: 1942 թ. Նոր Չուղայում ծնված և Լոնդոնի Կինոարվեստի դպրոցում կրթություն ստացած երիտասարդ արվեստագետին, ինչպես նշված է նրա կենսագրականում, «իր կարիերայի մեծությունը վիճակված էր գտնել թատրոնում»:⁷ Ուսումնառությունն ավարտելուց հետո Իրան վերադառնալով՝ Արքի Հովհաննիսյանը սկսում է աշխատակցել Շահեն Սարգսյանի թատերախմբում, որին իրանցի քննադատները համարում են Իրանի արդիական թատրոնի հիմնադիրներից մեկը:⁸

Իրանում Արքի Հովհաննիսյանի ուժինորական աշխատանքի առաջին փորձը այս թատերախմբի ուժերով շվեդ հայտնի դրամատուրգ Օ. Ստինբերգի «Սալմուազել Ժյուլ» դրամայի բեմադրությունն է եղել (1968 թ.), որ պարսկերեն էր թարգմանել Շ. Սարգսյանը:⁹ Սրան հաջորդեցին Ժան Պոլ Սարբրի «Փակ դուռը», Է. Խոնեսկուի «Դասը»: Ժամանակի մամուլը խրախույսի խոսքեր գրեց նորամուտ արվեստագետի այդ բեմադրությունների մասին, որոնք, ինչ խոսք, կրում

⁶ «Թատերական կլոր սեղան», «Սոխան», 1347, N 5: Այդ տարիներին իր «Նոր ալիք» ուսեղալ նաև պարսից պետքան:

⁷ The Book of Eighth Iran Festival of Arts, p. 68. Լոնդոնում սովորելու տարիներին նա նկարահանվել է երեք կարճամետրաժ կինոնկարներում:

⁸ Նոյն տեղում, էջ 61:

⁹ 1980-ական թվականներին Բերգմանի՝ այս պիեսի բեմադրությունը Շվեդիայի արքայական թատրոնում միջազգային լայն արձագանք ստացավ: Վերնազրի թարգմանական տարբերակում պիեսը կոչվում է «Ֆրոկեն Յուլիա»:

ին թատերարվեստում նրա որոնումների փուլում գտնվելու իրողության կնիքը:

Նոյն թվականին արվեստների Իրանի փառատոնում նա ներկայացնում է իրանցի երիտասարդ դրամատուրգ Արքան Նալբանդիանի «Փաժուհեշե նովին» (Նոր հետազոտություն) պատմական դրամայի իր բեմադրությունը, որը շահում է Ազգային ուղիոյի և հեռուստատեսության երկրորդ մրցանակը: Պիեսի նյութն առնված էր մինչիվամական Իրանի պատմությունից: «Սոխան» հանդեսի վկայությամբ, այդ բեմադրությունը դարձել էր «բոլոր խավերի հանդիսատեսների խոսակցության առարկա»: Արտահայտված թեր և դեմ կարծիքների պատճառը, թատերախոսի կարծիքով, գործի «արտակարգ» բնույթն էր¹⁰: «Ինտելեկտուալ» դրամայի կանոններով գրված այս երկը ուժինորը բեմադրել էր եվրոպական և արևելյան թատերական արտահայտչամիջոցների գուգակցման հայեցակարգով: Ներկայացման ոգին մարդկանց փոխրժոնման վթարվածության դատապարտումն էր: Պարսից դասական արվեստի, խորհրդանշային ավանդույթին աղերսվելու առումով ներկայացումը ուշագրավ էր գործող զիլավոր անձերից մեկի՝ Ճամփորդի (sâlek) իմաստավորումով: Հովսի, սպասման խորհրդանիշ ճամփորդի հարցումներին գործող անձինք պատասխան չեն գտնում: Ի խորո ջլատվել են մարդկանց միավորող, նրանց փոխրժոնումը ապահովող հոգնոր կապերը: Բայց ճամփորդը չի հեռանում բեմից. կա, մնում է հույսը: Պետք է ենթադրել, որ արևելյան և եվրոպական բեմարվեստի արտահայտչամիջոցների այս համաձուկումն էր գրավել նաև օտար հանդիսատեսներին ու թատերագիրներին: Այս բեմադրությունը 1969-1970 թվականներին մեծ հաջողությամբ ներկայացվեց Բելգրադում, Փարիզում կայացած թատերական փառատոններում, ինչպես նաև Լոնդոնի արքայական թատրոնում:

¹⁰ «Սոխան», 1347, N5, էջ 562:

Ստեղծագործական որոնումներն ու ծրագրերը 1969 թ. Արքի Հովհաննիսյանին տարան Իրանի ազգային ռադիոյի և հեռուստատեսության նորաստեղծ թատերական փորձարարական ստուդիա, որտեղ նա լիարուր հնարավորություն ունեցավ իրագործել իր մտահղացումները: Այստեղ նա բեմադրել է Օ. Ստրինդերգի, Հ. Իբսենի, Ս. Բեկետի, Պ. Զանդրեի, Լ. Դիրանդելյի, Ա. Աղամովի, Ա. Շեխովի և Լևոն Շանթի դրամաները:

1969 թվականը Ա. Հովհաննիսյանի, իսկապես, աստեղային ժամն էր: Այդ տարի նրան աշխատակցելու է իրավիրում Փարիզի Թատերական հետազոտությունների միջազգային կենտրոնի դեկանը, անզիացի նշանավոր ռեժիսոր Պիտեր Բրուկը: Մեծ արվեստագետը այսպես է բնորոշել այդ կենտրոնի ստեղծման և գործունեության նպատակը. «Բացել փակ դռները, նպատել մշակույթների այնպիսի ներթափանցմանը, որը նախկինում անհնար էր»¹¹: Ասել է թե՝ տարբեր ժողովուրդների մշակույթների փոխհարստացումը դիտվում էր որպես համաշխարհային մշակույթի զարգացման գործոն: Այս ըմբռնումը ցրում էր անորոշությունը, մատնանշում այն ուղին, որ ստեղծագործական իր երկընտրանքները հաղթահարելով՝ պետք է ընտրեր երիտասարդ արվեստագետը:

Արվեստների Իրանի փառատոնի կազմակերպման վարչությունը 1970 թ. Արքի Հովհաննիսյանին իրավիրում է բեմադրելու ազգային թեմատիկայով որևէ գործ փառատոնում ներկայացնելու համար: Այդ տարի փառատոնում թատերական երկերը իրանական, թե օտարերկրյա, ընտրվում էին «ավանդական թատրոնի» նշանաբանով: Այս նպատակով իրանական կողմը ավանդական կրոնական թատրոնի (taazie) մի ներկայացումից բացի ծրագրում է պարսից դասական Ֆալրանիի «Վիս և Ռամին» չափած սիրավեպի դրամատուրգիական տարբերակը: Ժամանակի գրական

թատերական մամուլն ընդգծում էր. «Վիս և Ռամինի» բեմադրությունը դիտելս մեկ անգամ ևս համոզվում ես, որ Արքի Հովհաննիսյան բեմադրարվեստի խորաթափանցության ու վարպետության շնորհիվ հնարավոր է ամենապարզունակ և սովորական պիեսներից դիտարժան գործ ստեղծել»¹²:

Արդեն ճանաչում ստացած արվեստագետը, շարունակելով համագործակցությունը «Նոր ալիքի» իր համախոհներից Ա. Նալբանդյանի հետ, 1972 թ. ամենամյա 6-րդ փառատոնին ներկայացվելու համար բեմադրում է նրա «Նազահան հեզա» (Զանկարծ՝ այդպես) դրաման: Շիրազի Դելգոշա նշանավոր առանձնատան բաց զմբեթավոր տաղավարում կայացած ներկայացումը ևս արժանանում է իրանցի և օտար հանդիսականների ջերմ, բարձր զնահատականներին¹³: Բեմադրության և դրամայի մասին գրախոսականներում ընդգծվում էր, որ Հովհաննիսյանին հաջողվել է վեր հանել մարդու օտարվածության դրաման, սրությամբ ընդգծել անհատի պատասխանատվությունը հասարակական չարիքի գոյընթացում: Ժամանակի առաջադիմ միտքը զբաղեցնող այս խնդիրները, որ խոր անդրադառներ էին ստացել նաև այդ տարիների պարսից բանաստեղծության մեջ և արձակում¹⁴, առանցքային-հայեցակարգային հնչեղություն ունեին նաև Արքի Հովհաննիսյան արվեստագետի ներկայությունում: Դրա վկայությունն է նույն՝ 1972 թ. նրա անդրադարձ Ա. Շեխովի «Բալենու այգուն», իսկ մի փոքր ուշ՝ 1974 թ. Ալբ. Կամյուի «Կալիգուլա» ողբերգությանը (Արվեստների Իրանի փառատոնում), ինչպես նաև Պիտեր Հանդերի («Ուսուցիչ իմ, ուորս»,

¹² «Սովորան», 1970, N2, էջ 444:

¹³ See u The Book of Eighth Iran Festival of Arts, p. 68, «Ռուդարի», 1973, N17. «Սովորան», 1972, N7 և այլն:

¹⁴ Այս առումով ընորոշ է Ժամանակի նշանավոր պարսիկ բանաստեղծներ Ա. Շամլուի, Ֆ. Ֆարոխզադի, Ն. Նալբերփուրի ստեղծագործությունը: See u Кляшторина В., "Новая поэзия в Иране", Москва, 1975. "Страны и народы Ближнего и Среднего Востока", XI, Иран, 1982, с. 206-208, 222.

«Մի տող կարդալու համար», 1973 թ.) ստեղծագործությունները: Լուիջի Պիրանդելոյի «Մարդ, կենդանի, աստվածավախություն» (1975 թ.) պիեսների բեմադրություննը: Անդրադառնալով Արքի Հովհաննիայանի՝ Արևմուտքի թատերգության հայտնի երկերի բեմադրություններին, իրանցի քննադատները նշում էին նրա առնչությունը ավանդարդի թատրոնի գեղագիտությանը: Թվում էր, թե մի երկրում, ուր եվրոպական բնույթի թատրոնը չէր հասցրել ստեղծագործել որոշակի հաջորդակցված ավանդությներ, Արևմուտքի թատրոնի նորագույն ուղղությունները հող չունեին զարգանալու¹⁵: Դրանց նկատմամբ մերժողական վերաբերմունքը հատկապես սրվում էր արևմտյան զանգվածային մշակույթի (և ոչ միայն) օրեցօր ահագնացող ներթափացմանը դիմակայելու տրամադրությունների մթնոլորտում:

Դրանց, ինչպես նաև իրանական «Նոր ալիքի» նկատմամբ մերժողական վերաբերմունքը խորանում էր նաև այն հանգամանքով, որ այդ տարիներին ինչպես Արևելքի երկրների մեծ մասում, Իրանում ծայրաստիճան սրվել էր Արևմուտքի զանգվածային մշակույթի ճնշող, դիմագրկող ազդեցությանը դիմագրավելու տրամադրությունը¹⁶:

Պարսից թատրոնում, այսպես կոչված, ավանդարդիկ ուղղությունների կողմնակիցները ծավալված բանավեճում «ավանդարդիստական ուղղության թատերարվեստի՝ պարսից մշակույթի հետ առնչության խնդիրը մասնավորվում էին հետևյալ հայեցակետերով, որ այդ արվեստը կարող է Իրանում գտնել իր հանդիսատեսին, այդ ուղղության գեղագութափական համակարգին համահունչ իրանական գործերը կարող են հունավորվել, դառնալ պարսից արվեստի ազգա-

¹⁵ Radi A., Dasti az dur, Tehrân, 1973, s. 68.

¹⁶ Այդ տրամադրությունների խոսած արտահայտություններից մեկը հայտնի գրող Զալալ Ալի Սիմանի «Qarbzadegi» (Արևմտամոլություն) գիրքը (Թեհրան, 1962):

շունչ երևույթներ»: Հենց այդ իրադրությունն էլ մղում էր զգուշավոր մերժողական գնահատական տալ նշված նորագույն ուղղությունների լավագույն գեղարվեստական չափանիշներով ստեղծված իրանական գործերին ու ներկայացումներին¹⁷:

Ժամանակի իրանցի առաջադեմ մտավորականների մի մեծ խումբ (այդ թվում՝ Ռեզա Բարահանին, Արքար Ռադին, Էւլամ Քազեմին) հակված էր այն տեսակետին, որ թերասածության, խորհրդանիշների և գուգորդումային մտածողության վրա հիմնված ավանդարդային թատերարվեստը գեղագիտական հիմքեր ունի իրանական միջավայրում զարգանալու համար, քանի որ վերոհիշյալ արտահայտչամիջոցների նրա համակարգը իր շատ եզրերով գուգորդելի է Իրանի դասական խոսքարվեստին և գեղարվեստական մտածողությանը¹⁸:

Ասես ավանդարդի թատրոնի՝ Իրանում «հող» ունենարու վերաբերյալ այս վեճին ի պատասխան, մեկուկես տասնամյակ անց Պիտեր Բրուկը նկատում է. «Ես դիտել եմ Բեկետի «Ի սպասումն Գողոյի» բեմադրությունը Եվրոպայում և Ամերիկայում: Եվ մի անգամ ինձ վիճակվեց տեսնել իրանական բեմադրությունը: Այս ներկայացման մեջ ոչինչ չկար, որ հիշեցներ, թե «Ի սպասումն Գողոյի» պիեսը գրել է Ֆրանսիայում ապրած իոլանդացին: Այն մարդկանց մասին պատմությունը, որոնք փորձում են գլուխ հանել, թե ինչպես ապրեն իրենց կարծիքով իմաստագուրկ այս աշխարհում, հուզում էր իրանցիներին, և պարզապես տեղին չէր հարցը. արևելյան, թե՝ արևմտյան է այդ դրաման»¹⁹: Ապա, ամփոփելով իր միտքը,

¹⁷ Օրինակ՝ այդպես ընդունվեց Արքի Հովհաննիայանի 1972 թ. նկարահանած «Չեշմե» (Ակնադրյուր) ֆիլմը: Տե՛ս «Negin», 1973, N 6.

¹⁸ «Se ešärät dar nemáyeše Beket «Be entezäre Godo» (Երեք դիտարկում Բեկետի «Ի սպասումն Գողոյի» բեմադրության վերաբերյալ), «Āraš», 1968, N 3.

¹⁹ Брук П., Лекции во МХАТ, ч. I, «Театр», 1989, N3, стр. 146-147.

Պիտեր Բրուկը դիպուկ նկատում է. «Թատրոնի գործառություններից մեկն էլ հենց այն է, որ հաղթահարի մարդկանց տարանջատող կարծրատիպերը»²⁰:

Ավանդականը և նորօրյան, սեփականը և այլերկրայինը համադրելու այս մքնոլորտում իրանցի մտավորականության առջև բնականարար ծառանում էր ազգային մշակույթի հետագա զարգացման ուղիների ընտրության խնդիրը: Վերջին տասնամյակներում Իրանի հանդիսանքային արվեստի (թատրոն, մասնավորապես, կինո) ներկայացուցիչների՝ միջազգային փառատոններում ունեցած նշանակալի հաջողությունները ավանդական գեղագիտական կարծրատիպերից հրաժարվելու, ազգային մշակույթի՝ վերը նշված արդիաշունչ արտահայտչամիջոցները նորոգելու և զարգացնելու արդյունք են: Նորացումներ, որոնց առաջին շարքում էր Արբի Հովհաննիսյանը:

ОДНА ПРИМЕЧАТЕЛЬНАЯ СТРАНИЦА МЕЖДУНАРОДНЫХ ЗАИМСТВОВАНИЙ ИРАНСКОГО ТЕАТРА

(Арби Оганисян: попытка создания портрета артиста)
Лаура Шехоян
(резюме)

60-70 года XX века были годами настоящего пробуждения для иранской драматургии. В ряду армянских деятелей иранского театра этого времени своей яркой индивидуальностью выделяется режиссер Арби Оганисян. В этой атмосфере синтеза традиционного и современного, собственного и иностранного перед иранской интеллигенцией возник-кал

²⁰ Նույն տեղում:

вопрос выбора путей дальнейшего развития национальной культуры.

В последние десятилетия значительные успехи, которые имели представители иранского театра и в частности киноискусства результат отказа от традиционных эстетических клише и развития и восстановления выше упомянутых современных выразительных средств национальной культуры. Новшества, в первых рядах экспериментов которых был Арби Оганисян.

A REMARKABLE PAGE OF INTERNATIONAL BORROWINGS OF THE THEATRE OF IRAN

(Arbi Hovhannisyan: an attempt to create a portrait of
an artist)

Laura Shekhojan

(summary)

The 60's and 70's of the XX century were the years of real awakening for the Iranian dramaturgy. Among the Armenian figures of the theatre in Iran during this period producer Arbi Hovhannisyan is notable as an outstanding personality. In this atmosphere of synthesizing traditional and modern, native and foreign Iranian intellectuals had to choose the ways of the future development of the national culture. In the last decades the remarkable achievements of the representatives of the Iranian theatre and cinema were the result of the rejection of the traditional esthetic clichés, on the other hand developing and reconstructing of the modern expressive means noted above. In the first rows of the experimentations of innovations was Arbi Hovhannisyan.

**ՕՄԱՐ ԽԱՅԱՄԻ ՔԱՌԵՎԱԿՆԵՐԸ
ՍԱԴԵՂ ՀԵՂԱՅԱԹԻ ՄԵԿՆՈՒԹՅԱՄԲ**

**Բանալի բառեր՝ Խայամ, Հեղայաթ, քառյակներ,
սուֆիզմ, փիլիսոփա, նյութապաշտ, ասվածավախ**

Սադեղ Հեղայաթը XX դարի իրանական մշակույթի և գրականության նշանավոր դեմքերից է: Նա սուաջատարներից է կարճ պատմվածքի՝ նովելի ժանրի, և իր երկերը ստեղծում է հասարակությանը հասկանալի ու մատչելի պարզ լեզվով, ժողովրդական բառ ու բանի, ոձերի օգտագործումով: Նա առաջինն է, ով ներկայացրեց ազգագրության և բանահավաքչական ուսումնասիրության գիտականորեն մշակված և նպատակամետ ծրագիր: Նրա ստեղծագործություններում կենտրոնական տեղ էն զբաղեցնում իր երկիրը, հասարակ ժողովուրդն ու նրա կենցաղը, որոնց էլ նվիրել է իր լավագույն պատմվածքները: Հեղինակի ուշադրության կենտրոնում էն նաև Իրանի նախախալամական շրջանի պատմությունը և մշակույթը, որոնց հանդեպ մոտեցումը աշքի է ընկնում բժախնդրությամբ և պատասխանատվությամբ:

Սադեղ Հեղայաթը իր կարճ, բայց բեղմնավոր գրական կյանքի զգալի մասը նվիրել է հակիրճ պատմվածքներ գրելուն: Միաժամանակ գրել է նաև գրական քննադատական հոդվածներ և ամբողջական ուսումնասիրություններ. դրանցից մի քանիսը նվիրված են Օմար Խայամի (12-13 դդ.) փիլիսոփայական քառյակներին: Ս. Հեղայաթը տական տարիներից խորապես տպավորված էր Օմար Խայամի քառյակներով:

Օ. Խայամի համբավը սփոռվել է ամբողջ աշխարհ, և նրա քառյակները տարբեր լեզուներով թարգմանվել են: Հայ գրականությունը նույնպես անտարբեր չի անցել Խայամի քառյակների կողքից: Հայկական պոեզիան և հայ պոետները Նահապետ Քուչակ, Նաղաշ Հովհանքան, Սայաթ-Նովա, Հովհաննես Թումանյան, Եղիշե Զարենց, Հովհաննես Շիրազ և շատ ուրիշ տաղանդաշատ մարդիկ նովապես հետաքրքրվել և երթևմսի անդրադարձել են Օ. Խայամի քառյակներին: Նրանք գրում են այն նյութերի մասին, ինչը հարազատ և հոգեմոտ է իրենց ներաշխարհին, քանի որ ամեն մի քառյակի ետևում կյանքի իրողություններով ու հուզմունքներով, ուժեղ կամքով անհատականություն է կանգնած:

Օմար Խայամի քառյակների թվի և բովանդակության մասին բազմաթիվ կարծիքներ են արտահայտվել և գրքեր գրվել: 1923 թ. (1303) լույս է տեսնում Հեղայաթի «Օմար Խայամի քառյակները» վերնագրով հոդվածը: Երիտասարդ Հեղայաթին արդեն հոյս հետաքրքրում էին միջնադարի մեծ անուն քերթողներից մեկի փիլիսոփայական գաղափարները, և նրան մղում ավելի խորագին ուսումնասիրության: 1934 թ. (1313) լույս է տեսնում «Տարանեհայ Խայյամ» (Խայամի երգերը) քննական ուսումնասիրությունը: «Նրա ստեղծագործությունը Խայամի կյանքի դիպվածներին և իրադարձություններին չի վերաբերում, այլ միայն անդրադարձում է բանաստեղծական արվեստին ու փիլիսոփայական գաղափարներին¹», և նկատել է պարսիկ գրող Միհրաբեդինին: Խայամը եղել է ոչ միայն բանաստեղծ, այլև գիտնական և փիլիսոփա: Բազմաթիվ քառյակներ են վերագրված Խայամին, բայց, Ս. Հեղայաթը բնագրերի օրինակները ուսումնասիրելով ձեռնամուխ է լինում գտնել այն քառյակները, որոնք Օ. Խայամի փիլիսոփայական մտքերին ու գաղափարներին հարազատ են: Հեղայաթը Խայամին վերապահվող հազարավոր քառյակներից

¹Ettehad H., Raujeshgaran mo'aser, p. 240.

նրա գրչի արդյունք է համարում 143-ը: Նաութ վերնազրով բաժնում, համարակալում և համակարգում է քառյակները, ապա անդրադառնում դրանց վերլուծությանը: Հեղայաթը քառյակները բժախնդրորեն է ընտրել, և նրանց այբբենական մոտեցում չի ցուցաբերել, այլ նրան հետաքրքրել է նրանց բովանդակությունը, և նա դասդասել է դրանց ըստ այդմ: Այս ձևի կիրառումը նորույթ էր և Հեղայաթի ցուցաբերած նորարարական մոտեցման ապացույցը:

Ենթելով քառյակներում արծարծված գաղափարներից՝ Խայյամին համարում են աստվածավախ հավատացյալ, սուֆի, նույնիսկ աստվածամերժ, նյութապաշտ, աշխահիկ, բնապաշտ, լավատես, հեղափոխական, օրինազանց, խորամանկ, ճարպիկ, վավաշոտ և այլն: Այս պարագայում անտեսվում է մարդու, պուետի հայացքների և գրական վարպետության հոլվույթը նրա կյանքի ընթացքում, և Խայյամին պատկերացնում են որպես ինքն իրեն հակասող և նույնիսկ քազմարիվ դեմքերով: Բազմազան և բազմակերպ կարծիքներից և արտահայտություններից ընթերցողի մոտ այնպիսի պատկերացում է ստեղծում, որ քառյակների հետինակը կարծես տարբեր ժամանակաշրջաններում և հոգեվիճակներում ապրած մարդ է: Պատկերացնել կարելի է, թե որքա ն կիեռանայինք ճշմարտությունից, եթե ենթելով Նարեկացու Մատյանից, նրան համարեինք աշխարհի ամենամեղավոր մարդը: Նեզամի Արուգի-ն, լինելով Խայյամի աշակերտն ու ընկերը, տաճելով նրա նկատմամբ մեծ հարգանք, իր գրքում Խայյամին ներկայացնում է որպես աստղագետի, իսկ նրա քառյակների մասին խոսք անգամ չի ասում: 1193 թ. (572) Խայյամի մահվանից 50 տարի անց, Էմաղեղին Քաթեր Էսֆահանին արաբերենով իր «Xaridat օլ qaṣr» (պալատիզնումը) գրքում՝ առաջին անգամ բանաստեղծի քառյակների մասին խոսք է ասում: Հատ Ս. Հեղայաթի՝ իին գրքերում, օրինակ, «Nazhat օլ arvāh» (Հոգիների մաքրություն), «Tārīx օլ hōkamā» (Իմաստակների

պատմությունը), «Āsār օլ belād» (Քաղաքների հետքերը), «Ferdōs օլ tāvārīx» (Պատմություններ դրախտի) և այլն, աղավաղված տեղեկություններ և կեղծ հերքաթներ են պահպանվել, որոնք իմբ են ծառայում սխալ գաղափար կազմել Խայյամի քառյակների մասին, քանի որ դրանք իրականությունից շատ հեռու են:

Խայյամի քառյակների վերաբերյալ «Հեղայաթի «Տարանեհայե Խայյամ»ը (1313) մեծ արժեք բննախոսական երկ է, որը հրատարակվել է բանաստեղծի կենդանության օրոք: Առաջարանից հետո նա Խայյամին ներկայացնում է նախ որպես փիլիսոփա, ապա բանաստեղծ: Այսպիսով՝ Հեղայաթը Խայյամին պատկանող քառյակների իսկությունը բնորոշում է բանաստեղծի աշխարհայացքային հիմքով, նրա փիլիսոփայական գաղափարներով և ոչ թե մեկ այլ չափանիշով: Կարծում ենք, որ գրականազիտորեն այդ մոտեցումը բավականին հետաքրքիր և արգասաբեր է: Նա «Տարանեհայե Խայյամ»-ի նախարանում մանրամասն անդրադառնում է տարբեր տեսակետների և տրամարանական հետևողականությամբ ներկայացնում իր ըմբռնումը:

Ս. Հեղայաթն իր վերոնշյալ ուսումնասիրության մեջ գտնում է, որ Խայյամը այդ քառյակների միջոցով իր աշխարհայացքն ու գաղափարներն արտահայտում է պարզ, անպատճեց, գեղեցիկ և խար իմաստ մտածումներով, դյուրիչ ու թովշական երաժշտականությամբ, հոգեզմայլ տպավորություն և տրամադրություն ստեղծելով ընթերցողների մեջ: Նրա քառյակները ինքնատիպ են և խորին անհատականության կնիքն են կրում իրենց վրա: Խայյամը այն բանաստեղծներից է, ովքեր տիրապետում են իրենց ընթերցողների հոգիները:

Ս. Հեղայաթը իր ուսումնասիրության տողատակում ասում է: «Խայյամի քառյակներին նվիրված իր գրքում Քրիստոնենք (եջ 90) գրում է, որ քառյակները հանգավորված իրանական բանաստեղծություններ են, իսկ Նիկոլայ Հարթմա-

Նի կարծիքով դրանք իսկական երգեր են և հաճախ եղանակներով էլ երգվում են: «Bar sâz tarâneî ô pîš âvar mey» (Հորինի՞ր մի երգ և մատուցիր քո զինին. 116)²: Հետազային արաբները քայլակների հանգ ու չափը պարսկերենից ընդօրինակում են, և ենթադրվում է, որ Հարթմանի մտահայեցումը Շամս Ղեյս-է Թարթիզի-ի գրքի ազդեցության արդյունքն է»³: Իսկ պրոֆեսոր Արմանուշ Կոզմոյանն իր կազմած «Մարզարտաշար»-ում գրում է. «Պոետիկայի հմուտ գիտակը (Շամսէդ-դին Ղեյս-օլ Ռազի-Ա.Յ.) նշում է նաև, որ արաբական պոեզիան չի ունեցել քերպողական արվեստի քայլակային ձևը և միայն ուշ շրջանում են արաբ բանաստեղծները գրել պարսկերենից փոխառված ժանրային այդ ձևով՝ պարսկերեն թարանն և դրեյթի անվանումը փոխարինելով արաբերեն ռորայի բառով»⁴:

Ըստ Արմանուշ Կոզմոյանի՝ Խայյամը փիլիսոփա և գիտնական է. «Որպես փիլիսոփա Խայյամն իրեն համարում էր Էրն-Սինայի (Ավիշեննա), Ալ-Ֆարաբիի ռացիոնալիստական միտումների հետևորդ: Այդ միտումները անվերապահորեն դիմակայում էին սուֆիական-փիլիսոփայական աշխարհայցին, որի ներկայացուցիչները (Սանայի, Ռումի, Զամի) սուֆիզմի շրջանակներում արված ամենաըմբռուտ ազտա-

² Ս. Հեղայարք «Tarânehaye Xayyâm» գրքի վերջում քայլակները ըստ նյութերի բաժանել և համարակալել են: Մենք էլ նոյնական քայլակների վերջում նշում ենք այդ համարները: Այստեղ 116 քայլակը բերում ենք ամբողջությամբ:

Hengâm-e sabûh ey sanam-e farôx pey,(Եյ պաշտելի բարիուն գեղուիի վաղորդյան պահին). Bar sâz tarâneî ô pîš âvar mey; (Ստեղծիր մի երգ ու առաջ բեր զինին), Kafkand beşâk sad hezârân jam ô key(Հողին զարկեց հարյուր հազարավոր Զամ ու Քեյ), În âmadan-e tîr mah ô raftan dey(Գալն այս թիր ամսին ու գնալը դեյին).

³ Hedayat S., Tarânehaye Xayyâm, Tehran, 2536, p. 43.

⁴ Մարզարտաշար, (կազմեց, պարսկերենից տողացի թարգմանեց, առաջարանը գրեց և ծանոթագրեց Արմանուշ Կոզմոյանը), Երևան, 1990 թ.,էջ 5:

խոհության կոչվելով հանդերձ չին համատեղում իրենց կրոնափիլիսոփայական որոնումները գիտականի հետ»⁵:

Ս. Հեղայարք Օ. Խայյամին համեմատելով Հաֆեզին, Սաադիին, Սոլավիին, Օքեյդ Զարանիին և այլոց, գտնում է, որ նա գերազանց է բոլորից: Անհրաժեշտ է նշել, որ Օ. Խայյամը, Ս. Հեղայարին սիրելի և հարգելի է նաև որպես բանաստեղծ, և ապա իրեն գիտնական: Խայյամը սիրում և փառաբանում էր իր երկիրը, նրա պատմությունը և ոգին, ինչպես դա անում է հետազայում Հեղայարքը. նրանք համաշխարհական և բուն ազգային իրականության, կյանքի և ընկերային իրողությունների նկատմամբ ունեն նույն մոտեցումները և զաղափարները:

Ս. Հեղայարն իր ուսումնասիրությունների ընթացքում առնչվում է երկու գրքերի, որոնցում Խայյամին վերագրված քայլակներից, իր կարծիքով 14-ն են ներկայացված: Ըստ Հեղայարի՝ ամենից հին բնագիրը 1241-1242 թթ. (621-620) ի «Marsâd ol Êbâd» (Աստղադիտարանի ծառաներ) անունով գիրքն է, որի հեղինակը հայտնի տոփի Նաջմեդդին Ռազի-ն է: Այնտեղ նա երկու քայլակ է վերագրում Խայյամին: Հեղինակը իր զաղափարի մեջ լինելով խիստ և մողեռանդ, Խայյամին համարում է նյութապաշտ, զվարձամոլ և բնապաշտությունը և բնապաշտությունը երբեք աստվածապաշտության և լուսավորության բարձրաստիճանին չի հասնում. նա ուղղակի գրում է. «(Եջ 18)... Ուրեմն տեսության արդյունքը հավատքն է և զործողության արդյունքը աստվածանաշչությունը: Փիլիսոփաները և բնապաշտները այս երկու արժանիքից զուրկ են, ուստի մոլորդի ու կորչում են: Գիտնականներից մեկը, ով կույրերի մոտ գիտությամբ ու իմաստությամբ է հայտնի, Օմար Խայյամն է, որը զարմանքից ու թշվառությունից այս քայլակն է երկնել»

⁵ Նոյն տեղում, էջ 20:

*Dar dāyereī kāmadan ὁ raftan māst,
Ān rā na badāyat, na nahāyat peydāst;
Kas mīnazanad damī dar īn 'alam rāst,
Kīn āmadan ὁ raftan bekojāst⁶! (10)*

(Շրջապույտ է աշխարհը. և մենք զալիս ենք ու գնում // Նրա ոչ սկիզբ գիտենք, և ոչ էլ վերջը // Ոչ որ այս իրականության մասին չգիտի // Որտեղից ենք զալիս և ուր ենք գնում):

Ս. Հեղայարդ այս քառյակից ավելի է համոզվում, որ Խայամը ոչ միայն սուֆի չէր, այլ նրանց հակառակորդը և քշնամին: Ահա երկրորդ քառյակի կապակցությամբ Նաջմեդինի Ռազի-ն այսպես է ասում. «(էջ 227)...Խակ իմաստությունը ինչ է՝ ապրելուց հետո մեռնել և կենդանանալ մահվանից հետո, ահա դրա պատասխանը միամիտ մոլորվածը և անմիտ կորածն ասում է՝

*Dārandeh če tarkīb-e tabāay'e ārāst.
Bāz az če sabab fekandaš andar kam ὁ kāst?
Gar zest āmad īn sovar, 'eyb kerāst?
Var nīk āmad, xarābi az bahr če xast?⁷ (11)*

(Ամենակալը ի՞նչ բնական կազմվածք կառուցեց. // Կրկին ի՞նչ պատճառով նրան դժվարության մեջ զցեց: // Եթե տգեղ եղան այս դիմանկարները, ո՞վ է մեղավոր: // Եթե գեղեցիկ եղան, փշացնելը ինչի համար ուղեց:)

«Munes օլ Ahrār» (Ազատականների մտերիմը) գիրքը 1362 թ. (741), միակ ձգրիտ և հավաստի աղբյուրն է, որտեղ ներկայացվում է Խայամի իրեն իսկ պատկանող քառյակները, որոնք համահունչ են նրա հոգու, փիլիսոփայության և զրա-

կան ոճին: Ըստ «Tarānehāye Xayyām» գրքի համարակալված քառյակների՝ դրանք են՝ 8, 10, 27, 29, 41, 45, 59, 62, 64, 67, 93, 115, 127, իսկ 10-րդ քառյակը նույնպես անդրադարձել է Նաջմեդինի Ռազի-ն: Այսպիսով՝ 14- քառյակները հիմք են ծառայել Ս. Հեղայարդի ուսումնասիրությանը, ամեն մի բառ կամ արտահայտություն, որպես բանալի նրան ճիշտ մեկնաբանության է ուղղորդել:

Արդեն նշել ենք, որ Օ. Խայամի հակառակորդները համոզված էին, որ նա իր կյանքի տարբեր շրջաններում ունեցել է տարբեր զաղափարներ, որոնք հակասում էին մեկը մյուսին Խայամին դարձնելով նյութապաշտ, աստվածավախ, փիլիսոփա-զիտնական, աշխարհիկ և այլն, և իբր ըստ այնմ գրել է քառյակներ: Եվ այդպիսի համոզմունքներ ունեցողները հերթարանման պատմություններ էին հորինում նրա մասին: Կարելի է մտածել, որ երիտասարդական տարիքում նա անհավատ է եղել և տուրք է տվել զինեմոլությանը, իսկ տարիքն առնելով՝ Աստծու ճանապարհն է բռնել: Ս. Հեղայարդը սրա վերաբերյալ գրում է. «...ասում են տարիքի բերումով նրա մտածելակերպն ու կարծիքները փոփոխական էին դարձել, նա սկզբից անտարբեր, զինեմոլ և անհավատ էր, իսկ կյանքի վերջին օրերին բախտը նրան ժպտում և Աստծու ճանապարհին է վերադառնում. մի զիշեր երբ նա հարրած էր, այդ պահին ուժեղ քամին փշում և նրա զինու կուժը հատակին է ընկնում ու կոտրվում: Այդ պահին նա բարկությամբ դիմում է Աստծուն և ասում»⁸.

*Ebrīq-e marā šēkastī rabī,
Bar man dar-e 'eyš rā be bastī,
Man mēy xōram ὁ tō mīkōnī badmastī;
Xākam bedahan magar tō mastī rabī?*

⁶ Hedayat, S., Taranehaye Xayyam, p.11.

⁷ Նոյն տեղում, էջ 12:

⁸ Նոյն տեղում, էջ 13:

(Գինուս կուժը, Տեր իմ, կոտրեցիր // Իմ վրա վայելքի դուռը փակեցիր // Ես եմ խմում, բայց դու ես դառնում կովազան հարբեցող // Հողն իմ բերանին, միթէ՝ Աստված իմ, դու հարբեցիր):

Աստված բարկանում է նրա վրա, և նրա դեմքը իսկույն սեանում է. ապա նա կրկին ասում է.

*Nākardeh gōnāh dar jahān kist? Bēgū,
Ānkas ke gōnah nakardeh čōn zist? Bēgū;
Man badkōnam o tō bad mōkāfāt dahil
Pas farq-e miyan-e man o tō čīst? Bēgū.*

(Ո՞վ այս աշխարհում մեղք չի գործել, ասա. // Նա ով մեղք չի գործել ինչպէ՞ս է ապրում. ասա; // Եթե ես վատ բան անեմ և դու պատժես! // Ուրեմն իմ և քո միջև ի՞նչ տարբերություն. ասա):

Ս. Հեղայաթն այս հերթափը Նաջմեդիին Ռազի-ի նախատինքներից ավելի նվաստացուցիչ է համարում: Նա գտնում է, որ Օ. Խայամին ճանաչողը, նման հերթափներ ու քայլակներ լսելուց անմիջապես կհասկանա նրանց կեղծ լինելը, իսկ նրա ապրած խիստ մոլեռանդ ու ճղճիմ միջավայրը թոյլ է տալիս ավելի լավ ու խոր ճանաչել բանաստեղծի իրական մտքերն ու հույզերը: Այսպես նրա մասին հերթափներ շատ կան. ասում են Խայամի մայրը նրա մահվանից հետո նրա հոգու խաղաղության համար Աստծուն շատ է աղաչում ու պաղատում: Մի գիշեր Խայամի հոգին մորք հայտնվում և ասում է.

*Ēy sūxtēye sūxtēye sūxtanī,
Ēy ātaš-e dūzax az tō afrūxtanī;
Tā kēy gūyī ke bar 'ōmr rahmat kōn?
Haq rā tō kōjā berahmat āmūxtanī?*

(Այ, այրված այրված, այրվեցիր, // Այ դու, որ դժոխքի կրակը վառեցիր; // Մինչև ե՞րբ կասես կյանքին խղճա. // Արդարությունը դու որտե՞ղ գթությամբ սովորեցիր):

Հեղայաթն ուսումնասիրության արդյունքում գտնում է Օ. Խայամին պատկանող իսկական քայլակներից, և համոզված է որ, նրա տարիքային տարբեր ժամանակահատվածների քայլակները փոխանցում են միևնույն մտքերն ու զաղափարախոսությունը, որոնց հեղինակը միշտ հավատարիմ է մնում: Նա նույնիսկ երիտասարդ տարիքում կյանքը դառն ու տիտուր է տեսնում և միայն դառը զինին է համարում փրկության միջոցը: Այստեղ ներկայացնում ենք նրա երիտասարդ տարիքի քայլակներից՝

*Emrūz ke nōbat-e javanī-e man ast,
Mey nūšam az ān ke kāmrānī-e man ast;
'Eybam makōnīd, gar če talx ast xōš ast,
Talx ast, čerā ke zendegānī-e man ast!(16)*

(Այսօր, որ իմ երիտասարդության պահն է, // Գինի եմ ըմպում, և այն իմ երջանկությունն է; //

Ինձ մի նախատեր, թեկուզ դառն է, ոյուրալի է, // Դառն է, քանզի իմ կյանքի նման է!)

Ծերության տարիները մոտենալով, Խայամը կրկին իր քայլակով փաստում է, որ այս աշխարհից այն կողմ ոչ մի բան չկա. ոչ մի ապաշխարություն, լավ, վատ, ուրախություն, տիրություն ամեն ինչ այս աշխարհում է: Կյանքի ամեն բռպեներն ու վայրկյանները պետք է վայելել:

*Man dāman-e zōhd o tōbeh tey xāham kard,
Bā tuy-e sepīd, qasd-e mey xāham kard,
Peymaneye 'ōmr-e man be haftād resīd,
In dam nakōnam nešāt key xāham kard?*

(Կգնամ ճգնության և ապաշխարության ճանապարհը, // Սպիտակ մազերով, կգնամ զինու ճանապարհը, // Կյանքիս բաժակը յոթանասունի է հասել, // Պետք է զվարձանամ, ինչու ոչ, այս պահը):

Այսպիսով՝ ելնելով քառյակների մեջ արտահայտված զաղափարներից՝ Հեղայաթը կարողանում է հասկանալ, թե դրանցից որն է խսկատիպ Խայամինը, և որն է նրան վերագրված: Այստեղ ևս պիտի հիշեցնենք, որ արվեստի ստեղծագործությունը միանշանակ և միազիծ մեկնության չի ենթարկվում, ի տարբերություն գիտական հայտնագործության, քանզի գրական ստեղծագործության բովանդակությունն անսպառ է և նայած ինչ մեկնակետով ես նրան մոտենում: Պետք չէ մոռանալ նաև այն, որ Խայամի երգած գինին, սերը և այլն ունեն խորհրդանշանային իմաստներ և առանց այդ խորությունը հասկանալու հնարավոր չէ ճշմարիտ հիմքով լուսաբանել Խայամի և առհասարակ Միջնադարի մնացեալ բանաստեղծների քերթողական արվեստը:

Ռուս արևելագետ Ծովկովսկին 82 քառյակ է հայտնաբերում և վերագրում Խայամին, բայց դրանք այնպիսի քառյակներ էին, որոնք վերագրվել էին նաև ուրիշ հեղինակների: Հետազոտում դրանց թիվը հարյուրի է հասնում: Ըստ Հեղայաթի՝ այսպիսով Ծովկովսկին էլ կարող էր սխալվել, որովհետև նա հիմնվել էր այնպիսի աղբյուրների, որոնք հավաստի չեին և սխալ տվյալներ էին փոխանցել: Քառյակների փոփոխությունները և աղաղաղումը անխոհեմություն է, որը երբեմն խիստ կրոնականների կամ սուֆիների կողմից դիտավորյալ էր կատարվում: «Խայամի միտքը վերին աստիճանի ազատ է եւ համարձակ: Նա իր փիլիսոփայութեան ճշմարտութիւնը ապացուցելու համար մի քանի բառով փշրում է կրօնական շատ ուսմունքներ և սրբացուած աւանդութիւններ⁹», - գտնում է գրող բանաստեղծ Յ. Միջրաբեանցը:

⁹ Օմար Խայամ, Բարա Թահեր եւ զանազան, բարգմանեց բնագրից Միջրաբեաց Յովկեփ,թ., էջ 6:

Ս. Հեղայաթը որպես օրինակ բերում է հետևյալ քառյակի (*sādī betalab* ke *hāsel-e* 'ōmr damī ast-Ուրախություն ցանկացիր, քանի որ կյանքի հասույթը մի շունչ է¹⁰) *sādī betalab*-ի մյուս տարբերակը, որտեղ *sādī betalab*-ի փոխարեն զրված է *sādī matalab* (Ուրախություն մի ցանկացիր): Ակնհայտ է, որ այս փոփոխությամբ քառյակի իմաստը փոփոխվում է, իսկ բանաստեղծության կառուցվածքը և իմաստը այդ փոփոխության հետ չի համապատասխանում: Այսպիսով, կարող ենք ենթադրել, որ շատ հեշտությամբ կարելի է որևէ քառյակ, որը համընկնում է Խայամի աշխարհայացքին և դա նույնիսկ ուսումնասիրված է բանագետների կողմից, վերագրել Խայամին և հակառակ դեպքում Խայամինը վերագրել ուրիշին: Հետևաբար, եթե «Munes օl Ahrār» գրքի նման ուրիշ փաստեր լինենք շատ դյուրին կլիներ Խայամի իր իսկ քառյակները գտնել:

Փիլիսոփա Խայամը: Օմար Խայամը դարձել է աշխարհահոչակ ո'չ միայն որպես գիտնական, մաթեմատիկոս, աստղագետ և բժիշկ, այլև որպես փիլիսոփա բանաստեղծ, այդ իսկ պատճառով նրան ճանաչելու համար միայն ու միայն նրա քառյակները պետք է կարդալ և ուսումնասիրել: Փոքր, բայց իմաստալից քառյակների արտացոլած զաղափարները, որոնք նրա սրտի գաղտնիքների և կուտակված վշտերի ու մտքերի շտեմարանն են, ընթերցողի հոգու հայելին են դառնում: Նրանք արձագանքում են մարդու մեջ տեղ գտած հույզերը, հույսերը, վշտերը, մտավախություններն ու հուսախարությունները: «Խայամի յուրաքանչյուր առանձին միտք կարող ենք որևէ բանաստեղծի և մեծ փիլիսոփաների

¹⁰ Այստեղ ամբողջությամբ ենք ներկայացնում քառյակը *sādī betalab* ke *hāsel-e* 'ōmr damī ast(Ուրախություն ցանկացիր, քանի որ կյանքի հասույթը մի շունչ է), Har zareh ze xāk-e Keyqobādi o Jamī ast (Ամեն մի տարբեր թեղորախի ու Զամի հողից է), Ahvāl-e jahān o asl-e īn 'ōmr ke hast (Աշխարհի վիճակն ու կյանքի իսկական արգասիքը, որ է), Xābī o xīyālī o farībī o damī ast (Երազ ու ենթադրություն, խարկան ու մի վայրկյան է):

մոտ գտնել: Բայց ընդհանուր առմամբ, ոչ մեկին Խայամի հետ համեմատել չի լինի: Նա իր ոճով և արվեստով բոլորից բարձր է: Նրա լրջախոհ արտաքինն ամենից շատ նրան որպես փիլիսոփա և մեծ բանաստեղծ է ներկայացնում, ինչպիսիք եղել են Էպիկուրը, Գյոյբեն, Շեքսպիրը և Շոպենհաուերը»¹¹, - գրում է Ս. Հեղայաթը:

Խայամի քայլակների յուրահատուկ փիլիսոփայական գաղափարները ի հայտ են բերում բանաստեղծի վերաբերմունքն ու ճաշակը կրոնի, հավատքի, տիեզերքի, և Աստծու արարչագործության նկատմամբ: Խայամի նման՝ Հեղայաթը նույնպես արիական ոգով և հակարարական դիրքորոշմամբ ընդվզում է սեմական հավատալիքների դեմ և փառաբանում նախախամական ժամանակաշրջանը: Ամենից առաջ նա ծաղրի է ենթարկում կրոնական պաշտոնյաներին, ապա դատափետում է հոգևորականներին առհասարակ, կրոնագետներին և սնոտիապաշտության դեմ պայքար է մղում: Հեղնանքով է արտահայտվում դրախտի գոյության, հոգիների վերակենդանացման, հավիտենական կյանքի մակերեսային, գուհիկ ըմբռնումները.

*Güyand: behešt ὅτι hür 'ēyn xāhad būd,
Va ənjā mey-e nāb ὅτι angebīn xāhad būd;
Gar mā mey ὅτι m'aşūqe gōzīdīm če bāk?
Āxar na be'āqebat hamīn xāhad būd? (88)*

(Ասում են դրախտն ու հուրին իրականություն է լինելու, // Եւ այստեղ անարատ գինի և մեղր է լինելու; // Եթե մենք գինի ու սիրուիի ենք ընտրել, ի՞նչ վախ: // Չէ՞ որ, վերջը սա է լինելու):

Ս. Հեղայաթը գրում է որ, Խայամը համոզված է, որ անսկզբնականի (azal) զադոնիքը ոչ մեկը զիտի, և ոչ էլ կի-

մանա: Այն, ինչ էլ որ խոսում են, հերքաթանման է: Ոչ երջանկություն կա, և ոչ էլ պատիճ: անցյալ ու զալիք գոյություն չունի: Ուստի որքան կարող ես՝ վայելիք ներկան.

*Bā bādeh nešīn ke malek Mahmūd īn ast,
Vaz čang šenő, ke lahn-e Dāvūd īn ast;
Az əmədeh o rafteh degar yād makən,
Hälî xōš bāš, zânke maqsūd īn ast. (134)*

(Գինու հետ նստիր, որովհետև թագավոր Մահմուդը սա է, // Քնարի մեղեղին լսիր, որովհետև Դավթի ձայնը սա է; // Եկածներին և գնացածներին էլ մի հիշիր, // Ներկան վայելիք, որովհետև նպատակը սա է):

Այստեղ գրեթե ակնհայտ է Օմար Խայամի աշխարհայեցողության այս զծի նմանությունը, նույնիսկ նույնությունը էայկուրի ուսմունքի հետ: Սակայն պետք չէ գուեկացնել Օմար Խայամի երջանկարադությունը, ինչպես հաճախ վարվել ու վարվում են Էպիկուրականության հետ՝ վերածելով այն պարզ հեղոնիզմի ուսմունք, որը կյանքի նպատակը դարձնում է ամեն կարգի հաճույքը, ինչպիսին էլ այն լինի և ինչ գնով էլ լինի: Այսինքն՝ մեջտեղից վերացվում է բարոյականության խնդիրը: Եթե այդպես լիներ, ոչ Էպիկուրը և ոչ էլ Օմար Խայամը չին լինի մեծագույն մտածողներ, որոնք անջնջելի հետք են թողել համաշխարհային մշակույթի պատմության մեջ և այսօր էլ ներգործական մեծ ազդեցություն ունեն արվեստի և իմաստափրության ասպարեզներում: Այնինչ Էպիկուրը հաստատար տարբերակել է ազնվական հաճելի ապրումները գուեկի զվարձանքից և նախընտրել է միայն բարձրակարգ ապրումները: Իսկ Օմար Խայամի համար գինին և հաճույքները ունեն խորհրդանշանական, սիմվոլիկ բնույթ, ինչպիսին դրանք եղել են «Երգ երգոցում»: Օմար Խայամը պարզապես ընդդիմացել է կյանքից կտրված

¹¹ Hedayat, S., Taranehaye Xayyam, p. 21.

ոացինալիստական մտակառուցումներին և նախընտրել է կեցության ամբողջականությունը՝ և մտածողությունը և զգացմունքը և կամքը իրենց ներդաշնակ չափավորության մեջ:

Մյուս կարևոր հանգամանքն այն է, որ խորհրդային ժամանակաշրջանում մեծ ջանքեր են գործադրվել գիտության և մշակույթի մեծերին իրենցով անելու, այսինքն՝ դարձնելու մատերիալիստներ կամ նյութապաշտներ: Նման վերաբերունքն առկա է նաև «Օմար Խայամ. Քաղյակներ», Եր. 1959 հրատարակության նախաբանում, էջ 8, որի հեղինակը ակադեմիկոս Էդվարդ Աղայանն է: «Խայամի քաղյակների մեջ հիմնականը մատերիալիզմն է, - գրում է ն. Աղայանը. - Նրա բոլոր դրույթների ու տրամադրությունների ելակետն է մատերիալիստական աշխարհայցը»: Եվ հարգարժան ակադեմիկոսի հիմնավորումը իրագործվում է մի եղանակով, որը վաղուց ի վեր ստացել է մեխանիստական դետերմինիզմ անոնք: Արվեստի հրաշագեղ երևույթներին այդ ժամանակ սփորություն կար մոտենալու հատու կացնատաշ տրամաբանությամբ: Ի վերջոյ՝ չբավարարվելով մատերիալիզմով, Խայամին դարձնում է նաև աթեիստ: Անգամ, ըստ Աղայանի, Խայամը ծաղրել է արարիչ Աստծուն: Եւ որպես ապացույց՝ բերում է այս քաղյակը.

Այս աշխարհում ո՞վ չի մեղանչում, ասա՛,
Չմեղանչողը ինչպէ՞ս է շնչում, ասա՛.
Ես վատ անեմ, դու էլ վատով ինձ պատժես,
Տարբերութիւնն ի նշ է մեր միջումն, ասա՛¹²:

Այս քաղյակը զուտ կրոնական բովանդակություն և բնույթունի. կարծես Նարեկացու գրչի տակից դուրս եկած լինի.

¹² Է. Աղայանի բերված այս քաղյակին մենք նյունպես անդրադարձել ենք: Ինչպէս Ս. Հեղայարքը գտնում է, որ քաղյակը հերիաթային պատմությունների հետևանքով է վերաբրվել Խայամին:

քանզի իրոք անմեղ մարդ չկա առաջին մեղսագործությունից հետո: Երկրորդ, վատը վատով պատասխանելը համապատասխան է հեթանոսական բարքին ու բարոյակարգին: Այստեղ խոսքը ուղղված է ոչ թէ Աստծուն, այլ մարդուն խրատ է ուղղված, որպեսզի չարին չարով չպատասխանի:

Այսպիսով՝ առանց պարզելու, թէ Օմար Խայամին վերգրվող 200- 1000 քայլակներից որն է Խայամինը և որը՝ ոչ բնութագրվում է բանաստեղծը այդ բոլոր քայլակներով, որոնք կարող են և իրապես հակասում են մեկը մյուսին: Ուստի, նախ պետք է հիմնվել պարսկական առյօնությունների վրայ և մեր պարագային՝ Հեղայարքի, ով պատահի հասակից լրջությամբ սկսել է ուսումնասիրել Օմար Խայամի գրական ժառանգությունը:

Խայամը Ս. Հեղայարքի տեսանկյունից խիստ ճակատագրապաշտ (Fatalist) է: Խայամը աստղագիտական ուսումնասիրությունների արյունքից ելնելով երկինքն ու տիեզերքն է դատապարտում ոչ թէ Աստծուն, և գտնում է, որ բոլոր աստղերը չարագուշակ են և բախտավորության աստղ գոյություն չունի: Նյութական իրականության դեմ միայն մի իրականություն է գտնվում, և դա չարիքն ու փորձանքն է, որը գերակշռում է բարուն և ուրախության: Իր քաղյակներից մեկում ասում է, որ արարշագործությունը չորս տարրերի և յոթ մոլորակների ազդեցության արյունքն է:

Եյ տնեհ նատյեյ չհա՛ օ հաֆտ,
Վազ հաֆտ օ չհա՛ դայեմ անդ տաֆտ,
Մեյ խօ՛ ք հեզա՛ բա՛ բի՛ սա գօ՛ տամ:
Բա՛ ձմանատ ու ստ, ծօ՛ րաֆտ րաֆտ. (29)

(Այս, ով դու, որ չորս (բնության չորս տարրերը) և յոթի (յոթ աստղի) արյունքն ես, // Եվ այդ յոթ ու չորսից չարունակայրվում ես, // Գինի ըմպիր, որը հազար անգամ ավել եմ ա-

սել, // Կրկին վերադառնալ չկա, եթե գնացել ես, ապա գնացել ես):

Օ. Խայամն ասում է, որ նյութը մի այլ տեղ մի ուրիշ առարկայի մեջ իր գոյությունը շարունակում է, իսկ ինքնուրույն հոգի, որն ասում են կապրի մահվանից հետո, գոյություն չունի: Եթե բախտավոր լինենք, մեզնից գոյացած նյութը գինու կարաս կդառնա և շարունակ զինաբրունքի մեջ կլինի: Այսպիսով, նյութերի հետ կապված փիլխառնայությունը Խայամի վիշտն ու թախիծն են դառնում: Նա գինու կարասի մեջ գեղեցկուիիների է տեսնում, որոնք հող են դարձել, բայց անսպառ կյանք են ապրում, որովհետև նրանց մեջ գինու նուրբ ոգին է եռում: Խայամը գտնում է, որ գինին ոչ միայն հարբեցնում ու թույլացնում, այլ այդ կարասի միջինը նման է՝ հոգին մարմնի մեջ և ասում է, թե կարասի տարբեր մասերը արդյո՞ք մարդու մարմնի անդամների նման չեն՝ բերան, վիզ, բոնակ, փոր... իսկ մեջի գինին նրա ոգեսրիչ հոգին չէ:

*Lab bar lab-e kūzeh bōrdam az qāyat-e āz,
Tā zū talabam vāsete-ye 'ōmr-e derāz,
Lab bar lab-e man nahād o mīgōft berāz:
Mey xōr, ke bedīn jahān nemīāyī bāz!(139)*

(Ընշարացությունից շուրթերս դրի կուժի շուրթերին, // Նրանից խնդրեցի, թող լինի միջնորդ երկար կյանքին, // Իր շուրթերը շուրթերիս դրեց ու ասաց զաղտնիքը. // Գինի խմիր, քանի որ այս աշխարհ չես զա կրկին:)

*Īn kūze čōt man 'āšeq-e zārī būdeh ast,
Dar band-e sar-e zōlf-e negārī būdeh ast;
Īn dasteh ke bar garden-e ū mībīnī.
Dastī ast ke bar garden-e yarī būdeh ast!(72)*

(Այս կուժը իմ նման ողբալու սիրահար է եղել, // Սիրուհու վարսի կապի ծայրին է եղել; // Այս բռնակը, որ նրա վզին եւ տեսնում // Այն ձեռն է, որ սիրուհու վզին է եղել!)

Ե. Չարենցը Օ. Խայամի պես նույն կարծիքին է: Նա իր քայլակներում անդրադառնում է այն մտքին ու թեմային, որ կյանքը հավերժական է, և ամեն մի մահկանցու իր մեջ նորի առաջացման ծիլեր է սնում: Այս ուղղությամբ նա ասում է՝

*Դու միօր աշքերքը կփակես, որ ուրիշը քո տեղ գոյանա,
Կզնաս, կանցնես աշխարհքից, որ ուրիշը քո տեղ
գոյանա:*

- Այն դո՛ ես, իմաստո՛ն, այն դո՛, - բայց արդեն
դարձած մի ուրիշ.
*Հաստատեց, Ժխտելով նա քեզ, որ ուրիշը քո տեղ գոյա
նա¹³:*

Չարենցը մի այլ քայլակում կրկին նույն թեման է ներկայացնում՝

*Ապրում ես, շնչում ես, դու դեռ կաս -
բայց ամեն վայրկյան դու ա՛յ ես.
Անցալ է դառնում քո ներկան -
ու ամեն վայրկյան դու ա՛յ ես.
Բայց ներկան քո - հո՛ նստ է զալիքի՝
մեռնելով - նա սնում է զալիքը,
Եվ այսպես - տեսում ես դու երկար, -
ու ամեն վայրկյան դու ա՛յ ես¹⁴:*

Հաստ Խայամի՝ բնությունը անփույթ է, և խիստ իր գործն է անում: Գիշատիչ և խենք դայակ է, որը իր զավակների մասին հոգ է տանում, ապա հասած, թե խակ, նրանց հնձում է:

¹³ Եղիշե Չարենց, Երկեր, էջ 313-314:

¹⁴ Նույն տեղում, էջ 310:

Խայամն ասում է՝ երանի չել ծնվել, բայց որ ծնվել եմ, ինչքան շուտ զնամ, բախտավոր եմ:

*Aflāk ke jōz qam naftāyand degar,
Nanahand bejā tā narōbāyand degar;
Nā āmadegan agar bedānand ke mā
Az dahr če mīkešīm, nāyand degar.(28)*

(Տիրությունից բացի ոչ մի բան չի ավելացնում երկինքը, // Մինչև չհափշտակեն չեն դնում տեղը; // Նրանք որ դեռ չեն ծնվել, եթե իմանան, որ մենք // Աշխարհից ինչ ենք քաշում, չեն զա այս աշխարհը):

Ս. Հեղայաթին նույնպես իր ամբողջ կյանքի ընթացքը հետաքրքրել է մահը, դեռ պատանի տարիքից այդ մտքին է եղել, որովհետև իր առաջին գրական աշխատանքը, որը պարտասում է դայրոցում, մի պատի թերթ էր և նրան «Նսջեցալների ձայնը» վերնագիրն է տալիս: Հեղայաթը երբ արտասահմանում էր գտնվում, շատ հաճախ իր ընկերներին նամակներ էր գրում: Այդ նամակներից մեկը, որը հղված էր Թաղի Ռազմիկին, գրում է. «Իրականությամբ ամաշում եմ, քանի որ չկարողաց ձեզ այցելության զամ: Մի քանի պատճառներով: Նախ ես վազե-վազերից խուսափում եմ, որովհետև խիստ ֆարալիս եմ դարձել...ս հետո շատ հոգնած եմ և անտարբեր ամեն ինչի նկատմամբ: Միայն օրերն եմ անցկացնում, ամեն զիշեր լավ խմելուց հետո հողին եմ թաղվում...»¹⁵:

Այսպիսով, Հեղայաթը Խայամի փիլիսոփայական գաղափարները ընդունելով իր ուսումնասիրության մի հասվածում, գրում է, այս մահվան և կորչելու երազանքը որ շատ հաճախ Խայամի քայլակներում կրկնվում է, արդյոք բուդյայականության Նիրվանեի փիլիսոփայության չի նմանվում:

¹⁵ Katuzyan, Mohammed Ali, Sadeq Hedayat va marge nevisandeh, Tehan, 1384, p. 73.

Հեղայաթն ասում է, ըստ բուդյայականության փիլիսոփայության՝ աշխարհ, այսինքն՝ շղթայված իրադարձությունները շարան, իսկ աշխարհի արտաքին փոփոխությունները դրանց մոտ նմանվում է մի ամպի, մի արձագանքի կամ երևակայական պատկերներով լի մի երազի: Խայամի հոռեւտեսությունը կյանքի, մարդկանց և աշխարհի նկատմամբ, նաև արաշագրծության հիմքերի դեմ խոռվությունը բխում է նրա փիլիսոփայական գաղափարներից: Հեղայաթը գտնում է, որ Շոպենհաուտերը նույնպես իր ունեցած փիլիսոփայական հոռեւտեսությամբ հանգում է հենց նույն Խայամի կարծիքին. Հեղայաթն ասում է, ըստ Շոպենհաուտերի՝ «Նրա համար, ով հասնում է մի աստիճանի, որ ինքը իր կամքն է ժիտում, կամ այն աշխարհը, որ մեր կարծիքով այսքան իրական է երևում, իր բոլոր մոլորակներով և ծիրկաթիններով ի՞նչ է: Ոչինչ»¹⁶! Իսկ Օ. Խայամը այսպես է ասում՝

*Bengar ze jahān če tarf bar bastam? Hīč,
Vaz hāsel-e 'ōmr čīst dar dastam? Hīč,
Şam'-e tarabam, valī čō benşastam, Hīč,
Man jām-e jamam, valī čō beşkastam, Hīč.(107)*

(Նայիր այս աշխարհից ի՞նչ ակնկալիքով հեռացա: Ոչինչ, // Կյանքի վաստակից ի՞նչ է ձեռք բերում: Ոչինչ, // Ցնծության մոմն եմ, բայց որ վերջացա: Ոչինչ, // Ես Զամի զավաքն եմ, բայց որ կոտրվեցի. Ոչինչ):

Այն ամենը, ինչ որ Խայամի մոտ հստակեցված է, այն է, որ մահը ամեն ուր կա, և այն մարդու կյանքի արեգակի վրա շվար է դառնում: Նա մահը համարում է մանր նյութերի ձևափոխում շրջապտույտ, որտեղ նյութերը ուրիշ նյութերի միաձուլումից կրկին կենդանանում են, իսկ հոգին մահվանից հետո այլս գոյություն չունի: Է. Աղայանը «Օմար Խայամ» գրի

¹⁶ Hedayat S., Taranehaye Xayyam, p. 30.

Խախաբանում նույնպէս այդ կարծիքին է, թե այս շրջապտոյ-
տը Խայամի մոտ այնքան ցայտուն կերպով է արտահայտվել
և այնքան բազմազան օրինակներով, որ կարելի է ասել, թե
նրա քայլակների հիմնական մոտիվներից մեկը մատերիալի
փոխիտությունների արտահայտումն է¹⁷: Հեղայարը Օ. Խա-
յամի քայլակների վերլուծությունից եզրակացնում է, թե Խա-
յամն ասում է, երանի մարդը երեք ծնված չլիներ, որովհետև
նա զգիտի իր սկիզբը և վերջը: Մարդու էությունը և գոյությու-
նը անզութ ճակատազրի ազդեցության տակ են, այդ իսկ
պատճառով հաջողություն ձեռք բերելու համար կարիք չկա
շարշարվել, քանի որ քազավորի և աղքատի վերջը նույնն է:
Երկուսն էլ հող են դառնալու և բույսի տեսքով շարունակելու
են իրենց կյանքը: Հետևաբար տիտությունն ու քախիծը թող-
նենք մի կողմ: Նա երկու քան է առաջարկում ներկա կյանքը
վայելելու և վիշտը մոռանալու, այն է՝ «կինն ու զինին»:

*Xayyām, agar ze bādeh mastī, xōš bāš;
Bā lāleh rōxī agar nešastī xōš bāš;
Čōn 'āqebat-e kār-e jahān nīstī ast,
Ēngār ke nīstī, čō hastī xōš bāš.(140)*

(Խայամ, եթե զինուց հարրած ես, ուրախ եղիր; // Եթե մի
գեղեցկուհու հետ ես, ուրախ եղիր; // Որովհետև վերջի վերջոն
աշխարհի ավարտը ոչի՞նչ է, // Կարծիր թե չկաս, քանի որ
կաս, ուրախ եղիր):

Ամեն մի քայլակ սրբագրծված քառասող է պոետի կյան-
քի իրողություններից ու հուզմունքներից: Հայոց ամենայն քա-
նաստեղծը հետևյալ կերպ է արտահայտվում զինու մասին:

-Էս է, որ կա...Ճիշտ ես ասում. Թասըդ բե՛ր:
Էս էլ կերքա՝ հանց երազում, թասըդ վե՛ր:

Կյանքն հոսում է տիեզերքում զընգալեն,
Մեկն ապրում է, մյուսն ըսպասում. Թասըդ բե՛ր¹⁸:

Գինին Օ. Խայամի քայլակներում խնդիրներից ձերքա-
գտվելու հիմնական առանցքն է: Կարմիր զինին նրա մոր-
մորների ու վշտերի մեղմացնելու միջոցն էր: Ս. Հեղայարը
այս ուղղությամբ գրում է. «Գինու անդրադարձը Խայամի
քայլակներում կարևոր տեղ ունի: Սակայն Խայամը, հակա-
ռակ էրն-է Սինայի, չափավոր էր զինի խմելու մեջ, բայց զի-
նու գովքը նրա քայլակներում չափազանց է, միգույժ նա ու-
զում էր այդպիսով կրոնականներին դեմ հանդիման գնար»:
Հեղայարը զինու մասին իր խոսքը շարունակում է և Խայամի
«Նոորուզնամե»-ից մեջբերում է կատարում. «Բայց «Նոորուզնա-
մե»-ի մի զրուխը միայն հատկացված է զինու օգտակարութ-
յան մասին, որը հիմնված է հեղինակի ձեռքբերած սեփական
փորձառությունների վրա: Նա այնտեղ ներկայացնում է
ԲուԱլի Սինա և Սոհամմեդ Ալի Զաքարյա Ռազի-ի անուննե-
րը (60) և ասում. «Մարդու համար զինուց օգտակար ոչ մի
քան չկա, մանավանդ պարզ և դառը զինին. այն վիշտը մեղ-
մացնում և սիրտը ուրախացնում է». (էջ 70)¹⁹:

*'Omrat tā key bexōd parastī gōzaranad,
Yā dar pey-e nīstī ū hastī gōzaranad;
Mey xōr ke čōnīn 'omr ke qam dar pey-e ūst
Ān beh ke be xāb yā sōstī gōzaranad.(143)*

(Կյանքդ մինչև երբ անձնապաշտությամբ անցնի, // Կամ
լինելու ու չլինելու վնտրտունքի մեջ անցնի; // Գինի խմիր,
նեղանելու մեջ անցնի անձնապաշտությամբ անցնի, // Կամ
լինելու ու չլինելու վնտրտունքի մեջ անցնի; // Գինի խմիր,

¹⁷ Հայամ Ա., Օմար Խայամ, քայլակներ, Երևան, 1959, էջ 7:

¹⁸ Հովհաննես Թումանյան, Բանաստեղծություններ, քայլակներ, պոեմներ, լեզենյներ և բալլարներ, (Կազմեց Վ. Սաֆրայան), Երևան, 1986, էջ 84:

¹⁹ Hedayat S., Taranehaye Xayyam, p. 38.

քանի որ այս կյանքի հիմքում տիրություն է // Ավելի լավ է բնով կամ զինով անցնի:

Խանաստեղծ Խայամը: Այս բաժնում Ս. Հեղայաթը Օ. Խայամին ներկայացնում է որպես բանաստեղծի: Խայամի բառյակները այնպիսի պարզությամբ, բնական և սրտին մոտ է գրված, որոնք անմիջապես գերում են ընթերցողին: Քառյակը շափածո ստեղծագործությունների ամենափոքր տեսակն է, իսկ այս փոքր կաղապարների մեջ Խայամը այնպիսի վարպետությամբ է ներկայացնում իր փիլիսոփայական մտքերն ու գաղափարները: Նա իր սկզբունքներին հավատարիմ մնալով՝ չի ընդորինակում ոչ մեկին, այլ քաջածանոթ իր արվեստին ստեղծում է իրենը: Շատերը ցանկացել են նրա անցած ուղիով գնալ, բայց չեն հաջողել ստեղծել նրա նման գլուխործոցներ:

Խայամի գրական-ստեղծագործական ոճին նմանակել շատերն են ցանկացել, և այս մասին Ս. Հեղայաթն ասում է. «Մինչև իսկ Հաֆեզն ու Սաադին նյութերի վերածննի, աշխարհի անկայունության և վայրկյանների վայելչության ու զինեմոլության մասին բանաստեղծություններ են զրել, որոնք ուղղակի Խայամից են ընդորինակել, բայց չեն կարողացել նրա վեհությանը հասնել»: Հեղայաթը մի այլ հատվածում իր խոսքը այսպես է շարունակում. «Թեկուզ Հաֆեզը, Մոլաւին և որոշ խոհեմ բանաստեղծներ Խայամի մտքերի արտահայտման խոռվությունն ու քաջությունը զգացել են և երբեմն վեճի մատնվել, բայց իրենց մտքերը և նյութերը քողարկել և այլարանորեն են ասել, այդ իսկ պատճառով նրանց բանաստեղծությունները քանի տեսակ են մեկնարանվել...օրինակ Հաֆեզի ներկայացրած զինին որոշ դեպքերում պարզապես խաղողի հյութ է ներկայացված, բայց այնքան սուֆիական ասույթներով է քողարկվում, որ մեկնարանության պահին կարելի է մի տեսակ սուֆիզմ համարել: Իսկ Խայամը քողարկելու, գաղտնիքների ու ակնարկների կարիք չի զգում, մտքերը

պարզ արտահայտում է: Նա իր այս պարզ, ազատ և հստակ ոճով տարբերվում է մյուսներից»²⁰:

Օ. Խայամը զիտնական, մաթեմատիկոս և աստղագետ էր, սակայն այդ մասնագիտությունները ի գորու չեին նրան եւ պահելու, որպեսզի բնության գիրկը չնետվեր: Նա իր բացառիկ և համարյա անզուգական տաղանդով և միայն մի քանի պարզ և հասարակ բառերով նկարագրում է իր ապրած բնությունը կամ տեսարանը և ընթերցողին էլ իր հետ մասնակից է դարձնում իր ապրած վայելչությանը: Նա գտնվում էր մի ժամանակահատվածում, որտեղ բանագետների մեծամասնությունը արաբական բարդ և ճշգիմ բառապաշարի ազդեցությամբ, բառախաղերով ցուցադրում էր իր զիտությունը: Խայամի պարզ, հասկանալի և լի բառախաղերով քառյակները, ոչ միայն բարձր տրամադրություն են փոխանցում, այլ որանց միջոցով նրա սրտի խոսքն է արտահայտվում՝

*An qasr ke Bahrām darū jām gereft,
Āhū bače kard o rū be ārām gereft,
Bahrām ke gūr tīgereftī hame 'ōmr,
Dīdī ke čegūne gūr Bahrām gereft?*(54)

(Այն պալատը, որտեղ Բահրամը գավաթ բարձրացրեց, // Եղնիկը դեպի իր հանգիստը գնաց, երբ ձագ հանեց, // Բահրամը, որ ամբողջ կյանքը ցիր (gūr) էր որում, // Տեսար թե, գերեզմանը (gūr) ինչպես ս Բահրամին բռնեց):

Խայամը որոշ բառյակներում հմտորեն բառախաղեր է անում, օրինակ «Հիč» (Ոչինչ) բառն է օգտագործում, որը «Փիլիսոփա Խայամ» բաժնում ենք ներկայացրել: Նրա հակառակորդները ասում էին, թե դա իր աղքատ բառապաշարի կամ հանգավորելու արդյունքն է, բայց այսուեղ փիլիսոփայական իր խոր մտքերը և գաղափարներն են քողարկված: Հեղայաթը

²⁰ Նոյն տեղում, էջ 45:

քաջ զիտակցելով հեղինակի մտայնությանը քառյակների մի մասը առանձնացնում և դրանց «Hič ast» (Ոչինչ է) վերնագիրն է տալիս: Նա մի այլ քառյակում օգտագործում է կկու բառը և իր փարպետի գրչով, գրական բարձր ճաշակով փոխանցում է, թե ուր են անցյալի այդ փառքն ու շուրջը: «Կու-կու»- պարսկերեն, ոչ միայն նշանակում է թոշուն, այլ «ու՞ ր-է- ու՞ ր է»:

*An qasr ke bar čarx hami zad pahlū,
Bar dargah-e ū šahān nahāndī rū,
Dīdīm ke bar kōngereas fāxtēhī
Benšaste hamī gōft ke: «kū, kū?»(56)*

(Այն պալատը, որը հենվեց երկնքին, // Թագավորներ երես դրեցին նրա դարպասին, // Տեսար, որ նրա աշտարակին մի կկու // Այսպես նստած, ասում էր, որ «ուր են, ուր են» (պարսկերեն *kū, kū*):

Օ. Խայամը որպես բանաստեղծ ունի նաև փիլիսոփայական և զիտական ժառանգություն, բայց դրանք իր հանրահայտ լինելու մեջ ոչ մի դեր չեն ունեցել: Խայամից մի ուրիշ արժեքավոր հիշատակ է մեզ հասել, և ինչպես Հեղայարին է ասում այն կոչում է «Nōrūznāmeh» (Նորուզի նամակներ): Այս մասին Ս. Հեղայարի գրում է. «Իմ սիրելի ընկեր՝ Մոջքարա Մինովի-ի ջանքերով «Nōrūznāmeh»-ն հրատարակվեց: Այս գիրքը պարզ և աննման պարսկերենով է գրվել, և ապացույցն է այն բանի որ քառյակների հեղինակի հզոր գրչով է գրված: Պարսկերեն արձակ գրականության մեջ ամենասահուն և ամենալավերից մեկն է, իսկ նախադասությունների կառուցվածքը պահլավերենին շատ մոտ է: Այդ ժամանակաշրջանի գրականություններից շատ թե քիչ, որպես օրինակ եղել են «Sīāsatnāmeh» (Քաղաքական նամակ), «Čhār taqāleh»

(Չորս հոդված) և այլն, բայց դրանք արձակ գրական արժեք չեն ներկայացրել, ինչպես «Nōrūznāmeh»-ն»²¹:

Հստ Հեղայարի՝ կան կարծիքներ, որ «Nōrūznāmeh»-ն Խայամը չի գրել, այլ մեկ ուրիշը: Հեղայարը գտնում է, ենթադրենք որ այդպես է, հապա նա, ով գրել է, մտքերով Խայամին շատ մոտ մարդ է եղել, սակայն դրանք միայն ենթադրություններ են: «Nōrūznāmeh»-ում ոչ մի խոսք անզամ փիլիսոփայական մտքերից ու գաղափարներից չկա, և ոչ էլ սուֆիզմից և կրոնական խնդիրներից: Այս գիրքի հեղինակը՝ Խայամը, Սասանյանների թագավորության ժամանակաշրջանից իրանական ազգային ավանդությունները, արվեստի բարձր ճաշակը, նրբությունները և շրեղության զգացմունքն է ներկայացնում, իսկ գեղեցիկ բառերի և հինգեր նախադասությունների օգտագործումը ևս մեկ անզամ փիլիսոփա, աստղագետ և գիտնական Խայամի ներկայության վառ ապացույցն է: Օ. Խայամի գրական ստեղծագործության ազդեցությունը և համբավը Անգլիայի և Ամերիկայի գրականության մեջ մեծ արձագանք է ունեցել, և դա կրկին մատնացույց է անում նրա հանճարեղ մտքի և վարպետ գրչի:

Այսպիսով, մենք Ս. Հեղայարի ջանքերով առիթ ունեցանք ավելի լավ ճանաչել Խայամին: Նա Իրանում առաջինն է, ով այդպիսի մանրամասնությամբ քառյակների հանճարեղ փարպետին ծանոթացնում է մեզ: «Սադեղ Հեղայարը «Խայամագիտության» հիմնադիրն է Իրանում, և նրա ճանաչելու համար ոչ մի ջանք չի խնայել... Նրա այս ուսումնասիրությունից անդրադառնում ենք, որ նա չի շտապել և խոհեմությամբ է մոտեցել: Նա որոնումներ և խորաթափանց ուսումնասիրություններ կատարելուց հետո, վերջնականապես, երբ Խայամին ճանաչելու համար բոլոր դրները փակ է տեսնում, աշխատում է քառյակների ուսումնասիրությամբ, որ անկասկած ի-

²¹ Նույն տեղում, էջ 49:

բենն են, Ճանաչի նրան»²², զրում է պարսիկ գրող և գիտնական Մահմուդ Քաթիրային:

Ս. Հեղայարի տեսակետները իր ուսումնասիրությունների արդյունքում կրկին մեզ փաստի առաջ է կանգնեցնում: Չգիտենք Հեղայարը քառյակները ուսումնասիրելով արդյոք ձի՞շո մոտեցում և կարծիք է ունեցել Խայամի բնավորության առանձնահատկությունների, ընդհանուր առմամբ աշխարհայացրի և անձնականի նկատմամբ: Այնուամենայինվ, Հեղայարը Օ. Խայամի աշխարհայացը և փիլիսոփայական գաղափարները ընդունել և կարող ենք ասել նրա համախնին է եղել, այն չափով, որ Հեղայարը նույնպես համախնի էր իր մի ուրիշ քննադատական ուսումնասիրության հերոսին՝ Ֆ. Կաֆկայի մտայնություններին և գաղափարներին: Ինչպես Հեղայարը, այնպես էլ Խայամը, չկարողանալով ըմրուել կյանքի օրինաչափությունները, հանգում են ֆատալիզմին:

Հեղայարի կարծիքով Խայամը իր փիլիսոփայական գաղափարներով համոզված և հավատում էր ա) մահվան ցանցը ամեն ուր սփռած է, և մարդու կյանքը շարունակ սպառնում է. բ) կյանքը շրջապտույտ է: Նյութը անվերջ մի վիճակից պտույտ կատարելով փոխանցվում է մյուսի և շարունակում իր կյանքը. գ) աշխարհը և տիեզերքը պատահական են ստեղծվել դ) մարդը ենթակա է ճակատագրին. ե) Սեմական ցեղը, ի մասնավորի արարները և նրանց հավատալիքները դատապարտված են. զ) զինին և կինը հաճույք պատճենելու միակ միջոցն են. է) վայելել կյանքի բոլոր վայրկյանները, որովհետև մահվան ու ճակատագրին դեմ զնալու միակ ձևն է:

**OMAR QAYYAM'S QUATRAINS INTERPRETATION BY
SADEQ HEDAYAT
Anahit Yahyamasihi
(summary)**

In the 20th century, one of the most famous authers in Iranian culture and literarure is Sadeq Hedayat. He became interesred in Omar Qayyam (12-13 century), the meddle ages distinguished poet's philosophical ideas and he wrote an analytical-critical essay about Qayyam's quatrains. S. Hedayat believes that, with those quatrians, Qayyam expressd his ideologies and world out look clearly, unpretentiously, and beautifully, with meaningful andprofound thoughts. Through quatrains' charming and fascinating melody he created ravishing impression and mood in his readers. S. Hedayat is sure that, Qayyam's transfer the same thoughts and ideology in different ages based on what the poet always had been faithful. Quatrians peculiar philosophical ideas display poet's treatment and taste towards religious, faith, cosmos and creation. According to S. Hedayat's point of view O. Qayyam is a stick fatalist. There is no happiness and no punishment. There is no pastand future, just live present and enjoy it.

²² Ettehad Houshang, Pajouheshgaran mo'asere Iran, p. 241.

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ՄՈՀԱՄՄԱԴ ԱԼԻ ԶԱՄԱԼԶԱԴԵԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ

Բանալի բառեր՝ Զամալզադե, նովելագրություն, հուշեր, քարավան, Բաղդադ, Հալեպ, Կոտորած, ողբերգական, ուրվական, ճակատագիր, իրադարձություն

XX դարասկզբին հայ ժողովրդին պատուհասած աղետն արձագանք է գտնել նաև իրանական գրական մշակույթում: Նոր-նոր ասպարեզ իջած պարսկակեզու մամուլում թեև առանձին պատառիկներով, սակայն անդրադարձ է կատարվում ոչ միայն Արևմտյան Հայաստանի կոտորածներին, այլ նաև Հարավային Կովկասում հայ-քարարական բախումներին: Օսմանյան կայսրությունում 1908-1909 թթ. և 1915-1923 թթ. կոտորածների մասին տեղեկություններ կան «Ռադ» (Ամպոռայ), «Նեղայե վաթան» (Հայրենիքի ձայն), «Ասրե շադիդ» (Նոր դար), «Իրան», «Թաքրիզ», «Շաֆաղե սորխ» (Կարմիր արշալուս) և այլ պարբերականներում¹:

Սակայն ամենահիշատակելին պարսից ժամանակակից նովելի հիմնադիր² Սոհիամմադ Ալի Զամալզադեի հուշերն են հայերի տեղահանության սարսապրու պատկերների վերաբերյալ: Ըստ գրողի այդ պատկերներն իսկական մղձավանջ են եղել, որ հետագայում ևս շարունակել են տանջել Զամալզադե մարդուն:

Նովելագիրը 1915-1930 թթ. ընթացրում բնակվել է Բեռլինում: 1915 թ. 16 ամսով վերադառնում է հայրենիք: Այդ ըն-

¹ http://www.genocidal.ir/index.php?option=com_content&view=article&id=18:2010-04-14-05-54-45&catid=9:documents&Itemid=18

² Комиссаров Д., Пути развития новой и новейшей персидской литературы. стр. 67, Москва, 1982.

թագրում իրանցի ազգայնականների հետ աշխատում է Բաղդադում, իսկ երբ բրիտանական գորքերը մոտենում են քաղաքին, նա շվեդ երկու սպայի հետ Բաղդադով և Հայեպով վերադառնում է Եվրոպա: Բաղդադից Ստամբուլ ուղևորվելիս ճանապարհն անցնում է հայերի տարագրության շրջաններով: Տեղահանված հայերի քարավանների ողբերգական վիճակի մասին նաև անդրադառնում է «Սարնեվեցք վա քարե շամալզադե» (Զամալզադեի ճակատագիրն ու գրծունեությունը) գրքում³: Այնուհետև 1971 թ. նա այս մասին որոշ խմբագրումներով կրկին գրում է Ժնևում հրատարակած «Սուշահեղաքե շախսիե ման դար շանգե շահանիե ավվալ» (Անձնական խոհերս Առաջին աշխարհամարտի շուրջ) գրքում⁴: «Հուշերում»⁵ Զամալզադեն հաստատում է, որ իր վկայություններն իրական են և անձամբ այդ իրադարձությունների ականատեսն է եղել. «Ճանապարհի համար սնունդ և ջրի կաշվե մեծ տիկ էինք վերցրել: Մեր երթուղին ացնում էր Եփրատի արևմտյան ափով: Քանի որ գետի ջուրը պղտոր էր, խմելու ջուր դրանով էինք վերցնում: Բացի դրանից, թուրքական կառավարությունը հայերին կոտորում էր և երբեմն էլ դիակները Եփրատը գցում: Գետի բերած մի քանի դիակ ես իմ աշբով եմ տեսելք»⁶:

Երբ սայլերով Հայեպից շարժվում են դեպի Ստամբուլ, ճանապարհի սկզբում հանդիպում են հայերի խմբերի, որոնց «քայլող մեռելների քարավան» է կոչում: Գրողի նկարագրությամբ անհավատալի դաժանությամբ թուրք հեծյալ ժանդարմաները հայերին քշում են դեպի մահ: Հայուրավոր կանայք, ե-

³ Mehrin M., Sarnevest va kare Jamalzadeh, Tehran, 1342.

⁴ Jamalzadeh M., Mošahedate šaxsie man dar jange jahanie avval, Jnev, 1350.

⁵ Afšar I., Dehbaši A., Xaterate seyed Mohammad Ali Jamalzadeh, Tehran, 1378.

⁶ Afšar I., Dehbaši A., Xaterate seyed Mohammad Ali Jamalzadeh, ss. 147-148.

բեխաներ և տղամարդիկ գենքի ու մտրակի հարվածների տակ ողբալով՝ ուժասպառ առաջ են շարժվում:

«Այս խմբերի մեջ երիտասարդների հազվադեպ կարելի է հանդիպել, քանի որ թուրքերը նրանց ռազմաճակատ էին ուղարկել կամ, ուստանան բանակին նրանց միանալու վտանգը հաշվի առնելով, կոտորել: Հայ աղջիկների զլուխները սափրած էին, որ չնկատվեն, և թուրք ու արաք տղամարդիկ նրանց նկատմամբ ոտնձգություններ չանեն: Երկու-երեք թուրք ժանդարմ ոչխարի հոտի նման մտրակի հարվածներով նրանց առաջ էին մղում: Ժամանակ առ ժամանակ ճանապարհի եզրերին արդեն մահացած կամ հոգին տվող հայերի էինք հանդիպում»:

Զամալզադեն պարզ նկարագրող չէ, այլ արվեստագետ, որ հոգեբանական նուրբ անցումներով վեր է հանում և պահի ողջ դրամատիզմը, և՝ իր վերաբերմունքը դառն իրականության հանդեպ:

Երեկոյան կողմ հասնում են մի վայրի, որտեղ թուրք ժանդարմները մոտ 400 հոգանոց խմբի էին կայանել փոքր-ինչ հանգստանալու համար: «Քայլող մեռելների» հոգնատանց ոտքերին ոտնամանի փոխարեն այնքան թուղթ ու հնոտիք է փարարած, որ հեղինակը դրանք համեմատում է մանկան բարուրի հետ: Տղամարդիկ և կանայք հողն են փորփրում՝ արմտիք գտնելու և սովո՞ն ինչ-որ կերպ մեղմելու համար:

Նա վարպետորեն ընթերցողին է փոխանցում դահձի և զոհի հանդեպ ունեցած իր վերաբերմունքը: Այստեղ թուրք ժանդարմների գիշատչային դամանությանը հակադրում է 18-19 տարեկան երկու դուստրերին փրկելու գերմարդկային ճիգեր գործադրող հայուհու ինտելեկտուն ու մայրական պարտքի զիտակցումը: Նա հիացմունքով է խոսում ուրվականի վերածված հայուհու ֆրանսերենի իմացության մասին և, չվերցնելով վերջինիս առաջարկած աղամանդները, նրա հետ կիսում է պարենի իր պաշարը: «Խիստ ամաշեցի, որ մեր պարենը ևս

սուղ էր, սակայն ինչ կարողացա, տվեցի և ասացի, որ ձեր ադամանդներն ինձ պերը չեն»:

Նրա հաջորդ գրուցակիցը Ստամբուլի համալսարանի նախկին դասախոս է, մաթեմատիկայի մասնագետ տարեց հայ մարդ, ով գերազանց ֆրանսերենով հարցնում է Զամալզադեին:

-Աստված ծղ սիրես, ասա՛, թե այս պատերազմը ե՞րբ է ավարտվելու, աչքի առաջ 10 տարեկան որդիս սովամահ է լինում:

«Պատասխան չունեի, սակայն հոգուս խորրում գիտակցում էի, որ զայլաբար մարդ արարածը, որ աղամորդի է կոչվում, երբեք պատերազմելուց չի դադարի: Մի կտոր հաց տվեցի: Բաժանեց երկու մասի, մեկը պահ տվեց ծոցում, իսկ մյուս մասը սկսեց ազահորեն ուտել: Այնուհետև ասաց.

-Զարմանո՞ւմ ես, որ հացը ես եմ ուտում, փոխանակ զավակիս տալու: Հաստատ գիտեմ, որ նա մեկ-երկու ժամից մահանալու է, այլև անիմաստ է....

Այնուհետև մի բնակավայրի հասանք, մեր սնունդը ևս ավարտվել էր և ինչ հնարավոր էր, զնում էիք: Այստեղ ևս տարագիր հայերի մի խմբի հանդիպեցինք... Արաբներից մի ոչխար զնեցինք: Սորթած կենդանու փորոտիքը հայերն սկսեցին արագությամբ ուտել:

Նմանատիպ տեսարանների ականատես լինելով՝ դանդաղորեն առաջ էինք շարժվում: Մենք նույնպես հոգնությունից տկարացել և թուլացել էինք: Ճանապարհի եզրերին կրկին հայերի դիակների էինք հանդիպում: Զափազանց ճնշող տպավորություն էր....»:

Հալեպում իջևանում են «Պրինց» կոչվող մի հյուրանոցում, որի տերը ևս հայ է: Նոյն օրերին այդ հյուրանոցում է իջևանում նաև Զեմալ փաշան: Հայը նրանց խնդրում է միջնորդել Զեմալի մոտ, որ իրեն շաբարեն, սակայն դա էլ չի օկնում, և մի քանի օր հետո տեղեկանում են, որ հյուրանոցի տիրոջն

արսորել են Բնյութի կողմերը, որտեղ գրողի խոսքերով՝ թուրքերը մեծ սպանդանոց էին սարքել:

«Կարճ ասած,- շարունակում է Զամալզադեն,- սամոկեցուցիչ օրեր ապրեցինք, որոնց վերհուշը հաճախ մղձավանջի վերածված տանջում է ինձ:

Այդ տարիներին Շվեյցարիայի մի շարք քաղաքացիներ «Կարմիր խաչի» միջոցով բազմաթիվ հայ մանուկների որդեգրեցին: Նրանցից ումանք մինչև այժմ հասարակական լուրջ դիրք են գրադարձնում այդ երկրում, ինչպիսին է բժիշկ Արարյանը, որը հայտնի մանկաբույժ է: Ժնևում հայտնի մի շարք վիրաբույժներ, ճարտարապետներ, հենց այն որբերն են, որոնց շվեյցարացիները փրկել են անխուսափելի մահվանից»:

ТЕМА ГЕНОЦИДА АРМЯН В МЕМУАРАХ МОГАММАДА АЛИ ДЖАМАЛЪЗАДЕ *Гарник Геворгян* (резюме)

В 1916 г., основоположник иранской новеллы, М. А. Джамалзаде из Багдада через Алеппо возвращается в Берлин. Путь из Багдада в Турцию проходил через районы насилино переселенных армян. О плачевном состоянии караванов выселенных армян он писал в книге «Судьба и деятельность Джамалзаде». Затем об этих же событиях, с некоторыми изменениями, автор изложил в 1971 г. в книге «Мои личные рассуждения о первой мировой войне», напечатанной в Женеве. Здесь Джамалзаде утверждает, что его сведения действительны и он был очевидцем «караванов двигающихся мертвецов».

THE SUBJECT OF ARMENIAN GENOCIDE IN THE MEMOIRS OF MOHAMMAD ALI JAMALZADE *Garnik Gevorgyan* (summary)

The founder of the Persian novel Mohammad Ali Jamalzade in 1916 returned to Berlin from Iran passing across Baghdad and Aleppo. When visiting Turkey from Baghdad the novelist faced the elimination areas of Armenians. The tragic situation of the exterminated and eliminated Armenians is attested in the book called "The Activities and Fate of Jamalzade". After a while, in 1971, he referred to this topic again in the book "My Personal Thoughts on the First World War" published in Geneva. Here Jamalzade confirms the fact that his attestations and evidences are true and the writer himself has witnessed "the caravans of walking dead creatures".

¹ Mirzabekian H., Sad noks dastanovchih Isfah. J. 1-2, s. 30. Tehran, 1965.
² Кочарян Г. Современный персидский исторический роман. Луштеб, 1982, стр. 10.

**XX ԴԱՐԱՍԿՂԲԻ ՊԱՐՄԻՑ ՊԱՏՄԱՎԵՊԸ.
ՀԱՄԱՌԱՋԱԿԱՆ**

Բանալի բառեր՝ պարմավիպագրություն, Սանաթիզադե Քերմանի, հերոսական, նախախամական, դարովիոնուն, թարգմանություն, թեմատիկ անդրադարձ

Եվրոպական ժողովուրդների մշակույթում մոտ չորսհարյուրամյա ուղի անցած պատմավեպի ժանրը թեև Իրանում միայն վերջին հարյուրամյակում է դարձել գրական մշակույթի բաղկացուցիչ, սակայն հասցրել է իր կայուն տեղն գրադեցնել պարսից նոր և նորագույն շրջանի գրականության մեջ: Ըսթեցողների բազմաքանակությամբ, հիրավի, այն դարձել է պարսից նորագույն արձակի ամենապահանջված և առաջատար ժանրերից մեկը: Այս ընթացքում ստեղծվել են մեծ թվով ստեղծագործություններ, ինչն ուսումնասիրողներին կանգնեցնում է ընտրության լուրջ դժվարությունների առջև:

Պարսից պատմավիպագրությունը գրավել է թե՝ արևմտյան, թե՝ խորհրդային իրանագետների ուշադրությունը: Դրան անդրադարձել են այնպիսի հեղինակներ, ինչպիսիք են Ե. Է. Բերտելսը, Յու. Ն. Մառը, Դ. Կոմիսարովը, Խ. Գ. Քորողին, Ս. Ն. Իվանիշվիլին, Ռ. Գ. Լեկովսկին, Գ. Կադիրովը, Ֆ. Մախալսկին, Սահիդ Ակլան, Ռեզա Թոփիդը, Էդ. Բրաունը: Ժանրի զարգացման առանձնահատկությունները կարևոր տեղ են գրադեցնում նաև իրանցի գրականագետներից Յահյա Արյանփուրի, Սահիդ Նաֆիսիի, Հ. Միր Արեդինիի, Հ. Արդուշիանի, Մոհամմադե Ղոլամի և այլոց ուսումնասիրություններում:

Պարսից նոր արձակի զարգացման գործում կարևոր նշանակություն է ունեցել 1851 թ. Թեհրանում հիմնված «Դարուֆոնուն» (Գիտության տուն) առաջին աշխարհիկ ուսումնական հաստատությունը Իրանում: Դպրոցի շորջ համախմբված մտավորականները ձեռնամուխ են լինում թարգմանական լայն գործունեության, ինչն էլ կանխորշում է պատմավեպի հետագա զարգացման ուղին: Այդ շրջանի ամենաբեղուն թարգմանիչներից է Սուլիհամադ Թահեր Միրզա Էսքանդարին, որ թարգմանում է Ա. Դյումայի «Կոմս Սոնտե Քրիստո» (1890-1891 թթ.), «Երեք հրացանակիրները» (1897-1898 թթ.) և այլ վեպեր, իսկ Աբդուլլաթիֆ Թոսուշի Թաքրիզին թարգմանում է «Հազար ու մի զիշերված հերթաքնները», որը Ղաջարական շրջանի թարգմանական գրականության լավագույն օրինակներից է համարվում¹: Այդ շրջանում թարգմանվում են նաև Ժան Բատիստ Սոլիերի, Դանիել Շեֆոյի, Ժյուլ Վենին և Եվրոպական այլ հեղինակների երկեր: Արաք հեղինակներից ընդօրինակման հարցում աշքի է ընկնում Զիրջի Զիդդանը:

Ըստ իրանցի գրականագետ Յահյա Արյանփուրի՝ «Թարգմանական աշխատանքը բացի ձանաշողականից, դրական այլ նշանակություն ևս ունենում է, քանի որ այդ ընթացքում թարգմանիչները ստիպված են լինում հետևելու բնագրերի պարզ լեզվին և թոթափելու պարսից գրականության մեջ նախկինում մեծ տարածում ունեցող զարդարանդակ ոճը»²:

Եվրոպական երկրների, մասնավորապես Ֆրանսիայի պատմությանը ծանոթանալու բուրն ցանկությունը, այս երկրի կառուցվածքային և այուժետային նմանությունը իրանական միջնադարյան կիսապատմական բնույթի ժողովրդական վեպերին (դասթաններին), նրանց հերոսների քաջութ-

¹ Mirabedini H., Sad sale dastannevisie Iran, j. 1-2, s. 30, Tehran, 1383.

² Կազիր Գ., Современный персидский исторический роман, Душанбе, 1982, стр. 10.

յունն ու հնարամտությունը, թարգմանիչների հեղինակային միջամտությունը առիթ են դառնում իրանցի ընթերցողների ուշադրության գրավման և կրկնօրինակման համար:

Սահմանադրական շարժման տարիներին (1905-1911 թթ.) փոխվում է վերաբեմունքը պատմության հանդեպ, և հրամայական է դառնում երկրի հերոսական անցյալի ոգով երիտասարդ սերնդին նոր ու ժամանակի հասարակական-քարոյական պահանջներին համապատասխան դաստիարակելու թեման: Առաջին պլան են մղվում պատմական ուսումնասիրությունները: Խթանիչ դեր է խաղում նաև XIX դարում արևմտյան իրանազետների նախախամական շրջանի Իրանի պատմությամբ հետաքրքրվելու հանգամանքը: Եթե մինչ այդ ազգային ինքնության ընկալման հարցում կրոնն ու ազգայինը հանդես էին գալիս միախառնված, ապա հետայդու խլամն ու իրանիզմը գաղափարական առումով անջրպետվում են³:

Պատահական չէ, որ առաջին պատմավիպասանները նաև պատմաբաններ էին: Պատմության գիտական ուսումնասիրությունն այդ հեղինակներին թույլ է տալիս, ընթերցողների ազգայնական զգացմունքները գրգրելով, նորանոր համակիրներ գրավել: Միրզա Աղախան Քերմանիի 1901 թ. Թեհրանում հրատարակած «Ալեքսանդրի հայելին», «Երեք նամակ» ուսումնասիրությունները լուրջ ազդեցություն են ունենում իրանցի պատմավիպասանների վրա⁴:

Վեպի առաջին նմուշները պարսից արձակում ի հայտ են եկել պատմավեպի տեսքով և սահմանադրական շարժման բերած քաղաքական ու հասարակական տեղաշարժերի արդյունք էին: Ասպարեզ են իշնում երկրի անկախության պահ-

պանման և գերտերությունների գաղութային ազդեցությունը բոթափելու թեմաները:

Այս երկերի ընթերցումը շատերին դրդում է ուսումնասիրերու, վերաբժնորելու և վերիմաստավորելու պատմությունը: Մտավորականության շրջանում նկատվում են հակասեմականության և անցյալապաշտության երանգներ: Ռեզա շահի նախախամական շրջանի Իրանի պատմության և պետության աշխարհիկ կառուցվածքի հանդեպ ունեցած հակածությունն առիթ են դառնում, որ կրոնամետների և ազգայնականների միջև հակամարտությունն էլ ավելի բորբոքվի: Երկրում իրանիզմի վերելքին զարկ են տալիս նաև 1934 թ. Ֆիրդուսիի «Շահնամե»-ի ստեղծման հազարամյակի տոնակատարությունները:

Սահմանադրական շարժման տարիներին նորարար մտավորականներից ոմանք հանդես էին գալիս անցյալի մշակութային ժառանգության մերժման և դրա հետ կապի խզերով: Այս առումով պատմավեպին հաջողվեց պահպանել առնչակցությունը անցյալի գրական ավանդույթների, ինչպես նաև միջնադարյան դասթանների հետ: Կանխվում է խօսումը անցյալի մշակույթի հետ: Այս առումով պատմավեպը յուրօրինակ կամուրջ է դառնում ավանդականի և նորարարականի միջև⁵:

1910-1920-ական թթ. գրված պատմավեպերն իրենց վիպագրական տեխնիկայով թեև ունեն լուրջ թերություններ, սակայն բովանդակային և թեմատիկ հարստությամբ կարողանում են լրացնել բացը գրավել ընթերցողների ուշադրությունը: Հաջորդ երկու տասնամյակներին՝ 30-40-ական թթ., զգալիորեն բարելավվում է վիպասանական տեխնիկան, սակայն ի հաշիվ բովանդակային կողմի:

1920-30-ական թթ. մեծ թափ է առնում այս ստեղծագործությունների հրատարակումը մանավանդ ժամանակի պար-

³ Mirabedini H, Sad sale dastannevisie Iran, j. 1-2, s. 31.

⁴ Комиссаров Д., Пути развития новой и новейшей персидской литературы, Москва, 1982. стр. 8-22.

թերականներում: Թերթերն ու ամսագրերը թերթոնային հատվածներն ու հավելվածներն ամրողովին հատկացվում են պատմավեպերին: Դրանք թեև գեղարվեստական առումով բարձրարժեք ստեղծագործություններ չեն, սակայն մեծ առավելություն ունեն հասարակության ուսյալ և երիտասարդ զանգվածի ուշադրությունն իրենց կողմը գրավելու իմաստով:

Իրանում պատմավեպեր գրելու առաջին փորձերը կատարվել են դեռևս XIX դարի երկրորդ կեսին: Իրանցի գիտնական Մ. Էստելամին գրում է. «Միրզա Աղախան Քերմանին գրել է մի քանի պատմական վեպեր Մազդարի, Մանիի, Նադիր շահի և սուլթան Հուսեյնի մասին, ինչը հենց ինքը հեղինակն է հիշատակում, սակայն դրանք չեն պահպանվել»⁶:

Իրանական պատմավեպի առաջնեկն է համարվում Սոհամմեդ Բաղեր Խոսրովիի «Շամս և Թողրա»-ն՝ տպված 1910-1911 թթ.: Այնուհետև լույս են տեսնում Շեյխ Սուսա Նասերի «Էշր Վա սալթանար» (Սեր և իշխանություն) (1919 թ.), Սանաթիզարե Քերմանիի «Դամգութարան յա էնթեղամիսահանե Մազդար» (Դարանակալները կամ Մազդարի վրիժառուները), իսկ XX դարի 20-ական թթ. Հասանխան Բաղիի «Դասրանե բասթան» (Անցյալի պատմություն) (1921 թ.), Ռահիմզադե Սաֆավիի «Շահրբանու» (Թագուհի) (1927 թ.), Հեյդար Ալի Քամալիի «Մազալեմե Թորքանխաթուն» (Թորքանխաթունի դաժանությունները) (1928-1929 թթ.), Հոսեյն Մասրուրի «Դահ նաֆարե դզլրաշ» (տասը դզլրաշներ) (1928 թ.) վեպերը և այլն:

Առաջին երկու տասնամյակների ընթացքում, անկախ քանակական և որակական առաջընթացից, այս ժանրը աստիճանաբար ստանձնում է իշխող վերնախավի իդեալների արտահայտչի դերը: Այս պատճառով ժանրը մասնակիորեն կորցնում է հասարակական հնչեղությունն ու սրությունը,

թեև բովանդակային իմաստով չեր կորցրել ազգայնական ու անկախական տրամադրությունները: Պատմավեպերի քանակի ավելացմանը զուգընթաց դրանցում ավելանում է նաև զգացմունքայնությունն ու հրապարակախոսական պաթոսը, ինչը մասամբ զրկում է գրական տեսակն իր նախնական և հիմնական նպատակներից:

Ուեզա շահի իշխանության տարիներին (1925-1941 թթ.) արգելվում է տպել ստեղծագործություններ, որոնց բովանդակությունն անմիջապես վերաբերում է տվյալ ժամանակաշրջանի հասարակական տեղաշարժերին: Իրեն պարթևական դինաստիայի ժառանգորդ հայտարարած Ուեզա շահը նույնիսկ իրահուսում էր անցյալի թեմատիկայի անդրադարձները գրականության էջերում, և 1930-ական թթ. լույս են տեսնում Արքաս Արիանփուր Քաշանիի «Արուսե Մադի» (Մարաստանի հարսը) (1930 թ.), Շին Փարրուի «Փակլսավանե Զանոր» (Զանդ դյուցազնը) (1934 թ.), Հաբիբ Յաղմայի «Դահմեյն Արգուն» (Արգունի դախման) (1933-1934 թթ.), Յահյա Քարիբի «Յաղուր Լեյսը» (1936 թ.), Զեյնալարելիին Սուարամանի «Աշյանեյե օղար» (Արծվաբույն) (1937-1938 թթ.), Զեյնալարելիին Ռահմանայի «Փեյղամբար» (Մարզարե) (1937-1938 թթ.) վեպերը և այլն:

Այս հոսանքից հետ չեն մնում նաև այնպիսի հայտնի գրողներ, ինչպիսիք են Սոհամմադ Զամալզադեն, Սադեղ Հեղայարը, Սայիդ Նաֆիսին, Սոցքարա Մինովին և այլք: Սադեղ Հեղայարը գրում է պատմական պատմվածքների շարք «Սայեյե մողոլ» (Մոնղոլի ստվերը) ընդհանուր վերնագրով, «Փարվին՝ Սասանյան դրւատը» և «Մազիար» ստեղծագործությունները:

Սակայն անցյալի և ներկայի թեմաներով ստեղծագործող հեղինակների միջև հակամարտություն է բռնկվում: Եթե Փեկլսիների իշխանությունից դժգոհ պատմավիպասանները գովերգում էին անցյալի «դրախտային» ժամանակները շեղե-

⁶ Կադիրօվ Գ., նշվ. աշխ., էջ 15:

լով ժողովրդին առօրյա հոգսերից, ապա նրանց հակառակորդները ըննադատում էին նրանց ընտրած ուլին: Այդ հեղինակներից էր Սադեղ Հեղայաթը, ով, հետ կանգնելով պատմական անցյալի թեմաներից, «Վաղ-վաղ սահար» ժողովածուի «Ղազիյե» ուժանե քարիխի» (Պատմավեպի հիմնահարցեր)-ում ըննադատում է այս ժանրը: Նիմա Յուշիջը ևս ըննադատում է պատմավեպը՝ այն համարելով ներկա իրականության հետ առնչություն չունեցող ժանր⁷:

Անկախ ունեցած մեծ մասսայականությունից և արձանագրած հաջողություններից՝ այդ շրջանի պատմավեպերին, իրոք, հատուկ են հետևյալ թերությունները՝ շարադրանքի ավելորդ ձգձգվածությունը, դիմաշարի անհետևողականությունը, երբեմն պատմական հերոսի ընտրության ոչ սկզբունքայնությունը, կարևոր իրադարձությունների հաճախակի ստվերումը սիրային-արկածային թեմաներով, ինչպես նաև պատմական իրադարձությունների մակերեսային պատկերումը:

XX առաջին կեսի պարսից պատմավիպագրության ուսումնասիրությունը կարևորություն է ստանում գրական, մշակութային և հասարակական-քաղաքական տեսանկյունից: Գրական տեսանկյունից առաջին պատմավիպասաններին հաջողվեց իրանցիներին ծանոթացնել գրական նոր տեսակի թեմատիկ և կառուցվածքային առանձնահատկություններին, նպաստեց պարսից վեպի կայացմանը, ինչպես նաև վճռորոշ նշանակություն ունեցավ ժամանակակից արձակի պարզեցման գործում:

ПЕРСИДСКИЙ ИСТОРИЧЕСКИЙ РОМАН НАЧАЛА XX ВЕКА: КРАТКИЙ ОЧЕРК *Гарник Геворгян* (реэзюме)

Исследование персидского исторического романа первой половины XX в. имеет важное значение в литературной, культурной и общественно-политической жизни. Первым романистам удалось ознакомить иранцев тематико-композиционными особенностями нового жанра. Их труд способствовал становлению персидского романа. А также, этот жанр внес огромный вклад в пути упрощения стиля современной прозы.

PERSIAN HISTORICAL NOVEL OF THE BEGINNING OF THE XX CENTURY: BRIEF ESSAY *Garnik Gevorgyan* (summary)

The study of the Persian historical novel in the first half of the 20th century is of a great importance from the literary, cultural and social political viewpoints. Concerning the literary aspect the first historical novelists succeeded in making aware the Iranian nation of the thematic and structural peculiarities of the new form of the prose as well stimulated the structural and stylistic formation of the Persian novel. This process also played an incredible role for the simplification of the modern prose.

⁷ Abdollahian H., Karnameye nasre moaser, Tehrān, 1378, ss. 90-91.

**ԹԱԹԵՐԻ ԵՎ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ
ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ
ՄԻ ՔԱՆԻ ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐԻ ՇՈՒՐԶ**

Բանալի բառեր՝ թարթական բանահյուսություն, պատում, անեկդոտ, երգիծական պատմություն, գրավոր վկայվածք, կերպար, հավաքախև, խենթ, իմաստուն, իրապարու:

Ցուրաքանչյուր ժողովրդի հոգեոր նկարագրի մասին առավել ընդգրկում պատկերացում է տալիս ժողովրդական բանահյուսությունը, որն արտացոլում է նրա աշխարհընկալումը, բարյալկան և արժեքային պատկերացումները:

Իրանական ժողովուրդների բանահյուսական ժառանգության անքակտելի մասն է կազմում թաթերի ֆոլկլորը: Թաթերը պատկանում էն իրանական այն ժողովուրդների թվին, որոնց բանահյուսությունը, ըստ հարկի, ուսումնասիրված չէ, և նրա բանավոր խոսքարվեստի սոսկ փշրանքներն են գրաված: Այս ուղղությամբ առաջին փորձը կատարել է ուստի հայտնի ազգագրագետ և լեզվաբան Վ. Միլլերը, որի “Տատսկի էտյուդы”¹ գրքում զետեղված են մի քանի պատումներ Սոլլա Նասրեդինի և Բահլուլի մասին: Այդ նյութերը թույլ են տալիս որոշ զուգահեռներ անցկացնել թաթերի և Մերձավոր Արևելքի ժողովուրդների բանահյուսության մեջ ու գրավոր վկայվածքներում տարածում գտած այդ կերպարների և նրանց առնչվող գրական-բանագիտական իրողությունների միջև:

¹ Миллер В., “Татские этюды” (часть I), Тексты и татско-русский словарь, Москва, 1905.

Սոլլա Նասրեդինին և Բահլուլը (Բուհլուլ, Բոհլուլ, Բեհլուլ, Բալուլ) Մերձավոր Արևելքի ժողովուրդների բանահյուսության և գրականության հայտնի կերպարներից են: Ըստ արաբական միջնադարյան աղբյուրների, Բահլուլն արաբ միջավայրի ծնունդ է²: Հետազոտում նրա կերպարն անցել է Մերձավոր Արևելքի այլ՝ իսլամադավան (իրանական, քրդական, թուրքական և այլն) և քրիստոնյա ժողովուրդների գրականություններ (հայկական, ասորական):

Պարսից գրականության մեջ Բահլուլի և Սոլլա Նասրեդինինի անունների շուրջ հյուսվել են տարատեսակ պատմություններ՝ երգիծական պատմություններ (մասայ), անեկդոտներ (լարիֆե), հերիայներ (հերայար), որոնցում նրանք հանդիս են զալիս որպես սրամիտ, խորամանկ, իմաստնությամբ օժտված անձնավորություններ: Բահլուլի մասին պատումներն ընդգրկվել են պարսից գրականության այնպիսի խոշոր ներկայացուցիչների ստեղծագործություններում, ինչպիսին են Արուլ-մաջդ Սանային, Ֆարիդադին Աթթարը, Զալալեդինին Ռումին, Սուլեկեդրին Սաադին և այլ հեղինակներ³:

Հարկ է նշել, որ Բահլուլը ավանդաբար ներկայանում է որպես «իմաստուն խենթերի» հավաքական կերպար: Իսլամական հավատախների եղբայրակցությունը հայտնի էր «Օղալայէ մաջանին» (իմաստուն խենթեր), «մաջգուրան» (Սասծն սիրով գերվածներ) և այլ անվանումներով⁴: Իսլամական ա-

² Մկրտչյան Հ., Նորահայտ փաստեր «Պատմութիւն յաղագ Փահլութագաւորին» գրուցի հայերեն թարգմանության և նրա ընագրի վերաբերյալ, Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 1992, № 2-3, էջ 227:

³ Mohammad Ja'far Yāhaqī, Farhang-e asātir va eṣārāte dāstāni dar adabiāte fārsi, Sorus, Tehrān, 1369, s. 136.

⁴ Խաչատրյան Ե., Բուհլուլի կերպարը արաբա-իրանական գրուցապատումներում, Իրան-նամէ, Երևան, 2001, հ. 36, էջ 71: Այս մասին մանրամասն տե՛ս և նաև Խաչատրյան Ե., Հակատախնության կրոնահոգերանական հայեցակետերի շուրջ, Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Երևան, 2000, հ. XIX, էջ 215-220:

վանդույթում այդպես էին կոչվում այն անձինք, որոնք զիտակցաբար խենք էին ձևանում՝ հասարակությունից անջռպետվելու և մեկուսանալու համար: Միջնադարյան հայ իրականության մեջ հավատի այդպիսի ինքնամոռաց նվիրյալները ստացել էին *հավատախիս* անվանումը:

Բահլուլը եղել է պատմական դեմք և արարական մատենագրության մեջ վկայված է Արու Վուհայր Բահլուլ (կամ Բուհուլ) բին Ամր (աս-Սայրաֆի կամ աս-Սուֆի) ալ-Սաշնուն ալ-Քուֆի անունով⁵: Սակայն ժամանակի ընթացքում նրա անվան շուրջ հյուսվել է տարատեսակ պահնդությունների այնպիսի մի ցանց, որ այսօր արդեն դրանց մեջ գրեթե անհնար է տարանջատել իրականն ու մտացածինը: Ժամանակից գերմանացի գիտնական Ուլ. Մարգուֆի բնորոշմամբ «... որքան անորոշ է պատմական Բահլուլի կերպարը, նույնքան հարուստ է նրա մասին լեգենդը»⁶:

Բահլուլի վերաբերյալ մեզ հասած պատումների մեծ մասում նրա հետ մեկտեղ հանդես է գալիս Աբբասյան հարստության խալիֆ Հարուն առ-Ռաշիդը: Ուսումնասիրողների շրջանում ընդունված է այն տեսակետը, որ Բահլուլը և Հարուն առ-Ռաշիդը հորեղբորորդիներ են եղել: Քրդական հեթիաթներում նրանք ներկայանում են, նույնիսկ, որպես հարազատ եղբայրներ՝ «մի մորից ու հորից»⁷: Արարական ավանդույթը Բահլուլին համարում է Հարուն առ-Ռաշիդի պալատական ծաղրածու, ինչզ գուգահեռելի է Սոլլա Նասրեդինի՝ Լենկթեմուրի արքունիքում և Պըլը Պուղիի՝ Արցախի մելիքներից Մելիք-Շահնազարի տանը ծաղրածուի կարգավիճակ շնորհող ավանդությունների հետ:

Բահլուլի մասին շրջանառվող պատումներում նա մերք իմաստուն խրատատու է, ով խորհուրդներով ջանում է օգտա-

կար լինել մարդկանց, մերք խենք ձևացող, ինչը հնարավորություն է տալիս նրան համարձակ սրամությամբ «այս աշխարհի ուժեղների», մասնավորապես խալիֆի երեսին ասել ծշմարտություններ: Իր այս հատկանիշներով Բահլուլի կերպարը գուգահեռներ ունի գրեթե բոլոր ժողովուրդների բանահյուսության մեջ: Այս իմաստով Բահլուլին գուգահեռելի են Սոլլա Նասրեդինի իրանական, Պըլը Պուղին հայկական և յօրօնիք-ները ուսական իրականության մեջ⁸:

Բահլուլի և Սոլլա Նասրեդինի խորհուրդները ընդգրկման լայն շառավիղ ունեն՝ կրոնա-քաղաքականից մինչև կենցաղային և միջանձնային հարաբերություններ: Քրդական հեթիաթներից մեկում Բահլուլն օգնում է պատումի աղքատ հերոսին ամուսնանալ սիրած աղջկա հետ հակառակ վերջինիս հարուստ հոր ու անգամ խալիֆի ջանքերի: Բահլուլն իր իմաստուն խոսքերով ու խորհուրդներով է վկայված նաև Միլլերի գրառած պատումներում, որոնք հիմնականում կենցաղային բնույթի են: Դրանցից մեկում, որը վերնագրված է «Յահյա Բերմերիի և Բահլուլի պատմությունը», վեզիրը ի վերջո ընդունում է Բահլուլի երեք իմաստուն ասուլյար. երբեք ըշտափել կնոջը, հույսը շդնել հարստության վրա և չապավինել պաշտոնին⁹: Միլլերի գրառած մյուս գրույցում Բահլուլը ներկայանում է որպես հարստացման ուղիների գիտակ և խորիրդատու:

Մեկը մոտենում է Բահլուլին և ատում. «Խե նթ Բահլուլ, ինձ խորհուրդ տուր, ի նշ անեմ, որ մեկ օրում հարստանամ»: Բահլուլը պատասխանում է. «Մի քանի դազան ջրի մեջ տիւ դի՛ր, տարվա վերջում կավելանա և կհարստանաս»: Այդպես էլ անում է: Որոշ ժամանակ անց սոխը գրմիում է: Գալիս է

⁵ Ակրտշյան Հ., նշված հոդ., էջ 227:

⁶ Marzolph U., Der Weise Narr Bühlül, Wiesbaden, Steiner, 1983, s. 3.

⁷ Курдские народные сказки, Москва, 1970, сс. 103-105.

⁸ Այդ մասին առավել մանրամասն տե՛ս Պերսидские анекдоты пер. с персид. М. Ашрафи и др., Москва, 1963, сс. 8-13. Армянский фольклор, сост. и пер. Г.О. Карапетяна, Москва, 1979, сс. 7-10.

⁹ Миллер В., ук. соч, сс 5-6.

Բահլուլի մոտ ու ասում. «Այդ ի նշ արեցիր, ամբողջ տունս հոտ է ընկել»: Ինչին Բահլուլը պատասխանում է. «Ապա ինձ ինչո՞յնք անվանեցիր, ես թեզ լավ խորհուրդ կտայի»¹⁰:

Այս պատումի տարբերակը հանդիպում է նաև եղջիական բանահյուսության մեջ¹¹:

Եղջիական ավանդույթում Բահլուլը հայտնի է երկու անվամբ՝ Բալուլ-զանա (խելացի, գիտուն Բալու) և Բալուլ-Դինը (ծուռ, շեղված Բալու): Վերը շարադրված թաթական պատումում Բահլուլը հանդես է զալիս Բահլուլ-դոնանդա (իմաստուն Բահլուլ) և Բահլուլ-դիվոնա (խենք Բահլուլ) անվանումներով: Ասորական բանահյուսության մեջ հանդիպում են Բահլուլի Բահլուլ-Դիվանե և Բահլուլ-Դանանդ անվանումները¹²: Պարսկերեն «դիվանե» և «դանանդե» մականուններից եզրակացնելով՝ քրիստոնյա գրականությունների դեպքում փոխատու աղբյուրը, հավանաբար, եղել է իրանական բանահյուսությունը:

Արժե նշել, որ այդ գրույցներում կին ընտրելիս տղամարդիկ հաճախ խորհուրդ հարցնելու համար զալիս են Բահլուլի մոտ: Ուշագրավ է այն փաստը, որ այդպիսի բովանդակությամբ մի ավանդագրույզ նշանավոր սուֆի բանաստեղծ Զալալերին Ռումին ներառել է իր «Մասնավեհ մանավի» պոեմում¹³: Նոյնանման սյուժեով մի պատում է շրջանառվում նաև եղջիական բանավոր հաղորդումներից մեկում:

Հարկ է նկատել, որ Սոլլա Նասրենդինի կերպարն ավելի մեծ տարածում է զսել Մերձավոր Արևելյան ժողովուրդների գրականության և բանահյուսության մեջ, քան Բահլուլինը: Թաթական բանահյուսության վկայվածքներում Սոլլա Նաս-

¹⁰ Նոյն տեղում, էջ 7-8:

¹¹ Խաչատրյան Ե., Խշկ. հոդ., էջ 74:

¹² Истребитель колючек. Сказки, легенды и притчи современных аццрийцев, Москва, 1974, сс 269-270, 364-366, 368.

¹³ Jalaleddin Rumi, Masnavi-e Manavi, Tehrān, 1373, daftare II, 2404-2413, p. 249.

թեղինը հանդես է զալիս երգիծական նկարագրով՝ սրամիտ է և ուղղախոս: Նա սիրելի կերպար է Մերձավոր Արևելյան ժողովուրդների գրականության և բանահյուսության մեջ: Գուցե դրանով կարելի է բացատրել այն իրողություն, որ թաթերի շրջանում Բահլուլին առնչվող պատումներից մեկի սյուժեն տեղ է զտել Ռումիի «Մասնավեհ մանավիում», սակայն այս տեղ դրա հերոսը Սոլլա Նասրենդինն է:

Մի օր Բահլուլի մոտ է զալիս մի մուրացկան: Բահլուլը չորսհարկանի տուն ուներ: Ամեն անզամ, երբ տուն էր զալիս, դժվարությամբ էր ներքն իջնում: Այդ օրը անձրև էր զալիս, տանիքը կաթկրում էր: Բահլուլը բարձրացել էր տանիք, որպեսզի ամրացնի կտորը: Ներքնում կանգնած մուրացկանը ձայն տվեց «Մեկ բռպեռվ կիջնե՞ս այստեղ, ես պետք է թեզ բան ասեմ»: Խեղճ Բահլուլը մտածեց՝ ինչ-որ զադունիք է, մեծ անհանգստությամբ ներքն եկավ, իսկ վերջինս ասաց. «Ի սեր Աստծո, ինձ զոնե մեկ կոպեկանոց տուր, փող չունեմ՝ հաց առնեմ, սոված եմ»: Բահլուլը չպատասխանեց, շրջվեց, կրկին կտորը բարձրացավ, ձեռքը գրավանը տարավ և կանչեց մուրացկանին. «Բարձրացի՛ր կտոր»: Սուրացկանը դժվարությամբ բարձրացավ կտոր, մոտեցավ Բահլուլին և հարցրեց. «Ի՞նչ ես ասում»: «Ոչինչ, - ասաց Բահլուլը, - Աստված կտա»: Լսելով այդ խոսքերը՝ մուրացկանը բարկացած դիմեց Բահլուլին. «Արդյո՞ք «Աստված կտա» դու չէիր կարող ասել, երբ ես ներքնում էի, իսկ դու կրկին անհանգստացրի ինձ»: Բահլուլը պատասխանեց. «Արդյոք դու չէի՞ր կարող կոպեկ ինդրել, երբ ես կտորի վրա էի, իսկ դու ստիպեցիր ինձ ներքն իջնել: Չե՞ս լսել ասացվածքը «Ի՞նչ ցանես, դա էլ կհնձես»¹⁴:

Մի կարևոր փաստ ևս. Բահլուլի կերպարը հանդիպում է նաև հայ գրականության և բանահյուսության մեջ: «Պատմութին յաղաց Փահլուլ թագավորին» գրուցը հայ թարգմանա-

¹⁴ Миллер В., ук. соч, сс 1-3.

կան արձակի նմուշներից է, որը մեծ ժողովրդականություն է վայելել միջնադարյան Հայաստանում: «Փակուլի պատմության» հայերեն հնագույն ձեռագիրն ընդօրինակված է 1432 թ.: Նշանակում է, որ այդ երկի քարզմանությունն պետք է, որ իրականացված լիներ մինչ այդ, քանի որ գրույցը միջին հայերենով է և հիշեցնում է 13-14-րդ դարերի հայ քարզմանական գրականության լեզուն: Կարծիք կա, որ պատմության թարգմանիչը հայ միջնադարյան բանաստեղծ Ֆրրիկն է¹⁵: Այս կարծիքը հիմնավոր կարելի է համարել այն նկատառումով, որ Ֆրրիկը, ըստ պահպանված տեղեկությունների, իմացել է պարսկերեն: Առայժմ դժվար է ասել, թե «Պատմության» թարգմանությունը արված է պարսկերենից, թե՝ արաբերենից, քանի որ ձեռագրերից և ոչ մեկում հիշատակություն չկա գրույցի բնագրի լեզվի մասին:

Բացի այդ գրույցից, Բահլուլի կերպարը հանդիպում է նաև Սայաթ-Նովայի խաղերում: Իր «յարի» պատճառած հոգեկան ապրումներն ավելի խոսուն ներկայացնելու համար Սայաթ-Նովան վերջինին համեմատում է «Դիվանա կամ Դանանդա Բահլուլի» հետ:

*Յա՛ր, էշիւմետ յիս դառիլ իմ դիվանա,
Բահլուլի պէս մնացիլ իմ յիս աշիզ:¹⁶*

Այսպիսով, ակնհայտ է, որ Սոլլա Նասրեդինի և Բահլուլի կերպարները լայն տարածում են ունեցել Մերձավոր Արևելքի ժողովուրդների գրականության և բանահյուսության մեջ: Նրանց առնչվող ավանդապատումներն ու գրույցները, բանահյուսությունից անցնելով հեղինակային գրականություն, պահպանել են ժողովրդական ստեղծագործությանը բնորոշ

առանձնահատկությունները՝ խոսրի անմիջականությունը և կյանքի երևույթները ժողովրդի աչքերով դիտելու և գնահատելու հատկությունը:

О НЕКОТОРЫХ ПАРАЛЕЛЯХ В ФОЛЬКЛОРЕ ТАТОВ И НАРОДОВ БЛИЖНЕГО ВОСТОКА

Астхик Гегамян

(резюме)

В статье делается попытка представить образы Моллы Насреддина и Бахлула, которые в виде разных жанров распространены в фольклоре иранских народов, в том числе и у татов. Рассказы и сказания об этих образах из фольклора перешли в авторскую литературу, но при этом сохранили особенности, которые характерны народному творчеству: непосредственность выражения, свойства видеть и оценивать явления жизни глазами народа.

В статье представлены всего несколько фольклорных преданий и рассказов о Молле Насреддине и Бахлуле, которые взяты из книги Миллера “Татские этюды”, однако они дают лишь общее представление о том, что эти образы были широко распространены в фольклоре и письменности народов Ближнего Востока.

¹⁵ Մկրտչյան Հ., նշվ. աշխ., էջ 226:

¹⁶ Ղանալակյան Ա., Հայ գրականությունը և բանահյուսությունը, Երևան, 1985, էջ 64:

**ON SOME PARALLELS IN THE FOLKLORES OF THE TATS
AND THE PEOPLE IN NEAR EAST**
Astghik Geghamyan
(summary)

The article is devoted to the figures of Molla Nasreddin and Bahlul, seen in various janres of Iranian folklore, including among Tat beliefs. Many stories and legends about these personages entered the balletristic literature at the same time preserving all the characteristics of folk tradition: directness of expressions, evaluating life events as simple people do.

In the paper only a few folk tales are presented about Molla Nasreddin and Bahlul, taken from V. Miller's "Tatskie étudy". However, they give only general ideas concerning the spreadness of these figures in the folklore and written tradition of the people in Near East.

Тадевос Чарчян
к.ф.н., доцент

**КЛАССИФИКАЦИЯ ЛЕКСИКИ ПАРФЯНСКИХ
НАДПИСЕЙ ПО СЕМАНТИЧЕСКИМ ПОЛЯМ**

Ключевые слова: *парфянский язык, источник, семантика, классификация, термин, текст*

Парфянский язык, как известно, является вторым после пехлевийского по количеству дошедших до нас источников на этом языке. Парфянские тексты, засвидетельствованные в материалах из Нисы¹, Кумиса, Коша-Депе, Авромана, Ниппуря, Армази, Дура-Эвропос, а также наскальные надписи² не отличаются изобилием словарного запаса. Среди этих памятников более крупными и ценными являются надписи царей Шапура³ и Нарсе (3-4 в.), которые имеют не только лингвистическое, но и большое историческое значение.

¹ Остраки из Нисы являются первыми и древнейшими языковыми источниками парфянского языка, обнаруженными южно-туркменистанской комплексной экспедицией в коренных областях Парфии. Дешифровка и анализ этих документов принадлежат И. М. Дьяконову и В. А. Лившицу (более подробно см. Diakonoff I., Livshits V., Parthian Economic Documents from Nisa, CII (Corpus Inscriptionum Iranicarum), v. 2 Parthian, 1976; Diakonoff I., Livshits V., Parthian Economic Documents from Nisa, CII, v. 2 Parthian, 1977-2001).

² Кроме этих документов, имеются также очень краткие парфянские памятники, найденные из других частей южной Туркмении, Бишапура, Туенг-Тепе, Сар Пуль-и Зохаб, Гебекл-и Депе, Сузы, Кал-и Джангаль, Накш-и Рустам, Накш-и Раджаб.

³ В надписи Шапура на Каба-и Зардушт, где особенно в изобилии встречаются топонимы, среди завоеванных стран и областей отмечаются также Азербайджан, Армения и Аран, Грузия.

Настоящая работа включает классификацию по разным семантическим сферам только апеллятивов: собственные имена, а также географические названия не рассматриваются.

В первую очередь надо отметить широкое употребление административных терминов, наличие которых, естественно, обусловлено четкой структурой политической системы и канцелярий парфянского государства. Во многих источниках засвидетельствованы термины для обозначения главы государства: *bag* ('LH')⁴ «правитель, досударь», первоначальное значение – бог; *xvatāv* > *xvadāv* (MR'Y) «господин, хозяин». В нисийских текстах, в высшеуказанных надписях Шапура и Нарсе встречается также термин *bānūk* > *bānūg* (MR'TY) «госпожа»⁵. К числу административных единиц относятся также следующие слова: *gāh* (gtw, '(L)Š) «tron, престол», арм. *gah* (*qsh*); *vispuhr* (BRBYT) «принц»; *visduxt* (BRBYTH) «принесса»; *ganz* (GNZ) «казна»; *muhr* (HTM) «печать» - *āvišt* (HTM-t) «запечатанный»; *nibištan* (KTYB-tn) «писать»; *frēstag* (M'LKH)⁶ «посланец»; *šahrestān* (MHWZ) «шахристан, город»; *šāh* (MLK) «царь»; *bāmbišn* (MLKTH) «царица, королева», арм. *bambiš* (*rwiſph2*); *xšahrap* > *šahrab* (PHT) «сатрап»; *aweštāt*,

W HHSNW-m] hštr p'rs prt w hwzstn myšn 'swrstn ntwšrkn 'rbystny
'trwptkn [ud dārām] šahr Pārs Partaw Xūzistān Mēšān Asūristān Nōdšīragān
Arabistān Ādurbādagān 'rmny 2. wyršn sykn 'rd'n bl'skn HN prbš 'L
kpy TWR' W ... Arman Wir(a)žān Sīgān Arrān Balāsagān yad frahaž
ō Kāf kōf ud ...

⁴ Отметим, что эти и другие существительные, зафиксированные в статье, в парфянских источниках очень часто встречаются с grammaticalным компонентом множественного числа –ān.

⁵ Diakonoff I., Livshits V., указ. соч., 196; Back M., Die Sassanidischen Staatsinschriften, Acta Iranica 18, v. VIII, Téhéran-Liège, 1978, 20, 341; Humbach H., Skjærvø O., The Sassanian Inscription of Paikuli, Pt. 3.1, Wiesbaden, 1983, 35, 112.

⁶ Слово в виде идеограммы (M'LKH) засвидетельствовано только один раз в надписи Пайкули (Humbach H., Skjærvø O., указ. соч., 33).

dastbar (PQYD) «надзиратель, контролер»; *sar* (RYŠ) «глава, начальник»; *dipīr* > *dibīr* (SPR) «писец, писарь», арм. *dpīr* (*ηψηρ*); *bar* (TR) «двор, дворец, дверь»; *ahmārkār* «бухгалтер, счетовод», арм. *hamar* (*համար*) «счет»; *asbār* «всадник»; *bāž* «налог», арм. *baž* (*բաժ*); *bayāspān* «посол, посланник»;⁷ *xvadāyif*, *šahrəxvadāyif* «правление»; *hēgemōn* «правитель»;⁸ *marz* «граница», арм. *marz* (*մարզ*); *framāydan* «приказать, велеть»; *fravardag* «письмо, манифест», арм. *hrovartak* (*հրովարտակ*); *pādixšīr* «договор», арм. *ratšir* (*պատշիր*) «документ» и.т.д.

В парфянских доманихейских источниках важное место по числу занимают слова и обозначения, касающиеся титулам и рангам. Такое значительное количество подобных терминов, естественно, обусловлено наличием развитой системы государственного управления в Иране. Надо отметить, что абсолютное большинство этих слов встречается в надписях Шапура и Нарсе⁹. Поскольку эти чины являются сугубо иранские явления, они в текстах встречаются только в виде иранских (в этом случае - парфянских) слов - без идеограмм. Ниже приводится список служащих: *herbēd* «главный жрец», арм. *herpet* (*հերպէտ*); *āxvarrbed* «руководитель конюшни», арм. *axorapet* (*աշորպէտ*); *hargbed* «глава сборов налогов» арм. *harkapet* (*հարկապէտ*); (*a)spād(δ)abad* «военачальник, спарапет» арм. *sparapet* (*սպարապէտ*); *asprat* «главный конюх», арм. *aspet* (*ասպէտ*) «рыцарь»; *updēt* «стража, охрана», арм. *paret* (*պարէտ*); *barbed* «начальник привратников, глава двора»

⁷ Среди парфянских памятников это слово засвидетельствовано только один раз, в 22 строке надписи Нарсе (Humbach H., Skjærvø O., указ. соч., 51). Югоzapадная форма слова *despān*, откуда в армянском заимствование *դեսպան*.

⁸ От греческого ἡγεμών

⁹ Подробное расследование названия лиц, занимающие высокий пост в пайкульской надписи см. Skjærvø O., The Sassanian Inscription of Paikuli, Pt. 3.2, Commentary, Wiesbaden, 1983, 38-49.

арм. barapet (*բարպետ*); bīdaxš, bdaxš¹⁰ «большой везир, бдеш»; арм. bdešx (*բդեշխ*); būmxvatāy¹¹ «землевладелец»; dādbar «судья», арм. datavor (*դատօր*); dipīrat > dibirbed «начальник псаломщиков, писцов», арм. dprapet (*դպրապետ*); darīgān «придворные»; арм. dranik (*դրանիկ*); dahibed «хозяин села, староста», арм. dehpet (*դեհպէտ*); dizpat > dizbed «начальник крепости»; ganzbar «казначей»; grastbed «глава снабжения»;¹² šahrdār (мн. šahrdārān) «землевладелец»; hazārbed «командующий тысячами людьми (chiliarch)», арм. hazarapet (*հազարպետ*); kadagxvādav, (мн. kadagxvādavīn) «глава семьи, домовладелец»; mādaganbed «глава архива, регистра», арм. matenapet (*մատենապետ*); mad(u)bar, razkār¹³ «винодел»; madudār «хранитель вина»; marzpān «марзпан», арм. marzpan (*մարզպան*); naxčīrbed «ягдмейстер», арм. naxč'irpet (*նախճարպետ*); naxvadār¹⁴ «правитель провинции,

¹⁰ В период управления парфянских аршакидов, а также в сасанидской державе до конца 3 века титул «бдеш» был в обиходе. Впоследствии вместо этого титула использовался vazurg framatār «главнокомандующий», арм. մեծ հրամանալիք (см. Nyberg H., A Manual of Pahlavi, Part 2: Glossary, Wiesbaden, 1974, 47)

¹¹ Это слово засвидетельствовано только в авроманской пергаменте – см: Nyberg H., The Pahlavi Documents from Avroman, MO (Le Monde Oriental), v. 17, 1923, 208, 209; Gignoux Ph., Glossaire des Inscriptions Pehlevies et Parthes, CII, Suppl. Series, v. I, 1972, 50.

¹² Слово, засвидетельствованное в надписи Шапура, переводится как «глава снабжения» (см. Gignoux, указ. соч., 51; Back, указ. соч., 354; Huyse Ph., Die dreisprachige Inschrift Šabuhrs I. an der Ka'ba-i Zardušt (ŠKZ), CII, Bd. 2, 1999, 149). Мы считаем более верным перевод «руководитель конюшни», имея ввиду первая компонент – grast, которая, однако, не встречается в среднеиранских текстах, ср. арм. grast (*գրաստ*) «вьючное животное».

¹³ Слова засвидетельствованы только в нисийских текстах – см: Diakonoff I., Livshits V., указ. соч., 196.

¹⁴ Слово встречается в нисийских текстах и в надписи Кали-и Джангаль – см: Diakonoff I., Livshits V., указ. соч., 198; Henning W. B., A New Parthian Inscription, JRAS (Journal of Royal Asiatic Society), pt. 1-2, 1953, 133.

губернатор», арм. naxarar (*նախարար*) «глава рода, клана»; nāhubed «родоначальник», арм. nahapet (*նահապետ*); nivēdbed «глава церемоний, церемониймейстер», арм. nvirak (*նվիրակ*, *նվիրակապետ*); framatar «командир», арм. hramanatar (*հրամանալիք*); paristagbed¹⁵ «глава слуг, начальник служащих»; pasānīg¹⁶ «телохранитель»; pādgōsbān «правитель области, провинции»; *rabēsēf /rbysyp/¹⁷ «превфект»; sāntor (s'ntwr)¹⁸ «сенатор»; šābestān «евнух, скопец», арм. շափուշին; šēgān или šay(a)gān (š[y]kn) титул (?); tagmadār¹⁹ «начальник отряда, отделения»; tagārbed «виночерпий»; арм. takarapet (*տակարպետ*); vāžārbed «глава торговли»; арм. vač'arapet (*վաշարպետ*, *վաշար-ը* «продажа»); varāzbed «главный ловчий, ягдмейстер», арм. varazpet (*վարազպետ*); zēnbed «начальник вооружения», арм. zinapet (*զինապետ*, *զեն-ը* «оружие»); zēndānīg «начальник тюрьмы», арм. zinapet (*զինապետ*, *զնդանի* «тюрьма»).

¹⁵ В армянских источниках должность зафиксирована словом spaskapet (*սպակապետ*). Кстати, это слово тоже иранское заимствование в армянском: spas- «служить», spasak > spasag «служащий», ret > ped «начальник».

¹⁶ Слово зафиксировано только в текстах из Дура-Эвропос – см. Hartmatta J., Die Parthischen Ostraka aus Dura-Europos, AAASH (Acta Antiqua Academiae Scientiarum Hungaricae. Budapest), t. 6. fasc. 1-2, 1958, 128.

¹⁷ Возможно слово взаимствование от арамейского, состоит из двух единиц: rb' «большой» и sp, syp «порог, футляр». В парфянском этому словосочетанию соответствовало бы *wuzurg i bahriž (или barhiž) - см. Huyse Ph., указ. соч., 85. М. Бак и М. Шпренглинг данное слово дают как идеограмму - RBYSYP (см. Sprengling M., Third Century Iran. Sapor and Kartir, Chicago, 1953, 8; Back M., указ. соч., 313). В пользу того, что слово заимствовалось из арамейского и не является идеограммой, гласит и факт, что в нем имеется маркер иранского косвенного падежа – у (i) (rbysyp).

¹⁸ От лат. Senator.

¹⁹ Слово засвидетельствовано только в нисийских текстах – см: Diakonoff I. M., Livshits V. A., указ. соч., 204.

В состав словарных единиц, касающиеся разных вид строений, входят: 'TRH - yōu (?) «канал» (н.т.), BB' - bar «дверь, ворота», BN' - kirtak или dastkirt (dstkrt, dstkrty) «имение, поместье», арм. dastakert (*դաշտակերտ*), BYRT' - dīž «крепость» (н.т.), BYT - по всей вероятности kadak, xānag «дом, большое семейство», QRYT' - šēn (н.т.) «селение, село», арм. šen (*շեն*), appadan «дворец», арм. aparank (*ապառանք*), katak «погреб» (н.т.), madustān «хранилище вина», pahrag «строжевой пост», арм. parhak (*պարհակ*, *պահակ*), parbār «пригород, предместье», patpar «хранилище, склад», vimand «граница».

В парфянских надписях весьма важное место занимают религиозные термины: yazd «бог», MGWŠH, mgw - mog «жрец» (н.т.), Y'BD-ytn - yazidan «жертвовать, приносить в жертву», abdēn «обычай (религиозный)», ādur, ādurān «огонь», āturšpat «глава капища», ayazan «храм» (н.т.), bōxt «спасение» (парф. bōxtan, bōz-, арм. bužel (*բուժել*) «лечить»), mogbed «главный жрец», арм. mogret (*մոգրետ*), GDH - farr «слава, удача (божественная)», арм. park (*փառ*) «слава». Среди парфянских источников только в надписи Нарсе засвидетельствовано слово frašegird «1.чудоделание, 2. реинкарнация» (с. 40), которое имеет глубокое зороастрийское осмысление. По откровению, полученному Зороастром, человечество имеет с благими божествами общее предназначение – постепенно победить зло и восстановить мир в его первоначальном, совершенном виде. Замечательный миг, когда это совершится, называется ав. Frašokərəti, что означает «Чудотворство». В армянском данное заимствованное слово звучит как *հրշակերտ*, *հրշակերլուի*. Следующее слово - y'tsrgru - вероятно yādsārīf «колдовство, чародейство», тоже встречается только в надписи Нарсе (сс. 44, 124).

В отдельную группу мы соединили абстрактные существительные: mardīf «мужество», navēd, nuvēd «благая

весть», арм. nver (*նվեր* «дар»), ni/emastīg «мольба», pāšnām «слава», padēs «обсуждение», farnaxv «судьба, успех», frayād «помощь», frazāngīf «мудрость», padgām «завет», арм. patgam (*պատգամ*), pušt «помощь», rām «мир, спокойствие», spās «обслуживание», арм. spas, spasarkum (*սպաս, սպասարկում*), ūrgāmagīf «дружба», vahegār «благодеяние», vinās «вины», арм. vinas (*Վնաս* «ущерб»), vičār «решение», арм. vč'ir (*վճռ*).

По количеству следующей сферой являются слова, которые обозначены для снаряжений, боевых припасов и явлений: astambag «угнетение», avār «грабеж, трофей», арм. avar (*ավար*); HTY' - tig(y)r «копье», арм. teg (*թէգ*), raf «атака, штурм», čēd «мишень», varādyāz «грабеж», vidāvan «стрельба из лука», арм. vtavan (*Վթավան*), zāvar «сила, армия», zanbag «битва, сражение», safsērdār «носитель шпаги», 'pystru - вероятно произносится как abēstif/b «мятежник», арм. apstamb (*ապստամբ*).

Засвидетельствовано очень малое количество слов, касающихся фауны – они все в идеограммах: HMR' xar «осел», QYN - akbrīd «мелкий рогатый скот», SWSYN - asp «коњ».

Винодельческие термины встречаются только в нисийских текстах: 'NBYN angūr «виноград», 'S - hur «уксус», HLH - witrišfak, witrifšak²⁰ «уксус», KRM' - raz «виноградник», tiršfak «кислое вино, уксус».

В этих же парфянских текстах засвидетельствовано также несколько видов зерновых: HNHN - gandum «пшеница», SMYD - ārt «мука», ŠRN, ŠRY' - yav «ячмень», ŠMŠMN – kunjēt «кунжут», арм. kunjut (*քոնյութ*).

В заключении можно подтвердить, что парфянские доманихейские тексты не отличаются изобилием словарного запаса. Однако, в изучаемых нами источниках засвидетельствованы очень ценные исконные слова, которые

²⁰ Cp. н.перс. turš «кислый».

ныне не сохранились в иранских языках. Среди них имеются ряд словарных единиц, нашедших уникальную фиксацию - они засвидетельствованы только один раз. Конечно, в текстах существуют также глаголы (большинство из них в идеограммах) и служебные слова, которых мы не коснулись.

**ՊԱՐՁԵՎԱԿԱՆ ԱՐՁԱԿՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԲԱՌԱԴՐԱՉԱՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ
ԸՆՏԻՄԱՏԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ
Թաղևու Չարչյան
(ամփոփում)**

Հոդվածը ներկայացնում է մինչմանիքեական պարթևական աղբյուրներում բառապաշտարային շերտերի քննություն, որը ներառում է բայական և հատուկ անունների ոլորտներից զատ մնացալ իմաստային խմբերը։ Խնդրու առարկա աղբյուրներում առկա են արմինիստրատիվ, տիսորուններ ներկայացնող բառեր, որոնք կազմում են բառապաշտարի մեծամասնությունը, ապա՝ շինությունների, կրոնական իրողությունների, գենքերի տերմիններ, կենդանիների անվանումներ, ինչպես նաև վերացական գոյականներ։

Պարթևական տերստերի պարունակության եզրակացությունը փաստում է վկայված լեզվական նյութի սակավություն, սակայն ուսումնասիրության ենթարկված աղբյուրներում ավանդված են այնպիսի արժեքավոր բուն իրանական բառեր, որոնք այժմ չեն պահպանվել իրանական լեզուներում։ Մրանց շարքում տեղ են գտել միայն մեկ անգամ արձանագրված բացարիկ բառային միավորներ։

**THE CLASSIFICATION OF THE LEXICON OF THE PARTHIAN SOURCES ACCORDING TO THE SEMANTIC FIELDS
Tadevos Charchyan
(summary)**

The current article relates to the research of the word baggage attested in pre-Manichaean Parthian sources. The investigation field includes the semantic groups beside the verbal forms and special names. Administrative terms, titles are attested in the sources in question which appear to be the majority of the lexicon. Afterwards, the units concerning buildings, religious appearances, weapons, animals as well abstract nouns are registered.

The conclusion of the word unit involvement in Parthian sources witnesses the lack of the linguistic material. Nevertheless, in the investigated sources there exist such remarkable original Iranian words which have not preserved in Iranian languages now. Moreover, there are exclusive word units that are attested only once.

ԱՌԿԱՅԱՑՄԱՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՊԱՐՍԿԵՐԵՆՈՒՄ

Բանալի բառեր (keywords). պարսկերեն, հայերեն, առկայացում, որոշյալություն, անորոշություն, հոդ, քերականական կարգ, ենթակարգեր

Առկայացման կարգը կարևոր տեղ է գրադեցնում անվանական քերականական կարգերի շարքում: Քերականական խմաստի տեսանկյունից առկայացումը որոշակիացնում է առարկաների հարաբերությունները հաղորդակցական իրադրության և հաղորդակցման մասնակիցների նկատմամբ, այսինքն՝ ըստ հաղորդակցվողներին հայտնի կամ անհայտ լինելու կամ հաղորդակցվողների հետ առնչության:

Գ. Զահորկյանը նշում է, որ հայերենում առկայացման քերականական կարգն ունի երկու ենթակարգ՝ որոշյալություն և ցուցա-ստացականություն¹:

Զնարանական տեսանկյունից առկայացումը դրսուրվում է հիմնականում հոդերի՝ որպես յուրահատուկ քերականական ձևույթների միջոցով: Այս համատեքստում առկայացման քերականական կարգի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս բացահայտել հոդերի (անորոշ, որոշյալ, դիմա-ստացական) ծագումը և զարգացումը, նրանց գործության մանրամասնություններն ու նրբերանգները:

Որոշյալության ենթակարգի հիմքում ընկած է բառի ընդհանուր և մասնավոր իմաստների փոխհարաբերության գաղափարը: Յուրաքանչյուր գոյական ունի ինչպես ընդհանրական, այնպես էլ մասնավոր իմաստ:

¹ Զահորկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Երևան, 1974, էջ 208-209:

Ինչպես նշում է Ս. Ասատրյանը, տվյալ հաղորդակցության ենթատեքստից պետք է պարզ և հասկանալի լինի, թե խոսքն ինչի մասին է՝ տվյալ տեսակի մասին ընդհանրապես, թե այդ տեսակի մեջ մտնող մի որևէ առանձին առարկայի մասին, ինչի համար լեզուներում կան բարիմաստի կոնկրետացման միջոցներ, ինչպես բառային, այնպես էլ քերականական միջոցներ, նախնառաջ հոդերը: Դրանց միջոցով վերացական գաղափարները ավելի կոնկրետացնում են իրենց նշանակությունը՝ «ստանում են թանձրացական բովանդակություն»²:

Հ. Պետրոսյանը նշում է, որ որոշյալի և անորոշի քերականական կարգի մասին խոսելիս նախ և առաջ նկատի է առնվում առարկայի հայտնի կամ անհայտ լինելը, վերացական կամ կոնկրետ ընդհանուր կամ մասնավոր իմաստների առկայությունը³:

Հայերենում և պարսկերենում առկա են անորոշ-որոշյալ հարաբերություններն արտահայտելու համար նախատեսված թե՝ բառային, թե՝ քերականական միջոցներ: Երկու լեզուներում էլ որպես որոշյալության և անորոշության արտահայտման հիմնական քերականական միջոց ծառայում է հետադիր, բառին կցվող հոդը: Սակայն կա մի էական տարբերություն: Եթե հայերենում այդ հոդը (ը կամ ն) որոշյալի ցուցիչն է, ապա պարսկերենում հետադիր *Փ-(-ի)* հոդը անորոշի քերականական իմաստի ցուցիչն է: Այսինքն, եթե հայերենում ցոյականի՝ այսպես կոչված զրո ձեր ցուց է տալիս անորոշության քերականական իմաստը, ապա պարսկերենում այն որոշյալության ցուցիչն է:

Ժամանակակից հայերենում որոշյալության ենթակարգի հիմնական արտահայտման միջոցները ը և ն հոդերն են:

² Ասատրյան, Ս. Ե., Ժամանակակից հայոց լեզու: Զնարանություն: Երևան, 2004, էջ 89:

³ Պետրոսյան Հ., Որոշյալի և անորոշի, անձի և իրի առումները հայերենում, Երևան, 1960, էջ 19-21:

Դրանք, որպես կանոն, օգտագործվում են միայն ուղղական, տրական և հայցական հոլովների հետ:

Որոշիչ հոդի կիրառման նման սահմանափակումը գրական արևելահայերենում նկատվում է սկսած 19-րդ դարի վերջերից: Դրանից առաջ՝ արևելահայերեն գրական լեզվի ձևավորման նախնական շրջանից մինչ նշված ժամանակահատվածը կիրառության նման սահմանափակում չի եղել, և նույն հոդերը դրվել են բոլոր հոլովների վրա⁴:

Գրաբարում ը հոդը չի եղել: Երրորդ դեմքի համար օգտագործվել է ն հոդը, և՝ ձայնավորահանգ, և՝ բաղաձայնահանգ բառերի համար: Բաղաձայնահանգ բառերում ն հոդից առաջ գաղտնավանկը ը է եղել: Ժամանակի ընթացքում ն ընկնում է, և գաղտնավանկը ը-ն վերածվում է լիարժեք ձայնավորի և սկսում է կիրավել որպես որոշիչ հոդ⁵:

Հ. Պետրոսյանը նշում է, որ որոշյալ առման իմաստավորումը կարող է արտահայտվել «բնությամբ»՝ ինքնին, կամ խորային իրադրությամբ պայմանավորված: Ինքնին առկայացած են միակի, անհատ առարկաները, օրինակ՝ արև, լուսին, երկինք, տիեզերք, ինչպես նաև հատուկ անուններով ներկայացողները⁶:

Ժամանակակից պարսկերենում, ինչպես արդեն նշեցինք, գոյականի որոշյալության հիմնական ձևարանական ցուցիչը զրո ձեն է, այլ կերպ ասած՝ պարսկերենում առանձին որոշիչ հոդ չկա:

Անհրաժեշտ է նաև նշել, որ հայերենի և պարսկերենի միջև առկա են որոշյալության ենթակարգի իմաստային ըմբռնման որոշակի տարբերություններ, կամ այլ կերպ ասած երկու լե-

գուներում այդ ենթակարգերը միմյանց իմաստաբանորեն ամբողջությամբ չեն ծածկում:

Գ. Զահուլյանը նշում է, որ զրո և ը/ն վերջավորությունների հակադրությունը նպատակ ունի արտահայտել բովանդակության պլանի անորոշություն-որոշյալություն հակադրությունը: Իր բուն արժեքով որոշիչ հոդը պետք է նշանակի հադրդակցվողների համար որոշակի, նրանց հայտնի առարկա կամ առարկաներ», ապա նաև ավելացնում է, որ «անորոշ առումը հակադրվում է որոշյալ առմանը զրո ձևույթով, բայց անորոշությունը կարող է ուժեղացվել մի բառով»⁷:

Եթե համեմատենք մի կողմից հայերենի զրո հոդով և ը/ն հոդերի միջև իմաստային հարաբերությունը, իսկ մյուս կողմից պարսկերենի *ս-(-i)* հոդի և զրո հոդի միջև իմաստային հարաբերությունը, կարող ենք նկատել որոշակի տարբերություն: Թեև պարսկերենում ընդունված է զրո հոդը համարել որոշյալության հիմնական ցուցիչ, սակայն զրո հոդով գոյականները չունեն այն ընդգծված որոշյալության իմաստավորումը, ինչ որ հայերենի ը/ն հոդ ունեցող գոյականները:

Հայերենի ը/ն հոդով և պարսկերենի զրո հոդով ձևերը իմաստաբանորեն լիակատար կերպով համընկնում են հետևյալ դեպքերում:

ա) երբ որոշյալ գոյականը ցույց է տալիս ոչ թե տվյալ որոշակի առարկան, այլ տվյալ որոշակի հասկացությունը: Պարսկերենի քերականության մեջ այդպիսի գոյականը նույնիսկ բնորոշվում է առանձին տերմինով՝ *اسم جنس / esm-e jens*, այսինքն՝ տեսակի գոյական⁸: Օրինակ՝

/ خانه باید بزرگ باشد.

Տունը պետք է մեծ լինի:

⁴ Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզվի ձևարանության հարցեր, հ. Ա, Երևան, 1970, էջ 226:

⁵ Նույն տեղում, էջ 228:

⁶ Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, Երևան, 1987, էջ 50-53:

⁷ Զահուլյան Գ., նշված աշխ., էջ 210-211:

⁸ Շրիւտ, մուսա Ջոադ, "Դստոր Զիբ Փարսի", (Վերականգնություն), Տեղական առաջնորդության կողմէ, 1364, Թիֆլիս, 1984:

J., "Dastur-e zabān-e fārsi", (virāyesh-e 3). Tehran, Asātir, 1364, pp. 218-219.

پ) երբ որոշյալ գոյականը արտահայտում է ոչ թե իրականում հայտնի առարկա, այլ միջնորդավորված և խոսքում նախապես հիշատակված առարկա, օրինակ՝

من / *Man otomobili xaridam va otomobil ruz e avâl xarâb şod.*
أتو مبيل خريدم و اتو مبيل روز اول خراب شد.

Ես մեքենա գնեցի, և առաջին օրը մեքենան փշացավ:

Այլ դեպքերում՝ որոշիչ հոդի բացակայության պայմաններում, գոյականի որոշալության իմաստը պարսկերենում առավել ցայտուն արտահայտություն է ստանում մի շարք շարահյուսական դիրքերում, ինչպես նաև կարող է արտահայտվել ինքնին՝ խոսքի ենթատերստից ելնելով⁹:

Նախ և առաջ, որոշալության իմաստավորման արտահայտման գործառույթ ստանձնում է ս / rā հետադրությունը, որը նախադասության մեջ դրվում է ուղիղ խնդրից հետո¹⁰: Օրինակ՝

موجهای سفید از دامن زمردین دریا بشتاب میگریختند، و صدقها را در پایم میریختند
و بحسرت بر می گشتند.
(به آذین، "دریا")

Moujha-ye sefid az damân-e zomorodin-e dârya beşetâb mi-gorixtand, va sadafha râ dar pâyam mi-rixtand va behesrat bar mi-gaştand. (Be'âzin, "Dârya")

Սպիտակ ալիքները ծովի զմրուխտյա կատարից շտապելով փախչում էին և բացված խեցիները լցնում էին

حسن انوری، حسن احمدی گیوی، "دستور زبان فارسی"، ویرایش چهارم، انتشارات فاطمی، 1391 Anvari H., Givi. H. A., "Dastur-e zabân-e fârsi: virâyeš-e čahârom", Entešârât-e Fâtemi, Tehrân, 1391.

¹⁰ Windfuhr G. L., "Persian Grammar: history and state of its study", Hague, 1979, pp. 34-35.

ոտքերիս վրա, ապա կարուող հետ էին վերադառնում: (Բեազին, «Ծովը»)

Բրիտանացի իրանագետ Քեյր-Թիադալը, անդրադառնալով ս / rā- ի որոշյալ իմաստ արտահայտելու հարցին, նշում է, որ նրա հիմնական խնդիրը որոշյալ առումով դրված ուղիղ խնդիրը ցույց տալին է¹¹:

Խոսակցական լեզվում, մասնավորապես Թեհրանի և Շիրազի խոսվածքներում, գոյականի որոշյալ առումն արտահայտելու համար կցվում է ս-/օ հնչյունը¹²: Օրինակ՝

پرسرو دیدم / *Pesar-o didam.* Տղային տեսա:
کتابو گرفتم / *Ketâb-o gereftam.* Գիրքը վերցրի:

Այսպանով, սակայն, պարսկերենի՝ որոշալությունն արտահայտող միջոցները չեն սահմանափակվում: Թե՛ բանավոր, թե՛ գրավոր խոսքում լայնորեն կիրառելի են որոշալության արտահայտման բառային միջոցները, ինչպիսիք են ցուցական դերանունները: Որոշյալ է նաև հատկացուցիչ-հատկացյալ կապակցության մեջ հատկացյալը: Վերջապես, ինքնին առկայացված են բոլոր հատուկ անունները¹³:

Մասնակի դեպքերում որպես որոշյալ իմաստի արտահայտման միջոց կարող է կիրառվել նաև ս / -ye(i) հետադիր մասնիկը, որն ինչպես նշեցինք, անորոշության հիմնական թերականական ցուցիչն է: ս / -ye(i) մասնիկը որոշյալ առման իմաստ արտահայտում է այն դեպքում, երբ կիրառվում է ս / ke (հայերեն՝ որ) շաղկապի հետ կապակցության կազ-

¹¹ St. Clair-Tisdall W., "Modern Persian Conversation Grammar", London, 1904, pp. 26-27.

¹² Նալբանդյան Գ., Պարսից լեզվի թերականություն, Երևան, 1980, էջ 149-150:

¹³ Phillot D. C., "Higher Persian Grammar", Calcutta University, Calcutta, 1919, pp. 130-131.

մում՝ բարդ ստորադասական նախադասության կառուցվածքի մեջ: Օրինակ

در روزهای نوچوانی اش دوربینی که پر ش خردیده بود بر می داشت و با دوستانش سوار دوچرخه فاصله ماهان-کرمان طی می کرد.

Dar ruzha-ye noujavaniaš durbini ke pedareš xaride bud bar mi-dăšt va bā dustānesh savār-e dočarxe fāsele-ye Māhān-Kermān tey mi kyard.

Պատանեկության տարիներին վերցնում էր ֆոտոխցիկը, որ հայրն էր զնել, և ընկերների հետ հեծանիվով անցնում էր Սահանից Քերման ընկած տարածությունը:

Պարսկերենի ավանդական քերականության մեջ հստակորեն արտահայտվում է այս տարբերակումը, ընդ որում՝ նույնիսկ տերմինարանական մակարդակում: Այն դեպքում, եթե *σ / -ye(i)* -ն կիրառվում է բարդ ստորադասական նախադասության կազմում, այն կոչվում է *تَكِير / ya-ye vahdat*, այսինքն՝ «միացման ց»:

Ի հակադրություն դրա, այն դեպքերում, եթե *σ / -ye(i)* -ն արտահայտում է անորոշություն, այն կոչվում է *تَكِير / ya-ye tankir*, այսինքն՝ «անորոշության ց»:

Նման տարբերակման առկայությունը լեզվաբաններին առիթ է տալիս պնդելու, որ տվյալ պարագայում գործ ունենք ծագումնաբանորեն տարբեր հոդերի հետ, որոնք ժամանակակից փուլում պարզապես դարձել են համանուները¹⁴:

Այդ տեսակետներից մեկի համաձայն *تَكِير / ya-ye tankir*-ը հանգում է հին պարսկերեն *aiva / μέκη* (*ε<μήρ. պարսկ-εν>հին պարսկ.-aiva*) թվականին: Իսկ *تَكِير / ya-ye vahdat*-ը հանգում է հին պարսկ. *aita / αἴη* (*ε<μήρ. պարսկ-ετ>հին պարսկ.-aita*) ցուցական դերանվանը¹⁵:

¹⁴ Windfuhr G. L., նշված աշխ., էջ 36.

¹⁵ Nyberg H. S., "Hilfsbuch des Pehlevi", Uppsala, 1931. pp. 68-66.

Անդրադառնալով այս հարցին՝ ոռու հայտնի իրանագետ Յ. Ռուբինսչիկը նշում է, որ խոսքը երկու տարբեր հոդերի մասին չէ, այլ մեկ հոդի, որի հիմնական դերը գոյականների իմաստային ընդգծումն է, իսկ անորոշության և որոշյալության իմաստավորումները երկրորդվում են դրան՝ կախված ընդհանուր բառային իմաստից և ենթատեքստից¹⁶:

Երկու լեզուների անորոշության հիմնական քերականական ձևույթները՝ հայերենի զրո հոդը և պարսկերենի *σ-(-i)* հոդը ևս նույնարժեք չեն:

Ինչպես նկատում է Գ. Զահուկյանը, հայերենում զրո հոդով արտահայտված անորոշության իմաստը սաստկանում է մի բարի միջոցով, որը «ձևաբանորեն տարբերակվելով մեկ թվականից, ստացել է անորոշ հոդի արժեք. այլ կերպ սասած հայերենում սկսել է զարգանալ անորոշության վերլուծական արտահայտությունը»:

Գոյականն առանց որոշիչ հոդի արտահայտում է բարի իմաստն ամենաընդհանուր և վերացական ձևով, առանց որևէ կոնկրետացման կամ սահմանափակման: Մ. Ասատրյանը նշում է, որ անզամ թանձրացական առարկաների անվանումները առանց հոդերի այնքան վերացական և ընդհանուր նշանակություն են արտահայտում, որ, ըստ Էության, հավասարվում են վերացականներին¹⁷:

Մ. Ասատրյանը նաև նշում է, որ մի և զրո հոդով անորոշների միջև հավասարության նշան դնել չի կարելի: Դրանք հավասարարժեք չեն և ունեն իմաստային տարբերություններ: Մասնավորապես, կապակցությունից դուրս անհոդ ձևերը նշանակում են տվյալ հասկացությունը, իսկ մի հոդով ձևերը՝ տվյալ հասկացության մեջ մտնող եզակի առարկան, որն անծանոթ է: Մյուս կողմից՝ մի հոդով գործածված գոյա-

¹⁶ Рубинчик Ю., Грамматика персидского языка, Москва, 2001, стр. 120-122.

¹⁷ Ասատրյան Մ., նշված աշխ., էջ 241-242:

կանը միշտ եզակի է ըմբռնվում, ինչը գալիս է մի թվականի բառային նշանակությունից¹⁸:

Կարող ենք այսպիսով նշել, որ հայերենում առկա է անորոշության իմաստային տարրեր նրբերանգներ արտահայտող առանձին թերականական միջոց, մինչդեռ պարսկերենում նման բան չկա: Ծ-(-i) հոդով անորոշի ձևերը, կախված ենթատերստից և առկայացման այլ միջոցներից, կարող են հայերեն թարգմանվել թե՝ որպես զրով հոդով գոյականներ, թե որպես մի հոդով ձևեր: Օրինակ՝

او کتابی خرد. U ketābi xarid.

Նա մի զիրք գնեց:

علم قلمی به شاگرد داد. Moalem be šägerd qalami dad.

Ուսուցիչը աշակերտին զրիչ տվեց:

Եթե գոյականը հանդես է գալիս որոշիչ-որոշյալ շարահյուսական կապակցության մեջ, անորոշ հոդը տեղափոխվում է որոշչի վրա¹⁹: Օրինակ՝

او پسر خوبی است. U pesar e xubi ast.

Նա լավ տղա է:

Նույնը տեղի է ունենում նաև մի բանի գոյականների թվարկման դեպքում, եթե անորոշ հոդը դրվում է միայն շարքի վերջին գոյականի վրա՝

كتاب و مداد و قلمی به من داد. Ketāb o medād o qalami be man dād.

Ինձ զիրք, մատիտ և զրիչ տվեց:

Պարսկերենում նույնպես առկա է անորոշության արտահայտման վերլուծական միջոց՝ Կ/ yet անորոշ հոդը, որը նաև մեկ թվականն է և կիրառվում է հատկապես այն գոյա-

կաններից առաջ, որի մասին խոսքի մեջ դեռևս հիշատակում չի եղել, և որը խոսդներին անծանոթ է:

Իրանցի լեզվաբանները նույնպես անդրադարձել են այն հարցին, թե ինչպես պետք է տարբերակում մտցնել Կ/ yet թվականի և Կ/ yet անորոշ հոդի միջև:

Այս կապակցությամբ, մասնավորապես, լեզվաբան Շարիաթը նշում է, որ եթե նախադասությունից հետո ?/Na bish?- (ոչ ավելի) հարցը ավելացնենք, և նախադասությունը թերականորեն ճիշտ մնա, ապա զործ ունենք թվականի հետ, հակառակ դեպքում՝ անորոշ հոդի²⁰:

Օրինակ՝

بک داشجو در درسخانه بود. (نہ بیش!) / Yek dānešju dar darsxāne bud. (Na bish?) – Դասասենյակում մի ուսանող կար:- Ո՞չ ավելի:

بک روز من رفتم به بازار. – Uh op ku qnawgħi għspilka:

Ինչպես տեսնում ենք, երկրորդ նախադասությունից հետո «ո՞չ ավելի» հարցը տալը թերականորեն սխալ կլինի:

Այսուղի կարող է հարց առաջանալ՝ արդյոք պարսկերենում Ծ / -ye(i)-ով և Կ/ yet -ով ձևերի միջև իմաստային հարաբերությունը նույնական է հայոց լեզվի մի և զրո հոդով անորոշների իմաստային հարաբերության հետ:

Պարսկերենում, ի տարբերություն հայերենի, այս իմաստային տարբերակումը Ծ / -ye(i)-ով և Կ/ yet -ով ձևերի միջև այդքան էլ վառ չի արտահայտված, և այն ավելի շատ վերաբերում է ոճական մակարդակին: Այս ձևերը հիմնականում փոխադարձաբար փոխարինելի են, մինչդեռ հայերենում մի հոդով և զրո հոդով ձևերը մեկը մյուսով փոխա-

¹⁸ Նույն տեղում, էջ 266-267:

¹⁹ Mace J., "Persian Grammar: for reference and revision", Routledge & Curzon, London and New York, 2003.

²⁰ شریعت، محمد جواد، "دستور زبان فارسی", (ویرایش 3). - تهران: اساطیر، 1364. J., "Dastur-e zabān-e fārsi", (virāyesh-e 3). Tehran, Asāfir, 1364, pp. 224-225.

րինկով դեպքում խոսքի մեջ էական իմաստային փոփոխություններ տեղի կրնենան:

Խոսելով հայերենում ցուցա-ստացական ենթակարգի մասին՝ Գ. Զահուկյանը նշում է, որ այն արտահայտության պլանում բնորշվում է և, դ, երբեմն կ ը, և մասնիկների (հոդերի) առկայությամբ, որոնք բովանդակության պլանում արտահայտում են ցուցա-ստացական, բուն ցուցական և դիմորոշ իմաստներ: Այս բոլոր դեպքերում հիմնականը և ծագմամբ առաջնայինը ցուցական իմաստն է. և, դ հոդերը ծագմամբ նույնն են այս, այդ (սա, դա) որոշիչ դերանունների բուն արմատական մասերի հետ: Երկրորդական ցուցական իմաստի վրա աճել է ստացական իմաստը, իսկ դիմորոշ իմաստը արյունք է անձնական (անձնանիշ) դերանունների հետ անունների համաձայնվելու՝ ես ուսուցիչս: Ըստ որում, հոդով օժտված անունը կարող է հանդես գալ և անկախաբար: Ցուցական այս երեք իմաստների առկայությունը սովորաբար կախված է անվան բնույթից և հաղորդակցվող անձերի ու հոդին ստացող անունների համապատասխանությունից, այսինքն՝ դիրքային արժեք ունի²¹:

Ս. Ասատրյանը նշում է, որ ստացականության իմաստը հայերենում համեմատաբար ուշ է ձևավորվել զրաբարում սա թույլ արտահայտություն ուներ: Հետզրաբարյան հայերենում նրա հիմնական ցուցիչներն են և և դ հոդերը: Ն հոդի մեջ ստացականությունը էական զարգացում չունեցավ, որովհետև այն հիմնականում դարձավ որոշյալության ցուցիչ, և նրա մեջ դիմայնության զարգացման հասավ: Ստացականությունը արտահայտում է պատկանելության հարաբերությունը²²:

Ս, դ, և (ը) հոդերը, ինչպես նշված է արդեն, արտահայտում են նաև ստացական իմաստ և, դրվելով գոյականների

վրա, ցույց են տալիս, թե ում է պատկանում առարկան՝ արտահայտելով իմ, քո, նրա, իր, մեր, ձեր, նրանց (իրենց) անձնական դերանունների իմաստները:

Պարսկերենին, ինչպես և հայերենին, հատուկ է ստացական հոդերի կիրառությունը: Անհրաժեշտ է սակայն նշել, որ թե՛ իրանական, թե՛ պարսկերեն լեզվին վերաբերող այլ աշխատություններում դրանք անվանվում են կապակցված կամ էնկլիտիկ դերանուններ (պարսկ. *ضمير متصال / zamāyer-e motasa*)²³:

Այս հոդերը իրենց իմաստով (ինչպես և հայերենում) համապատասխանում են անձնական դերանունների սեռական ձևին, սակայն, բացի պատկանելության իմաստից, կարող են ցույց տալ նաև այլ իմաստներ, որոնց մասին կիսուենք ստորև:

Պարսկերենի ստացական հոդերը հետևյալն են.

1-ին դ.	բ - -am	من -emān
2-րդ դ.	շ - -at (-et)	تَن - -etān
3-րդ դ.	շ - -aš (-eš)	شَن - -ešān

Հստ իրենց ծագման այս հոդերը հանգում են համապատասխան հին իրանական էնկլիտիկ դերանուններին՝

1-ին դ. բ - -am < միջ. պարսկ. -am < հին պարսկ. -maiy < հին իրանական *-mai

2-րդ դ. շ - -at (-et) < միջ. պարսկ. -at < հին պարսկ. -taiy < հին իրանական *-tai

3-րդ դ. շ - -aš (-eš) < միջ. պարսկ. -aš < հին. պարսկ. -šaiy < հին իրանական *-šai

Ստացական հոդերի հոգնակի թվի՝ من -emān; تَن - -etān; شَن - -ešān ձևերը, առաջացել են միջին իրանական

²¹ Զահուկյան Գ., նշված աշխ., էջ 212-213:

²² Ասատրյան Ս., Ժամանակակից հայոց լեզու: Զնարանություն, էջ 90-91:

լեզվադարաշրջանում՝ վերը թվարկված եզակի թվի ձևերին *շ/-առ* հոգնակերտ մասնիկի ավելացմամբ:

Ժամանակակից պարսկերենում ստացական հոդերը պատկանելիություն ցույց տալու գործառույթին զուգահեռ նաև այլ դեր ունեն: Հոդը պարսկերենում կիրառվում է ուղիղ և անուղղակի խնդրի փոխարեն և այդ կարգավիճակով հանդես է գալիս տարբեր նախդիրների կցքած: Այս կապակցություններում հաճախ տեղի են ունենում նաև տարատեսակ հնչյունափոխություններ: Օրինակ՝

Կ/ bā (hēin) - گ/ bā-hat (pēq hēin) = گ/ bā to

بارای /barāye (hawār) - باراشون /barā-šun (hrawāng hawār) = بارای آنها /barāye anhā

جلو /jelo (awqāli) - جلویم /jelo-yam (jīm awqāli) = من جلوی /jeloye man

ا/ az (-hg) - از /az-eš (hrawān hg) = او / az u

Ուղիղ և անուղղակի լրացումների դերում հանդես գալիս հոդերը կարող են նաև միանալ անմիջականորեն բայաձևերին: Օրինակ՝

گفتم /goftam-et = به تو گفتم - Ասացիք pēq:

پیداش /didam-eš = را پیدم /u ra didam - Տեսանքան:

Ամփոփելով վերոշարադրյալը կարող ենք առանձնացնել մի քանի կարևոր կետեր: Նախ, և ժամանակակից հայերենում, և ժամանակակից պարսկերենում առկայացման իմաստավորումը հիմնականում արտահայտվում է հետադիր կցական հոդերի միջոցով, որոնք, սակայն, ունեն արժեքային տարբերություն: Դրա հետ միասին, երկու լեզուներում առկա են նաև անորոշություն արտահայտող վերլուծական ձևեր:

Միևնույն ժամանակ, հայերենի և պարսկերենի որոշյալ լուրյան արտահայտման հիմնական քերականական ձևերի միջև առկա են որոշ իմաստաբանական տարբերություններ: Այստեղ հարկ է նաև հիշատակել հայտնի ոռու արևելագետ Յ. Ռուբինչյանի դիտարկում այն մասին, որ ժամանակակից

պարսկերենում հոդի կիրառությունը չունի հստակ և խիստ կանոնակարգում²⁴:

Մինչդեռ, հայերենի պարագայում, ինչպես նշում է Գ. Զահովյանը. «Ժամանակակից հայերենում հոդի գործածությունը մի կողմից՝ ավելի է ձևականացել, մյուս կողմից՝ դիրքային ավելի մեծ սահմանափակություն է ստացել»:

Ժամանակակից հայերենը և պարսկերենը ունեն հետադիր կցական ստացական հոդեր: Հիմնական նմանություններով հանդերձ, պարսկերենի ստացական հոդերի հարացույցը ունի որոշ առանձնահատկություններ՝ համեմատած հայերենի հետ:

ГРАММАТИЧЕСКАЯ КАТЕГОРИЯ АКТУАЛИЗАЦИИ В СОВРЕМЕННОМ ПЕРСИДСКОМ И АРМЯНСКОМ

**Гарик Григорян
(резюме)**

Данная статья одна из первых приводит сопоставительный-сравнительный анализ между армянским и персидскими языками. Она посвящена грамматической категории актуализации в обоих языках. Анализ основан на соответствующих примерах и пытается объяснить различия и общие черты выражения отношения определенности/неопределенности, также принадлежности существительных.

²⁴ Նույն տեղում, էջ 121:

GRAMMATICAL CATEGORY OF ACTUALIZATION IN MODERN PERSIAN AND ARMENIAN

Garik Grigoryan (summary)

The article is among the first to make a contrastive-comparative analysis between Modern Persian and Armenian languages. It is dedicated to the grammatical category of actualization of the two languages. The analysis is based on the set of respective examples and tries to elucidate differences and common features in expression of definiteness/ indefiniteness as well as possession of nouns.

Հակոբ Ավշյան

Բանալի բառեր՝ թալիշերեն, իրանական լեզվաբանություն, հնչունաբանություն, Անբարան, հյուսիսարևմտահրանական լեզուներ

Իրանական լեզուների հյուսիսարևմտյան ճյուղի մեջ մտնող թալիշերենը, ըստ հնչյունաբանական, ձևաբանականն բառապաշտարային հատկանիշների, ավանդաբար բաժանվում է երեք բարբառախմբի հյուսիսային, կենտրոնական և հարավային: Հյուսիսային թալիշերենը հիմնականում տարածված է Աղրբեջանական Հանրապետությունում՝ Ասրարայի, Լենքորանի, Լերիքի, Մասալիի շրջաններում, սակայն հյուսիսային թալիշերենի և կենտրոնական թալիշերենի միջև սահմանաբաժնը գտնվում է Իրանի տարածքում՝ Արդարիլի և Գիլանի նահանգներում՝ Անբարանից մինչև Լավանդավիլի բնակավայրը:

Փաստորեն, թալիշերենի Անբարանի բարբառը հյուսիսից թալիշերենի ամենահարավային բարբառն է, ուստի շփման մեջ լինելով թալիշերենի կենտրոնական բարբառների հետ, ինչպես նաև գոնվելով պարսկերենի ուժեղ ազդեցության ներքո, հնչյունաբանական և ձևաբանական առանձնահատկություններով որոշակիորեն տարբերվում է Արքեօնի Հանրապետության տարածքում խոսվող թալիշական խոսվածքներից: Անբարանի բարբառը տարածված է Արդարիի և Ամինանգի (օսթան) Նամինի վարչաշրջանի (Չահրեսթան) Անբարան շրջանում (բախչ)՝ Անբարան-է Օյա, Անբարան-է Սոֆլա, Ամինօն, Մինաբադ և մի քանի այլ գյուղերում:

Թալիշերենի Անբարանի բարբառի բաղաձայնային համակարգի կարևորագույն առանձնահատկություններից է առաջնալեզվային բ ձայնորդի կարգավիճակը, որը աչքի է ընկնում իր անկայունությամբ: Այս մասին է փաստում բարբառի և ժամանակակից պարսկերենի մի շարք բառամիավորների համեմատական քննությունը: համեմատելով թալիշերենի Անբարանի բարբառի և ժամանակակից պարսկերենի միևնույն հին իրանական արմատներին հանգող բառերը, կարող ենք գալ հետևյալ եզրահանգումներին:

1. Թալիշերենի Անբարանի բարբառի բ ձայնորդը կայունություն է դրսերում և պահպանվում բառակզբում, որտեղ այն հանգում է հին իրանական *r-ին, օրինակ՝ *ruž* «օր» (հմմտ. ժ. պ. *ruz*) < h. իր. *raučah-, որ «ձանապարհ» (հմմտ. ժ. պ. *rāh*) < h. իր. *rāθa-, *ruan* «յուղ» (ժ. պ. *rowyan*) < h. իր. *raugna-, *rās* «ուղիղ» (ժ. պ. *rāst*) < h. իր. *rāsta-, *rušən* «լուսավոր» (ժ. պ. *rowšan*) < h. իր. *raukšna⁻¹ և այլն:

2. Բառամիջում բ ձայնորդը համարյա միշտ ընկնում է, այն առավել ևս անկայուն է միջձայնավորային դիրքում, օրինակ՝ *roa* «կտոր, մաս» (ժ. պ. *pāre*) < h. իր. *pāra, *vite* «վազել, փախչել» (ժ. պ. *gorixtan*) < h. իր. *vi+rixta⁻², *guoni* «ծանրություն» (ժ. պ. *gerāni*)³ և այլն: Այս ձայնորդի անկայուն բնույթը արտահայտվում է ոչ միայն բնիկ թալիշական, այսինքն՝ հին իրանական արմատներին հանգող բառերում, այլև անգամ արաբական

միջնորդավորված փոխառություններում, ինչպես, օրինակ՝ *bakat* «բարիք» (ժ. պ. *barakat*)⁴

3. Այն գրեթե երբեք չի պահպանվում նաև բառավերջում, օրինակ՝ *sa* «զլուխ» (ժ. պ. *sar*) < h. իր. *sara-, *ha* «ավանակ» (ժ. պ. *xar*) < h. իր. *xara-, բա «դուռ» (ժ. պ. *dar*) < h. իր. *dvar-, չս «չորս» (ժ. պ. *čahār*), կօ «աշխատանք» (ժ. պ. *kār*) < h. իր. *kāra⁻⁵, բօ «բեռ» (ժ. պ. *bār*) < h. իր. *bāra⁻⁶ և այլն:

4. R ձայնորդը հեշտությամբ ընկնում է նաև բառամիջում *-rg, *-rm, *-rx, *-fr, -rv հնյունախմբերում, օրինակ՝ *kāg* «հավ» (հմմտ. ժ. պ. *karkas* «անգղ») < h. իր. *karka-, *māg* «մահ» (ժ. պ. *marg*) < h. իր. *marka-, *vāg* «զայլ» (ժ. պ. *gorg*) < h. իր. *vrka-, *gām* «տար, ջերմ» (ժ. պ. *garm*) < h. իր. *garma-, *nām* «փափուկ» (ժ. պ. *narm*) < h. իր. *narma-, չեմո «խորմա» (ժ. պ. *xormā*), չախ «անիվ» (ժ. պ. *čarx*), *davuš* «դերվիշ» (ժ. պ. *darviš*), բօ «ձյուն» (ժ. պ. *barf*) < h. իր. *vafra-, *havate* «վաճառել» (ժ. պ. *foruxtan*) < h. իր. *fra-uxta⁷ և այլն:

5. Բառասկզբից բացի բ ձայնորդը թալիշերենի Անբարանի բարբառում պահպանվում է -rd (< *rd), -rz (< *rz), -rs, -rš հնյունախմբերում, ընդ որում դրան նախորդող ա ձայնավորը դառնում է ա, օրինակ՝ *sārd* «սառը» (ժ. պ. *zard*), *zārd* «դեղին» (ժ. պ. *zard*), *gārd* «փոշի» (ժ.

⁴ Նույն տեղում:

⁵ Эдельман Д., Этимологический словарь иранских языков, том 4, Москва, 2011, стр. 253.

⁶ Расторгуева В., Эдельман Д., Этимологический словарь иранских языков, том 2, 2003, 96.

⁷ Основы Иранского Языкоznания, Новоиранские языки, Северо-Западная группа, Москва, 1991, стр. 118.

¹ Основы Иранского Языкоznания, Новоиранские языки, Северо-Западная группа, Москва, 1991, стр. 117.

² Նույն տեղում:

³ Миллер Б., Талышский язык, Москва, 1953, стр. 54.

պ.gard), pārda «վարազույր» (ժ. պ.parde), lārz «դող» (ժ. պ.larz) < h. իր. *rarz-⁸, նաև՝ merd (ժ. պ.mard), bərz «բարձր» < h. իր. *brz-, hərs «արջ» (ժ. պ.xers), tərš «թթու» (ժ. պ.torš) և այլն։ Մեր ուսումնախրությունների ընթացքում հավաքած բառերից մեկում rd հնյունախմբում բայնորդը պահպանվել է, այնինչ ընկել է առաջնալեզվային պայթական *d բաղաձայնը sur (sor) «տարի» (ժ. պ.sāl) < h. իր. *sard-։

Բայց հնյունախումբը հատկապես լավ է արտահայտված միշտ բայթում, ինչպես kārde «անել», hārde «ուտել», bārden «տանել», vārde «բերել», gārde «քայլել, շրջել», mārde «մահանալ» և այլն։

Թալիշերենի Անբարանի բարբառում (և թալիշական մյուս բոլոր խոսվածքներում ընդհանրապես) բայնորդի անկայուն կարգավիճակից ելնելով կարելի է հանգել մեկ այլ եզրակացության՝ ըստ երևութին թալիշերենի զարգացման ավելի վաղ փուլերում այս լեզվին հատուկ է եղել ոռտացիզմը⁹. թալիշական որոշ բառերում նկատվում է ինն իրանական *t բաղաձայնի կորուստ, այնինչ բաղաձայնը թալիշական բաղաձայնական համակարգում բավական կայուն կերպով պահպանվում է, հետևաբար կարելի է ննթադրել, որ մի բանի բառերում այն նախ դարձել է *r, ապա համաձայն այս ձայնորդի հատկանիշների՝ սղվել հատկապես բառավերջի դիրքում, օր.՝ կա «տուն» < *kar < h. իր. *kata- և այլն։

⁸ Նոյն տեղում։

⁹ Լեզվի զարգացման ընթացքում որևէ հնյունի փոխարինումը r-ով, Hadumod Bussman, Routledge dictionary of language and linguistics, London and New York, 1996, p. 1010.

СОНАНТ “R” В АНБАРАНСКОМ ДИАЛЕКТЕ ТАЛЫШСКОГО ЯЗЫКА

Акоб Авчян
(резюме)

В анбаранском диалекте талышского языка статус сонанта “г” представляет собой одну из самых важных особенностей консонантизма этого языка. Этот сонант выделяется своим крайне неустойчивым статусом и в течение исторического развития исчезает из большинства древнеиранских основ, в то время, как этот же сонант сохраняется в словах новоперсидского языка. Эта статья является попыткой анализа закономерностей развития сонанта “г” в анбаранском диалекте талышского языка по сравнению с новоперсидским языком.

THE SONANT “R” IN THE ANBARAN DIALECT OF THE TALYSH LANGUAGE

Hakob Avchyan
(summary)

In the Anbaran dialect of the Talysh language the sonant “г” presents one of the most important features of the consonant system of this language. This sonant has a very unstable status and in many cases is dropped in the words of Iranian origin while it is usually preserved in New Persian. In the article a brief attempt of summarizing the main regularities concerning the sonant “г” in Anbaran dialect of Talyshi was made in comparison with the data of the New Persian language.

ՓՅՈՒՆԻԿԻԱՅԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ Դ ՍԱՏՐԱՊՈՒԹՅԱՆ ԿԱՇՈՒՄ

Բանալի բառեր. Հերոդուսու, սատրապություն, թագավոր, քաղաքականություն, գեղեկություններ, Աքեմենյան գերություն, վարչական կացություն, փյունիկյան քաղաքներ

Հույն պատմիչ Հերոդոտոսը, անդրադառնալով Աքեմենյան Պարսկաստանի սատրապությունների թվարկմանը, գրում է, որ Փյունիկիան Սիրիայի, Պաղեստինյան կոչված Սիրիայի և Կիպրոսի հետ մտնում էր V սատրապության կազմի մեջ¹: Հերոդոտոսի և անտիկ այլ աղբյուրների տեղեկությունների ընտությունը ցույց է տալիս, որ չնայած իր փոքր տարածքին՝ Փյունիկիան ռազմական և տնտեսական առումով կարևոր նշանակություն ուներ պարսից արքունիքի համար²: Ստորև կրնենք Փյունիկիային և փյունիկեցիններին վերաբերող այն տեղեկությունները, որոնք կապված են վարչադարձական իրողությունների հետ:

Փյունիկիան և Սիրոնը հիշատակվում են դեռևս Հոմերոսի «Իլիական»-ում և «Ոդիսական»-ում³, ինչը, թերևս, խոսում է այն մասին, որ Հոմերոսն աշխարհագրական առումով Սիրոնը, այսինքն՝ Հարավային Փյունիկիան, տարբերակում է Հու-

¹ Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից (այսուհետև՝ Հերոդոտոս), թարգմ. Ս. Կրլյաշարյանի, Երևան, 1986, III, 91:

² Katzenstein J., Tyre in the Early Persian Period (539-486 B. C. E.), "The Biblical Archaeologist", vol. 42, № 1, 1979, p. 31.

³ Hom., Iliad, XXIII, 743-744; Od., IV, 84.

սիսային Փյունիկիայից, որի բնակիչները փյունիկեցիններն են: Հնարավոր է, որ Փյունիկիայի անունը հետազայում աստիճանաբար տարածվում է նաև Սիրոնի և վերջինից հարավ ընկած մերձափնյա տարածքների վրա:

Փյունիկյան քաղաքներ Գարալան, Սիրոնը, Գինզյումոտան հիշատակվում են Հեկատեոս Սիլեթացու կողմից⁴:

Փյունիկեցինները որպես դաշնակից հիշատակվում են Կրեսոսի բանակի կազմում, սակայն մ. թ. ա. 539 թվականին փյունիկեցինները նվաճվում են Կյուրոս Մեծի՝ առասպելական Նինսոսի կողմից⁵: Ս. թ. ա. 535 թվականին Փյունիկիան Սիրագետքի, Սիրիայի ու Պաղեստինի հետ մտնում է մեկ սատրապության մեջ, որը հայտնի էր Բարելոնիա և Անդրգետը (բարելոներն երեք-նարի) անվանումով⁶: Դարեհ Ա-ի վարչական վերափոխումներից հետո Անդրգետը կոչված սատրապության մեջ մտնում էին տասը կամ ավելի ենթաշրջաններ՝ Աշորդ, Ամմոն, Դամասկոս, Սոնք, Սիրոն և այլն⁷: Քսերքսեսի՝ Հունաստան արշավող բանակի կազմում փյունիկեցինները Պաղեստինի սիրիացինների հետ միասին տրամադրել էին երեք հարյուր նավ և զինված էին հետևյալ կերպ: «Իրենց զիսին դրել

⁴ Müller C., Fragmenta Historicorum Graecorum, v. I, Parisiis, 1841, fr. 255, 256, 258, 259, p. 17.

⁵ Քսենոփոն, Կյուրոպելիա, թարգմ. Ս. Կրլյաշարյանի, Երևան, 2000, էջ 5, 241; Ctesias' History of Persia, translated with commentaries by L. Llewellyn-Jones and J. Robson, London, New York, 2010, p. 115; Դիլոդրոս Սիկիլիացի, Պատմական գրադարան (այսուհետև՝ Դիլոդրոս Սիկիլիացի), թարգմ. թասգրից, առաջարան և ծանոթագրություններ Ս. Կրլյաշարյանի, Երևան, 1985, էջ 17; Katzenstein J., Tyre in the Early Persian Period, p. 26; Դանձաև Մ. Ա., Պոլիտիկական պատմությունների հայտնում է, որ փյունիկեցինները հոժարակամ են ենթարկվել պարսիկներին (Հերոդոտոս, III, 19):

⁶ Դանձաև Մ., Մեսոպոտամիա և Իրան վ VII-IV մմ. դ. հ. թ.: Социальные институты и идеология, Санкт-Петербург, 2009, с. 54, 65.

⁷ Richard S., Syria-Palestine in the Persian Period, "Near Eastern Archaeology", Winona Lake, Indiana, Eisenbrauns, 2003, p. 400.

Էին սահավարտ, պատրաստված գրեթե ըստ հելենական ձևի նրանք կրում էին վուշյա լանջապանակներ, առանց շրջանակի վահաններ և տեղեր»⁸: Ընդ որում, Հերոդոտոսի տեղեկություններից պարզվում է, որ փյունիկյան նավերը թվով ամենաշատն էին ու ամենալավը, իսկ փյունիկեցիների մեջ լավագույն նավերը տրամադրել էին սիրոնցիները⁹: Պարզվում է նաև, որ պարսից նավատրում փյունիկեցիներն ունեին իրենց զորավարները, և Հերոդոտոսը հիշատակում է սիրոնցի Տետրամեստոսին, տյուրոսից Մատտենին, արադոսից Մերբալոսին¹⁰, այսինքն՝ հույն պատմիչը Սիրոնը, Տյուրոսը և Արադոսը¹¹ համարում է փյունիկյան ամենահայտնի և առաջնակարգ քաղաքները, որոնք, ինչպես նաև այլ աղբյուրներում հայտնի փյունիկյան քաղաքները, ինքնավար էին հունական պոլիսների նման և կառավարվում էին ժառանգական քաղաքորների կողմից¹²: Սիրոնի, Տյուրոսի և Արադոսի հիշատակումը թույլ է տալիս ենթադրել, որ Փյունիկիան աշխարհագրական առումով բաժանված էր այս երեք քաղաքների միջև՝ Արադոսը հա-

⁸ Հերոդոտոս, VII, 89:

⁹ Նոյն տեղում, VII, 96:

¹⁰ Նոյն տեղում, VII, 98:

¹¹ Սիրոնը գտնվել է Բեյրութից 43 կմ դեպի հարավ, Տյուրոսը՝ Սիրոնից 40 կմ դեպի հարավ (տե՛ս Bryce T., *The Routledge Handbook of the Peoples and Places of Ancient Western Asia*, London, New York, 2009, pp. 649, 727): Արադոսը, ըստ Ստրաբոնի, կառուցել էլ սիրոնցի արտրյալները (տե՛ս Страбон, *География в 17 книгах* (այսուհետև՝ Страбон), пер., статья и комм. Г. А. Стратановского, Ленинград, 1964, с. 698):

¹² Katzenstein J., *Tyre in the Early Persian Period*, p. 32; Elayi J., *The Phoenician Cities in the Persian Period*, "Journal of the Ancient Near Eastern Society", vol. 12, 1980, pp. 16, 19. Տյուրոսը մ.թ. մոտ 820 թվականին Կիտինուում հիմնադրում է իր զարութը՝ կղզու առևտուրը վերահսկելու համար (տե՛ս Noonan J. B., *Did Nehemiah Own Tyrian Goods? Trade between Judea and Phoenicia during the Achaemenid Period*, "Journal of Biblical Literature", 130, № 2, 2011, p. 284):

մարելով Հյուսիսային Փյունիկիայի, Սիրոնը՝ Կենտրոնական Փյունիկիայի, Տյուրոսը՝ Հարավային Փյունիկիայի կենտրոնները:

Համաձայն Հերոդոտոսի՝ փյունիկեցիները զայթել են Կարմիր ծովի¹³, Պարսից ծոցի ափերից: Հերոդոտոսի այս տեղեկությունը կարելի է համեմատել Դիոնիսիոս Սիրիկենացու այն հաղորդման հետ, որ Կարմիր ծովի շրջաններից մեկը հայտնի է եղել Փյունիկեց անունով, իսկ Տյուրոս և Արադոս քաղաքները, ըստ Անդրոսթենես Թատոցու, Պարսից ծովի ափին գտնվող նույնանուն քաղաքների գաղութներն են¹⁴:

Պատմական Փյունիկիան տեղական լեզվում հայտնի է եղել Քանաան անունով¹⁵, ինչի մասին (Xvā) հիշատակում է նաև Հելատես Սիրիկացին¹⁶, տալով անվան աստվածաշնչան ձևը: Վերջինս տարածվում էր հյուսիսում Արադոսի (Արվադ) և հարավում Դորայի (Կարմել լեռան հետևում) միջև¹⁷: Փյունիկիա անվանումը, ըստ Էլայյան, ունի հունական ծագում. անվան հիմքում *Phoenix* «մուգ կարմիր», «կարմրավուն», «ծիրանագույն» բառն է¹⁸, ինչը նշանակել է «ծիրանի ներկի երկիր», բանի որ Փյունիկիան հոչակված էր ծիրանի գործվածքներով¹⁹: Թուկիդիդեսը նույնանուն նավահանգիստ հիշատակում է Եր-

¹³ Հերոդոտոս, I, 1; VII, 89:

¹⁴ A Commentary on Herodotus Books I-IV, ed. by O. Murray, A. Moreno, Oxford University Press. Inc., New York, 2007, p. 75.

¹⁵ Elayi J., *The Phoenician Cities in the Persian Period*, p. 14.

¹⁶ Müller C., *Fragmenta Historicorum Graecorum*, v. I, fr. 254, p. 17.

¹⁷ A Commentary on Herodotus Books I-IV, p. 75. Կարմել լեռ հայտնի էր Բասիլ պաշտամունքով (տե՛ս Elayi J., *Studies in Phoenician Geography During the Persian Period*, "Journal of Near Eastern Studies", vol. 41, 1982, p. 97). Հմտ. Զևսի սրբազն լեռ Կարմելը (տե՛ս Скилак Кариандский, *Перипл обитаемого моря* (այսուհետև՝ Скилак Кариандский), *Вестник древней истории*, 1988, № 2, с. 262):

¹⁸ A Commentary on Herodotus Books I-IV, p. 75; Bryce T., Նշանական էջ 555:

¹⁹ Дьяконов И., *Языки древней Передней Азии*, Москва, 1967, с. 329, 361; Шифман И. Ш., *Финикийский язык*, Москва, 2010, с. 7.

յութրեռում²⁰. Հին հրեաները քանանցիներ էին անվանում փյունիկեցիներին և Պաղեստինի նախահրեական բնակչությանը: Քանանցիներն իրենց անվանում էին այս կամ այն համայնքի անունով (սիրոնցի, տյուրոսցի և այլն), սակայն «քանանցի» եզրը նույնպես տարածված էր նրանց մեջ որպես ինքնանուն: Հրեաները բոլոր փյունիկեցիներին անվանում էին սիրոնցիներ²¹.

Հերոդոտոսը գրում է, որ փյունիկեցիները և սիրիացիները ապրում են Պաղեստինում²², ինչը խոսում է այն մասին, որ Փյունիկիան ևս աշխարհագրական առումով ընդգրկել է Պաղեստինը կամ գոնե վերօինիս ծովամերձ շրջանները: Այս առումով կարելի է թերևս համեմատել Պլուտարքոսի այն տեղեկությունը, որ Ալեքսանդրը Եգիպտոսից վերադառնում է Փյունիկիա²³, եթե, անկասկած, մակեդոնական թագավորի երթուղին անցել էր Պաղեստինով մինչև Փյունիկիա հասնելը: Հավանաբար Արիանոսը նույնպես նկատի ունի այս հանգամանքը, եթե Գագան համարում է Փյունիկիայից Եգիպտոս տանող ճանապարհի վերջին քաղաքը և հետո գրում, որ Ալեքսանդրը Մեմֆիսից գնում է Փյունիկիա²⁴: Ստրաբոնը Փյունիկիայի սահմանը հյուսիսում համարում է Օքոնդիա քաղաքը՝ Էլեվթերուս գետից հարավ, իսկ հարավում՝ Պելուսիան²⁵, փաստորեն Գագանից կլասիկ դեպքի հարավ:

²⁰ Фукидид, История, пер. Ф. Г. Мищенко, Москва, 2012, с. 415.

²¹ Дьяконов И., Նշվ. աշխ., էջ 361:

²² Հերոդոտոս, II, 104: Ըստիարապես, նկատենք նաև, որ Փյունիկիան առևտրական սերտ կապեր ուներ Ներքին Սիրիայի քաղաքների, օրինակ՝ Երուսաղեմի հետ (ուժ ու Noonan J. B., Did Nehemiah Own Tyrian Goods?, pp. 281-298):

²³ Плутарх, Избранные жизнеописания (այսուհետև՝ Плутарх), т. II, М., 1987, с. 390.

²⁴ Արիանոս, Ալեքսանդրի արշավակը (այսուհետև՝ Արիանոս), - Ալեքսանդր Մակեդոնացի, Երևան, 1987, էջ 86, 94: Հմմտ. Страбон, с. 694.

²⁵ Страбон, с. 700, 703.

Հերոդոտոսը նաև հայտնում է, որ, ըստ Հոմերոսի, Ալեքսանդրը Նեղինեի հետ հասել է Փյունիկիայի Սիրոն քաղաքը: Հոյն պատմիչը հաղորդում է, որ Սիրիան սահմանակից է Եգիպտոսին, իսկ փյունիկեցիները, որոնց պատկանում է Սիրոնը, բնակվում են Սիրիայում²⁶: Վերջին տեղեկության մեջ Սիրիան նույնանում է Պաղեստինյան կոչված Սիրիային, իսկ Սիրոնի տեղադրությունը Սիրիայում կրկին խոսում է այն մասին, որ տվյալ դեպքում Սիրիան կրկին Պաղեստինյան կոչված Սիրիան է, որի ծովամերձ շրջանն էլ կոչվել է Փյունիկիա: Սկիլարս Կարիանդացին գրում է, որ Սիրիայի ծովամերձ շրջաններում բնակվում են փյունիկեցիները²⁷:

Հերոդոտոսի տեղեկություններից ակնհայտ է դառնում, որ մ.թ.ա. V դարում Սիրոնը փյունիկյան քաղաքների մեջ գլխավոր և առավել հայտնի քաղաքն է եղել: Սիրոնը պատմիչի կողմից հիշատակվում է քազմից²⁸: Դատելով պատմիչի տեղեկություններից՝ նշանակությամբ երկրորդ փյունիկյան քաղաքը Տյուրոսն էր, որի մասին անտիկ հեղինակը բազմաթիվ մանրամասներ է հաղորդում²⁹: Տյուրոսիները բնակություն էին հաստատել Մեմֆիսի մոտ³⁰, և նրանց անունով այդ վայրը կոչվել է տյուրոսցիների բանակատեղի: Ըստիարապես փյունիկեցիները Աֆրիկայի հյուսիսային ափամերձ շրջաններում՝ Լիբիայում, հոլիների հետ համարվում էին եկվորներ³¹: Մյուս կողմից էլ պարսիկները կատարում էին տարբեր ժողովուրդների ու ցեղերի վերաբնակեցումներ, և փյունիկեցիները, ըստ հոնիացիների մոտ տարածված լուրերի, պետք է հաստատվեին Հոնիայում, իսկ հոնիացիները՝ Փյունիկայում. այսպէս է

²⁶ Հերոդոտոս, II, 116:

²⁷ Müller C., Geographi Graeci Minores, v. I, Parisiis, 1855, fr. 104, p. 78; Скиլак Кариандский, с. 262.

²⁸ Հերոդոտոս, II, 161; III, 136; VII, 44:

²⁹ Նոյն տեղում, I, 2; II, 44:

³⁰ Noonan J. B., Did Nehemiah Own Tyrian Goods?, p. 285.

³¹ Հերոդոտոս, II, 112; IV, 197:

արդարացնում Միջեւսի տիրան Արխատազորասը իր հակապարսկական ապստամբությունը³²: Փյունիկեցիները, հիմնականում ռազմիկներ, վերաբնակեցվել էին, օրինակ, Նիպառուի մոտ, և նրանց բնակավայրերը կրում էին հայտնի փյունիկյան քաղաքների անունները՝ Էշկալլունո (Ասկալոն), Քաղեշ, Տյուրոս, Միջոնի³³: Միջոնի և Տյուրոսի կարևորությունը պարսից արքունիքի համար երևում է Հերոդոտոսի այն տեղեկությունից, որ Քսերքսեսի կողքին, ըստ շնորհված կարգի, բազմաթիվ նավերի հրամանատարների հետ առաջնորդ նստում է Միջոնի, հետո՝ Տյուրոսի թագավորը³⁴: Այս տեղեկությունից ակնհայտ է, որ Աքեմենյան պետության համար փյունիկյան նավատորմն ունեցել է առաջնային նշանակություն, իսկ վերջինիս կազմում էլ Միջոնը և Տյուրոսը եղել են փյունիկյան այն քաղաքները, որոնց նավերն առանձնացել են այդ նավատորմում: Հերոդոտոսը նույնիսկ Քսերքսեսի զահակալումից շատ առաջ հայտնում է, որ Կամբյուսեի նավատորմն ամբողջապես կազմված էր փյունիկեցիներից³⁵:

Հայտնի է, որ Միջոնի թագավոր Էշմունազար Բ-ն (մ.թ.ա. 465-451³⁶), համաձայն իր արձանագրության, սեփական ծառայությունների համար պարսից արքայից որպես պարզ ստացել էր Դորք և Յաֆֆան՝ Պլինիոս Ավագի հիշատակած փյունիկյան Հիոպապեն³⁷:

³² Նույն տեղում, VI, 3:

³³ Дандамаев М., Месопотамия и Иран в VII-IV вв. до н. э., с. 365; Նույնի՝ Ахеменидская империя: социально-административное устройство и культурные достижения, Санкт-Петербург, 2013, с. 269.

³⁴ Հերոդոտոս, VIII, 67:

³⁵ Նույն տեղում, III, 19:

³⁶ The Cambridge Ancient History, vol. VI, Cambridge University Press, 1994, p. 323.

³⁷ The Cambridge Ancient History, vol. IV, Cambridge University Press, 1988, p. 144; Noonan J. B., Did Nehemiah Own Tyrian Goods?, pp. 286-287.

Սկիլարս Կարիանդացին բավականին մանրամասն տեղեկություններ է հաղորդում Փյունիկայի մասին: Սկիլարսի տեղեկությունների քարտեզագրումը ցույց է տալիս, որ Փյունիկայի հյուսիսային սահմանը սկսվել է Արարոս կղզուց և նախանգաստից, որից հետո արդեն Տրիպոլիսն էր: Պատմիչը հիշատակում է նաև Միջոնը, Տյուրոսը, «Աստծո Դեմք» լեռը Տրիպոլիսի և Բիբրոսի միջև, Բերիթոս, Բորինոս, Պորփյուրեն քաղաքները, սիդոնցիների քաղաք Օրինտոնը, Լեռնտոնը, այուրոսիների քաղաք Դորք³⁸, Հիոպապե քաղաքը (սա նույնպես պատկանել է Միջոնին³⁹), տյուրոսցիների քաղաք Ասկալոնը⁴⁰, որտեղ Կելեսիրիայի սահմանն է⁴¹: Սկիլարս Կարիանդացին,

³⁸ Դորք, Ասկալոնի Միջոնին և Տյուրոսին պատկանելու մասին տես՝ Elayi J., An Updated Chronology of the Reigns of Phoenician Kings during the Persian Period (539-333 BCE), “Transeuphratène”, 32, 2006, pp. 11-43.

³⁹ Elayi J., Studies in Phoenician Geography During the Persian Period, p. 102.

⁴⁰ Հերոդոտոսի տեղեկությունը նոյնպես բույլ է տալիս ենթադրել, որ պաղեստինյան քաղաք Ասկալոնը պատկանել է փյունիկեցիներին, այսինքն՝ Փյունիկայի մեջ է եղել (I, 105):

⁴¹ Müller C., Geographi Graeci Minores, v. I, fr. 104, pp. 78-79; Скиլак Кариандский, с. 262. Տրիպոլիս՝ արքայական արքունիքի Կախիա-Սայալլատան (տես՝ Elayi J., Studies in Phoenician Geography During the Persian Period, p. 91), որը բաժանված էր Տյուրոսի, Արարոսի և Միջոնի միջև (տես՝ Страбон, с. 699), տեղադրվում է Բեյրութից 65 կմ դեպի հյուսիս, Արաբացան՝ Ասրաֆանը՝ Բեյրութից 50 կմ դեպի հարավ. Դորքն՝ Հայֆայից 21 կմ դեպի հարավ, Հիոպապեն Յաֆֆան է, Ասկալոնը՝ Թել-Ավիվից 63 կմ դեպի հարավ (տես՝ Bryce T., Նշան. աշխ., էջ 76, 200, 349, 621, 713). Պորփյուրենը նոյնանում է Խան-Ների Յունասին (տես՝ Dictionary of Greek and Roman Geography, ed. by W. Smith, v. II, Boston, 1857, p. 660), Օրինտոն՝ արքայական աղբյուրների Բիբ-Սուփուրին (տես՝ Elayi J., Studies in Phoenician Geography During the Persian Period, p. 95), թերևս գտնվել է Կեսարիայից հյուսիս և նոյնացվել է Թել-Լ-Բուրաքին, Թարսունգոլային կամ էլ Աղլանին, Լեռնտոնը՝ Լեռնտիսին (տես՝ Dictionary of Greek and Roman Geography, v. II, pp. 158, 494), Եկրիպառը՝ Եվ-Զիրին (տես՝ Dictionary of Greek and Roman Geography, ed. by W. Smith, v. I, Boston, 1854, p. 802), Ալան՝ Պոլոմայիսին

Ասկալոնը նշելով Տյուրոսի քաղաքը, փաստորեն, Փյունիկիան համարում է Կելեսիրիա այն առումով, որ ծովամերձ շրջանները նրա համար ամբողջությամբ Փյունիկիայի մեջ են՝ Պաղեստինյան Սիրիան և նույնացնելով Կելեսիրիայի հետ:

Դիմիոս Ավագը Փյունիկիայի հարավային սահմանը համարում է Կրոկոդիլոն քաղաքը, Նահր Զերբան Պաղեստինյան Կեսարիայի և Պտղումայիսի միջև, իսկ հյուսիսայինը՝ Արադոս քաղաքը⁴²: Նույն սահմանները նշում են նաև Պտղումեռար. հարավում Քորսեռուս գետը՝ Դորայի և Կեսարիայի միջև, հյուսիսում՝ Էլեվթերուս գետը⁴³, Արադոսից հարավ, որի մասին Պտղումեռար չի հիշատակում:

Անտիկ աղբյուրներում հիշատակված Սուկաս, Գարալա (ներկայիս Զերելեհի մոտ), Սիգոն քաղաքները Արադոսից հյուսիս համարվել են Փյունիկիայի ազդեցության սահմաններում⁴⁴: Սասնազիտական գրականության մեջ Քսենոփոնի հիշատակած Մյուրիանդոս քաղաքը, որը բնակեցված էր փյունիկեցիներով⁴⁵, համարվել է Փյունիկիայի ծայր հյուսիսային քաղաքը⁴⁶: Նկատենք, որ ըստ Ակիլարս Կարիանդացու և Հերոդո-

(տե՛ս Страбон, с. 701), Պալայտուրոսը, հավանաբար, պատկանել է Տյուրոսին և նույնանում է Ուշուին (տե՛ս Elayi J., Studies in Phoenician Geography During the Persian Period, p. 96):

⁴² Pliny, Natural History, vol. II, with an English translation by H. Rackham, Cambridge, Massachusetts, London, 1947, Loeb Classical Library, V, XVII, pp. 278, 280; Dictionary of Greek and Roman Geography, v. I, p. 708.

⁴³ Claudio Ptolemaei Geographia, ed. C. F. A. Noebe, t. II, Lipsiae, 1845, V, 15, 4, pp. 58-59; Dictionary of Greek and Roman Geography, v. I, p. 613. Էլեվթերուս գետը նույնանում է Նահր Քիրերին (տե՛ս Dictionary of Greek and Roman Geography, v. II, p. 497):

⁴⁴ Elayi J., Studies in Phoenician Geography During the Persian Period, pp. 105-108. Որոշ ուսումնասիրողներ Տարսուսը համարում են Արադոսի զադուքը (նոյն տեղում, էջ 107):

⁴⁵ Քսենոփոն, Անարասիս, քարզ. Ա. Կրլյաշարյանի, Երևան, 1970, էջ 18:

⁴⁶ Elayi J., Studies in Phoenician Geography During the Persian Period, p. 107.

տոսի՝ Մյուրիանդոսը մ.թ.ա. VI դարում գտնվել է Կիլիկիայի կազմում⁴⁷, և Քսենոփոնի ժամանակ քաղաքն արդեն Սիրիայի կազմում է հիշատակվում: Ելնելով այն իրողուրությունից, որ ամբողջ Փյունիկիան և Պաղեստինը համարվել են Սիրիայի մասերը, կարող ենք եզրակացնել, որ համաձայն Քսենոփոնի՝ Մյուրիանդոսը գտնվել է Փյունիկիայում՝ աշխարհագրական առումով նույնացնելով Փյունիկիան և Սիրիան: Ընդ որում, նշենք, որ Ակիլարս Կարիանդացին Սիրիայի ծովամերձ ափերն ամբողջությամբ համարում է Փյունիկիա⁴⁸: Մյուրիանդոս քաղաքի անունը, անկասկած, կապվում է Հերոդոտոսի հիշատակած Մյուրիանդինյան ծոցի հետ⁴⁹, որը նույնանում է Խսոսի ծոցին: Հավանական է մտածել, որ նշված ծոցը անունը ստացել է հենց Մյուրիանդոս քաղաքի անունից: Հերոդոտուր Մյուրիանդինյան ծոցը չի կապում Փյունիկիայի հետ, և ըստ Հերոդոտոսի՝ Փյունիկիան սկսվել է Մյուրիանդինյան ծոցից հարավ, ինչը Քսենոփոնի ժամանակ արդեն հասնում էր մինչև Մյուրիանդոս:

Փյունիկիայի մասին կարևոր տեղեկություններ են հաղորդում Արիանոսը և Օուփոսը: Արիանոսը հիշատակում է փյունիկյան Տրիպոլիս, Արադոս, Սարաթոս⁵⁰, Բիբլոս⁵¹, Սիրոն, Տյուրոս քաղաքները, որոնցից վերջինը համար դիմադրություն է ցույց տալիս Ալեքսանդրին⁵²: Դատելով Արիանոսի տեղեկություններից՝ կարելի է եզրակացնել, որ Փյունիկիան հյուսիսում սկսվել է Արադոս քաղաքից: Հետաքրքիր է, որ անտիկ

⁴⁷ Скилак Кариандский, с. 262; Հերոդոտոս, III, 91:

⁴⁸ Скилак Кариандский, с. 262.

⁴⁹ Հերոդոտոս, IV, 38:

⁵⁰ Ներկայումս Ամրիս (տե՛ս Elayi J., The Phoenician Cities in the Achaemenid Period: Remarks on the Present State and Prospects of Research, "Achaemenid History", IV, "Centre and Periphery", Leiden, 1990, p. 228):

⁵¹ Բիբլոսը գտնվել է Բիբլոսից՝ ներկայիս Բեյրութից 60 կմ դեպի հյուսիս (տե՛ս Bryce T., Նշվ. աշխ., էջ 137):

⁵² Արիանոս, էջ 70, 71, 74, 79, 85:

հեղինակը Արադոսի ենթակայության տակ է համարում Սարաթոսը (ներկայում՝ Ամրիթ), Սիզոնը (ներկայում՝ Քալաք Սահիյուն), Սարիամմեն (ներկայում՝ Սարիամին)⁵³ և այլ անանուն վայրեր⁵⁴: Գրեթե նույնը հաղորդում է Ռուփոսը, որ Արադոսի թագավոր Ստրատոնեսն իշխում էր կղզու և մերձովյան տարածքների վրա⁵⁵: Տյուրոսից հարավ Արիանոսը փյունիկյան այլ քաղաքներ չի հիշատակում և անմիջապես խոսում է Պաղեստինյան Սիրիայում գտնվող Գազա նշանավոր քաղաքի մասին⁵⁶, առանց Փյունիկյայի և Պաղեստինյան Սիրիայի սահմանները նշելու: Հնագիտական նյութը ցույց է տալիս, որ փյունիկեցիները հաստատվել են նաև Գազայում, որտեղ հայտնաբերված մ. թ. ա. V-IV դարերի դրամները գրված են փյունիկերեն⁵⁷:

Ռուփոսը ևս, նկարագրելով Ալեքսանդր Սակեդոնացու արշավանքը, հիշատակում է Արադոսը, Սարաթոսը, Բիբլոսը, Սիրոնը, Տրիպոլիսը, Տյուրոսը⁵⁸: Վերջին քաղաքը Ռուփոսը համարում է Փյունիկյայի ամենահայտնի քաղաքը, ինչը խոսում է այն մասին, որ Սիրոնն իր առաջնայնությունը գիծել էր Տյուրոսին: Տյուրոս քաղաքը շրջակայրով՝ որպես առանձին վարչական միավոր, Ալեքսանդրը հանձնում է Փիլոտեսի կառավարմանը⁵⁹: Կարծում ենք, որ այս վերջին տեղեկությունը թույլ է տալիս ենթադրել, որ Տյուրոսի կառավարումը հավա-

արագոր էր ամբողջ Փյունիկյան վարչական առումով դեկա- ֆարելուն: Ալեքսանդրի մահից հետո Սիրիան և Փյունիկյան բաժին են ընկնում Լաումեդոնսոսին⁶⁰:

Համաձայն Դիոդորոս Սիկիլիացու՝ Տյուրոսը Արտաքսերք- նես Օրոսի ժամանակ Փյունիկյայի ամենանշանավոր քա- ղաքն էր, չնայած Սիրոնը մնում էր սատրապական նատա- վայր, որտեղ կար նաև արքայական պարտեզ (paradeisos)⁶¹: Պատմիչը գրում է, որ Կիպրոսի ապստամբ թագավոր Եվագո- րոսը Փյունիկյայում տիրում էր Տյուրոսին և մի շարք այլ քա- ղաքների⁶²: Դիոդորոս Սիկիլիացին նույնպես հայտնում է, որ Ալեքսանդր Սակեդոնացին Տյուրոսը գրավում է մեծ ջանքերի շնորհիկ⁶³:

Փյունիկյան քաղաքների մեջ առանձնահատուկ նշանա- կություն է ունեցել Տրիպոլիսը, որտեղ փյունիկյան քաղաքնե- րը գումարում էին ժողովներ կարերագոյն հարցերը քննար- կելու և համատեղ ընդունելու համար⁶⁴: Մ. թ. ա. 349 թվակա- նին Տրիպոլիսում սկսվում է հակապարսկական ապստամ- բությունը, որը շուտով ընդգրկում է ամբողջ Փյունիկյան և դուրս գալիս վերջինիս սահմաններից⁶⁵: Մ. թ. ա. 344 թվակա- նին ապստամբության ճնշումից հետո Փյունիկյան Կիլիկյայի հետ միավորվում է մեկ սատրապության մեջ՝ Մազարի գլխա- վորությամբ, իսկ Սիրոնում նշանակվում է պարսիկ կառավա-

⁵³ Elayi J., Studies in Phoenician Geography During the Persian Period, pp. 88-89. Այս հոդվածում տես նաև Ստրատոնի և այլ հեղինակների համապա- տախան տեղեկությունների քննությունը, որոնք վերաբերում են հետաք- մենյան ժամանակաշրջանին:

⁵⁴ Arrian, Anabasis, vol. I, with an English translation by E. Iliff Robson, London, Cambridge, Massachusetts, 1967, Loeb Classical Library, II, 13, 7, p. 174.

⁵⁵ Ռուփոս, Ալեքսանդր Սակեդոնացու պատմությունը (այսուհետև՝ Ռուփոս), -Ալեքսանդր Սակեդոնացի, Երևան, 1987, էջ 310:

⁵⁶ Արիանոս, էջ 86:

⁵⁷ Elayi J., Studies in Phoenician Geography During the Persian Period, p. 104.

⁵⁸ Ռուփոս, էջ 312-313, 315, 339:

⁵⁹ Նոյն տեղում, էջ 328:

⁶⁰ Նոյն տեղում, էջ 596:

⁶¹ Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, vol. III, Lipsiae, 1826, XVI,

42, 43, 45, pp. 45-49.

⁶² Դիոդորոս Սիկիլիացի, էջ 71: Կիպրոսում նոյնպես կային փյունիկյան քաղաքներ, օրինակ՝ Կիտինը, Լափետոսը (տես՝ Elayi J., The Phoenician Cities in the Persian Period, p. 16; նոյնի՛ Studies in Phoenician Geography During the Persian Period, p. 86; Bryce T., Ancient Syria, Oxford University Press, 2014, p. 149):

⁶³ Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, vol. III, XVII, 40-46, pp. 142-150. Տես՝ նաև Պլուտարք, c. 385-386.

⁶⁴ Дандамаев М. А., Политическая история Ахеменидской державы, с. 250.

⁶⁵ Նոյն տեղում:

րիչ⁶⁶: Մազայը Սիրոնում ուներ իր սեփական դրամահատարանը⁶⁷, իսկ նրա դրամի վրա գրված է. «Մազայ, Աբար Նահարայի և Հիլիկի կառավարիչ»⁶⁸:

Մ. թ. ա. V դարի վերջին Փյունիկիան դեկավարում էր պարսկաց սատրապ Աքրոկոմասը⁶⁹, որը հետագայում՝ մ. թ. ա. 380 թվականին, Փյունիկիան և Պաղեստինը մաքրում է եզիպտացիներից և կիապրոցիներից⁷⁰: Սակայն Քսենոփոնն իր գրքի վերջում գրում է, որ Փյունիկիայի ու Արարիայի սատրապն էր Դեռնեսը, Սիրիայինը և Ասայուրիայինը՝ Բելեայուսը⁷¹: Դեռնեսը և Բելեայուսն ավելի ճիշտ հյուպարքուներ էին: Քսենոփոնի այն նշումը, թե Աքրոկոմասը գալիս է Եփրատի կողմից⁷², թերևս ցոյց է տալիս, որ վերջինս ամրող V սատրապության կառավարիչն էր: Հովհեփոս Փլավիոսը նույնպես տեղյակ է Անդրգետք սատրապության մասին⁷³:

Եզիպտոսի փարավոն Տարոսին (մ. թ. ա. 361-359 թթ.) հաշողվում է գրավել գրեթե ամրող Պաղեստինը և Փյունիկիան, սակայն նրա հաջողությունը կարճ է տևում⁷⁴: Աքեմենյան պե-

⁶⁶ Նոյն տեղում, էջ 251; Դանդամաև Մ. Ա., Լукоնին Վ. Ղ., Կուլտура и экономика древнего Ирана, Москва, 1980, с. 117; Elayi J., The Phoenician Cities in the Persian Period, p. 27.

⁶⁷ Elayi J., An Updated Chronology of the Reigns of Phoenician Kings during the Persian Period (539-333 BCE), pp. 11-43.

⁶⁸ Olmstead A. T., History of the Persian Empire, Third Impression, Chicago, 1960, p. 437.

⁶⁹ Քսենոփոն, Անարքասի, էջ 17, 26:

⁷⁰ The Cambridge History of Judaism, vol. I, Cambridge University Press, 1984, p. 76.

⁷¹ Նոյն տեղում, էջ 197:

⁷² Նոյն տեղում, էջ 16:

⁷³ Josephus, The Jewish Antiquities, with an English translation by R. Marcus, vol. VI, Cambridge, Massachusetts, London, 1958, Loeb Classical Library, XI, 89, p. 356.

⁷⁴ Olmstead A. T., Նշվ. աշխ., էջ 419; The Cambridge History of Judaism, p. 76. Ավելի վաղ՝ մ. թ. ա. 386 թվականին, եզիպտա-արարական դաշինքը օգնել էր Աքեմենյանների դեմ ապստամբած Կիսրոսի քաջավոր Եփագորա-

տության կործանումից հետո Ալեքսանդր Մակեդոնացին Փյունիկիան, Սիրիան և Կիլիկիան՝ որպես մեկ վարչական միավոր, հանձնում է Մենետոսին⁷⁵, փաստորեն հիմնականում պահպանելով Աքեմենյանների օրոք գոյություն ունեցած վարչական բաժանումը:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ փյունիկյան քաղաքներն իրական դաշնություն չեն կազմել, քանի որ պատրազմների ժամանակ փյունիկյան նավերը դեկավարում էր ոչ թե զիսավոր հրամանատարը, այլ յուրաքանչյուր քաղաքի քաղաքորը⁷⁶. Հնայած փյունիկյան մյուս թագավորների նկատմամբ Քսերքսեսի արշավանքի ժամանակ Սիրոնի թագավորն ուներ գերակա դիրք: Փյունիկիայի նկատմամբ պարսից արքունիքի քաղաքականությունը կարելի է բնութագրել որպես «կառավարվող ինքնավարություն»⁷⁷:

АДМИНИСТРАТИВНОЕ ПОЛОЖЕНИЕ ФИНИКИИ В СОСТАВЕ В САТРАПИИ АХЕМЕНИДСКОЙ ПЕРСИИ

Оганнес Խորեկյան
(резюме)

Анализ данных Геродота и других античных источников показывают, что несмотря на небольшую территорию Финикии, она имела большое военное и экономическое значение для персидского двора. В административном плане Финикия в составе V сатрапии была отдельным субрайоном,

սկս (տե՛ս David F. G., Arabia During Achaemenid Times, "Achaemenid History", IV, "Centre and Periphery", Leiden, 1990, p. 142):

⁷⁵ Արքանու, էջ 108; Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, vol. III, XVII, 64, p. 167.

⁷⁶ Elayi J., The Phoenician Cities in the Persian Period, pp. 24-25.

⁷⁷ Jigoulov V. S., The Social History of Achaemenid Phoenicia, London, 2010, p. 170.

чей морской флот имел первостепенное значение для государства Ахеменидов. Города Финикии не были объединены в реальную федерацию, так как во время войны финикийским флотом руководил не главнокомандующий, а царь каждого города, несмотря на то, что во время похода Ксеркса царь Сидона имел доминирующее положение в отношении других финикийских царей. Политику проводимую в отношении Финикии персидским двором можно характеризовать, как "управляемая автономия".

THE ADMINISTRATIVE STATE OF PHOENICIA IN THE STRUCTURE OF V SATRAPY OF ACHAEMENID PERSIA

Hovhannes Khorikyan
(summary)

Analysis of informations received from Herodotus and other ancient sources show that despite its small territory, Phoenicia had great economic and military importance to Persian Court. Phoenicia was an administrative subdistrict in the structure of V Satrapy and its fleet had a paramount importance to Achaemenid Empire. Phoenician cities didn't form a real federation, as during the wars Phoenician ships were commanded not by the commander in chief, but by the king of every city though during invasions of Xerxes the king of Sidon dominated over other Phoenician kings. The policy of Persian Court towards Phoenicia can be described as "controlled autonomy".

ԱՓանեհ Շիրանի
Մոհամմադ Մալեք-Մոհամմադի
բ.գ.թ., դոցենտ

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՒՀ-Ի ՄՈՏԵՑՈՒՄԸ

Բանալի բառեր՝ Հայաստան, Իրան, Հայոց ցեղասպանություն, հայ-թուրքական հարաբերություններ, ԼՂՀ հակամարդություն

Հայաստանի և Թուրքիայի հակամարտությունը կովկասյան տարածաշրջանի վաղեմի և հիմնական հակամարտություններից մեկն է համարվում, որի առաջին նախանշանները հայտնի դարձան Թուրքմենչայի պայմանագրից (1828, փետրվարի 10 (22)) հետո, իսկ Առաջին համաշխարհային պատերազմի քաղաքական զարգացումների և 1915 թ. ապրիլի 24-ի Հայոց ցեղասպանությամբ հասավ իր զարգանակետին:

ՀՀ և Թուրքիայի փոխհարաբերություններին առնվազող հրատապ թեմայի հետ կապված երկու երկրների համարդությունը և հակադրությունը, խնդրո առարկա փոխհարաբերությունների տարածաշրջանային առաջնահերթությունը և կարևորագույն նշանակությունը ենթադրում են, որ հիմնահարցը գերազանցում է զուտ տեղական շրջանակներից և երևակվում աշխարհապատճենական զարգացումների համատեքստում:

Կողմերի տարածայնություններն ընդհանուր պատմական անցյալի շուրջ, տարածքային վեճերի և փոխադարձ վստահության պակասի պատճառներով, առ այսօր հայ-թուրքական հակամարտությունը պահում են աշխարհի չլուծված հակամարտությունների շարքում:

Հայ-թուրքական հակամարտությունը

Հայ-թուրքական հակամարտության հիմնական տարածայնությունը վերաբերում է 1915 թ. իրադարձություններին, որոնք թուրքական կողմի տեսանկյունից համարվում են քա-

դարացիական հասարակությունների վեճերի արդյունքում բռնի տեղահանումներ, սակայն հայկական կողմի տեսանկյունից՝ ծրագրված ցեղասպանություն: Թուրքիան վաղուց ձգուում է դրւու բերել ցեղասպանության հարցը միջազգային քաղաքականության ասպարեզից: Թուրքիայի նախկին վարչապետ Էրդողանը այդ կապակցությամբ հայտարարել է, որ «ցեղասպանության վերաբերյալ մեղադրանքները պետք է լուծվեն պատմաբանների միջոցով, այլ ոչ թե խորհրդարաններում»: Սակայն երկխոսության իրականացման, փոխադարձ վստահությունը վերականգնելու համար պատմական հարթության վրա հանձնաժողովի ստեղծումը, ըստ հայկական կողմի, Թուրքիային հնարավորություն է տալիս վիճարկելու կայացած ցեղասպանությունը:

Հայերի զգացմունքներն ու ձգուումները Արևմտահայաստանի տարածքների նկատմամբ, Հայաստանի խուսափումը՝ ճանաչելու իր արևմտյան սահմանը Թուրքիայի հետ, այն հիմնական հանգամանքներն են, որոնք խորը մտահոգությունն են պատճառել Թուրքիային՝ լիովին հրաժարվելու մոտ ապագայում Հայաստանի հետ հարաբերությունները կարգավորելուց:

Այս համատեքստում Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը և Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը առաջնահերթություն են կազմում: Իսկ ըստ քաղաքացւուների՝ նոր աշխարհակարգի և միջազգային հարաբերությունների ասպարեզում, անշուշտ, «ՀՀ (+ԼՂՀ) զարգացմանն ու հետագա ամրապնդմանը համընթաց, կմեծանա հայկական գործոնի կշիռը տարածաշրջանային և, ինչու չէ, աշխարհակարգի հաստատման գործընթացներում: Եվ այն լիարժեքորեն դրսորվում է տարածաշրջանի երկրաքաղաքական վերադասավորումներում, ուազմական հաշվեկշիռներում, հաղորդակցական գործընթացներում, քաղաքակրթական երկխոսություն-դիմակայություններում»¹:

¹ Շիրինյան Լ., Նոր աշխարհակարգը և Հայաստանը /Երկրաքաղաքան-քաղաքակրթական ակնարկ/, Երևան, 2010, էջ 153:

Հայոց ցեղասպանություն, թե՞ Մեծ եղեռն

1915 թվականին ավելի քան մեկուկես միլիոն հայերի ջարդերի վերաբերյալ, որ իրականացվել է սպանությունների, հիվանդության, բռնազարդի հետևանքով, կողմերի մի շարք վերլուծաբանները և հեղինակները համակարծիք են: Համացնեցային ներողության արշավի ընթացքում ազգությամբ բուրք մտավորականության կողմից Մեծ եղեռն տերմինի կիրառումը փոխվածքներում մեկ այլ նշան էր²:

Թուրքական պատունական տեսակետի համաձայն հայերը Առաջին համաշխարհային պատերազմում հանդես են եկել որպես «հինգերորդ շարայուն» աշակերտ Ռուսաստանին, Մեծ Բրիտանիային և Ֆրանսիային, մտադիր էին «Անտոլիայի» սրտում ստեղծել անկախ պետություն: Սակայն հայերն այն կարծիքին են, որ այդ տարիների իրենց ազգակիցները եղել են հավատարիմ քաղաքացիներ, իսկ նրանց բռնազարդը և ջարդերը նպաստակ ունեին բարենպաստ պայմաններ ստեղծել Օսմանյան կայսրության նախկին տարածքներից տեղափոխված մուսուլման փախստականների համար՝ ստեղծելու միատարր պետություն:

Ցեղասպանության վերաբերյալ իրավաբանական սահմանումները³ և Ի՞նչ իրավական համակարգը ցեղասպանության մասին

Առաջին իրավական սահմանումը ցեղասպանության մասին բարձրացվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում, իսկ

² Turkey and Armenia: Opening Minds, Opening Borders, Europe Report №199 – 14 April 2009, p. 9.

³ <http://www.hvm.ir/print.asp?id=34314>

بررسی جنایت نسل کشی با تگاه ویژه به جنایات انجام یافته در بحرین، پایگاه الکترونیک معاونت حقوقی و امور مجلس
انگاری ۸۰% E2%80%8C جرم E2%80%8C% مگفت. است- ضرورت- یک- کشی E2%80%8C

دکتر- با- گو- و- تهران- آزاد- دانشگاه- علمی- عضو- باقري- هيات- ۸۰% E2%80%8C% میریعت- محمدجواد- است- انت- یک- تحقیقات- مرکز- العالی- ۸۰% E2%80%8C% مین- حقوق- گروه- مدیر

1948թ. ստեղծվել է «Ճեղասպանության հանցագործության կանխարգելման և պատժի մասին» կոնվենցիան: Իրանը նույնպես միացել է Միավորված Ազգերի Կազմակերպության 1948 թ. կոնվենցիային: Եվ այսպիսով, ցեղասպանության սահմանումը մտել է Իրանի իրավական համակարգի մեջ, սակայն չի որոշվել քրեական պատասխանատվության կարգը: Քրեական պատասխանատվության կարգն ընդգրկում են հետեւյալ երեք բաղադրիչները՝ 1. հանցագործության սահմանումը, 2. իրավասու դատարանի որոշումը, 3. օրենքով սահմանված պատժի որոշումը: Իրանի դատական համակարգում իրականացվել է միայն քրեական պատասխանատվության կարգի առաջին քայլը⁴:

Սուրբ Ղուրանը և ցեղասպանության թէման

Սուրբ Ղուրանում Ahlak Al-nasl «أهلاك النسل» սերնդի ոչնչացում՝ հասկացությունը և ովքեր երկրի վրա չարիք են գործում, իսկ նրանց չարիքները ուղղված են «ցանքսերը» և «սերնդի» ոչնչացմանը, դատապարտված է: Համաձայն որոշ իրավաբանների՝⁵ Ս. Ղուրանի Սուրաթ Ալ-Բաղարայի 204-205 այանները ցեղասպանության մասին են:

«Եվ մարդկանցից, ում խոսքը կյանքում քեզ զարմանք է պատճառում՝ արտաքրուստ շատ սիրալիք են: Եվ Աստծուն վկա են կանչում հանուն նրա, ինչ սրտներում ունեն: Մինչեղո նրանք ամենահամառ թշնամիներն են: Դրա ապացույցն այն է, որ, եթե հեռանում են քո մոտից՝ երկրում չարիք գործելու համար ջանքեր են թափում: Եվ ցանքսերը /բույսերը/ և սերեղին /կենդանիններին/ ոչնչացնում են, թեև զիտեն, որ Աստված չի սիրում չարագործությունը»:

⁴ Shariat Bagheri, Mohammad Javad, Jorm Engarie Nasl Koshi Yek Zarurat Ast, Majaleye Mehrname, Shomareye 18, Dey mahe 1390, (2011).

⁵ انجاری جرم E%80%8C http://www.mehrnameh.ir/article/3112-دکتر با-گوC-است-ضورت-پک-کشی E%80%8C-و-تهران-از-اد-دانشگاه-علمیC-های-عضو-باقری E%80%8C-شریعت-محمدجواد است-ائز-پک-تحقیقات-مرکز-الملC-حقوق-گروه-مدیر

Սուրբ Ղուրանի վերոհիշայլ խոսքում արաբերեն (*ha'sl*) **الْحَسْنَى** նշանակում է «ցանք, բույս», իսկ արաբերեն (*na'sl*) **الْجَنَاحُ** նշանակում է «մարդկային և ոչ մարդկային /կենդանիների/ սերունդը»: Ուստի «ցանքսի և սերնդի» ոչչացումը նշանակում է վերացնել ցանկացած կենդանի կակի՝ թե բուսական, թե կենդանական կամ մարդկային:

Սուրբ Ղուրանի սուրաթ Ալ-Մաեղահի 32-րդ այան շեշտական է:

«Եթե որևէ մեկը սպանել է մի մարդու, որը երկրի վրա չի կատարել սպանություն և չարազործություն, ապա սպանել է ողջ մարդկությանը»:

Սուրբ Ղուրանի մեկնաբան Ահար-Ալլահ Ալամե Թաքարաբային իր Ալմիզան Ս. Ղուրանի մեկնաբանության մեջ հաստատում է, որ Ս. Ղուրանի վերոհիշյալ խոսքերում դատապարտվում է ցեղասպանությունը: Անշուշտ, դատապարտելի է ցանկացած ցեղասպանություն՝ առանց կրոնական և ազգային տարրերակման:

Թուրքիայի ժամանակակից քաղաքականությունը և
ռազմավարությունը Հայոց ցեղասպանության
վերաբերյալ

Հայ-թուրքական հակամարտությունը գերազանցելով երկկողմ հակամարտության ոլորտը՝ հասել է տարածաշրջանային մակարդակի: Թուրքիան Մերձավոր Արևելյում առանցքային դեր է կատարում և ներգրավված է Լեռնային Ղարաբաղի, Կիարոսի, հայ-թուրքական հակամարտություններում:

Խորհրդային Միության փլուզումից հետո Թուրքիան ձգում էր իրականացնել ազգայնական համաթուրքական (Հարավային Կովկասով դեպի Կենտրոնական Ասիա) ռազմավարության երազանքը Կովկասում և Կենտրոնական Ասիայում: Սակայն շուտով բախվելու էր իր անկարողությանը և սահմանափակումներին՝ զարգացնելու և ընդլայնելու վեր-

հիշյալ գաղափարախոսությունը։ Այս երկիրն Իրանի և Ռուսաստանի հետ մրցակցության երկար պատմություն ունի⁶։

Թուրքիայի և Հայաստանի միջև բանակցությունների տապալումից հետո՝ մոտենալով Հայոց ցեղասպանության հարյուրամյակին, Թուրքիան վերջին երկու տարիների ընթացքում որոշակի փոփոխություններ կատարեց իր ռազմավարության ոլորտում, որ ցույց է տալիս թուրքական կողմից ձկուն և ճարպիկ բաղարականությունը հակամարտության ամենակարևոր գործոնի՝ ցեղասպանության հարցի վերաբերյալ։ Թուրքագետ Ռ. Մելքոնյանը նկատում է. «Թուրքիան փորձում է և փորձելու է ստեղծել տպավորություն, որ պատրաստ է հարաբերություններ հաստատել Հայաստանի հետ, բայց խոստումներից և խմբացիոն բնույթի քայլերից այն կողմ շոշափելի ու էական քայլեր չեմ ակնկալում»⁷։

Այս առումով, 2014 թ. ապրիլի 24-ին՝ Հայոց ցեղասպանության 99-ամյակի առիթով Թուրքիայի նախկին վարչապետ և ներկայիս նախագահ Ռ. Թ. Էրդողանը, առաջին անգամ, իր հայտարարության մեջ Թուրքիայի կառավարության կողմից ցավակցություն է հայտնում 20-րդ դարավագրին իրենց կյանքը կորցրած հայերի համար։ Օսմանյան Թուրքիայում տեղի ունեցած Հայոց ցեղասպանությունը Էրդողանը ձևակերպում է որպես «1915 թվականի իրադարձություններ» և որակում իբրև «ընդհանուր ցավ»։ Հայտարարության մեջ ասվում է - «Ապրիլի 24-ը ամբողջ աշխարհի հայերի համար պատմական հարցի շուրջ ազատորեն խոսելու լավ առիթ է։ Անվիճարկելի է, որ Օսմանյան կայսրության վերջին տարիները, անկախ կրոնից թուրք, հայ, քուրդ, արար և այլ միլիոնավոր մարդկանց համար եղել են դժվարին ժամա-

նակաշրջան։ Ինչպես ասել են մեր նախնիները՝ «կրակն ընկած տեղն է այրում»։ Օսմանյան կայսրության ամբողջ բնակչության՝ այդ թվում հայերի ցավը կիսելն ու նրանց հիշողությունները հասկանալը մեր մարդկային պարտը է։ «Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ տեղի ունեցած դեպքերը բոլորին համատեղ վիշտն են»։ Եվ ապա՝ «Առաջին աշխարհամարտի դեպքերի պատճառով տեղի ունեցած տեղահանությունը չպետք է հայերի և թուրքերի միջև մարդկային հարաբերությունների և վարքագծի խոչընդունակության»⁸։

Հայ-թուրքական հակամարտությունը և ԻԻՀ մոտեցումը

Աշխարհարարականության տեսանկյունից Իրանի Իսլամական Հանրապետությունը Ադրբեյջանի Հանրապետության հետ 700 կմ, իսկ Հայաստանի Հանրապետության հետ մոտ 35 կմ ընդհանուր սահման ունի։ Կովկասյան տարածաշրջանը լավագույն շրջաններից մեկն է, որը կարող է ամենալավ շափանիշ լինել ԻԻՀ արտաքին քաղաքականության և արդյունավետ ռազմավարության համար։ Խորհրդային Միության վիրոգումից հետո որոշ հնարավորություններ ստեղծվեցին Իրանի Խալամական Հանրապետության քաղաքականության ակտիվացման համար։ Հաշվի առնելով ԻԻՀ պատմական և աշխարհագրական կարողությունները, կովկասյան տարածաշրջանի փորձագետները եկել են այն եզրակացության, որ այս հնարավորությունները բաց էին թողնվել ԻԻՀ արտաքին քաղաքականության մեջ։ Իրանը չէր կարողացել տարածաշրջանում իր հատուկ դիրքը և առկա հնարավորությունները ճիշտ օգտագործել սեփական ազգային շահերը ապահովելու ուղղությամբ⁹։

⁶ Kulaii, Elahe, Armanestan va Ruseye: Avamele Toseye Ravabet, Majaleye Motaleat Asiaye Markazi va Ghafghaz, Tabestan, 1387 (2008).

⁷ Մելքոնյան Ռ., «Թուրքիայում Ցեղասպանության հարցը ընտրյան պես մի խնդիր է դարձել», 2013: - See more at: <http://www.mediamax.am/am/news/interviews/7301/#sthash.c29upJ6g.dpuf>

Հարավային Կովկասի տարածաշրջանում կարևոր է համարվում հարևանների հետ ԻԻՀ-ի հարաբերությունների հաստատման ձեր: Թեև Իրանը Աղբեջանի հետ ունի ակնառու ընդհանրություններ, սակայն իր արտաքին քաղաքականության մեջ հետևում է Հյուսիս-հարավ առանցքին՝ Իրան-Հայաստան-Շուստան կողայիցիային¹⁰ ի հակադրություն, տարածաշրջանում արևելյան-արևմուտք՝ Թուրքիա-Աղբեջան-Ուզբեկստան-Ամերիկա առանցքի, որն առ այսօր շարունակում է մնալ որպես ռազմավարական առավելավանդական դասավորություն:

Իրանի վերաբերմունքը տարածաշրջանի երկրների նկատմամբ հիմնված է բարիդրացիական հարաբերությունների վրա: Իրանը Կովկասում չի ձգտել հիմնել ռազմական բազաներ, առեղծել լարվածություն կամ ձեռք բերել արտոնություններ, այլ տարածաշրջանում և հատկապես հարևան երկրների հետ նրա քաղաքականության նպատակն է եղել համագործակցության, խաղաղության և կայունության հաստատումը: Իրանը տարածաշրջանային դերակատարի դերում վարել է այնպիսի քաղաքականություն, որ խարսխվել է տարածաշրջանի երկրների ուժեղացման և հակամարտությունները ըստ միջազգային իրավունքի օրենքների լուծելու սկզբունքների վրա:

1991 թ. Խորհրդային Միության փլուզումից հետո սպասվում էր Թուրքիայի և Իրանի մրցակցությունը տարածաշրջանում՝ ազդեցություն ձեռք բերելու համար: Այն զգալի չափով իրականություն է դարձել, թեև երկու երկրների պաշտոնական շրջանակները ժխտում են այդ¹¹:

Bahar, 1380 (2001), Shomarye 25, p. 9-10. <http://www.ensani.ir/storage/Files/20120329161953-5098-1.pdf>

¹⁰ Cornell, Svante, Small Nations and Great Powers, A Study Etnopolitical Conflict in the Caucasus, 2005, p. 380.

¹¹ Philip Robins, 'Silent Competition: Iran and Turkey in Azerbaijan and Central Asia,' in Etniske Konflikter i Sentral-Asia of Kaukasus, Norwegian Institute for International Affairs, No. 172 (September 1993), pp 111- 23.

1992 թվականից Իրանի կառուցողական դիվանագիտությունը սկսվում է նորանկախ պետությունների ճանաչմամբ և դիվանագիտական հարաբերությունների հաստատմամբ: Բայց Լեռնային Ղարաբաղի հետ կապված հայ-աղբեջանական հակամարտության հարցում ԻԻՀ-ը փորձեց միջնորդի դեր խաղալ: Սակայն ԵԱՀԿ Մինսկի խմբի ձևավորումից հետո Իրանը հրաժարվեց իր միջնորդական ջանքերից:

Իրանը դեմ է Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման համար արևմտյան խաղաղապահների ներկայությանը տարածաշրջանում: Հայաստանի և Թուրքիայի միջև հակամարտությունը կամ համագործակցությունը ոչ միայն ուղղակի ազդեցություն ունի Կենտրոնական Ասիայի և կովկասյան տարածաշրջանի քաղաքական ու անվտանգության հարաբերությունների վրա, այլ ազդեցություն կթողնի նաև Մերձավոր Արևելյան մինչև Եվրոպա միջազգային գարգացումների վրա:

Իրանը կովկասյան տարածաշրջանի հակամարտություններում, մշտապես ընդգծել է Հայաստանի հետ հարաբերությունների զարգացման խնդիրը: Իրանը եղել է Հայաստանի հիմնական տնտեսական և առևտրական գործընկերներից մեկը և Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղը պարենով ապահովող հիմնական մատակար¹²: Թուրքիան, մինչդեռ, Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի շրջափակման հարցում միացել է Աղբեջանին:

Այնուամենայնիվ, ԻԻՀ գերակայություն է համարել տարածաշրջանի բոլոր երկրների միջև տնտեսական համագործության /կոնվերգենցիայի/ ստեղծումը և անվտանգության ապահովումը: Եվ որպես տարածաշրջանային ուժային կենտրոն ձգտում է քաղաքական, տնտեսական, սոցիալական բարեկեցության, բարգավաճման և կապի միջոցների

¹² 'Enclave Builds a Life line Out of Azerbaijan,' International Herald Tribune, September 20, 1996.

ամրապնդման, տարածաշրջանի օտարերկրյա ներդրումների ընդլայնման և զբոսաշրջության զարգացման: Անշուշտ, այդ ամենին հասնելու համար անհրաժեշտ է տարածաշրջանում անվտանգության ապահովումը:

2014 թ. Իրանի և Հայաստանի միջև առևտրատնտեսական փոխանակումների ծավալը կազմել է 293 միլիոն դոլ¹³: 2013 թ. Թուրքիայի՝ Հայաստան արտահանման ծավալն ավելի շատ է եղել Իրանից Հայաստան արտահանման ծավալի համեմատ: Հատկանշական է, որ այս իրավիճակը փակ սահմանների և քաղաքական հարաբերությունների քացակայության պայմաններում է կատարվել, իսկ սահմանների քացման դեպքում հայ-թուրքական առևտրատնտեսական ծավալը ակնհայտորեն բարձրանա:

Վերջին տարիների տնտեսական առաջնահերթությունները պայմանավորեցին քաղաքական, սոցիալական և մշակութային համագործակցությունների անհրաժեշտությունը: Եվ Իրանի դերը ներկա ներուժի ամրապնդման և վերանայման համար շատ կարևոր է Կովկասի երկրների հետ հավասարակշիռ քաղաքականության ուղղությամբ: Ռուսաստանը, Իրանը և Թուրքիան մշտապես ներգրավված են եղել կովկասյան տարածաշրջանի միջազգային քաղաքականության և զարգացումների մեջ, ինչը Կովկասի երեք երկրների միջև անհավասարակշիռ իրավիճակ է ստեղծել: Իրանը և Ռուսաստանը Կովկասում ընդհանուր նպատակ են հետապնդում, այն է՝ կանխել Կովկասում Թուրքիայի և Արևմուտքի ներկայությունն ու ազդեցությունը:

Թեև Իրանը և Թուրքիան Սեֆյան ժամանակաշրջանում մրցակից երկրներ էին և տվյալ ժամանակաշրջանը լի էր պատերազմներով և բախումներով, բայց երկու երկրների հարաբերությունները էրդողանի կառավարության հետ շատ սերտ էին: Իրանը միջուկային հարցում համաձայնվում է

Թուրքիայի և Բրազիլիայի միջնորդությանը: Թուրքիան շնայած Ամերիկայի ընդլիմությանը՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում դեմ է քվեարկել Իրանի դեմ նոր պատժամիջոցների: Սակայն 2010 թ. հոկտեմբերի 15-ին Անկարան համաձայնվում է Թուրքիայում ՆԱՏՕ-ի հակահրթիռային պաշտպանության վահանի տեղակայմանը, որը Իրանի դժգոհության պատճառ է դառնում: Հատկանշական է, որ Իրանի և Թուրքիայի առակատումը, իսկ Ադրբեյջանի և Արևմուտքի սերտ համագործակցությունը, հատկապես, էներգետիկ փոխանցումների ոլորտում, կիանգեցնի Հայաստանի և Իրանի է ավելի սերտ համագործակցությանը: Այնուամենայնիվ, ինչ վերաբերում է Միջին Արևելքի վերջին քաղաքական զարգացումներին և Թուրքիայի որոշ դիրքորոշումներին Ի՞նչ հանդեպ, ապա Ռ. Մելքոնյանի գնահատմամբ. «Թուրքիան շատ զգուշակոր քաղաքականություն է վարում Թեհրանի հարցում..., իսկ Իրանի քաղաքական շրջանակներում Թուրքիայի հանդեպ ձևավորվել է բարի, սակայն սառը վերաբերմունք»¹⁴:

АРМЯНО-ТУРЕЦКИЙ КОНФЛИКТ И ПОДХОД ИРИ

Афсане Ширани

Мохаммад Малек Мохаммади

(резюме)

Схожесть и расхождения двух стран, связанные с актуальной темой, касающейся взаимоотношений РА и Турции, первоочередность и важнейшее региональное значение отношений, являющихся предметом проблемы, приводят к тому, что

¹⁴ Մելքոնյան Ռ., Թուրք-իրանական հարաբերություններն այնքան լարված չեն, որքան թուրք-սիրիականը, 2012: <http://www.panarmenian.net/arm/news/114673/>

¹³ <http://tnews.ir/news/7F4325030403.html>

вопрос выходит за местные рамки и подпадает уже в контекст процессов геополитического развития. Поэтому в настоящей статье в первую очередь обсуждается современная политика Турции и новая стратегия относительно главной проблемы армяно-турецкого противостояния—геноцида армян. Рассматриваются также вопросы святого Корана и геноцида, правовая система ИРИ в отношении геноцида, подход и стратегия ИРИ относительно армяно-турецкого противостояния и стратегия национальной безопасности РА в отношении ИРИ.

ARMENIAN-TURKISH CONFLICT AND THE STANDPOINT OF ISLAMIC REPUBLIC OF IRAN

Afsaneh Shirani

Mohammad Malek Mohammadi

(summary)

The convergence and divergence relating to the interrelation of the two countries Republic of Armenian and Turkey with respect to urgent argument, the regional priority of interrelations subject to argument and the importance of the latter lead to the fact that the problem increases from its local regions and is viewed in the context of geographical-political developments. Therefore in this article first of all Contemporary politics of Turkey is discussed and the new strategy relating to the main issue of Armenian-Turkish Conflict on Armenian Genocide, then Saint Quran and genocide issues, the legal system of Islamic Republic of Iran on genocide, the point of view of Islamic Republic of Iran and strategy upon the Armenian-Turkish conflict and the strategy of the Homeland Security of the Republic of Armenia on Islamic Republic of Iran are under observation.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՅԻՆ ԵՐԵՎԱՆ

**Թուրքիայի Հանրապետության պատմություն: Բուհական
դասագիրք (Պատ. իսբ.՝ Ռ. Սաֆրասպյան):
Երևան, ԵՊՀ հրատ., 2014, 396 էջ:**

Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետում տասնամյակներ շարունակ Օսմանյան կայսրության և Թուրքիայի Հանրապետության պատմության դասավանդման ժամանակ գործածվել են նախկին Խորհրդային Միության արևելագիտական խոշոր (մոսկովյան և լենինգրադյան) կենտրոնների օսմանագետ և թուրքագետ-պատմաբանների հեղինակած դասագրքերը, ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկները, որոնք հրատարակված են բնականաբար, ոուսերեն ու չնշին բացառություններով թարգմանված են նաև հայերեն: Այդ դասագրքերն ու ձեռնարկները, անշուշտ, չեին կարող զերծ լինել գաղափարախոսական կադապարներից և չարտացոլել խորհրդաբուրքական հարաբերությունների «մակրնթացությունները և տեղատփությունները»: Հիշում ենք, թե ինչպիսի բծախնդրությամբ էին մեր երջանկահիշատակ ավագ գործընկերները և ուսուցիչները՝ պրոֆեսորներ Զոն Կիրակոսյանը, Մերի Քոչարը, Շուրեն Սահակյանը «քրքրում» «միութենական կենտրոնում» ստեղծված Թուրքիայի պատմության վերաբերյալ դասագրքերն ու մենագրությունները՝ փորձելով նրանցում պարունակվող տեղեկատվությունը համադրել մեր ազգային ցավին և իդերին, ուրախանալով, երբ տողեր էին գտնում պատմական անվիճելի իրողությունների մասին, հաճախ էլ հիասթափվելով, երբ չեին գտնում անզամ այդ մի քանի տողը... Իսկ նման «բացքություններն» էլ, հիրավի, քիչ չեին. այսպես, խորհրդային ճանաչված թուրքագետներ Ս. Ա. Հասրաթյանի, Ս. Ֆ. Օրեշկովայի, Յու. Ա. Պետրոսյանի հեղինակած «Թուրքիայի պատ-

մության ուրվագծեր»¹ գրքում ոչ մի տող չկար Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին թուրքական իշխանությունների՝ ազգային-կրոնական փոքրամասնությունների հալածանքի այնպիսի ակնհայտ դրսուրման մասին, ինչպիսին էր «ունեցվածքի հարկը»:

Վերջին տարիներին Երևանի պետական համալսարանում և մասնավորապես արևելագիտության ֆակուլտետում դասագրքերի ստեղծման լուրջ և զգալի աշխատանք է տարվել: Հրատարակվել են թուրքերենի, աղբեջաներենի, պարսկերենի, արաբերենի, երրայերենի, դասական ասորերենի դասագրքեր, որոնցում հաշվի են առնված հայ ուսանողներին արևելյան տարրեր լեզուների դասավանդման առանձնահատկությունները: Լույս են տեսել նաև մի շարք ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկներ, որոնցից մի քանի սր նվիրված են Օսմանյան կայսրության և Թուրքիայի Հանրապետության պատմության հիմնահարցերի լուսաբանմանը²: Գիտությունների ազգային ակադեմիայի և ԵՊՀ առաջա-

¹ Այս գիրքը, որի երրորդ բաժինը նվիրված է Թուրքիայի պատմության նորագոյն շրջանին, հայերեն է բարգմանել ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի վաստակաշատ դասախոս, երջանկահիշատակ Հակոբ Հայկի Մարտիրոսյանը: 1986 թ. գիրքը լույս է ընծայել ԵՊՀ հրատարակչությունը, և շուրջ երեք տասնամյակ այն օգտագործվել է որպես դասագրք:

² Մասնավորապես տե՛ս՝ Ռ. Ա. Սաֆրաստյան, Օսմանյան կայսրություն. Յեղասպանության երկու ծրագիր (1876-1915 թթ.), Երևան, «Լուսական» հրատ., 2007, Ռ. Ա. Սաֆրաստյան, Հ. Ա. Կորիմազյան, Թուրքիայի պատմության դասընթացի ծրագիր (ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության բակալավրիատի երկրորդ, երրորդ, չորրորդ կուրսերի համար), Երևան, «Լուսական» հրատ., 2007, Ս. Ա. Խառասյան, Զմյուռնիայի հայ գաղթօջախը, Երևան, «Էդիթ պրինտ» հրատ., 2008, Ա. Վ. Սաֆարյան, «Տնտեսական թյուրքականություններ», Էտասիզմի քաղաքականությունը Թուրքիայում և տնտեսության «թուրքացումը» (պատ. իսբ.՝ Ս. Հ. Սիմոնյան, Ռ. Ա. Սաֆրաստյան), Երևան, ԵՊՀ հրատ., 2012, Ա. Դ. Շումանյան, Բանակի դերը Թուրքիայի Հանրապետության քաղաքական կյանքում, Երևան, ԵՊՀ հրատ., 2014, Ն. Լ. Գինոսյան, Հայերն Օսմանյան կայսրության առևտունութեական, վարչական, գիտակրթական և մշակութային կյանքում

տար մասնագետների ստեղծած և ստեղծվող պատմության, գրականության դասագրքերում հետևողականորեն վերանայվում են մեր ազգային և կրոնական արժանապատվությանն անհարիբ ձևակերպումները... Հայաստանյան բուհերի համար հիշարժան իրադարձություն էր վաստակաշատ արևելագետ և դիվանագետ, պրոֆեսոր Վահան Բայրուրյանի «Օսմանյան կայսրության պատմություն» (ԵՊՀ հրատ., Երևան, 2011) դասագրքի հրատարակումը:

Գրախոսվող նոր դասագիրքը՝ «Թուրքիայի Հանրապետության պատմությունը» ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի և ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի առաջատար գիտնականներից և դասախոսներից կազմված հեղինակային խմբի բազմամյա քրտնաշան աշխատանքի և բացառիկ արգասարեր համագործակցության պատուղն է: Հեղինակային խումբը զիսավորել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պրոֆ. Ռուբեն Սաֆրաստյանը, խմբում ընդգրկվել են ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի փոխինգենան, բ.գ.թ., դոցենտ Ռուբեն Մելքոնյանը, պ.գ.թ., դոցենտ Արթուր Դումանյանը, պ.գ.թ. Վահրամ Տեր-Մաթևոսյանը, պ.գ.թ. Հակոբ Չաքրյանը և բազմավաստակերրագետ Անուշ Հովհաննիսյանը: Խմբի յուրաքանչյուր անդամ իր հեղինակած զիսում արտացոլված հիմնահարցերի կոմպլեքսի ճանաչված հետազոտող է, ունիշայատանում և արտերկրում տարբեր լեզուներով հրատարակված բազմաթիվ աշխատություններ. գրախոսվող գրքում բուրեղացվել, խտացվել և առավել մատչելի ձևով մեր արևելագետուսանողներին է ներկայացվել հեղինակների գիտական

(19-րդ դարի երկրորդ կես - 20-րդ դարի սկիզբ), Երևան, «Հայրապետական», 2014:

պրատումների և մանկավարժական փորձի սիներգետիկ արդյունքը:

Հեղինակներին հաջողվել է սկզբնաղբյուրների, արևմտյան, ռուսաստանյան և հայաստանյան թուրքագիտական դպրոցների ուսումնամիջությունների լայն հենքի վրա ներկայացնել Հանրապետական թուրքիայի պատմության ընդհանրական հոլովույթը և իր առանձին շրջափուլերն ու, հիրավի, գերծ մնալ գերբաղաքականացված գնահատականներից՝ միաժամանակ ըննադատական մոտեցում ցուցաբերելով հայ ժողովրդի պատմությունն աղավաղող թուրքական պատմագրության դրույթների նկատմամբ:

Դասագրքի առաջին «Օսմանյան կայսրության վլուգումը և ազգայնամոլական շարժման հաղթանակը (1918-1922 թթ.)» զիսում մասնագիտապես ներկայացվում են թուրքական պաշտոնական պատմագրության մեջ «զինադարի շրջան» (Mütareke Devri) անվանվող իրադարձությունները, երիտրուրքական կառավարման շրջանի, պատերազմի տարիների դեկավար պետական, կուսակցական, ուազմական գործիչների դատավարությունները (էջ 15-17), նշվում է. «Զինադարի տարիներին օսմանյան իշխանությունների կողմից ստեղծած Ռազմական հատուկ ատյանների գործունեությունը և արձակած դատավճիռները համաշափ չեն ահավոր ողբերգությանը՝ Հայոց ցեղասպանությանը: Այսուամենայնիվ, դատավարություններն անժխտելիորեն փաստեցին, որ այդ հանցագործությունը նախապատրաստված և իրականացված էր Օսմանյան թուրքիայի պետական կառավարման բարձրագույն մարմինների կողմից տեղական կառավարման և երիտրուրքական կուսակցական մարմինների, ինչպես նաև կանոնավոր զիսումի ու հատուկ հրոսակային շոկատների ներգրավմամբ: Ժամանակակից թուրքիայի իշխանությունները և պաշտոնական պատմագրությունը, ժխտելով Հայոց ցեղասպանության փաստը, ըստ էության,

անստեսում են թուրքական դատարանների կողմից հաստատված փաստերը» (էջ 17): Այսուհետև ներկայացվում է Սևի պայմանագիրը, նշվում է, որ թեև այն չվավերացվեց և չկիրարկվեց, սակայն «նույնիսկ այսօր, եթե նրա ստորագրումից անցել են տասնամյակներ, այն չի կորցրել իր գաղափարական, բարոյական, ինչպես նաև իրավական ներուժը։ Այդ է վկայում թեկուզ այն հանգամանքը, որ ժամանակակից Թուրքիայում հասարակական ընկալումների մակարդակով առկա է վախր, որ մեր օրերում՝ որոշակի պայմաններում այն կարող է կյանքի կոչվել։ Այդ վախն ընդունված է անվանել «Սևի սինդրոմ» (էջ 24): Նույն գլխում լուսաբանվում են քեմալականների Հայաստանի Հանրապետության դեմ սանձազերծած պատերազմի պատճառները և ընթացքը, նշվում է. «Պատերազմը Հայաստանի Առաջին Հանրապետության դեմ նախանշված էր Կարինի և Սերաստիայի համաժողովների որոշումներով, որոնք բացառում էին իր բնօրրանում՝ Արևմտյան Հայաստանում պետականությունը վերականգնելու հայ ժողովրդի իրավունքը։ Այդ պատերազմի գլխավոր նախաձեռնողը և կատաղի կողմնակիցը Մուստաֆա Քեմալն էր։ Նա հետապնդում էր նաև պանթյուրքիստական նպատակներ՝ անմիջապես կապ հաստատել կովկասյան թաթարների հետ։ Հայտնի է նրա պահանջը. «կովկասյան պատր», այսինքն՝ Հայաստանը, պիտի քանդվի» (էջ 37): Առաջին գլուխը եղրափակում է իրականությունն համարժեք ներկայացնող այն ձևակերպումը, ըստ որի՝ ժամանակակից Թուրքիայում որպես կարևոր դիվանագիտական հայթանակ գնահատվող, համարյա նույնությամբ Մոսկվայի պայմանագրի դրույթները կրկնող, ըստ եռթյան, «քեմալական Թուրքիայի ծավալապաշտական, զավթողական քաղաքականության արդյունքներն» ամրագրող Կարսի պայմանագիրը «Հայաստանում ընկալվում է անարդարացի և անօրինական, քանի որ այն արդյունք էր Մոսկվայան պայմանագրով հաստատված տարած-

քային խոշոր կորուստների, իսկ վերջինիս տակ Հայաստանի ստորագրությունը չկա» (էջ 46):

Դասագրքի երրորդ «Թուրքիան Երկրորդ աշխարհամարտի շրջանում. հետպատերազմյան զարգացումներ (1939-1950 թթ.)» գլխում հանգամանորեն ներկայացվում են Թուրքիայում ազգային-կրոնական փոքրամասնությունների (հայերի, հրեաների, հույների) հալածանքի պետականորեն մշակված, հետևողականորեն կիրառվող, իրենց ծավալներով և ունեցած բացասական հետևանքներով առանձնացած այնպիսի ծրագրեր, ինչպիսիք են «20 դասակարգի գորակոչը» (1941-1942 թթ.) և «Ունեցվածքի հարկը» (1942-1944 թթ.): Զարկ ենք համարում առանձնացնել նաև այն հանգամանքը, որ երրորդ և չորրորդ գլուխներում ուշագրավ փաստեր կան Թուրքիայի խորհրդարանի հայազգի պատգամավորների գործունեության և դրական, և ցավոք երբեմն բացասական կողմերի վերաբերյալ։ Երրորդ գլխում ներկայացվում է թուրքական երկդիմի և, ըստ եռթյան, ազրեսիվ արտաքին քաղաքականության այն դրվագը, եթե Թուրքիան տարօրինակ չեղորություն էր պահպանում Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, սակայն իրականում ամեն կերպ աշակցում էր նացիստական Գերմանիային։ Այս խնդրի հետ է նաև կապված պատերազմից հետո Հայկական հարցի վերադարձը միջազգային ասպարեզ, որը, ցավոք սրտի, կրկին դառնում է գերտերությունների քաղաքական շահերի գործը։

Դասագրքում լուսաբանվում են նաև Թուրքիայում ռազմական հեղաշրջումների և միջամտությունների, արդի փուլում հայ-թուրքական հարաբերություններին առնչվող հարցերը, մասնավորապես «Ֆուտրոլյային դիվանագիտություն» անվանումը ստացած գործնարկը (էջ 352-353):

Գրախոսվող գրքի շահեկան առավելությունն են հավելվածները, որոնցում ներկայացվում են Թուրքիայի առանցքային քաղաքական կուսակցությունները (Հանրապետական

Ժողովրդական կուսակցությունը - Cumhuriyet Halk Partisi, «Ազգայնական շարժում» կուսակցությունը - Milliyetçi Hareket Partisi, «Մայր հայրենիք» կուսակցությունը - Anavatan Partisi, «Ճշմարիտ ուղի» կուսակցությունը - Doğru Yol Partisi, Ժողովրդավարական ձախ կուսակցությունը - Demokratik Sol Partisi, «Արդարություն և զարգացում» կուսակցությունը - Adalet ve Kalkınma Partisi, «Խաղաղություն և ժողովրդավարություն» կուսակցությունը - Barış ve Demokrasi Partisi), տարբեր սերունդների առավել ազդեցիկ քաղաքական գործիչների (Սուստաֆա Քեմալ Աթաթյուրքի, Խամբար Ինյոնուի, Զելալ Բայարի, Աղնան Մենդերեսի, Ալփարսլան Թյուրքեշի, Թուրգուր Օօվալի, Բյուլենթ Էջևիթի, Նեջմենի Էրբաքանի, Սուլեյման Դեմիրելի, Ռեջեփ Թայիփ Էրդողանի) կենսագրությունները, ինչպես նաև Թուրքիայի Հանրապետության պատմական իրադարձությունների ժամանակագրությունը:

Օգտվելով առիթից՝ ցանկանում ենք հեղինակային խմբին առաջարկել դասագրքի առաջիկա լրամշակված իրատարակություններում ներառել նաև Թուրքիայի Հանրապետության մշակույթը ներկայացնող գլուխ, նամանավանդ լիահույս ենք, որ Անուշ Հովհաննիսյանը, Ռուբեն Մելքոնյանը և իր ասպիրանտներն ի զորու են պատվով կատարելու և այս խնդիրը:

Կիսում ենք ականավոր արևելագետ, պրոֆ. Վահան Բայրությանի՝ այս գրքին նվիրված գրախոսության մեջ արտահայտված հետևյալ կարծիքը. ««Թուրքիայի Հանրապետության պատմության» լույսընծայումն անվերապահորեն կարելի է համարել հայ թուրքագիտության ակնառու նվաճումը: Հավատում ենք, որ այդ աշխատությունը նաև լավ հիմք է հանդիսանալու հայ արևելագետների կողմից Հանրապետական

Թուրքիայի պատմության կեղծված ու ձևախեղված հարցերի հետազա համակողմանի ուսումնասիրման... համար»³:

Մեր արևելագիտության նշանակալից ձեռքբերման «Թուրքիայի Հանրապետության պատմության» բուհական դասագրքի իրատարակման առիթով դրվատանքի և շնորհակալության խոսքեր ենք հղում հեղինակային խմբին, գրախոսներին և ԳԱԱ ակադեմիկոս, պրոֆ. Աշոտ Մելքոնյանին, և ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆ. Ալբերտ Խառատյանին, ինչպես նաև Հայ Առաքելական եկեղեցու Գուգարաց թեմի առաջնորդ, Գերաշնորհ Տեր Սեպուհ արքեպիսկոպոս Չուլջյանին, Եկեղեցիների Համաշխարհային խորհրդում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներկայացուցիչ և Վաշինգտոնում ԱՄՆ Արևելյան թեսի պատվիրակ Գերաշնորհ Տեր Վիգեն արքեպիսկոպոս Արքայանին՝ գրքի ստեղծման և տպագրման աշխատանքներին ցուցաբերած աջակցության համար:

Գուրգեն Մելիքյան
ՀՀ վաստակավոր մանկավարժ,
ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկան,
պրոֆեսոր

Ալեքսանդր Սաֆարյան
ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի վարիչ,
պրոֆեսոր

³ Վահան Բայրության, գրախոսություն - «Թուրքիայի Հանրապետության պատմություն», բուհական դասագիրք, ԵՊՀ հրատ., «Բանքեր Հայագիտության» (Հայագիտական միջազգային հանդես), 2015, №1, էջ 190: գիտության» (Հայագիտական միջազգային հանդես), 2015, №1, էջ 190:

STEFAN IHRIG. Ataturk in the Nazi Imagination. The Belknap Press of Harvard University Press. Cambridge, Massachusetts / London, England, 2014, 311 p.

«Ի վերջո, ո՞վ է հիմա հիշում հայերի ոչնչացման մասին» հուետորական հարցը Հիտլերը տվել է 1939 թ. օգոստոսի 22-ին Օբերզայֆերգում զինվորական հրամանատարներին ուղղված իր խոսքում, որը հիմնականում նվիրված էր Լեհաստանի նվատմամբ նրա ունեցած անմիջական նպատակներին։ Այս հուետորական հարցի խևորյան աղյուրագիտական քննությանը նվիրված մի շարք աշխատանքներ կան¹։ Մյուս կողմից, այս նախադասությունը, պայմանավորված նրա հեղինակի աշխարհին հայտնի լինելու հանգամանքով, մի քանի տասնամյակներ շարունակ, մեծ հաճախականությամբ մատուցվում է աշխարհին և բերվում է իրքն փաստարկներից մեկը Հայոց ցեղասպանության իրողության։ Շեշտվում է նաև, մասնավորապես, այս հանգամանքը, որ Հիտլերի այս խոսքը տեղ են գտել ԱՍԽ Հոլոքոստի հուշային թանգարանում (Վաշինգտոն)։ Շատ-շատ հայ մարդկանց համար այդ արտահայտությունը արդեն իսկ ձեռք է բերել դասազրային ճշմարտության արժեք։ Այլ կերպ ասած այդ նախադասությունը Հայոց ցեղասպանության հիշողության, ու դրանով իսկ նաև հայոց ինքնության մաս է կազմում։ Մյուս կողմից, Հիտլերի խոսքերի ասված-չասված լինելու խնդիրը մեծ կասկածի տակ է դրվում հատկապես թուրքական ժխտողականության համատեքստում։ Այսպէս թէ այնպէս, պատմագիտական տեսանկյունից հարցը լրացուցիչ դիտարկումների կարիք է գում։ Եվ եթէ աղյուրագիտական առումով նոր խոսք ասելը

¹ Տէ՛ս, օրինակ. Kevork Bardakjian, "Hitler and the Armenian genocide". Zoryan Institute Special Report No. 3. The Zoryan Institute. Cambridge, Massachusetts, 1985. Բարդակյան Գ., Հիտլերը և հայերի ցեղասպանությունը, Երևան, «Հայաստան», 1991։

բավականին բարդ է, քանի որ նոր աղյուրներ պարզապես չկան, ապա հարցը միանգամայն լուսաբանելի է ավելի լայն համատեքստում դիտարկելու պարագայում։ Նկատի ունեմայն միջավայրի քննությունը, որտեղ ձևավորվել է նացիստական գաղափարախոսությունը։ Ի մասնավորի, թէ գաղափարախոսական ո՞ր գործոններ են ազդեցիկ, հաճախ նաև որոշիչ, Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմների միջև գերմանական իրականության մեջ²։

Այս վերջին խնդրի դիտարկմանն է նվիրված Երուսաղեմի Վան Լիր ինստիտուտի կազմում գործող Հումանիտար և սոցիալական գիտությունների Պոլոնսկի հետազոտական կենտրոնի (The Polonsky Academy for Advanced Studies at the Van Leer Jerusalem Institute) աշխատակից դոկտոր Շտեֆան Իհրիգի «Աթարթուրքը նացիստական մտապատկերում» մենագրությունը։ Հետազոտությունը բաղկացած է նախարանից, վեց գործիներից, վերջաբանից, աշխատանքում աղյուրների և գրականության հակիրճ նկարագրությունից, ծանոթագրություններից, ցանկերից։

Աշխատանքի նախարանը վերնագրված է «Հեռանալով «Էնվերլենդից [Էնվերի երկրից]»» (էջ 1-9)։ Այստեղ հեղինակը համառոտակի անդրադառնում է օսմանա-գերմանական կապերին սկսած Ֆրիդրիխի Բարքարոսայի ժամանակներից, կենտրոնանալով սակայն 1908 թ. երիտրուրքական հեղաշրջման ու Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին առկա իրողություններին։ Դեռևս XX դարի սկզբներին առկա էր Բեռլին-Բաղրադ երկարուղու ծրագիրը նախատեսված Գերմանիան Հնդկական օվկիանոսին կապելուն, իսկ կայսր

² Քննութագրական է, որ Գ. Բարդակյանը նույնպես գտնում է, որ «խնդրը լուսաբանելու» և իր «նախական ուսումնասիրության առաջ բաշած հարցերին պատասխանելու համար», անհրաժեշտ է հետազոտել «հատկապես XIX դ. վերջին և XX դ. հայ-թուրք-գերմանական հարաբերությունների հարցը, որը լայն ընդունում ունի ու անբավարար է ուսումնասիրված»։ Տէ՛ս Բարդակյան Գ., Աշխ. աշխ., էջ 5։

Վիլհելմ II-ն իրեն հայտարարում էր բոլոր մուսուլմանների պաշտպան: Գերմանական նացիոնալիստները, հատկապես Բեռլինում, տոնում էին երիտթուրքական հեղաշրջումը և գովերգում էին Էնվեր փաշային այն աստիճան, որ որոշ հեղինակները խոսում են Գերմանիայում 1908 թ. անմիջապես հետո «թուրքական տեսդի» մասին: Էնվերին անվանում էին «թուրքական Սոլտկե», իսկ Թալեաթին «թուրքական Բիսմարկ»: Գերմանական իրականության մեջ 1909 թ. հակահեղափոխության օրերին Էնվերի արշավը Կոստանդնուպոլսի վրա համեմատվում էր Հռոմի վրա Հռովիս Կեսարի արշավի հետ: Ինչպես հետազայում նշել է Հիտլերը, մայրաքաղաքի վրա իրականացված այդ արշավն էր, որ կարողացավ երիտասարդացնել Օսմանյան կայսրությունը:

Գերմանա-թուրքական համագործակցության մեկ այլ ոլորտ էր գերմանական ռազմական ներկայությունը օսմանյան բանակում: Որոշ «գերմանացի օսմաններ» կրում էին «փաշա» տիտղոսը Գերմանիայում մինչ իրենց մահը: Հատկապես նշանակալի էր Կոլմար ֆոն դեր Հոլցի և Լիման ֆոն Սանդերսի ազդեցությունը օսմանյան բանակի վրա: Դրա շարքերում էր կրվում Հայոց ցեղասպանության ականատես, հետազայում Առւշվիլի պարես Ռուլոնֆ Հեսսը: Օսմանյան կայսրության հետ սերտ կապերի մեջ էին բազմաթիվ «գերմանացի օսմաններ», նրանց թվում Գերմանիայի ապագա կանցերը, Երրորդ ռեյխի ապագա արտաքին գործերի նախարարը, Վաշինգտոնում, Մուսկվայում և Անկարայում ապագա դեսպանները, Հինդենբուրգի, ֆոն Պապենի և Հիտլերի ապագա քաղաքական խորհրդականները: Ինչպես նկատում է հեղինակը, չնայած այն հանգամանքին, որ ընդամենը մի քանի հազար գերմանացի գինվորականներ էին ծառայում Օսմանյան կայսրությունում, «գերմանացի օսմանների» մասնակցությունը Երրորդ ռեյխի վերելքին և պատմությանը տոկոսային առումով անհամաշափորեն շատ ավելի մեծ է, քան

թե Արևմտյան ռազմաճակատում ծառայած գերմանացի զինվորականներինը: Հեղինակը հիշեցնում է, որ Առաջին համաշխարհայինի ավարտին օսմանյան կառավարող եռյակը գերմանական սուզանավով էր, որ փախավ երկրից Օղևա, ապա և Բեռլին:

Սակայն Առաջին համաշխարհայինին հաջորդող երկու տասնամյակներին գերմանացիների երեակայությունը գրավված էր մեկ այլ թուրք անձով. դա այն սպան էր, որն ուղեկցել էր Էնվերին նրա 1911 թ. լիբիական արկածի ժամանակ, որն այցելել էր գերմանական շտաբը 1917 թ. և որը ողջունվել էր Հինդենբուրգի կողմից «Ահ, սա ին Գալլիպոլիի հերոսն ե» խոսքերով: Ահա այս անձնավորության Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի շուրջն է, որ Գերմանիայում սկիզբ առավ երկրորդ «թուրքական տեսդի»:

Հեղինակը նշում է, որ իր աշխատության մեջ փորձել է ցույց տալ, թե ինչ պատկերացումներ ունեին նացիստները Թուրքիայի մասին, և ինչպես էին այն ներկայացնում տպագիր մամուլում, ինչը, ի վերջո, փոխում է նացիոնալ-սոցիալիզմի մասին ցարդ ունեցած պատկերը: Նա իր ուշադրությունը հիմնականում կենտրոնացրել է երկու կարևոր ժամանակաշրջանների՝ 1919-1923 և 1933-1938 թվականների վրա, ի մասնավորի այդ տարիների տպագիր մամուլի հազարավոր հոդվածների, պաշտոնական հայտարարությունների վերլուծության, ինչպես նաև Երրորդ ռեյխի առաջնորդի հնչեցրած ձևակերպումներին:

Աշխատության առաջին գլուխը վերնազրված է «Թուրքիայի դասերը Գերմանիայի համար. թուրքական Անկախության պատերազմը որպես վեյմարյան մամուլի գիսավոր իրադարձություն, 1919-1923 թթ.» (էջ 10-67): Առաջին համաշխարհային պատերազմի ավարտին Օսմանյան կայսրության տարածքում պլանավորված էր կերտել անկախ Հայաստան, Արևմտյան Անատոլիայի հսկայական տարածքները տալ

Հունաստանին, ձևավորել երկրորդ հունական կամ հունահայկական Պոնտական պետություն, ազատել Կոստանդնուպոլիսը թուրքերից և այլն: Ահա այս պայմաններում էր, որ 1919 թ. մայիսին Սուսրաֆա Քեմալը թուրքիայի արևելքում սկսեց այսպես կոչված «թուրքական Անկախության պատերազմը», որն իրականում ազգայնամոլական շարժում էր և հենց այս ձևակերպումն է այսօր ընդունելի օրենտիվ պատմագրության համար: Պատերազմը տևեց չորս տարի՝ մինչև 1923 թ. կեսերը, որին հաջորդեց Լոզանի հաշտության պայմանագիրը (1923 թ.), այդպիսով՝ վերանայման ենթարկելով Փարիզի խաղաղության պայմանագիրը, Սկրի պայմանագիրը (1920 թ.): Լոզանում էր, որ հաստատվեցին թուրքիայի մինչ օրս գործող սահմանները, այն դարձավ ամբողջովին ազատ իր ներքին և արտաքին քաղաքականության մեջ, և քեմալիստների այսպես կոչված «Ազգային ուխտի» բոլոր դրույթները իրականություն դարձան: Հուսահատ ու մեկուսացած Գերմանիայի համար այս իրադարձությունները նացինալիստական երազանքի իրականացման դրսնորումներ էին: Ուստի պատահական չե, որ թուրքական ազգայնամոլական շարժումը դարձավ Վեյմարյան հանրապետության մամուլի հիմնական նյութը: Սկզբից ևեք գերմանական մամուլն ընդունում էր, որ թուրքիան կարող է «տիպային դեր» (role model) խաղալ գերմանացիների համար: Արդեն 1921 թ. նացիստական թերթերից մեկը իր մի հոդվածը ուղղակիորեն վերնագրել էր «Թուրքիան – տիպային դեր»: Ժամանակ անց արդեն որոշակի թուրքական ստրատեգիաները շեշտվում էին որպես մի բան, որոնք կարող էին ուղղակիորեն կրկնօրինակվել Գերմանիայում: Թուրքական օրինակը ցույց էր տալիս, որ փարիզյան պայմանագրերը կարող են վերանայվել և թե ինչպես կարելի է դա անել: Բնութագրական է, որ Սուսրաֆա Քեմալ փաշայի, որպես «թուրքական Վերսալի» դեմ ռազմական դիմադրություն իրականացնող զինվորակա-

նի, լուսանկարն առաջին անգամ հայտնվեց, օրինակ, *Kreuzzeitung* թերթում, Վերսալյան պայմանագրի կնքումից երկու օր անց, 1919 թ. հուլիսի սկզբին: Այս կերպ գերմանական մամուլը գտավ իր հերոսին: Քեմալի ուկավարած շարժումը տարբեր բնութագրումներ ուներ. «հայրենասիրական շարժում», «ազգային գործողություն», «ազգայնական շարժում», «քեմալիստներ»: Ժամանակ անց գերմանական մամուլը սկսեց օգտագործել «մեր Սուսրաֆա Քեմալ» ձևակերպումը: Վեյմարյան հանրապետության վաղ շրջանում թուրքական թեման կենդանի էին պահում կենտրոնից մինչև ծայրահետ աջ գերմանական մամուլի օրգանները: Թուրքական ազգայնամոլական շարժումն արագորեն դառնում էր վերին աստիճանի գերմանական թեման: Մամուլում տեղ էր գտնում գերմանիայի «օսմանացումը»: Մեխանիզմներից մեկը յուրահատուկ գերմանական թեմաները թուրքիայում ընթացող զարգացումներին զուգահեռաբար ներկայացնելն էր: Այդ պարագայում թուրքերը միշտ ավելի լավ վիճակում էին երևում, քան թե գերմանացիները: Բանք հասնում էր նրան, որ «սուլթանի» փոխարեն օգտագործվում էր «կայզեր», Կոստանդնուպոլսի փոխարեն՝ «կայզերշտադտ», «փալամի» փոխարեն՝ «թուրքական եկեղեցի» ձևակերպումները: Փորձագետների դերում հանդես էին զալիս Օտտոն Լիման ֆոն Սանդերսը, նացիստական մամուլի համար հոդվածներ գրող Հանս Տրյուբսը և ուրիշներ: Քեմալա-բոլշևիկյան ժամանակավոր մերձեցումն անգամ Գերմանիայի համար ներկայացվում էր որպես սովորելու քան: 1922 թ. նոյեմբերին որոշ թերթեր մեջբերումներ օգտագործեցին Սուսրաֆա Քեմալի հարցագրույցից, որտեղ նա ինքն իրեն ներկայացնում էր որպես նացինալիստ և սոցիալիստ: Այս և նման հայտարարությունները շատերին առիթ էին տվել որպես համարժեք զաղափարախոսություններ դիտելու քեմալիզմը, ֆաշիզմը և նացինալ-սոցիալիզմը:

Թուրքիայի մասին հաղորդումների կարևոր թեմաներից էր թեմալիստների պայքարի «հակամապերիալիստական», «հակաարևմտյան» եզրույթներով բնութագրումը: Քննարկումների մեջ կարևոր, զգայուն թեմա էր պատերազմի հանցագործներին դաշնակիցների տրիբունալներին հանձնելու հարցը, քանի որ խնդիրն ուղղակիորեն առնչվում էր նաև գերմանական իրողությունների հետ: Եվ Թուրքիան նույնպես սրբնթաց կերպով ներգրավվեց այս «գերմանական թեմայի» քննարկման մեջ: Զարմանալի չէ, որ հենվերն ու Թալեբը բնութագրվում էին «այսպես կոչված պատերազմի հանցագործներ» ձևակերպմամբ, իսկ 1920 թ. թերթերը մեծ ուրախությամբ մեջբերում էին Քեմալի խոսքերը, որ նման տրիբունալներ չպետք է լինեն ո՞չ Գերմանիայի և ո՞չ է Թուրքիայի համար: Թուրքիայի նկատմամբ Անտանտի «իմպերիալիստական» բնութագրվող ծրագրերն որակվում էին որպես «Թուրքիայի ոչնչացման», «Թուրքիայի վերացման» նպատակ հետապնդող, դրանք ներկայացվում էին որպես «Թուրքիայի բռնաբարություն»: Մամուլը սկսեց պատկերել Թուրքիային որպես Դավիթ, որը պայքարի է ելել Գոդիաթ Անտանտի դեմ: 1920 թ. սկսած թերթերն անընդհատ նշում էին, թե թուրքերը Սուլթանա Քեմալի դեկավարությամբ, ինչ և լինի՝ չեն կարող պարտվել, և կրկնում էին այս միտքը անընդհատ, մինչև որ ստորագրվեց Լոզանի պայմանագիրը: Գերմանական մամուլը ակնտես հետևում էր, թե արդյո՞ք ռ ռազմական հաջողությունները նույն կերպ կշարունակվեն դիվանագիտական ասպարեզում: Եվ Լոզանի քննարկումների ժամանակ, երբ թուրքական պատվիրակությունը մերժում էր ինչ-ինչ կետեր, մամուլի համար մեկ այլ հերու հայտնվեց՝ Խամեր Խնոնյուն (թուրքական պատվիրակության դեկավարը): Թերթերի շատ հոդվածներում թուրքական թեմատիկայով ձևակերպումները տպագրվում էին թունդ տառերով, հաճախ և ավարտվում էին Քեմալից արված մեջբերումներով:

Լոզանի պայմանագիրը ներկայացվում էր որպես «թուրքական Վերսալ» այդպիսով ավելի ընդգծելով Թուրքիայի «տիպային դերը» գերմանացիների համար: Գերմանական ազգայնական մամուլը թեմալիստների հաղթանակը ներկայացնում էր որպես «ազգային կամքի քաղաքականության հաղթանակ»: Անց էր կացվում այն միտքը, որ «Ճշմարիտ ազգային զգացմունք» ունեցողները կարող են հասնել նրան, ինչին հասան թուրքերը, այդ կերպ «թուրքական դասը» դարձնելով միաժամանակ ավելի վտանգավոր և ավելի հրատապ: 1922 թ. գերմանական թերթերից մեկը հրապարակեց մի ծաղրանկար, վերնագրված «Խնչպես վերանայել Փարփի խաղաղության պայմանագիրը»: Պատասխանի մեջ շեշտվում էր, որ դա պատմաբանների, դիվանագետների կամ քաղաքագետների քննարկումների խնդիրը չէ, այլ պետք է դրան հասնել «գործողությունների» միջոցով կամ «ինչպես որ թուրքերը վարվեցին Սկրի հետ» (այն է սրով, ասել է թե զենքով): «Թուրքական ճանապարհը» լայնորեն ընդունվում էր որպես Վերսալի պայմանագրի վերանայմանը հասնելու միակ ուղի:

1919-1923 թթ. ընթացքում ազգայնական մամուլում տեղ գտած կարևոր կոնցեպտներից էր «ակտիվ» և «պասիվ» քաղաքականության քննարկումը, որտեղ «ակտիվ» էր որակվում թեմալականների դիրքորոշումը պատերազմ Անտանտի դեմ հանուն արժանապատիվ խաղաղության: Քաղաքականության նոր ձեր կապվում էր Սուլթանա Քեմալի անվան հետ: Գերելսի ուսուցիչներից ու կուտքերից մեկը համարվող հակածողովդավար, հակասեմիտ Ֆրիդրիխ Հուտսնզը «Մարդը և զանգվածները» հրապարակման մեջ Քեմալին բնութագրում է որպես «Առաջնորդ (Փյուրեր) անձնավորություն», որպես մի մարդու, որը անօգնական և հուսահատ զանգվածներին ձևափոխեց ազգի, բանակի, մարդ, որը զանգվածների առջև նպատակ դրեց: Հողվածագրի համար Քեմալը «պողպատյա անձնավորություն» է և «նրա հաղթանակները ոչ թե

հանգամանքների բերումով է, այլ հանգամանքները նրա հաղթանակի հետևանքներն են»:

Մենագրության երկրորդ գլուխը վերնագրված է ««Անկարան Սյունիսինում»։ Հիտլերի խոռվությունը և Թուրքիան» (էջ 68-107)։ Հեղինակը զիսի սկզբում նկատում է, որ Սուստինին հաճախ դիտվում է որպես նացիստների համար առաջնային «տիպային դերի» կրող, ինչն առավելապես պայմանավորված է Հերման Էսսերից պատկերավոր մեջբերմամբ, որտեղ Հիտլերը բնութագրվում է որպես «գերմանական Սուստինի»։ Մինչեւ Սուստինիի տիպային դեր խաղալու գործառությը ֆաշիստական Իտալիայի ավելի ուշ շրջանում ունեցած նշանակության հետևանք է, ինչը և դրդել է շատ հեղինակների գերազնահատել Իտալիայի և Հոռոմի վրա արշավի (1922 թ. հոկտեմբեր) դերը և առաջ քաշել այն թեզը, որ նույնիսկ իբր թե Հիտլերի խոռվությունը (պուտչը) բացառապես նպատակ ուներ կրկնօրինակելու Սուստինիի դեկավարությամբ Հոռոմի վրա կատարված արշավը։ Քիչ պատմաբաններ են նշել Սուստիա Քեմալի դերը Գերմանիայում մինչպուտչյան մքնուրութի ձեավորման գործում և, որպես կանոն, նացիզմին ու Հիտլերին նվիրված ուսումնասիրություններում բաց է թողնված թուրքական ազդեցության դերը։ Հակիմ անդրադառնալով այդ հեղինակների գործերին, Իհրիզը նշում է, որ իրականում Քեմալը, ավելի ճիշտ՝ նրա գործունեության լուսաբանումն ավելի մեծ դեր է խաղացել։ Եվ եթե գերմանական մամուլն ընդհանուր առմամբ արդեն առաջ էր քաշում Թուրքիայից սովորելու թեզը, ապա նացիստական մամուլը ավելի առաջ գնաց և հեղինակն այս զիսում ցույց է տալիս, թե ինչպես էին նացիստները «աճում» Թուրքիայի հետ։

Այս խնդիրը Իհրիզը լուծում է մամուլի երկու օրգանների (մեկը՝ նացիստների պաշտոնական օրաթերթի – *Völkischer Beobachter*, մյուսը՝ նացինալ-սոցիալիստական կուսակցության կիսառազմականացված թևի՝ «ինտելեկտուալ գենքի»

գործառույթ իրականացնող SA-ի մյունիսենյան շաբաթաթերթի - *Heimatland*) իրապարակումների վերլուծության միջոցով։ Բնութագրական է, որ այս շաբաթաթերթը Քեմալի նկատմամբ իր վերաբերմունքն արմատապես փոխեց 1920 թ. դեկտեմբերից նացինալ-սոցիալիստական կուսակցության պաշտոնաթերթը դառնալու հաջորդ իսկ օրվանից։ Երկու շաբաթ անց այդ պարբերականում արդեն հայտնվեց «Հերոսական Թուրքիա» վերնագրով հոդված, ևս մեկ ամիս անց՝ «Թուրքիան – տիպային դեր [ունեցողը]», որտեղ հեղինակը կանխատեսում էր, թե «Այսօր թուրքերը ամենաերիտասարդ ազգն են։ Մի օր գերմանական ազգը չի ունենալու այլ ընտրություն, եթե ոչ ապավինելու թուրքական մեթոդներին»։ Ի թիվս տարաբնույթ թեմաների, այս թերթերում անդրադարձ էր կատարվում նաև թեմալա-բոլշևիկյան մերձեցմանը, նկատելով, որ թուրքերը բոլշևիկներ չեն և միայն օգտագործում են վերջիններին՝ իրենց նպատակին հասնելու համար։ Թուրքիայի քրիստոնյա փոքրամասնությունները, մասնավորապես հույները և հայերը, ներկայացվում էին որպես հինգերորդ շաբախուն։ Զամեմատություն կատարելով իտալական փորձառության հետ (մինչև Հոռոմի վրա արշավը), նացիստական կուսակցության պաշտոնական օրգանը նշում էր, որ «իտալական օրինակը ցուցում է ազգային ոգու հաղթանակը ներքին քաղաքականության մեջ, մինչեւ Թուրքիան սովորեցնում է մեզ ճակատամարտում հաղթելու ձևը։ … Թուրքիան ձգուում էր վիրտուալ ձևով պահպանել իր գոյությունը, սակայն հետո եկավ հերոսը, որը հաղթահարեց օսմանների ֆատալիզմը ճաղկելով նրանց ինքնասիրությանը։ Ազգը հետևեց նրան ոգևորվածությամբ և ինքնազնիության պատրաստակամությամբ։ … Մինչեւ 60 միլիոնանց հզր գերմանական ազգը ստորագրեց իր սեփական ամորթի տակ Վերսալի պայմանագրում առանց դիմադրության։ 1922-23 թթ. Heimatland-ը շարունակում էր հատուկ ուշադրություն դարձ-

նել թուրքական օրինակին: Նկատելով, որ Քեմալ փաշան պատուել է Սսրի պայմանագիրը և բախում է Կոստանդնուպոլիսի դժոները, թերթը առաջ էր քաշում «Օգնիր ինքդ քեզ և դու օգնություն կստանա» թեզը, նկատելով, որ այս ասացվածքի ճշմարտացիության մեջ գերմանացիները կարող են համոզվել թուրքերից: 1922 թ. վերջերին քննարկելով առաջնորդության և ժողովրդավարության խնդիրներին առնչվող հարցեր, թերթը նկատում էր, որ «մեկ հզոր մարդը՝ Մուսթաֆա Քեմալն էր, որ միայնակ արթնացրեց հիմարաբար մտածմունքների մեջ խորասուզված, եյուծված և ամրողաւազես հուսահատված թուրք ազգը և նա էր, որ պարտությունը ձևափոխեց փայլուն հաղթանակի»: 1923 թ. սեպտեմբերի սկզբից սկսած, վեց շաբաթ շարունակ, այս պարբերականը ծավալուն հրապարակումներով անընդհատ անդրադասնում էր Թուրքիայի խնդիրներին և այդ կերպ նացիստները դառնում են «քուրքական դասերի» ամենամոլի և հետևողական պաշտպանները:

Խնդրին անդրադասնում էին նաև այլ, առավելապես աջ ուղղության պարբերականներ: Այսպես, 1921 թ. հորվածներից մեկում հեղինակը գրում է. «Մենք, գերմանացիներս, շուտով երեսի թե պետք է առերեսվենք այն որոշման հետ, որ հանձնելու ենք մեր իրավունքները և մեր սեփականությունը մեր թշնամիներին...: Եթե Մուսթաֆա Քեմալն ու նրա մարդիկ այս պահին լինեն Բեռլինում, նրանք կունենային այլ պատասխան (արդեն իսկ 1919-ին նրանք ունեին այլ պատասխան) և կիրազորձեին այն: Եթե հիմա բեռլինյան հրետափյունը նստած լիներ Կոստանդնուպոլիսում, նրանք [Քեմալի կողմնակիցները] երբեք չեին գնա Անկարայի վրա, այլ վստահաբար... կկապիտուլացվեին և այսօր ոչինչ չէր մնա թուրքական կայսրությունից»: Բնութագրական է, որ 1921-ին, բազմաթիվ տասնամյակների ընթացքում թերևս առաջին անգամ, Թուրքիայում բացակայում էր գերմանական ռազմական անձնակազմ, որը կաջակցեր թուրքերին նրանց պատերազ-

մում: Միակ անձնավորությունը գերմանացի վարձկան Հանս Թրոքստն էր: Ու նա էլ, «պատերազմի հերոս» երիխ Լյուդենդորֆի հորդորով, լրազրության բնազավոռում իր առաջին փորձերը, որոնք վերաբերում էին քեմալիստներին, իրականություն էր դարձնում վեց հոդվածներից բաղկացած շարքով նացիստական *Heimatland* շաբաթաթերթում: Եվ կրկին համեմատություն. «Սսրի պայմանագրի կնքումից հետո քաղաքական իրադրությունը Թուրքիայում հայտնի էր [թե ինչպիսին է]: Դա նույնն էր, ինչ վիճակում որ է մեր հայրենիքն այսօր՝ Վերսալի պայմանագրի կնքումից չորս տարի անց: ... Սակայն Թուրքիան այսօր բափով վերելք է ապրում: Հոդվածներից վերջինում Թրոքստը, թուրքական փորձի իմի բերմամբ, առաջարկում է Գերմանիայում ստեղծել միասնական տեղական ձակատ, ձեռնամուխ լինել «ազգային զուման [իրականացման]» և այդ առիթով ողջունում է Լոգանի կոնֆերանսով նախատեսված բնակչության փոխանակությունը Հունաստանի և Թուրքիայի միջև, ինչպես և ստեղծել բանակ գրեթե ոչնչից, ինչը զարգացած արդյունաբերություն ունեցող Գերմանիայի համար դժվար չի լինի:

Շտեֆան Իհրիզը նշում է, թե դժվար է հստակ պատկերացնում ունենալ այս հոդվածների դրանց ընթերցողների վրա ունեցած ազդեցության մասին, սակայն կարելի է վստահաբար պնդել, որ նացիստների առաջնորդները կարդացել են դրանք: Մասնավորապես, Թրոքստի առաջին հոդվածի լույս տեսնելուց հետո Հիտլերը հրավիրել էր նրան հանդիպման իր և նացիստների սոցիալիստների ղեկավարության հետ պատմելու Թուրքիայի մասին: Հիտլերի քարտուղարը՝ իր դեկանակարի անունից, գրել էր Թրոքստին. «Այն ինչին Դուք ականատես եք եղել Թուրքիայում, դա այն է, ինչը մենք անելու ենք ապագայում ինքներս մեզ ազատազրելու համար»: Հիտլերի մեկ այլ գործընկերոց վկայության համաձայն, եթե նա առաջին անգամ լսել էր Հիտլերին Այունիսենի զարեցրատանը

1922 թ. նոյեմբերին, վերջինս խոսել էր Սուսրաֆա Քեմալի և Սուտոլինիի օրինակների մասին: Բնութագրական է, որ սա եղել է Թուրքատի հոդվածաշարի հրապարակումից ավելի քան մեկուկես տարի առաջ: 1923 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին նացիստական վերոնշյալ շաբաթաթերթը իր ամեն համարում, ծավալի մեկ ութերորդի չափով, անդրադառնում էր Թուրքիայի թեմային, իսկ համարներից մեկում «Տվեր մեզ Անկարայի կառավարություն» վերնագրով հոդվածում նշում էր, որ Գերմանիայի ազատագրումը պետք է սկսել Բավարիայից և որ ծանրության կենտրոնը պետք է Բեռլինից տեղափոխվի Մյունիսեն: Հիտլերի պուտշից հինգ օր առաջ այդ պարբերականում առկա հոդվածների մի շարք անդրադառնում էր ազգային հեղափոխության թեմային և կոչ էր անում Բավարիայի դեկավարին «դառնալ երկրորդ Քեմալ փաշա և ստեղծել մեծ, միասնական, միացյալ Գերմանիա»: Սրան հաջորդեց Հիտլերի պուտշը, որը մեծապես ազդված էր ավելի շատ Քեմալի, քան թե Սուտոլինի գործունեությամբ: Հեղինակը այս առիթով մանրամասնորեն քննարկում է Հիտլերի պուտշի և դրա զաղափարական հիմնավորվածության մեջ Թուրքիայի Անկարայի կառավարության նմանողությամբ գործելու թեմային առնչվող ուղղակիորեն առկա չորս վկայությունները, որոնք այս կամ այն կերպ երևում են Հիտլերի դատավարության նյութերում: Հիտլերն ինքը դատավարության ժամանակ նշում է, որ ինչպես ցույց է տալիս Թուրքիայի փորձը, երկրի ազատագրումը կարող է զալ ոչ կենտրոնից Կոստանդնուպոլիսից: Եվ Հիտլերը նախ հղում է այն փաստը, որ երիտթուրքական հեղաշրջման ժամանակ էնվեր փաշան արշավեց Կոստանդնուպոլիսի վրա և նոր վարչակարգ հաստատեց այդտեղ: Սրանից հետո նա հիշատակում է «ամենադամական օրինակը՝ Խոալիան», երբ Փաշիստական ալիքը եկավ հյուսիսից և գրավեց Հռոմը: Այսինքն, Թուրքիան դառնում է այն պրիզման, որի միջոցով Հիտլերը հասկանում է ի-

տալական օրինակը: Դատավարության վերջին՝ բանչորսերորդ օրը Հիտլերը կրկին, վերոբերյալ հերթականությամբ, խոսում է Քեմալ փաշայի և Թուրքիայի, ապա նոր միայն Սուտոլինիի մասին: Հեղինակը կրկին շեշտում է, որ նման հերթականությամբ հիշատակումը ոչ թե սուկ խոսակցության մեջ մտքերի շարադրման հերթականություն է, այլ վկայում է Հիտլերի մտքերում որոշակի հիերարքիայի առկայության մասին: Բնութագրական է, որ 1924 թ. մարտին հայտնի Թուրքատը, նացիստական մեկ այլ պարբերականում տպագրված հոդվածում կրկնում է հիտլերյան բանաձեռումը, ասված դատարանում: Սուսրաֆա Քեմալն իր գործունեությունը՝ օրենքի տեսանկյունից, սկսեց որպես դաշտան, սակայն իրականում փրկեց մարդկանց տառապանքից:

Շտեֆան Իհրիգն ապա հակիրճ անդրադառնում է «օսմանյան գերմանացիների» խնդրին և դիտարկում է Օտտոն ֆոն Լոսովի, Զանս Հյումաննի, Կոնստանտին ֆոն Նեյրաթի, գեներալ Ֆրոնսար ֆոն Շելենդորֆի, Օտտոն ֆոն Ֆելդմաննի, Սարու Էրվին ֆոն Շյոբներ-Ռիխտերի, Ռուդոլֆ Հեսսի գործունեության դրվագները: Հեղինակը նշում է, որ անգամ Հիմմլերը մի պահ 1920-ականների սկզբներին դիտարկում էր Թուրքիա տեղափոխվելու ծրագիրը: Հեղինակը եզրակացնում է, որ 1923 թ. նոյեմբերին մյունիսենյան իրադարձություններում թուրքական, քեմալական զաղափարական ներկայացվածության ծավալը բավականին հստակ է: Թուրքական գործոնն էր ստեղծել այն մինուրտը, որը նացիստներին թույլ էր տվել մտածելու, որ իրենց կազմակերպած պուտշը կարող է հաջողությամբ պատճենել: Եթե հավատալու լինենք Հիտլերի 1936 թ. ճառերից մեկում ասված այն մտքին, որ 1919-1923 թթ. նա մտածում էր միայն ու միայն պուտշի մասին, դա նշանակում է, որ նա շատ է մտովի անդրադարձել թուրքական զարգացումներին: Այսինքն, պետք է նկատի ունենանք Հիտլերի վրա Սուսրաֆա Քեմալի ունեցած կարևոր, եթե ոչ կարևորա-

գույն ազդեցության մասին: Սա էլ կարող է մասնակիորեն բացատրել Աթաթուրքի պաշտամունքի փաստը Երրորդ ռեժիմում: Բնութագրական է, որ մինչև Հռոմի վրա կատարված արշավը, Իտալիայի ֆաշիստական մթնոլորտի մեջ որոշակի դեր ուներ թուրքական թեման: Թերևս պատահական չէ, որ մինչ նշված արշավը, Մուսոլինին իրեն կոչում էր նաև «Սիլանի Անկարայի Մուսթաֆա Քեմալ»: Հեղինակը կրկին նկատում է, որ Մուսոլինիի վրա ուշադրություն դարձնելուց շատ առաջ գերմանական մամուլը քննարկում էր թուրքական դասերը և դրանց Գերմանիայի համար ունեցած դերը: Այսինքն, նացիստներն «աճում էին Թուրքիայի հետ», մանավանդ որ Հիտլերն էլ մոլի թերթ կարդացող էր, հատկապես իր շարժման վաղ փուլում՝ 1920-ական թթ. սկզբին:

Մենագրության երրորդ գլուխը վերնագրված է «Հիտլերի «Մյության միջի աստղը». նացիստների հիացմունքը Աթաթուրքով և նրա Նոր Թուրքիայով» (էջ 108-146): 1923 թ. հետո Թուրքիան ձեռնամուխ է լինում տնտեսության վերակառուցման և մոդեռնիզացման, չնայած պետական համակարգը մնում էր ինքնակալական ծողովրդավարության օրինակ՝ մեկ քաղաքական կուսակցությամբ: Բանտարկության ավարտից հետո Հիտլերի դեմ մեկ անգամ ևս մեղադրանքներ են առաջադրվում 1929 թ., և իր պաշտպանական ճառում Հիտլերը կրկին գուգահեռներ է անցկացնում իր և Աթաթուրքի, իր և քեմալական շարժման միջև: Ինքը անդրադառնում է նաև Հիտլերի *Mein Kampf*-ում (1925 թ.) Աթաթուրքի բացակայության խնդրին: Սակայն Հիտլերն անդրադառնում է Հին Թուրքիային, մատնանշելով, մասնավորապես, որ «Գերմանիան պարզապես չունի Էնվեր փաշա»: Անդրադարձն Աթաթուրքին Հիտլերի աշխատությունում տեղ է գտնում անուղղակիրեն, եթե խոսվում է «ակտիվ դիմադրության» մասին և առաջ է քաշվում այն միտքը, որ Ռուրի շուրջ հնարավոր բանակցությունների պարագայում Գերմանիան պետք է խոսի ուժի

դիրքերից՝ մի պահվածք, որը Նոր Թուրքիայի օրինակով անընդհատ մեխանիզմ էր գերմանական մտայնության մեջ մամուլի կողմից: Նացիստալ-սոցիալիստական կուսակցության 1928 թ. հավաքին Հիտլերի ուղղված խոսքում կրկին Գերմանիան համեմատվում է Թուրքիայի հետ: Գերմանական մամուլում տարբեր առիթներով գրվում էր Թուրքիայի և Գերմանիայի ճակատագրերի նմանության մասին: Անզամ Վեյմարյան հանրապետության ուշ շրջանի պատմության դասագրքերում Թուրքիայի ազգայնամոլական-թեմալական շարժումը մեկնաբանվում է որպես «ազգային նվիրվածության դրսևորման փայլուն օրինակ»:

1933 թ. նոյեմբերին գերմանական թերթերից մեկը գրեց, որ «Ադոլֆ Հիտլերի գերմանական նացիստալ-սոցիալիզմը և թուրքական քեմալիզմը մոտ հարաբերությունների մեջ են գտնվում»: 1933 թ. մարտին թերթերից մեկը տարածեց հայտարարություն, որ Ֆաշիզմի հետազոտության ընկերակցությունում կայացել է դասախոսություն «Մուսթաֆա Քեմալի ազգայնական հեղափոխությունը Թուրքիայում զաղափարական-պատմական գուցահետ է Գերմանիայի նորացմանը և գերմանական ֆաշիզմին»: Զեկուցողը Գերելսի գործակիցներից էր, 1932 թ. լուս տեսած Հիտլերի կենսագրության հեղինակը: Զեկուցման վերջում նա ընդգծում է, թե որքան նման զեր ունեն Աթաթուրքի և Հիտլերի կենսագրությունները: 1933 թ. հուլիսին Հիտլերը հարցադրույց է տալիս թուրքական *Milliyet* օրաթերթին: Նա նշում է, որ լավ հարաբերություններից զատ մի ինչ-որ ավելի բան կա, որը կապում է երկու ուժիմները. դա փոխադարձ սիմպատիան է և հասկացողությունը՝ հենված նման նպատակներ հետապնդելուն: Կենտրոնական հնչեղություն ուներ Հիտլերի դիտարկումը այսպես կոչված «մութ 1920-ականների» մասին: Հիտլերն ասում է. «Թուրքիայի ստեղծմանն ուղղված այն ազատագրական պայքարը, որ վարում էր Աթաթուրքը իրեն [Հիտլերին] տվեց վստա-

հուրյուն, որ նացիոնալ-սոցիալիստական շարժումը նույնպես հաջողություն կունենա: Այս տեսանկյունից շարժումը Թուրքիայում եղել է իր համար պայծառ աստղ»: 1938 թ., իր ծննդյան օրը, հանդիպելով թուրք քաղաքական գործիչների պատվիրակությանը, Հիտլերը նշել է. «Աթաթուրքը առաջինն էր, որ կարողացավ ցույց տալ, որ հնարավոր է մոբիլիզացնել և վերստեղծել այն ռեսուրսները, որ երկիրը կորցրել է: Այս առումով Աթաթուրքը ուսուցիչ էր. Սուստինին նրա առաջին, իսկ ես երկրորդ աշակերտն էի»:

Թուրքիայի Հանրապետության տասնամյակի առիթով կայացած հանդիպմանը նացիոնալ-սոցիալիստական կուսակցության արտաքին հարաբերությունների բաժնի դեկապար Վերներ Դեյթզը, խոսելով Նոր Թուրքիայի՝ Գերմանիայի համար խաղացած դերի մասին, դիտարկում էր քեմալիզմը, նացիզմը և ֆաշիզմը որպես նույն երևույթի ձառագայթումներ: Գերմանական համակրանքի վառ դրսորում էր նաև այն, որ 1933 թ. հոկտեմբերի 30-ին նացիոնալ-սոցիալիստական կուսակցության մի ջոկատ հանդիսավոր երթով մոտեցավ Բեռլինում թուրքական դեսպանությանը և ավելի քան 12 ժամ պատվո պահակ կանգնեց: Դրական վերաբերմունքը բացմից տարաբնույթ դրսորումներ էր ունենում նաև դիվանագիտական արարողակարգում: Իսկ 1936 թ. ապրիլին թուրքական մամուլում հայտարարվեց, որ «քուրքերը արիացիներ են»: Հիտլերի լուսանկարիչը իր հուշերում նշել է, որ Հիտլերն ուներ Աթաթուրքի կիսանդրին, որը նրա փայփայած իրերից մեկն էր:

1933-1938 թթ. նացիստական կուսակցության գլխավոր օրգան *Völkischer Beobachter*-ը հարյուրավոր հոդվածներ է տպագրել Թուրքիայի մասին: Նացիստական մամուլը բացմից ընդգծում էր, որ Աթաթուրքի հեղափոխությունը եղել է ազգային հեղափոխություն և տիպային դեր է խաղացել նացիստների համար և մատնանշում էր Թուրքիայի և Գերմանիա-

յի միջև եղած նմանությունը: 1941 թ. գարնանը թոշակառու գերմանացի գեներալը իր մի հոդվածում շեշտում էր, որ Քեմալ Աթաթուրքը նացիստական Գերմանիայում եղել է ամենաշատ հիացմունքի արժանի պետական գործիչներից և մերօրյա ազգային գործիչներից մեկը: 1933 թ. *Cumhurriyet*-ին տրված պատասխաններում Հիտլերը նշել է, որ ինքը մեծ ուշադրությամբ երկար տարիներ հետևել է Թուրքիայի կայկական պայքարին, և որ Սուլթանի Քեմալի հանձարն ու Էներգիան ուղղորդել են իրեն այն տարիներին, երբ նացիոնալ-սոցիալիստական կուսակցությունը գտնվում էր ընդդիմության մեջ:

Աթաթուրքը մահացավ 1938 թ. նոյեմբերի 10-ին: Դա Գերմանիայի պատմության կարևոր էջերից մեկի՝ «կոտրված ապակիների զիշերվա» (*Reichskristallnacht*) հաջորդ օրն էր: Եվ այնուամենայնիվ, գերմանական մամուլի առաջին էջերում, որպես կանոն, Աթաթուրքի լուսանկարն էր՝ մահվան մասին հաղորդագրությամբ հանդերձ: Թերթերի մեծամասնությունը տպագրեց Հիտլերի, նաև Ռիբենտրոպի, ֆոն Պապենի ցավակցական հեռագրերի տեքստերը: Մասնավորապես, Հիտլերի հեռագրում Աթաթուրքը բնութագրվում էր որպես «մեծ զինվորական, հանձարեղ պետական գործիչ, պատմական անձնավորություն»:

Աշխատության չորրորդ գլուխը վերնագրված է ««Թուրքական ֆյուրերը». նացիստական վարքը և ազգային կրթությունը» (էջ 147-171): Հեղինակը մեջքերում է 1938 թ. դեկտեմբերին *Hamburger Tageblatt* թերթը, որը հրապարակել է «Ֆյուրերը և ազգը» վերնագրով մի էսսե: Դրանում հեղինակը զարգացնում էր զաղափարներ կատարյալ ֆյուրերի (մասնավորապես, թե ինչպես նա պետք է կառավարի) և ազգի մասին: Նկատվում էր, թե «նա, ով մտածում է ավելի շատ իր, քան թե ողջ ազգի բարեկեցության մասին՝ երկրորդ կարգի արարած է... Միայն նա, ով աշխատում է ապագայի համար առանց իր անձի մասին մտածելու կամ նման մարդու շրջապատը՝ կարող են

հիմքեր ստեղծել իրենց ազգի ապագա երջանկության և առաջնօրացի համար»: Այս ամենը համահունչ էր ֆյուրերի (առաջնորդի), դեկավարության և ազգի մասին նացիստական գաղափարներին: Եվ բնութագրական է, որ հրապարակման հեղինակը դրանից քիչ առաջ մահացած Սուսթաֆա Քեմալ Աթաթուրքն էր՝ «քուրքական Կեսար»: Աթաթուրքի կենսագրությունն օգտագործվում էր պատմելու և բացատրելու համար երկու հրաշքները թուրքական ազգայնամոլական շարժումը և նոր, մոդեռն, ժողովրդական (*völkisch*) Թուրքիայի շարունակական տնտեսական աճը: Դրանք այն պրիզմաներն էին, որոնցով նացիստները և Երրորդ ռեյխը պատկերացնում էին Նոր Թուրքիան: Ընդհանրապես, Աթաթուրքի պատմությունը դա կատարյալ ֆյուրերի պատմություն էր Երրորդ ռեյխի հեղինակների համար: Եվ Աթաթուրքի պատմությունը անընդհատ պատմելով ենթադրվում էր, որ այժմ էլ գերմանացիները պետք է սովորեն թուրքական օրինակի հիման վրա, թե ինչ է նշանակում ֆյուրերի հետևից գնալը: Աթաթուրքը ներկայացվում էր իբրև ապացույց այն բանի, որ պատմությունը կերտում են մեծ մարդիկ: Ո՛չ զանգվածները և ո՛չ էլ ժողովրդավարությունն են առաջարկում նման մեծությունների կերտման ճանապարհը, այլ միայն ֆյուրերը: Աթաթուրքի կենսագրության մասին գրքերից մեկի հեղինակ Ֆրից Ռյուլերը պնդում էր, որ Սուսթաֆա Քեմալն այն եզակի մարդկանցից մեկն է, որը «ժողովրդական զանգվածներից վեր բարձրացվ և արարեց համաշխարհային պատմությունը»: Եվ հեղափոխական Թուրքիան փոխեց աշխարհը: Այդ իսկ պատճառով այդ համակարգը կարիք է զգում հատուկ ուշադրության: Ու ա՛յդ Թուրքիան է կարող տիպային դեր խաղալ ազգային հեղափոխության համար:

Բնութագրական է, որ քեմալական շարժման մասին առաջին գերմաներեն գիրքը հրատարակվել է 1924 թ.: Առաջին հուշագրությունը հրատարակվել է 1925 թ. նացիստ դարձած

Հանս Թորբատի կողմից: Անհաշիվ գրքեր ու հուշեր են հրատարակվել Թուրքիայում ընթացող Առաջին համաշխարհային պատերազմի մասին: Իսկ 1928 թ. գերմաներեն հրատարակվեց Աթաթուրքի 36 ժամանց ձառը (Նութուք), որտեղ իմի էր բերված նրա թուրքական ազգայնամոլական շարժման և Նոր Թուրքիայի ստեղծման մեկնարանությունը: Իհրիզը նշում է Աթաթուրքի ևս երկու կենսագրականների մասին, որոնցից մեկը վեց տարում ունեցել էր 10 վերահրատարակություն, մյուսը՝ առաջին իսկ տարում (1935 թ.) յոթ հրատարակություն: Նա նկատում է, որ մինչև 1938 թ. Աթաթուրքի մասին հազարավոր կենսագրականներ են հրատարակվել գերմանական մամուլում: Իսկ 1934 թ. հրատարակված «Համաշխարհային քաղաքականության դեկավածները» գրքի առաջարանում նշված էր, որ միայն Սուսթաֆա Քեմալ Աթաթուրքը կարող է համադրվել Հիտլերի և Սուստինիի հետ: Մեկ այլ տեղ բնածին առաջնորդ համարվող Աթաթուրքը ներկայացվում էր իբրև «հասարակ զինվորականից մինչև պետական գործիչ» ճանապարհն անցած անձնավորություն, այսինքն՝ նույն կերպ, ինչպիսին հաճախ ներկայացվում էր Հիտլերի անցած ճանապարհը: Ընդհանրապես, Երրորդ ռեյխի տեքստերում Հիտլերին բնութագրող ածականները նույնական էին Աթաթուրքին ներկայացնող բնութագրումներին «մեծ», «հանճարեղ», «փրկիչ», «կերտող», «առարյալ»: Եվ իհարկե «Աթաթուրքը արիացի էր, ինչպես որ էր Հիտլերը»: Տեքստերից շատերում Աթաթուրքի պատմությունը ներկայացվում էր որպես կատարյալ ֆյուրերի՝ երջանիկ ավարտ ունեցող պատմություն: Աթաթուրքի կենսագիրներից Ֆրից Ռյուլերն իր գրքում եզրակացնում էր, թե «Սենք՝ գերմանացիներս ... կարող են ստվորել Թուրքիայի նորագույն շրջանի պատմությունից, որ ազգը չի կորչի, եթե ազատ և արժանապատիկ ապրելու ճանապարհին հետևում է իր ֆյուրերին ... Եվ երբ նա մեզ խնդրում է զոհաբերության դիմել, ապա

շպետը է լինի գերմանացի, որը դա չիրականացնի ուրախ սրտով այն նույն կերպ, ինչպես վարվեց թուրք ազգը»: Շեշտվում էր նաև այն հանգամանքը, որ Աթաքուրքը ոչ միայն վերացրեց սուլթանական կարգերը և խալիֆայությունը, այլ նաև ամբողջապես աշխարհիկացրեց Նոր Թուրքիան: Եվ միայն «թուրքական Նապոլեոնի» էնվեր փաշայի դասերն էին (պարտությունը ոռուս-թուրքական ճակատում), որ գերմանացիները ոչ մի կերպ չէին ցանկանում սովորել:

Աշխատության հինգերորդ գլուխը վերնագրված է «Նոր Թուրքիան. նացիստների մտապատկերները արդիական ժողովրդական պետության մասին» (էջ 172-208): Գերմանական թերթերից մեկը 1933 թ. գրում էր. «Այնպես, ինչպես Ադոլֆ Հիտլերը ստեղծեց նոր Գերմանիան, և Սուսովինին՝ նոր Իտալիան, այդպես է ժամանակակից Թուրքիան բացառապես Մուսաֆիա Քեմալի ստեղծածն է և միաժամանակ վկայությունն է այն բանի, թե ինչպես ֆյուրերի կարնորագույն անձը կարող է կերտել երկիր ու ազգ»: Ու թերևս պատահական չէ, որ քեմալիզմը հաճախ բնութագրվում էր իբրև «նացինալ-հեղափոխական գաղափարախոսություն»: Չնայած այն հանգամանքին, որ 1930-ական թթ. սկզբներին Թուրքիան բոլոր շափանիշներով հետամնաց երկիր էր, բնավ համեմատելի չէր արևմտյան արդյունաբերական երկրների հետ, նացիստական պատկերացումներում այն ներկայացվում էր որպես ամենաառաջավորը իր գաղափարախոսության, կիրառվող քաղաքական գործիքների, և նպատակների պատճառով: Նոր Թուրքիայի նկատմամբ նացիստական մտապատկերները ներառում են բազմաթիվ թեմաներ: Դրանցից մեկը փորձամասնությունների խնդիրն էր, որը Երրորդ ռեյխի ձևավորման ժամանակ Թուրքիայում արդեն «լուծվել» էր հայերի մեծամասնությունը ոչնչացվել կամ լրել էր երկիրը: Հույների մեծ մասը նահանջել էր հունական բանակի հետ, իսկ մնացողները բնակչության «փոխանակման» ճանապարհով, մեկնել էին

Հունաստան: Ոչ-մուտքմանական փորձամասնությունները մնացել էին հիմնականում Ստամբուլում, սակայն Նոր Թուրքիայի մասին նացիստական պատկերացումներում դրանք էական չէին՝ նացիստների համար Թուրքիան ռասայական տեսանկյունից համասեր երկիր էր: Նշելով, որ Հայոց ցեղապանությունը իր այս աշխատանքում դիտարկելիք խնդիրներից չէ, Իրիզգը ծանրագրությունում ավելացնում է, որ շուտով նույն հրատարակչությունը լույս է ընծայելու իր հեղինակած «Justifying Genocide: Germany, the Armenian Genocide, and the Long Road to Auschwitz» («Ցեղասպանության արդարացումը. Գերմանիան, Հայոց ցեղասպանությունը և Առուցից տանող երկար ճանապարհը») մենագրությունը: Հեղինակը վստահ է, որ նացիստները լավ էլ գիտեին Հայոց ցեղասպանության մասին, քանի որ «այնքանով, որքանով որ նրանք աճում էին Թուրքիայի և թուրքական անկախության պատրազմի [իրողությամբ], նույնչափ էլ նրանք աճում էին Հայոց ցեղասպանությամբ»: Հեղինակը համառու անդրադառնում է Յոհաննես Լեփսիուսի գործունեությանը, Թալեաթ փաշայի սպանությանը և դատավարությանը, 1922 թ. երկու երիտրութերի սպանությանը Բեռլինում և նկատում, որ այս առիթով գերմանական մամուլում տեղ գտած քննարկումները պարարտ հող էին ստեղծում գերմանական հակահայկականության համար, որն իր արմատներով բավականին նման լինելով XIX դարի վերջերից դրսերքող հակահեականությանը, ներկայացնում էր հայերին որպես «Արևելքի հրեաներ»: Հակահայկական կարծրատիպեր պարունակող հրապարակումներից էին Կառլ Մայի Խովելները Արևելքի մասին: Հայտնի է, որ Հիտլերը այդ հեղինակի գործերի անհազ ընթերցողներից էր և պարբերաբար վերընթերցում էր նրա բոլոր ստեղծագործությունները, անգամ երբ դեկավարում էր Գերմանիան: Այդ հեղինակի զիշավոր հերոսի անունը թարգմանաբար հևում է որպես «Կառլ, գերմանացիների որդի»: Եվ ահա

այդ որդին XIX դարի վերջին տեղ գտած հայկական կոտորածների մասին հետևյալ համոզմունքն է հայտնում. «Թուրքերը ճիշտ վարվեցին, որ ծեծելով սպանեցին հայերին: Թուրքի համար այլ ճանապարհ չկար իրեն հայից պաշտպանելու:

... Հայն աշխարհում ամենավատ տիպարն է: Նա վաճառում է իր կնոջը, իր երիտասարդ աղջկան, նա գողանում է իր եղբորից: Ողջ Կոստանդնուպոլիսը բարոյապես թունավորված է հայերի կողմից: Թուրքերը չեն, որ սկսել են հարձակումը, դա հայերն են արել: ... Թուրքը ինքնապաշտպանվում է....: Հայր հեղափոխական է, ում օգտագործում է անզիացին՝ առլրանին զահընկեց անելու համար»: Հակահրեական պատկերացումները տարածվում էին նաև հայերի վրա, որոնց բնութագրելու համար տարածված էին «մակարույններ» և «ժանտախտ» որակումները: Հայերի մասին նման բացասական կաղապարները շարունակվում էին շրջանառվել գերմանական մամուլում մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը: Կենտրոնական Եվրոպայի հրեաների և օսմանահպատակ հայերի միջև տարվող զուգահեռներից մեկը ներկայացրեց վերը հիշված Հանս Թրոքստը իր 1923 թ. հոդվածների շարքում՝ դա երկրի «էթնիկ զուման» խնդիրն էր: Արդեն Հիտլերի դատավարության ժամանակ 1924 թ. այդ ժամանակվա նացիստական գլխավոր թերթի առաջին էջում լույս տեսած հոդվածում Թրոքստը ուղղակիորեն մատնանշում էր, որ այն, ինչ պատահեց հայերի հետ, շատ լավ էլ կարող է պատահել հրեաների հետ ապագա Գերմանիայում:

Թեհլերյանի դատավարության ժամանակ նրան ի պաշտպան հանդես գալ ցանկացող մարդկանցից էր Մաքս Էրվին ֆոն Շյոբներ-Ռիխտերը: Սակայն նրան ձայն չտրվեց, քանի որ առանց այդ էլ բավականին շատ էին քննարկումները Հայոց ցեղասպանության մասին: Այդ անձը Առաջին համաշխարհայինի ժամանակ փոխհյուպատոս էր Օսմանյան կայսությունում, ցեղասպանության ականատես էր և մեկն էր այն

գերմանացիներից, որը բողոքում էր երիտրուրքերի ձեռնարկած քայլերի դեմ, օգնում էր հայերին սնունդով: Տարօրինակարար, Շյոբներ-Ռիխտերը նացիստ էր շարժման ձևավորման առաջին իսկ օրվանից և Հիտլերի մերձավոր ընկերն էր, ու Թեհլերյանի դատավարության օրերին ներկայացվում էր որպես Հիտլերի քաղաքական խորհրդատու: Սակայն նա զոհվեց Հիտլերի պուտչի ճնշման ժամանակ, եթե իր կյանքի գնով փրկեց վերջինս վերահաս մահվանից: Իհրիզը հնարավոր է համարում, որ Շյոբներ-Ռիխտերը պատմած լիներ Հիտլերին Օսմանյան կայսրության, քեմալիստների և հայերի ու, մասնավորապես, Հայոց ցեղասպանության մասին: Այն դեպքերում, եթե Հիտլերը խոսում էր Օսմանյան կայսրության մասին, նկատվում էր, որ նա լավ տեղեկացված է թուրքական պատմությունից: Իհրիզը նկատում է, որ պատճառներից մեկը ենթադրելու, որ Հիտլերի հետ մտքեր են փոխանակվել Հայոց ցեղասպանության մասին այն հանգամանքն է, որ Հիտլերն ու Շյոբներ-Ռիխտերը միասին էին ժամանել Բեռլին, որպեսզի վերջինս վկայությամբ հանդես գար Թեհլերյանի դատավարությունում: Բոլոր դեպքերում, քանի որ Հիտլերը մոլի թերթ ընթերցող էր, իսկ Թեհլերյանի դատավարությունը լայնորեն մեկնաբանվում էր գերմանական մամուլում, նա վստահաբար ծանոթ էր գործին առնչվող հարցերին:

1920-ական թթ. Հիտլերն իր ճառերում դիմում էր հայերի օրինակին, եթե խոսում էր «ցածր ռասաների» մասին, ինչպիսիք որ հրեաներն էին: Սասնավորապես, 1928 թ. իր նյուրնթերգյան ճառում Հիտլերը նշում է, որ եթե քայլեր չձեռնարկվեն գերմանացի բնակչության աճի ուղղությամբ, «մենք աստիճանաբար կդառնանք հայերի նման ազգ»: 1929 թ. մի հրապարակումից պարզ է դառնում, որ նա գիտեր Պաղեստինում հայերի գոյության մասին: Նացիստական այլ տեքստերի քննությունից հասկացվում է, որ դրանցում Աթաթուրքի հաջողության նախապայմաններից մեկը դիմում էր «հայերի

ոչնչացումը», որի անհրաժեշտությունը համեմատվում էր ամերիկյան հնդկացիների ոչնչացման հետ: Հայերի ներկայացումը որպես «Արևելի հրեաներ» նացիստական հրապարակումներում և մամուլում այնքան էր տարածված, որ 1936 թ. Պրոպագանդայի նախարարությունը համապատասխան հրահանգ հրապարակեց, որտեղ նշվում էր, որ հայերն իրականում հրեաներ չեն: Երբորդ ռեյխի շատ հեղինակների համար «Եթնիկ զտումը» դիտվում էր որպես նախապայման Նոր Շուրքիայի հաջողության համար:

Նոր Թուրքիան ներկայացվում էր որպես տիպային դեր ունեցող նաև կրոնական քաղաքականության ոլորտում: Հիտլերի կենսագիրները նկատում են, որ վերջինս կրոնի հարցերում այնուամենայնիվ այդքան արմատական չէր, որքան որ Աթաթօւրքը: Բայց և այնպես Հիտլերը զմայլվում էր Աթաթօւրքի լուծումներով «Եկեղեցու» դեմ մղվող պայքարում: 1942 թ. օգոստոսին նա նկատել էր, թե «Ի՞ր կրոնավորների հետ որքան արագ հարցերը լուծեց Քեմալ Աթաթօւրքը դա [պատմության] ամենաապշեցուցիչ զլուխներից մեկն է: Նա միաժամանակ զիսատեց դրանցից 32-ին: Այս Սոֆիան ներկայումս թանգարան է»:

Գերմանական մամուլում Թուրքիան և Գերմանիան բնութագրվում էին որպես միանձնյա առաջնորդներ և, դրանով պայմանավորված, տնտեսության «վերակառուցման կամք» ունեցող երկրներ: Նոր Թուրքիան հաճախ համեմատվում էր Ամերիկայի հետ: 1936 թ. ռեյխսբանկի նախագահը Անկարան համարում էր «քուրքական ոգու մեծագույն ստեղծագործություններից մեկը», որը կարող է համեմատվել միայն ամերիկյան քաղաքների ստեղծման հետ: Մամուլի բազմաթիվ հրապարակումներում շեշտվում էր, որ Աթաթօւրքի կառավարման սկզբում երկրում բացակայում էր արդյունաբերությունը, չկային անհրաժեշտ գումարներ, ավերված երկրից զատ ոչինչ չկար: Նոր գործարանների կառուցման, ենթակա-

ոուցվածքների ստեղծման, երկրի էլեկտրաֆիկացման խնդիրն արձարձվում էր հարյուրավոր հոդվածներում:

Փարփյան խաղաղության պայմանագրի ամբողջական վերանայման շնորհիվ քեմալական Թուրքիան կարող է որակվել իբրև մինչպատերազմական շրջանի Եվրոպայի ուսիզիոնիստական պետություն: Սակայն Լոզանի պայմանագիրը Թուրքիայի համար երկու խնդիր թողեց չլուծված՝ նեղուցների ապառազմականացումը և Ալեքսանդրետի սանցակի ապագան: 1936 թ. նեղուցների ռազմականացումը մեծ աջակցություն ստացավ Գերմանիայում և լայնորեն լուսարանվեց երկրի մամուլում: Անց էին կացվում բազմաթիվ զուգահեռներ գերմանական իրականության հետ, մասնավորապես, նեղուցների հարցը համեմատվում էր Հունոսի շրջանի ապառազմականացման հետ: Նույն կերպ Ալեքսանդրետի սանցակի խնդիրը համարվում էր Սուլեյտյան հարցի հետ: Մի խոսքով, Նոր Թուրքիան և Նոր Գերմանիան ներկայացվում էին որպես երկվորյակ եղբայրներ: Կար այն ամուր արմատակալած մտանությունը, որ եթե թուրքերը հաջողում էին իրենց գործերում, ապա նույն կերպ կարող է հաջողության հասնել նաև Գերմանիան:

Աշխատության վեցերորդ գլուխը վերնագրված է «Երկրորդ համաշխարհային պատերազմը և Թուրքիան. մեկ այլ Խսպանիա» (էջ 209-222): Հեղինակը նշում է, որ 1936 թ. դրությամբ թուրքական ապրանքների արտահանության 51%-ը բաժին էր հասնում Գերմանիային, և թուրքական ներմուծումների ուղիղ կեսը նույնպես Գերմանիայից էր: Մինչև 1939 թ. թուրքերը գերմանական ռազմական տեխնիկայի այդ թվում և օդանավերի ու սուզանավերի, հիմնական զնորդներն էին: Երկրորդ համաշխարհայինի տարիներին Թուրքիայի նշանակությունը նացիստների համար դարձավ խիստ կարևոր, պայմանավորված քրոմիտների արտահանման փաստով, որոնք որոշիչ դեր ունեին մաքուր պողպատի պատրաստման համար:

1939 թ. ամուսնը Թուրքիան բարեկամության և փոխադարձ օգնության պայմանագրեր կնքեց Անգլիայի և Ֆրանսիայի հետ, իսկ Գերմանիայի հետ միայն 1941 թ.: Խորհրդային Միության վրա Գերմանիայի հարձակվելու նախօրյակին Թուրքիան հայտարարեց իր չեզոքության մասին: Չնայած նման հայտարարությանը, Թուրքիայում բավականին ուժեղացան պանթուրքական տրամադրությունները, որոնք օգտագործվում էին նաև գերմանացիների կողմից: Պատահական չեր, որ ԽՍՀՄ սահմանին թուրքերը գրեթե ողջ պատերազմի ընթացքում կենտրոնացրել էին 28 դիվիզիա: Սակայն հենց որ հասկացվեց, որ Գերմանիան պարտության ճանապարհին է, Թուրքիան սկսեց փոխել իր քաղաքականությունը բազմամյա դաշնակցի նկատմամբ: Մասնավորապես, 1944 թ. գարնանը դադարեցվեց քրոմիտի արտահանությունը, և միայն 1945 թ. փետրվարի վերջին պատերազմ հայտարարվեց Գերմանիային: Այս վերջին քայլն էլ պայմանավորված էր այն գործոնով, որ միայն մի քանի օր էր մնում նոր ձեռագործող Սիավորված ազգերի կազմակերպություն մտնելու համար:

Այսպիսով, ներկա հետազոտությունը որակապես նոր նյութ է դնում գիտական շրջանառության մեջ և դրա վերլուծությամբ որակապես նոր եզրակացություններ առաջարկում: Մինչ այժմ գերիշխում էր այն կարծիքը, որ աշխարհի մեծագույն շարագործներից մեկը՝ Աղոլֆ Հիտլերը, ոգեշնչվում էր իր ավագ ֆաշիստ գործընկեր Բենիտո Սուտունիի գաղափարներով և գործունեությամբ: Շտեֆան Իհրիզը ցույց է տալիս, որ Հիտլերի և նացիստների համար հավասարապես կարևոր տիպային դեր էր խաղում Սուտունի Աթարուրը՝ ժամանակակից Թուրքիայի հիմնադիրը: Իհրիզի աշխատությունն այս կերպ նոր մոտեցումներ է առաջարկում նացիստական գաղափարախոսության և ռազմավարության արմատների որոնման գործում:

Հարություն Մարության պ.գ.դ.

*Murat Bardakçı, "Talat Paşanın Evrak-i metrukesi",
İstanbul, Everest Yayınları, 2008, 272 s.*

2008 թ. Ստամբուլում թուրք հայտնի լրագրող և ուսումնասիրող Մուրադ Բարդաքչի կողմից և նրա առաջարանով հրատարակում է «Թալեաթ փաշայի լրված փաստաթղթերը» վերնագրով գիրքը: Առաջարանում Բարդաքչին, անդրադառնալով զրի ստեղծման նախապատմությանը, նշում է, որ Թալեաթ փաշայի անձնական իրերի մեջ, մասնավորապես, նրա ճամպրուկի աստաղի տակից գտնվել է «Սև կազմով տետրը», որը, ըստ Էության, ոճրագործի անձնական օրագիրն է, որտեղ նա գրառումներ է արել և տարատեսակ փաստեր արձանագրել: Այդ գրառումների մի մասը վերաբերում է նաև Հայոց ցեղասպանությանը, որն ըստ Բարդաքչի՝ իբրև թե պետք է լույս սփոթեր հայկական սփյուռքի «պնդումների» և այլ հարցերի վրա¹ բնականաբար թուրքական թեզերին համապատասխան, սակայն հենց այդ նույն փաստերը առաջացնում են մի շարք հարցականներ, որոնք ոչ միշտ են տեղակարգություն ժիւտողականության սցենարում:

Գիրքը բաղկացած է 4 գլուխներից, որոնցում ներկայացվում են «սև կազմով տետրի» մեջ տեղ գտած ցուցակները, քարտեզները, կայսրության բնակչության թվաքանակը, Թալեաթի նամակագրությունը, գրառումները և այլն: Գրքի երկրորդ գլուխը վերնագրված է «Հայերի տարիանումը ըստ նահանգների և զավանների» որտեղ ներկայացված է երիտրուրք պարագլիքի գրառումները հայերի տեղահանման, լրյալ գույքի, որքացած հայ երեխաների տեղաբախշման մասին: Գրքում ներկայացված է Թալեաթի մի ցուցակ, որտեղ նշված է տեղահանվող հայերի թվաքանակը ըստ 11 նահանգների և նրանց նոր բնակության վայրերում տեղաբաշխումը: Ըստ Թալեաթի՝ ցուցակի տեղահանված և արսորի վերջնակետ

¹ Bardakçı M., "Talat Paşanın Evrak-i metrukesi", İstanbul, 2008, s. 14.

հասած հայերի թվային տարբերությունը կազմում է 924 158 մարդ², այսինքն՝ այդքան մարդ չի հասել արարական նահանգներ և ճանապարհներին կոտորվել է: Սակայն Բարդարշըն առաջ է քաշում մի անհիմ վարկած, թե այս փաստը տմենեին չի նշանակում, որ վերոնշյալ 924 158 «անեւո կորած» հայերը սպանվել են կամ մահցել, այլ այդ թվի մեջ են մտնում նաև այն հայերը, որոնք տեղափոխվել են ԱՄՆ, Եվրոպա կամ այլ երկրներ, որոնց մի մասը, հեղինակի համոզմամբ, հետ են վերադարձել³:

Թալեաթի օրագրում փաստեր կան նաև ցեղասպանական մեկ այլ արարքի՝ հայ որբերին բռնի իսլամացնելու և մուսուլման ընտանիքներին բաժանելու մասին: Գրքում ներկայացված է անձամբ Թալեաթի կողմից պատրաստված մի ցուցակ, որում նշված են այն նահանգների անունները որտեղ կան հայ որբեր, երկրորդում տրվում է մուսուլմաններին բաժանված հայ որբերի քանակը, իսկ երրորդում՝ այդ պահին նշված նահագներում դեռևս մնացած հայ որբերի քանակը: Ըստ այդ ցուցակի՝ Էրզրումում՝ 500, Աղանայում՝ 90, Դիարբեքիրում՝ 1800, Տրապիզոնում՝ 2292, Սերաստիայում՝ 1500, Ջանիկում՝ 561, Մարաշում՝ 25, ընդհանուրը՝ 6768 երեխա բաժանվել է մուսուլմանական տներին: Ըստ այս ցուցակի՝ անտեր մնացած հայ երեխաների թվաքանակն ըստ նահանգների հետևյալն էր Էրզրում՝ 150, Աղանա՝ 55, Ճալեպ՝ 2625, Սերաստիա՝ 700, Ջանիկի սանջակ՝ 101, Զոր սանջակ՝ 500: Ինչպես նաև տողատակում տվյալներ է բերվում այն որբերի մասին, որոնք եղել են տարբեր միսիոներական դպրոցներում և մուսուլմանական որբանոցներում⁴:

Գրքի չորրորդ գլուխում ներկայացված են ինչպես Թալեաթ փաշայի, այնպես էլ ժամանակի հասարակական-քաղաքա-

կան գործիչների նամակագրությունները: Ուշագրավ է, օրինակ, հայտնի պանթուրիստ կին գրող Հալիդէ Էղիկ Աղրվարի նամակը գրված 1917 թ. մարտի 1-ին այն ժամանակված ֆինանսների նախարար Ջեիթին: Բեյրութից ուղարկված նամակում Հալիդէ Էղիկիր նկարգրում է նախարարին այնտեղ կուտակված հայ երեխաների և կանանց ծայրահեղ ծանր վիճակը⁵, որը, մեր կարծիքով, Հայոց ցեղասպանության վերաբերյալ փաստագրական որոշակի արժեք ունեցող վկայություն է:

Հետաքրքիր է նաև Մուրադ Բարդարշըի հարցագրույցը Թալեաթ փաշայի այրի Հայրիկ Թալեաթի հետ նրա մահից մեկ տարի առաջ՝ 1982 թ.: Հայրիկ Թալեաթն իր տված հարցագրույցում հիմնականում պատմել է Թալեաթի հետ համատեղ կյանքից, սակայն անդրադարձել է նաև հայերի տեղահանությանը և Թալեաթի սպանությունից հետո տեղի ունեցած դատավարությանը, որին ինքը մասնակցել է⁶: Թալեաթի կնոջ հարցագրույցում կա նաև մի հետաքրքիր մանրամասն՝ կապված 1943 թ. ոճրագործի աճյունը Թուրքիա տեղափոխելու վերաբերյալ: Ըստ այդմ՝ ժամանակի Թուրքիայի վարչապետ Շուրբյու Սարաջողլուն ոճրագործի այրուն խոստովանել է, որ իրեն քաղաքականապես դաստիարակել է Թալեաթ փաշան և իրենց պարտըն է արժանին մատուցել նրա հիշատակին:

Թալեաթ փաշայի նորահայտ օրագիրը և դրանում առկա փաստերը, բնականաբար, գրավել են հայ, թուրք, արևմտյան ուսումնասիրողների և պատմաբանների ուշադրությունը և առաջ բերել քանակվեծեր: Ըստ այդմ, թուրքական կեղծարարության հիմնական կառույցներից մեկը՝ Թուրքական պատմական ընկերությունը՝ ի դեմս պատմաբան և կեղծարար Քեմալ Չիչերի նախ կարծիք է հայտնել, որ կասկածելի է, թե

² Նոյն տեղում, էջ 77:

³ Նոյն տեղում, էջ 109:

⁴ Նոյն տեղում, էջ 89:

⁵ Bardakçı M., նշվ. աշխ., էջ 150-151:

⁶ Նոյն տեղում, էջ 201-211:

արդյոք օրագիրն իրոք պատկանել է Թաղեաթին, բանի որ դա նրա ձեռագիրը չէ⁷: Մուրադ Բարդարչըն ի պատասխան այս պեղմանը նշել է, որ Թաղեաթը այս ժամանակ եղել է ներքին գործերի նախարար, այնուհետև մեծ վեզիր, և դա նշանակում է, որ զրառումները հնարավոր են, որ գրել են օգնականները իր տված տվյալների համապատասխան⁸: Իրականում Բարդարչըն ներկայացրած այս վարկածը բավական կասկածելի և ոչ համոզի է թվում: Չիշերը նաև կասկած է հայտնել օրագրում առկա փաստերի ճշգրտության վերաբերյալ:

Իսկ այլընտրանքային թուրքական պատմագրության ներկայացուցիչներից Թաներ Արշամը, անդրադառնալով Թաելաթի օրագրում առկա թվային փաստերին և, մասնավորապես, որք հայ երեխաների հարցին՝ նշում է, որ թվերը թերի են և չեն ներառում մոտ 30 նահանգի և զավարի մասին տվյալներ⁹:

Սփյուռքահայ ուստումասիրող Արա Սարաֆյանը, անդրադարձ կատարելով գրքին, նշում է, որ Բարդարչըն կազմած գրքում ներկայացված թվերը կոտորված կամ «անհետ կորած» հայերի վերաբերյալ զգալիորեն պակաս են ներկայացված¹⁰: Իսկ ահա արևմտյան հեղինակ Սաբրինա Թավերնայգը, «Նյու Յորք Թայմզ»-ում տպագրված իր հոդվածում մեջբերելով պատմաքան Հիլմար Կայզերին, գրում է, որ Թաղեաթի «Աև կազմով տեսրում» նշված 924 158 հայերը իրականում ոչնչացվել են, իսկ այդ զրառումը նա անվանում է «մահվան զեկուցագիր» (death record)¹¹:

⁷ www.ttk.gov.tr/index.php?Page=Print&SayfaNo=312&Yer=StandartsSayfa

⁸ www.memurlar.net/habe8r/128911/

⁹ Արշամ Թ., Երիտրուրքերի գործած ոճիրը մարդկության դեմ, Երևան, 2014, էջ 408:

¹⁰ Sarafyan A., "Talaat Paşanın Ermeni soykırımı raporu", Londra, 2011, s. 6-9.

¹¹ Tavernise S., "Nearly a Million Genocide victims, covered in a cloak of Amnesia", The New York Times, March 8, 2009.

Ամեն դեպքում երիտրուրք պարագուի Թաղեաթին պատկանող կամ նրան վերագրվող օրագրում կան կարևոր բացահայտումներ, որոնք լավագույնս ի ցույց են դնում թուրքական ցեղասպան քաղաքականությունը ու դրա մշակված և ուղղորդված բնույթը: Անձամբ Թաղեաթի կողմից նշված հարյուր հազարավոր «անհետ կորած» հայերի հանգամանքը և հազարավոր որք երեխաների բռնի իսլամացումը այդ քաղաքականության թերևս ամենացայտուն օրինակներից են:

**Միեր Աբրահամյան
պ.գ.թ.**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	
ԱՐԱԲԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ	
ՍԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	5
 <i>Արման Հակոբյան</i>	
<i>ԽԱՐՔԵՐԻ ԱՍՈՐԻՆԵՐԸ ՄԵԾ ԵՂԵՇՈՒ</i>	
<i>ՆԱԽԱՇԵՄԻՆ</i>	6
 <i>Արշակ Գևորգյան</i>	
<i>ՀԱՅՈՅ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ</i>	
<i>ԱՀԱՐՈՆ ՌԵՌԻՎԵՆԻՐ «ՄԻՆՉԵՎ ԵՐՈՒՍԱՂԵՍ»</i>	
<i>ԵՌԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ</i>	41
 <i>Գոռ Գևորգյան</i>	
<i>Էղիտա Ասատրյան</i>	
<i>«ԱԶԱՏ ՄՊԱՆԵՐԻ» ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ</i>	
<i>ԵՎ ԵԳԻԴՅՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ</i>	
<i>ՀԱՅԵԱԿԱՐԳԻ ՀԵՎԱՎՈՐՈՒՄԸ</i>	
<i>(XX Դ. 50-ԱԿԱՆ ԹԹ.)</i>	56
 <i>Մարգիս Գրիգորյան</i>	
<i>ԶԻՀԱԴԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՆ ՈՒ ԻՍԼԱՄԱԿԱՆ</i>	
<i>ԱՐՄԱՏԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐԸ 18-20-ՐԴ ԴԴ.</i>	70
 <i>Աերգել Ուկանյան</i>	
<i>1979 Թ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՆՈՒՄ ԵՎ</i>	
<i>ՍԱՈՒԴԱ-ԻՐԱՆԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԿԻՖԸ՝</i>	
<i>ԻՍԼԱՄԱԿԱՆ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ</i>	98

Սուշեղ Ղահրիյան	
ՔՐԴԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԾԱԳՈՒՄԸ. 19-ՐԴ ԴԱՐԻ ԱՊԱՏԱՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ	
ՍԵՎՐ-ԼՈԶԱՆ	107
 ԹՅՈՒՐՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ	
ՕՍՍԱՆԱԳԻՏՈՒԹՈՒՆ	121
 <i>Կարոլինա Սահակյան</i>	
<i>ՏԱՐԵԳԻՐ ԱՀՄԵԴ ԶԵՎԴԵԹ ՓԱՇԱՆ ՕՍՍԱՆՅԱՆ</i>	
<i>ԿԱՑՄՈՒԹՅԱՆ ԿՐՈՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՑԱՆ</i>	
<i>ՍԱՍԻՆ</i>	122
 <i>Տաթեկի Հակոբյան</i>	
<i>ՀԱՅԿԱԿԱՆ ԹԵՄԱՏԻԿԱՆ ԱԲԴՈՒՆ ՀԱՄԻԴ 2-ՐԴԻ</i>	
<i>ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ</i>	137
 <i>Սոնա Կարապողոսյան</i>	
<i>ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ</i>	
<i>ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ «ԴԻԱՍՊՈՐԱՅԻ»</i>	
<i>ՆԿԱՏՄԱՆ. ՆՈՐ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ</i>	
<i>ՈՐՈՌՈՒՄՆԵՐ</i>	150
 <i>Լարիսա Ալեքսանյան</i>	
<i>ՉՎԵՆԵԲՈՒՐԻՆԵՐԸ (ԻՍԼԱՄԱՑԱԾ ՎՐԱՑԻՆԵՐ)</i>	
<i>ԹՈՒՐՔԻԱՅՈՒ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ,</i>	
<i>ԱՐԴԻ ԻՐԱԿՐԱԿ</i>	165

Հայկ Դարրինյան	
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ	
ԴՐՈՑԱԿԱՆ ԴԱՍԱԳՐԵՐՈՒՄ. ԲԵՌԼԻՆԻ	
ԽՈՐՃՐԱԺՈՂՈՎՔԻՑ ՄԻՆՉԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ	
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿՈՒՄԸ199	
Գևորգ Ստեփանյան	
ԳԱՆՉԱԿ-ԵԼԻԶԱՎԵՏՈՒԼԻ ՆԱՀԱՆԳԻ ՆՈՒԽԻ ԵՎ	
ԱՐԵՇ ԳԱՎԱՌՆԵՐԻ ՈՒ ԲԱՔՎԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅ	
ԲԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ	
ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ	
(XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ-XX ՍԿԻՖ)218	
Գայանե Չորակյան	
ԱԴՐԵՋԱՆԻ ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ	
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ «ԽՍԼԱՄԱԿԱՆ	
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ	
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ268	
Ռուբեն Մելքոնյան	
ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՓՐԿՎԱԾ ՀԱՅ ՈՐԲ	
ԵՐԵԽԱՆԵՐԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹՈՒՐՔԱԼԵԶՈՒ	
ՀՈՒՇԱԳՐԱԿԱՆ-ՓԱՍՏԱԳՐԱԿԱՆ	
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ287	
Նաիրա Պողոսյան	
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՍԱՆ	
ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԹՈՒՐՔ ԳՐՈՂՆԵՐԻ	
ՍԱԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ305	

Հոհիփսիմե Այվազյան	
«ԷՐԳԵՆԵՔՈՆ» ԲՊՈՍՆ ՈՒ ԴՐԱ	
ՔԱՐՈՉՉՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ332	
Անուշիկ Մարտիրոսյան	
ՌՈՒԲԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ	
ԱԴԱԼԵԹ ԱՂԱՕՂԼՈՒԻ ՍԱԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ	
ՈՃԱԿԱՆ ԵՎ ԹԵՍԱՄԻԿ	
ԱՌԱՋԱՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐԳ366	
Գևորգ Սահակյան	
ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԵՏՄՈԴԵՈՒԽԱԿԱՆ ԱՐՁԱԿԻ	
ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐԳ377	
Իրանագիտական պատմություն	389
Հառիրա Շեխոյան	
ԻՐԱՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՒԻ ՄԻԶԱՋԳԱՅԻՆ	
ՓՈԽԱՌԵՇՈՒՄՆԵՐԻ ՈՒՇԱԳՐԱՎ ՄԻ ԷԶ	
(Արքի Հովհաննիսյան. արվեստագետի դիմանկարի փորձ)390	
Անահիտ Յահյամասիկի	
ՕՍՄԱՆ ԽԱՅԱՏԻ ՔԱՌԵԱԿՆԵՐԸ	
ՍԱԴԵՂ ՀԵԴԱՅԱԹԻ ՄԵԿՆՈՒԹՅԱՄԲ404	

Գառնիկ Գևորգյան	
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ՍՈՀԱՄՄԱԴ	
ԱԼԻ ԶԱՍԱԼԶԱԴԵՐԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ432	
Գառնիկ Գևորգյան	
XX ԴԱՐԱՍԿԸՁԻ ՊԱՐՄԻՑ ՊԱՏՄԱՎԵՊԸ.	
ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ438	
Աստղիկ Գեղամյան	
ԹԱԹԵՐԻ ԵՎ ՄԵՐՋԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ	
ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ	
ՄԻ ՔԱՆԻ ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐԻ ՇՈՒՐՉ446	
Թադևոս Չարչյան	
ՊԱՐԹԵՎԱԿԱՆ ԱՐՋԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ	
ԲՈՒՆՊԱՇԱՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ	
ՀԱՅ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ (ռուսերեն)455	
Գարիկ Գրիգորյան	
ԱՌԿԱՅԱՑՄԱՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ	
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ	
ՊԱՐՄԿԵՐԵՆՈՒՄ464	
Հակոբ Ավյան	
ԱՌԱՋՆԱԼԵԶՎԱՅԻՆ Բ ՀԱՅՆՈՐԴԸ ԹԱԼԻՇԵՐԵՆԻ	
ԱՆԲԱՐՄԱՆ ԲԱՐԲԱՌՈՒՄ479	

Հովհաննես Խորիկյան	
ՓՅՈՒՆԻԿԻԱՅԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	
ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՄԿԱՍՏԱՆԻ	
Վ ՍԱՏՐԱՊՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ484	
Աֆսաննե Շիրանի	
ՍՈՒԱՄՄԱԴ Մալեք-Մոհամմադի	
ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ	
ԻՒՀ-Ի ՍՈՏԵՑՈՒՄԸ499	
ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ511	
Գուրգեն Սելիլիրյան	
Ալեքսանդր Մաքարյան	
Թուրքիայի Հանրապետության պատմություն512	
Հարություն Մարության	
STEFAN IHRIG. Ataturk in the Nazi Imagination.520	
Մհեր Արքահամյան	
Murat Bardakçı, "Talat Paşanın Evrak-1	
metrukesi"547	

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

(Գիտական հոդվածների պարբերական ժողովածու)

Nº 9

Եջադրող՝	Ա. Վարդանյան
Սրբագրիչ՝	Ա. Վարդանյան
Կազմի ծևավորող՝	Հ. Վարդանյան

Տպագրվել է «ՎԱԿ-ՊՐԻՆՏ» ՍՊԸ իրատարակչության տպարանում
Հասցեն՝ Ազատության 24/11, հեռ. 28 54 28

E-mail: vmv_print@yahoo.com
www.vmv-print.am